Գիրքը լուսապատճենվել և համացանցում է **տեղադրվել** [Գրքամոլ Նախաձեռնության](http://www.grqamol.am) կողմից:

Բոլորին կողմից սիրված «[Գրքամոլ](http://www.grqamol.am)»-ը մեկնարկել է մի նախաձեռնություն, որի նպատակն է համացանցում էլեկտրոնային տարբերակով տեղադրել բոլոր այն գրքերը, որոնք սիրված են հայ ընթերցասերների կողմից և ցանկանում են դրանք ընթերցել նաև էլեկտրոնային տարբերակով: Ժամանակի ընթացքում մեր կողմից համացանցում կհայտնվեն բոլոր այն գրքերը, որոնք մինչ այս ձեզ համար եղել են դժվար ձեռքբերելի:

Գրքամոլը, ունենալով իր ուրույն տեղը ընթերցասերների հարթակում, իր առջև նպատակ է դրել հասարակության մեջ բարձրացնել սերը դեպի ընթերցանությունը, առաջացնել հետաքրքրություն դեպի դասական և արդի գրականությունը, և կոտրել բոլոր այն կարծրատիպերը, թե այսօրվա հայ իրականության մեջ ընթերցողներ չկան:

Սիրելի՛ ընթերցողներ, մենք շատ ուրախ կլինենք, եթե կլինեն մարդիկ, ովքեր կցանկանան օգնել մեզ այս հանրօգուտ գործում: *Էլեկտրոնային գրքերի պատրաստման և մեր կայքում դրանք տեղադրելու հարցում մենք չունենք որևէ շահ և չենք չհետապնդում որևէ եկամուտ,* բացի հայ և արտասահմանյան գրականությունը հայ ընթերցասերներին հասանելի դարձնելուց, և մենք բաց ենք բոլոր նվիրյալ ու օգնել ցանկացող մարդկանց համար: Եթե դուք ունեք լուսապատճենահանման սարքեր, և ուզում եք միանալ մեր կողմից ձեռնարկվող գործին, ապա գրեք մեզ grqamol@gmail.com հասցեով:

Շնորհակալություն, որ հետևում եք մեզ: Ցանկանում ենք բոլորին հաճելի ընթերցանություն:

**Գրքամոլ Նախաձեռնություն**
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Since 2012 © Grqamol. All Rights Reserved.

ՉԻՆԳԻԶ ԱՅԹՄԱՏՈՎ

# ԵՎ ԴԱՐԻՑ ԵՐԿԱՐ ՁԳՎՈՒՄ Է ՕՐԸ

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ

ՉԻՆԳԻԶ
ԱՅԹՄԱՏՈՎ

# ԵՎ ԴԱՐԻՑ ԵՐԿԱՐ ՁԳՎՈՒՄ Է ՕՐԸ

ՎԵՊ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ • ԵՐԵՎԱՆ • 1983

ԳՄԴ 84 Կ
Ա 540

Ռուսերենից թարգմանեց
ՍՈՖԻ ԱՎԱԳՅԱՆԸ

**Այթմատով, Չ. Թ.**

*Ա 540 Եվ դարից երկար ձգվում է օրը։ Վեպ, Չալիկ շուն, որ վազում ես ծովի եզրով... Վիպակ, ռուս. թարգմ. Ս. Ավագյանը.—Եր.։ Սովետ. գրող, 1983.—էջ.—448*

*ՍՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր Չինգիզ Այթմատովի գրքում տեղ են գտել նրա վերջին երկու ստեղծագործությունները։ «Չալիկ շուն, որ վազում ես ծովի եզրով» վիպակը հիմն է մարդկայնության և բարու։ «Եվ դարից երկար ձգվում է օրը» վեպում հեղինակը դատապարտում է իմպերիալիզմի ծնած հրեշավոր հանցագործությունը մարդկության դեմ՝ ուղեղային էներգիայի և նյութական միջոցների վատնումը հանուն սպառազինության մրցավազքի։ Զուգակցելով ռեալիստական և ֆանտաստիկական պլանները, հեղինակը գիտում է վերջին տասնամյակների իրադարձությունները և իր վեպով հիշեցնում մարդուն նրա պատասխանատվությունը երկրի ճակատագրի համար։*

Ա — 4702280200 (1108) 83 «Տ» / 705 (01) 83

ԳՄԴ 84. Կ
(ԿԻՐԳ)

© Издательство «Молодая гвардия», Москва, 1981 г.
© *«Սովետական գրող» հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1983*

## ՀԱՅ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

*Հայերի ընթերցանության կուլտուրան պատկանում է գրքի հետ մարդու շփման ամենահին ավանդույթներին։ Այդ իսկ պատճառով այնքան էլ հեշտ չի հայ ընթերցողին առաջարկել քո սեփական գործերից մեկը, որ գրվել է մեր անհանգիստ օրերում։*

*Օգտվելով պատեհ առիթից, ուզում եմ մի երկու խոսք ասել հայ գրականությանը վերաբերող մի դեպքի մասին։ Անցյալ տարվա ամռանը իմ բարեկամ Լևոն Մկրտչյանն ինձ էր ուղարկել Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը, իր գրած փայլուն առաջաբանով։ Եվ այդ ժամանակվանից ես գտնվում եմ անմոռանալի հայտնագործության տպավորության տակ։ Եթե հազար տարի առաջ մարդիկ կարող էին այդպես մտածել, տառապել և հոգով վսեմանալ, չարչարանոք ձգտել հասու լինելու մարդկային էությանը, ապա մենք, 20-րդ դարում ապրողներս, մի՞թե չափից ավելի բարձր կարծիքի չենք սեփական անձի մասին։ Եթե մենք ապրում ենք ատոմի և տիեզերագնացության դարում, ինձ թվում է, մենք չենք համարձակվի դրանից ինքնաբավության զգացում ունենալ։*

*Բարոյական այդպիսի մաքսիմալիզմի համար, որին հասել էր հայ բանաստեղծ Նարեկացին 10-րդ դարում, բավական չի լինել գիտատեխնիկական հեղափոխության ստեղծողներ և, մանավանդ, նրա բարիքների սպառողներ, անհրաժեշտ է կարողանալ Նարեկացու նման ամենատես աչքով նայել քո ներսը, որպեսզի ինքդ ասես, թե դու ինչքանով ես մարդ՝ առ բարին ունեցած քո էվոլյուցիայով, անհրաժեշտ է կարողանալ Նարեկացու դարաշրջանի փորձին ավելացնել նաև քո, ոչ պակաս նշանակալից փորձը։ Դա շատ դժվար է։*

*Իսկ գրականությունը կոչված է պատասխանելու այդ հարցերին, որքան դա հնարավոր է։ Յուրաքանչյուր գրականություն՝ իր ժամանակի համար։*

*Ողջույն ձեզ, թանկագին հայեր։*

Չ. ԱՅԹՄԱՏՈՎ

# ԵՎ ԴԱՐԻՑ ԵՐԿԱՐ ՁԳՎՈՒՄ Է ՕՐԸ

## ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Հայտնի բան է. աշխատասիրությունը մարդու արժանապատվության պարտադիր չափանիշ է։

Այդ իմաստով Եդիգեյ Ջանգելդինը՝ Բորանլի Եդիգեյը, ճանաչողները նրան նաև այդպես են անվանում, հիրավի, իսկական աշխատավոր է։ Նա մեկն է այն մարդկանցից, որոնց վրա, ինչպես ասում են, հենվում է Երկիրը։ Նա իր դարաշրջանին կապված է, կարծում եմ, ամենաամուր թելերով, և դա է նրա լությունը, նա իր ժամանակի զավակն է։

Այդ իսկ պատճառով, դիմելով վեպում շոշափված խնդիրներին, ինձ համար կարևոր էր աշխարհը դիտել նրա՝ ռազմաճակատայինի, երկաթուղային բանվորի ճակատագրի միջով։ Եվ ես փորձեցի այդ անել իմ հնարավորությունների սահմաններում։ Բորանլի Եդիգեյի կերպարը իմ վերաբերմունքն է սոցիալիստական ռեալիզմի արմատական սկզբունքին, որի հետազոտության գլխավոր նյութը եղել և մնում է աշխատավոր մարդը։

Սակայն ես հեռու եմ բուն «աշխատավոր» հասկացության բացարձակումից լոկ այն պատճառով, որ նա «պարզ, բնական մարդ է» տքնությամբ հող է մշակում կամ անասուն արածացնում։ Կյանքում հավերժականի և փոփոխվողի բախման մեջ մարդ-աշխատավորը հետաքրքրական և կարևոր է այնքանով, որքանով նա անհատականություն է, որքանով հարուստ է նրա հոգեկան աշխարհը, որքանով խտացած է նրա մեջ իր ժամանակը։ Ահա, ես փորձել եմ Բորանլի Եդիգեյին դնել ինձ ժամանակակից աշխարհակարգի կենտրոնում, ինձ հուզող խնդիրների կենտրոնում։

Բորանլի Եդիգեյը աշխատավոր է ոչ միայն ի բնե ու զբաղմունքի բերումով։ Նա աշխատասեր հոգու տեր մարդ է։ Աշխատասեր հոգու տեր մարդը ինքն իրեն հարցեր կտա, որոնց համար ուրիշները միշտ պատրաստի պատասխան ունեն, դրա համար էլ այդ ուրիշները որևէ գործ կատարում են ծուլորեն, եթե անգամ լավ են կատարում, և ապրում են միայն սպառելով։

Իսկ աշխատասեր հոգու տեր մարդկանց կարծես միավորում է ինչ-որ մի եղբայրություն, նրանք միշտ ընդունակ են ճանաչելու իրենց նմաններին, ընդունակ են հասկանալու, իսկ եթե ոչ հասկանալու, գոնե մտածելու։ Մեր ժամանակը նրանց խորհրդածելու այնքան սնունդ է տալիս, որքան չի տվել երբեք ոչ մի ժամանակ։ Մարդկային հիշողության շղթան ձգվում է արդեն Երկրից տիեզերք։

20-րդ դարի վերջի ամենաողբերգական հակասությունը, թերևս, կայանում է մարդկային հանճարի անսահմանության և այդ հանճարը գործադրելու անհնարինության մեջ՝ իմպերիալիզմի ծնած քաղաքական, գաղափարական, ազգային խտրականության խոչընդոտների պատճառով։

Այսօրվա պայմաններում, երբ ոչ թե սոսկ ի հայտ են եկել հաստատուն կերպով տիեզերք թռչելու տեխնիկական հնարավորությունները, այլև մարդկության տնտեսական և էկոլոգիական կարիքները հրամայաբար պահանջում են այդ հնարավորությունն իրագործել, ժողովուրդների միջև գժտության սերմանումը, նյութական միջոցների և ուղեղային էներգիայի վատնումը սպառազինության մրցավազքի վրա ամենահրեշավոր հանցագործությունն է մարդու դեմ։

Այսօր առաջադիմական կարող է համարվել միմիայն միջազգային լարվածությունը վերացնելու քաղաքականությունը։ Առավել պատասխանատու խնդիր չկա աշխարհում։

Եթե մարդկությունը չսովորի ապրել համերաշխ, կկործանվի։ Փոխադարձ անվստահության, լարվածության, հակամարտության մթնոլորտը մարդկության խաղաղ ու երջանիկ կյանքի դեմ եղած սպառնալիքներից ամենավտանգավորն է։

Մարդիկ կարող են հանդուրժող լինել մեկը մյուսի նկատմամբ, բայց նրանք չեն կարող մտածել միանման, մնալով հանդերձ մարդ, պահպանելով իրենց մարդկային հատկությունները։ Մարդուն անհատականությունից զրկելու ցանկությունը՝ հնուց ի վեր և մեր օրերում հետապնդում է կայսերական, իմպերիալիստական, գերիշխանության ձգտելու նպատակներ։

Մարդը առանց անցյալի հիշողության, որ կանգնած է կյանքում նորից իր տեղը որոշելու անհրաժեշտության առջև, իր ժողովրդի և ուրիշ ժողովուրդների պատմական փորձից զրկված մարդը դուրս է մնում պատմական հեռանկարից և ընդունակ է ապրելու լոկ այսօրվա օրով։

Բավական է հիշես Չինաստանի «կուլտուրական հեղափոխությունը», խաղերը՝ ժողովրդի գիտակցության հետ, որ կյանքի բազմաբարդության դիալեկտիկան իջեցրին մինչև Մաոյի, այսպես կոչված, «կարմիր գրքույկներից» քաղված մի քանի մեջբերումների մակարդակի, բավական է հիշես հնագույն ավանդույթների տեր ժողովրդի ճակատագիրը՝ չինական ղեկավարության այսօրվա գերիշխանության քաղաքականության ֆոնի վրա, որպեսզի համոզվես այդ երևույթների փոխադարձ կապի մասին։ Որքան էլ դա հակասական թվա, բայց փոխադարձորեն շաղկապվում են նաև այլ բաներ, անցյալի ժխտումը կամ կեղծումը և ինքնաբավ, դոռոզամիտ ազգայնամոլությունը, որ ստիպված է իր

շուրջը կառուցելու չինական պարիսպ, քանզի միայն այդ պարսպի ետևում կարող է պահպանվել մի ժողովրդի գերազանցության մյութոսը, մնացյալ բոլոր ժողովուրդների նկատմամբ։

Ինչպես իմ նախկին ստեղծագործություններում, այս անգամ նույնպես ես հենվում եմ առասպելների, մյութոսների, ավանդույթների վրա, իբրև փարձի վրա, որ մեզ ժառանգություն է մնացել նախորդ սերունդներից։ Եվ միաժամանակ, առաջին անգամ իմ գրողական գործունեության մեջ, գիմում եմ ֆանտաստիկական սյուժեի օգտագործմանը։ Ինձ համար թե առաջինը, թե երկրորդը ինքնանպատակ չեն, այլ սոսկ մտածողության մեթոդ, իրականության ճանաչման ու մեկնաբանման միջոցներից մեկը։

Անշուշտ, արտաերկրային քաղաքականությանը հաղորդակցվելու նկարագրությունների հետ կապված իրադարձությունները, և այն ամենը, ինչ տեղի է ունենում այդ պատճառով, բացարձակապես ոչ մի իրական հիմք չունեն։ Աշխարհում ոչ մի տեղ իրականում գոյություն չունեն սարօզեկյան և նեադյան տիեզերականները։ Երկու տարբեր աշխարհները, երկու տարբեր հառարակարգերը ես վերցրել եմ պատմական իրողությունից դուրս, միանգամայն պայմանականորեն, որպես խաղի կանոն։

«Տիեզերագիտական» ամբողջ պատմությունը հորինել եմ լոկ մի նպատակով, պարադոքսային, չափազանցված ձևով սրել իրադրությունը, որ երկրի մարդկանց համար հղի է իրական վտանգներով։

Ահա սովկալի մի պարադոքս. Հին Հունաստանում օլիմպիական խաղերի ժամանակ դադարեցվում էին պատերազմները, մինչդեռ այսօր օլիմպիադան որոշ երկրների համար դարձել է սառը պատերազմի առիթ։

Ինչ վերաբերում է ֆանտաստիկական հորինվածքի նշանակությանը, ապա դեռևս Դոստոևսկին է գրել. «Ֆանտաստիկականը արվեստի մեջ ունի սահման և կանոններ։ Ֆանտաստիկականը այնքան պետք է մերձենա իրականին, որ դուք պետք է գրեթե հավատաք դրան»։ Դոստոևսկին ճիշտ ձևակերպել է ֆանտաստիկականի օրենքը։ Արդարև, թե հների դիցաբանությունը, թե Գոգոլի, Բուլգակովի կամ Մարկեսի ֆանտաստիկական ռեալիզմը և թե գիտական ֆանտաստիկան՝ իրենց տարբերություններով հանդերձ, բոլորն էլ համոզիչ են հենց իրականին մոտենալու շնորհիվ։ Երևակայականը խոշորացնում է իրականի որոշ կողմեր և առաջադրելով «խաղի կանոնները», դրանք ցույց է տալիս փիլիսոփայորեն ընդհանրացված, աշխատելով մինչև վերջ բացահայտել իր ընտրած գծերի զարգացման պոտենցիալը։

Երևակայականը կյանքի փոխաբերությունն է, որ թույլ է տալիս իրեն դիտել նոր, անսպասելի տեսանկյունից։ Փոխաբերությունները մեր դարում առանձնապես անհրաժեշտ են դարձել ոչ միայն երեկվա ֆանտաստիկայի բնագավառ ներխուժած գիտատեխնիկական սխրանքների պատճառով, այլ, ավելի շուտ, որովհետև ֆանտաստիկական է մեր ապրած աշխարհը, որ բզկտվում է հակասություններից՝ տնտեսական, քաղաքական, գաղափարական, ռասսայական հակասություններից։

Ահա, ուրեմն, ես ցանկանում եմ, որ իմ վեպի սարօզեկյան փոխաբերությունները մեկ անգամ ևս աշխատավոր մարդուն հիշեցնեն նրա պատասխանատվությունը երկրի ճակատագրի համար...

Չոր գիրդ ընդ մարմնոյս
Եվ բանդ ընդ հոգւոյս

Գրիգոր Նարեկացի

# I

Հարկավոր էր մեծ համբերություն՝ ցամաքած հեղեղատներում ու լերկ ձորակներում կեր գտնելու համար։ Մուկ բռնող քաղցած աղվեսը հետևելով հողփորիկ, մանր գետնի հապճեպ, աներևակայելիորեն խճողված վազքին, մերթ տենդահար ցրիվ տալով գետնասկյուռի բույնը, մերթ սպասելով, որ հին հեղեղափոսի ճեղքում թաքնված պստլիկ ճագարամուկը վերջապես դուրս ցատկի բաց տարածություն, որ հնարավոր լինի տեղնուտեղը հասցնել գլխին, հեռվից դանդաղ ու անշեղ մոտենում էր երկաթուղուն, տափաստանում սևին տվող լցովի թմբին, որ կանչում էր նրան և միաժամանակ վախեցնում, և որի վրայով, ծանր ցընցելով գետինը, մեկ այս, մեկ այն կողմ էին սուրում դղրդացող գնացքները, ծխի և այրուքի հետ թողնելով անտանելի գրգռիչ հոտեր, որ քամին ցրիվ էր տալիս աշխարհով մեկ։

Երեկոյան կողմ աղվեսը պառկեց հեռագրասյան մոտ, ձորակի խորքում, չոր ավելուկի թփերի խիտ ու բարձր կղզյակում՝ մուգ կարմիր, սերմնաշատ ցողունների մեջ և, կծկվելով, դառնալով շեկ-կարմիր կծիկ, համբերությամբ սպասեց գիշերին, նյարդային թրթռացնելով ականջները, շարունակ ունկնդրելով

գետնասող քամու բարակ սուլոցը, չոր խշշացող, մնացած խոտերի մեջ։ Հեռագրասյուները նույնպես տհաճ դզզում էին։ Թեև աղվեսը դրանցից վախ չուներ։ Սյուները միշտ կանգնած են տեղում, դրանք հետապնդել չեն կարող։

Բայց ամեն անգամ, պարբերաբար սուրացող գնացքների խլացնող աղմուկները նրան ստիպում էին ջղաձիգ ցնցվել և ավելի ուժեղ կծկվել։ Դզզացող ձորակում աղվեսն ամբողջ փխրուն մարմնիկով, կողերով զգում էր գնացքների գետնասասան ծանրության ու մոլեգին շարժման հրեշավոր ուժը, բայց հաղթահարելով վախն ու զզվանքը օտար հոտերի նկատմամբ, չէր հեռանում ձորակից, սպասում էր իր ժամին, մութն ընկնելուն, երբ ճանապարհները համեմատաբար հանգիստ են լինում։

Աղվեսն այս կողմերն էր գալիս խիստ հազվադեպ, միայն շատ քաղցած դեպքերում...

Գնացքների միջև ընկած ընդմիջման ժամանակ տափաստանում տիրում էր անսպասելի լռություն, ինչպես փլուզումից հետո, և այդ բացարձակ լռության մեջ աղվեսն օդի մեջ որսում էր իրեն զգաստացնող ինչ-որ անորոշ, հազիվ լսելի, բարձրերից եկող հնչյուն, որ սավառնում էր մթնող տափաստանի վրա և չէր պատկանում ոչ ոքի։ Դա օդային հոսանքների խաղ էր և ավետում էր եղանակի մոտալուտ փոփոխում։ Գազանիկը բնազդաբար զգում էր այդ և դառնացած շունչը պահում, քարանում, անշարժանում էր, ուզում էր բարձրաձայն ոռնալ, կաղկանձել ինչ-որ ընդհանուր պղետի տարտամ նախազգացումից։ Բայց քաղցը խլացնում էր նույնիսկ բնության այդ կանխագուշակող ազդանշանը։

Եվ աղվեսը միայն թույլ նվում էր, լիզելով վազքից դադրած թաթերի բարձիկները։

Այն օրերին երեկոներն արդեն ցուրտ էին, մոտենում էր աշունը։ Գիշերը գետինն արագ սառչում էր, և լուսադեմին տափաստանը ծածկվում էր ճերմակավուն, աղանման եղյամի անկայուն շերտով։ Աղքատիկ, անուրախ ժամանակ էր սկսվում տափաստանային գազանի համար։ Այն հազվագյուտ որսը, որ ամռանը լինում էր այս կողմերում, կորչում էր ամեն մեկը մի տեղ, որը՝ տաք երկիր, որը քաշվում էր իր բույնը, որն էլ ձմեռելու համար խորանում էր ավազների մեջ։ Այժմ աղվեսները կեր հայթայթելու համար տափաստան էին դուրս գալիս մեն-մենակ, կարծես աղվեսի ցեղը իսպառ բնաջնջվել էր երկրի երեսից։ Այդ

տարվա մատղաշն արդեն հասունացել էր, ցրվել տարբեր կողմեր, իսկ սիրո ժամանակը դեռ առջևում էր, ժամանակ, երբ աղվեսները ձմռան կեսին պիտի խելահեղ վազվզեն աջ ու ձախ, որոնեն նորանոր հանդիպումներ, երբ արուները կռիվ պիտի տան և իրար զգետնեն այնպիսի ուժով, որպիսին կյանքն է օժտել աշխարհաստեղծման օրից...

Մութն ընկնելուն պես աղվեսը դուրս եկավ ձորակից։ Մի քիչ սպասեց, ականջները սրեց, ապա վազ տվեց դեպի երկաթուղու թումբը, անշշուկ անցնելով գծերի մեկ այս, մեկ այն կողմը։ Այստեղ որոնում էր ուտելիքի մնացորդներ, որ վագոնների լուսամուտներից շպրտում էին ուղևորները։ Աղվեսն ստիպված էր երկար վազել թմբի երկարությամբ, հոտոտելու ամեն մի գրգռիչ ու գարշահոտ առարկա, մինչև որ վերջապես դեմ առներ քիչ թե շատ պետքական բանի։ Գնացքների շարժման ողջ ճանապարհը կեղտոտված էր թղթի կտորտանքով ու ճմռթված լրագրերով, կոտրատված շշերով, ծխախոտի մնացուկներով, պահածոյի ծռմռված տուփերով և զանազան աղտեղությամբ։ Նողկալի էր, մանավանդ, չկոտրված շշերի բերանից փչող հոտը, որ ուղղակի թմբիր էր բերում։ Երբ գլուխը մեկ-երկու անգամ պտտվեց, աղվեսն արդեն խուսափեց շնչել օղիով ներծծված օդը։ Փնչացնում էր և անմիջապես ետ ընկրկում։

Իսկ նրա ուզածը, հանուն որի այդքան երկար նախապատրաստվել էր, հաղթահարելով ահ ու երկյուղ, հակառակի պես չէր հանդիպում։ Եվ հուսալով, թե դեռ կհաջողվի ուտելիք գտնել, աղվեսն անդադրում վազում էր երկաթուղու երկարությամբ, շարունակ թմբի մի կողմից տեղափոխվելով մյուս կողմը։

Բայց հանկարծ, բարձրացնելով առջևի թաթը, քարացավ, մնաց տեղում, ասես ինչ-որ բանից անակնկալի եկած։ Բարձր, մշուշոտ լուսնի աղոտ լույսի տակ հայվելով, ուրվականի նման անշարժ կանգնել էր երկաթգծերի մեջ։ Նրան զգաստացնող հեռավոր գվվոցը դեռ շարունակվում էր։ Առայժմ գվվոցը շատ էր հեռու։ Այդպես պոչը օդի մեջ, աղվեսը անվճռականորեն մի ոտքից մյուսին էր փոխադրվում, զգալով, որ պետք է դուրս գա ճանապարհից։ Բայց դրա փոխարեն, հանկարծ սկսեց շտապով վազվզել թմբի վրա, դեռևս հուսալով գտնել մի բան, որ հնարավոր լինի ուտել։ Զգում էր, որ հիմա-հիմա կգտնի որոնածը, թեև հեռվից ահեղ թափով ահագնանալով, անողոք կերպով մոտենում էին երկաթյա շաչյունն ու հարյուրավոր անիվների

*թխկթխկոցը։ Աղվեսը վարանեց սոսկ մի ակնթարթ և դա բավական եղավ, որպեսզի անմիջապես վեր նետվի և գլուխկոնծի տա, ինչպես խենթացած թիթեռնիկ, երբ հանկարծ կեռմանից պսպղացին շարք-շարք կցված լոկոմոտիվների մոտիկ և հեռավոր լույսերը, երբ հզոր լուսարձակները, լուսավորելով և կուրացնելով դիմացը փռված ամբողջ տարածությունը, վայրկենաբար սպիտակեցրին տափաստանը, անխնա մերկացրին նրա մեռելային չորությունը։ Իսկ գնացքը խելահեղ արագությամբ գլորվում էր ռելսերի վրայով։ Օդում տարածվել էր դառն այրուքի և փոշու հոտ. քամի բարձրացավ։*

*Աղվեսը հապճեպ նետվեց մի կողմ, շարունակ ետ-ետ նայելով և վախից գետնին ճապաղելով։ Իսկ հրեշը իր վազող լույսերով դեռ երկար դղրդում էր ու սուրում, դեռ երկար թխկթըխկացնում անիվները։ Աղվեսը վեր էր թռչում և նորից խելակորույս վազում... Հետո շունչը մի քիչ տեղը բերեց և նորից աչքը գցեց երկաթուղուն, որտեղ հնարավոր էր հագեցնել քաղցը։ Բայց առջևում, գծերի վրա նորից լույսեր շողացին, նորից լոկոմոտիվների զույգը քարշ տվեց երկար, բեռնավորված գնացքը։*

*Այն ժամանակ աղվեսը տափաստանով վազեց շրջանցման, վճռելով երկաթուղուն մոտենալ այնպիսի տեղից, որտեղից գնացքներ չեն անցնում...*

**Գնացքները այս կողմերում գնում էին արևելքից արևմուտք և արևմուտքից արևելք...**

**Իսկ երկաթուղու շուրջը, այս կողմերում, փռված էին հսկայական ամայի տարածություններ՝ Սարի-Օզեկներ, Դեղին տափաստանների միջնակները:**

**Այս կողմերում ուզածդ տարածությունը չափվում էր երկաթուղուց, ինչպես Գրինվիչի միջօրեականից...**

**Իսկ գնացքները գնում էին արևելքից արևմուտք և արևմուտքից արևելք...**

*Կեսգիշերին մեկը երկար և համառ գալիս էր իր կողմը, սլաքավարի տնակը, սկզբում ուղղակի կոճափայտերի վրայով, ապա, հանդիպակաց գնացքի հայտնվելուն պես՝ զառիթափով դեպի վար, սայթաքելով առաջանում էր ինչպես բքի ժամանակ, ձեռքերով պատսպարվելով քամուց ու փոշուց, որ ամպի պես ելնում էր արագընթաց ապրանքատարի տակից (դա լիտերային*

գնացքն էր ընթանում կանաչ փողոցով, հատուկ նշանակության գնացքը, որ այնուհետև առանձին ճյուղով մտնում էր Սարի-Օզեկ-1 փակ գոտի. այնտեղ նրանք ունեն ճանապարհային հատուկ ծառայություն, կարճ ասած, գնում էր տիեզերակայան, դրա համար էլ գնացքը սլանում էր ամբողջովին բրեզենտներով ծածկված, պլատֆորմներին ռազմական պահակախումբ)։ Եդիգեյն անմիջապես գլխի ընկավ. կինն է այդպես շտապում իր մոտ, և շտապում է ոչ հենց այնպես, դրա համար կա որևէ հիմնավոր պատճառ։ Այդպես էլ կար։ Բայց աշխատանքի բերումով Եդիգեյն իրավունք չուներ իր տեղից հեռանալու, մինչև չանցներ վերջին պոչային վագոնը, որի բաց՝ հարթակին կանգնած էր ուղեկցորդը։ Նրանք լապտերներով իրար ազդանշան տվեցին, իբր՝ ճանապարհին ամեն ինչ կարգին է, և միայն այդ ժամանակ, համատարած աղմուկից կիսախլացած Եդիգեյը շուռ եկավ մոտեցող կնոջ կողմը։

— Ի՞նչ է պատահել։

Կինը տագնապալից նայեց նրան և շարժեց շրթունքները։

Եդիգեյը չլսեց, բայց հասկացավ, այդպես էլ ենթադրում էր։

— Արի գնանք, քամի է այստեղ։— Նա կնոջը տարավ տնակ։

Եվ մինչ նրա շուրթերից կլսեր այն, ինչ արդեն ենթադրում էր, այդ րոպեին, չգիտես ինչու, նրան զարմացրեց բոլորովին ուրիշ բան։ Չնայած առաջ էլ էր նկատել, որ կինը ծերանում է, բայց այս անգամ տեսնելով, թե արագ քայլելուց ինչպես է շնչահեղձ եղել, խռպոտվել և հևում, միաժամանակ ինչպես են անբնականորեն վեր բարձրացել նիհար ուսերը, Եդիգեյի սիրտը մղկտաց։ Երկաթուղային փոքրիկ, ճեփ-ճերմակ տնակի էլեկտրական պայծառ լույսն էլ հանկարծ անխնա բացահայտեց Ուկուբալայի մգացած, կապույտին տվող այտերի վրա փռված՝ արդեն անդառնալիորեն անուղղելի կնճիռները (այնինչ Ուկուբալան ունեցել է թուխ, ցորնագույն մաշկ, աչքերը մշտապես փայլել են սևորակ շղերով), և դեռ բերանի այդ փոսընկածությունը, որ ավելորդ անգամ ապացուցում է, թե կնոջը, նույնիսկ կանացի տարիքն առած կնոջը, ոչ մի դեպքում չի կարելի անատամ մնալ։ (Նրան պետք է ժամանակին տարած լիներ կայարան, դցել տված լիներ մետաղյա ատամներ, հիմա բոլորը, ահել, ջահել, դրանցից են դցում), և դեռ այդ ամենին գումարած սպիտակած, արդեն ճեփ-ճերմակ մազափնջերը, որ ետ գնացած գլխաշորի տակից թափվել էին գեմքին, ցավագին կերպով ճմլում էին սիրտը։ «Ախ, այդ

*ինչպե՞ս ես ծերացել»,— Հոգու խորքում խղճաց կնոջը, անփական մեղքի ճնշող գիտակցությամբ։ Եվ դրանից ավելի խոր համակվեց լուռ երախտագիտությամբ, որ առաջացավ հանկարծ, ամեն ինչի համար միանգամից, այն ամենի համար, որ տարիներ շարունակ կրել էին միասին, մանավանդ հիմիկվա համար, որ հարգանքի և պարտքի զգացումից մղված գիշերվա կեսին դուրս է եկել տնից, երկաթգծով վազ է տվել, հասել կիսակայարանի այս ամենահեռավոր կետը, որովհետև գիտի, թե դա որքան կարևոր է Եդիգեյի համար, վազեվազ եկել է, որ հայտնի անբախտ ծերունի Ղազանղապի մահը, միայնակ ծերուկի, որ լուռ հանգել է դատարկ, կավածեփ խրճիթում, որովհետև գիտի, աշխարհում միայն Եդիգեյը սրտին մոտ կընդունի բոլորից լքված մարդու մահը, չնայած հանգուցյալը ոչ իր քավորն է, ոչ սանահերը։*

*— Նստիր, շունչդ տեղը բեր,— ասաց Եդիգեյը, երբ մտան տնակ։*

*— Դու էլ նստիր,— ասաց կինը։*

*Նստեցին։*

*— Ի՞նչ է պատահել։*

*— Ղազանղապը մահացավ։*

*— Ե՞րբ։*

*— Հենց նոր գնացի մոտը, տեսնեմ ինչպես է, մտածեցի որևէ բանի կարիք կունենա։ Մտա, լույսը վառվում էր, Ղազանղապն էլ տեղում էր, բայց մորուքը մի տեսակ վեր էր տնկվել։ Մոտեցա։ Ղազակե՛, կանչում եմ, Ղազակե՛, կուզե՞ք տաք թեյ բերեմ, բայց Ղազակեն արդեն չկար։— Կնոջ ձայնը կերկերաց, արցունքները ողողեցին կարմրած, ուռած կոպերը։ Ուկուբալան հեծկլտաց, ապա հանդարտ լաց եղավ։— Տեսա՞ր վերջն ինչ եղավ։ Ոսկի մարդ էր։ Բայց մեռնելիս կողքին մի մարդ չկար, գոնե աչքերը փակեր,— մրմնջում էր Ուկուբալան, արցունք թափելով։— Ո՞ւմ մտքով կանցներ։ Այդպես էլ մեռավ մարդը...*
*— Նա ուզում էր ասել «անտեր շան նման», բայց չասաց, ի՞նչ կարիք կար ճշտելու, առանց այդ էլ ամեն ինչ պարզ էր։*

*Ականջը կնոջը՝ Բորանլի Եդիգեյը, նրան այդպես էին անվանում մարզում, դեռևս այն օրից, ինչ, պատերազմից վերադառնալուց անմիջապես հետո, սկսեց աշխատել Բորանլի կիսակայարանում, մեխված նստել էր ծալովի նստարանին, ծանր ձեռքերը ճյուղերի պես դրած ծնկներին։ Երկաթուղային յուղոտված, մաշ-*

ված գլխարկի հովարը ստվեր էր գցել աչքերին։ Տեսնես ի՞նչ էր մտածում։

— Հիմա ի՞նչ ենք անելու,— խոսեց կինը։

Եղիգեյը բարձրացրեց գլուխը, դարը քմծիծաղ տվեց։

— Ի՞նչ պիտի անենք։ Ի՞նչ են անում նման դեպքերում։ Պիտի թաղենք։— Նա տեղից ելավ, արդեն որոշում ընդունած։— Լսիր, Ուկուբալա, դու պետք է անմիջապես ետ դառնաս։ Եվ լավ լսիր, թե ինչ եմ ասում։

— Լսում եմ։

— Նախ Օսպանին արթնացրու։ Մի նայիր, որ կիսակայարանի պետ է, նշանակություն չունի, մահվան դեմ բոլորը հավասար են, հայտնիր, որ Ղազանղապը մահացել է։ Քառասունչորս տարի մարդն աշխատել է մի վայրում։ Օսպանը երևի դեռ չէր էլ ծնվել, երբ Ղազանղապն աշխատանքի է եկել այստեղ, իսկ այն ժամանակ ոչ ոքի, ոչ մի ոռճիկով հնարավոր չէր քաշել այստեղ՝ սարօղեկներ։ Ինչքա՞ն գնացք է եկել ու անցել նրա օրոք, մազերը հերիք չեն համրելու համար... Թող Օսպանը մի քիչ խելքին գոռ տա։ Այդպես էլ ասա։ Հա, լսի՛ր...

— Լսում եմ։

— Հերթով արթնացրու բոլորին։ Թակիր լուսամուտները։ Քանի մարդ ենք այստեղ, ընդամենը ութը տուն, կարելի է մատների վրա հաշվել... Բոլորին ոտքի հանիր։ Այսօր ոչ ոք չպիտի քնի, որովհետև այդպիսի մարդ է մահացել։ Բոլորին ոտքի հանիր։

— Բա որ նեղանա՞ն։

— Մեր պարտքն է հայտնել բոլորին, դրանից հետո թե կնեղանան, թող նեղանան։ Ասա, որ ես եմ կարգադրել արթնացնել։ Հարկավոր է խիղճ ունենալ։ Սպասիր։

— Ի՞նչ։

— Նախ վազիր հերթապահի մոտ, այսօր դիսպետչերը Շայմերդենն է, նրան հաղորդիր ինչն ինչից է և ասա, թող մի բան մտածի, գուցե այս անգամ ինձ փոխարինող ճարի։ Եթե կարողանա, թող իմաց անի։ Հասկացա՞ր, այդպես էլ ասա։

— Կասեմ, կասեմ,— պատասխանեց Ուկուբալան, հետո հանկարծ սթափվեց, կարծես հիշելով ամենակարևորի մասին, որ աններելիորեն մոռացել էր։— Հապա մեռնողի երեխանե՞րը։ Ա՛յ քեզ բան։ Ախր, հարկավոր է առաջին հերթին լուր ուղարկել նրանց, թե չէ ինչպե՞ս, հայր է մահացել...

Եղիգեյն այդ խոսքերից անսովոր խոժոռվեց, ավելի խստացավ։ Պատասխան չտվեց։

— Ինչ էլ լինի, երեխան մնում է երեխա,— շարունակեց Ուկուբալյան, ինքնարդարացման եղանակով, իմանալով, որ Եղիգեյը տհաճությամբ է լսում։

— Գիտեմ,— ձեռքը թափ տվեց նա։— Դու կարծում ես չե՞մ հասկանում։ Իհարկե, առանց նրանց չի լինի, չնայած իմ կամքով լիներ, դրանց մոտ չէի թողնի։

— Եղիգեյ, դա մեր գործը չի։ Թող գան իրենք թաղեն։ Հետո ասեկոսե շատ կլինի։ Հարյուր տարի չես ազատվի...

— Ես նրանց խանգարո՞ւմ եմ։ Թող գան։

— Իսկ տղան ինչպե՞ս կհասնի քաղաքից։

— Սրտում տեղ լինի, կհասնի։ Դեռ երեկ չէ անցյալ օրը, երբ կայարան էի գնացել, հեռագիր տվեցի, թե այսպես ու այսպես, հայրդ մահամերձ պառկած է։ Էլ ի՞նչ անեի։ Իրեն խելացի է համարում, թող հասկանա ինչն ինչոց է...

— Դե, եթե այդպես է, ուրեմն ոչինչ,— կինն անորոշ համաձայնեց Եղիգեյի փաստարկներին և անձնատուր լինելով իրեն խռովող մտքերին, ավելացրեց,— գոնե կնոջ հետ գար, ինչքան չլինի սկեսրայր է մահացել, հո պատահական մարդ չի։

— Դա արդեն իրենց գործն է։ Փոքր չեն, որ մենք հասկացնենք։

— Ճիշտ է, իհարկե,— տխրված համաձայնեց Ուկուբալյանը։

Նրանք լռեցին։

— Դեհ, էլ մի ուշանա, գնա,— հիշեցրեց Եղիգեյը։

Բայց կինն էլի բան ուներ ասելու.

— Հապա աղջի՞կը, անբախտ Այզադան, նա պիտի մարդու՝ էն անտեր հարբեցողի և երեխաների հետ, կայարանից գա հասնի թաղմանը։

Եղիգեյն ակամա ժպտաց, թփթփացրեց կնոջ ուսը։

— Ընհը՛, հիմա պիտի բոլորի համար մեկ-մեկ հուզվես... Այզադային իմաց անելը հեշտ է։ Առավոտյան մեկնումեկը կայարան կգնա, կասի, նա էլ, իհարկե կգա։ Բայց դու, մի բան լավ իմացիր, ո՛չ Այզադայից, ո՛չ էլ մանավանդ Սաբիթջանից, չնայած որդին է, տղամարդ, օգուտ չկա։ Ա՛յ, կտեսնես, ուզեն-չուզեն կգան, ինչ պիտի անեն, բայց իրենց կպահեն օտարի նման, իսկ թաղելը, մենք ենք թաղելու... Դե գնա և արա այնպես, ինչպես ասել եմ։

Կինը գնաց, հետո անվճռական կանգ առավ, նորից գնաց։ Բայց այս անգամ Եղիգեյը կանչեց նրան.

— Ջմոռանամ, նախ և առաջ կգնաս հերթապահ Շայմերդենի մոտ, թող մարդ ուղարկի իմ փոխարեն, ես հետո տեղը կաշխատեմ։ Հանգուցյալը պառկած է դատարկ տանը, մոտը մարդ չկա, ինչպե՞ս կարելի է... Այդպես էլ ասա...

Կինը գլխով արեց և գնաց։ Այդ ընթացքում հեռացույցի վրա դղզաց, աչքով արեց ազդանշանիչի կարմիր լույսը, Բորանլի կիսակայարանին էր մոտենում նոր գնացք։ Հերթապահի կարգադրությամբ հարկավոր էր գնացքն ընդունել պահեստի գծի վրա, որպեսզի հնարավոր լիներ բաց թողնել հանդիպակացը, որը նույնպես գտնվում էր կիսակայարանի մուտքի մոտ, բայց սլաքի հակառակ կողմում։ Սովորական մանևր։ Քանի դեռ գնացքներն ընթանում էին իրենց երկաթուղագծով, Եղիգեյը մեջընդմեջ նայում էր գծի եզրով հեռացող Ուկուբալային, կարծես բան էր մոռացել ասելու։ Ասելու բան, իհարկե կար, թաղումից առաջ գործ շատ է լինում, հո ամեն ինչ հնարավոր չէ միանգամից հիշել, բայց նայում էր ոչ դրա համար, պարզապես, նոր էր ցավով ուշադրություն դարձնում, թե վերջերս որքան է ծերացել, կուացել կինը, և դա առանձնապես նկատելի էր ճանապարհի թույլ լույսերի դեղին մշուշի մեջ։

«Կնչանակի, ծերությունն արդեն եկավ,— անցավ նրա մտքով։ Այ թե ինչ օրի հասանք՝ ծերուկ ու պառավ»։ Ու թեև աստված առողջություն տվել է, դեռ պինդ է ինքը, բայց տարիների հաշիվը շատ է ավելացել. վաթսուն ու մի տարի էլ ավել, արդեն վաթսունմեկ տարեկան է։ «Մեկ էլ տեսար մի երկու տարուց թոշակի ուղարկեցին»,— մտքում հեգնեց Եղիգեյը։ Թեև իհարկե, գիտեր, որ այդքան շուտ չի գնա թոշակի, և այնքան էլ հեշտ չի այս կողմերում շրջագայող ուղեղնիչ և վերանորոգող բանվոր գտնել իր փոխարեն, մեկ-մեկ էլ սլաքավար է եղել, երբ մեկնումեկը հիվանդացել կամ արձակուրդ է գնացել։ Եթե, իհարկե, որևէ մեկը աչք չդնի լրացուցիչ վարձատրության վրա, որ տրվում է հեռավորության և ջրազրկության համար։ Բայց դժվա՞ր։ Որտեղի՞ց գտնիկվա երիտասարդների մեջ նման մարդ։

Սարօզեկյան կիսակայարաններում ապրելու համար հարկավոր է հոգի ունենալ, թե չէ կփտես։ Տափաստանը հսկա, մարդը՝ փոքր։ Տափաստանն անկարեկից է. նրա համար մեկ է, լավ ես, լավ չես, պիտի նրան ընդունես այնպես, ինչպես կա, իսկ մար-

դու համար մեկ չի, թե աշխարհում ինչն ինչպես է, նա տանջվում, չարչարվում է, նրան թվում է, թե ուրիշ տեղում, ուրիշ մարդկանց մեջ, բախտը կժպտար, և որ ինքն այստեղ է ընկել ճակատագրի սխալմունքով. ... Դրա համար էլ իրեն կորցնում է վիթխարի, անողոք տափաստանի առջև, հոգին լիցքաթափ է լինում, ինչպես Շայմերդենի այն հռանիվ մոտոցիկլետի ակումուլյատորը։ Տերը շարունակ խնայում է մոտոցիկլետը, ոչ ինքն է քշում, ոչ ուրիշներին է տալիս։ Այդպես էլ մեքենան անգործ մնում է, իսկ երբ հարկավոր է լինում, չի լարվում, սպառվել է լարման ուժը։ Նույն վիճակում էլ մարդն է սարօզեկյան կիսակայարաններում։ Գործին չկպչի, արմատ չի գցի տափաստանում, չի ընտելանա, դժվար կլինի դիմանալ։ Ոմանք նույնիսկ այս կողմերով անցնելիս գլուխն են բռնում. տեր աստված, ինչպե՞ս են ապրում այստեղ։ Ուր նայում ես՝ տափաստան և ուղտեր։ Ապրո՞ւմ են, էլի, ում համբերությունը որքան տալիս է, ապրում է։ Երեք, շատ-շատ չորս տարի դիմանում են և վերջ։ Հաշիվները մաքրում են, թողնում գնում...

Բորանլիում միայն երկու հոգի են խոր արմատներ գցել մնացել։ Ղազանղապն ու ինքը՝ Բորանլի Եդիգեյը։ Իսկ քանի՜ քանիսն են եկել ու գնացել այդ ընթացքում։ Դժվար է սեփական անձի մասին դատողություն անել, ապրել է, դիմացել է, բայց Ղազանղապը քառասունչորս տարի աշխատել է այստեղ, և ոչ թե նրա համար, որ ուրիշներից վատն է եղել։ Եդիգեյը նրա մի մազը չէր փոխի տասը մարդու հետ... Հիմա չկա, այլևս չկա Ղազանղապը...

Գնացքները հավասարվեցին, անցան իրար կողքով. մեկը գնաց արևելք, մյուսը՝ արևմուտք։ Որոշ ժամանակ ամայացան Բորանլիի ճամփաբաժանները։ Եվ անմիջապես շուրջն ամեն ինչ մերկացավ, մութ երկնքում կարծես ավելի պայծառ, ավելի հստակ շողացին աստղերը, և քամին ավելի աշխույժ վազվզեց լանջերի, փայտակոճերի, թույլ զրնգացող ու չխչխկացող ռելսերի միջև փռված խճաքարերի վրա։

Եդիգեյը չէր վերադառնում տնակ։ Կռնակը սյունին դեմ տված, ընկել էր մտքի մեջ։ Դիմացը, հեռու-հեռվում, երկաթգծից այն կողմ զանազանվում էին դաշտում արածող ուղտերի տարտամ ուրվագծերը։ Նրանք լուսնի տակ անշարժ կանգնած սպասում էին, որ գիշերն անցնի։ Եվ Եդիգեյը նրանց մեջ տեսնում էր իր երկսապատավոր, մեծագլուխ նառին, սարօզեկների թերևս ամե-

նաուժեղ և արագաքայլ ուղտին, որին տիրոջ նման անվանում էին Բորանլի Կարանար։ Եդիգեյը հպարտանում էր նրանով, հազվագյուտ ուժի տեր անասուն է, չնայած հեշտ չի նրան իշխելը, որովհետև Կարանարը մնացել էր աթան, փոքր ժամանակ Եդիգեյը նրան չէր կրտել, իսկ հետո այլևս ձեռք չէր տվել։

Վաղվա զանազան գործերի մեջ Եդիգեյը մտքում նշեց, որ հարկավոր է նաև Կարանարին առավոտ վաղ տուն քշել, դնել թամբի տակ։ Թաղման ժամանակ հարկավոր կլինի։ Հետո միտքն ընկան այլ տարբեր հոգսեր...

Իսկ կիսակայարանում մարդիկ դեռ խաղաղ քնած էին։ Երկաթուղու եզրին ծվարած ոչ մեծ կայարանային ծառայության գրասենյակներ, միատեսակ հերձաքարե երկթեք տանիքով տներ, դրանք վեց հատ փայտյա հավաքովի շինություններ էին, որ դրել էր երկաթուղային գերատեսչությունը, և դեռ Եդիգեյի տունը, որ ինքն էր կառուցել, հանգուցյալ Ղազանղապի խրճիթը, բակային զանազան վառարաններ, կից շինություններ, եղեգնասալե ցանկապատեր անասունի համար, այլևայլ անհրաժեշտ բաներ, կենտրոնում հողմային, միաժամանակ էլեկտրապոմպային և անհրաժեշտության դեպքում՝ ձեռքի ջրհան մեքենա, որ այստեղ հայտնվել էր վերջին տարիներս,— ահա և Բորանլի ամբողջ փոքրիկ ավանը։

Այնպես, ինչպես կա, վիթխարի երկաթուղուն կից, սարօղեկյան վիթխարի տափաստանին կից, փոքրիկ կապող օղակը՝ արյունատար անոթների նման ճյուղավորված այլ կիսակայարանների, կայարանների, հանգույցների, քաղաքների համակարգում... Այնպես, ինչպես կա, խոստովանողի նման, պարզված աշխարհի բոլոր քամիներին, մանավանդ ձմեռային քամիներին, երբ գալարվում է սարօզեկյան բուքբորանը, տները՝ մինչև լուսամուտ, ծածկելով ձնաթմբերով, իսկ երկաթուղին՝ ձնահյուսի սառած, կարծրացած բլրակներով... Դրա համար էլ տափաստանային այս կիսակայարանը կոչվում է Բորանլի (փոթորկալի), իսկ ցուցատախտակի վրա կրկնակի մակագրություն կա. Բորանլի՝ ղազախերեն, Բուրաննի՝ ռուսերեն...

Եդիգեյը հիշում է, որ առաջ, կայարանամիջում ամեն տեսակի ձյունամաքրիչների՝ ձյունը շիթերով նետող, ձյունը կողային թիակներով ետ տանող և այլն, հայտնվելուց առաջ, ինքն ու Ղազանղապը ստիպված էին լինում, այսպես ասած, կենաց ու մահու կռիվ տալ երկաթուղին ծածկող ձնահյուսերի դեմ։ Թվում է,

դա երեկ էր։ Հիսունմեկ, հիսուներկու թվականներին ի՜նչ դաժան ձմեռներ էին լինում։ Ու միայն ռազմաճակատում չի այնպես լինում, որ կյանքն օգտագործվում է մեկ անգամվա համար. մի գրոհի, տանկի տակ մի նռնակ նետելու համար… Նույնը և այստեղ էր։ Ճիշտ է, քեզ ոչ ոք չէր սպանում։ Բայց ինքդ էիր սպանվում։ Ինչքա՜ն ձյունահյուս են ձեռքով դեն նետել, քարշակներով հանել, նույնիսկ պարկերով են ձյունը տարել վերև, յոթերորդ կիլոմետրի վրա, այնտեղ ճանապարհը անցնում է ներքևից, կտրված թմբի միջով, և ամեն անգամ թվացել է, թե սա վերջին գոտեմարտն է գալարվող ձյունամրրիկի դեմ և որ հանուն դրա կարող ես, առանց տատանվելու, կյանքդ տալ, միայն թե չլսես, թե ինչպես են տափաստանում ոռնում շոգեքարշերը, թե՝ ճանապարհ տո՜ւր։

Բայց այն ձյուները հալվել են արդեն, այն գնացքները սուրացել-հեռացել են, այն տարիներն անցել-գնացել… Հիմա ոչ ոքի փույթը չի՝ եղել է, չի եղել։ Հիմիկվա ճանապարհայինները այստեղ են գալիս կարճ ժամանակով, ճղճղան տիպեր են. վերստուգիչ-վերանորոգող բրիգադներ, դրանց գլուխը չի մտնում, այսինքն, ոչ թե չեն հավատում, պարզապես չեն պատկերացնում, որ սարօզեկյան այս ձնահյուսերի դեմ կայարանամիջում եղել են ընդամենը մի քանի մարդ՝ բահերով։ Հրա՜շք է, ինչ է։ Նրանցից մի քանիսը բացեիբաց ծիծաղում են, իսկ հանուն ինչի՞ են այդպիսի բեռ վերցրել իրենց ուսերին, ինչո՞ւ են զոռով թաղել իրենց, ո՞ր օրենքով։ Մենք ոչ մի դեպքում չէինք հանդուրժի։ Գնայիք այսինչի մոտ, այնինչի մոտ, ծայրահեղ դեպքում կարելի էր թողնել գնալ շինարարություն, կամ էլ մի ուրիշ կարգին տեղ, որտեղ ամեն ինչ տեղը տեղին է։ Այսքան աշխատել ենք, այսքան էլ վճարիր… իսկ եթե ավրալ լինի, ժողովուրդ հավաքիր, արտաժամ աշխատեցրու… «Հիմարի տեղ են դրել ձեզ, ծերուկներ, այսինքն դուք հիմար էլ կմնաք…»։

Երբ այդպիսի «վերագնահատողներ» էին հանդիպում, Ղազանղապը նրանց բանի տեղ չէր դնում, կարծես դա իրեն չէր վերաբերում, միայն քթի տակ ծիծաղում էր, ասես իրեն հայտնի էր ինչ-որ մեծ, նրանց անմատչելի բան, բայց Եդիգեյը չէր դիմանում, պայթում էր, կռվում, վիճում էր, արյուն պղտորում։

Ձնայած Ղազանղապի և իր միջև խոսք շատ է գնացել նաև այն մասին, ինչի վրա որ հիմա այդպես ծիծաղում էին ստուգիչ-վերանորոգող հատուկ վագոններով թրև եկող այս տիպերը։ Տաս

*ու շատ ուրիշ բաներից էլ են խոսել, և դեռ այն տարիներին, երբ այս իմաստունները անփոխան երեխաներ են եղել, իրենք, ինչքան խելքները կտրել է, դատել դատողություն են արել կյանքի մասին, հետո էլ են խոսել, ախր ժամանակ շատ են ունեցել. 1945 թվականից մինչև հիմա, մանավանդ հետո, երբ Ղազանդապը թոշակի անցավ և մի տեսակ անհաշող դասավորվեց նրա կյանքը. գնաց քաղաք, որ ապրի որդու հետ, բայց երեք ամսից ետ եկավ։ Այն ժամանակ ինչքան են զրույց արել, ծանրութեթև արել աշխարհի բանը։ Իմաստուն մարդ էր Ղազանդապը։ Հիշելու բան շատ ունի... Ու հանկարծ Եղիգեյը կատարյալ հստակությամբ և խոր մորմոքով գիտակցեց, որ այսուհետև իրեն մնում է լոկ հիշելը...*

*Եղիգեյը հանկարծ լսեց, որ չրխկաց միացավ խոսակցելու ապարատի միկրոֆոնը, շտապեց տնակ։ Հողմի նման խշրտաց, թշշաց հիմար սարքը, մինչև որ վերջապես ձայն եկավ...*

*— Եղիկե, ալլո, Եղիկե,— ֆսսաց Շայմերդենը՝ կիսակայարանի հերթապահը,— լսո՞ւմ ես, պատասխանիր։*

*— Լսո՛ւմ եմ, լսո՛ւմ եմ։*

*— Լսո՞ւմ ես։*

*— Լսո՛ւմ եմ, լսո՛ւմ եմ։*

*— Ինչպե՞ս ես լսում։*

*— Ինչպես այն աշխարհից։*

*— Ինչո՞ւ ինչպես այն աշխարհից։*

*— Այդպես։*

*— Ա-ա՛... Ուրեմն ծերուկ Ղազանդապը էնպես էլի։*

*— էնպեսը ո՞րն է։*

*— Դե, մեռել է, ուրեմն,— Շայմերդենը ջանում էր գտնել հարմար բառեր։— Ո՞նց ասեմ։ Ուզում եմ ասել, ավարտեց էլի, իր փառավոր ուղին։*

*— Այո,— կարճ պատասխանեց Եղիգեյը։*

*«Այ քեզ անուղեղ հայվան,— մտածեց նա։— Նույնիսկ մահվան մասին չի կարող մարդավարի խոսել»։*

*Շայմերդենը մի վայրկյան ձայնը կտրեց։ Միկրոֆոնն ավելի ուժեղ բռնկվեց խշշոցով, ճռռոցով, ծանր հևոցով։ Հետո Շայմերդենի ձայնը խոսպտեց.*

*— Եղիկե, սիրելիս, միայն թե տես, գլուխս չտանես։ Մեռել է, մեռել է, ինչ անենք... Ես մարդ չունեմ։ Ի՞նչ կարիք կա, որ*

գնաս մոտը նստես։ Իմ կարծիքով, դրանով հանգուցյալին, ոնց ասած, ետ չես բերելու...

— Իսկ իմ կարծիքով, դու ոչինչ չես հասկանում։— Ի՞նչ է նշանակում գլուխ չտանես։ Դու այստեղ ընդամենը երկու տարի ես աշխատում, իսկ մենք երեսուն տարի ենք աշխատել իրար հետ։ Մի քիչ ուղեղդ շարժիր։ Մարդ է մահացել, չի կարելի, ո՞վ է տեսել հանգուցյալին մենակ թողնեն դատարկ տան մեջ։

— Ո՞նց պիտի իմանա; էսպես ասած, ինքը մենակ է, թե մենակ չի։

— Ինքը չգիտի, մենք գիտենք։

— Դե լավ, ինչ ես ձենդ գլուխդ գցում, սո՛ւս կաց։

— Ես քեզ բացատրում եմ։

— Ի՞նչ ես ուզում, ես մարդ չունեմ։ Այնտեղ ի՞նչ պիտի անես, մեկ է, գիշեր է։

— Պիտի աղոթեմ։ Հանգուցյալին պիտի հարգեմ։ Աղոթք պիտի ասեմ։

— Աղո՞թք։ Դու, Բորանլի Եդիգե՞յը։

— Այո։ Ես աղոթքներ գիտեմ։

— Ա՜յ քեզ բա՜ն։ Վաթսուն տարի է, էսպես ասած, Սովետական իշխանություն է։

— Այ մարդ, Սովետական իշխանությունն ի՞նչ կապ ունի։ Մեռնողի համար մարդիկ աղոթում են հնուց։ Ախր մարդ է մահացել, ոչ թե անասուն։

— Դե լավ, աղոթում ես, աղոթիր, բայց, էսպես ասած, մի զոռզոռա։ Մարդ կուղարկեմ Էդիլբայի ետևից, թե կգա, թող գա, էսպես ասած, քեզ կփոխարինի... Իսկ այժմ, հարյուր տասնյոթերորդն է գալիս, պատրաստվիր երկրորդ պահեստայինի համար...

Եվ այդ խոսքերով Շայմերդենը անջատվեց, չխկացրեց խոսակցելու անջատիչը։ Եդիգեյը շտապեց սլաքի մոտ և գործ էր անում ու մտածում. «կհամաձայնի՞», կգա արդյոք Էդիլբայը։ Հետո հուսադրվեց, դե, մարդիկ ախր խիղճ ու խղճմտանք ունեն, երբ տեսավ, որ պայծառ լուսավորվեցին մի քանի տների լուսամուտներ։ Շները հաչեցին։ Ուրեմն կինը անհանգստացնում, ոտքի է հանում բորանլիցիներին։

Այդ ժամանակ հարյուր տասնյոթերորդը կանգնեց պահեստային գծի վրա։ Մյուս ծայրից մոտեցավ նավթատար գնացքը՝

միայն ցիտաեռնները։ Գնացքներն անցան իրար կողքով, մեկը գնաց արևելք, մյուսը՝ արևմուտք...

Արդեն գիշերվա ժամը երկուսն էր։ Երկնքում վառվում էին աստղերը, հատակ չոկվում էր ամեն մի աստղ։ Լուսինն ավելի պայծառ էր շողում սարոզեկների վրա, ասես լցվելով լրացուցիչ, աստիճանաբար ավելացող ուժով։ Իսկ աստղալից երկնքի տակ անսահմանորեն փռվել էին հեռու սարոզեկները, և զանազանվում էին միայն ուղտերը, և դրանց մեջ հսկա երկսապատանի Քարանըլի Կարանարի կերպարանքը, մեկ էլ մոտակա բլուրների տարտամ ուրվագծերը, մնացյալ ամենայն ինչ՝ երկաթուղու երկու կողմերում, կորչում էր գիշերային անվերջության մեջ։ Մեկ էլ քամին չէր քնել, շարունակ սուլում, խշխշում էր աղբակույտերի մեջ։

Եդիգեյը անընդհատ ներսուդուրս էր անում, սպասում էր, երկաթուղու վրա չի երևում, արդյո՞ք, երկար էդիլբայը։ Եվ այդ պահին, քիչ այն կողմ նա տեսավ ինչ-որ գազանիկի։ Պարզվեց, որ աղվես էր։ Նրա աչքերը կայծկլտում էին կանաչավուն լույսի գունախաղով։ Գլխահակ կանգնել էր հեռագրասյան տակ և ոչ առաջ էր գալիս, ոչ էլ ետ էր գնում։

— Դու ի՞նչ բանի ես այստեղ,— մռթմռթաց Եդիգեյը և մատը կատակով թափ տվեց։ Աղվեսը չվախեցավ։— Սպասի՛ր, հիմա ես քեզ ցույց կտամ, և ոտքը խփեց գետնին։

Աղվեսը ետ ցատկեց, հետո նստեց, շուռ գալով նրա կողմը։ Աղվեսն անքթիթ ու վշտոտ, ինչպես թվաց Եդիգեյին, առանց աչք կտրելու նայում էր, չգիտես իրեն, թե կողքին գտնվող մի ուրիշ բանի։ Ի՞նչը կարող էր գրավել աղվեսին, ինչո՞ւ էր եկել այստեղ։ Միգուցե էլեկտրական լույսերն են հրապուրել, թե՞ քաղցն է բերել։ Եդիգեյի աչքին տարօրինակ թվաց նրա վարքը։ Իսկ ինչո՞ւ քարով չխփի, քանի այդպես է, քանի որսը իր ոտքով է եկել։ Եդիգեյը գետնից մի մեծ քար վերցրեց։ Նշան բռնեց, ձեռքը ետ տարավ, վրա բերեց, հետո իջեցրեց։ Քարը գցեց ոտքի տակ։ Քարինքը վրա տվեց։ Ինչեր ասես, որ մարդու գլուխը չի գալիս։ Հիմարություն։ Երբ ուզում էր աղվեսին խփել, հանկարծ հիշեց, որ մեկը պատմում էր. ո՞վ էր, կարծես այստեղ եղած տիպերից մեկն էր, թե՞ լուսանկարիչը, որի հետ ստածու մասին էին զրուցում, թե՞ ուրիշն էր, ախ ո՞վ, Սաբիթջանն էր պատմում, թող կորչի գնա, շարունակ տարօրինակ բաներ է պատմում, մենակ թե ականջ դնող լինի, մենակ թե զարմացող լինի։ Եվ

Սաքիթջանը՝ Ղազանղապի որդին, պատմում էր հոգու ետմահու տեղափոխության մասին։

Ոչ բարով կրթություն է ստացել, անբան չատախոսը։ Նայում ես բոյուբուսին, ամեն ինչ տեղը տեղին։ Ամեն ինչ գիտի, լսել է, չիմացած բանը չկա, բայց ի՞նչ օգուտ։ Հա սովորեցրել են ու սովորեցրել գիշերօթիկներում ու ինստիտուտներում, բայց մարդ չի դարձել։ Գլուխգովան է, խմելու հետ՝ լավ, բաժակաճառ ասելու մեջ՝ վարպետ, բայց գործի հետ գլուխ չունի։ Մի խոսքով դատարկ մարդ է, Ղազանղապի ճկույթը չարժի, բայց արի ու տես, որ անընդհատ դիպլոմն է թափահարում։ Չէ՛, բան դուրս չի եկել, որդին հորը չի քաշել։ Աստված նրա հետ, ի՞նչ պիտի անես, այդ է եղածը։

Այսպես, ուրեմն, այդ Սաքիթջանը պատմում էր, իբր, Հնդկաստանում հավատում են մի ուսմունքի, ըստ որի մարդը մահանում է, նրա հոգին տեղափոխվում է մեկ ուրիշ կենդանի արարածի մեջ, թեկուզ նույնիսկ մրջյունի մեջ։ Եվ իբր, ամեն մարդ, մի ժամանակ, դեռևս իր ծնունդից առաջ, թռչուն է եղել կամ որևէ գազան, կամ միջատ է եղել։ Դրա համար էլ Հնդկաստանում կենդանիներին սպանելը համարվում է մեղք, եթե ճանապարհին նույնիսկ օձ, կոբրա հանդիպի, ձեռք չեն տա, գլուխ կտան, ճանապարհը կզիջեն նրան։

Ինչ հրաշք ասես, որ չկա աշխարհում։ Ի՞նչ իմանաս, ճի՞շտ է, սո՞ւտ է, այդ ամենը։ Աշխարհը մեծ է, դեհ, մարդն էլ հո ամեն ինչ չգիտի։ Ահա, երբ ուզում էր քարով խփել աղվեսին, հանկարծ մտքով անցավ, չլինի՞ թե Ղազանղապի հոգին հիմա աղվեսի մեջ է։ Միգուցե Ղազանղապը, տեղափոխվելով աղվեսի մեջ, հիմա եկել է իր լավ ընկերոջ մոտ, որովհետև իր մահից հետո խրճիթը դատարկ է, անմարդ, տխուր... «Այս ինչեր եմ դուրս տալիս,— ինքն իրեն նախատեց նա։— Այս ի՞նչ մտքեր են գալիս։ Թո՛ւհ, խելքս գցել եմ»։

Համենայն դեպս, նա զգույշ մոտեցավ աղվեսին և ասաց, կարծես թե սա կարող էր խոսք հասկանալ.

— Գնա, սա քո տեղը չի, գնա քո տափաստանը։ Լսո՞ւմ ես։ Գնա՛, գնա՛։ Միայն թե ոչ այն կողմը, այնտեղ շներ կան։ Գնա՛, հաջողություն, գնա քո տափաստանը։

Աղվեսը ետ դարձավ, վախվխելով գնաց։ Մեկ-երկու անգամ ետ նայեց և չքացավ խավարում։

Այդ միջոցին նորից կիսակայարան մտավ հերթական երկա-

թուղային գնացքը։ Գնացքը դղրդալով աստիճանաբար դանդաղեցրեց ընթացքը, իր հետ բերելով շարժման թրթռուն խավարը՝ վագոնների վերևում թռչող փոշին։ Երբ գնացքը կանգ առավ, լոկոմոտիվից, որ զուսպ դզզում էր շարժիչների գատարկ պտույտներից, դուրս նայեց մեքենավարը։

— Հե՜յ, Եդիկե, Բորանլի, ասսալամ-ալեյքում։

— Ալեյքիմ-ասսալա՜մ։

Եդիգեյը գլուխը բարձրացրեց, որ ավելի լավ տեսնի, թե ով է։ Այս գծի վրա բոլորը ճանաչում են իրար։ Իրենց տղաներից էր։ Հենց նրա միջոցով էլ Եդիգեյը հաղորդեց, որ Ղումբելում՝ հանգուցային կայարանում, որտեղ ապրում էր Այզադան, հայտնեն հոր մահը։ Մեքենավարը սիրով համաձայնեց կատարելու այդ խնդրանքը, Ղազանղապի հիշատակի հարգանքից, մանավանդ որ Ղումբելում գնացքային բրիգադների վերահերթափոխ էր, և նույնիսկ խոստացավ վերադարձին հետը բերել Այզադային՝ ընտանիքով, եթե իհարկե այդքան ժամանակում նրանք հասցնեն։

Դա վստահելի մարդ էր։ Եդիգեյի սիրտը թեթևացավ։ Ուրեմն, մի գործ արված էր արդեն։

Մի քանի րոպեից գնացքը շարժվեց, և, մեքենավարին հրաժեշտ տալիս, Եդիգեյը տեսավ, որ մի լողլող մարդ, երկաթգծի երկարությամբ ընթացող գնացքի կողքով գալիս է իր կողմը։ Եդիգեյը ուշադրությունը լարեց. Էդիլբայն էր։

Մինչ Եդիգեյը կհանձներ հերթափոխը, մինչ երկար Էդիլբայի հետ կխոսեին պատահածի մասին, ախ ու վախ կանեին, կհիշեին Ղազանղապին, Բորանլի մտան ու բաժանվեցին ևս մի զույգ գնացք։ Եվ երբ, ազատվելով բոլոր այս գործերից, Եդիգեյը տուն էր գնում, վերջապես ճանապարհին հիշեց, որ մինչև հիմա մոռացել էր կնոջը հիշեցնել, ավելի շուտ խորհրդակցել, թե ինչ անեն, իրենց աղջիկներին ու փեսաներին ինչպե՞ս իմաց անեն ծերունի Ղազանղապի մահվան մասին։ Եդիգեյի երկու ամուսնացած աղջիկներն ապրում էին բոլորովին հակառակ կողմում՝ Կըզըլ Օրդայի մերձակայքում, մեծը բրնձաբուծական սովխոզում, ամուսինը տրակտորիստ էր, իսկ փոքրը սկզբում ապրում էր Կազալինսկ կայարանի մոտակայքում, հետո ընտանիքով տեղափոխվեց քրոջը մոտիկ, միևնույն սովխոզը, ամուսինը վարորդ էր աշխատում։ Թեև Ղազանղապը նրանց ազգական չէր, բայց

անհրաժեշտ էր անպայման գալ նրա թաղմանը։ Եղիգեյը համոզված էր, որ Ղազանղապը նրանց համար ավելի թանկ է, քան որևէ ազգական։ Աղջիկները ծնվել էին նրա օրով, Բորանլիում։ Այստեղ հասակ էին առել, դպրոց գնացել, սովորել Կումբելի կայարանային գիշերօթիկում։ Աղջիկներին այնտեղ էին տանում հերթով, մեկ Ղազանղապը, մեկ Եղիգեյը։ Հիշեց աղջիկներին։ Հիշեց, որ արձակուրդի ժամանակ նրանց տանում կամ արձակուրդից բերում էին ուղտով։ Փոքրը նստում էր առջևում, հայրը՝ մեջտեղում, մեծը՝ ետևում, և երեքով գնում էին։ Մի երեք ժամ, ձմռանը ավելի երկար, Կարանարը վարգով, ոտքերը լայն-լայն դնելով Բորանլիից վազում էր մինչև Կումբել։ Իսկ եթե Եղիգեյը ժամանակ չէր ունենում, նրանց տանում էր Ղազանղապը։ Հոր նման է եղել։ Եղիգեյը որոշեց առավոտյան հեռագիր տալ աղջիկներին, թող ինչպես ուզում են, անեն... Բայց իմանան, որ ծերունի Ղազանղապն այլևս չկա...

Հետո նա քայլում ու մտածում էր, որ առավոտյան հարկավոր է նախ և առաջ արոտավայրից բերել Կարանարին, նա շատ ցնետք կլինի։ Մեռնելը հեշտ բան չի, և մարդուն հարգուպատվով թաղելը նույնպես հեշտ չի... Հանկարծ պարզվում է, որ այս չկա, այն չկա, որ հարկավոր է շտապ ամեն ինչ ձեռք բերել, սկսած սավանից, մինչև հոգեհացի փայտը։

Հենց այդ պահին օդը տատանվեց, ինչպես ռազմաճակատում էր լինում, հզոր պայթուցիկ ալիքի հեռավոր զարկի նման, և գետինը սասանվեց ոտքի տակ։ Եվ ճիշտ իր առջև տեսավ, որ հեռու տափաստանում, այն կողմում, որտեղ ինչքան իրեն հայտնի էր, տեղադրված է Սարօզեկյան տիեզերակայանը, մի բան սուրաց դեպի երկինք, կրակե պտուտահողմի նման անընդհատ բոցավառվելով և վեր խոյանալով։ Եվ ապշեց. հրթիռ էր բարձրանում տիեզերք։ Այդպիսի բան դեռ կյանքում չէր տեսել։ Նա գիտեր, ինչպես բոլոր սարօզեկցիները գիտեին, Սարի-Օզեկ-1 տիեզերակայանի գոյության մասին, որ այստեղից մոտ քառասուն, կամ թերևս մի քիչ պակաս, կիլոմետրի վրա է, գիտեր, որ այնտեղ անց է կացված առանձին երկաթգծային ճյուղ՝ Թօզբեկ-Տամ կայարանից, պատմում էին նույնիսկ, որ այդ կողմերում, տափաստանում բարձրացել է մի մեծ քաղաք, մեծ խանութներով, շատ է լսել ռադիոյով, զանազան խոսակցությունների ժամանակ, թերթերում կարդացել տիեզերագնացների, տիեզերական թռիչքների մասին։ Այդ ամենը տեղի է ունեցել այստեղ մոտիկ

(Համենայն դեպս ինքնագործունեության համերգի ժամանակ, այն մարզային քաղաքում, որտեղ Սաբիթջանն է ապրում, իսկ այդ քաղաքը շատ ավելի հեռու է, մոտ մեկուկես օրվա ճանապարհ գնացքով, երեխաների երգչախումբը երգում էր, որ իրենք աշխարհի ամենաերջանիկ երեխաներն են, որովհետև տիեզերագնաց քեռիները տիեզերք են թռչում իրենց հողից), բայց քանի որ տիեզերակայանը շրջապատող ամենայն ինչ համարվում էր փակ գոտի, ապա Եդիգեյն ապրելով այդ կողմերից ոչ այնքան հեռու, բավարարվում էր այս ու այն կողմից լսածով ու իմացածով։ Եվ ահա, առաջին անգամ, սեփական աչքով տեսավ, թե տիեզերական հրթիռը մոլեգնող կրակի ինչպիսի ահեղ ուժով է խոյանում դեպի աստղային մութ բարձունքները՝ շուրջը պայծառացնելով թրթռուն լույսի փայլատակումներով։ Եդիգեյը շփոթվեց։ Մի՞թե այդ կրակե քուրայում մարդ է նստած։ Մե՞կ թե երկու։ Հետաքրքիր է, ինչո՞ւ մինչև օրս մշտապես ապրելով այստեղ, դեռ ոչ մի անգամ թռիչքի պահ չէր տեսել, չնայած քանի՜ անգամ են արդեն տիեզերք թռել, հաշիվը կորել է։ Միգուցե առաջ տիեզերանավերը ցերեկով են թռել։ Արև ժամանակ, դժվար թե այսպիսի տարածությունից բան երևա։ Տեսնես ինչո՞ւ է այս մեկը պոկվել գիշերով։ Երևի շտապել է, կամ այդպես է պետք։ Կամ երևի երկրից դուրս է գալիս գիշերը և այնտեղ, անմիջապես ընկնում է լույսի մեջ։ Սաբիթջանը պատմում էր, իբր, տիեզերքում ցերեկն ու գիշերը փոխվում են կես ժամը մեկ։ Այնպես էր պատմում, կարծես ինքն անձամբ ներկա է եղել։ Հարկավոր է Սաբիթջանին մեկ էլ հարցնել։ Սաբիթջանը ամեն ինչ գիտի։ Շատ է ուզում ամենագետ, կարևոր մարդ երևալ։ Այսինքն, մարզային քաղաքում է աշխատում։ Բայց շա՜տ է երևակայում։ Ի՞նչ կարիք կա։ Ինչ որ կա՝ կա։ «Ես այսինչի հետ էի, շատ մեծ մարդ է, ես նրան այսինչ բանն ասացի»։ Իսկ Երկար Էդիլբայը պատմում էր, որ մի անգամ եղել է նրա մոտ, աշխատանքի վայրում, ասում է, մեր Սաբիթջանը ամբողջ օրը ընդունարանում վազվզում է հեռախոսներից դեպի առանձնասենյակի դռները և անընդհատ. «Լսում եմ, Ալջափար Կախարմանովիչ։ Եղավ, Ալջափար Կախարմանովիչ։ Այս րոպեին, Ալջափար Կախարմանովիչ»։ Իսկ այդ Ալջափար Կախարմանովիչը, ասում են, առանձնասենյակում նստած անընդհատ կոճակներ է սեղմում։ Այդպես էլ չեն կարողացել մի կարգին խոսել... Ահա պարզվում է, որ այդպիսին է մեր բոլանլիցին։ Աստված նրա հետ, ինչ որ կա՝ կա... Միայն

Ղազանղալյն է մեղք։ Շատ էր մտածում նրա մասին։ Մինչև կյանքի վերջը ոչ մի վատ բան չասաց տղայի մասին։ Նույնիսկ քաղաք տեղափոխվեց, տղայի ու հարսի մոտ, իրենք համոզել տարել էին, բայց ի՞նչ դուրս եկավ… Դե, սա արդեն ուրիշ խոսակցություն է…

Այն խոր գիշերը գնում է Եղիգեյն այսպիսի մտքերով տարված, հայացքով ուղեկցելով տիեզերական հրթիռը մինչև նրա իսպառ անհետացումը։ Երկար հետևեց այդ հրաշքին։ Եվ երբ կրակե նավը, անընդհատ սեղմվելով ու փոքրանալով, ընկղմվեց մութ վիհի մեջ, վերածվելով սպիտակ, մշուշոտ փոքրիկ կետի, նա օրորեց գլուխը և գնաց, ճաշակելով տարօրինակ, հակասական զգացումներ։ Հիանալով տեսածով, նա միևնույն ժամանակ գիտեր, որ սա իր համար կողմնակի բան է, որը հարուցում է և՛ զարմանք, և՛ վախ։ Ընդ որում, հանկարծ հիշեց երկաթուղի եկած այն աղվեսին։ Տեսնես ի՞նչ զգաց, երբ ամայի տափաստանում տեսավ երկինք սլացող հրեղեն մրրիկը։ Երևի խեղճը չի իմացել ուր փախչի…

Բայց հենց ինքը՝ Բորանլի Եդիգեյը, տիեզերք սուրացող հրթիռի գիշերային թռիչքի ականատեսը, չգիտեր նույնիսկ, այսինքըն չէր էլ կարող իմանալ, որ դա տիեզերագնացով տիեզերանավի արտահերթ, վթարային թռիչք էր՝ առանց հանդիսության, առանց լրագրողների ու զեկույցների, «Պարիտետ» տիեզերակայանում տեղի ունեցած արտակարգ դեպքի կապակցությամբ, տիեզերակայան, որ ահա արդեն մեկուկես տարի էր, ինչ ամերիկա-սովետական համատեղ ծրագրով գտնվում էր ուղեծրում՝ «Տրամպլին» պայմանական անվան տակ։ Ի՞նչ իմանար Եդիգեյն այդ ամենի մասին։ Մտքով չէր էլ անցնի, թե այդ դեպքը վերաբերվելու է նաև իրեն, իր կյանքին և դա ոչ թե պարզապես այն պատճառով, որ մարդը և մարդկությունն անխզելիորեն կապված են միմյանց, իրենց համընդհանուր նշանակությամբ, այլ ամենակոնկրետ և ուղղակի իմաստով։ Նա չգիտեր, մանավանդ չէր էլ կարող ենթադրել, թե որոշ ժամանակ անց, Սարի-Օզեկից մեկնարկած նավից հետո, մոլորակի մյուս ծայրից՝ Նևադայի տիեզերակայանից, բարձրացել է ամերիկյան նավ, միևնույն առաջադրանքով, դեպի միևնույն «Պարիտետ» կայանը, միևնույն «Տրամպլին» ուղեծիր, միայն ընթացքի հակառակ ուղղությամբ։

Նավերը շտապ տիեզերք էին ուղարկվել «Կոնվենցիա» գիտահետազոտական ավիակրից ստացված հրահանգով, որ Սանե-

*տա-ամերիկյան միացյալ «Դեմիուրգ» ծրագրի ղեկավարման կենտրոնի լողացող բազան էր։*

*Ավիակիր «Կոնվենցիան» գտնվում էր իր մշտական տեղակայանում՝ Խաղաղ օվկիանոսում, Ալեուտյան կղզիներից դեպի հարավ, Վլադիվոստոկից և Սան-Ֆրանցիսկոյից համարյա միևնույն տարածության վրա գտնվող քառակուսում։ Միացյալ ղեկավարման կենտրոնը՝ Միաղեկկենտրոնը, այդ ժամանակ, լարված հետևում էր «Տրամպլին» ուղեծիր ելնող երկու նավերին։ Առայժմ ամեն ինչ հաջող էր ընթանում։ Դեռ առջևում էին «Պարիտետի» կոմպլեքսին կցվելու մանևրները։ Առաջադրանքը գերդժվարին էր, կցումը պետք է տեղի ունենար ոչ թե հաջորդաբար, մեկը մյուսի ետևից, հերթականության անհրաժեշտ ընդմիջումներով, այլ միաժամանակ, կատարելապես համահնչյուն, երկու տարբեր մոտեցումով՝ կայանին։*

*Արդեն տասներկու ժամից ավելի էր. «Պարիտետը» չէր պատասխանում «Կոնվենցիայից» եկող Միաղեկկենտրոնի ազդանշաններին, չէր պատասխանում նաև իր մոտ կցման եկող նավերի ազդանշաններին... Հարկավոր էր պարզել, թե ինչ էր պատահել «Պարիտետի» անձնակազմին։*

## II

Գնացքներն այս կողմերում գնում էին արևելքից արևմուտք, արևմուտքից արևելք...

Երկաթուղու շուրջը, այս կողմերում, փռված էին հսկայական ամայի տարածություններ՝ Սարի-Օզեկներ, Դեղին տափաստանների միջնակները:

Այս կողմերում ուզածդ տարածությունը չափվում էր երկաթուղուց, ինչպես Գրինվիչի միջօրեականից...

Իսկ գնացքները գնում էին արևելքից արևմուտք և արևմուտքից արևելք...

*Բորանլի կիսակայարանից մինչև Նայմանյան Անա-Բեյիթ տոհմական գերեզմանոցը կլիներ առնվազն մի երեսուն կիլոմետր, երկաթուղու կողմից, այն էլ եթե գնաս ուղիղ, սարօզեկներով։ Իսկ եթե, համենայն դեպս, ռիսկի չդիմես, որպեսզի հանկարծ չմոլորվես տափաստանում, ավելի լավ է գնալ սովորական ճամփով, որ շարունակ ուղեկցում է երկաթուղուն, բայց*

այս դեպքում տարածությունը մինչև գերեզմանոց, ավելի դժեծանա։ Կըյարկնայի ձորակից մինչև Անա-Բեյիթի կեռմանը ստիպված ես լինում մի ամբողջ շրջան կատարել։ Ուրիշ ելք չկա։ Եվ ահա, լավագույն դեպքում, երեսուն վերստ է անում, մի այդքան էլ՝ ետ գալուց։ Սակայն, Եդիգեյից բացի, հիմիկվա բորանլիցիներից ոչ ոք կարգին չգիտեր այնտեղի ճանապարհը, թեև լսելը շատ էին լսել այն հինավուրց Բեյիթի մասին, որի շուրջ հազար տեսակ պատմություններ էին պատմում՝ եղած ու չեղած, բայց իրենք դեռ առիթ չէին ունեցել գնալու այնտեղ։ Կարիք չէր եղել։ Տարիների ընթացքում, Բորանլի ճամփեզրյա փոքրիկ, ութ տնանոց ավանում, սա առաջին դեպքն էր, որ մարդ էր մեռնում, և պետք էր թաղում կատարել։ Սրանից մի քանի տարի առաջ, երբ մի ժամվա մեջ, կրծքի հեղձուկից մահացավ մի աղջնակ, ծնողները նրան տարան թաղեցին իրենց ծննդավայրում, Ուրալի երկրամասում։ Իսկ Ղազանղապի կինը՝ պառավ Բուկեյը, թաղվեց կայարանային գերեզմանատանը՝ Կումբելում. մահացել էր այնտեղի հիվանդանոցում, մի քանի տարի առաջ, թաղել էին կայարանում։ Հանգուցյալին Բորանլի բերելը իմաստ չուներ։ Իսկ Կումբելը Սարի-Օզեկների ամենամեծ կայարանն է, մանավանդ, նրա աղջիկը՝ Այզադան, և փեսան այնտեղ են ապրում։ Այս վերջինը որքան էլ խելքը գլխին չի, խմող է, համենայն դեպս յուրային է։ Գերեզմանին կհետևեն։ Բայց այն ժամանակ Ղազանղապը կենդանի էր և ինքն էր որոշում ինչը ինչպես անել։

Իսկ հիմա գլուխ չէին հանում, թե ինչպես անեն։

Բայց Եդիգեյը իրենն էր պնդում։

— Դե, վերջ տվեք, դա չիգիթին վայել խոսք չի,— խրատում էր երիտասարդներին։— Այսպիսի մարդուն պետք է թաղենք Անա-Բեյիթում, որտեղ մեր նախնիներն են պառկած։ Այնտեղ, որտեղ կտակել է ինքը՝ հանգուցյալը։ Եկեք խոսքից գործի անցնենք, պատրաստվենք։ Ճամփան կարճ չի։ Վաղը առավոտյան շուտ կշարժվենք...

Բոլորն էլ գիտակցում էին, որ Եդիգեյն իրավունք ունի որոշում ընդունելու։ Դրա համար էլ համաձայնեցին։ Ճիշտ է, Սաբիթջանը փորձեց առարկել։ Նա այդ օրը եկել հասել էր ճամփակից ապրանքատարով, մարդատար գնացքներն այստեղ չէին կանգնում։ Եվ լոկ այն հանգամանքը, որ նա եկել է հոր թաղմանը, չիմանալով հայրը ո՞ղջ է թե մեռած, հուզեց, նույնիսկ ուրախացրեց Եդիգեյին։ Եղան րոպեներ, երբ նրանք գրկախառն-

վեցին ու լաց եղան իրենց համակած ընդհանուր ցավի ու վշտի մեջ։ Եդիգեյը հետո զարմացավ ինքն իր վրա։ Սաբիթջանին սեղմելով կրծքին և արտասվելով, չէր կարողանում տիրապետել իրեն և ջարունակ խոսում էր հեծկլտալով. «Լավ որ եկար, հարազատս, լավ որ եկար»,— կարծես նրա գալուստը կարող էր հարություն տալ Ղազանղապին։ Եվ ինչո՞ւ էր Եդիգեյն այդպես լալիս, ինքն էլ չգիտեր, երբեք նրան այդպիսի բան չէր պատահել։ Նրանք երկար լաց եղան բակում, Ղազանղապի որբացած խրճիթի դռանը։ Մի բան ազդել էր Եդիգեյի վրա։ Հիշում էր, որ Սաբիթջանը մեծացել է իր աչքի առջև, փոքր տղա էր, հոր սիրելին, երբ տարան սովորելու Ղումբելի երկաթուղայինների երեխաների գիշերօթիկ դպրոցում։ Հենց ազատ ժամանակ էր լինում, ճամփակից գնացքով կամ ուղտերին հեծած գնում էին տեսնելու, թե ինչպե՞ս է զգում հանրակացարանում, հո խամթրին դիպչող չկա, հո անշնորհք բաներ չի անում, ինչպե՞ս է սովորում, ուսուցիչներն ի՞նչ են ասում... Իսկ արձակուրդներին, քանի անգամ են բերել ու սառնամանիքին մուշտակի մեջ փաթաթած նրան ուղտով տարել ձյունոտ սարօզեկներով, միայն թե ետ չմնա պարապմունքներից։

Էհ, անդարձ օրեր։ Ամեն ինչ անցավ գնաց երազի նման։ Եվ հիմա դեմդ կանգնած է հասուն տղամարդ, հագի՛վ, հեռավոր կերպով հիշեցնելով մանկության օրերի այն տղային՝ աչքերը դուրս պրծած ու ժպտուն, այժմ ակնոցով, տափակած շլյապայով ու մաշված փողկապով։ Այժմ աշխատում է մարզային քաղաքում և շատ է ուզում կարևոր, պաշտոնավոր մարդ երևալ, բայց, դե՜հ, կյանքը խարդախ բան է, այնքան էլ հեշտ չի պետ դառնալը, ինչպես ինքն է հաճախ գանգատվել, եթե լավ թիկունք կամ ծանոթ ու բարեկամ չունենաս, իսկ ինքն ո՞վ է, ինչ-որ Բորանլի կիսակայարանցի, ինչ-որ Ղազանղապի տղա։ Ա՜յ քեզ դժբախտություն։ Բայց հիմա այդ հայրն էլ չկա, ամենաանօգուտ, բայց կենդանի հայրը հազար անգամ ավելի լավ է փառաբանված հանգուցյալից։ Բայց հիմա այդ հայրն էլ չկա...

Հետո արցունքները չորացան։ Անցան խոսակցության, գործի։ Եվ այստեղ պարզվեց, որ սիրելի, ամենագետ որդյակը եկել է ոչ թե հուղարկավորելու հորը, այլ միայն մի կերպ թաղելու, վերջացնելու և անմիջապես մեկնելու։ Սկսեց մտքեր արտահայտել, թե ի՞նչ կարիք կա քարշ գալ հանել այդքան հեռու, մինչև Անա-

Թեյիթ, շուրջը լիքը տարածություն, Սարի-Օղեկի տափաստանը՝ ծայրից ծայր փատարկ։ Կարելի է գերեզման փորել մի մոտիկ տեղ, որևէ բլրակի վրա, երկաթուղուն մոտ, թող իր համար պառկի ծեր ուղեգնիրը, և լսի, թե ինչպես են գնացքները սլանում կայարանամիջով, որտեղ նա աշխատել է ամբողջ կյանքում։ Այդ առիթով հիշեց նույնիսկ մի հին առած. մեռելից ազատվելու միակ միջոցը շտապ թաղումն է։ Ինչո՞ւ ձգձգել, խելքին զոռ տալ, մեկ չի՞, որտեղ ես թաղվում, այս գործում ինչքան շուտ, այնքան լավ։

Այսպես խոսում էր, մի կողմից կարծես արդարանալով, որ շտապ ու կարևոր գործեր ունի հիմնարկում, ժամանակը սուղ է, իսկ ղեկավարությունը, ինչպես գիտենք, հետաքրքիր չէ, գերեզմանոցը մոտի՞կ է, հեռո՞ւ է, կարգադրված է աշխատանքի ներկայանալ այսինչ օրը, այսինչ ժամին և վերջ։ Ղեկավարությունը ղեկավարություն է, քաղաքը՝ քաղաք...

Եդիգեյն ինքն իրեն հայհոյում էր, համարում հիմար։ Ամաչում և զղջում էր, որ հոնգուր-հոնգուր լաց է եղել այս տիպին տեսնելիս, որքան էլ նա հանգուցյալ Ղազանղապի որդին էր։ Եդիգեյը վեր կացավ տեղից, մի հինգ մարդ էին նստած հին կոճափայտերի վրա, որ պատի տակ հարմարեցրել էին իբրև նըստարան, և շատ ուժ գործադրեց, որ մարդկանց ներկայությամբ, այսպիսի օրով, ավելորդ կամ վիրավորական բան չասի։ Խնայեց Ղազանղապի հիշատակը։ Ասաց միայն.

— Շուրջբոլորը լիքը տեղ է, իհարկե, ինչքան ուզես տեղ կա։ Բայց չգիտես ինչո՞ւ, մարդիկ իրենց հարազատներին չեն թաղում պատահական տեղում։ Ըստ երևույթին դա հենց այնպես չի։ Թե չէ հողն ո՞վ է ափսոսում։— Եվ լռեց, և բորանլիցիները լուռ լսեցին։— Սպասեք, խելք խելքի տվեք, ես գնամ տեսնեմ այնտեղ ի՞նչ կա։

Եվ հայացքը մթնած, ամբարիշտ, թողեց գնաց շառից հեռու։ Հոնքերը մոտեցել միացել էին քթարմատին։ Խիստ և տաքարյուն էր և նրան Բորանլի (փոթորկալի) էին անվանում նաև նրա համար, որ բնավորությամբ համապատասխան էր։ Այ, հիմա Սաբիթջանի հետ մենակ լիներ, այդ անամոթի երեսին կշպրտեր ինչ-որ մտածում էր, ինչի որ արժանի էր։ Այնպես կաներ, որ ամբողջ կյանքում չմոռանար։ Բայց չէր ուզում կանանց բերանն ընկնել։ Հրեն, կանայք արդեն փսփսում են, վրդովվում՝ եկել է իբր հորը թաղելու, բայց իրեն հյուրի նման է պահում։ Եկել է

դատարկ ձեռքերը գրպաններում։ Գոնե մի տուփ թեյ բերեր, մնացածը գլուխը քարը։ Գոնե կինը գար, քաղաքային հարսը, հարցներ, գար լաց լիներ, սուգ աներ, ինչպես կարգն է։ Ոչ խիղճ ունեն, ոչ ամոթ։ Երբ ծերունին ողջ-առողջ էր, ապրուստը լավ, զույգ կթան ուղտ ուներ, տասնհինգ ոչխար ու գառ, այն ժամանակ լավն էր։ Այն ժամանակ հարսը գալիս էր, այնքան եկավ, մինչև համոզեց, ամեն ինչ ծախել տվեց։ Ծերունուն իբր մոտը տարավ, եղած փողով կահույք առան, ավտոմեքենան էլ վրան, բայց հետո ծերունին հանկարծ ավելորդ դարձավ։ Հիմա փույթը չի։ Կանայք ուզում էին աղմուկ գցել, Եղիգեյը թույլ չտվեց։ Չհամարձակվեք, ասաց, բերան բացել այսպիսի օրով, մեր գործը չի, թող իրենք մտածեն...

Նա գնաց անասնոցի կողմը, որտեղ կապված էր արոտից բերված Կարանարը և մեկ-մեկ կատաղի ձայներ էր հանում։ Եթե չհաշվենք, որ Կարանարը մի երկու անգամ երամակի հետ եկել է ջրհորից ջուր խմելու, ապա ամբողջ շաբաթը, օր ու գիշեր ազատ ման է եկել։ Ձեռքից գնացել է անպիտանը և հիմա դժգոհություն է արտահայտում, կատաղի բացում է սուր-սուր ատամներով երախը, ժամանակ առ ժամանակ ոռնում։ Սովորական պատմություն։ Նորից անազատ կյանք է սկսվում, իսկ դրան հարկավոր էր ընտելանալ։

Եղիգեյը նրան մոռացավ վրդովված՝ Սաբիթջանի հետ ունեցած խոսակցությունից հետո, թեև նախօրոք գիտեր, որ այդպես էլ լինելու է։ Պարզվում է, որ Սաբիթջանը իրենց պատիվ է արել, մասնակցելով հարազատ հոր թաղմանը։ Նրա համար դա բեռ է, որից ուզում է, որքան հնարավոր է, շուտ ազատվել։ Եղիգեյը չուզեց ավելորդ խոսքեր վատնել, չարժեր, առանց այդ էլ, միևնույն է, ամեն ինչ ինքն է անելու, ահա, հարևաններն էլ իրենց հեռու չեն պահում։ Բոլորը, ովքեր երկաթգծում զբաղված չէին, օգնում էին վաղվա թաղման և հոգեհացի պատրաստություններին։ Կանայք տներից ամանեղեն էին հավաքում, ինքնաեռներն էին փայլեցնում, խմոր էին հունցում և արդեն սկսել էին հաց թխել, տղամարդիկ ջուր էին բերում, սղոցում էին հին, գործածությունից դուրս եկած երկաթգծային փայտակոճերը. վառելիքը մերկ տափաստանում միշտ առաջնահերթ անհրաժեշտություն է, ինչպես ջուրը։ Եվ միայն Սաբիթջանն էր թրև գալիս, մարդկանց շեղելով գործից, բարբաջում սրանից-նրանից, ով ինչ պաշտոն է զբաղեցնում, ում են աշխատանքից վտարել, ում պաշ-

տոնն են բարձրացրել։ Բայց որ կինը չէր եկել մասնակցելու սկեսրայրի թաղմանը, դրանից բոլորովին անհարմար չէր զգում։ Տարօրինակ է, աստված վկա։ Նա, իհարկե, անպայման ինչ-որ կոնֆերանս ունի, որին պետք է մասնակցեն ինչ-որ արտասահմանյան հյուրեր։ Իսկ թոռների մասին խոսք անգամ չկա։ Նրանք այնտեղ պայքարում են առաջադիմության և չբացակայելու համար, որպեսզի լավ վկայական ստանան, ինստիտուտ ընդունվեն։ «Այս ի՞նչ տեսակ մարդիկ են, այս ինչ ժողովուրդ է,— հոգու խորքում դժգոհում էր Եդիգեյը։— Նրանց համար աշխարհում ամեն ինչ կարևոր է, բացի մահից»։ Եվ այդ միտքը նրան հանգիստ չէր տալիս. «Եթե մահը դրանց համար ոչինչ է, ուրեմն, կյանքն էլ արժեք չունի։ Հապա էլ ո՞րն է իմաստը, ինչի համար և ինչպե՞ս են ապրում այնտեղ»։

Եդիգեյը բարկացած գոռաց Կարանարի վրա.

— Ի՞նչ ես ոռնում, կոկորդիլոս։ Ի՞նչ ես ոռնում, դունչդ երկինք ձգած, կարծես աստված ինքն է լսում քեզ։— Եդիգեյն իր ուղտին կոկորդիլոս էր անվանում ամենածայրահեղ դեպքերում, երբ շատ զայրացած էր լինում։ Եկվոր ուղեշինարարներն էին Բորանլի Կարանարին կպցրել մականունը՝ նրա սրատամ երախի և կատաղի վարքի համար։— Քեզ ոռնա՞լ ցույց կտամ, կոկորդիլոս, հիմա բոլոր ատամներդ մեկ-մեկ կջարդեմ։

Հարկավոր էր թամբը դնել ուղտի վրա, և գործի անցնելով, Եդիգեյը քիչ-քիչ հանգստացավ, փափկեց։ Հիացավ։ Գեղեցիկ և հզոր էր Բորանլի Կարանարը։ Ձեռքը ուղտի գլխին չէր հասնում, չնայած բոյուբուսի տեսակետից Եդիգեյը դանգատ չուներ։ Նա ճարպկորեն կռացրեց ուղտի վիզը և մեծ մտրակով խփելով կոշտուկավոր ծնկներին, խիստ ձայնով հորդորելով, չոքեցրեց նրան։ Բարձրագոչ բողոքելով, ուղտը, այնուամենայնիվ, ենթարկվեց տիրոջ կամքին, և երբ վերջապես, ոտքերը ծալելով, կուրծքը հպեց գետնին և հանգստացավ, Եդիգեյը սկսեց աշխատանքը։

Ուղտին տեղը տեղին թամբելը մեծ գործ է, հավասար է տուն կառուցելուն։ Թամբն ամեն անգամ նորից է սարքվում, հմտություն է հարկավոր և քիչ ուժ չի պահանջվում, մանավանդ երբ թամբում ես Կարանարի նման վիթխարի ուղտ։ Նա զուր չէր Կարանար, այսինքն Սև նար կոչվում։ Սև, փրչոտ, գլուխը, սև մինչև բաշատակն աճած հզոր մորուքը, վիզը, որ ներքևի մասում ամբողջապես սև էր, կոշտ մազերով, մինչև ծնկներն իջնող

խիտ, վայրի բաշով՝ արուի գլխավոր զարդարանքը, մի զույգ պիրկ սապատներ, որոնք սև աշտարակների պես բարձրանում էին մեջքին։ Եվ ի լրումն ամենի, կարճ պոչի սև ծայրը։ Իսկ մնացյալը՝ վզի վերևի մասը, կուրծքը, կողերը, փորը, ընդհակառակն, բաց գույնի էին, բաց շագանակի երանգի։ Դրանով էր գեղեցիկ Բորանլի Կարանարը, դրանով էլ հռչակված — տեսքով ու գույնով։ Եվ այն ժամանակ դեռ գտնվում էր իր ամենաաթան հասունության մեջ։ Լրանում էր Կարանարի ծննդյան երրորդ տասնամյակը։

Ուղտերը երկար են ապրում։ Երևի դրանից է, որ ծնում են զուգավորման հինգերորդ տարում, այնուհետև դա լինում է ոչ ամեն տարի, այլ՝ երկու տարին մեկ, պտուղն էլ նրանց փորում մնում է բոլոր կենդանիներից ավելի երկար, տասներկու ամիս։ Ուղտի ձագի համար ամենադժվարը առաջին մեկ, մեկուկես տարին անցկացնելն է, հարկավոր է նրան պաշտպանել ցրտից, տափաստանային միջանցիկ քամիներից, հետո նա կմեծանա օրեցօր և այլևս ոչ մի բանից վախ չի ունենա, ոչ սառնամանիքից, ոչ շոգից, ոչ էլ ջրի պակասությունից։

Եդիգեյը այդ բաները լավ էր հասկանում. Բորանլի Կարանարին պահում էր տեղը տեղին։ Առողջության և ուժի առաջին նշանը՝ սև սապատները, թուջի նման ցցված էին։ Մի օր, այն առաջին տարիներին, երբ Եդիգեյը նոր էր վերադարձել պատերազմից և հաստատվել Բորանլի կիսակայարանում, Ղազանղապը նրան նվիրել էր ուղտի ձագը, երբ սա դեռ կաթնակեր էր, փոքրիկ, փափլիկ, բադիկի նման փափկամազիկ։ Եդիգեյն էլ դեռ ջահել էր։ Մտքովն էլ չէր անցնում, թե այստեղ կմնա մինչև օրծերությունը։ Երբեմն նայում է այն ժամանակվա լուսանկարներին, աչքերին չի հավատում։ Շատ է փոխվել, դարձել է գորշճերմակ։ Նույնիսկ հոնքերն են ճերմակել։ Դեմքն, իհարկե, շատ է փոխվել։ Բայց մարմինը չի ծանրացել, ինչպես լինում է այդ տարիքում։ Մի տեսակ իրեն-իրեն ստացվեց. նախ բեղեր թողեց, հետո՝ մորուք։ Իսկ այժմ կարծես հնարավոր չի առանց բեղմորուքի, իրեն կթվա, որ մերկ է։ Կարելի է ասել, մի ամբողջ կյանք է անցել, այն ժամանակվանից։

Ահա հիմա էլ, թամբելով գետնին պառկած Կարանարին, նրան հորդորելով մեկ ձայնով, մեկ ձեռքի թափահարումով, երբ սա, չէ որ չէ, նույնիսկ կծոտում էր և առյուծի նման մռնչալով, սև, փրչոտ գլուխը պտտում երկար վզի վրա, Եդիգեյը մի կողմից

հիշում էր, թե բանն ինչ է եղել և ինչպես է եղել այն տարիներին։ Եվ հոգին թեթևանում էր։

Երկար զբաղվեց. շարունակ հարմարեցնում, կարգի էր բերում հեծելասարքը։ Այս անգամ թամբը դնելուց առաջ Կարանաղի վրա գցեց լավագույն, կիրակնօրյա սթարը՝ գույնզգույն, երկար ծոպերով, զարդանախշերով, որ հին վարպետների աշխատանք էր։ Արդեն չէր էլ հիշում, թե վերջին անգամ երբ էր Կարանաղին զարդարել այս հազվագյուտ հեծելասարքով, որ Ուկուբալան խնամքով պահում էր։ Հիմա այսպիսի դեպք էր եղել...

Երբ Բորանլի Կարանաղը թամբված էր, Եդիգեյը նրան ոտքի կանգնեցրեց և շատ գոհ մնաց։ Նույնիսկ հպարտացավ իր աշխատանքով։

Կարանաղը ծոպավոր սթարով զարդարված և սպասների արանքում վարպետորեն տեղադրված թամբով, ազդեցիկ և վեհապանծ տեսք ուներ։ Չէ, թող հիանան երիտասարդները, մանավանդ Սաբիթժանը։ Թող հասկանան. արժանավոր մարդու թաղումը բեռ չէ, խոչընդոտ չէ, այլ նշանավոր, թեկուզև ցավալի իրադարձություն և պետք է ունենա արժանի մեծարանք։ Ոմանց թաղման ժամանակ երաժշտություն են նվագում, դրոշներ են տանում, կան թաղումներ, երբ կրակում են օդում կամ ծաղիկներ են շաղ տալիս և պսակներ տանում... Իսկ ինքը՝ Բորանլի Եդիգեյը վաղը առավոտյան կհեծնի ծոպավոր սթարով զարդարված Կարանաղին և հուղարկավորներին կառաջնորդի Անա-Բեյիթ, Ղազանղապին ուղեկցելով դեպի իր վերջին և հավիտենական կացարանը... Եվ ամբողջ ճանապարհին Եդիգեյը կմտածի նրա մասին, կտրելով հուկայական, ամայի սարօզեկները։ Եվ նրա մասին մտածելով, նրան կհանձնի հողին, տոհմական գերեզմանոցում, ինչպես որ այդ մասին իրենց մեջ համաձայնություն է եղել։ Այո, այդպիսի համաձայնություն եղել է։ Ճամփան հեռու լինի թե մոտ, Ղազանղապի կամքը պիտի կատարվի, և ոչ ոք չի կարող իրեն հակառակը համոզել, նույնիսկ հանգուցյալի հարազատ որդին...

Թող բոլորն իմանան, որ այդ առիթով և այդ նպատակով իր Կարանաղը կազմ-պատրաստ է՝ թամբված և հեծելասարքով զարդարված։

Թող բոլորը տեսնեն։ Եդիգեյը Կարանաղին անասնոցից բերեց, սանձափոկից բռնած տարավ բոլոր տների առջևով և կապեց Ղազանղապի խրճիթի մոտ։ Թող բոլորը տեսնեն։ Բո-

բանլի Եդիգեյը չի կարող իր խոսքի տերը չլինել։ Բայց նա զուր էր այդ բանն ապացուցում։ Մինչ Եդիգեյն զբաղված էր հեծելասարքով, Երկար Էդիլբայը, հարմար բոպե գտնելով, Սաբիթժանին մի կողմ կանչեց։

— Գնանք մի հով տեղ, խոսենք։

Նրանց խոսակցությունը երկար չտևեց։ Էդիլբայը չփորձեց նրան համոզել, ուղղակի երեսին ասաց.

— Լսիր, Սաբիթժան, դու փառք տուր աստծուն, որ աշխարհում այսպիսի Բորանլի Եդիգեյ կա՝ հորդ ընկերը։ Եվ մեզ մի խանգարիր մարդուն թաղելու ինչպես հարկն է։ Իսկ եթե շտապում ես, մենք քեզ չենք պահում։ Ես քո փոխարեն մի բուռ հող կգցեմ։

— Նա իմ հայրն է, ես ինքս գիտեմ, թե...— սկսեց Սաբիթժանը, բայց Էդիլբայը կտրեց նրա խոսքը.

— Հայրը, իհարկե, քոնն է, բայց դու քոնը չես։

— Համա՞ թե ասացիր,— նահանջեց Սաբիթժանը։— Դե լավ, չվիճենք այսպիսի օրով։ Թող լինի Անա-Բեյիթը, ի՞նչ տարբերություն, ուղղակի մտածում էի, որ հեռու է...

Դրանով էլ խոսակցությունը վերջացավ։ Եվ երբ Եդիգեյը Կարանարին ցուցադրեց ի տես բոլորի, վերադարձավ և բորանլիցիներին ասաց. «Վերջ տվեք ջիգիթին անվայել խոսք ու զրույցը։ Նրա նման մարդուն պետք է թաղենք Անա-Բեյիթում...», այլևս ոչ ոք չառարկեց, բոլորը լռելյայն համաձայնեցին...

Այն օրվա երեկոն և գիշերը կարճեցին բոլորը միասին, դրացիաբար, մեռնողի տան բակում, մանավանդ եղանակն էլ լավ էր։ Ցերեկվա շոգից հետո սկսվել էր սարօզեկների աշնանամուտի չոր զովությունը։ Խոր, աղջամուղջային, անքամի լռությունը պարուրել էր աշխարհը։ Եվ մթնշաղին արդեն քերթեցին վերջացրին վաղվա հոգեհացի համար մորթված ոչխարը։ Իսկ առայժմ թեյ էին խմում ծխացող ինքնաեռների շուրջ և խոսում դեսից-դենից... Թաղման բոլոր պատրաստությունները համարյա արված էին, մնում էր միայն սպասել լույսը բացվելուն, որպեսզի շարժվեին դեպի Անա-Բեյիթ։ Խաղաղ ու անդորր հոսում էին իրիկնային ժամերը, ինչպես որ հարկ է ծեր մարդու մահվան ժամանակ։ Հո սուգ ու շիվան չէին անելու...

Իսկ Բորանլի կիսակայարանում սովորականի պես գալիս ու գնում էին գնացքները, հանդիպում էին արևելքից ու արևմուտքից և հեռանում էին դեպի արևելք ու արևմուտք...

Այդպես էր վիճակը այն երեկոյան, Անա-Բեյիթ գնալու նախօրեին և ամեն ինչ լավ կլիներ, եթե չլիներ մի տհաճ դեպք։ Մինչ այդ, ճամփակից ապրանքատարով Հոր թաղմանը հասավ Այգազդան՝ ամուսնու հետ։ Հենց որ նա իր ներկայությունը զգացնել տվեց բարձրաձայն հեկեկանքով, կանայք շրջապատեցին նրան և լացը դրեցին։ Մանավանդ Ուկուբալան, տանջվում ու տրորվում էր Այգազդայի հետ։ Շատ էր խղճում նրան։ Աղեկտուր լաց էին լինում ու ողբում։ Եղիգեյն ամեն կերպ աշխատում էր հանգստացնել Այգազդային, ի՞նչ կարող են անել, հո մեռնողի ետևից չեն մեռնելու, հարկավոր է համակերպվել ճակատագրին։ Բայց Այգազդան չէր հանդարտվում։

Այդպես հաճախ է պատահում. Հոր մահը նրա համար առիթ դարձավ լաց լինելու, մարդկանց առջև սիրտը բացելու, ազատություն տալու հոգում կուտակված ցավերին։ Բարձրաձայն լացով դիմելով մահացած Հորը, մազերը խառնված, աչքերն ուռած, նա դառը գանգատ էր անում իր բախտից, որ ոչ ոք իրեն չի հասկանում, չի խղճում, որ իր կյանքը չահել հասակից վատ է դասավորվել, ամուսինը հարբեցողի մեկն է, երեխաներն առանց հսկողության առավոտից իրիկուն տնկված են կայարանում և արդեն խուլիգան են դարձել, վաղը մյուս օրը ավազակ կդառնան, գնացքներ կթալանեն, հրեն, մեծ որդին խմում է, նույնիսկ միլիցիայից են եկել զգուշացրել, շուտով գործը դատարան կհասնի... ինքը մենակ ի՞նչ կարող է անել վեցի հետ։ Հոր փույթն էլ չի...

Իսկապես նրա փույթն էլ չէր, իրեն համար գլուխը կախ, շփոթ ու շվար նստած էր, տխուր, վերացած տեսքով, համենայն դեպս աներոջ թաղմանը եկել էր և լուռ ծխում էր գարշահոտ, էժանագին սիգարեթները։ Այս ամենը նրա համար նորություն չէր։ Գիտեր, որ կին է, կճվճվա, կհանգստանա... Բայց այստեղ, զուր տեղը, մեջ ընկավ եղբայրը՝ Սաբիթջանը։ Դրանից էլ սկսվեց։ Սաբիթջանն սկսեց քրոջը պախարակել, թե այդ որտե՞ղ է տեսնված, դա ինչ ձև է, եկել է հորը թաղելո՞ւ, թե իրեն խայտառակելու։

Մի՞թե ղազախ աղջկան վայել է այդպես ողբալու իր հարգարժան հորը։ Մի՞թե ղազախ կանանց նշանավոր ողբերը, հարյուրամյակներ շարունակ, լեգենդներ և երգեր չեն դարձել հետնորդների համար։ Այդ ողբերից միայն մեռելները հարություն չէին առնում, իսկ բոլոր ողջերը արտասուք էին թափում։ Մեռ-

նողի գովքն էին անում և նրա բոլոր արժանիքները հասցնում երկինք,— ահա թե ինչպես էին լալիս առաջվա կանայք։ Իսկ սա, որբի նման գանգատ է անում, թե ինչքան դժվար ու ծանր է իր կյանքը։

Այզադան կարծես հենց դրան էր սպասում։ Եվ ձայնը գլուխը գցեց նոր ուժով ու կատաղությամբ։ Սրան տեսեք, ինչ խելացի ու գիտուն է։ Դու նախ քո կնոջը խելք սովորեցրու։ Այդ սիրուն խոսքերը նախ նրա գլուխը մտցրու։ Ինչո՞ւ չի եկել, մեզ ցույց տա մեծարանքի ողբը։ Արդեն կարիք չունի մեր հոր նկատմամբ իր պարտքը կատարելու, որովհետև խարդախ է, դու էլ, ստոր, նրա կրունկի տակ, կողոպտել, թալանել եք ծերունուն մինչև վերջին կոպեկը։ Իմ ամուսինը, որքան էլ հարբեցող լինի, էլի այստեղ է, իսկ ո՞ւր է քո շենք ու շնորհքովը։

Սարիթջանը շրջվեց քրոջ ամուսնու կողմը, որ նա լռեցնի կնոջը, բայց ամուսինը հանկարծ կատաղեց, նետվեց խեղդելու Սարիթջանին...

Բորանլիցիները հազիվ կարողացան հանգստացնել բորբոքված ազգականներին։ Բոլորի համար տհաճ էր ու ամոթալի։ Եդիգեյը շատ էր հուզվել։ Չնայած դրանց լավ էր ճանաչում, բայց այդպիսի ընթացք չէր սպասում։ Եվ զայրացած խստագույնս զգուշացրեց. եթե դուք իրար չեք հարգում, գոնե մի խայտառակեք ձեր հոր հիշատակը, այլապես թույլ չեմ տա, որ ձեզնից որևէ մեկը մնա այստեղ, ոչ մի բանի չեմ նայի, մեղքը ձերն է...

Ահա այսպիսի անհամ պատմություն եղավ թաղման նախօրյակին։ Խիստ մռայլ էր Եդիգեյը։ Նորից հոնքերը լարվեցին, միացան քթարմատին, և նորից նրան հանգիստ չտվեցին հարցականները։ Ախր ինչպե՞ս և ինչո՞ւ իրենց երեխաները այսպիսին դարձան։ Մի՞թե այս էին երազում Ղազանղապն ու ինքը, երբ շոգին թե սառնամանիքին նրանց տանում էին Ղումբելի գիշերօթիկը, որպեսզի ամբողջ կյանքում չկպչեն-մնան սարօզեկներում կորած որևէ կիսակայարանի, որպեսզի հետո իրենց բախտը չանիծեն իբր ծնողները հոգ չեն տարել։ Եվ հակառակը դուրս եկավ... Ինչո՞ւ, ի՞նչ խանգարեց նրանց մարդ դառնալու, որպեսզի հոգին չզզվի դրանցից...

Եվ դարձյալ Երկար Էդիլբայը փրկեց դրությունը, կենցաղային նրբազգացություն ցույց տվեց, որով և շատ թեթևացրեց Եդիգեյի վիճակն այդ երեկո։ Ով, ով, բայց նա լավ հասկացավ Եդիգեյի վիճակը։ Մահացած ծնողի երեխաների միջև գլխավոր

դեմքն են թաղումների ժամանակ, այդպես է։ Եվ ոչ կարող ես նրանց հեռացնել, ոչ էլ թաքցնել, որքան էլ անամոթ ու անառակ լինեն։ Քրոջ ու եղբոր կռիվը, որ փչացրել էր բոլորի տրամադրությունը, մի կերպ հարթելու համար, Էդիլբայը տղամարդկանց հրավիրեց իր տուն, իբր ի՞նչ պիտի անենք բակում, երկնքի աստղերը հո չենք հաշվելու, ավելի լավ է գնանք թեյ խմենք, մի քիչ նստենք մեզ մոտ...

Երկար Էդիլբայի տանը, Եդեգեյը կարծես ընկավ ուրիշ աշխարհ։ Նա առաջ էլ, որպես հարևան, գալիս էր այստեղ և ամեն անգամ գոհ էր մնում, սիրտը ուրախանում էր Էդիլբայի ընտանիքի համար։ Այսօր նա ցանկացավ ավելի երկար մնալ այստեղ, պահանջ էր զգում, կարծես այս տանը պետք է վերականգներ կորցրած ուժերը։

Երկար Էդիլբայը սովորական ուղեշինարար բանվոր էր, և ուրիշներից ավելի չէր վաստակում, բոլորի նման էլ ապրում էր հավաքովի փայտե տնակի կես մասում, ուներ երկու սենյակ և խոհանոց, բայց այստեղ թագավորում էր միանգամայն ուրիշ կյանք, մաքուր, հավաք, լուսավոր։ Միևնույն թեյը Էդիլբայենց գավաթների մեջ թվում էր թափանցիկ մեղրահաց։ Էդիլբայի կինը և դուրեկան էր, և լավ տանտիրուհի էր, երեխաներն էլ կարգին էին... Սարօզեկներում կապրեն, որքան կարողանան, ենթադրում էր Եդիգեյը, հետո ավելի լավ տեղ կգտնեն։ Շատ ափսոս, եթե գնան այստեղից...

Դեռևս դռան շեմին ոտքերից գցելով կիրզայե ոտնամանները, Եդիգեյը նստեց ներսի սենյակում, գուլպայով ոտքերը տակը ծալած, և առաջին անգամ ամբողջ օրվա ընթացքում զգաց, որ հոգնած է ու քաղցած։ Մեջքը դեմ տվեց փայտե պատին, սսկվեց։ Մյուս հյուրերը նստել էին ցածրիկ, կլոր սեղանի շուրջը, հանդարտ զրուցում էին...

Իսկական խոսակցությունը ծայր առավ հետո, տարօրինակ խոսակցություն բացվեց։ Եդիգեյն արդեն մոռացել էր տիեզերանավի մասին, որ անցյալ գիշեր դուրս էր եկել ուղեծիր։ Բայց ահա, ավելի տեղյակ մարդիկ այնպիսի բան ասացին, որ նա ընկավ մտքի մեջ։ Այսինքն ոչ թե գյուտ արեց իր համար, այլ ապշեց նրանց դատողություններից և իր կատարյալ անտեղյակությունից։ Թեև դրանից չնեղսրտեց, նրա համար բոլոր այդ տիեզերական թռիչքները, որ այդքան զբաղեցնում էին բոլորին, իրենից շատ հեռու, գրեթե մոգական, իրեն խորթ գործ էր։ Դրա

համար էլ ինքն այդ ամենին վերաբերվում էր զգույշ-հարգալից, իբրև մի հզոր, անդեմ կամքի հայտնության, որ լավագույն դեպքում, ինքը կարող է ընդունել լոկ իբրև ի գիտություն։ Համենայն դեպս, տիեզերք թռչող նավի տեսարանը ցնցել և գրավել էր իրեն։ Հենց այդ մասին էլ խոսք գնաց Երկար Էդիլբայի տանը։

Սկզբում նստել էին շուբաթ՝ ուղտի կաթի կումիս էին խմում։ Հրաշալի շուբաթ էր. սառը, փրփրուն, թեթևակի ոգելից։ Երբ, եկվոր ստուգիչ-վերանորոգող ուղեշինարար բանվորները մի լավ շուբաթ էին խմում այստեղ, ասում էին թե դա սարօզեկյան գարեջուր է։ Տաք ուտեստի հետ, այս տանը հայտնվեց նաև օղի։ Նման դեպքերում Բորանլի Եդիգեյը առհասարակ չէր հրաժարվում, խմում էր, ընկերներից ետ չէր մնում, բայց այս անգամ չխմեց և իր կարծիքով, այդպիսով ուրիշներին էլ հասկացրեց, թե խորհուրդ չի տալիս հրապուրվելու դրանով, վաղն սպասում է ծանր օր, հեռավոր ճանապարհ։ Նրան անհանգստացնում էր, որ մյուսները, մանավանդ Սաբիթժանը, վրա պրծած օղի էին խմում շուբաթի հետ։ Շուբաթն ու օղին համատեղվում են, ինչպես մի զույգ լավ նժույգներ, մի լծասարքով սլանում են, բարձրացնում մարդու տրամադրությունը։ Այսօր դա բոլորովին տեղին չէր։ Բայց մեծ մարդուն ինչպե՞ս կհրամայես չխմել։ Իրենք պետք է չափը իմանան։ Գոնե մխիթարական էր այն, որ Այզադայի ամուսինը առայժմ օղուց հեռու էր մնում. դե հարբեցողը ինչքան կարող է զսպել իրեն, բայց նա միայն շուբաթ էր խմում, ըստ երևույթին, համենայն դեպս, հասկանում էր, որ չափազանցություն կլիներ, եթե հարբած քարշ գար աներոջ թաղմանը։ Բայց ինչքա՞ն կկարողանար զսպել իրեն, միայն աստծուն էր հայտնի։

Այդպես նստել, խոսում էին դեսից-դենից, Էդիլբայը շուբաթ հյուրասիրելիս,— Նրա ձեռքերը շատ երկար են, ծալվում ու բացվում են էքսկավատորի շերեփի նման, հանկարծ— երբ սեղանի մյուս եզրից Եդիգեյին էր մեկնում հերթական զալաթը, հիշեց.

— Եդիկե, երեկ գիշեր, երբ հերթապահության ժամանակ փոխարինեցի ձեզ, դուք նոր էիք հեռացել, հանկարծ օդը ուժեղ ցնցվեց, նույնիսկ ես տեղումս ճոճվեցի։ Նայեցի տեսա տիեզերակայանից հրթիռ է գնում երկինք։ Հսկայական, կարծես առնվ լիներ։ Դուք տեսա՞ք։

— Իհարկե։ Բերանս բաց էր մնացել։ Այդ ի՜նչ ուժ էր։ Ամ-

բողջապես բոցերի մեջ թրթռում էր և շարունակ վե՜ր, վե՜ր, ոչ վերջն էր երևում, ոչ սկիզբը։ Սոսկալի էր։ Այսքան տարի ապրում եմ այստեղ, դեռ նման բան չէի տեսել։

— Ես էլ առաջին անգամ էի տեսնում,— խոստովանեց Էդիլբայը։

— Դեհ, եթե դու առաջին անգամ ես տեսնում, ապա մեզ նմանները երբեք չէին կարող տեսնել,— կատակեց Սաբիթջանը, նկատի ունենալով նրա երկար հասակը։

Երկար Էդիլբայը միայն թեթևակի քմծիծաղ տվեց.

— Ես ի՞նչ,— ձեռքը թափ տվեց նա.— Նայում և աչքերիս չէի հավատում. կրակ կտրած դղրդում էր բարձրում։ Դեհ, մտածեցի, երևի նորից մարդ է թռչում տիեզերք։ Բարի երթ։ Եվ անմիջապես միացրի տրանզիստորը, որ միշտ հետս է։ Հիմա երևի ռադիոյով հաղորդում են, մտածեցի։ Սովորաբար, անմիջապես տիեզերակայանից հաղորդում են։ Հաղորդավարն էլ այնքան հանդիսավոր է ասում, կարծես ելույթ է ունենում միտինգում։ Ուղղակի մարդ փշաքաղվում է։ Եղիկե, շատ կուզեի իմանալ, թե ով էր նա, որին ես անձամբ տեսել էի թռիչքի պահին։ Բայց այդպես էլ չիմացա։

— Իսկ ինչո՞ւ,— կանխելով բոլորին, զարմացավ Սաբիթջանը, բազմանշանակալից և զոռզամտորեն բարձրացնելով հոնքերը։ Նա սկսել էր հարբել։ Քրտնել էր, կարմրել։

— Չգիտեմ։ Ոչինչ չհաղորդեցին։ Ես շարունակ «Մայակը» ալիքի վրա էի պահում, նույնիսկ մի բառ էլ չասացին...

— Չի կարող պատահել։ Երևի շփոթում ես,— մարտահրավեր կասկած հայտնեց Սաբիթջանը, արագ կում տալով ևս մի կում շուրաթով օղի։— Յուրաքանչյուր տիեզերական թռիչք համաշխարհային իրադարձություն է... Հասկանո՞ւմ ես։ Դա մեր հեղինակությունն է գիտության և քաղաքականության ասպարեզում։

— Չգիտեմ, ինչու չհաղորդեցին։ Վերջին լուրերը հատուկ լսեցի, լրագրերի տեսությունը նույնպես...

— Հը՞մ,— գլուխն օրորեց Սաբիթջանը։— Եթե ես աշխատանքիս վայրում լինեի, անպայման կիմանայի։ Ցավալի է, գրողը տանի։ Կամ գուցե այստեղ մի բան այնպես չէ։

— Ի՞նչ իմանաս, ինչը ինչպես չի, անձամբ ինձ համար ցավալի է, աստված վկա,— անկեղծորեն խոստովանեց Երկար Էդիլբայը։— Նա կարծես իմ տիեզերագնացը լինի։ Իմ աչքի

առջև է թռել։ Միգուցե, մեր տղաներից մեկն է թռչողը։ Այ թե հաճելի ուրախություն կլիներ։ Հանկարծ որտե՞ղ ենք հանդիպում, չէ որ իսկապես հաճելի կլիներ...

Սարիթջանը շտապով ընդհատեց նրան, ինչ-որ ենթադրությունից խանդավառված.

— Հա, ես հասկացա։ Առանց օդաչուի նավ են բաց թողել։ Ըստ երևույթին էքսպերիմենտի համար։

— Ինչպե՞ս թե,— խեթեց Եդիգեյը։

— Դեհ, իբրև փորձնական տարբերակ։ Հասկանո՞ւմ ես, դա փորձ է։ Առանց օդաչուի նավը գնացել է կցման կամ ուղեծիր է դուրս եկել, և առայժմ հայտնի չէ, թե ինչպես և ինչ կլինի։ Եթե ամեն ինչ բարեհաջող ընթանա, ապա կհայտարարեն և ռադիոյով, և թերթերով։ Իսկ եթե ոչ, գուցե հաղորդագրություն էլ չլինի։ Պարզապես գիտական փորձ է։

— Իսկ ես կարծում էի,— Էդիլբայը վշտացած քորեց ճակատը,— թե մարդ է թռել։

Բոլորը լռեցին, մի քիչ հիասթափված սարիթջանյան բացատրությունից, և գուցե խոսակցությունը դրանով էլ փակվեր, եթե Եդիգեյը միամտաբար խոսակցությունը չքաշեր նոր ոլորտ։

— Ուրեմն, ինչպես ես հասկացա, տիեզերք հրթիռ է գնացել առանց մարդու, հա՞, չիգիթներ։ Հապա ո՞վ է ղեկավարում հրթիռը։

— Ինչպե՞ս թե ով,— զարմացած ձեռքերն իրար զարկեց Սարիթջանը և հաղթական նայեց անգետ Եդիգեյին։— Այնտեղ, Եդիկե, ամեն ինչ ռադիոյով է կատարվում։ Երկրի հրամանով, ղեկավարման կենտրոնից։ Բոլոր գործերը ռադիոյով են ղեկավարում։ Հասկանո՞ւմ ես։ Եթե նույնիսկ նավի վրա տիեզերագնաց է լինում, միևնույն է, թռիչքը ղեկավարում են ռադիոյով։ Իսկ եթե տիեզերագնացը ինքնուրույն որևէ բան է ուզում ձեռնարկել, պետք է թույլտվություն ստանա... Թանկագին կոկեթայ,[1] դա Կարանառին հեծնել և սարօզեկներում ման գալ չի, այնտեղ ամեն ինչ շատ է բարդ։

— Ահա թե ինչ,— անորոշ հարեց Եդիգեյը։

Բորանլի Եդիգեյին անհասկանալի էր հենց ռադիողեկավարման սկզբունքը։ Նրա պատկերացմամբ ռադիոն դա բառեր է,

---

[1] Կոկեթայ — փաղաքշական, փոքրացուցիչ, բայց և ներողամիտ դիմելաձև։

հնչյուններ, որ եթերով գալիս է հեռավոր տարածություններից։ Բայց ինչպե՞ս կարելի է ղեկավարել անշունչ առարկայի միջոցով։ Եթե առարկայի մեջ մարդ է գտնվում, ուրիշ բան, նա կատարում է ցուցմունքներ. այսպես արա, այնպես արա։ Եդիգեյն ուզեց հարցուփորձել այդ մասին, հետո մտածեց, որ չարժի։ Հոգին հակառակվեց։ Լռեց։ Ախր, շատ ներողամիտ տոնով էր Սաբիթջանը մատուցում իր գիտելիքները։ Ահա, իբր, դուք ոչինչ չգիտեք, բայց ինձ անպիտան եք համարում, իսկ փեսան՝ վերջին հարբեցողի մեկը, նույնիսկ հարձակվեց վրաս, ուզում էր ինձ խեղդել, բայց ես բոլորիցդ էլ խելոք եմ այս հարցերում։ «Աստված քեզ հետ,— մտածեց Եդիգեյը։— Դրա համար էլ ամբողջ կյանքում քեզ ուսում ենք տվել։ Գոնե մի բան պիտի ավելի իմանաս մեզ նման անգրագետներից»։ Եվ հետո Բորանլի Եդիգեյը մտածեց. «Իսկ ի՞նչ կլինի, եթե այսպիսի մարդը հանկարծ իշխանություն ստանա. բոլորի գլուխը կուտի, ստորադրյալներին կտրիպի ամենագետ երևալ, ոմանց, առհասարակ, օր ու արև չի տա։ Առայժմ դեռ պետերի առջև է վազվզում, բայց ո՜նց է ուզում, որ բոլորն իր բերանին նայեն, գոնե այստեղ, սարօզեկներում...»։

Սաբիթջանը, ըստ երևույթին, իսկապես նպատակ էր դրել վերջնականապես շշմեցնել, ընկճել բորանլիցիներին, որ, թերևս, այդ ձևով բարձրացներ իր գինը նրանց աչքում, քրոջ և փեսայի հետ ունեցած խայտառակ կռվից հետո։ Որոշել էր խոսել, շեղել։ Եվ սկսեց պատմել անհավանական հրաշքներից, գիտության նվաճումներից, հետո էլ կում-կում օղի էր խմում, կես կում, էլի կես կում, վրայից՝ շուբաթ։ Դրանից նա ավելի էր տաքանում և պատմեց այնպիսի անհնարին բաներ, որ խեղճ բորանլիցիները չգիտեին ինչի՞ն հավատան, ինչին չհավատան։

— Ըհը՜, ինքներդ դատեք,— ասում էր նա փայլեցնելով ակնոցի ապակիները և բոլորին պարուրելով վրգռված, կախարդող հայացքով,— մենք, եթե կուզեք, մարդկության պատմության մեջ ամենաերջանիկ մարդիկ ենք։ Օրինակ, դու, Եդիկե, հիմա մեր մեջ ամենամեծն ես։ Դու գիտես, Եդիկե, թե ինչպես էր առաջ և ինչպես է հիմա։ Ի՞նչ եմ ուզում ասել։ Առաջ մարդիկ աստվածների էին հավատում։ Հին Հունաստանում նրանք իբր ապրել են Օլիմպոս լեռան վրա։ Բայց ի՞նչ աստվածներ էին դրանք։ Հիմարներ։ Ինչի՞ էին նրանք ընդունակ։ Իրար հետ հաշտ չէին, դրանով էլ աչքի էին ընկնում։ Բայց մարդկանց կյանքն ու կեն-

ցաղը փոխել չէին կարողանում և չէին էլ մտածում այդ մասին։ Այդ աստվածները չեն էլ եղել։ Դրանք առասպելներ են։ Հեքիաթներ։ Իսկ մեր աստվածներն ապրում են մեր կողքին, ահա այստեղ, տիեզերակայանում, մեր սարօղեկյան հողում, որով և մենք ձգպարտանում ենք համայն աշխարհի առջև։ Մեզանից ոչ մեկը նրանց չի տեսնում, չի ճանաչում, և պետք էլ չի, չի կարելի, որ ամեն մի պատահական մարդ ձեռքը մեկնի. Մըրկընքայու-Շիյ-կըմբայու, միթոմ, բարև, ո՞նց ես։ Բայց նրանք իսկական աստվածներ են։ Ահա դու, Եդիկե, զարմանում ես, թե ինչպե՞ս են նրանք ռադիոյով տիեզերանավեր ղեկավարում։ Դա արդեն չնչին բան է, անցած փուլ։ Դա սարքավորում է, մեքենաները գործում են ըստ ծրագրի։ Բայց կգա ժամանակ, երբ ռադիոյի միջոցով կղեկավարեն մարդկանց, ինչպես հիմա այն ավտոմատներին են ղեկավարում։ Հասկանո՞ւմ եք, մարդկանց, բոլորին անխտիր, մեծից փոքր։ Արդեն կան նման գիտական տվյալներ։ Գիտությունը դրան էլ է հասել, ելնելով բարձրագույն շահերից։

— Սպասիր, սպասիր,— ընդմիջեց Երկար Էդիլբայը,— դեռ ոչինչ չեղած, արդեն բարձրագույն շահեր։ Սա հասկանամ, իմ գլուխը բան չի մտնում։ Ուրեմն, մեզանից յուրաքանչյուրը պետք է մոտը միշտ փոքրիկ ռադիոընդունիչ պահի, տրանզիստորի տիպի, որպեսզի լսի հրամանը։ Էհ, ռադիոընդունիչ ամենուրեք էլ կա։

— Խելոք։ Մի՞թե խոսքը այդ մասին է։ Դա չնչին բան է, մանկական խաղալիք։ Ոչ մի անհրաժեշտություն չի զգացվի, որ մոտդ բան պահես։ Ուզում ես մերկ ման եկ։ Միևնույն է, անտեսանելի ռադիոալիքները, այսպես կոչված բիոհոսանքները, մըշտապես կներգործեն քեզ վրա, քո գիտակցության վրա։ Էլ ո՞ւր կարող ես փախչել։

— Այ թե ինչ։

— Բա ի՞նչ էիր կարծում։ Մարդը ամեն ինչ անելու է ըստ կենտրոնի ծրագրի։ Իրեն կթվա, թե ապրում ու գործում է ինքն իրեն, իր ազատ կամքով, մինչդեռ ապրում է վերևից եկող ցուցմունքներով։ Եվ ամեն ինչ, խիստ կարգուկանոնով։ Անհրաժեշտ է՝ երգես,— ազդանշան՝ կերգես։ Անհրաժեշտ է՝ պարես, ազդանշան՝ կպարես։ Անհրաժեշտ է՝ աշխատես, կաշխատես, այն էլ ինչպես կաշխատես։ Գողություն, խուլիգանություն, հանցագործություն՝ բոլորը մոռացվելու է, այդ մասին կարելի կլինի կարդալ միայն հին գրքերում։ Որովհետև ամեն ինչ նախատեսվելու է մարդու վարքագծում. բոլոր արարքները, բոլոր մտքերը,

բոլոր ցանկությունները։ Ահա, ասենք, հիմա աշխարհում տեղի է ունենում դեմոգրաֆիական պայթյուն, այսինքն մարդկային ծնունդը շատացել է, կերակրելու բան չկա։ Ի՞նչ անել։ Կրճատել ծնունդնե՞րը։ Կնոջդ հետ գործ կունենաս միայն այն ժամանակ, երբ ազդանշան տրվի, ելնելով հասարակության շահերից։

— Բարձրագույն շահերի՞ց,— ով առանց թույնի ճշտեց Երկար Էդիլբայը։

— Միշտ այդպես, պետական շահերը վեր են ամեն ինչից։

— Իսկ եթե ես ուզում եմ կնոջս հետ լինել այդ շահերից անկա՞խ...

— Էդիլբայ, սիրելիս, չի ստացվի։ Քո գլուխն այդպիսի միտք չի գա։ Եթե նույնիսկ գեղեցկուհիների գեղեցկուհուն տեսնես, աչքդ էլ չես թարթի։ Որովհետև կմիացնեն բացասական բիոհոսանքներ։ Այնպես որ այդ հարցում նույնպես կատարյալ կարգուկանոն կհաստատվի, համոզված եղիր։ Կամ վերցնենք ռազմական գործը։ Ամեն ինչ կլինի ազդանշանով։ Հարկավոր է կրակի մեջ նետվել. կնետվես կրակը, հարկավոր է պարաշյուտ. աչքդ էլ չես թարթի, հարկավոր է ատոմային ականի հետ պայթել տանկի տակ, խնդրեմ, մի վայրկյանում։ Ինչո՞ւ, կհարցնեք։ Որովհետև տրված է անվախության բիոհոսանք և վերջ, մարդն այլևս ոչ մի բանից վախ չի ունենում... Այդպես...

— Լավ ես փչում, խոսք չկա։ Եվ ի՞նչ են քեզ սովորեցրել այսքան տարի,— անկեղծ զարմանում էր Էդիլբայը։

Ներկաները բացահայտ ձեռ էին առնում, անհանգիստ շուռումուռ գալիս տեղներում, գլուխ էին օրորում, իբր, լավ է մոգոնում տղան, և շարունակում էին լսել, հրեշավոր բաներ է պատմում, բայց հետաքրքիր է, չլսված, թեև բոլորը տեսնում էին, որ կարգին հարբել է, շուրաթի հետ քիչ-քիչ օղի խմելով, էլ ինչ սպասանչես դրանից, թող բլբլա։ Մարդը մի տեղ բան է լսել, բայց թե ո՞րն է ճիշտը, որը՝ սուտ, չարժի դրա համար գլուխ ցավացնել։ Այո, բայց հանկարծ Եդիգեյը սարսափեց, հո հենց այնպես չի կոկռում մեր շատախոսը, անհանգստացավ նա, ախր, մի տեղ կարդացած կամ ականջի ծայրով լսած կլինի, ախր, նա ձեռաց ամեն բան իմանում է։ Իսկ եթե իսկապես կա՞ն այդպիսի մարդիկ, ընդ որում մեծ գիտնականներ, որոնք, իրոք ծարավի են ղեկավարելու մեզ, սատվածների նման...

Սաբիթժանը ձայնը չէր կտրում, քանի դեռ լսողներ կային։ Ակնոցի քրտնած ապակիների տակ բիբերը լայնացել էին, ինչ-

պես խավարում վազող կատվի աչքեր, և շարունակում էր մեկ օդին մոտեցնել շուրթերին, մեկ՝ շուրթերը։ Հիմա էլ ձեռքերը թափահարելով հեքիաթ էր պատմում օվկիանոսի ինչ-որ Բերմուդյան եռանկյունու մասին, որտեղ խորհրդավոր կերպով անհետանում են նավերը և հայտնի չէ, թե ո՞ւր են կորչում այդտեղի վրայով թռչող ինքնաթիռները։

— Այ, մեր մարդից մի մարդ ամեն կերպ հաջողացրեց, որ արտասահման գնա։ Պա՛հ, ինչ կա դրա մեջ։ Եվ գնաց, գլուխը քարը։ Ուրիշներին ետ մղեց, ինքն առաջ ընկավ, օվկիանոսի վրայով թռավ Ուրուգվայ թե Պարագվայ, և վերջ։ Ճիշտ Բերմուդյան եռանկյունու վրա, կարծես ինքնաթիռ չի էլ եղել, չքացավ։ Կորավ և վերջ։ Որովհետև, ընկերներ, ինչ իմաստ ունի որևէ մեկին խնդրել, թույլտվություն ձեռք բերել, ոմանց ետ մղել, ավելի լավ է յոլա գնանք առանց Բերմուդյան եռանկյունիների, ապրենք սեփական հողի վրա, սեփական կյանքով։ Եկեք խմենք մեր կենացը։

«Գնաց,— ներքուստ վրդովվեց Եդիգեյը։— Հիմա կսկսի իր սիրած նախերգանքը։ Ախ, իսկական պատիժ է, հենց մի քիչ խմում է, արգելակները թուլանում են»։ Այդպես էլ եղավ։

— Խմենք մեր առողջության կենացը,— կրկնեց Սաբիթժանը, սեղանակիցներին նայելով պղտոր, անհաստատ հայացքով, բայց դեռ ջանալով դեմքին տալ բազմանշանակալից, գոռոզ արտահայտություն։— Իսկ մեր առողջությունը մեր երկրի ամենամեծ հարստությունն է։ Ուրեմն մեր առողջությունը՝ պետական արժեք է։ Ահա թե ինչ։ Մենք հասարակ մարդ չենք։ Մենք պետական մարդ ենք։ Եվ ես ուզում եմ ասել նաև...

Բորանլի Եդիգեյը թափով վեր կացավ տեղից, չսպասելով, որ սա ավարտի բաժակաճառը, դուրս ելավ տնից։ Առմուտքի խավարում ինչ-որ բան դղրդալով շուռ տալով, դատարկ դույլ էր, թե մի ուրիշ բան ընկավ ոտքի տակ,— անմիջապես ոտքերին քաշեց կիրզայե ոտնամանները, որ սառել էին դրսում, և գնաց տուն վշտացած ու չարացած։ «Ա՜խ, խեղճ Ղազանղապ,— անլսելի հառաչեց նա, վիրավորանքից կծելով բեղի ծայրը։— Սա ի՞նչ բան է, ոչ մահն է մահ, ոչ վիշտը՝ վիշտ։ Նստել իր համար կոնծում է, կարծես քեֆի է եկել, փույթը չի։ Հնարել է այդ ճառի նախաբանը։— Պետական առողջություն և ամեն անգամ նույնը։ Գոնե աստծո օգնությամբ վաղը ամեն ինչ տեղը տեղին անենք, թաղումը կատարենք և առաջին հոգեհացը տանք, նրա

ուրքն այլևս այստեղ չի լինի, կպատմենք, այլևս նա ո՞ւմ է պետք այստեղ, և ո՞վ է պետք նրան»։

Համենայն դեպս, պարզվեց, որ Երկար Եղիկբայի տանը բավական նստել են։ Այդպես կեսգիշեր էր դառնում։ Եդիգեյը լիաթոք շնչեց գիշերային սարօզեկների սառած օդը։ Եղանակը խոստանում էր վաղը լինել սովորականի նման պարզ, չոր և բավականին շոգ։ Միշտ այդպես է։ Ցերեկը շոգ է, գիշերը՝ ցուրտ, սարսուռ է տալիս։ Դրա համար էլ չորսբոլորը չոր ու ցամաք տափաստան է, բուսականություն չի աճում։ Ցերեկը բույսերը մեկնվում են արևին, ուղղվում, ջուր են ուզում, իսկ գիշերը ցրտահարվում են։ Եվ մնում են միայն դիմացկունները. ղանազան փշեր, մեծ մասամբ օշինդր, մեկ էլ՝ բարձր զառիթափներին փնջերով աճող տարբեր խոտեր, որ կարելի է հնձել իբրև անասնակեր։ Երկրաբան Ելիզարովը՝ Բորանլի Եդիգեյի վաղեմի ընկերը, պատմում էր, երբեմն ուղղակի կարծես պատկեր էր գծում, որ ժամանակին այստեղ տարածված են եղել բուսառատ վայրեր, կլիման ուրիշ էր, անձրևը, երեք անգամ ավելի է եկել։ Դե պարզ է, կյանքն էլ ուրիշ կլիներ։ Հոտեր, նախիրներ, հովիվներ են թափառել սարօզեկներում։ Դա երևի շատ վաղուց է եղել, հավանաբար այն կատաղի եկվորների՝ ջուանջուանների հայտնվելուց էլ առաջ, որոնց հետքն անգամ չի մնացել դարերի մեջ, միայն լուրն է մնացել։ Այլ կերպ, ինչպես պիտի սարօզեկներում այդքան մարդ տեղավորվեր։ Իզուր չէր Ելիզարովն ասում, թե սարօզեկները տափաստանի պատմության մոռացված գիրքն են... Նրա կարծիքով, Անա-Բեյիթի գերեզմանոցի պատմությունը նույնպես պատահական չէ։ Կան գիտուններ, որ պատմություն են համարում միայն այն, ինչ գրված է թղթի վրա։ Իսկ եթե այն ժամանակներում դեռ գիրք չէր գրվում, այդ դեպքում ինչպե՞ս...

Ականջը դեպի կիսակայարանով անցնող գնացքներին, Եդիգեյը տարօրինակ համանմանությամբ հիշեց Արալյան ծովի փոթորիկները, որի ափին ծնվել, մեծացել և ապրել էր մինչև պատերազմը։ Ղազանղապն էլ, ախր, արալյան ղազախ էր։ Դրա համար էլ մտերմացել էին, երկուսն էլ հայտնվելով երկաթուղում, և հաճախ էին սարօզեկներում կարոտում իրենց ծովը, իսկ Ղազանղապի մահից ոչ շատ առաջ, դարնանը, միասին մեկնեցին Արալ, ըստ երևույթին ծերունին ուզում էր հրաժեշտ տալ ծովին։ Բայց երանի չգնային։ Հուզմունքից տակնուվրա եղան։

*Պարզվեց, որ ծովը փոքրացել էր։ Անհետանում, ցամաքում էր Արալը. Մոտ տասը կիլոմետր գնացին նախկին ծովի հատակով, մերկ կավահողերով, մինչև որ հասան ջրի եզերքին։ Այն ժամանակ Ղազանղապն ասաց. «Որքան աշխարհը գոյություն ունի, Արալյան ծովը եղել է։ Հիմա նա էլ է ցամաքում, էլ ի՞նչ խոսենք մարդկային կյանքի մասին»։ Ասաց նաև. «Դու ինձ Անաբեյիթում թաղիր, Եդիգեյ։ Իսկ ծովի հետ սա իմ վերջին հանդիպումն է...»։*

*Բորանլի Եդիգեյը թևքով սրբեց աչքից փախած արցունքը, հազաց, կոկորդը մաքրեց և գնաց Ղազանղապի խրճիթը, որտեղ նստել սուգ էին պահում Այզադան, Ուկուբալան և ուրիշ կանայք... Բորանլիցի կանայք երբեմն-երբեմն, գործի արանքում գալիս էին այնտեղ, որպեսզի միասին լինեն և անհրաժեշտության դեպքում օգնեն։*

*Անասնոցի մոտից անցնելիս Եդիգեյը կանգ առավ հողի մեջ խրված փայտի առջև, որի մոտ թամբված պատրաստ, ծոպավոր սթարով զարդարված, կանգնած էր Բորանլի Կարանարը։ Լուսնի լույսի տակ ուղտը թվաց փղի նման վիթխարի, հզոր, անխռով։ Եդիգեյը չդիմացավ, թփթփացրեց կողը։*

*— Համա թե առողջն ես։*

*Հենց մուտքի մոտ Եդիգեյը, չգիտես ինչու, ակամա հիշեց երեկվա գիշերը։ Հիշեց երկաթուղուն մոտեցած տափաստանային աղվեսին, որին չհամարձակվեց քարով խփել, միտքը փոխեց, և հետո, երբ տուն էր գնում, հեռավոր տիեզերակայանից հրեղեն նավի թռիչքը սև վիհի մեջ...*

## III

*Այդ ժամին Խաղաղ օվկիանոսի հյուսիսային լայնություններում արդեն առավոտ էր, առավոտյան ժամը ութը։ Կուրացնող, արևոտ եղանակը անհատնում լույս էր թափում անծայրածիր, շողշողացող, մեծ անդորրության վրա։ Եվ բացի ջրից ու երկնքից, ուրիշ ոչինչ գոյություն չուներ այս եզերքներում։ Այսուամենայնիվ հենց այստեղ, «Կոնվենցիա» ավիակրի նավակողին, խաղարկվում էր, առայժմ բոլորին անհայտ համաշխարհային դրամա. դա վերաբերվում էր տիեզերքի յուրացման պատմության մեջ չլսված մի դեպքի, որ տեղի էր ունեցել ամերիկա-սովետական ուղեծրային «Պարիտետ» կայանում։*

*«Կոնվենցիա» ավիակիրը՝ մոլորագիտական միացյալ «Դեմի-*

րուգ» ծրագրով գործող Միաղեկկենտրոնի գիտական-ստրատեգիական շտաբը, որ այդ պատճառով անհապաղ կտրել էր բոլոր տեսակի հարաբերությունները շրջապատի հետ, չէր փոխել իր մշտական տեղակայանը՝ Խաղաղ օվկիանոսի Ալեուտյան կղզիներից դեպի Հարավ, ընդհակառակը, ավելի ճշգրիտ էր համադասվել այդ շրջանում, խստորեն պահպանելով միևնույն օդային տարածությունը Վլադիվոստոկի և Սան-Ֆրանցիսկոյի միջև։

Հենց գիտական նավի մեջ նույնպես տեղի էին ունեցել որոշ փոփոխություններ։ Ամերիկյան և սովետական ծրագրի գլխավոր ղեկավարակիցների ցուցմունքով, տիեզերական կապի բլոկի երկու հերթապահ օպերատորները՝ մեկը սովետական, մյուսը՝ ամերիկյան, ընդունելով «Պարիտետում» տեղի ունեցած արտակարգ դեպքի հաղորդագրությունը, ժամանակավորապես, բայց խստորեն մեկուսացվել էին, որպեսզի պատահած դեպքի մասին տեղեկությունների կորուստ չլինի...

«Կոնվենցիայի» անձնակազմը գտնվում էր գերպատրաստ վիճակում, չնայած նավը ռազմական նախորոշում չուներ, ոչ էլ՝ մանավանդ, սպառազինություն, և ՄԱԿ-ի հատուկ որոշմամբ օգտվում էր Միջազգային անձեռնմխելիության ստատուսից։ Դա աշխարհում միակ ոչ ռազմական ավիակիրն էր։

Ցերեկվա ժամը տասնմեկին, հինգ րոպեի տարբերությամբ «Կոնվենցիայում» սպասվում էր երկու կողմերի պատասխանատու հանձնաժողովի ժամանում, կողմեր, որոնք, ելնելով իրենց երկրների և աշխարհի ապահովության շահերից, անվերապահորեն իրավունք ունեին անհրաժեշտության դեպքում ընդունելու արտակարգ որոշումներ և ձեռք առնելու գործնական միջոցներ։

Եվ այսպես «Կոնվենցիա» ավիակիրը այդ ժամին գտնվում էր բաց օվկիանոսում, Ալեուտյան կղզիներից դեպի Հարավ, խստորեն պահպանելով միևնույն տարածությունը Վլադիվոստոկի և Սան-Ֆրանցիսկոյի միջև։ Տեղի այդպիսի ընտրությունը պատահական չէր։ Այս անգամ, ինչպես երբեք, լիովին արտահայտվում էր «Դեմիուրգ» ծրագրի ստեղծողների նախնական աչալրջությունն ու շրջահայացությունը, քանզի, նույնիսկ նավի գտնման վայրը, նավ, որի վրա իրագործվում էր մոլորագիտական հետազոտությունների համատեղ մշակված պլանը, արտացոլում էր այդ եզակի գիտատեխնիկական միջազգային համագործակցության կատարյալ հավասարության սկզբունքները, բացարձակապես պարիտետային հիմունքներով։

«Կոնվենցիա» ավիակիրը իր ամբողջ սարքավորումով, հանդերձավորումով, էներգետիկ պաշարներով հավասարապես պատկանում էր երկու կողմերին և, այդպիսով, իրենից ներկայացնում էր փայատեր — պետությունների կոոպերատիվ նավ։ Ուներ ուղղակի և միաժամանակ գործող ռադիո-հեռախոսա-հեռուստատեսային կապ Նևադյան և Սարօզեկյան տիեզերակայանների հետ։ Ավիակրի վրա հիմնված էին ութ ռեակտիվ ինքնաթիռ՝ չորսական յուրաքանչյուր կողմից։ Սրանք մշտապես կատարում էին տրանսպորտային բոլոր փոխադրումներն ու տեղաշարժերը, որոնք անհրաժեշտ էին Միացեկկենտրոնին՝ մայրցամաքների հետ ունեցած իր ամենօրյա կապերի ժամանակ։ «Կոնվենցիան» ուներ երկու պարիտետ-կապիտան, սովետական ու ամերիկյան. Պարիտետ-կապիտան 1—2 և պարիտետ կապիտան 2—1։ Նրանցից յուրաքանչյուրը գլխավոր էր, հերթափոխն անցկացնելու պահին։ Նավային ամբողջ անձնակազմը համապատասխանաբար կրկնակի էր. պարիտետ-կապիտաններ, օգնականներ, ղեկապետներ, մեքենագետներ, էլեկտրիկներ, ստյուարդներ...

Միևնույն ձևով էր կազմված նաև Միացեկկենտրոնի գիտատեխնիկական անձնակազմը «Կոնվենցիայում», սկսած ծրագրի յուրաքանչյուր կողմի Գլխավոր ղեկավարակիցներից. Գլխավոր պարիտետ— մոլորակագետներ 1—2 և 2—1, հաջորդ բոլոր գիտական աշխատակիցները, բոլոր մասնագիտությունների գծով, նույնպես համապատասխանաբար կրկնվում էին, հավասարապես ներկայացնելով երկու կողմերը։ Այդ պատճառով էլ տիեզերակայանը, որ գտնվում էր երկրագնդից ամենահեռավոր «Տրամպլին» ուղեծրում, կոչվում էր «Պարիտետ», արտահայտելով երկրային փոխհարաբերությունների էությունը։

Այս ամենին, անշուշտ, նախորդել է երկու կողմերի գիտական, դիվանագիտական, վարչական հիմնարկների բազմաբնույթ նախապատրաստական մեծ աշխատանք։ Անհրաժեշտ են եղել ոչ քիչ տարիներ, մինչև որ երկու կողմերը անհամար հանդիպումների և խորհրդակցությունների ընթացքում համաձայնության են եկել «Դեմիուրգ» ծրագրի բոլոր ընդհանուր և մասնակի հարցերում։

«Դեմիուրգ» ծրագիրը իր առջև դրել էր դարուս տիեզերագիտական խնդիրների ամենավիթխարի առաջադրանքը. Իքս մոլորակի հետազոտությունը՝ նրա հանքային աղբյուրները օգտագործելու նպատակով, աղբյուրներ, որոնք իրենց մեջ թաքցնում են,

երկրային երևակայությանը անհասանելի ներքին էներգիայի պաշարներ։ Հարյուրավոր տոննաներով իքսյան հանքատեսակներ, որոնք գրեթե ազատ թափված են սառցային մարմնի մակերևույթին, համապատասխան մշակումից հետո, կարող էին ազատել այնքան ներքին էներգիա, որքան մեկ տարվա ընթացքում վերափոխված ձևով կպահանջվեր ամբողջ Եվրոպայի համար իբրև էլեկտրաէներգիա և ջերմություն։ Ահա, պարզվում է, այդպիսին է Իքսի նյութի էներգետիկ բնույթը, որ առաջացել է Գալակտիկայի յուրահատուկ պայմաններում՝ մոլորակային երկարատև էվոլյուցիայի ազդեցությամբ, մի քանի միլիարդ տարիների ընթացքում։ Այդ մասին էր վկայում Իքսի մակերևույթից կոսմիկական զործիքներով բերված հողաշերտի փորձարկումը, այդ մասին էին խոսում նաև մեր Արեգակնային համակարգի այդ կարմիր մոլորակում մի քանի անգամ կարճատև վայրէջք կատարած արշավախմբերի արդյունքները։

Իքսի յուրացման նախագծի օգտին վճռական գործոն դարձավ մի բան, որ չկար գիտությանը հայտնի ոչ մի ուրիշ մոլորակում, ներառյալ Լուսինն ու Վեներան,— ազատ ջրի առկայությունը, առաջին հայացքից այդքան ամայի Իքս սառցի ընդերքում։ Ջրի անվիճելի առկայությունը Իքսի վրա՝ հաստատվեց հորատման փորձարկումով։ Գիտնականների հաշվումներով Իքսի մակերևույթի տակ կարող էր լինել մի քանի կիլոմետր հաստությամբ ջրաշերտ, որը շնորհիվ ցածր տեղադրված սառը քարքարոտ հանքանյութերի, պահպանվում էր անփոփոխ վիճակով։

Հենց ջրի այս վիթխարի քանակը Իքս սառցի վրա ապահովում էր «Դեմիուրգ» ծրագրի իրավացիությունը։ Ջուրը տվյալ դեպքում ոչ միայն խոնավության աղբյուր էր, այլև կյանքի պահպանման ու մարդկային օրգանիզմի բնականոն աշխատանքի աղբյուր և առաջին հերթին, շնչելու օդի համար անհրաժեշտ այլ տարրեր սինթեզող հիմնական նյութ՝ այլամոլորակային պայմաններում։ Բացի այս ամենից, արտադրական տեսակետից ջուրը իքսյան հանքանյութերի նախնական հարստացման տեխնոլոգիայի մեջ կատարում էր հիմնական դեր, տրանստիեզերական կոնտեյներները բեռնելուց առաջ։

Քննարկվեց այն հարցը, թե իքսյան էներգիան որտե՞ղ է հարմար հանել. տիեզերքի ուղեծրային կայաննենրո՞ւմ, որպեսզի այնուհետև գեոսինխրոն ուղեծրերով փոխանցվի երկրին, թե անմիջապես երկրում։ Ժամանակ դեռ կար։

Արդեն երկարատև վայրէջքի էր պատրաստվում հորատողներից և հիդրոշինարարներից կազմված մի մեծ արշավախումբ, որը պետք է սարքավորեր մշտական և ավտոմատ կերպով ղեկավարվող ջրահոսք՝ Իքսի ընդերքից դեպի ջրմուղի համակարգ։ «Պարիտետ» ուղեծրային կայանը, եթե օգտվելու լինենք ալպինիստների տերմինաբանությունից, իրենից ներկայացնում էր գլխավոր բազային ճամբար՝ Իքսի ճանապարհին։ «Պարիտետի» վրա արդեն տեղադրված էին համապատասխան սարքեր տրանսպորտային «մակույկների» կառանման, բեռնաթափման և բարձման համար, որոնք պետք է երթևեկեին Իքսի և «Պարիտետի» միջև։ Ժամանակին, ճախարակների կառուցումն ավարտելուց հետո, «Պարիտետում» կարող էին տեղավորվել ավելի քան 100 մարդ, միանգամայն հարմարավետ պայմաններում, ներառյալ և մշտական հեռուստատեսային հաղորդումների ընդունում Երկրից։

Այդ մեծ, տիեզերական ձեռնարկության մեջ Իքսյան ջրի հանույթն ու տարրալուծումը կլիներ արտադրական գործունեության առաջին գործողությունը, որ երբևէ հաջողվել է մարդուն իրականացնել սեփական մոլորակի սահմաններից դուրս…

Եվ այդ օրը մոտ էր։ Եվ ամեն ինչ տանում էր դեպի այդ…

Սարօղեկյան և Նևադյան տիեզերակայաններում ավարտվում էին Իքսի հիդրոտեխնիկական գործողությունների վերջին պատրաստությունները։ «Պարիտետը» գտնվելով «Տրամպլին» ուղեծրում պատրաստ էր ընդունելու և Իքս ուղարկելու տիեզերական խոպանայինների առաջին բանվորական խումբը։

Ըստ էության, ժամանակակից մարդկությունը կանգնած էր իր արտաերկրային քաղաքակրթության սկզբնավորման ակունքների մոտ…

Եվ ճիշտ այդ պահին, հիդրոլոգների առաջին խումբը Իքս մոլորակ ուղարկելու նախօրեին, երկու պարիտետ-տիեզերագնացները, որոնք գտնվում էին «Տրամպլին» ուղեծրում՝ «Պարիտետի» վրա երկարատև տիեզերական հերթափոխի, հանկարծ անհետ չքացան… նրանք հանկարծ դադարեցին պատասխանել որևէ ազդանշանի ո՛չ կապի համար նախատեսված ժամանակաշրջանում, ոչ էլ երբևէ։ Տպավորությունը ճնշող էր. բայց դատչիկներից, որոնք մշտապես ցույց էին տալիս կայանի գտնման վայրը և շարժման կոռեկցիայի ուղղության մղանցքը, միացյալ

ռադիո-հեռուստատեսային կապի բոլոր համակարգերը մտնըվել էին անգործության։

Ժամանակն անցնում էր։ «Պարիտետը» չէր արձագանքում իրեն ուղղված ոչ մի դիմումի։ «Կոնվենցիայում» տագնապն աճում էր։ Արվում էին ամեն տեսակի ենթադրություններ ու կռահումներ։ Ի՞նչ էր պատահել պարիտետ-տիեզերագնացներին։ Ի՞նչն էր նրանց լռության պատճառը։ Արդյո՞ք չեն հիվանդացել կամ չե՞ն թունավորվել որևէ ուտելիքից։ Եվ առհասարակ ո՞ղջ են արդյոք։

Վերջապես օգտագործվեց վերջին միջոցը. ազդանշան ուղարկվեց միացնելու կայանի ընդհանուր հրդեհային տագնապի համակարգը։ Ոչ մի պատասխան՝ այդ ահաբեկիչ գործողությանը նույնպես։

«Դեմիուրգ» ծրագրին լուրջ վտանգ էր սպառնում։ Եվ այնժամ «Կոնվենցիայի» Միաղեկկենտրոնը իրավիճակի պարզաբանման համար դիմեց վերջին հնարավորությանը։ Դեպի «Պարիտետ» արտահերթ կցման ուղարկվեցին երկու տիեզերանավ, երկու տիեզերագնացներով՝ Նևադյան և Սարօզեկյան տիեզերակայաններից։

Երբ միաժամանակյա կցումն իրագործվեց, որ ինքնըստինքյան վերին աստիճանի բարդ գործ էր, «Պարիտետ» թափանցած տիեզերագնաց-հսկիչներից ստացված առաջին հաղորդագրությունը շշմեցուցիչ էր. մուտք գործելով բոլոր սենյակները, լաբորատորիաները, բոլոր հարկերը, բոլոր նույնիսկ աննշան անկյունները, նրանք հայտարարեցին, որ կայանում չեն հայտնաբերել պարիտետ-տիեզերագնացներին։ Նրանք այստեղ չէին ոչ կենդանի, ոչ մեռած...

Այդպիսի բան ոչ մեկի մտքով չէր անցնի։ Ոչ մի երևակայություն ի զորու չէր պատկերացնելու, թե ինչ է տեղի ունեցել, ո՞ւր են հանկարծ կորել երկու մարդ, որոնք ավելի քան երեք ամիս գտնվել են ուղեծրային կայանում, մինչև այժմ հստակ կատարելով իրենց վրա դրված բոլոր պարտավորությունները։ Չէ՞ որ չէի՞ն կարող գոլորշիանալ։ Չէ որ չէին կարող դուրս գալ բաց տիեզերք։

«Պարիտետի» հետազոտության գործողությունը կատարվում էր «Կոնվենցիայի» հետ ռադիոհեռուստատեսային ուղղակի կապի միջոցով, երկու Գլխավոր ղեկավարակիցների՝ Գլխավոր պարիտետ-մոլորակագետների անմիջական մասնակցությամբ։

Միաղեկկենտրոնի բազմաթիվ էկրանների վրա լավ երևում

էր, թե ինչպես էին տիեզերագնաց-հսկիչները անկշռելիության մեջ լողալով, իրար հետ բանակցելով շրջում ուղեծրային կայանի բոլոր սենյակներն ու անկյունները։ Նրանք քայլ առ քայլ հետախուզում էին կայանը, այդ ընթացքում շարունակ զեկուցելով իրենց դիտումների մասին։ Այդ խոսակցությունը գրանցվել է ձայնագրող սարքի վրա։

«Պարիտետ». Դուք դիտո՞ւմ եք։ Կայանում մարդ չկա։ Մենք ոչ ոքի չենք հայտնաբերել։

«Կոնվենցիա». Կայանում չկա՞ն արդյոք ջարդված առարկաների մնացորդներ, խախտումներ, կոտրվածքներ։

«Պարիտետ». Ոչ։ Ամեն ինչ կարգին է, ինչպես հարկն է։ Ամեն ինչ իր տեղում է։

«Կոնվենցիա». Չկան արդյո՞ք արյան հետքեր։

«Պարիտետ». Բացարձակապես ոչ։

«Կոնվենցիա». Որտե՞ղ են գտնվում և ի՞նչ վիճակում են պարիտետ-տիեզերագնացների անձնական իրերը։

«Պարիտետ». Կարծես թե ամեն ինչ իր տեղում է։

«Կոնվենցիա». Ավելի ճշգրի՞տ։

«Պարիտետ». Տպավորությունն այնպիսին է, կարծես թե նրանք այստեղ են եղել ոչ վաղուց։ Գրքերը, ժամացույցը, նվագարկիչը և այլ մանր-մունր իրեր, ամեն ինչ տեղում են։

«Կոնվենցիա». Լավ։ Չկա արդյոք որևէ գրություն, պատին կամ թղթի վրա...»

«Պարիտետ». Նման ոչ մի բան չենք հայտնաբերել։ Բայց սպասեք։ Հերթափոխային մատյանը բաց է ինչ-որ գրված էջի վրա։ Եվ որպեսզի չլողա անկշռելիության մեջ, մատյանը սեղմակներով ամրացված է և բացված էջերով ուղղված է ներս մտնողի կողմը...

«Կոնվենցիա». Կարդացեք, ի՞նչ է գրված։

«Պարիտետ». Հիմա կփորձենք։ Կան երկու տեքստեր կողք-կողքի տեղադրված սյունակներով՝ անգլերեն և ռուսերեն լեզուներով...

«Կոնվենցիա». Կարդացեք, ի՞նչ եք հապաղում։

«Պարիտետ». Վերնագիր. «Ուղերձ երկրայիններին», իսկ փակագծերում՝ «Բացատրագիր»:

«Կոնվենցիա». Սպասեք։ Մի կարդացեք։ Կապի սեանսը ընդհատվում է։ Սպասեք։ Որոշ ժամանակից նորից կկանչենք ձեզ։ Պատրաստ եղեք։

«Պարիտետ». *Օ՛քեյ։*

*Այստեղ ուղեծրային կայանի և Միաղեկկենտրոնի միջև երկխոսությունը դադարեցվում է։ «Դեմիուրգ» ծրագրի Գլխավոր ղեկավարակիցները միմյանց հետ խորհրդակցելուց հետո, բոլորին, բացի երկու հերթապահ-օպերատորից, խնդրեցին հեռանալ տիեզերական կապի կայանից։ Դրանից հետո միայն վերականգնվեց երկկողմանի կապի սեանսը։ Ահա «Տրամպլին» ուղեծրում պարիտետ-տիեզերագնացների թողած տեքստը.*

*«Հարգելի կոլեգաներ, քանի որ, միանգամայն անսովոր հանգամանքների բերումով, մենք անորոշ ժամանակով հեռանում ենք «Պարիտետ» ուղեծրային կայանից, և հնարավոր է, հեռանում ենք չափազանց երկար ժամանակով, ամեն ինչ կախված կլինի մի շարք գործոններից, որոնք առնչվում են մեր աննախադեպ նախաձեռնությանը, մենք անհետաձգելի պարտք ենք համարում բացատրելու մեր վարմունքի դրդապատճառները։*

*Մենք քաջ գիտակցում ենք, որ մեր վարմունքը, անտարակույս, կթվա ոչ միայն անսպասելի, այլև անշուշտ, տարրական կարգապահության տեսակետից, անթույլատրելի։ Սակայն այն բացառիկ փաստը, որին մենք բախվեցինք, գտնվելով տիեզերքի ուղեծրային կայարանում, փաստ, որին հավասար որևիցե այլ բան դժվար է պատկերացնել մարդկային մշակույթի ամբողջ պատմության ընթացքում, թույլ է տալիս հուսալու, որ ծայրահեղ դեպքում, գեթ կհասկանաք մեզ...*

*Որոշ ժամանակ սրանից առաջ, տիեզերական շրջապատից և զգալի չափով հենց երկրի իոնային ոլորտից արձակվող անհամար ռադիո-ազդակների մեջ, անվերջանալի աղմուկների ու խոչընդոտների մեջ, նեղհաճախականության գոտում սկսեցինք որսալ նպատակասլաց մի ռադիոազդանշան, որ լինելով ամենանեղը, հեշտությամբ առանձնանում էր, կանոնավոր կերպով հաղորդում էր իր մասին, միշտ միևնույն ժամին և միշտ հավասար ընդմիջումներով։ Սկզբում դրան առանձին ուշադրություն չդարձրինք։ Բայց ռադիոազդանշանը համառորեն շարունակում էր հիշեցնել իր մասին, պարբերաբար արձակվելով Տիեզերքի խիստ որոշակի կետից, և ըստ ամենայնի, խստորեն կողմնորոշվելով դեպի մեր ուղեծրային կայանը։ Այժմ մենք որոշակի գիտենք. այդ արհեստականորեն ուղարկված ռադիոալիքները եթեր են հասել նաև առաջ, մեր հերթափոխից շատ առաջ, երրորդի ժամանակ, չէ՞ որ «Պարիտետը» հեռավոր «Տրամպլին» տիեզե-*

բական ուղեծրում է գտնվում ահա արդեն մեկուկես տարուց ավելի։ Դժվար է բացատրել, թե ինչու, թերևս զուտ պատահականորեն, մենք առաջինը հետաքրքրվեցինք Տիեզերքից արձակվող այդ ազդանշանով։ Այսպես թե այնպես, մենք սկսեցինք հետազոտել, արձանագրել, ուսումնասիրել այդ երևույթի բնույթը և, հետզհետե ավելի համոզվելով, եկանք այն եզրակացության, որ դա ունի արհեստական ծագում։

Թեև մենք այնքան էլ շատ չհաշտվեցինք այդ մտքի հետ։ Կասկածները մեզ հանգիստ չէին տալիս։ Ինչպե՞ս կարող էինք հաստատել արտաերկրային քաղաքակրթության գոյությունը, հենվելով լոկ մի փաստի, մեր կարծիքով, արհեստական ռադիոազդանշանի վրա, որ գալիս էր տիեզերական աշխարհի անհայտ խորքերից։ Մեզ ետ էր պահում այն հանգամանքը, որ գիտության բոլոր նախորդ փորձերը, որոնք բազմիցս կատարվել են ամենամինիմալ առաջադրանքով՝ հայտնաբերել կյանքի գեթ որևիցե նշան, թեկուզ ամենապարզագույն ձևով, թեկուզ սահմանակից մոլորակներում,— ինչպես հայտնի է, ավարտվել էին զարմանալիորեն անպտուղ։ Արտաերկրային բանականության որոնումները համարվում էին քիչ հավանական, իսկ ավելի ուշ, պարզապես անհնարին, ուտոպիական զբաղմունք, քանի որ տիեզերական տարածությունների հետազոտման յուրաքանչյուր քայլի հետ այդ հավանականությունը, նույնիսկ տեսականորեն, գնալով ավելի ու ավելի էր նվազում, եթե չասենք, որ գործնականորեն հանգել էր զրոյի։ Մենք չէինք համարձակվում հայտարարել մեր կռահումները։ Միտք չունեինք վիճարկելու ամենուրեք տարածված այն գաղափարը, որը հաստատում է կենդանի կյանքի, իբրև բիոլոգիական ֆենոմենի անկրկնելիությունը, աննախադեպությունը, եզակիությունը լոկ Երկիր մոլորակում։ Մենք պարտավորված չենք զգացել այս ուղղությամբ արտահայտելու մեր կասկածները, քանի որ ուղեծրային կայանում մեր աշխատանքային պարտավորությունների ծրագրի մեջ այդ կարգի դիտարկումներ չէին մտնում։

Իսկ երբ մի դեպք ևս վերջին անգամ հավաստեց Տիեզերքում բանական կյանքի գոյությունը, երկրայինից բացի, մեզ համար ուշ էր արդեն։ Մեր գիտակցության մեջ տեղի ունեցավ թռիչք, աշխարհի մասին մեր պատկերացումների հեղաշրջում, վերափոխություն, և հանկարծ բացահայտեցինք, որ սկսել ենք մտածել բոլորովին այլ կատեգորիաներով, քան մինչ այդ։ Տիեզերքի կա-

ռուցվածքի նոր, որակական իմաստավորումը, նոր բնակելի տարածության հայտնագործությունը մոտային էներգիայի ևս մեկ, հզոր օջախի գոյությունը մեզ բերեցին այն եզրակացության, թե առայժմ մենք պետք է խուսափենք երկրայիններին ավետելու մեր հայտնագործության մասին, ելնելով Երկրի մասին եղած մտահոգության նոր հասկացություններից։ Մենք այդ որոշումն ընդունեցինք, հաշվի առնելով ժամանակակից հասարակության բուն շահերը։

Այժմ գործի էության մասին։ Ինչպե՞ս տեղի ունեցավ այդ։

Մի անգամ, հանուն հետաքրքրասիրության, որոշեցինք պատասխան ռադիոազդանշան ուղարկել, հաճախականության մոտավորապես միևնույն սպեկտրով, այն ուղղելով Տիեզերքի նույն կետին, որտեղից մշտապես բխում էին հանելուկային, կանոնավոր ռադիոազդանշանները։ Տեղի ունեցավ հրա՞շք: Մեր ազդանշանը անճապաղ ընդունվեց: Ընդունվեց և հասկացվեց: Որպես պատասխան, մեր ընդունող գոտում, նախկինի կողքին աշխատեց ևս մի կրկնակ, այնուհետև ևս մեկը, դա ողջույնի եռյակ էր, Տիեզերքից արձակվող երեք միաժամանակյա ռադիոազդանշաններ, մի քանի ժամ անընդմեջ, իբրև հաղթական քայլերգ, ավետելով մեր Գալակտիկայից դուրս բանական էակների գոյության բերկրալի լուրը, էակներ, որոնք ունեն բարձրագույն ընդունակություն հաղորդակցվելու իրենց նման արարածների հետ, գերհեռու տարածությունների վրա։ Դա հեղափոխություն էր տիեզերական կենսաբանության մասին մեր ունեցած պատկերացումների մեջ, ժամանակի, տարածության, հեռավորության կառուցվածքի մասին ունեցած մեր գիտելիքների մեջ։ Մի՞թե այլևս մենք մենակ չենք աշխարհում, մեր տեսակի մեջ միակը չենք աշխարհի անհրաժեշտ ամայի անվերջության մեջ, մարդու փորձը Երկրի վրա, մարդ էակը տիեզերքում կյանքի միակ արտահայտությունը չի։

Որպեսզի ստուգեինք արտաերկրային քաղաքակրթության հայտնաբերման իսկությունը, մենք, ռադիոազդանշանով ուղարկեցինք երկրագնդի ցանցվածի բանաձևը, երկրագունդ, որի վրա ի սկզբանե առաջացել է և այժմ հիմնված է մեր կյանքը։ Որպես պատասխան մեր հերթին ստացանք վերծանություն՝ իրենց մոլորակի ցանցվածի մոտավորապես նույնպիսի բանաձև։ Դրանից եզրակացրինք, որ դա բնակելի մոլորակ է, բավական մեծ չափերի և միանգամայն ընդունելի ձգողական ուժով։

Այսպես մենք փոխանակեցինք ֆիզիկայի օրենքների մեր առաջին գիտելիքները, այսպես մենք առաջին անգամ կապի մեջ մտանք արտաերկրային բանականություն կրողների հետ։

Այլմոլորակայինները դարձան գործունյա ընկերակիցներ մեր կապերի խորացման ու մերձեցման հարցում։ Նրանց ջանքերով մեր կապերը արագորեն ձեռք էին բերում նոր բովանդակություն։ Շուտով մեզ հայտնի դարձավ, որ նրանք ունեն թռչող սարքեր, որոնց շարժման արագությունը հավասար է լույսի արագությանը։ Այս և այլ բաների մասին մենք իմացանք, որովհետև ի վիճակի գտնվեցինք մտքեր փոխանակելու սկզբում մաթեմատիկական և քիմիական բանաձևերի միջոցով, իսկ հետո նրանք մեզ հասկացրին, որ գիտեն նաև խոսել։

Պարզվեց, որ տարիներ շարունակ, այն ժամանակից, ինչ երկրայինները հաղթահարելով Երկրի ձգողականությունը, տիեզերք են դուրս եկել և սկսել են հաստատվել այնտեղ, նրանք ուսումնասիրում են մեր լեզուները հզոր ռադիոաստղաբաշխական գործիքների օգնությամբ, որոնք լավագույնս լսում են Գալակտիկան։ Պարբերական ռադիոկապ որսալով տիեզերքի և Երկրի միջև, նրանք հակադրությունների և վերլուծության ճանապարհով կարողացել են բացահայտել մեր նախադասությունների և բառերի նշանակությունը։ Դրանում համոզվեցինք ինքներս, երբ նրանք փորձեցին մեզ հետ խոսել անգլերեն և ռուսերեն լեզուներով։ Մեզ համար դա մի նոր, անհավանական, շշմեցնող հայտնություն էր...

Իսկ այժմ ամենագլխավորի մասին։ Մենք հանգգնում ենք այցելելու արտաերկրային քաղաքակրթության այդ մոլորակը։

Անտառալանջ, մոտավորապես այդպես վերծանեցինք նրանց մոլորակի անունը։ Անտառալանջցիները իրենք հրավիրեցին մեզ, դա նրանց միտքն էր։ Եվ մենք երկար խորհրդակցելուց հետո հրավերն ընդունեցինք։ Նրանք բացատրեցին, որ իրենց թռչող գործիքը, որ լույսի արագություն ունի, մեր ուղեծրային կայան կհասնի քսանվեց-քսանյոթ ժամում։ Նույնքան ժամանակում էլ անտառալանջցիները պատրաստվում են մեզ ետ բերել, հենց որ մենք ցանկություն հայտնենք։ Միակցման մասին մեր հարցումին, նրանք պատասխանեցին, թե դա դժվար չէ, քանի որ անտառալանջյան թռչող գործիքը ունակություն ունի հերմետիկ կերպով միանալու ուղածդ կոնֆիգուրացիայի և կառուցվածքի

ուղածդ ատարկային։ Դա, ըստ երևույթին, էլեկտրամագնիսական միակցման որևէ հատկություն է։ Մեր կարծիքով, մեզ համար լավագույնն այն կլիներ, եթե նրանց թռչող գործիքը միանար բաց տիեզերքի վրա բացվող մեր ելքի լյուկին, որի միջոցով մենք կարող էինք ուղեծրային կայանից տեղափոխվել նրանց մոտ։ Այդ միևնույն եղանակով մենք մտադիր էինք ետ դառնալ, եթե, իհարկե, ճամփորդությունը դեպի Անտառալանջ ավարտվեր բարեհաջող...

Եվ այսպես «Պարիտետում» թողնում ենք այս ուղերձը կամ, եթե կուզեք, այս բացատրագիրը, բաց նամակը, դիմումը... Կարևորն այդ չէ... Մենք բավական հստակ գիտենք, թե ինչ քայլի ենք դիմում և թե որքան ծանր է մեր վերցրած պատասխանատվության բեռը։ Մենք գիտակցում ենք, որ ճակատագրին հաճո է եղել հենց մեզ համար ստեղծել ամենահավակագույն հնարավորությունը՝ մարդկությանը մատուցելու այնպիսի ծառայություն, որից ավելի բարձր բան մենք երևակայել չենք կարող...

Այսուհանդերձ մեզ համար ամենից ավելի տանջալին եղել է պարտքի, պարտականության, կապվածության, կարգապահության զգացումը հաղթահարելը։ Վերջապես... Այն, ինչ մեզանից յուրաքանչյուրի մեջ դաստիարակված է վաղեմի ավանդույթներով, օրենքներով, բարոյականության հասարակական օրենքներով։ Մենք հեռանում ենք «Պարիտետից», ձեզ, Միացեկկենտրոնի ղեկավարներին և առհասարակ ոչ էլ երկրայիններից որևէ մեկին հայտնի չդարձնելով, մեր նպատակներն ու խնդիրները չհամաձայնեցնելով ոչ որի հետ և ոչ մի ձևով, ոչ որովհետև արհամարհում ենք Երկրի հասարակական կյանքի կանոնները։ Մեզ համար դա եղել է ամենածանր խորհրդածությունների թեմա։ Մենք ստիպված ենք վարվել այդ կերպ, որովհետև դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսի տրամադրություններ, հակասություններ, կրքեր կբորբոքվեն, հենց որ շարժման մեջ դրվեն ուժերը, որոնք նույնիսկ հոկեյի յուրաքանչյուր գոլի մեջ տեսնում են քաղաքական հաղթանակ և սեփական պետական սիստեմի առավելություն։ Ավա՜ղ, մենք չափից ավելի լավ գիտենք մեր երկրային իրականությունը։ Ո՞վ կարող է հավաստիացնել, թե արտաերկրային քաղաքակրթության հետ հաղորդակցության հնարավորությունը չի դառնա երկրայինների համաշխարհային երկպառակության ևս մի պատճառ։

Երկրում դժվար է կամ գրեթե անհնարին է հեռու մնալ քաղա-

քակման պայքարից։ Բայց երկարատև ժամանակով՝ շատ օրեր ու շաբաթներ, գտնվելով հեռավոր տիեզերքում, որտեղից երկրագունդը թվում է ավտոմեքենայի անիվից ոչ ավելի, մենք ցավով և անզոր վրդովմունքով մտածում ենք, թե արդի էներգետիկ ճգնաժամը, որ հասարակությանը հասցնում է մոլեգնության, հուսահատության դուռը, որոշ երկրների նույնիսկ՝ ատոմային ռումբի դիմելու ցանկության,— սոսկ տեխնիկական խնդիր պրոբլեմ է, եթե այդ երկրները ի վիճակի լինեին համաձայնության գալ, մի բան, որ շատ կարևոր է...

Երկրայինների առանց այն էլ վտանգներով հղի վիճակը ավելի չպղտորելու և չբարդացնելու մտավախությունից մենք համարձակվեցինք մեզ վրա վերցնելու չտեսնված պատասխանատվություն. ամբողջ մարդկային ցեղի անունից հանդես գալ արտաերկրային բանականության կրողների առջև՝ մեր համոզմունքների և մեր խղճի համաձայն։ Մենք հույս ունենք և ներքուստ վստահ ենք, որ արժանապատվությամբ կկատարենք այդ կամավոր առաքելությունը։

Եվ վերջինը։ Մեր խորհրդածությունների, կասկածների և տատանումների ընթացքում քիչ չենք մտահոգվել այն մասին, որ վնաս չհասցնենք «Դեմիուրգ» ծրագրին, մարդկության երկրատիեզերական պատմության այդ մեծագույն նախաձեռնությանը, մարդկություն, որ տառապել է մեր երկրների երկարամյա փոխադարձ անվստահության, համագործակցության մակընթացությունների ու տեղատվությունների պատճառով։

Համենայն դեպս, բանականությունը հաղթանակեց, և մենք բարեխղճությամբ ծառայեցինք ընդհանուր գործին մեր ուժերի և ընդունակությունների ներածի չափով։ Բայց չափակցելով մեկը մյուսի հետ և չցանկանալով վերը նշած մտավախությունների պատճառով «Դեմիուրգ» ծրագիրը ենթարկել փորձության, մենք որոշեցինք. «Պարիտետից» հեռանում ենք ժամանակավորապես, այնպես որ վերադարձին մարդկությանը զեկուցենք Անտառալանջ մոլորակ այցելելու արդյունքները։ Իսկ եթե մենք անհետանանք ընդմիշտ կամ եթե ղեկավարությունը մեզ անարժան համարի շարունակելու մեր հերթափոխը «Պարիտետում», ապա մեզ փոխարինելը այնքան դժվար չի լինի։ Միշտ կգտնվեն պիտանի երիտասարդներ, որոնք կաշխատեն մեզնից ոչ պակաս։

Մենք գնում ենք դեպի անհայտը։ Մեզ այնտեղ է առաջնորդում բանականության ծարավը և մարդու հավերժական երազանքը.

*իր նման բանական արարածներ հայտնաբերել այլ աշխարհներում, որպեսզի բանականությունը միանա բանականությանը։ Սակայն ոչ ոքի հայտնի չէ, թե ինչ է թաքնված արտաերկրային քաղաքակրթության փորձի մեջ. բարի՞ք թե՞ չարիք մարդկության համար։ Մենք կաշխատենք ամեն ինչ գնահատել անաչառ։ Բայց եթե զգանք, որ մեր հայտնագործությունը կրում է որևիցե սպառնալի, որևիցե կործանարար բան Երկրի համար, երդվում ենք, այնպես տնօրինել մեր կյանքը, որ Երկրի գլխին ոչ մի փորձանք չբերենք։*

*Եվս մի անգամ վերջինը։ Մենք հրաժեշտ ենք տալիս։ Մեր իլյումինատորների միջով Երկիրը տեսնում ենք դրսից։ Տարածության մութ ծովում Երկիրը փայլում է ինչպես շողարձակ ադամանդ։ Երկիրը չքնաղ է իր անհավասարլի, աննման բաց կապույտով և այստեղից թվում է փխրուն, ինչպես նորածնի գլուխ։ Այստեղից մեզ թվում է, թե բոլոր մարդիկ, ովքեր ապրում են աշխարհում, մեր քույրերն ու եղբայրներն են, և առանց նրանց մենք չենք էլ համարձակվում պատկերացնել մեզ, թեև գիտենք, որ Երկրում դա այնքան էլ այդպես չի...*

*Մենք հրաժեշտ ենք տալիս երկրագնդին։ Մի քանի ժամից պետք է հեռանանք «Տրամպլին» ուղեծրից, այն ժամանակ Երկիրը կծածկվի մեր տեսողությունից և այլևս չի երևա։ Այլմոլորակային-անտառալանջցիները արդեն ճամփին են։ Շուտով կժամանեն։ Մի քանի ժամից։ Քիչ է մնում։ Սպասում ենք։*

*Եվ էլի։ Մենք նամակներ ենք թողնում մեր ընտանիքներին։ Շատ ենք խնդրում ձեզ բոլորիդ, ով կապ ունենա այս գործի հետ, հանձնել նամակները հասցեատերերին...*

*Հ. Գ. Տեղեկանքներ նրանց համար, ովքեր կգան «Պարիտետ»՝ մեր տեղը։ Հերթապահական մատյանում նշել ենք ընդունմանհաղորդման կանալը և ռադիոալիքների հաճախականությունը, որոնց օգնությամբ հաղորդակցության մեջ ենք մտել այլմոլորակայինների հետ։ Անհրաժեշտության դեպքում մենք կկապվենք ձեզ հետ այս կանալով և կհաղորդենք մեր տեղեկությունները։ Որքան կարողացանք պարզել, անտառալանջցիների հետ ռադիոհաղորդակցումների մեջ ամենահարմար և միակ կապի միջոցը դա ուղեծրային կայանի բորտային համակարգերն են, որովհետև Տիեզերքից անմիջապես Երկիր ուղղվող ռադիոազդանշանները չեն հասնում նրա մակերևույթին, Երկրի մթնոլորտային շրջա-*

*պատում անհաղթահարելի խոչընդոտի՝ խոնացված հզոր ոլորտի պատճառով։*

*Ահա և վերջ։ Մնաք բարով։ Մեր ժամանակն է։ Ուղերձի նույնանման տեքստը կազմված է երկու լեզուներով՝ անգլերեն և ռուսերեն։*

*Պարիտետ-տիեզերագնաց 1—2,*
*Պարիտետ-տիեզերագնաց 2—1։*
*«Պարիտետ» ուղեծրային կայանի բորտ։*
*Երրորդ հերթափոխ։ 94-րդ օր»,*

*Ուղիղ նշանակված ժամին, հեռավոր արևելյան ժամանակով ժամը տասնմեկին «Կոնվենցիա» ավիակիրի տախտակամածին իրար ետևից վայրէջք կատարեցին երկու ռեակտիվ ինքնաթիռ՝ հատուկ լիազորված հանձնաժողովներով՝ ամերիկյան և սովետական կողմերից։*

*Հանձնաժողովի անդամներին դիմավորեցին խիստ ու չոր։ Նրանց անմիջապես հայտարարեցին, որ ճաշի համար տրվում է կես ժամ։ Ճաշից անմիջապես հետո հանձնաժողովի անդամները ստիպված էին հավաքվելու նավախցում՝ դռնփակ խորհրդակցության, ուղեծրային «Պարիտետ» կայանում ստեղծված արտակարգ իրադրության կապակցությամբ։*

*Բայց խորհրդակցությունը չսկսված, հանկարծ ընդհատվեց։ «Պարիտետում» գտնվող Տիեզերագնաց-հսկիչները «Կոնվենցիային»՝ Միաղեկկենտրոնին հղեցին առաջին հաղորդումը, որ ստացել էին պարիտետ-տիեզերագնացներ 1—2 և 2—1-ից՝ հարևան գալակտիկայի Անտառալանջ մոլորակից։*

## IV

Գնացքները այս կողմերում գնում էին արևելքից արևմուտք, արևմուտքից արևելք...

Իսկ երկաթուղու շուրջը, այս կողմերում փռված էին հսկայական ամայի տարածություններ՝ Սարի-Օզեկներ, Դեղին տափաստանի միջնակները:

Այդ կողմերում ուզածդ տարածությունը չափվում էր երկաթուղուց, ինչպես Գրինվիչի միջօրեականից...

Իսկ գնացքները գնում էին արևելքից արևմուտք և արևմուտքից արևելք...

Ինչ խոսք, մինչև Նայմանյան տոհմական Անա-Բեյիթ գերեզմանոցը, Համենայն դեպս, այնքան էլ քիչ չի, երեսուն վերստ է, այն էլ եթե շարունակ աչքաչափով ճամփաղ պահես սարօղեկների ուղղությամբ։

Բորանլի Եդիգեյը այդ օրը վաղ արթնացավ։ Այսինքն մի կարգին չէր էլ քնել։ Միայն լուսաբացին մի քիչ ննջել էր։ Իսկ մինչ այդ զբաղված էր, Հանգուցյալ Ղազանղապի օծման վերջին խորհուրդն էր կատարում։ Սովորաբար դա արվում է թաղման օրը, դիակը տնից դուրս բերելուց առաջ, մեռնողի տանը կարգացվող ընդհանուր աղոթքից՝ ջանազայից առաջ։ Իսկ ինքն ստիպված եղավ դա կատարել գիշերը, թաղման նախօրյակին, որպեսզի սատվոտյան առանց ժամանակ կորցնելու, անմիջապես ճանապարհ ընկնեն։ Ամեն ինչ արեց իր ձեռքով, եթե չհաշվենք, որ Երկար Էդիլբայը դոլ ջուր բերեց լվացման համար։ Էդիլբայը մի քիչ վախենում էր, Հեռու էր մնում Հանգուցյալից։ Ինչ խոսք, ծանր էր նրա համար։

Եդիգեյը, իբր Հենց այնպես ասաց.

— Դու, ուշադիր նայիր, Էդիլբայ։ Կյանքում պետք կգա։ Քանի որ մարդիկ ծնվում են, ուրեմն պետք է նաև թաղվեն։

— Այո, ես Հասկանում եմ,— անվստահ Հարեց Էդիլբայը։

— Ես էլ այդ եմ ասում։ Խոսքի օրինակ, վաղը ես մեռնում եմ։ Ուրեմն, վերջին օծումը կատարող չի՞ լինելու։ Ինձ պիտի գցեք փոսը և վե՞րջ։

— Ինչո՞ւ,— շփոթվեց Էդիլբայը լամպով լուսավորելով և աշխատելով վարժվել Հանգուցյալի ներկայությանը։— Առանց ձեզ այստեղ անհետաքրքիր կլինի։ Ավելի լավ է ապրեք։ Իսկ փոսը կսպասի։

Ժամուկես գնաց օծման վրա։ Բայց Եդիգեյը գոհ մնաց։ Հանգուցյալին լողացրեց ինչպես կարգն է, ձեռ ու ոտը ուղղեց և դասավորեց ինչպես կարգն է, սպիտակ սավանը ձևեց և պատանեց Ղազանղապին ինչպես կարգն է, առանց կտավ խնայելու։ Ընդ որում Էդիլբային ցույց տվեց, թե սավանն ինչպես պետք է ձևել։ Այնուհետև իրեն էլ կարգի բերեց։ Մաքուր սափրվեց, բեղերը Հավասարեցրեց։ Նրա բեղերը, Հոնքերի նման խիտ և թավ էին։ Այ, միայն ճերմակել են, մեջ-մեջ գորշ է։ Եդիգեյը չմոռացավ իր զինվորական մեդալները, Հարվածայինի շքանշաններն ու նշանները, Հանեց փակցրեց պիջակի լամբակին, պատրաստվեց վաղվա օրվա Համար։

Այդպես էլ գիշերն անցավ։ Եվ ինքն իր վրա զարմանում էր՝ Բորանլի Եդիգեյը, թե որքան հեշտ ու հանգիստ կատարեց այդ ամենը։ Եթե առաջ մեկնումեկը ասեր, թե պետք է նաև այդպիսի տխուր գործով զբաղվի, չէր հավատա։ Ուրեմն, իր ճակատին այդպես է գրված. Ղազանղապին թաղելը վիճակված է իրեն։ Ճակատագիր է։

Բանն էլ այդ է։ Ո՞ւմ մտքով նման բան կանցներ, երբ առաջին անգամ նրան հանդիպեց Ղումբել կայարանում։ Քառասունչորսի վերջերին էր, կոնտուզիայի պատճառով Եդիգեյին զորացրել էին բանակից։ Արտաքուստ կարծես ամեն ինչ լավ էր. ձեռ ու ոտը տեղն էին, գլուխը ուսերին, չնայած, այ, գլուխը կարծես իրենը չլիներ։ Ականջները դժժում էին, ասես շարունակ քամի էր սուլում։ Հենց մի քանի քայլ էր անում, օրորվում էր, գլուխը պտտվում էր, սիրտը խառնում։ Քրտինքի մեջ կորչում էր, մեկ սառը քրտինքն էր վրա տալիս, մեկ՝ տաք։ Լեզուն երբեմն ուղղակի չէր ենթարկվում, կարծես խոսելը դժվար աշխատանք լիներ։ Ուժեղ ցնցվել էր գերմանական ռումբի պայթյունի ալիքից։ Սպանվելը չսպանվեց, բայց դե՞ այսպիսի կյանքն ում էր հարկավոր։ Շատ էր հուսահատվել այն ժամանակ Եդիգեյը։ Երիտասարդ էր, արտաքուստ առողջ, բայց որ վերադառնար տուն՝ Արալյան ծով, ի՞նչ էր անելու։ Ի՞նչ կարող էր անել։ Բարեբախտաբար, բժիշկը լավն էր։ Նա նույնիսկ չբուժեց էլ, այլ լավ քննեց, լսեց, ստուգեց, այսօրվա նման հիշում է, հաղթանդամ, շեկ տղամարդ էր, սպիտակ խալաթով, սպիտակ թասակով, պայծառ աչքերով, խոշոր քթով, ուրախ թփթփացրեց ուսը և ծիծաղեց։

— Գիտես ինչ, եղբայրիկ,— ասաց,— պատերազմը շուտով կվերջանա, թե չէ քեզ նորից շարք կուղարկեինք, որ մի քիչ էլ կռվեիր։ Ոչինչ։ Առանց քեզ մի կերպ յոլա կգնանք մինչև հաղթանակ։ Բայց դու կասկած անգամ չունենաս, որ մի տարուց, գուցե և ավելի շուտ, ամեն ինչ կարգին կլինի, ցուլի նման առողջ կլինես։ Այդ ես եմ ասում, հետո կհիշես։ Իսկ հիմա պատրաստվիր, գնա քո երկրամասը։ Եվ դարդ մի անի, քեզ նմանները հարյուր տարի կապրեն...

Հետագայում պարզվեց, որ ճիշտ էր ասում շեկ բժիշկը։ Այդպես էլ եղավ։ Իհարկե, հեշտ է ասել մի տարի։ Իսկ թե ինչպե՞ս դուրս եկավ հոսպիտալից, ճմռթված շինելով, մախաղը շալակին, հենակով՝ համենայն դեպս, մտավ քաղաք, կարծես խոր անտառ էր ընկել։ Գլխում դժժոց էր, ոտքերում դող, աչքերում

խավար։ Եվ ով էր բանի տեղ դնում. կայարաններում, վագոններում ծովի չափ ժողովուրդ, ով ուժեղ է, քեզ տրորում է, ինքն առաջ ընկնում։ Այնուամենայնիվ մի կերպ բարձրացավ, տեղ հասավ։ Մեկ ամսվա թափառումներից հետո, վերջապես գնացքը գիշերը կանգնեց Արալսկ կայարանում։ «Հինգ հարյուր յոթերորդ, ուրախ» էր կոչվում այդ «հուշակավոր» գնացքը, աստված մի արասցե, որ այլևս որևէ մեկը երթևեկի այդպիսի գնացքով...

Բայց այն ժամանակ դրա համար էլ էր ուրախ, մթության մեջ իջավ վագոնից, ինչպես սարից կիջներ, իջավ ու շվարեց, լույսի նշույլ չկար։ Միայն հեռվում առկայծում էին կայարանային լույսերը։ Քամի էր։ Այդ քամին էլ դիմավորեց նրան։ Հարազատ, արալյան քամին։ Ծովի շունչը դիպավ երեսին։ Այն օրերին ծովը դեռ մոտիկ էր, ծփում էր ուղղակի երկաթուղու տակ։ Իսկ հիմա հեռադիտակով էլ չէր երևում...

Սիրտը թունդ էր լինում, տափաստանից գալիս էր օշինդրի անորսալի փտածահոտ, արալյան լայնություններում նորից արթնացող գարնան բույր։ Ահա նորից հարազատ վայրերը։

Եդիգեյը լավ գիտեր կայարանը, կայարանամերձ ավանը ծուռտիկ, փոքրիկ փողոցներով։ Ցեխը կպչում էր սապոգներին։ Նա գնում էր ծանոթների տուն, այնտեղ կգիշերեր, առավոտյան ճամփա կընկներ դեպի իր ծննդական աուլը՝ Ջանգելդի, որը բավական հեռու էր։ Նույնիսկ չնկատեց էլ, թե ինչպես նեղլիկ փողոցը իրեն տարավ հասցրեց արվարձան, ճիշտ ափի մոտ։ Այստեղ Եդիգեյը չդիմացավ, մոտեցավ ծովին։ Կանգ առավ ավազի վրա ծփացող շերտի մոտ։ Խավարի մեջ կորած ծովը զգացվում էր տարտամ լուսաշերտերից և ալիքների կատարներից, որոնք աղմկոտ ծփանքով հայտնվում էին և անմիջապես չքանում։ Լուսինն արդեն դիմավորում էր այգը. ամպի տակից միայնակ սպիտակին էր տալիս բարձրերում։

Ահա, ուրեմն տեսնվեցին։

— Ողջույն, Արալ,— շշնջաց Եդիգեյը։

Հետո նստեց քարին, ծխեց, չնայած բժիշկները, կոնտուզիայի պատճառով, ոչ մի կերպ խորհուրդ չէին տալիս ծխել։ Հետագայում, իհարկե, վերջ տվեց այդ հիմար սովորությանը։ Իսկ այն ժամանակ աչքին ոչինչ չէր գալիս։ Ծխախոտի ծուխն ի՞նչ էր, երբ պարզ չէր, թե առհասարակ ինչպես է ապրելու հետագայում։ Թե ծով դուրս գա, պետք է ուժեղ ձեռքեր ունենա, ուժեղ

մեջք, և ամենագլխավորը՝ ուժեղ գլուխ, որ շալանդայի մեջ գլխապտույտ չունենա։ Նախքան ռազմաճակատ գնալը եղել է արդյունաբերության ձկնորս, իսկ այժմ ո՞վ է։ Հաշմանդամ ասես, հաշմանդամ չի, բայց և ոչ մի բանի պիտանի չի։ Ձկնորսության համար առաջին հերթին հենց գլուխը պիտանի չէր, դա պարզ էր։

Եդիգեյն ուզում էր տեղից վեր կենալ, երբ ծովափին որտեղից որտեղ հայտնվեց մի սպիտակ շուն։ Շունը ջրի եզերքով վազ էր տալիս, երբեմն-երբեմն կանգ առնելով և գործնական հոտոտելով թաց ավազը։ Եդիգեյը կանչեց շանը, սա վստահորեն մոտեցավ և պոչը շարժելով կանգնեց կողքին։ Եդիգեյը շոյեց նրա բրդոտ վիզը։

— Դու որտեղից եկա՞ր, հը՞։ Ո՞ւր ես վազում։ Անունդ ի՞նչ է։ Արստան, Ջոլբա՞րս, Բորիբասա՞ր[1]։ Հա, հասկացա, դու ձուկ ես փնտրում ափին։ Կեցցես- կեցցես։ Բայց թե ծովը հո միշտ սատկած ձուկ չի նետում ոտքերիդ տակ։ Ի՞նչ արած, ստիպված պիտի վազես։ Դրա համար ես այդքան նիհար։ Իսկ ես, բարեկամ, տուն եմ վերադառնում։ Քյոնիքսբերգի մոտակայքից։ Արդեն քիչ էր մնում, որ հասնեի այդ քաղաքին, բայց հետո արկն այնպես պայթեց, հազիվ ողջ մնացի։ Հիմա էլ նստած միտք եմ անում, թե ինչ եմ անելու։ Ի՞նչ ես այդպես վրաս նայում։ Քեզ համար ոչինչ չունեմ։ Միայն շքանշաններ են ու մեդալներ։ Պատերազմ է, բարեկամս, սով է ամեն կողմ։ Թե չէ հո չեմ ափսոսում... Սպասիր, մոտս ահա մոնպասի կա, տղայիս համար եմ տանում, տղաս երևի արդեն ման է գալիս...

Եդիգեյը չալարեց, բացեց կիսադատարկ ուղեպարկը, որի մեջ լրագրի թղթով փաթաթված, մի բուռ մոնպասի կար, մի գլխաշոր, որ ձեռքից էր գնել նախորդ կայարանից, և երկու կտոր օճառ, որ նույնպես գնել էր առևտրականներից։ Ուղեպարկում կար նաև մի ձեռք զինվորական սպիտակեղեն, գոտի, պիլոտկա, փոխնորդ գիմնաստյորկա, տաբատ, ահա ամբողջ բեռը։

Շունը ձեռնափից լիզեց մոնպասը, ատամներով փշրեց, պոչը խաղացրեց և հուսավառ, հավատարիմ աչքերով ուշադիր նայեց նրան։

— Դե հա, հիմա մնաս բարով։

Եդիգեյը վեր կացավ, գնաց ափի երկարությամբ։ Որոշել էր այլևս չանհանգստացնել կայարանի մարդկանց, լուսաբացը մոտ

---

1 Արստան, Ջոլբարս, Բորիբասար — առյուծ, վագր, գելխեղդ։

էր, հարկավոր էր առանց հապաղելու հասնել իրենց տունը՝ Ջանգելդի։

Ջանգելդի հասավ կեսօրին՝ շարունակ գնալով ծովի ափով։ Իսկ կոնտուզիայից առաջ, երկու ժամում անցնում էր այս տարածությունը։ Այստեղ նրան կայծակնահար արեց սոսկալի լուրը. պարզվեց, որ տղան վաղուց արդեն ողջ չի։ Երբ Եդիգեյին զորակոչեցին, երեխան վեց ամսական էր։ Եվ խնդրեմ, ճակատագիր, երեխան մահացել է տասնմեկ ամսական հասակում։ Հիվանդացել է կարմրուկով, չի դիմացել ջերմությանը, այրվել, վառվել է տաքությունից, հանգել։ Այդ մասին չեն հայտնել ռազմաճակատում գտնվող հորը... Ո՞ւր գրես, ի՞նչ գրես։ Առանց այդ էլ ռազմաճակատում քիչ չի դառը հաբը։ Եթե ողջ վերադառնա, կիմանա, կսգա, կտխրի, կանցնի կգնա,— յուրովի դատողություններ էին անում ազգականները և Ուկուբալային չթողեցին, որ այդ մասին հայտնի։ «Ջահել եք, պատերազմը ուր որ է կվերջանա, էլի երեխաներ կունենաք, աստված կտա։ Ծյուղը որ կտրվում է, ցավ չի, կարևոր է, որ ծառի բունն անվնաս մնա»։

Բացի այդ, կային նաև ուրիշ, բարձրաձայն չասվող մտածումներ, բայց բոլորի կողմից հասկանալի. դեհ, պատերազմը պատերազմ է, թե բան պատահի, թե գնդակ դիպչի, գոնե թող վերջին պահին լույս աշխարհին հրաժեշտ տա հույսով, իբր տանը ժառանգ ունի, որ իրենց ցեղը իրենով չի վերջանում...

Իսկ Ուկուբալան ամեն ինչի համար մեղադրում էր միայն ինքն իրեն։ Արցունք թափելով գրկեց վերադարձող ամուսնուն։ Ախր շատ է սպասել այս օրվան՝ հույսով և չթուլացող ցավով, տառապելով տանջալից, մեղավոր սպասումների մեջ։ Արցունքն աչքին պատմեց, որ պառավ կանայք իրեն անմիջապես զգուշացրել էին, թե երեխան կարմրուկ է հանել, թե դա խարդախ հիվանդություն է և հարկավոր է երեխային փաթաթել տաք, ուղտի բրդից կարված վերմակի մեջ, պահել մթության մեջ և շարունակ սառեցրած ջուր խմեցնել, դրանից հետո եթե աստված տա դիմանա տաքությանը, կապրի։ Բայց ինքը ձախորդ բեյբակ[1], չլսեց տան պառավներին։ Հարևանից սայլ խնդրեց, հիվանդ երեխային տարավ կայարան, բժշկուհու մոտ։ Մինչև դխկդխկան սայլով հասավ Արալսկ, արդեն ուշ էր։ Տղան հանգել էր ճանա-

1 Բեյբակ — անբախտ

պարհին։ Բժշկուհին ինչ լուտանք ասես որ չթափեց գլխին։ Ասաց՝ հարկավոր էր լսել պառավներին…

Ահա այսպիսի լուրեր էին սպասում Եդիգեյին տանը, հենց որ ոտքը շեմից ներս գցեց։ Այդ պահից վշտից քարացավ, սևացավ։ Առաջ երբեք մտքով չէր անցնի, թե այդքան խոր կմորմոքվի փոքրիկ երեխայի, իր առաջնեկի համար, որին դեռ մի կարգին չի էլ խնամել։ Եվ դրանից ավելի ցավագին էր գիտակցում կորուստը։ Ոչ մի կերպ չէր կարողանում մոռանալ նրա անատամ, մանկական հավատավոր, պայծառ ժպիտը, որի մասին հիշելիս սիրտը նվում էր։

Դրանից էլ սկսվեց։ Աուլը զզվելի դարձավ Եդիգեյի համար։

Ժամանակին այստեղ. առափնյա կավահող լեռնաշխարհում մի հիսուն տուն կար։ Ձկնարդյունաբերությամբ էին զբաղվում։ Արտել կար։ Դրանով էլ ապրում էին։ Այժմ մի տասը խրճիթ էր մնում զառիթափի տակ։ Ոչ մի տղամարդ չկար, պատերազմը բոլորին կուլ էր տվել։ Միայն ծերեր ու երեխաներ, այն էլ կարելի էր մատների վրա հաշվել։ Նրանցից շատերը ցրվել էին կոլտնտեսային, անասնապահական աուլներ, որ սովից չմեռնեն։ Արտելը քայքայվել էր։ Ծով դուրս եկող չէր մնացել։

Ուկուբալան էլ կարող էր գնալ հարազատների մոտ, նա սերում էր տափաստանային ցեղերից։ Նրա ետևից եկել են հարազատները, ուզել են տանել իրենց մոտ։ Խառնակ ժամանակներ են, կսպասես մինչև Եդիգեյը ռազմաճակատից կգա, քեզ զոռով հո չենք պահի, էլի կվերադառնաս քո ձկնորսական Ջանգելդի ավանը։ Բայց Ուկուբալան կտրականապես հրաժարվել էր. «Պետք է ամուսնուս սպասեմ։ Տղայիս կորցրի։ Եթե ողջ-առողջ վերադառնա, գոնե թող կնոջը տեղում գտնի։ Ես մենակ չեմ այստեղ, ծերեր ու փոքրեր կան, նրանց կօգնեմ, ձեռք-ձեռքի կտանք, կդիմանանք»։

Եվ ճիշտ վարվեց։ Բայց Եդիգեյը առաջին օրերից սկսեց բողոքել, թե չի կարողանում անգործ նստել այստեղ, ծովափին։ Նա իրավացի էր, իհարկե։ Ուկուբալայի ազգականները, որ եկել էին Եդիգեյին տեսնելու, առաջարկեցին տեղափոխվել իրենց մոտ։ Կապրես մեզ մոտ, ասացին, տափաստանում, որտեղ հոտեր ենք պահում։ Մինչև առողջությունդ վերականգնվի, մի որևէ գործով կզբաղվես, կկարողանաս անասուն արածեցնել… Եդիգեյը շնորհակալ եղավ, բայց չհամաձայնեց։ Չէր ուզում բեռ դառնալ։ Մեկ-

երկու օր հյուր լինեն կնոջդ մոտիկ ազգականների տանը, դեռ ոչինչ։ Բացի այդ, աշխատող չես, ո՞ւմ ես պետք։

Եվ այն ժամանակ Ուկուբալայի հետ որոշեցին համարձակ քայլի դիմել։ Որոշեցին շարժվել դեպի երկաթուղի։ Մտածում էին, որ մի հարմար աշխատանք կգտնվի Եղիգեյի համար. պահապան, պահակ կամ որևէ կիսակայարանում ուղեփակոց բացող-փակող։ Ախր, պետք է որ ճակատային-հաշմանդամին ընդառաջեն։

Այդ մտքով էլ գարնանը գնացին։ Երիտասարդ էին, առայժմ ոտքը կապող չկար։ Սկզբնական շրջանում գիշերում էին տարբեր կայարաններում։ Բայց այդպես էլ չհաջողվեց հարմար աշխատանք գտնել։ Իսկ բնակարանի հարցը ավելի դժվար էր։ Ապրում էին պատահական տեղերում, մի կերպ յոլա էին գնում երկաթուղում զանազան պատահական աշխատանք անելով։ Ուկուբալան այն ժամանակ փրկում էր դրությունը. առողջ էր, երիտասարդ և հիմնականում նա էր աշխատում։ Եղիգեյը, որպես տղամարդ, արտաքուստ կարծես առողջ, վարձվում էր բեռնաթափման և բեռնման տարբեր աշխատանքների համար, իսկ Ուկուբալան գործն էր անում։

Այդպես, օրերից մի օր, արդեն գարնան կեսին, նրանք հայտնվեցին Կումբել մեծ հանգուցակայարանում։ Աղուխ էին բեռնաթափում։ Աղուխով բեռնված վագոնները պահեստի գծերով մոտեցվում էին ուղղակի դեպոյի տնտեսության ետնաբակերը, այստեղ քարածուխը սկզբում թափում էին գետնին, որպեսզի որքան հնարավոր է շուտ ազատեն կառամատույցները, ապա ձեռնասայլակով դուրս էին տանում լցնում հսկայական, տան մեծության շորսուների մեջ։ Մի ամբողջ տարվա պաշար։ Աշխատանքը չափից դուրս ծանր էր, փոշոտ ու կեղտոտ։ Բայց ապրել էր պետք։ Եղիգեյը աղուխը բահով գցում էր ձեռնասայլակի մեջ, Ուկուբալան ձեռնասայլակը տախտակամածով քշում էր դեպի վեր, այնտեղ շուռ էր տալիս սայլակը և նորից իջնում էր ցած։ Նորից Եղիգեյը սայլակը աղուխ էր լցնում և նորից Ուկուբալան բեռնաձիու նման ամբողջ ուժով գլորում, դուրս էր տանում ծանր, կնոջ ուժերից վեր բեռը։ Ի լրումն ամենի, օրը գնալով ավելի ու ավելի էր տաքանում, շոգ էր լինում, և այդ շոգից ու քարածխի թուխող փոշուց Եղիգեյի սիրտը խառնում էր։ Զգում էր ինչպես է պակասում ուժը։ Ուզում էր փռվել գետնին, ուղղակի քարածուխի կույտի վրա և այլևս երբեք վեր չկենալ։

Բայց ամենից ավելի նրան սպանում էր այն հանգամանքը, որ կինը, խեղդվելով սև փոշուց, ստիպված է իր փոխարեն կատարելու այն, ինչ վերապահված էր իրեն։

Սիրտը մղկտում էր կնոջը նայելիս։ Ոտքից գլուխ ծածկված էր սև ածխափոշով, փայլում էին միայն աչքերի սպիտակուցներն ու ատամները։ Ոտից գլուխ կորած էր քրտինքի մեջ։ Եվ ածխախառն քրտինքը կեղտոտ հետքեր թողնելով, հոսում էր պարանոցին, կրծքին, մեջքին։ Թե առաջվա ուժն ունենար, մի՞թե այս բանը թույլ կտար։ Մեն-մենակ կտեղափոխեր այս անիծյալ քարածխի տասնյակ վագոն, միայն թե չտեսներ կնոջ չարչարանքները։

Երբ հեռանում էին իրենց ձկնորսական տնակից՝ Ջանգելդիից, հույս ունենալով, թե Եղիգեյը, իբրև վիրավորված ճակատային, կգտնի որևէ համապատասխան աշխատանք, մի բան հաշվի չէին առել, որ ամեն տեղ և ամենուրեք լեփ-լեցուն էին այդպիսի ճակատայինները։ Եվ նրանք պետք է նորից հարմարվեին կյանքին։ Դեռ լավ էր, որ Եղիգեյը վերադարձել էր ձեռ ու ոտով։ Իսկ այն ժամանակ քանի-քանի անձեռ, անոտ հաշմանդամներ էին հենակներով ու պրոթեզներով թափառում երկաթուղիներում։ Երկար գիշերներին, երբ տեղավորվում էին կայարանի գարշահոտ, լեփ-լեցուն շենքի որևէ անկյունում, մինչև գիշերն անցնի, Ուկուբալան թողությյուն հայցելով, աստծուն էր հղում իր լռելյայն երախտագիտությունը, որ ամուսինը կողքին է, որ պատերազմը նրան այնպես սարսափելի ու անտանելի չի խեղել։ Որովհետև կայարաններում տեսածը սոսկումով ու տանջանքով էր լցնում նրա սիրտը։ Անձեռ, անոտ, ջարդուխուրդ եղած մարդիկ՝ քրքրված շինելներով, հազար ու մի ցնցոտիներով, անվավոր սայլակներով, անթացուպերով, ուղեկցողներով, անտուն-անտեր, գնացքից գնացք, կայարանից կայարան էին քշում, խուժելով ճաշարաններն ու բուֆետները, մարդու սիրտը կեղեքելով հարբած բղավոցով ու լացով... Ի՞նչ էր սպասում նրանցից յուրաքանչյուրին, ինչո՞վ հատուցես անհատուցելին։ Եվ միայն նրա համար, որ ամուսինը վերադարձել է չխեղված, թեկուզ կոնտուզիայով, Ուկուբալան պատրաստ էր կատարելու աշխարհի ամենածանր աշխատանքը։ Եվ ձայն-ծպտուն չէր հանում, չէր հուսահատվում, ցույց չէր տալիս, եթե անգամ ուժը չէր պատում քարշ տալու ոտքերը, երբ թվում էր, այլևս լցվել է համբերության բաժակը։

*Բայց Եդիգեյի վիճակը դրանից չէր թեթևանում։ Հարկավոր էր մի բան ձեռնարկել և ավելի ամուր հենվել կյանքին։ Հո դաբերով չի՞ թափառելու։ Եվ հաճախ էր գլուխը մի միտք գալիս. իսկ ի՞նչ, եթե ձեռքը թափ տա, ասի «Թաուբակել»[1] և շարժվի դեպի քաղաք, գուցե բախտը բերում է։ Միայն թե առողջությունը ետ գար, միայն թե ազատվեր այս անիծյալ կոնտուզիայից։ Այն ժամանակ էլի հնարավոր կլիներ, հաղթահարել, ոտքի կանգնել... Իհարկե, քաղաքում կարող էր ամեն ինչ ուրիշ ձևով շուռ գալ, հնարավոր է հարմարվեին և շատ ուրիշների նման կամաց-կամաց դառնային քաղաքացիներ, բայց ճակատագրին հաճո էր այլ կերպ տնօրինել։ Այո, ճակատագիրը վճռեց, էլ ուրիշ ինչպե՞ս անվանես այն դեպքը...*

*Այն օրերին, երբ անտուն-անտեր թափառում էին Գումբել կայարանում, վարձվելով իբրև քարածխի վագոն բեռնաթափող բանվոր, մի անգամ դեպոյի քարածխային ետնաբակում հայտնըվեց ուղտին հեծած մի ղազախ, որը, ըստ երևույթին, գործով եկել էր տափաստանից։ Գոնե այդպես էր թվում։ Եկվորը ուղտի ոտքերին կապ դրեց, որ ուղտը մոտակա պարապուրտներում արածի, ինքը մտազբաղ շուրջը նայելով, գնաց՝ դատարկ պարկը թևի տակ։*

*— Հե՛յ, եղբա՛յր,— դիմեց Եդիգեյին, մոտովն անցնելիս,— բարի եղիր, աչքդ վրան պահիր, երեխաները չարություն չանեն։ Վատ սովորություն ունեն, ջղայնացնում, խփում են անասունին։ Նույնիսկ կապն են քանդում, զվարճության համար։ Ես շուտ կգամ։*

*— Գնա, գնա, կնայեմ,— խոստացավ Եդիգեյը ձեռքն առնելով բահը և դեմքը սրբելով սև, քրտնքից ծանրացած քուրջերով։*

*Երեսից անընդհատ քրտինք էր հոսում։ Եդիգեյն առանց այդ էլ քարածխի կույտից չէր հեռանում, բեռնելով ձեռնասայլակը, ի՞նչ մի դժվար բան էր, աչքի տակով նայել, որ կայարանի խուժանները ուղտին չչարչարեն։ Մի անգամ տեսել էր արդեն դրանց արարմունքը։ Անասունին այնքան էին զայրացրել, որ սա ի պատասխան սկսել էր կատաղի մռնչալ, թքել, ընկնել ետևներից։ Իսկ նրանք դրանից հաճույք էին ստանում և նախնադարյան որսորդների նման վայրի ճիչերով շրջապատելով անասունին, քա-*

[1] Թաուբակել — *ինչ լինում է լինի։*

րով ու փայտով խփում էին։ Խեղճ ուղտին այնքան չարչարեցին, մինչև որ վերջապես հայտնվեց տերը...

Այս անգամ էլ, կարծես դիտմամբ, որտեղից որտեղ ֆուտբոլի գնդակի ետևից հայտնվեց քրջոտ երեխաների աղմկոտ հրոսակախումբը։ Եվ նրանք սկսեցին գնդակն ամբողջ ուժով ուղարկել ոտքերը կապված ուղտի վրա։ Ուղտը գլուխը ետ էր տանում, նրանք գնդակով հարվածում էին կողերին, մրցում էին, ով ավելի ուժեղ և ով ավելի ճարպիկ կհասցնի։ Եվ ով կարողանում էր խփել, հրճվում էր, ասես գոլ էր խփել...

— Հե՜յ, կորեք այստեղից, անասունին հանգիստ թողեք տեսնեմ,— բահը թափահարեց Եղիգեյը,— թե չէ հիմա ձեզ ցույց կտամ...

Տղաները ետ քաշվեցին, կարծեցին տերն է կամ էլ, երևի, շատ ահաբեկիչ տեսք ուներ քարածուխ բեռնաթափողը, և դեռ կարող էր հարբած լինել, այդ դեպքում կորած էին, և փախան, գնդակը հետները գլորելով։ Ինչ իմանային, որ կարող էին սիրտները ուզածի չափ անպատիժ տանջել, չարչարել ուղտին, որ Եղիգեյը ձեռականորեն է նրանց բահով սպառնում, որ իրականում, այն ժամանակվա վիճակով, նա չէր էլ կարող տղաների ետևից ընկնել։ Ձեռնասայլակը նետվող ամեն մի բահ քարածուխը նրանից հսկայական ջանք էր պահանջում։ Երբեք մտքով չէր անցել, թե այսքան զզվելի, այսքան նվաստացուցիչ է անուժ, հիվանդ ու տկար լինելը։ Գլուխը շարունակ պտտվում էր։ Քրտինքը ծորում էր ճակատից։ Հյուծվում, քայքայվում էր Եղիգեյը, ածուխի փոշուց շնչահեղձ էր լինում, կուրծքը ճնշում էր սև, կոշտ թացությունը։ Ուկուբալան ձգտում էր գործի շատ բաժինը վերցնել իր վրա, որպեսզի ամուսինը մի քիչ հանգստանա, մի քիչ հեռու նստի, իսկ ինքը բռնում էր սայլակը, հրում վեր, դեպի բուրտ։ Բայց Եղիգեյը չէր կարողանում հանգիստ խղճով նայել կնոջ չարչարանքին, վեր էր կենում, օրորվելով նորից գործի էր լծվում...

Այն մարդը, որ խնդրել էր ուղտի վրա աչք պահել, շուտով վերադարձավ՝ լիքը պարկը մեջքին։ Բեռը բարձեց և պատրաստվելով ճամփա ընկնել, մոտեցավ Եղիգեյին, մի քանի խոսք փոխանակելու։ Անմիջապես լեզու գտան։ Դա հենց Ղազանղապն էր Բորանլի կայարանից...

Պարզվեց, որ համերկրացիներ են։ Ղազանղապը պատմեց, որ

ինքն էլ է արևելյան տափնյա տուլներից։ Այդ հանդամանքն անմիջապես մտերմացրեց նրանց...

Այն ժամանակ ո՞վ մտքով կանցներ, թե այդ հանդիպումը կնախորոշի Եղիգեյի և Ուկուբալայի հետագա ամբողջ կյանքը։ Ղազանղապը պարզապես նրանց համոզեց իր հետ ճամփա ընկնել դեպի Բորանլի կիսակայարան, ապրել ու աշխատել այնտեղ։ Կան մարդիկ, որոնք առաջին իսկ ծանոթությունից վստահություն են ներշնչում։ Ղազանղապի մեջ առանձնահատուկ ոչինչ չկար, ընդհակառակը, նա այնքան պարզ էր, որ նրա մեջ երևում էր մարդը, որի իմաստությունը ձեռք է բերվել կյանքի ծանր փորձով։ Արտաքուստ սովորական ղազախ էր՝ մաշված, գունաթափված հագուստով, որ ընդունել էր նրան հարմար ձև։ Այծենակաշվի տաբատն էլ հարմար էր ուղտ հեծնելու համար։ Բայց նա գիտեր նաև արժեքավորել իրերը, համեմատաբար նոր, տեղ գնալու համար խնամքով պահված երկաթուղայինի գլխարկը զարդարում էր խոշոր գլուխը, խրոմե սապոգները, որ հագել էր երկար տարիներ, խնամքով կարկատված էին և շատ տեղերում մոմաթելով ամրացված։ Որ նա բնիկ տափաստանցի էր, իսկական աշխատավոր, կարելի էր հասկանալ բարկ արևից և մշտական քամուց կոշտացած գարշնագույն դեմքից և չոր, ջղուտ ձեռքերից։ Ժամանակից շուտ, շատ աշխատելուց կորացած ուսերը հզոր կախվել էին և դրանից վիզը թվում էր երկար, սագի վզի նման ձգված, թեև ինքը միջահասակ էր։ Զարմանալի աչքեր ուներ. խաժ, ամեն ինչ հասկացող, ուշադիր, ժպտուն, կկոցելուց առաջացած կնճիռների ցրվող ճառագայթներով։

Այն ժամանակ Ղազանղապն արդեն քառասունին մոտ կլիներ։ Թեև միանգամայն հնարավոր է, որ այդպես էր թվում, որովհետև խոզանակի նման կարճ կտրված բեղերը և ոչ մեծ, թուխ մորուքը նրան տալիս էին կյանքի հասունության գծեր։ Բայց ամենից շատ նա վստահություն էր ներշնչում խոսքի տրամաբանությամբ։ Ուկուբալան անմիջապես հարգանքով համակվեց այդ մարդու նկատմամբ։ Եվ ինչ էլ ասում էր, ասում էր տեղին։ Եվ խելացի բաներ էր ասում։ Քանի որ, ասում է, այդպիսի դժբախտություն է եղել, կոնտուզիան դեռ մարմնիդ մեջ է, ի՞նչ կարիք կա փչացնել առողջությունդ։ Եդիգեյ,— ասում է,— ես անմիջապես նկատեցի, որ մեծ դժվարությամբ ես կատարում այս աշխատանքը։ Դեռ չես պնդացել նման գործերի համար։ Ոտքերդ հազիվ ես քարշ տալիս։ Հիմա քեզ հարկավոր է հեշտ տեղ գտնել, մաքուր օդում

լինել, անարատ կամ շատ խմել։ Այ, օրինակի համար, ասենք, մեր կիսակայարանում մարդկանց խիստ կարիք կա ուղեգծային աշխատանքների համար։ Կիսակայարանի նոր պետը ամեն անգամ խոսք է բացում. դու, ասում է, իբրև այստեղի հնաբնակ, համապատասխան մարդիկ գտիր մեզ համար։ Իսկ ո՞ւր են, նման մարդիկ։ Բոլորը պատերազմում են։ Իսկ ով կովել եկել է, նրա համար ուրիշ տեղ էլ աշխատանք կա։ Իհարկե, մեզ մոտ կյանքը դրախտ չի։ Դժվար տեղ ենք ապրում. ամեն կողմ սարօզեկներ են, մարդու պակասություն, ջրի պակասություն։ Ջուրը բերում են ցիստեռնով, շաբաթը մեկ։ Եվ դեռ երբեմն ընդհատումներով են ջուրը բերում։ Այդպես էլ է պատահում։ Այդ դեպքում ստիպված գնում հասնում ես տափաստանի հեռավոր ջրհորերը, տիկերով ջուր ես բերում։ Առավոտյան գնում ես, երեկոյան հազիվ վերադառնում։ Համենայն դեպս, ասում էր Ղազանղապը, ավելի լավ է սարօզեկներում լինել, ունենալ սեփական տեղ, քան այսպես թափառել վայրից վայր։ Գլխից վերև ծածկ կլինի, մշտական աշխատանք կլինի, ցույց կտանք, կսովորեցնենք, թե ինչ պետք է անեք, կարող եք տուն ու տեղ դնել, նայած ինչպես կկպչեք գործին։ Երկուսով, ասում է ,որ աշխատեք, կարող եք լավ ապրուստ ունենալ։ Հետո առողջությունը ետ կգա, կապրեք-կտեսնեք, չեք հավանի, կթողնեք կգնաք ավելի լավ տեղ...

Այ, այսպիսի բաներ ասաց այն ժամանակ։ Եդիգեյը մտածեց, մտածեց, համաձայնեց։ Եվ նույն օրն էլ, Ղազանղապի հետ ճամփա ընկան դեպի սարօզեկներ, դեպի Բորանլի կիսակայարանը, մանավանդ, նույնիսկ այն ժամանակվա չափով, հավաքելու բան չունեին։ Վերցրին իրենց փալաս փուլուսը, ճամփա ընկան։ Կորցնելու ի՞նչ ունեին. որոշեցին այդ մի երջանկությունն էլ փորձել։ Հետագայում պարզվեց, որ դա իրենց բախտն էր։

Ամբողջ կյանքում Եդիգեյը չմոռացավ այդ ճանապարհը սարօզեկներով՝ Կումբելից մինչև Բորանլի։ Սկզբում շարժվեցին երկաթուղու երկարությամբ, հետո աստիճանաբար, զառիվայրերով թեքվեցին, հեռացան։ Ղազանղապը բացատրեց, որ իրենք թեքությամբ կտրել են տասը կիլոմետր, որովհետև երկաթուղին այստեղ մեծ աղեղով շրջանցում էր մեծ թակրի՝ երբեմնի աղի լճի ցամաքած հատակը։ Մինչև օրս թակրի ընդերքից աղ ու ճահճային տիղմ էր դուրս գալիս։ Ամեն գարնան այդ աղի հարթավայրը զարթնում էր ճահճանում, փափկում, դառնում դժվարանցանելի, իսկ ամռանը ծածկվում էր աղի սպիտակ, կոշտ շերտով և քարի

պես կարծրանում էր մինչև հաջորդ գարուն։ Այն մասին, թե ինչպես է ժամանակին այստեղ աղի լիճ եղել, Ղազանղապը գիտեր սարօզեկների երկրաբան Ելիզարովի պատմածներից, որի հետ Բորանլի Եդիգեյը հետագայում շատ մտերմացավ։ Խելացի մարդ էր։

Իսկ Եդիգեյն այն ժամանակ դեռ Բորանլի Եդիգեյ չէր, այլ պարզապես պատահաբար տեղացի ուղեգծային բանվորին հանդիպած արալցի ղազախ, վիրավոր ռազմաճակատային, չդասավորված կյանքի տեր մարդ, որը, վստահելով Ղազանղապին, կնոջ հետ գնում էր անհայտ-անծանոթ Բորանլի կիսակայարանը՝ որոնելու աշխատանք և ապաստան, չենթադրելով, որ ամբողջ կյանքում մնալու է այնտեղ։

Սարօզեկների վիթխարի, անեզր տարածությունները, որ գարնանը զարդարվում են վաղանցիկ կանաչով, զցմեցրին Եդիգեյին։ Արալյան ծովի շուրջը նույնպես շատ տափաստան ու հարթավայր կա, հենց թեկուզ Ուստ-Ուրտյան հարթավայրը, բայց այսպիսի ամայի տարածություններ առաջին անգամ էր տեսնում։ Ինչպես հետո հասկացավ Եդիգեյը, միայն նա կարող է դեմ հանդիման կանգնած մնալ լուռ սարօզեկների առջև, ով ունակ է անապատի վսեմությունը չափակցել սեփական հոգու հետ։ Այո, սարօզեկները վիթխարի են, բայց մարդու կենդանի միտքը կընդգրկի նաև այդ։ Իմաստուն էր Ելիզարովը, կարողանում էր բացատրել այն, ինչ ծածուկ հասունանում էր մարդու տարտամ ենթադրությունների մեջ։

Ի՞նչ իմանաս, ինչպե՞ս կզգային իրենց Եդիգեյն ու Ուկուբալան սարօզեկներում խորանալիս, եթե չլիներ Ղազանղապը, որ ուղտի սանձից բռնած, ինքնավստահ քայլում էր առջևից։ Իսկ Եդիգեյը գնում էր ուղտով, զանազան բեռների հետ։ Իհարկե, պետք է որ Ուկուբալան նստեր ուղտին, ոչ թե նա։ Բայց Ղազանղապը և, մանավանդ, Ուկուբալան, խնդրեցին, համարյա ստիպեցին Եդիգեյին բարձրանալ ուղտի վրա. «Մենք առողջ ենք, իսկ դու պետք է առայժմ ուժերդ խնայես, մի վիճիր, ժամանակ չկորցնենք։ Ճանապարհը երկար է...»։ Ուղտը դեռ մատղաշ էր, դեռ թույլ էր ծանր բեռների համար, դրա համար էլ երկուսը գնում էին ոտքով, երրորդը՝ ուղտով։ Այ, Եդիգեյի հիմիկվա Կարանարը լիներ, կարող էին երեքն էլ հանգիստ նստել և շատ ավելի արագ, երեք ու կես, չորս ժամվա ընթացքում տեղ հասնել։ Իսկ իրենք Բորանլի հասան ուշ գիշերով։

Թեև, իհարկե, ճանապարհն աննկատ անցավ. խոսում էին, դիտում իրենց համար անծանոթ վայրերը։ Ղազանղապը պատմում էր այստեղի նիստուկացից, պատմում էր, թե ինքն ինչպես է ընկել այս կողմերը, սարօզեկներ, երկաթուղի։ Պարզվեց, որ տարիքն էլ այնքան շատ չէր, երեսունվեցի մեջ էր այն տարի, պատերազմը վերջանալուց հետո։ Նա մերձարալյան ղազախներից էր։ Նրա աուլը՝ Բեշաղաչը, ծովափով երեսուն կիլոմետր էր հեռու Ջանգելդիից։ Եվ չնայած Ղազանղապը վաղուց էր հեռացել այնտեղից, այդ ժամանակվանից շատ տարիներ էին անցել, նա ոչ մի անգամ չէր գնացել Բեշաղաչ։ Դրա համար պատճառ ուներ։ Պարզվեց, որ հորը կուլակաթափ են արել, աքսորել, և շուտով նա մեռել է աքսորից վերադառնալու ճանապարհին, երբ պարզվել է, որ նա կուլակ չի, պարզապես թեքման տակ է ընկել և որ զուր են, ավելի ճիշտ, սխալմամբ են նրա նման միջակտնատիրոջ հետ այդքան խիստ վարվել։ Սխալն ուղղեցին, բայց արդեն ուշ էր։ Ընտանիքը՝ եղբայրները, քույրերը, այդ ընթացքում ցրվեցին ամեն մեկը մի կողմի վրա, որքան կարելի էր աչքից հեռու։ Եվ այն օրից կարծես ջրի տակ անցած լինեն։ Ղազանղապն այն ժամանակ ջահել տղա էր, նրան ամեն կերպ ստիպում էին ժողովներում հանդես գալ հորը մեղադրելով, ստիպում էին, որ բոլորի առջև ասի, թե ջերմորեն պաշտպանում է գիծը, թե ճիշտ են վարվել, հորը դատապարտելով իբրև խորթ տարրի, որ նա հրաժարվում է այդպիսի հորից և որ իր հոր նման դասակարգային թշնամին տեղ չունի երկրում, և պիտի ամենուրեք նրանց հակահարված տալ։

Ղազանղապն ստիպված է եղել քաշվելու շատ հեռու կողմեր, որպեսզի խուսափի այդ խայտառակությունից։ Ամբողջ վեց տարի աշխատել է Բեթպակ-Դալեում։ Սամարղանդի մերձակայքի Քաղցի տափաստանում։ Դարեր շարունակ անաղարտ մնացած այդ հողը այն ժամանակ սկսել էին յուրացնել-դարձնել բամբակի դաշտեր։ Մարդիկ շատ էին պետք։

Աշխատում էին քարայրներում, ջրանցքներ էին փորում։ Հող փորող եղել է, տրակտորիստ եղել է, բրիգադավար եղել է, պատվոգիր ստացել է՝ հարվածային աշխատանքի համար։ Այնտեղ էլ ամուսնացել է։ Այն ժամանակ բոլոր կողմերից մարդիկ Քաղցի տափաստան էին ձգվում՝ փող աշխատելու։ Խիվայի մերձակայքից ժամանեց կարակալպակուհի Բուկեյը՝ եղբոր ընտանիքի հետ, Բեթպակ-Դալեում աշխատելու։ Կարծես նրանց համար

հանդիպում էր որոշված։ Բեծպակ-Դալեում ամուսնացան և որոշեցին վերադառնալ Ղազանղապի ծննդավայրը, Արալյան ծով, յուրայինների մոտ, իրենց հողը։ Բայց թե խոր չէին մտածել։ Գնացին երկար, «Մաքսիմներ»[1] փոխելով, իսկ երբ մի անգամ էլ փոխեցին գնացքը, Ղումբելում Ղազանղապը պատահաբար հանդիպեց արալյան համերկրացիներին և խոսակցությունից հասկացավ, որ դեռ իմաստ չունի վերադառնալ Բեշագաչ։ Պարզվում է, որ այնտեղ գործերը վարում են միևնույն թեքողները։ Քանի դեռ բանն այդպես է, Ղազանղապը փոշմանում է, սուլ չի վերադառնում։ Ոչ թե զգուշանում է ինչ-որ բանից, ոչ, նա այժմ պատվոգիր ուներ հենց Ուզբեկստանից։ Պարզապես չի ուզում տեսնել այն մարդկանց, որոնք չարաչար ծաղրուծանակի են ենթարկել իրեն։ Առայժմ ամեն ինչ նրանց ձեռքին էր, ինքն ինչպես կարող էր հանգիստ բարևել նրանց, ձևացնել, թե ոչինչ տեղի չի ունեցել։

Ղազանղապը չէր սիրում հիշել այդ մասին և չէր հասկանում, որ իրենից բացի, բոլորն արդեն մոռացել են այդ ամենը։ Սարօզեկներ գալուց հետո, երկար- երկար տարիների ընթացքում, սոսկ երկու անգամ է զգացնել տվել, որ նրա համար մոռացում չկա։

Մի անգամ որդին սաստիկ վրդովեցրեց նրան, մի ուրիշ անգամ Եդիգեյն անհաջող կատակեց։

Սաբիթջանի հերթական այցելություններից մեկի ժամանակ բոլորը հավաքվել, թեյ էին խմում, զրույց էին անում, քաղաքային նորություններ լսում։ Սաբիթջանը այլևայլ բաների արանքում ծիծաղելով պատմում էր, թե այն կիրգիզներն ու ղազախները, որոնք կոլեկտիվացման տարիներին հեռացել էին Սինցզյան, այժմ վերադառնում են։ Չինաստանը նրանց լավ սեղմել է իր կոմունաներով, մարդկանց արգելել է տանը սնվել. բոլորը, մեծ թե փոքր, օգտվելիս են եղել ընդհանուր բաքից, օրը երեք անգամ ամանները ձեռքներին հերթ են կանգնել։ Չինացիները նրանց գլխին այնպիսի խաղ են խաղացել, որ խեղճերը գլխապատառ փախչում են այնտեղից, ունեցած-չունեցածը քամուն տալով։ Դեռ չինացիների ոտքերն են ընկնում, աղաչում են, որ բաց թողնեն իրենց։

---

1 «Մախսիմներ» — այդպես էին կոչվում մարդատար էշելոնները։

— Ինչ մի լավ բան կա դրանում,— մթնեց Ղազանղապը, և բարկությունից շրթունքները դողացին։ Այդպիսի բան նրան հազարից մեկ էր պատահում, եթե չասենք, որ համարյա երբեք այդ տոնով չէր խոսում որդու հետ, որին շահել-պահել էր, ուսման տվել, ոչինչ չէր խնայել, հավատալով, թե մեծ մարդ է դառնալու։— Ինչո՞ւ ես ծիծաղում դրա վրա,— ավելացրեց խուլ ձայնով, գնալով ավելի բորբոքվելով գլուխը ներխուժած արյունից։— Ախր դա մարդկային դժբախտություն է։

— Իսկ ինչպե՞ս պատմեմ, այ քեզ բան,— պատասխանեց Սաբիթջանը,— ինչպես կա, այնպես էլ ասում եմ։

Հայրը ոչինչ չպատասխանեց, միայն իրենից հեռացրեց թեյով լի թասը։ Նրա լռությունն անտանելի էր դառնում։

— Եվ առհասարակ, ումի՞ց ես նեղանում,— զարմացած ուսերը վեր բարձրացրեց Սաբիթջանը։— Չեմ հասկանում, էլի եմ կրկնում, ումի՞ց ես նեղանում։ Ժամանակի՞ց — դա անշոշափելի է։ Իշխանությունի՞ց — իրավունք չունես։

— Գիտես ինչ, Սաբիթջան, ես խոսում եմ միայն այն բաներից, ինչից խելքս հասնում է, մնացածի մեջ չեմ խառնվում։ Բայց հիշիր, որդի, ես կարծում էի՝ քո խելքը քեզ բավարարում է, լսիր ուրեմն, չի կարելի նեղանալ միայն ատծուց. եթե մահ է ուղարկում, նշանակում է կյանքդ հասել է իր սահմանին, մի օր կյանք է տվել, մի օր էլ պիտի առնի, իսկ մնացյալ ամեն բանի համար աշխարհում կա և պետք է լինի պատասխանատվություն։ — Ղազանղապը վեր կացավ տեղից և, առանց որևէ մեկին նայելու, լուռ ու բարկացած դուրս ելավ տնից ու գնաց...

Մի անգամ էլ, շատ տարիներ անց, ինչ Կումբելից եկել — բնավորվել էին Բորանլիում, երբ արդեն երեխաներ էին ծնվել ու մեծացել, իրիկնադեմին, անասունը գոմ քշելիս, գարնանն էր, Եդիգեյը նայելով բազմապատկված ոչխարի ու գառների հոտին, կատակեց.

— Հարստացել ենք ես ու դու, Ղազակե, ժամանակն է մեզ նորից կուլակաթափ անելու։

Ղազանղապը նրան հառեց ծակող հայացքը, նույնիսկ բեղերը սրվեցին.

— Խոսիր, բայց չափդ ճանաչիր։

— Ի՞նչ է, կատակ չե՞ս ընդունում, Ղազակե։

— Այդպիսի կատակ չեն անի։

— Լավ, մոռացիր, Ղազակե, հարյուր տարի է անցել...

— Բանն էլ այդ է։ Ինչքան ուզում են թող ունեցածդ խլեն ձեռքիցդ, մեկ է, չես կորչի, մի կերպ կապրես։ Բայց հոգիդ կմնա տրորված, ինչ էլ անես, այլևս չի հարթվի...

Բայց այն օրը, երբ Ղումբելից դուրս էին եկել և սարօզեկներով գնում էին Բորանլի, այդպիսի խոսքուզրույցից դեռ շատ էին հեռու... Այն ժամանակ դեռ ոչ մեկը չգիտեր, թե ինչով կվերջանա իրենց մուտքը Բորանլի կիսակայարան, ինչքան կդիմանան այնտեղ, կմնան կապրե՞ն, թե կթողնեն կգնան ուրիշ տեղ։ Այդ օրը պարզապես խոսում էին դեսից-դենից, և խոսքի մեջ Եդիգեյը հետաքրքրվեց, թե ինչպես է եղել, որ Ղազանղապը ռազմաճակատ չի ընկել, թե՞ որևէ հիվանդություն է ունեցել։

— Չէ, փառք աստծո, առողջ եմ,— պատասխանեց Ղազանղապը,— ոչ մի հիվանդություն չեմ ունեցել, և իմ կարծիքով ուրիշներից վատ չէի կռվի։ Բայց կյանքն ուրիշ կերպ դասավորվեց...

Քանի որ Ղազանղապը չէր կարողացել վերադառնալ Բեշագաչ, այդպես էլ մնացին Ղումբել կայարանում, այսինքն գնալու տեղ էլ չկար։ Նորից վերադառնային Քաղցի տափաստա՞ն՝ շատ էր հեռու, և ի՞նչ իմաստ ուներ այն ժամանակ շարժվել տեղից։ Արալ գնալ այլևս չէին ուզում, փոշմանել էին։ Իսկ կայարանապետը բարի է եղել, անմիջապես նկատել է, որ նրանք սրտաբաց մարդիկ են, հարցուփորձ է արել, թե որտեղացի՞ են, ի՞նչ գործ են ուզում անել, Ղազանղապին ու Բուկեյին նստեցրել է ապրանքատար գնացք, ուղարկել Բորանլի կիսակայարան։ Այնտեղ, ասել է, մարդիկ են հարկավոր, դուք էլ հարմար զույգ եք։ Գրություն է գրել կիսակայարանի պետին։ Եվ չի սխալվել։ Որքան էլ կյանքը ծանր էր թվում նույնիսկ Քաղցի տափաստանի համեմատությամբ, համենայն դեպս, այստեղ շատ ժողովուրդ կար, աշխատանքը եռում էր, որքան էլ սարսափելի լիներ անջուր սարօզեկներում, քիչ-քիչ վարժվել են, համակերպվել, ապրել։ Լավ-վատ, բայց իրենց գլխի տերն են եղել։ Երկուսն էլ գրանցվել են, որպես կայարանամիջի ուղեբանվորներ, չնայած ստիպված են եղել կատարելու ամեն ինչ, ինչ-որ պահանջվել է կիսակայարանում։ Ահա, փաստորեն այդպես է սկսվել նրանց համատեղ կյանքը։ Ղազանղապի և նրա ջահել կնոջ՝ Բուկեյի կյանքը սարօզեկյան անմարդ կիսակայարանում։ Ճիշտ է, այն տարիներին, մի քիչ

փող ետ գցելով, ցանկացել են տեղափոխվել ուրիշ վայր՝ կայա-
րանին կամ քաղաքին մոտիկ, բայց մինչ այս, մինչ այն, պատե-
րազմն սկսվել է։

Բորանլի կիսակայարանից արևմուտք էին մեկնում զինվոր-
ներով լի էշելոններ, արևելք էին մեկնում էվակուացվածներով,
արևմուտք՝ հացով, արևելք՝ վիրավորներով։ Նույնիսկ Բորանլիի
նման խուլ կիսակայարանում անմիջապես զգալի էր դարձել, թե
որքան կտրուկ է փոխվել կյանքը իրենց շուրջը…

Մեկը մյուսի ետևից ոռնում էին շոգեքարշերը, պահանջելով
բացել սեմաֆորները, նույնքան սուլոցներ էլ դիմացից էին. փայ-
տակոճերը չէին դիմանում ծանրությանը, ռելսերը ծռմռվում էին,
ժամանակից շուտ մաշվում, ձևափոխվելով լեփ-լեցուն վագոն-
ների ծանրությունից։ Դեռ ճանապարհի մի մասը չնորոգած,
պահանջվում էր մեկ ուրիշ մասի վերանորոգում…

Եվ ոչ տուն կար, ոչ տակ, որտեղի՞ց էր հավաքվում մարդ-
կային անհամար զորքը, էշելոն էշելոնի ետևից օր ու գիշեր, շա-
բաթներով, ամիսներով, հետագայում նաև տարիներով ու տա-
րիներով ռազմաճակատ էին ձգվում գնացքները։ Եվ ամեն ինչ
դեպի արևմուտք, այնտեղ, ուր գոտեմարտի էին ելել աշխարհ-
ներ, այն էլ՝ ոչ թե կենաց, այլ մահու գոտեմարտի…

Որոշ ժամանակ անց, հերթը Ղազանղապին էլ հասավ։ Պա-
տերազմ կանչեցին։ Ղումբելից ծանուցագիր հանձնեցին, ներկա-
յանալու հավաքակայան։ Կիսակայարանի պետը գլուխը բռնեց,
հառաչեց, տանում էին իր լավագույն ուղեգծային բանվորին,
այսինքն, Բորանլիում ընդամենը մեկ և կես ուղեգծային բանվոր
կար։ Բայց թե ի՞նչ կարող էր անել, ով պիտի իրեն ականջ աներ,
թե կիսակայարանի բացթողման հնարավորությունը ռետինից
չի… Շոգեքարշերը ոռնում էին սեմաֆորների մոտ… Կծիծաղեն,
եթե ասի, թե շտապ կարգով հարկավոր է ևս մի պահեստային
գիծ։ Ո՞վ դրա ժամանակն ունի, թշնամին արդեն Մոսկվայի մեր-
ձակայքում է…

Եվ արդեն քթի տակ էր առաջին պատերազմական ձմեռը,
վաղ վրա հասած մառախուղներով, միգապատ, ծակող ցրտով։
Իսկ այն առավոտվա նախօրյակին ձյուն եկավ։ Գիշերը եկավ։
Նախ նոսր, փոշու նման մանր, հետո թափվեց թանձր ու խիտ։
Եվ սարօզեկների անհուն լռության միջով, անվերջ թափվելով
հարթավայրերի, զառիկողերի և գոգահովիտների վրա համատա-
րած ծածկույթով փռվեց մաքուր, երկնային ճերմակությունը։ Եվ

անմիջապես, դեռևս չպնդացած ձյունաշերտի վրա վետվետացին սարօզնկյան քամիները։ Դրանք դեռևս սկզբնական, փորձնական քամիներ էին, հետո պիտի գալարվեին, ոռնային, ձյունահողմ բարձրացնեին։ Եվ այն ժամանակ ի՜նչ կգար թելի պես բարակ երկաթուղու գլխին, որ ծայրից ծայր կտրում էր հսկայական դեղին տափաստանների միջնակները, ինչպես քներակ։ Տրոփում էր քներակը, շարժվում, շարժվում էին գնացքները այս ու այն կողմ…

Այն առավոտյան Ղազանղապը ռազմաճակատ մեկնեց։ Երբ տնից դուրս էին գալիս, Բուկեյը կանգ առավ, ասաց, որ ձյունից գլուխը պտտվեց։ Ղազանղապը նրա ձեռքից առավ երեխայի բարուրը։ Այն ժամանակ Այզադան արդեն ծնվել էր։ Եվ նրանք գնացին, թերևս վերջին անգամ էին իրենց ոտնահետքերը կողք-կողքի թողնում ձյան վրա։ Բայց ոչ թե կինն ուղեկցեց Ղազանղապին, այլ ինքը, վերջում, դեպի Կումբել մեկնող ճամփակից գնացքը նստելուց առաջ կնոջը հասցրեց մինչև սլաքատուն։ Այժմ Բուկեյն էր սլաքավար աշխատելու ամուսնու փոխարեն։ Այստեղ հրաժեշտ տվին իրար։ Ինչ որ ասելիք էր, արդեն ասվել էր, ինչ որ լացելու էր, արդեն լացվել էր գիշերը։ Շոգեքարշն արդեն կանգնած էր շոգիների տակ։ Մեքենավարը շտապեցնում էր Ղազանղապին, կանչում մոտը։ Եվ հենց Ղազանղապը բարձրացավ նրա մոտ, շոգեքարշը պիլ սուլեց, արագություն վերցրեց և մեկնեց սլաքի վրայով, որտեղ նրանց համար ճամփա բացելով կանգնած էր Բուկեյը՝ գլուխը շալով ամուր փաթաթած, գոտի կապած, ամուսնու երկարաճիտ կոշիկները հագին, մի ձեռքին դրոշակը, մյուս ձեռքին երեխան։ Վերջին անգամ ձեռքով արին իրար… փայլատակեցին անցան դեմք, հայացք, ձեռք, սեմաֆոր…

Իսկ գնացքն արդեն սլանում էր՝ դղրդացնելով սարօզեկների կաթնաթույր ձյունաթմբերը, որոնք լուռ լողում և լուռ չքանում էին տեսողությունից, սպիտակ երազի նման։ Քամին փչում էր շոգեքարշի վրա՝ հնոցի այրված խարամի կայուն հոտին գումարելով տափաստանային թարմ, անարատ ձյան հոտը… Ղազանղապն ուզում էր թոքերում երկար պահել սարօզեկյան լայնությունների այդ ձմեռային շունչը և հասկացավ, որ հետայսու ինքն անտարբեր չի այս հողի նկատմամբ…

Կումբելում արդեն տեղաբաշխում էին զորակոչվածներին։ Բոլորին շարք էին կանգնեցրել, ներկա-բացակա էին անում, հե-

տո վագոն էին նստեցնում։ Եվ հենց այստեղ կատարվեց մի տարօրինակ բան։ Երբ Ղազանղապը շարքի հետ գնում էր վագոն նստելու, զինկոմիսարիատի աշխատողներից մեկը հասավ շարքի ետևից։

— Հասանբաև Ղազանղապ։ Ո՞վ է Հասանբաևը։ Դուրս եկ շարքից։ Մոտեցիր ինձ։

Ինչպես ասվեց, Ղազանղապն այդպես էլ արեց։

— Ես եմ Հասանբաևը։

— Փաստաթղթերդ... Ճիշտ է։ Նա է։ Իսկ այժմ հետևիր ինձ։

Նրանք ետ դարձան կայարան, որտեղ գտնվում էր հավաքակետը, և այդ մարդն ասաց.

— Լսի՛ր, Հասանբաև, դու ետ դարձիր, տուն գնա։ Հասկացա՞ր։

— Հասկացա,— պատասխանեց Ղազանղապը, չնայած ոչինչ չէր հասկացել։

— Այդ դեպքում անմիջապես հեռացիր, այստեղ գործ չունես։ Դու ազատ ես։

Ղազանղապը շփոթ ու շվար կանգնել-մնացել էր ուղեկցողների և մեկնողների բզզացող ամբոխի մեջ։ Սկզբում նույնիսկ ուրախացել էր անակնկալ շրջադարձի համար, բայց հետո քափ ու քրտինքը վրա տվեց գիտակցության խորքում առկայծող ենթադրությունից։ Ախ, ուրեմն այդպե՜ս։ Եվ խցանված բազմության միջով սկսեց մի կերպ մոտենալ հավաքի պետի դռանը։

— Այս ո՞ւր, ո՞ւր ես մտնում,— գոռացին նրանք, որ նույնպես ուզում էին ընկնել պետի մոտ։

— Ես շտապ գործ ունեմ, էշելոնը մեկնում է, շտապ գործ է,— և ներս մտավ։

Ծխախոտի ծխի կապտավուն մշուշով պարուրված սենյակում, հեռախոսների, թղթերի և գլխին կուտակված մարդկանց մեջ նստած գորշ մազերով, խռպոտված ձայնով մարդը խոժոռ դեմքը բարձրացրեց սեղանից, երբ Ղազանղապը ներս խցկվեց։

— Ի՞նչ է։ Ի՞նչ հարցով ես եկել։

— Ես համաձայն չեմ։

— Ինչի՞ն համաձայն չես։

— Իմ հայրը արդարացված է, իբրև թեքման տակ ընկած։ Նա կուլակ չէ։ Ստուգեք ձեր բոլոր թղթերը։ Նա արդարացված է իբրև միջակ։

— Սպասիր, սպասիր։ Ի՞նչ ես ուզում։

— Եթե ինձ ռազմաճակատ չեք տանում այդ պատճառով, դա սխալ բան է։

— Լսիր, գլխիցդ դուրս մի տա։ Կուլակ, միջակ, հիմա ո՞վ դրա ժամանակն ունի։ Դու որտեղի՞ց ես եկել։ Ո՞վ ես։

— Հասանբաևը, Բորանլի կիսակայարանից։

Պետը սկսեց նայել ցուցակները։

— Այդպես էլ սեերի։ Իզուր գլուխ ես տանում։ Միջակ, աղքատ, կուլակ։ Դու արտոնագիր ունես։ Սխալմամբ ենք կանչել։ Հրաման կա հենց Ստալինից — երկաթուղայիններին ձեռք չտալ, բոլորը մնում են իրենց տեղերում։ Դեհ, այլևս մի խանգարիր, գնա քո կիսակայարանը և աշխատիր...

Մայրամուտը նրանց դիմավորեց ճանապարհին, Բորանլիից ոչ հեռու։ Այժմ նորից նրանք մոտենում էին երկաթգծին։ Արդեն լսվում էին այս ու այն կողմ սլացող գնացքների չչակները, և կարելի էր զանազանել վագոնաշարերը, որոնք հեռվից, սարոզեկների մեջ նման էին խաղալիքների։ Արեգակը դանդաղ հանգչում էր հեռվում, մի պահ լուսավորելով և անմիջապես ստվերելով մաքուր գոգահովիտներն ու շրջակա բլուրները, միաժամանակ, աննկատելիորեն ծնվում էր մթնշաղը, հետզհետե օդը մթնեցնելով, լցնելով կապույտով ու գարնանային հողի զովացող շնչով, հող, որ դեռ պահպանում էր ձմեռային խոնավության մնացորդները։

— Հրեն մեր Բորանլին,— ձեռքն առաջ պարզեց Ղազանղապը, շուռ գալով ուղտին նստած Եդիգեյի և կողքից շտապող Ուկուբալայի կողմը։— Արդեն քիչ է մնում, շուտով կհասնենք, սատված մեզ օգնական։ Կհանգստանանք։

Դիմացում, այնտեղ, ուր երկաթուղին մի քիչ թեքություն ուներ, ամայի հարթության վրա շարված էին մի քանի տներ, իսկ պահեստային գծի վրա կանգնած գնացքը սպասում էր սեմաֆորի բացվելուն։ Եվ դրանից այն կողմ, և չորս բոլորը փռված էին բաց դաշտ, թեթև զառիկողեր, համր, անչափելի տարածություն ու տափաստան...

Եդիգեյի սիրտը կոտրվեց. ինքը ծովեզերյա տափաստանակյաց, արալյան անապատների սովոր, այսպիսի բանի չէր սպասում։ Կապույտ, հարափոփոխ ծովից հետո, որի ափին մեծացել էր, այժմ մեռյալ, ծովազուրկ տափաստան։ Ինչպե՞ս պիտի ապրեն այստեղ։

Ուկուբալան, որ քայլում էր կողքից, ձեռքը բարձրացրեց, հասցրեց Եդիգեյի ոտքին և մի քիչ քայլեց այդպես, առանց ձեռքը հեռացնելու։ Եդիգեյը հասկացավ։ «Ոչինչ,— դրանով ուզում էր ասել կինը,— կարևորը քո առողջությունը վերականգնելն է։ Հետո կապրենք կտեսնենք...»։

Այսպես մոտեցան այն վայրին, որտեղ, ինչպես պարզվեց հետո, նրանց վիճակված էր ապրելու շատ տարիներ, մնացյալ ամբողջ կյանքը։

Ցուրտ արևգակը հանգավ, և մթության մեջ, երբ սարօզեկյան երկնքում պայծառ ու հստակ վառվեցին աստղերը, նրանք հասան Բորանլի։

Մի քանի օր ապրեցին Ղազանղապի տանը։ Հետո բաժանվեցին։ Նրանց սենյակ տվեցին ուղեգծային բանվորների այն ժամանակվա բարաքում, և այդ օրվանից սկսվեց նրանց կյանքը նոր վայրում։

Բոլոր դառնություններով ու դժվարություններով հանդերձ, սարօզեկների ամայության մեջ Եդիգեյի համար օգտակար եղան երկու բան. օդը և ուղտի կաթը։ Օդը դրախտային էր, ուրիշ այսպիսի կուսական աշխարհ դժվար թե գտնվեր, իսկ կաթի հարցը կարգավորեց Ղազանղապը, նրանց տալով իր երկու կթու ուղտերից մեկը։

— Կնոջս հետ խելք-խելքի տվեցինք,— ասաց նա,— մեր կաթը լիուլի բավարարում է, դուք էլ վերցրեք մեր Ճերմակագլուխ ուղտին, կթեք։ Ճերմակագլուխը ջահել է, կաթնատու, երկու տարվա մեջ է։ Դուք խնամեք, դուք էլ օգտվեք։ Միայն տեսեք, որ ձագին սովամահ չանեք։ Նա ձերն է, ես ու կինս այդպես ենք որոշել. ուղտը քեզ, Եդիգեյ, իմ կողմից մեր բաժանության համար, իբրև սկիզբ։ Կխնամես, նրանից ամբողջ երամակ կգոյանա։ Եթե հանկարծ որոշեք այս կողմերից հեռանալ, կվաճառես, փող կլինի։

Ճերմակագլխի ձագը՝ սևագլուխ, փոքրիկ, պստլիկ մուգ սապատներով, ծնվել էր ընդամենը մեկ և կես շաբաթ առաջ։ Եվ այնքան էլ խոշոր աչքեր ուներ։ Մեծ, ուռուցիկ, խոնավ աչքերը շրջում էին մանկական քնքշությամբ ու հետաքրքրասիրությամբ։ Երբեմն նա ծիծաղելի ձևով վազվզում, թռչկոտում, խայտում էր մոր շուրջը, իսկ երբ գոռում էր լինում, մորը կանչում էր համարյա մարդկային, սրտաճմլիկ ձայնով։ Ո՞ւմ մտքով կանցներ, թե դա ապագա Կարանառն էր։ Այն նույն անդադարն ու հզորը,

սրի համբավը տարածվելու էր մարզով մեկ։ Նրա հետ էին կապված լինելու Բորանլի Եդիգեյի կյանքի շատ դեպքեր։ Բայց այն ժամանակ ծծկերը մշտական խնամքի կարիք ուներ։ Եդիգեյը շատ էր ընտելացել նրան։ Ամբողջ ազատ ժամանակը նրան էր նվիրում։ Առաջ էլ, երբ Եդիգեյը դեռ Արալում էր, այդ գործից հասկանում էր և այժմ դա շատ օգտակար եղավ նրան։ Ձմռանը փոքրիկ Կարանարը լավ մեծացավ, ցրտերն ընկնելուն պես, նրա համար կարեցին տաք, փորի տակ կոճկվող սթար։ Այդ սթարով Կարանարը շատ ծիծաղելի էր. միայն գլուխը, վիզը, ոտքերը և երկու սապատներն էին դրսում։ Ամբողջ ձմռանը և գարնան սկզբին, օր ու գիշեր նա այդ հագուստով ման էր գալիս անապատում, բաց երկնքի տակ։

Այն տարվա ձմեռնամուտին Եդիգեյն զգաց, թե ինչպես են կամաց-կամաց վերադառնում ուժերը։ Նույնիսկ չիմացավ, թե երբ դադարեցին գլխապտույտները։ Աննկատելիորեն չքացավ ականջների դժժոցը, աշխատանքի ժամանակ այլևս քրտինքը վրա չէր տալիս։ Իսկ ձմեռվա կեսին, երբ ձնահյուսերը փակում էին ճանապարհները, նա արդեն մյուսներին հավասար կարողանում էր դուրս գալ ավրալի։ Իսկ հետո այնքան պնդացավ, ախր ջահել էր և բնականից ամրակազմ, որ մոռացել էր նույնիսկ, թե որքան ծանր ու դժվար էր հենց վերջերս, ինչպես էր ոտքերը մի կերպ քարշ տալիս։

Կատարվեցին շիկամորուս բժշկի խոսքերը։ Լավ տրամադրության պահերին Եդիգեյը երբեմն կատակով խոսում էր ուղտիկի հետ, շոյելով ու գրկելով նրա վիզը.

— Ես ու դու նման ենք կաթնեղբայրների։ Տես է՞, դու ոնց ես մեծացել ճերմակագլխի կաթով, ես էլ, կարծես կոնտուզիայից եմ ազատվել։ Աստված տա չկրկնվի։ Տարբերությունն այն է, որ դու կուրծ ես ծծել, իսկ ես կթել եմ, շուբաթ սարքել...

Շատ տարիներ անց, երբ Բորանլի Կարանարի հռչակն այնպես տարածվեց սարոզեկներում, որ հատուկ նրան լուսանկարելու համար մարդիկ եկան, իսկ դա արդեն այն ժամանակ էր, երբ պատերազմը մոռացվել էր, երեխաները սովորում էին, երբ կիսակայարանում հայտնվել էր սեփական ջրահան, և ջրի խնդիրը, այդպիսով, վերջնականապես լուծվել էր, Եդիգեյն արդեն թիթեղե տանիքով տուն էր կառուցել,— մի խոսքով, երբ կյանքը, այնքան զրկանքներից ու չարչարանքներից հետո վերջապես մտել էր մարդկային կյանքին արժանի, բնականոն հունի մեջ,

Հենց այդ ժամանակ էլ մի խոսակցություն եղավ, որ Եդիգեյը երկար պահեց մտքում։

Ֆոտոթղթակիցների ժամանումը, ինչպես որ ներկայացրին իրենց, իհարկե հազվագյուտ, եթե ոչ միակ դեպքն էր Բորանլիի պատմության մեջ։ Ճարպիկ, քաղցրալեզու ֆոտոթղթակիցները՝ երեք հոգի, խոստումներ շռայլեցին, իբր իրենք եկել-հասել են այստեղ, որպեսզի բոլոր թերթերում և ամսագրերում տպագրեն Բորանլի Կարանարի և նրա տերերի նկարները։ Իր շուրջը եղած աղմուկն ու իրարանցումը Կարանարին այնքան էլ դուր չէր գալիս. Նա բարկացած բոռում էր, կրճտացնում սուր-սուր ատամներով երախը և անհնազանդ վեր էր բարձրացնում գլուխը, որպեսզի իրեն հանգիստ թողնեն։ Եկվորները ստիպված էին անընդհատ խնդրելու Եդիգեյին, որ սա հանգստացնի ուղտին, նրան շրջի մեկ այսպես, մեկ այնպես։ Իսկ Եդիգեյն էլ, իր հերթին ամեն անգամ կանչում էր երեխաներին, կանանց և հենց Ղազանղապին, որպեսզի մենակ ինքը չնկարվի, այլ բոլորը միասին նկարվեն, իր կարծիքով այդպես ավելի լավ կլիներ։ Ֆոտոթղթթակիցները սիրով համակերպվում էին, չրխկացնում էին լուսանկարչական տարբեր գործիքներ։ Ամենանշանավոր համարն այն էր, երբ Բորանլի Կարանարին հեծեցին բոլոր երեխաները՝ երկուսը վզին, մի հինգ հոգի էլ մեջքին, իսկ մեջտեղում ինքը՝ Եդիգեյը,— այսինքն՝ տեսեք, թե ինչ ուժի ուղտ է։ Համա թե ծափ ու ծիծաղ էր։ Բայց հետո ֆոտոթղթակիցները խոստովանեցին, որ իրենց համար կարևոր է նկարահանել աթանին միայնակ, առանց մարդկանց։ Ահա, խնդրեմ, ինչ խոսակցություն էր։ Եվ այն ժամանակ լուսանկարիչներն սկսեցին նկարահանել միայն Բորանլի Կարանարին՝ նշան բռնելով կողքից, դիմացից, մոտիկից, հեռվից, ինչպես որ կարող էին, իսկ հետո Եդիգեյի և Ղազանղապի օգնությամբ սկսեցին չափսերն առնել. չափեցին ետնաբաշի բարձրությունը, կրծքի լայնությունը, ենթադաստակի լայնությունը, իրանի երկարությունը և ամեն ինչ գրում էին հիացմունքով։

— Հոյակապ բակտերիան է։ Ահա թե որտեղ են գեները գործել գերազանց։ Բակտերիանի դասական տեսակ։ Ինչպիսի՜ հզոր կուրծք, սքանչելի էքստերյեր։

Անշուշտ, Եդիգեյը շոյված էր լսելով այդպիսի խոսքեր, բայց ստիպված եղավ հարցնելու, թե ինչ էին նշանակում իր համար անծանոթ այդ բառերը, թեկուզ օրինակ «բակտերիանը»։ Պարզ-

վեց, որ գիտության մեջ այդպես է կոչվում երկապատավոր ուղտերի հնագույն ցեղը։

— Ուրեմն սա բակտերիա՞ն է։

— Հազվագյուտ մաքրության։ Ալմաստ։

— Իսկ ձեր ինչի՞ն են պետք բոլոր այդ չափերը։

— Գիտական տվյալների համար։

Թերթերի ու ամսագրերի հաշվով, իհարկե, այս եկվորները բորանլիցիների աչքին թոզ էին փչում, տպավորություն գործելու համար, բայց մի վեց ամիս հետո փաթեթով ուղարկեցին ուղտաբուծության մի դասագիրք անասնաբուժական ֆակուլտետների համար, որի շապկին բազմել էր դասական բակտերիան Կարանարը։ Եվ մի ամբողջ դաս լուսանկարներ էին ուղարկել, դրանց մեջ կային նաև գունավորները։ Նույնիսկ լուսանկարներից կարելի էր հասկանալ՝ երջանիկ, ուրախ ժամանակ էր։ Ետպատերազմյան դժվարությունները մնացել էին ետևում, երեխաները դեռ մանկությունից դուրս չէին եկել, մեծերը ողջ առողջ էին, ծերությունն էլ դեռ թաքնված էր յոթ սարերի ետևում։

Այն օրը, հյուրերի պատվին Եդիգեյը ոչխար մորթեց և լավ խնջույք սարքեց բոլոր բորանլիցիների համար։ Շուբաթ, օղի, ամեն ինչ առատ էր։ Այն ժամանակ կիսակայարան էր գալիս օրսի շրջիկ վագոն-խանութը, որով ինչ ասես բերում էին։ Միայն փող լիներ։ Ամեն տեսակ խաչափառ, սև ու կարմիր խավիար, տարբեր տեսակի ձկնեղեն, կոնյակներ, երշիկ, կոնֆետ և այլն, և այլն։ Հակառակի նման, երբ ամեն ինչ լինում է, այնքան չեն էլ գնում։ Շատ գնեն ի՞նչ անեն։ Այժմ այդ շրջիկ խանութը վաղուց արդեն վերացել է երկաթուղուց...

Այն օրը լավ ժամանակ անցկացրին, խմեցին նույնիսկ Բորանլի Կարանարի կենացը։ Եվ խոսքի մեջ պարզվեց, որ հյուրերը Կարանարի մասին լսել էին Ելիզարովից։ Այդ Ելիզարովն է պատմել նրանց, որ սարօզեկներում ապրում է իր ընկեր Բորանլի Եդիգեյը և նա տերն է աշխարհի ամենագեղեցիկ ուղտի՝ Բորանլի Կարանարի։ Ելիզարով, Ելիզարով։ Հիանալի մարդ, սարօզեկների գիտակ, գիտնական... Երբ Ելիզարովը գալիս էր Բորանլի, Ղազանղապի հետ երեքով նստում էին և երբեմն ամբողջ գիշեր զրուցում...

Այդ օրը մեկ Ղազանղապը, մեկ Եդիգեյը իրար շարունակելով և իրար լրացնելով հյուրերին պատմեցին սարօզեկյան ավանդությունը այստեղի ուղտերի ցեղի նախամոր, նշանավոր Ճերմա-

կագլուխ ուղտի՝ Ակմայայի և նրա ոչ պակաս նշանավոր տիրուհի Նայման-Անայի մասին, որ ննջում է Անա-Բեյիթի գերեզմանոցում։ Ահա թե որտեղից է սերում Բորանլի Կարանարը։ Բորանլիցիները հույս ունեին, թե միգուցե որևէ թերթում կտպագրեն այդ հնագույն պատմության մասին։ Հյուրերը հետաքրքրությամբ լսեցին, բայց հավանորեն մտածեցին, թե դա տեղական ինչ-որ առասպել է, որ անցնում է սերնդից սերունդ։ Իսկ Եդիգարովը ուրիշ կարծիքի էր։ Նրա կարծիքով Ակմայայի մասին առասպելը լիովին կարող էր արտացոլել այն ամենը, ինչ եղել է պատմական իրականության մեջ։ Եդիգարովը սիրով էր լսում այդպիսի բաները, ինքն էլ շատ գիտեր տափաստանային անցյալ ավանդություններ...

Հյուրերին ճամփու դրեցին իրիկնադեմին։ Եդիգեյը գոհ էր, հպարտ։ Դրա համար էլ առանց երկար-բարակ մտածելու ասաց։ Ախր, նաև խմել էր հյուրերի հետ։ Բայց դե ասել-վերջացրել էր։

— Ճիշտն ասա, Ղազակե,— ասաց Ղազանղապին,— չե՞ս փոշմանել, որ Կարանարին ինձ ես նվիրել ծծկեր ժամանակ։

Ղազանղապը քմծիծաղով նայեց նրան։ Հավանաբար, նման բան չէր սպասում։ Եվ քիչ լռելուց հետո պատասխանեց.

— Բոլորս, իհարկե, մարդ ենք։ Բայց գիտես, որ այդպիսի մեծական խոսք կա. մալ իեսի քուդայդան[1]։ Դա ասածո բանն է։ Այդպես է վիճակված։ Ուրեմն հենց քոնը պիտի լիներ Կարանարը, և հենց դու պիտի լինեիր նրա տերը։ Եթե նա, ասենք, ընկներ ուրիշի ձեռքը, հայտնի չի, թե ինչ կլիներ՝ միգուցե չայրեր, սատկեր, և դեռ ինչ իմանաս, թե ինչ կարող էր պատահել։ Ջառիթափից վայր կընկներ։ Նա պետք է քեզ պատկաներ։ Ես առաջ էլ եմ ուղտեր ունեցել և ոչ վատերը։ Եվ այդ նույն ճերմակագլուխ մորից, որից և Կարանարն է ծնվել։ Բայց քոնը այդ մի հատիկն է՝ ընծա... Աստված տա, հարյուր տարի ծառայի քեզ։ Բայց դու զուր ես այդպես մտածում։

— Դե լավ, ներիր, ներիր ինձ, Ղազակե,— ամաչեց Եդիգեյը, զղջաց, որ բերանից այդպիսի բան է թռցրել։

Եվ իրենց զրույցի ընթացքում Ղազանղապը պատմեց իր դիտարկումները։ Ըստ ավանդության, Ոսկեմայր Ակամայան ծնեց յոթ ձագ՝ չորս էգ, երեք արու։ Եվ ահա այդ օրից բոլոր էգերը շեկ են ծնվում, ճերմակ գլխով, բոլոր արուները՝ ընդհակառակը,

---

1 Անասունի տերը աստված է որոշում։

*սև գլխով, շագանակագույն իրանով։ Դա Ակմայայից սերելու առաջին նշանն է, և այդ օրից, ով գիտե ինչքան տարի է անցել, երկու հարյուր, երեք հարյուր, հինգ հարյուր, թե ավելի, բայց սարօզեկներում Ակմայայի ցեղը չի փոխվում։ Մեկ էլ տեսար հայտնվում է Բորանլի Կարանարի նման մի ուղտ-սըրթուն[1]։ Եդիգեյի բախտը պարզապես բերել է։ Նրա տղամարդկային բախտից ծնվել է Կարանարը և ընկել նրա ձեռքը... Իսկ երբ ժամանակը եկավ Կարանարով զբաղվելու կամ կրտելու, կամ կապանքներ դնելու, որովհետև սկսել էր սոսկալի մոլեգնել, նա ոչ ոքի մոտիկ չէր թողնում, փախչում էր, օրերով կորչում, Ղազանղապն ուղղակի ասաց Եդիգեյին, երբ սա խորհուրդ հարցրեց նրանից։*

*— Դա քո գործն է։ Եթե հանգիստ կյանք ես ուզում, ամորձատիր։ Եթե փառք ես ուզում, ձեռք մի տա։ Բայց այդ դեպքում ամբողջ պատասխանատվությունը քեզ վրա ես վերցնելու, եթե բան պատահի։ Եթե ուժ ու համբերություն ունես, սպասիր, մի երեք տարի կըմբոստանա, հետո պոչիցդ ման կգա։*

*Եդիգեյը ձեռք չտվեց Բորանլի Կարանարին։ Ոչ թե չհամարձակվեց, պարզապես ձեռքը չգնաց։ Նրան թողեց աթան։ Բայց րոպեներ եղան, երբ արյուն-արցունք թափեց...*

## V

**Գնացքներն այս կողմերում գնում էին արևելքից արևմուտք և արևմուտքից արևելք...**

**Իսկ երկաթուղու շուրջը, այս կողմերում, փռված էին հսկայական ամայի տարածություններ՝ Սարի-Օզեկներ, Դեղին տափաստանների միջնակները։**

**Այս կողմերում ուզածդ տարածությունը չափվում էր երկաթուղուց, ինչպես Գրինվիչի միջօրեականից...**

**Իսկ գնացքները գնում էին արևելքից արևմուտք և արևմուտքից արևելք...**

*Առավոտյան վաղ ամեն ինչ պատրաստ էր։ Թանձր թաղիքով ամուր բարուրված և դրսից բրդյա պարանով կապված Ղազանղապի մարմինը տեղավորեցին տրակտորի կցասայլին, որի հատակին նախապես փռված էր թեփ, տաշեղ և մաքուր խոտի*

1 **Սըրթուն** — *Գերէակ։*

ջերտ։ Հարկավոր էր շուշացնել մեկնումը, որպեսզի իրիկնադեմին, ժամը հինգից-վեցից ոչ ուշ հասցնեին վերադառնալ գերեզմանոցից։ Երեսուն կիլոմետր մինչև այնտեղ, մի այդքան էլ այնտեղից տուն, գումարած թաղումը, այնպես որ հոգեհացը սարքված կլինեն տալու մոտավորապես երեկոյան ժամը վեցին։ Այդ հաշվով էլ ճամփա ընկան, որ հասցնեին հոգեհացը։ Բորանլի Եդիգեյը դեռևս երեկ երեկոյան թամբված, զարդարված Կարանարի սանձից բռնած, շտապեցնում էր մարդկանց։ Ինչ են այդպես մլուլ տալիս։ Իսկ ինքը չնայած ամբողջ գիշեր աչք չէր փակել, հավաք, կենտրոնացած տեսք ուներ, թեև նիհարել էր։ Մաքուր սափրված, գորշ բեղերով ու գորշ հոնքերով Եդիգեյը իր լավագույն հագուստ-կապուստով էր. խրոմե սապոգներ, վելվետից լայն գալիֆե, սպիտակ վերնաշապիկի վրայից սև պիջակ և գլխին երկաթուղայինի կիրակնօրյա գլխարկ։ Կրծքին շողում էին մարտական բոլոր շքանշաններն ու մեդալները, նույնիսկ՝ հընգամյակների հարվածայինի նշանները։ Այդ ամենը նրան վայելուչ և ազդեցիկ տեսք էր տալիս։ Հենց այդպիսին էլ պիտի լիներ Բորանլի Եդիգեյը Ղազանղափի թաղումին։ Հանգուցյալին հրաժեշտ տալու էին եկել բոլոր բորանլիցիները՝ փոքրից մեծ, խմբվել էին կցասայլի մոտ, սպասում էին դուրս բերելուն։ Կանայք անդադար լաց էին լինում։ Բորանլի Եդիգեյը առանց նախօրոք մտածելու, հանպատրաստից դիմեց հավաքվածներին.

— Այժմ մենք գնում ենք Անա-Բեյիթ, սարօզեկների ամենապատվավոր գերեզմանոցը։ Հանգուցյալ Ղազանղապ-աթան արժանի է դրան։ Նա է կտակել, որ իրեն այնտեղ թաղենք։— Եդիգեյը մտածեց, ինչ ավելացնի, և շարունակեց.— Ուրեմն, վերջացել է ծննդյան օրից նրա համար սահմանված ջուրն ու աղը։ Այս մարդը մեր կիսակայարանում աշխատել է ուղիղ քառասունչորս տարի։ Կարելի է ասել ամբողջ կյանքը։ Երբ նա սկսեց աշխատել այստեղ, նույնիսկ ջրհան չկար։ Ամբողջ շաբաթվա ջուրը բերում էին ցիստեռնով։ Այն ժամանակ ոչ ձյունմաքրիչներ կային, ոչ էլ ուրիշ մեքենաներ, որ այժմ կան։ Չկար նույնիսկ այսպիսի տրակտոր, որով հիմա նրան տանում ենք թաղելու։ Բայց միևնույն է, գնացքները գնում էին և նրանց ճանապարհը միշտ բաց էր։ Նա ազնվաբար է ծառայել Բորանլիում։ Նա լավ մարդ էր։ Բոլորդ գիտեք։ Իսկ այժմ շարժվենք։ Իմաստ չունի և մեքենա էլ չկա, որպեսզի բոլորս գնանք գերեզմանոց։ Բացի այդ, իրավունք էլ չունենք երկաթգիծը թողնել։ Կգնանք

վեց հոգով։ Եվ ամեն ինչ կանենք տեղը տեղին։ Իսկ դուք սպասեք մեզ և պատրաստվեք, մեր վերադարձին բոլորդ հավաքվեք հոգեհացի, հրավիրում եմ նրա զավակների անունից, ահա նրանք. որդին և դուստրը նրա...

Թեև Եդիգեյի մտքով չէր էլ անցել, բայց մի տեսակ փոքրիկ սգո միտինգ ստացվեց։ Դրանից հետո շարժվեցին։ Բորանլիցիները մի քիչ քայլեցին կցասայլի ետևից, հետո ցրվեցին, մնացին տների ետևում։ Որոշ ժամանակ դեռ լսվում էր բարձրաձայն լաց, Այզադան ու Ուկուբալան էին ողբում հանգուցյալի ետևից...

Եվ երբ լռեց լացուկոծը, և նրանք վեց հոգով անընդհատ հեռանալով երկաթուղուց, խորացան սարոզեկների մեջ, Բորանլի Եդիգեյը թեթևացած շունչ քաշեց։

Այժմ իրենք ու իրենք էին, և նա գիտեր ինչ է հարկավոր անել։ Արեգակն արդեն վեր էր բարձրացել և շռայլորեն ու բերկրությամբ լույսով էր ողողում սարոզեկյան լայնությունները։ Առայժմ զով էր տափաստանում, և թվում է, ոչ մի բան չէր դժվարացնում նրանց ընթացքը։ Այս բովանդակ աշխարհում միայն երկու բազե էին սավառնում վարժ ու հպարտ, երբեմն էլ, ոտքի տակից արտույտներ էին թռչում և շփոթված ծլվլոցով թափահարում էին թևիկները։ «Շուտով սրանք էլ կչվեն։ Առաջին ձյան հետ երամ կկազմեն և կչվեն»,— մտքում նշեց Եդիգեյը, մի ակնթարթ պատկերացնելով թափվող ձյուն և այդ ձյան թաղանթի միջով թռչող հավքերին։ Եվ, չգիտես ինչու, մտաբերեց գիշերվա այն աղվեսին, որ վազում էր երկաթուղու կողմը։ Եդիգեյը նույնիսկ թաքուն շուրջը նայեց, հո չի գալիս իրենց ետևից։ Եվ նորից միտն ընկավ հրեղեն հրթիռը, որ այն գիշեր սարոզեկների վրայով բարձրանում էր տիեզերք։ Զարմանալով իր տարօրինակ մտքերի վրա, նա, համենայն դեպս, ինքն իրեն ստիպեց մոռանալ այդ մասին։ Այսպիսի պահին, դրա մասին չպիտի մտածեր, որքան էլ ճամփան երկար էր...

Բորանլի Եդիգեյը, Կարանարին բազմած, ընթանում էր առջևից, ցույց տալով Անա-Բեյիթի ուղղությունը։ Լայն, մեծ-մեծ մնգմնգոցով նրան տանում էր Կարանարը, հետզհետե մտնելով ճանապարհային շարժման ռիթմի մեջ։ Հասկացող մարդու համար Կարանարն առանձնապես գեղեցիկ էր քայլելիս։ Ուղտի հպարտ, կոր վզի վրա բարձրացող գլուխը կարծես լողում էր ալիքների մեջ, մնալով համարյա անշարժ, իսկ երկար, ջլապինդ ոտքերը հատում էին օդը՝ անդադրում չափելով տարածությունը։

Եդիգեյը հաստատուն, հարմար, ինքնավստահ նստել էր սապատների արանքում։ Նա գոհ էր, որ Կարանարը չէր ստիպում խթանել իրեն, գնում էր թեթև և նրբորեն որսում էր տիրոջ ցուցումները։ Եդիգեյի կրծքի շքանշաններն ու մեդալները մեղմ զրընգում էին շարժվելիս և փայլում էին արևի շողերից։ Բայց դա նրան չէր խանգարում։ Նրա ետևից գալիս էր «Բելառուս» տրակտորը՝ կցասայլով։ Խցիկում, ջահել տրակտորիստ Կալիբեկի կողքին նստած էր Սաբիթջանը։ Երեկ, համենայն դեպս, կարգին խմած էր, երբ բորանլիցիների համար ամեն տեսակի հեքիաթներ էր հորինում ռադիոճառագայթներով ղեկավարվող մարդկանց մասին և նրանց զբաղեցնում հազար ու մի շաղակրատանքով, իսկ այժմ ընկճված էր, լուռ։ Սաբիթջանի գլուխը ճոճվում էր մեկ այս, մեկ այն կողմի վրա։ Եդիգեյը վախենում էր, որ նրա ակնոցը կոտրվի։ Կցասայլում, Ղազանղապի դիակի մոտ նստած էր Այզադայի դարդոտված ամուսինը։ Նա աչքերը կկոցել էր արևից և երբեմն-երբեմն շուրջն էր նայում։ Թշվառական հարբեցողը այս անգամ իրեն դրսևորել էր լավագույն կողմով։ Ոչ մի կաթիլ բերանը չէր առել։ Եվ ամեն կերպ աշխատում էր բոլոր գործերում օգնության հասնել, իսկ հանգուցյալին դուրս բերելու պահին վազեց, ուսը դեմ տվեց։ Երբ Եդիգեյը նրան առաջարկեց իր հետ նստել ուղտին, նա մերժեց։ «Ոչ,— ասաց,— ես պետք է նստեմ աներոջս կողքին և սկզբից մինչև վերջ պետք է ուղեկցեմ նրան»։ Այդ բանը Եդիգեյին էլ դուր եկավ, բորանլիցիներին էլ։ Եվ երբ տեղից շարժվում էին, բոլորից շուտ և բոլորից բարձր լաց եղավ հենց նա, նստելով կցասայլին և պահելով թաղիքե քուրքը, որտեղ ամփոփված էր հանգուցյալի դին։ «Երանի խելքի գար և խմելը թարկեր։ Որքան երջանիկ կլինեին Այզադան ու երեխաները»,— հուսավառվեց նույնիսկ Եդիգեյը։

Անմարդ տափաստանում այս փոքրիկ և տարօրինակ թափորը, որ գլխավորում էր ուղտահեծյալը, ավարտվում էր «Բելառուս» անվավոր էքսկավատորով, որի խցիկում գնում էին Էդիլբայը և Ջումագալին։ Խափշիկի պես սև, կարճահասակ ու պընդակազմ Ջումագալին նստած էր ղեկի մոտ։ Այդ մեքենան նա սովորաբար օգտագործում էր ուղեգծային տարբեր աշխատանքների համար։ Ջումագալին Բորանլիում հայտնվել էր վերջերս և առայժմ դժվար էր իմանալ, թե որքան կմնա այստեղ։ Կողքին նստած Էդիլբայը մի ամբողջ գլուխ բարձր էր նրանից։ Ամբողջ ճանապարհին, նրանք ոգևորված խոսում էին։

Պետք է արժանին մատուցել կիսակայարանի պետ Օսպանին։ Ամբողջ այս տեխնիկան նա էր հատկացրել թաղմանը։ Ճիշտ մտածեց կիսակայարանի երիտասարդ պետը։ Եթե այդքան հեռու են գնում և դեռ պետք է ձեռքով փորեն փոսը, դժվար թե կարողանան իրիկնադեմին վերադառնալ, մանավանդ որ փոսը պիտի շատ խոր փորվի՝ կողմնային խորշով, ըստ մահմեդականների սովորության։

Սկզբում այդ առաջարկը Բորանլի Եդիգեյին մի քիչ մտահոգեց։ Նրա մտքովն անգամ չէր անցել, թե կարող է որևէ մեկի խելքին փչել գերեզման փորել ոչ թե սեփական ձեռքերով, այլ էքսկավատորի միջոցով։ Այդ խոսակցության ժամանակ նա նստել էր Օսպանի դիմաց, ճակատը խոժոռ, մտամոլոր, կասկածավոր։ Բայց Օսպանը ելքը գտավ, համոզեց ծերունուն.

— Եդիկե, ես ձեզ բան եմ ասում։ Որպեսզի շփոթություն մեջ չլինեք, սկզբում կփորեք ձեռքով։ Ասենք՝ առաջին բահերը։ Հետո անմիջապես կփորեք էքսկավատորով։ Սարօզեկների հողը քարի պես կարծր է, դուք ինձանից լավ գիտեք։ Էքսկավատորով կխորանաք, որքան պետք է, իսկ վերջում նորից բահերը կառնեք ձեռքներդ, կմաքրեք, կվերջացնեք։ Եվ ժամանակ կշահեք և բոլոր կանոնները կպահպանեք։

Եվ ահա, որքան խորանում էին սարօզեկների մեջ, Եդիգեյը այնքան Օսպանի խորհուրդը համարում էր խելացի և ընդունելի։ Եվ նույնիսկ զարմանում էր, թե այդ ինչպես ինքը չի մտածել։ Հենց այդպես էլ կանեն, ասված տա հասնեն Անա-Բեյիթ։ Այդպես էլ հարկավոր է. գերեզմանոցում կընտրեն հարմար տեղ, որպեսզի հանգուցյալի գլուխը լինի հավերժական Քաաբայի կողմը, անցք կփորեն բահերով ու բրիչներով, որ հետները տանում էին կցասայլով, մի քիչ կխորանան, հետո գործի կդնեն էքսկավատորը, փոսը մինչև հատակ կփորեն, իսկ կողմնախորշը՝ ղազանակը, և մահիճը կավարտեն ձեռքով։ Այդպես ավելի արագ և ճիշտ կլինի։

Այդ նպատակով, այդ ժամին նրանք գնում էին սարօզեկներով, և նրանց շղթան մեկ հայտնվում էր ալիքաձև բլուրների կատարին, մեկ չքանում էր լայն գոգահովիտներում, մեկ նորից պարզորոշ գծագրվում հարթավայրերի հեռավորության վրա. առջևից Բորանլի Եդիգեյը՝ ուղտի վրա, նրա ետևից անվավոր տրակտորը՝ կցասայլով, կցասայլի ետևից՝ մի տեսակ բզեզի նման, անկյունավոր և երկարաթաթ՝ «Բելոռուս» էքսկավատորը՝

առջևում բուլդոզերային ամրակը, ետևում՝ աշխատանքային շրջված շերեփը։

Վերջին անգամ նայելով ետևում անհետացող կիսակայարանին, Եդիգեյը, ի մեծ զարմանս իրեն, նոր միայն նկատեց շեկ շանը՝ Ջոլբարսին, որ գործնական տեսքով վարգում էր կողքից։ Այս ե՞րբ էր ընկել իրենց ետևից։ Ա՜յ քեզ բան։ Բորանլիից դուրս գալիս սա կարծես թե չկար։ Եթե իմանար այսպիսի բան է անելու, վիզը կապ կդներ։ Շատ խորամանկն է։ Բավական է նկատի, որ Եդիգեյը պատրաստվում է Կարանարով տեղ գնալու, անմիջապես հարմար պահը գտնում է, դառնում ճամփակից։ Անա, այս անգամ էլ, կարծես բուսեց գետնի տակից։ Լավ, աստված նրա հետ, մտածեց Եդիգեյը։ Ետ ուղարկելու համար ուշ է արդեն, թող իր համար վազ տա։ Եվ կարծես գուշակելով տիրոջ մտքերը, Ջոլբարսը վազանցեց տրակտորը, կողքից հավասարվեց Կարանարին, մի քիչ առաջ անցավ։ Եդիգեյը մտրակով սպառնաց նրան։ Սա աչքն էլ չթարթեց, իբր, ուշացել ես։ Բացի այդ, ինքն ինչո՞վ է վատ, որ չեն ուզում մոտ թողնել։ Լայնակուրծք, փրչոտ, ջլապինդ վզով, կտրված ականջներով, և խելացի, հանգիստ հայացքով, շեկ Ջոլբարս շունը յուրովի գեղեցիկ էր և աչքի ընկնող։

Այդ միջոցին, Անա-Բեյիթի ճանապարհին, զանազան մտքեր էին այցի գալիս Եդիգեյին։ Նայելով, թե ինչպես է արեգակը վեր բարձրանում հորիզոնից, չափելով ժամանակի ընթացքը, Եդիգեյը շարունակ մտածում էր նույն անցած-գնացած բաներից։ Հիշում էր այն օրերը, երբ ինքն ու Ղազանղապը երիտասարդ էին, ուժեղ և, ճիշտն ասած, կիսակայարանի միակ հիմնական բանվորներն էին, մյուսները երկար չէին մնում Բորանլիում, ինչպես գալիս էին, այնպես էլ գնում։ Ինքն ու Ղազանղապը շունչ քաշելու ժամանակ չունեին, որովհետև ուզես-չուզես, ստիպված ես, առանց որևէ բան հաշվի առնելու, կատարել կիսակայարանի ամբողջ աշխատանքը, որտեղ որ անհրաժեշտություն զգացվի։ Այժմ անհարմար ես զգում բարձրաձայն հիշել այդ մասին, երիտասարդները ծիծաղում են. ծեր հիմարներ, կյանքներդ կործանել եք։ Հանուն ինչի՞։ Այո, իսկապես, հանուն ինչի՞։ Ուրեմն հանուն մի բանի եղել է։

Մի անգամ ձնահյուսերի ժամանակ, երկու օր ու գիշեր առանց ձեռք ծալելու չարչարվել են, ճանապարհները մաքրել ձյունից։ Գիշերը լուսարձակներով շոգեքարշ մոտեցրին, որ լուսավորեն տեղանքը։ Իսկ ձյունը անընդհատ գալիս էր, քամին

գալարվում։ Մի կողմից մաքրում ես, մյուս կողմից ձյունը դիզվում է։ Եվ ցուրտ էր, այն էլ ինչ ցուրտ. դեմք ու ձեռք էր ուտում։ Հինգ րոպեով մտնում ես շոգեքարշ, տաքանում, և նորից սկսում այդ սարօզեկյան անհույս գործը։ Շոգեքարշն էլ մինչև անիվները թաղված էր ձյան մեջ։ Երկրորդ օրը, նորեկ բանվորներից երեքը թողեցին գնացին։ Մի լավ հայհոյեցին սարօզեկների կյանքը։ Մենք, ասացին, հո կալանավոր չենք, նույնիսկ բանտերում քնելու ժամանակ է տրվում։ Այդպես էլ ետ կանգնեցին, իսկ առավոտյան, երբ գնացքները շարժվեցին, նրանք սուլոցով հրաժեշտ տվին։

— Հե՜յ, դդում գլուխներ, խելք հավաքեք, խե՜լք։

Այդ ձնահյուսի օրը այնպես եղավ, որ ինքն ու Ղազանղապը կռվեցին, ինչարկե ոչ այն ջահել եկվորների վայրահաչության պատճառով։ Այո, այդպիսի բան եղել է։ Գիշերը անհնարին դարձավ աշխատելը։ Ձյունը մաղում էր, քամին էլ կատաղած շան նման հարձակվում էր ամեն կողմից։ Քամուց պաշտպանվելու ճար ու հնար չկար։ Շոգեքարշը շոգի էր բաց թողնում, բայց դրանից միայն մշուշ էր գոյանում, լուսարձակներն էլ հազիվհազ աղոտ առկայծում էին խավարում։ Այն երեքի գնալուց հետո ինքն ու Ղազանղապը մնացին, որ ձյունը հեռացնեն ուղտի քարշակով։ Լծված էր մի զույգ ուղտ։ Բայց տեղից չէին շարժվում անպիտանները։ Նրանք էլ էին մրսում ու ձանձրանում այս հորձանապտույտից։ Ճանապարհի եզրերի ձյունը մինչև կուրծք էր հասնում։

Ղազանղապը ուղտերի շրթունքներից ձգում էր, որ հետևեն իրեն, իսկ Եդիգեյը՝ քարշակին կանգնած, մտրակում էր ետևից։ Այսպես տանջվեցին, չարչարվեցին մինչև կեսգիշեր։ Հետո ուղտերը խրվեցին-ընկան ձյան մեջ և ինչ արին-չարին տեղից չշարժվեցին, ի վերջո իրենք ուժասպառ եղան։ Ի՞նչ անեին։ Հարկավոր էր դադարեցնել աշխատանքը, մինչև եղանակը մեղմանար։ Քամուց պատսպարվելու համար կանգնել-մնացել էին շոգեքարշի մոտ։

— Հերիք եղավ, Ղազակե, արի մտնենք շոգեքարշի մեջ, մինչև տեսնենք եղանակն ինչ է լինում,— ասաց Եդիգեյը սառած թաթպանները շփելով իրար։

— Եղանակն ինչպես եղել է այնպես էլ կմնա։ Միևնույն է, մեր գործը ճանապարհ մաքրելն է։ Արի բահերով աշխատենք, կանգնելու իրավունք չունենք։

— Ինչո՞ւ, մենք մա՞րդ չենք։

— Ոչ թե մարդիկ, այլ գելուգազաններն են հիմա իրենց բներում թաքնվում։

— Ախ, գարշելի,— կատաղեց Եղիգեյը։— Ուզում ես, որ սատկենք այստեղ, ախր դու էլ կսատկես։— Եվ մի հատ հասցըրեց նրա դեմքին։

Եվ կպան իրար, իրար շրթունք պատռեցին։ Լավ էր հնոցապանը ժամանակին դուրս թռավ շոգեքարշից, բաժանեց նրանց։

Ահա այսպիսին էր Ղազանղապը։ Հիմա նրա նման մարդ չկա։ Հիմա ղազանղապներ չկան։ Վերջինին տանում են թաղելու։ Մնում է, որ հանգուցյալին հանձնես հողին, հրաժեշտի խոսքեր ասես, և վերջ։

Խորհելով այդ մասին, Բորանլի Եղիգեյը մտքում կրկնում էր կիսամոռացած աղոթքները, որպեսզի վավերացնի ընդունված բառերի շարքը, հիշողության մեջ ճշտիվ վերականգնի ատծուն ուղղված մտքերի հաջորդականությունը, քանզի միայն աստված՝ անիմանալի և անտեսանելի, կարող է մարդկային գիտակցության մեջ հաշտեցնել ծագման ու վախճանի, կյանքի և մահվան անհաշտելիությունը։ Երևի հենց դրա համար են հորինվել աղոթքները։ Թե չէ ձայնդ ինչպե՞ս պիտի հասցնես առ աստված։ Հո չե՞ս կանգնի և ատծուն հարցնի, թե ինչո՞ւ է այնպես արել, որ մարդը ծնվի ու մեռնի։ Աշխարհի արարման օրից այդպես է ապրում մարդը։ Համակերպվում է՝ առանց համաձայն լինելու։ Եվ այս աղոթքները անփոփոխ են հնուց ի վեր և նրանցում ասվում է միևնույն բանը. զուր մի տրտնջա, մարդ, և սփոփվիր։ Բայց հազարամյակների ընթացքում ձույլ ոսկու նման հղկված այս խոսքերը վերջինն են վերջիններից, որ ողջը պարտավոր է արտասանել մեռյալի վրա։ Այդ է կարգը։

Եվ մտածում էր Եղիգեյը, որ անկախ այն բանից՝ աստված գոյություն ունի թե ոչ, համենայն դեպս մարդը մեծ մասամբ նրան հիշում է կարիքի դեպքում, որքան էլ դա անվայել բան է։ Երևի դրա համար է ասվում, թե անհավատացյալը աստծուն միտքը չի բերի, մինչև որ գլուխը չցավի։ Դա այդպես է թե ոչ, միևնույն է, աղոթքներ իմանալը անհրաժեշտություն է։

Բորանլի Եղիգեյը նայելով տրակտորում տեղավորված իր երիտասարդ ճամփորդներին, անկեղծորեն ցավում էր և ափսոսում, որ նրանցից ոչ մեկը չգիտի որևիցե աղոթք։ Ինչպե՞ս պիտի նրանք թաղեն միմյանց։ Ինչպիսի՞ խոսքերով պիտի ամ-

փուխն մարդու հեռացումը դեպի անգոյություն։ «Մնաս բարով, ընկեր, կհիշենք»։ Կամ էլ մեկ ուրիշ անհեթեթություն։

Մի անգամ, մարզային կենտրոնում, Եդիգեյը թաղման էր մասնակցում։ Եվ զարմանքից ապուշ էր կտրել։ Գերեզմանոցում ճիշտ այնպես էր, ինչպես ժողովում. դագաղում պառկած հանգուցյալի առջև, թուղթը ձեռքին, ելույթ էին ունենում հռետորները և բոլորը նույնն էին ասում, թե ի՜նչ է աշխատել, ի՜նչ պաշտոններ է վարել, ինչպե՜ս է աշխատել, ո՜ւմ է ծառայել, ինչպե՜ս է ծառայել, այնուհետև երաժշտություն եղավ, և գերեզմանաթումբը ծածկվեց ծաղիկներով։ Եվ ոչ ոք ժամանակ չգտավ մի քանի խոսք ասելու մահվան մասին, ինչպես այդ ասված է աղոթքներում, որոնք դարեր շարունակ պահել են մարդու իմացությունը գոյի և չգոյության հաջորդականության մասին, կարծես թե դրանից առաջ աշխարհում ոչ ոք չի մահացել և դրանից հետո ոչ ոք չի մահանալու։ Խեղճ դժբախտներ, նրանք անմահ էին։ Այդպես էլ հայտարարում էին, հակառակ ակնհայտ ճշմարտությանը. «նա գնաց անմահություն»...

Եդիգեյը լավ գիտեր տեղանքը։ Մանավանդ Բորանլի Կարանարի բարձունքից ամեն ինչ՝ մինչև հեռավոր տարածությունները, լավ երևում էր։ Նա աշխատում էր որքան հնարավոր է ուղիղ բռնել Անա-Բեյիթի ճամփան սարօզեկների միջով, շեղումներ թույլ տալով միայն մի դեպքում, եթե տրակտորներին հարմար լինի շրջանցել խանդակները։

Եվ ամեն ինչ ընթանում էր ինչպես նախատեսված էր։ Չի կարելի ասել հեշտ ու հանգիստ, բայց արդեն անցել էին ճանապարհի մեկ երրորդը... Բորանլի Կարանարը անխոնջ անգանգոցով վարգում էր, նրբորեն որսալով տիրոջ կամքը։ Նրան դողալով հետևում էր կցասայլով տրակտորը, կցասայլից հետո գնում էր անիվավոր «Բելոռուս» էքսկավատորը։

Եվ, այնուամենայնիվ, առջևում նրանց սպասում էին չնախատեսված հանգամանքներ, որոնք, որքան էլ անհավանական հընչի, որոշ ներքին կապ ունեին Սարի-Օզեկ տիեզերակայանում տեղի ունեցող գործերի հետ...

«Կոնվենցիա» ավիակիրը այդ ժամին գտնվում էր իր տեղում, Խաղաղ օվկիանոսի նույն շրջանում, Ալեուտներից դեպի հարավ, Վլադիվոստոկից և Սան-Ֆրանցիսկոյից միևնույն օդային տարածության վրա։

Օվկիանոսի եղանակը չէր փոխվել։ Օրվա առաջին կեսի ընթացքում արեգակը միևնույն կուրացնող լույսով շողում էր անհունորեն փայլփլող ջրային տարածության վրա։ Հորիզոնի վրա չկար մթնոլորտային որևէ փոփոխություն ավետող նշան։

Բուն ավիակրի վրա, բոլոր ծառայությունները գտնվում էին լարված, աշխատանքային կազմ-պատրաստ վիճակում, ներառյալ ավիաթևը և ներքին անվտանգության խումբը, չնայած դրա համար չկային կոնկրետ պատճառներ իրական շրջապատում։ Պատճառները գտնվում էին Գալակտիկայի սահմաններից դուրս։

«Տրամպլին» ուղեծրի միջոցով «Անտառալանջ» մոլորակից ստացված պարիտետ-տիեզերագնացների տեղեկությունները լրիվ շփոթության մատնեցին Միաղեկկենտրոնի ղեկավարներին և հատուկ լիազորված հանձնաժողովի անդամներին։ Շփոթությունն այնքան ուժեղ էր, որ երկու կողմերը որոշեցին նախ անցկացնել առանձին խորհրդակցություններ, որպեսզի քննարկեն ստեղծված դրությունը՝ նախևառաջ ելնելով սեփական շահերից ու դիրքերից, և հետո միայն հավաքվել ընդհանուր քննարկման։

Աշխարհը դեռևս չգիտեր տիեզերքի պատմության մեջ չեղած, չլսված հայտնագործության՝ Անտառալանջ մոլորակի արտաերկրային քաղաքակրթության գոյության մասին։ Նույնիսկ կողմերի իշխանությունները, որոնք խիստ գաղտնի կարգով իրազեկ էին պահվել կատարվածի մասին, առայժմ տեղեկություն չունեին դեպքերի հետագա զարգացման մասին։ Սպասում էին գիտակ հանձնաժողովների համաձայնեցված տեսակետին։ Ավիակրի ամբողջ տարածքի վրա սահմանված էր խիստ կարգ. ոչ ոք, ներառյալ ավիաթևը, իրավունք չուներ թողնելու իր տեղը։ Ոչ ոք, ոչ մի պատճառաբանությամբ իրավունք չուներ հեռանալու նավից և ուրիշ ոչ մի նավ չէր կարող մոտենալ «Կոնվենցիային», հիսուն կիլոմետր շառավղով։ Այդ շրջանով թռչող ինքնաթիռները փոխում էին ընթացքը, որպեսզի երեք հարյուր կիլոմետրից ավելի չմոտենային ավիակրի գտնման վայրին։

Եվ այսպես, կողմերի ընդհանուր նիստը ընդհատվել էր, և յուրաքանչյուր հանձնաժողով, «Դեմիուրգ» ծրագրի իր ղեկավարակիցների հետ քննարկում էր 1—2 և 2—1 պարիտետ— տիեզերագնացների զեկույցները, որոնք հաղորդվում էին գիտության անհայտ Անտառալանջ մոլորակից։

Նրանց խոսքերը գալիս էին աստղագիտական անհեռակայելի հեռվից.

«Լսեցե՛ք, լսեցե՛ք,

Մենք միջգալակտիկական հաղորդում ենք անում Երկրի համար։ Անհնարին է բացատրել այն ամենը, ինչը չունի երկրային անվանում։ Թեև ընդհանուր շատ բան կա։ Նրանք մարդանման էակներ են, նույնպիսի մարդիկ, ինչ որ մենք։ Կեցցե համաշխարհային էվոլյուցիան։ Այստեղ նույնպես էվոլյուցիան մշակել է հոմինիդի մոդելը ունիվերսալ սկզբունքով։ Դրանք հոմինիդ-այլմոլորակայինի հիանալի տեսակներ են։ Թուխ մաշկ, կապույտ մազեր, յասամանագույն և կանաչ աչքեր՝ սպիտակ, գանգուր թարթիչներով։

Մենք նրանց տեսանք կատարելապես թափանցիկ սկաֆանդըրներով, երբ միանում էին ուղեծրային կայանին։ Նրանք ժըպտացին նավախելից, մեզ հրավիրելով իրենց մոտ։

Եվ մենք մի քաղաքակրթությունից անցանք մյուսին։

Թռչող պտտասարքը մեկնեց, և մենք լույսի արագությամբ, որ փաստորեն ոչ մի կերպ չզգացվեց նավում, շարժվեցինք տիեզերք, հաղթահարելով ժամանակի վաղքը։ Առաջին բանը, որին ուշք դարձրինք և որը մեզ անսպասելի թեթևություն բերեց, դա անկշռելիության վիճակի բացակայությունն էր։ Ի՞նչ կերպ են հասել դրան, մենք առայժմ չենք կարող բացատրել։ Խառնելով ռուսերեն և անգլերեն բառերը, նրանք արտասանեցին առաջին նախադասությունը. «Վել քոմ նաշ Զվեզդա»։

Մենք հասկացանք, որ անհրաժեշտ նրբամտություն ցուցաբերելու դեպքում հնարավոր կլինի մտքեր փոխանակել։ Այդ կապտահեր, բարձրահասակ, մոտ երկումետրանոց արարածները հինգ հոգի էին. չորս տղամարդ, մի կին։ Կինն աչքի էր ընկնում ոչ թե բարձր հասակով, այլ զուտ կանացի ձևերով և համեմատաբար սպիտակ մաշկով,— բոլոր կապտահեր անտառալանջցիները բավական թուխ են, մեր հյուսիսային արաբների նման։ Առաջին իսկ րոպեներից մենք վստահություն զգացինք նրանց նկատմամբ։

Նրանցից երեքը թռչող սարքի օդաչուներն էին, իսկ կինը և մի տղամարդը՝ երկրային լեզուների գիտակներ։ Նրանք են առաջին անգամ տիեզերական ռադիոորսման միջոցով ուսումնասիրել և սիստեմավորել անգլերեն և ռուսերեն բառերը և կազմել երկրային փոքրիկ բառարան։ Մեր հանդիպման պահին նրանք յուրացրել էին ավելի քան երկու և կես հազար բառ ու տերմին։ Լեզվական այդ պաշարի օգնությամբ էլ սկսվեց մեր հաղորդակցությունը։ Իսկ իրենք խոսում են մի լեզվով, որ մեզ համար, բնա-

կանաբար, միանգամայն անհասկանալի է, բայց հնչողությամբ նման է իսպաներենին։

«Պարիտետից» հեռանալուց տասնմեկ ժամ հետո մենք դուրս եկանք Արեգակնային համակարգության սահմաններից։

Այդ անցումը մեր աստղային համակարգությունից կատարվեց աննկատելի, առանձնապես ոչնչով աչքի չընկավ։ Տիեզերքի նյութն ամենուրեք միանման է։ Մեր ընթացքի հետ, դիմացում (ըստ երևույթին, այդ պահին այդպես էր այլհամակարգային մարմինների դիրքն ու վիճակը), հետզհետե պայծառանում էր կարմրաշառայլ հրացոլքը։ Հրացոլքը ծավալվում էր հեռվում, լուծվում լուսային անսահման տարածության մեջ։ Այդ ընթացքում անցանք մի քանի մոլորակների մոտով, որոնց մի կողմը այդ ժամին ստվերի մեջ էր, մյուս կողմը՝ լույսի։ Բյուրավոր արեգակներ ու լուսիններ էին լողում տեսանելի ողջ տարածության մեջ։ Մենք կարծես գիշերից տարվում էինք ցերեկ։ Եվ հանկարծ ընկանք շլացուցիչ մաքուր և անեզր լույսի մեջ, որ բխում էր մինչև օրս անհայտ երկնքում գտնվող վիթխարի և հզոր արեգակից։

— Արդեն մեր Գալակտիկայում ենք։ Ահա փայլում է մեր Պահողը։ Շուտով կերևա Անտառալանջը,— հայտարարեց կինլեզվագետը։

Եվ իրոք, նոր տիեզերքի անչափելի բարձրության վրա տեսանք մեզ համար նոր Արեգակ, լուսատու, Պահող անվանյալ։ Ճառագայթման ուժով և մեծությամբ Պահողը գերազանցում է մեր Արեգակին։ Ի դեպ, այստեղի լուսատուի հենց այդ յուրահատկությունը, ինչպես նաև այն, որ Անտառալանջ մոլորակում օրուգիշերը կազմված է 28 ժամից, մենք հակված ենք բացատրելու երկրակենսաբանական բազմաթիվ տարբերություններով, որ կան այստեղի աշխարհի և մերի միջև։

Բայց այդ ամենի մասին մենք կաշխատենք հաղորդել հաջորդ անգամ, կամ «Պարիտետ» վերադառնալիս, իսկ այժմ անցողակի մի քանի կարևոր տեղեկություններ։ Անտառալանջ մոլորակը վերևից նման է մեր Երկրին, շրջապատված է նույնպիսի մթնոլորտային ամպերով։ Բայց մոտիկից, մակերևույթից հինգվեց հազար մետր տարածության վրա,— անտառալանջցիները մեզ համար կատարեցին հատուկ դիտաթռիչք, բացվում է հազվադյուտ գեղեցիկ տեսարան. լեռներ, գագաթներ, բլուրներ համատարած վառ կանաչ ծածկույթով, դրանց միջև՝ գետեր, ծովեր

ու լճեր, իսկ մոլորակի որոշ, մանավանդ մերձեղբյա և բևեռային մասերում ընկած են մեռյալ անապատների վիթխարի գոտիներ, որտեղ կանգնած են փոշու մրրիկներ։ Բայց մեզ վրա ամենաուժեղ տպավորությունը գործեցին քաղաքներն ու ավանները։ Կոնստրուկտորական կառույցների այդ կղզիները՝ Անտառալանջի բնանկարի մեջ, վկայում են ուրբանիզացիայի բացառիկ բարձր մակարդակի մասին։ Նույնիսկ Մանհաթթանը չի կարող չնչին իսկ չափով համեմատվել այս մոլորակի կայտառհեր բնակիչների քաղաքաշինության նվաճումների հետ։

Անտառալանջցիները իրենցից ներկայացնում են Տիեզերքի բանական արարածների եզակի տեսակ։ Հղիության շրջանը տևում է տասնմեկ անտառալանջային ամիս։ Կյանքի տևողությունը շատ է, բայց այնուամենայնիվ, հասարակության գերագույն խնդիրը և գոյության իմաստը նրանք համարում են կյանքի երկարացումը։ Միջին հաշվով նրանք ապրում են հարյուր երեսուն, հարյուր հիսուն, ոմանք մինչև երկու հարյուր տարի։ Մոլորակն ունի ավելի քան տասը հազար միլիարդ բնակիչ։

Այժմ մենք ի վիճակի չենք որոշ չափով սիստեմավորված շարադրել կայտառհերների ապրելակերպին ու քաղաքակրթությանը վերաբերող ամեն բան։ Այդ պատճառով էլ մասնակի հաղորդում ենք այն մասին, ինչ ամենից շատ է մեզ զարմանք պատճառել այս աշխարհում։

Նրանք կարողանում են ստանալ արեգակնային կամ ավելի ճիշտ պահողային էներգիա և այդ էներգիան վերածել ջերմայինի կամ էլեկտրականի՝ օգտակար գործողության բարձր գործակցով, որը գերազանցում է մեր հիդրոտեխնիկական միջոցները, և մի բան, որ բացառիկ կարևոր է, նրանք էներգիա են սինթեզում օդի ցերեկային և գիշերային ջերմաստիճանների տարբերությունից։

Նրանք սովորել են ղեկավարել կլիման։ Երբ մենք դիտաթռիչք էինք կատարում մոլորակի վրա, թռչող սարքը ճառագայթման եղանակով իրենց կուտակման տեղերից ակնթարթաբար ցրեց ամպն ու մշուշը։ Մեզ հայտնի դարձավ, որ նրանք ունակ են ներգործելու օդային զանգվածների և օվկիանոսների ու ծովերի ջրային հոսանքների շարժման վրա։ Նույն ձևով կարգավորում են մոլորակի մակերևույթի խոնավացման պրոցեսը և ջերմաստիճանային ռեժիմը, ավելին, նրանք սովորել են կառավարել գրավիտացիան, և դա օգնում է նրանց միջաստեղային թռիչքների մեջ։

Համենայն դեպս, նրանց առջև ծառացել է վիթխարի մի խնդիր, որին, ինչքան մեզ հայտնի է, դեռևս չենք բախվել երկրում։ Նրանք չեն տառապում երաշտից, որովհետև կարողանում են ղեկավարել կլիման։ Սննդամթերքի արտադրության մեջ նրանք առայժմ չգիտեն ինչ է դեֆիցիտը։ Եվ դա բնակչության այդպիսի հսկայական քանակի դեպքում, որ ավելի քան երկու անգամ գերազանցում է Երկրի մարդկանց թիվը։ Բայց մոլորակի զգալի մասը հետզհետե անպետքանում է կյանքի համար։ Այդպիսի տեղերում մեռնում է ամենայն կենդանի բան։ Դա, այսպես կոչված, ներքին չորացման երևույթն է։ Մեր դիտաթռիչքի ժամանակ Անտառալանջի հարավ-արևելյան մասում տեսանք փոշու մրրիկներ։ Մոլորակի ընդերքում տեղի ունեցող ինչ-որ ահեղ ռեակցիաների հետևանքով, (հավանորեն դա նման է մեր հրաբխային պրոցեսներին, թեև դա երևի ճառագայթային դանդաղ, ցրված ժայթքման ինչ-որ ձև է) հողի մակերեսային շերտը քայքայվում է, կորցնում իր կազմությունը, նրա մեջ այրվում-ոչնչանում են հողաստեղծող նյութերը։ Անտառալանջի այդ մասում Սահարայի մեծության մի անապատ տարեցտարի, քայլ առ քայլ գրավում է կապտահեր այլմոլորակայինների կենսական տարածությունը։ Նրանց համար սա ամենամեծ աղետն է։ Նրանք առայժմ չեն սովորել կառավարել մոլորակի խորքում տեղի ունեցող պրոցեսները։ Այդ ահեղ, ներքին չորացման երևույթի դեմ պայքարելու համար մոբիլիզացված են լավագույն ուժերը, վիթխարի գիտական և նյութական միջոցներ։ Նրանք լուսին չունեն իրենց աստղային համակարգում, բայց գիտեն մեր լուսնի մասին և արդեն եղել են այնտեղ։ Նրանք ենթադրում են, թե մեր լուսինը նույնպես, հավանորեն, ենթարկվել է նույնպիսի բանի։ Լսելով այդ, մենք որոշ իմաստով մտահոգվեցինք։ Չէ՞ որ Լուսնից մինչև Երկիր այնքան էլ հեռու չի։ Պատրա՞ստ ենք արդյոք նման հանդիպման։ Եվ արտաքին ու ներքին բնույթի ինչպիսի հետևանքներ կարող են լինել։ Մարդիկ չե՞ն մտածի արդյոք, թե շատ բան են կորցրել իրենց մտային զարգացման մեջ, երկրի հավերժական մեկուսացման պատճառով։

Ներկայումս Անտառալանջի գիտական շրջանակներում անցկացվում է համամոլորակային բանավեճ, արժե՞ արդյոք ջանքեր թափել ներքին չորացման գաղտնիքը լուծելու փորձերի վրա և միջոցներ որոնել այդ պոտենցիալ աղետի կասեցման համար, թե հարկավոր է առանց ժամանակ կորցնելու Տիեզերքում գտնել նոր

մոլորակ, որ համապատասխանի իրենց կենսական պահանջմունքներին և ժամանակին սկսել զանգվածային տեղափոխությունը նոր բնակավայր, Անտառալանջի քաղաքակրթությունը փոխադրելու և վերականգնելու նպատակով։ Առայժմ դեռևս հայտնի չէ, թե որտե՞ղ, ի՞նչ նոր մոլորակի է սևեռված նրանց հայացքը։ Համենայն դեպս, այժմյան մոլորակի վրա դեռ կապրեն միլիոն ու միլիոն տարի, և զարմանալի է, որ այժմվանից անհանգստացած են այնքան հեռավոր ապագայի համար և համակված են այնպիսի կրակոտ եռանդով, կարծես թե այդ խնդիրը վերաբերվում է այսօր ապրող ազգաբնակչությանը։ Հետաքրքիր է, որ ոչ մի գլխում չի փայլատակել սուր միտք. «Մեզնից հետո թեկուզ ջրհեղեղ»։ Մենք ամաչեցինք այդ մտքից, երբ իմացանք, որ համամոլորակային ընդհանուր արտադրանքի զգալի մասը գնում է ընդերքի ներքին չորության կասեցման ծրագրի վրա։ Նրանք փորձում են պատնեշ ստեղծել բազմահազար կիլոմետր երկարությամբ, աստիճանաբար սողացող անապատի սահմանով մեկ, չափազանց խոր հորատանցքեր փորելու ճանապարհով դեպի ընդերք են ուղղում այնպիսի երկարատև, չեզոքացնող նյութեր, որոնք, նրանց ենթադրությամբ, կունենան հարկավոր ազդեցություն մոլորակի ներմիջուկային ռեակցիաների վրա։

Անշուշտ այստեղ կան և պետք է լինեին՛ հասարակական կեցության պրոբլեմներ, այն, ինչի վրա դարեր շարունակ չարչարվում է բանականությունը կրելով իր ծանր խաչը;— կենցաղային, բարոյական, մտային բնույթի պրոբլեմներ։ Միանգամայն պարզ է, որ այնքան էլ հեշտ չի ընթանում ավելի քան տասը միլիարդ բնակիչների համակեցությունը, ինչպիսի բարորության էլ որ հասած լինեն։ Բայց սրա հետ մեկտեղ, ամենազարմանալին այն է, որ նրանք չգիտեն ինչ է պետությունը, իբրև այդպիսին, չգիտեն ինչ է զենքը, չգիտեն ինչ է պատերազմը։ Մենք չգիտենք, թերևս պատմական անցյալում նրանց մոտ եղել են և պատերազմներ, և պետություններ, և փող, և դրանց ուղեկցող հասարակական հարաբերությունների բոլոր կատեգորիաները, սակայն, տվյալ ժամանակաշրջանում, նրանք պատկերացում չունեն բոնության այնպիսի ինստիտուտների մասին, որպիսին պետությունն է, և պայքարի այնպիսի ձևի մասին, որպիսին պատերազմն է։ Եթե ստիպված լինենք բացատրելու Երկրի վրա տեղի ունեցող մեր անվերջանալի պատերազմների էությունը, արդ-

յոք նրանց աչքին դա չի՞ թվա անիմաստ, ավելին՝ հարցերի լուծ-ման բարբարոսական եղանակ։

Նրանց ամբողջ կյանքը կազմակերպված է միանգամայն այլ սկզբունքների հիման վրա, որոնք մեզ համար այնքան էլ հասկանալի չեն և այնքան էլ մատչելի չեն, մեր երկրային ստերեոտիպ մտածողության պատճառով։

Նրանք հասել են մոլորակային կոլեկտիվ գիտակցության այնպիսի մակարդակի, որ կտրականապես բացառում է պատերազմն իբրև պայքարի ձև, և մեզ մնում է միայն ենթադրել, թե ամենայն հավանականությամբ, քաղաքակրթության այդ ձևը ամենաառաջավորն է տիեզերական միջավայրի հնարավոր ամբողջ տարածության սահմաններում։ Հավանաբար նրանք հասել են գիտական զարգացման այն աստիճանին, երբ ժամանակի ու տարածության հումանիզացիան դառնում է բանական էակների կենսագործունեության գլխավոր իմաստը և հետևաբար աշխարհի էվոլյուցիայի շարունակությունը իր նոր, բարձրագույն, հավիրժական փուլում։

Մենք միտք չունենք հակադրելու անհակադրելի բաները։ Ժամանակի ընթացքում մեր Երկիր մոլորակում նույնպես մարդիկ կհասնեն նույնքան մեծ առաջադիմության, մենք, հպարտանալու շատ բան ունենք նաև այժմ, և համենայն դեպս մեզ հանգիստ չի տալիս ճնշող մի միտք,— իսկ ի՞նչ, եթե Երկրի մարդկությունը գտնվում է ողբերգական մոլորության մեջ, համոզելով ինքն իրեն, իբր պատմությունը, դա պատերազմների պատմություն է։ Իսկ ի՞նչ, եթե կարգացման այդ ճանապարհը ի սկզբանե եղել է սխալ, փակուղային։ Այդ դեպքում ո՞ւր ենք գնում մենք և դա ո՞ւր կհասցնի մեզ։ Եվ եթե այդ այդպես է, արդյո՞ք մարդկությունը քաջություն կունենա ընդունելու այդ և խուսափելու ընդհանուր հեղակործանումից։ Ճակատագրի բերումով դառնալով արտաերկրային հասարակական կյանքի առաջին ականատեսները, մենք ունենք բարդ ապրումներ. վախ երկրայինների ապագայի նկատմամբ և հույս, քանի որ աշխարհում կա բարձր համակեցության օրինակ, որի առաջընթաց շարժումը դուրս է հակասությունների այն ձևերից, որոնք լուծվում են պատերազմներով...

Անտառալանջցիները գիտեն Երկրի գոյության մասին, տիեզերքի նրանց համար գերհեռավոր սահմաններում։ Նրանք լի են երկրայինների հետ հաղորդակցվելու ցանկությամբ ու միայն

բնական հետաքրքրությունից, այլև, ինչպես կարծում են նրանք, նախ և առաջ հանուն զուտ բանականության ֆենոմենի հաղթանակի, հանուն քաղաքակրթությունների փորձի փոխանակման, հանուն տիեզերական բանականություն կրողների մտքի և հոգու զարգացման նոր դարաշրջանի։

Այս ամենի մեջ նրանք նախատեսում են շատ ավելին, քան կարելի է կարծել։ Նրանց հետաքրքրությունը երկրայինների նկատմամբ թելադրված է նաև հետևյալով. համաշխարհային բանականության այս երկու ճյուղերի ընդհանուր ջանքերի համախմբման մեջ նրանք տեսնում են բնության մեջ կյանքի անսահման հաջորդականության պահպանման հիմնական ուղին, նկատի ունենալով այն, որ որևէ էներգիա անխուսափելիորեն սպառվում է, և ուշ թե շուտ ուզածդ մոլորակը ժամանակի ընթացքում դատապարտված է կործանման... Նրանք «աշխարհի կործանման» խնդրով մտահոգված են միլիարդավոր տարիներ առաջ և արդեն մշակում են հաղորդակցման նոր հիմքի կազմակերպման տիեզերագիտական նախագծեր՝ Տիեզերքի ամենայն կենդանի էակի համար...

Իրենց տրամադրության տակ ունենալով լույսի արագությամբ թռչող սարքեր, այժմ արդեն նրանք կարող են այցելել մեր Երկիրը։ Բայց չեն ուզում դա անել առանց երկրայինների համաձայնության և հրավերի։ Չեն ցանկանում Երկիր ներխուժել իբրև անկոչ հյուրեր։ Ընդ որում, նրանք հասկացնել տվին, որ վաղուց էին ծանոթանալու առիթ փնտրում։ Այն ժամանակից ի վեր, ինչ մեր տիեզերական կայանները ուղեծրերում վեր են ածվել երկարատև բնակավայրերի, իրենց համար պարզ է դարձել, որ մոտենում է հանդիպման ժամանակը, և որ իրենք պետք է նախաձեռնություն ցույց տան։ Նրանք խնամքով պատրաստվել են, սպասել հարմար առիթի։ Այդ առիթը բաժին ընկավ մեզ, քանի որ մենք գտնվում էինք միջանկյալ միջավայրում՝ ուղեծրային կայանում...

Մեր ժամանումը նրանց մոլորակ, հասկանալի է, սենսացիա առաջացրեց։ Այս կապակցությամբ եթեր միացվեց գլոբալ հեռուստակապի համակարգը, որ գործադրվում է սոսկ մեծ տոների ժամանակ։ Մեր շուրջը պայծառացող օդում, իրականի նման, մեր կողքին տեսնում էինք դեմքեր և տարրկաներ, որոնք գտնըվում էին հազար ու հազար կիլոմետր հեռավորության վրա, և միաժամանակ մենք կարող էինք փոխկապի մեջ մտնել նրանց հետ. նայել իրար, ժպտալ, ձեռք սեղմել, խոսել, ուրախ, բուռն

բացականչելով ու ծիծաղելով, ճիշտ ինչպես անմիջական շփման ժամանակ։ Որքա՜ն գեղեցիկ են անտառալանչցիները, և որքա՜ն տարբեր են իրարից, նույնիսկ կապույտ մազերի գույնը տարբեր է. մուգ կապույտից մինչև թանձր ծովականաչ երանգի, իսկ ծեռունիները, պարզվում է, ճերմակում են մերոնց նման։ Եվ մարդաբանական տիպերը նույնպես տարբեր են, քանի որ նրանք ներկայացնում են տարբեր էթնիկական խմբեր։

Այս ամենի և շատ այլ ոչ պակաս զարմանալի բաների մասին կպատմենք «Պարիտետ» կամ Երկիր վերադառնալիս։ Իսկ այժմ ամենագլխավորի մասին։ Անտառալանչցիները խնդրում են մեզ «Պարիտետի» կապի համակարգի միջոցով հաղորդել իրենց ցանկությունը՝ այցելելու մեր մոլորակը, երբ որ դա հարմար լինի երկրայիններին։ Իսկ մինչ այդ, նրանք առաջարկում են համաձայնեցնել միջաստղային կայանի միջանկյալ սարքավորման ծրագիր, կայան, որ սկզբնական շրջանում կծառայի իբրև նախնական հանդիպումների վայր, հետագայում կդառնա մշտական բազա՝ փոխայցելությունների ճանապարհին։ Մենք խոստացանք մեր համամոլորակայիններին տեղյակ դարձնել այդ առաջարկների մասին։ Սակայն այն կապակցությամբ մեզ ամենից ավելի հուզում է այլ բան։

Մենք՝ երկրայիններս, պատրա՞ստ ենք արդյոք նման միջգալակտիկական հանդիպումների և իբրև մտածող էակներ բավարար չափով հասո՞ւն ենք արդյոք դրա համար։ Կարո՞ղ ենք արդյոք մեր մեկուսացվածության և գոյություն ունեցող հակասությունների պայմաններում հանդես գալ միասնաբար՝ ինքներս մեզ լիազորելով մարդկային ամբողջ ցեղի անունից, ամբողջ երկրի անունից։ Այժմ խնդրում ենք ձեզ, մրցակցության, կեղծ առաջնության պայքարի նոր բռնկումից խուսափելու համար այդ հարցի լուծումը հանձնել ՄԱԿ։ Խնդրում ենք նաև չչարաշահել վետոյի իրավունքը, այլ, թերևս, այս անգամ, բացառության կարգով չեզոքացնել այդ իրավունքը։ Մեզ համար դառն ու ծանր է մտածել նման բաների մասին, երբ գտնվում ենք անդրսահմանային տիեզերական հեռվում, բայց մենք երկրային ենք և բավական լավ գիտենք մեր Երկիր մոլորակի բնակիչների բարքերը։

Վերջապես մեր մասին, ևս մեկ անգամ մեր քայլի մասին։ Մենք գիտակցում ենք, թե մեր անհետացումը ուղեծրային կայանից ինչպիսի տարակուսանքի և այնուհետև ինչպիսի արտակարգ միջոցառումների տեղիք է տվել։ Մենք խորապես ցավում

ենք, որ այդքան տագնապ ու անհանգստություն ենք պատճառել։ Սակայն աշխարհում սա այն եզակի դեպքն է, երբ մենք չէինք կարող, իրավունք չունեինք հրաժարվելու մեր կյանքի ամենամեծ գործից։ Լինելով խստագույն կարգուկանոնի մարդիկ, մենք, հանուն նման նպատակի, պարտավոր էինք վարվել հակառակ կարգուկանոնի։

Թող դա մեր խղճի պարտքը լինի և թող մենք կրենք համապատասխան պատիժ։ Բայց առայժմ մոռացեք այդ մասին։ Ունկնդիր եղեք։ Մենք ազդանշան ենք հաղորդել Տիեզերքից։ Մենք նշան ենք տալիս մինչև այժմ անհայտ գալակտիկական համակարգից՝ լուսատու Պահողից։ Կապտահեր անտառալանչցիները արդի ամենաբարձրագույն քաղաքակրթություն սերմողներն են։ Հանդիպումը նրանց հետ կարող է գլոբալ փոփոխություն առաջացնել մեր ամբողջ կյանքում, մարդկային ողջ ցեղի ճակատագրում։ Կհամարձակվե՞նք արդյոք դիմել այդ քայլին, բնականաբար նախ և առաջ պահպանելով Երկրի շահերը...

Այլմոլորակայինները մեզ ոչնչով չեն սպառնում։ Գոնե մեզ այդպես է թվում։ Բայց փոխառնելով նրանց փորձը, մենք կարող էինք հեղաշրջում կատարել մեր կեցության մեջ, սկսած աշխարհի նյութական միջավայրից էներգիայի հանույթի եղանակից մինչև առանց զենքի, առանց բռնության, առանց պատերազմների ապրելու կարողությանը։ Այս վերջինը կարող է խորթ հընչել, բայց մենք հանդիսավորապես հավաստիացնում ենք, որ Անտառալանչ մոլորակում հենց այդպես է դասավորված բանական արարածների կյանքը, որ նրանք հասել են հենց այդպիսի նվիրական կատարելության, ղանգվածի տեսակետից բնակեցնելով նույնպիսի երկրակենսաբանական վայր, ինչպիսին Երկիրն է։ Լինելով տիեզերական, բարձր քաղաքակրթության մտածելակերպի կրողներ, նրանք պատրաստ են ազատ հաղորդակցություն ունենալ իրենց բանական եղբայրակիցների հետ, երկրայինների հետ, այնպիսի ձևերով, որոնք կհամապատասխանեն երկու կողմերի պահանջներին ու արժանապատվությանը։

Հրապուրված, ցնցված արտաերկրային քաղաքակրթության հայտնագործությամբ, մենք, համենայն դեպս, ծարավի ենք որքան կարելի է շուտ վերադառնալ, որպեսզի մարդկանց պատմենք այն ամենի մասին, ինչի ականատեսը դարձանք, ընկնելով անդրերկրային Գալակտիկա, Պահող լուսատուի համակարգության մոլորակներից մեկը։

*Մենք մտադիր ենք 28 ժամից, այսինքն՝ մեկ օրուգիշերից հետո, ռադիոկապի տվյալ սեանսից հետո, այստեղից թռչել դեպի մեր «Պարիտետը»։ Ժամանելով «Պարիտետ», մեզ լիովին կդնենք Միաղեկկենտրոնի տնօրինության տակ։*

*Իսկ առայժմ, ցտեսություն։ Արեգակնային համակարգություն թռչելուց առաջ կհաղորդենք «Պարիտետ» հասնելու մեր ժամանակի մասին։*

*Սրանով ավարտում ենք մեր առաջին հաղորդումը Անտառայանց մոլորակից։ Մինչ նոր հանդիպում։ Շատ ենք խնդրում, հայտնեք մեր ընտանիքներին, որ չանհանգստանան...*

*Պարիտետ — տիեզերագնաց 1—2,*
*Պարիտետ — տիեզերագնաց 2—1»։*

*«Պարիտետ» ուղեծրային կայանում տեղի ունեցած արտակարգ իրադրության հետազոտման համար հատուկ լիազորված հանձնաժողովների անջատ նիստը «Կոնվենցիա» ավիակրի վրա ավարտվեց նրանով, որ երկու հանձնաժողովները՝ լրիվ կազմով, թռան խորհրդակցելու վերադաս ատյաններում։ Մի ինքնաթիռը թռչելով ավիակրի տախտակամածից, ընթացքն ուղղեց դեպի Սան-Ֆրանցիսկո, մյուսը՝ մի քանի րոպեից, հակառակ ուղղությամբ՝ Վլադիվոստոկ։*

*«Կոնվենցիա» ավիակիրը գտնվում էր նույն տեղում, իր մշտական տեղակայման վայրում՝ Խաղաղ օվկիանոսում, Ալեուտներից հարավ... Ավիակրի վրա տիրում էր խիստ կարգուկանոն։ Ամեն մեկն իր գործին էր։ Ամեն մեկը կազմ-պատրաստ... Եվ բոլորը լռություն էին պահպանում...*

Գնացքներն այս կողմերում գնում էին արևելքից արևմուտք և արևմուտքից արևելք:

Իսկ երկաթուղու շուրջը, այս կողմերում, փռված էին վիթխարի ամայի տարածություններ՝ Սարի-Օզեկներ, Դեղին տափաստանների միջնակները...

*Արդեն ետևում էր մնացել Անա-Բեյիթ տանող ճանապարհի մեկ երրորդը։ Արեգակը, որ սկզբում արագ բարձրացել էր երկրի վրա, այժմ կարծես կանգնած լիներ մի կետում՝ սարօզեկների վրա։ Ուրեմն օրը կեսօր էր դարձել։ Սկսել էր կեսօրվա նման այրել։*

Բորանլի Եդիգեյը մեկ ժամացույցին նայելով, մեկ՝ արևակին, մեկ՝ դիմացը փռված տափաստանային հեռաստաններին, հաշվում էր, որ առայժմ ամեն ինչ ճիշտ է ընթանում։ Նա գնում էր առաջվա նման ուղտին բազմած, նրան հետևում էր կցասայլով տրակտորը, կցասայլի ետևից՝ անվավոր էքսկավատոր «Բելոռուսը», իսկ շեկ Ջոլբարս շունը վազում էր մի փոքր կողքանց։

«Պարզվում է, որ մարդու գլուխը ոչ մի վայրկյան չի կարող չմտածել։ Ուրեմն այդպես է ստեղծված այս հիմար անոթը՝ ուզես-չուզես, միևնույն է, մտքից միտք է ծնվում, և այդպես անվերջ, մինչև, երևի, մեռնելդ»։

Այս հեգնական հայտնագործությունը Եդիգեյն արեց, նկատելով, որ ամբողջ ճանապարհին ինքը շարունակ մտածում է։ Մտքերը հետևում էին մտքերին, ինչպես ծովի ալիքներն ալիքներին։ Մանկության ժամանակ, քամոտ եղանակին, նա ժամերով դիտում էր, թե ինչպես էին Արալյան ծովի հեռաստաններից հայտնվում սպիտակ, վազող բուրունները և ինչպես էին փրփրուն բաշերով մոտենում՝ ալիքից ալիք ծնելով։ Այդ շարժման մեջ միաժամանակ տեղի էր ունենում ծնունդ, կործանում և դարձյալ ծնունդ և ծովի կենդանի նյութի մահացում։ Այն ժամանակ ինքը՝ փոքրիկ տղա, ցանկանում էր ճայ դառնալ, թռչել ալիքների վրայով, պսպղուն ջրացայտքերի վրայով և վերևից նայել, թե ինչպես է ապրում մեծ ջուրը։

Աշնանամուտի սարօզեկները՝ իրենց թափանցիկ, թախծալի մերկությամբ, սնգսնգացող ուղտի համաչափ դոփյունը Բորանլի Եդիգեյին տրամադրում էին ճամփորդական մտորումների, և նա հլու անձնատուր էր լինում դրանց, մանավանդ որ դեմը երկար ճանապարհ էր և ոչ մի բան չէր խանգարում մտքերի առաջընթացին։ Կարանարը, ինչպես միշտ, երկար ճանապարհ գնալիս տաքանում, եփ էր գալիս և նրանից փչում էր բարկ մշկահոտ։ Այդ հոտը քիթն էր ընկնում ուղտի բաշից ու վզից։ «Դեհ, դեհ,— բավականությամբ քմծիծաղ էր տալիս Եդիգեյը,— նշանակում է, արդեն ոտից գլուխ քափ ու քրտինքի մեջ ես։ Գազա՛ն։ Համա թե անպիտանն ես, անպիտանը»։

Եդիգեյը մտածում էր նաև անցած օրերի մասին, գործերի, դեպքերի մասին, երբ Ղազանղապը դեռ ողջ-առողջ էր, և հիշողությունների շարանի մեջ անսպասելի գլուխ բարձրացրեց վաղեմի, դառը կսկիծը։ Աղոթքներն էլ չօգնեցին։ Նա նորից ու նորից լսելի շշնջում էր, կրկնում, որպեսզի վանի, հեռացնի, թաք-

ցրնի վերադարձած ցավը։ Բայց հոգին չէր խաղաղվում։ Մռայլվեց Բորանլի Եդիգեյը, սկսեց տեղի-անտեղի հարվածել ջանասիրաբար սնգսնգացող ուղտի կողերին, գլխարկի հովարը քաշեց աչքերին, այլևս չուռ չեկավ իրեն հետևող տրակտորի կողմը։ Թող գան ետևից, ետ չընկնեն, ի՞նչ գործ ունեն այդ խակ ջահելները վաղեմի պատմության հետ, որի մասին նույնիսկ կնոջ հետ ոչ մի բառ չի փոխանակել, բայց որը Ղազանղապը լուծեց, ինչպես միշտ, իմաստուն և ազնիվ։ Հենց միայն նա կարող էր դա լուծել, թե չէ Եդիգեյը վաղուց թողած-գնացած կլիներ այս Բորանլի կիսակայարանից...

Այն թվականին, հիսունմեկի տարեվերջի ձմռանը, կիսակայարան եկավ մի ընտանիք. մարդ ու կին և երկու երեխա, երկուսն էլ տղա, մեծը՝ Դաուլը, հինգ տարեկան էր, փոքրը երևի՝ երեք։ Փոքրի անունը Էրմեկ էր։ Իսկ ինքը՝ Աբութալիպ Կուտթիբաևը Եդիգեյի հասակակիցն էր։ Նա դեռևս պատերազմից առաջ, երիտասարդ տղա, մի տարի ուսուցչություն էր արել աուլի դըպրոցում, իսկ 41-ի ամռանը, առաջին իսկ օրից զորակոչվել էր ռազմաճակատ։ Ուրեմն, Զարիպայի հետ ամուսնացել էին արդեն պատերազմի վերջում կամ պատերազմից անմիջապես հետո։ Նա նույնպես, մինչև իրենց տեղափոխությունը եղել է ցածր դասարանների ուսուցչուհի։ Եվ ահա ճակատագիրը նրանց պարտադրել էր, քշել էր սարոզեկներ, Բորանլի։

Որ նրանք լավ կյանքից չէին ընկել սարոզեկների խորքերը, իսկույն պարզ դարձավ։ Աբութալիպն ու Զարիպան, անշուշտ, կարող էին աշխատանքի տեղավորվել նաև ուրիշ տեղերում, բայց, ըստ երևույթին, հանգամանքներն այնպես էին դասավորվել, որ նրանք ուրիշ ելք չէին ունեցել։ Սկզբում բորանլիցիները մտածեցին, թե նրանք երկար չեն մնա այստեղ, չեն դիմանա, կփախչեն որքան աչքը կտրում է։ Սրա՞նց նմաններն են եկել ու գնացել։ Այդ կարծիքին էին նաև Եդիգեյը և Ղազանղապը։ Բայց համենայնդեպս Աբութալիպի ընտանիքի նկատմամբ անմիջապես ձևավորվեց հարգալից վերաբերմունք։ Կարգին, կուլտուրական մարդիկ էին։ Կարիքավոր։ Աշխատում էին բոլորի նման՝ մարդն էլ, կինն էլ։ Եվ շպալներով կռճափայտ էին կրում, և ձնահյուսերի ժամանակ պայքարում։ Մի խոսքով, ինչ-որ հասնում էր ուղեգծային բանվորին, այն էլ անում էին։ Եվ պետք է ասել, որ լավ, հաշտ ու համերաշխ ընտանիք էր, թեև դժբախտ, որովհետև պարզվեց, որ Աբութալիպը գերմանացու գերի է եղել։ Այդ ժա-

մանակ թվում էր, թե արդեն մարել էին պատերազմական տարիների կրքերը։ Նախկին ռազմագերիներին այլևս չէին վերաբերվում իբրև դավաճանների և թշնամիների։ Իսկ բորանլիցիները նման բաների վրա գլուխ չէին ցավեցնում։ Դե՜, մարդը գերի է եղել, հետո ի՞նչ, պատերազմը հաղթանակով վերջացել է, ինչ փործանք ասես որ չի եկել մարդկանց գլխին այն սոսկալի համաշխարհային աղետի ժամանակ։ Հրեն, դեռ քանի-քանիսն են մինչև օրս աշխարհե աշխարհ թափառում։ Պատերազմի ուրվականը դեռ կրնկակոխ հետևում է... Դրա համար էլ բորանլիցիները առանձնապես հարցուփործով չնեղեցին նրանց, ինչո՞ւ մարդկանց հոգին թունավորեն, առանց այդ էլ, երևի քիչ դարդ ու ցավ չեն տեսել։

Իսկ ժամանակ անց այնպես եղավ, որ ինքն ու Աբութալիպը մի տեսակ աննկատելի բարեկամացան։ Խելոք մարդ էր։ Եդիգեյին դուր էր գալիս, որ Աբութալիպը, չնայած ողբալի վիճակին, խղճալի չէր։ Իրեն պահում էր արժանապատվությամբ և անտեղի չէր գանգատվում բախտից։ Նա չէր կարող հաշվի չառնել աշխարհի վիճակը։ Հասկացել էր մարդը, որ իր բաժին բախտն այդ է։ Նրա կինը՝ Զարիպան, նույնպես, հավանորեն, հասել էր նույն գիտակցության։ Ներքուստ համակերպվելով հատուցման անխուսափելիությանը, նրանք կյանքի իմաստը տեսնում էին միմյանց նկատմամբ ունեցած իրենց արտասովոր նրբազգացության, մտերմության մեջ։ Ինչպես հետո հասկացավ Եդիգեյը, դրանով նրանք ապրում էին, դրանով պաշտպանվում էին, փոխադարձորեն միմյանց և երեխաներին պատսպարելով ժամանակի սանձակոտոր քամիներից։ Մանավանդ, Աբութալիպը։ Մի օր անգամ չէր կարող ապրել ընտանիքից հեռու։ Երեխաները՝ որդիները, նրա համար ամեն ինչ էին։ Ամեն մի ազատ րոպեի Աբութալիպը պարապում էր նրանց հետ։ Գրագիտություն էր սովորեցնում, հորինում էր զանազան հեքիաթներ, հանելուկներ, կազմակերպում էր զվարճալի խաղեր։ Երբ կնոջ հետ աշխատանքի էին գնում, սկզբում երեխաները մենակ էին մնում բարաքում։ Բայց Ուկուբալան չէր կարողանում հանգիստ խղճով նայել դրան, տղաներին վերցնում բերում էր իրենց տուն։ Իրենց տունը ավելի տաք էր, ապրուստը՝ շատ ավելի ապահով, քան նորեկներինը։ Այդ էլ հենց մտերմացրեց ընտանիքները։ Մանավանդ Եդիգեյն էլ երեխաներ ուներ՝ երկու աղջիկ, որոնք Աբութալիպի տղաների հասակակիցներն էին։

Մի անգամ երբ Արությալիպը աշխատանքից հետո եկել էր երեխաներին տանելու, առաջարկեց.

— Եղիգեյ, բեր միաժամանակ քո աղջիկների հետ էլ պարապեմ։ Ախր ես հո դատարկ տեղը չեմ զբաղվում. երեխաներով։ Նրանք ընկերացել են, միասին խաղ են անում՝ Ցերեկը ձեզ մոտ են լինում, թող երեկոյան էլ մեզ մոտ լինեն։ Գիտե՞ս ինչու եմ այդպես ասում։ Կյանքն այստեղ, աշխարհից կտրված, իհարկե, շատ է խղճուկ, դրա համար էլ անհրաժեշտ է պարապել նրանց հետ։ Հիմա այնպիսի ժամանակներ են գալիս, որ պետք է փոքրուց շատ բան իմանաս։ Հիմիկվա մի մատ երեխան պիտի իմանա այնքան, որքան առաջվա ահագին երիտասարդը՝ Այլապես ուրիշ կերպ կրթություն չես էլ ստանա։

Արությալիպի ջանքերի իմաստը Բորանլի Եդիգեյը դարձյալ ուշ հասկացավ, երբ դժբախտություն եղավ։ Հասկացավ, որ Բորանլիի պայմաններում և Արությալիպի վիճակում դա այն մեն միակ բանն էր, որ սեփական ուժերով կարելի էր ձեռնարկել երեխաների համար։ Նա որքան կարող էր, շտապում էր իրենից կտրել և նրանց տալ որքան հնարավոր է շատ, կարծես այդ ձևով ուզում էր հաստատվել նրանց հիշողության մեջ, ուզում էր շարունակվել իր երեխաների մեջ։ Երեկոները, երբ Արությալիպը աշխատանքից տուն էր գալիս, նա ու Զարիպան կազմակերպում էին մի տեսակ դպրոց-մանկապարտեզ իրենց և Եդիգեյի երեխաների համար։ Երեխաները իրար հետ մրցելով գրեր ու վանկեր էին սովորում, խաղում ու նկարում էին, լսում էին հեքիաթներ, որ կարդում էին ծնողները, և նույնիսկ բոլորը միասին զանազան երգեր էին սովորում։ Դա այնքան գրավիչ զբաղմունք էր, որ Եդիգեյն սկսեց հաճախել նրանց տուն և հիանալ, թե ինչքան հաջող է ստացվում այդ ամենը։ Ուկուբալան էլ էր շուտ-շուտ մըտնում նրանց մոտ, երբ գործով, բայց իրականում գալիս էր տեսնելու իր աղջիկներին։ Գոհունակությամբ էր լցվում Բորանլի Եդիգեյի սիրտը։ Ահա թե ինչ է նշանակում կրթված մարդիկ, ուսուցիչներ։ Ուղղակի հաճույք էր ստանում, տեսնելով, թե նրանք ինչպես են վարվում երեխաների հետ, ինչպես են կարողանում իրենք էլ մանկանալ, մնալով մեծ։ Այդպիսի երեկոներին Եդիգեյն աշխատում էր չխանգարել, լուռ նստում էր անկյունում։ Իսկ ներս մտնելիս, գլխարկն անմիջապես, հենց դռան շեմին հանում էր։

— Բարի երեկո։ Ահա ձեր հինգերորդ աշակերտը եկավ մանկապարտեզ։

Երեխաները վարժվել էին այդ հաճախումներին։ Նրա դըստրիկները երջանիկ էին։ Հոր ներկայությամբ ավելի ջանասեր էին դառնում։ Եղիգեյն ու Ուկուբալան հերթով վառում էին նրանց վառարանը, որպեսզի երեկոյան երեխաների համար բարաքը տաք և հաճելի լինի։

Ահա, այդ տարի այսպիսի մի ընտանիք էր ապաստանել Բորանլիում։ Եվ տարօրինակն այն է, որ լավ մարդկանց բախտը չի բերում։

Աբութալիպ Կուտիբաևը դժբախտություն էր ունեցել լինելու ոչ միայն գերմանացու գերի, այլև, բարեբախտաբար թե դժբախտաբար, մի խումբ ռազմագերիների հետ փախչելով Հարավային համակենտրոնացման ճամբարից, քառասուներեք թվականին հայտնվել էր հարավսլավացի պարտիզանների շարքերում։ Աբութալիպը մինչև պատերազմի վերջը կռվել է Հարավսլավիայի ազատարար բանակում։ Այնտեղ վիրավորվել է, այնտեղ բուժվել։ Պարգևատրվել է հարավսլավական մարտական շքանշաններով։ Պարտիզանական թերթերում գրել են նրա մասին, տպագրել լուսանկարները։ Այդ հանգամանքը շատ է օգնել, երբ քառասունհինգ թվականին, հայրենիք վերադառնալուց հետո, ստուգողական-զտիչ հանձնաժողովում քննել են նրա գործը։ Համակենտրոնացման ճամբարից փախած տասներկու հոգուց կենդանի էին մնացել ընդամենը չորսը։ Չորսի բախտն էլ բերել էր, այն իմաստով, որ սովետական ստուգողական հանձնաժողովը ժամանել էր Հարավսլավիայի ազատարար բանակի ստորաբաժանման անմիջական տրամադրության տակ և հարավսլավցի հրամանատարները գրավոր կարծիքներ էին տվել սովետական նախկին ռազմագերիների մարտական և բարոյական հատկանիշների մասին, ֆաշիստների դեմ պարտիզանական պայքարին նրանց մասնակցության մասին։

Մի խոսքով, երկու ամսից, բազմաթիվ ստուգումներից, հարցաքննություններից, առերեսումներից, սպասումներից, հույսերից ու հուսահատություններից հետո Աբութալիպ Կուտիբաևը վերադարձավ իր Ղազախստան՝ առանց իրավունքների սահմանափակության, բայց և առանց այն արտոնությունների, որոնք տրվում էին սովորական զորացրվածներին։ Աբութալիպ Կուտիբաևը չնեղացավ։ Պատերազմից առաջ աշխարհագրության դասատու էր եղել, վերադարձավ իր աշխատանքին։ Այստեղ էլ՝ շրջկենտրոնի դպրոցներից մեկում, հանդիպեց տարրական դա-

սարանների երիտասարդ ուսուցչուհի Զարիպային։ Երբեմն լինում են երկկողմանի երջանկության դեպքեր, հազվագյուտ, բայց լինում են։ Կյանքն առանց դրա չի լինում։

Մինչ այդ, արդեն դադարել էր առաջին հաղթական տարիների աղմուկ-աղաղակը։ Հաղթանակի և ցնծության եռևից օդում փայլատակում էին «սառը պատերազմի» առաջին փաթիլները։ Հետո ուժեղացավ։ Եվ պրկվեցին ետպատերազմյան գիտակցության զսպանակները աշխարհի տարբեր մասերում, տարբեր ցավոտ կետերում...

Աշխարհագրության դասերից մեկի ժամանակ այդ զսպանակը աշխատեց։ Վաղ թե ուշ, այսպես թե այնպես, այստեղ թե այլուր, դա պետք է պատահեր։ Եթե ոչ նրան, ապա մի ուրիշին, նրա նման մեկին։ Ութերորդ դասարանի աշակերտներին պատմելով երկրագնդի եվրոպական աշխարհամասի մասին, Աբութալիպ Կուտտիբաևը հիշեց, թե ինչպես մի անգամ, երբ համակենտրոնացման ճամբարից իրենց տանում էին հարավ-բավարական Ալպերի քարհանքերը, իրենց հաջողվեց զինաթափ անել պահակախմբին և այնտեղից փախչել հարավսլավցի պարտիզանների մոտ, պատմեց, որ պատերազմի ժամանակ ինքն անցել է եվրոպայի համարյա կեսը, եղել է Ադրիատիկ և Միջերկրական ծովերի ափին, լավ ծանոթ է այդ բնությանը, տեղի բնակիչների կյանքին և որ այդ ամենը հնարավոր չէ նկարագրել դասագրքերում։ Ուսուցիչը համոզված էր, որ այդպիսով, ականատեսի կենդանի վկայությամբ հարստացնում է առարկան։

Ցուցափայտը սահում էր Եվրոպայի կապտա-կանաչ-դարչնագույն աշխարհագրական քարտեզի վրայով, որ կախված էր դպրոցական գրատախտակից, ցուցափայտը ի հայտ էր բերում բարձունքներ, հարթավայրեր, գետեր, շարունակ հպվելով այն վայրերին, որ մինչև օրս երազում տեսնում էր, որտեղ անդադրում, շատ ամառներ ու ձմեռներ շարունակ մարտեր են մղվել, և, հավանաբար, ցուցափայտը դիպավ մի աննշմար կետի, որտեղ թափվել էր նրա արյունը, երբ կողքից անսպասելի սրածել էր թշնամական կրակահերթը, և ինքը դանդաղ գլորվել էր լանջն ի վար, սեփական արյամբ ներկելով խոտ ու քար։ Այդ կարմիր արյունը կարող էր ողողել ուսումնական ամբողջ քարտեզը, և իրոք, մի ակնթարթ, իրեն նույնիսկ թվաց, թե քարտեզի վրայով ծորում է ալ արյունը, հիշեց, թե այն ժամանակ ինչպես պտտվեց գլուխը, ինչպես ամեն ինչ լողաց, մշուշվեց աչքին,

*ինչպես տապալվեցին, ընկան լեռները և ինքը ճչաց, օգնության կանչեց լեհ ընկերոջը, որի հետ անցյալ ամառ փախել էին՝ բավարյան քարհանքերից. «Կազմի՛ր, Կազմի՛ր»։ Բայց սա չէր լսում, որովհետև լոկ իրեն էր թվում, թե ամբողջ ձայնով կանչում է, իրականում ծպտուն չէր հանել և ուշքի էր եկել միայն պարտիզանական հիվանդանոցում, արյան փոխներարկումից հետո։*

*Աշակերտներին պատմելով երկրագնդի եվրոպական աշխարհամասի մասին, Աբութալիպ Կութլիբաևը զարմանում էր իր վրա, որ գլխին այդքան փորձանք գալուց հետո հիմա կարողանում է այսքան գործնական, այսքան հանգիստ խոսել այն ամենի մասին, ինչը առնչվում է դպրոցական տարրական աշխարհագրությանը։*

*Այստեղ, առաջին նստարանից թափով բարձրացված ձեռքը կտրում է նրա խոսքը.*

*— Աղայ[1], ուրեմն դուք գերի՞ եք եղել։*

*Սառն հստակությամբ նրան էին նայում խիստ աչքեր։ Պատանու գլուխը թեթևակի ետ էր գնացել, նա կանգնած էր «զգաստ» և չգիտես ինչու ողջ կյանքում տպավորվեցին նրա ատամները, որոնց նստվածքը դասավորված էր հակառակ ձևով. ներքևի ատամնաշարը առաջ էր ընկնում, ծածկելով վերին շարքը։*

*— Այո, ի՞նչ կա։*

*— Իսկ ինչո՞ւ ինքնասպան չեղաք։*

*— Իսկ ի՞նչ կարիք կար ինքնասպանություն գործելու։ Առանց այդ էլ վիրավոր էի։*

*— Որովհետև անթույլատրելի է թշնամու ձեռքը գերի ընկնել, այդպիսի հրաման կա։*

*— Ո՞ւմ հրամանն է։*

*— Վերևից է հրամանը։*

*— Որտեղի՞ց գիտես։*

*— Ես ամեն ինչ գիտեմ։ Մեր տուն մարդիկ են գալիս Ալմա-Աթայից, նույնիսկ Մոսկվայից են եկել։ Ուրեմն դուք չեք կատարել վերևի հրամանը։*

*— Իսկ քո հայրը պատերազմում եղե՞լ է։*

*— Ոչ, նա զբաղված էր զորակոչով։*

---

1 Աղայ — *ուսուցիչ։*

— Այդ դեպքում դու և ես դժվար կհասկանանք իրար։ Կարող եմ միայն ասել, որ ես ուրիշ ելք չունեի։

— Միևնույն է, դուք պետք է կատարեիք հրամանը։

— Ի՞նչ ես կպել նրանից,— տեղից վեր կացավ մի ուրիշ աշակերտ։— Մեր ուսուցիչը կռվել է հարավսլավցի պարտիզանների հետ։ Ի՞նչ ես ուզում։

— Միևնույն է, նա պետք է կատարեր հրամանը,— խստիվ պնդում էր մյուսը։

Այստեղ դասարանը շշաց, պատռվեց մեռելային լռությունը. «Պետք էր», «պետք չէր», «կարող էր», «չէր կարող», «ճիշտ է», «սխալ է»։

Ուսուցչի բռունցքը թնդաց սեղանին.

— Ձայներդ կտրե՛ք։ Սա աշխարհագրության դաս է։ Իսկ թե ես ինչպես եմ կռվել և ինչ է պատահել ինձ, գիտեն որտեղ պետք է և ում պետք է։ Իսկ այժմ վերադառնանք մեր քարտեզին։

Եվ դասարանում դարձյալ ոչ մեկը քարտեզի վրա չտեսավ այն հազիվ նշմարելի կետը, որտեղ կրկին ավտոմատից պայթեց կրակահերթը, և ցուցափայտը ձեռքին գրատախտակի մոտ կանգնած ուսուցիչը նորից դանդաղ գլորվեց լանջն ի վար, իր արյունով ներկելով Եվրոպայի կապտա-կանաչ-դարչնագույն քարտեզը...

Մի քանի օրից նրան կանչեցին շրջժողկրթբաժին։ Այնտեղ, առանց ավելորդ խոսքերի, Ղութիբաևին առաջարկեցին աշխատանքից հեռանալու դիմում տալ՝ սեփական ցանկությամբ, նախկին ռազմագերին բարոյական իրավունք չունի սովորեցնելու մատաղ սերնդին։

Աբութալիպ Ղութիբաևը ստիպված եղավ Զարիպայի և իրենց առաջնեկի՝ Դաուլի հետ տեղափոխվել ուրիշ շրջան, մարզային կենտրոնից հեռու։ Տեղավորվեցին աուլյան դպրոցում։ Կարծես ընտելացան, բնակարանի հարցը լուծվեց։ Զարիպան երիտասարդ, ընդունակ ուսուցչուհի էր, դարձավ ուսմասվար։ Բայց հիմա էլ բռնկվեցին քառասունութ թվականի իրադարձությունները՝ կապված Հարավսլավիայի հետ։ Այժմ Աբութալիպ Ղութիբաևին դիտում էին ոչ միայն իբրև նախկին ռազմագերու, այլև իբրև կասկածելի անձնավորության, որ երկար ժամանակ եղել է Հարավսլավիայում։ Ու թեև նա ապացուցում էր, որ հարավսլավցի ընկերների հետ միայն պարտիզանություն է արել, այդ նկատի չէր առնվում։ Բոլորը հասկանում էին, նույնիսկ կարեկցում էին

նրան, բայց ոչ ոք չէր համարձակվում այդ իմաստով որևէ պա-տասխանատվություն վերցնել իր վրա։ Նորից կանչեցին շրջժող-կրթբաժին, և նորից կրկնվեց աշխատանքից սեփական ցանկու-թյամբ հեռանալու դիմումի պատմությունը...

Էլ շատ և շատ անգամ տեղից տեղ փոխադրվելուց հետո Աբութալիպ Ղութիբաևի ընտանիքը հիսունմեկ թվականի վերջե-րին, ձյուն ձմռան կեսին հայտնվեց սարօզեկներում, Բորանլի կիսակայարանում...

Հիսուներկու թվականի ամառը սովորականից շատ ավելի շոգ էր։ Հողը այնքան էր չորացել, ճաքճքել, որ նույնիսկ սարօ-զեկների մողեսները չգիտեին ուր կորչեն և առանց մարդկանցից վախենալու, հուսահատ, ցնցվող բողազներով, բերանները բաց մոտենում էին տների շեմին — միայն թե թաքնվեին արևից։ Իսկ բազեները զովություն փնտրելու համար, աստված գիտե, թե ինչ-քան բարձր էին թռչում, որ սովորական աչքով հնարավոր չէր տեսնել նրանց։ Եվ միայն ժամանակ առ ժամանակ իրենց մասին զգացնել էին տալիս սուր, հատուկենտ ծղրտոցներով, այնուհետև երկար լռում էին տաք, թրթռուն մուժի մեջ։

Բայց ծառայությունը մնում էր ծառայություն։ Գնացքներն արևելքից արևմուտք էին գնում և արևմուտքից՝ արևելք։ Որքա՜ն գնացքներ են եկել ու անցել Բորանլիով։ Ոչ մի շոգ չի կարողա-ցել ազդել պետական մեծ մայրուղու տրանսպորտի շարժման վրա։

Եվ ամեն ինչ ընթանում էր իր կարգով։ Ճանապարհների վրա ստիպված էին աշխատել թաթպաններով, անհնարին էր մերկ ձեռքերով դիպչել, ոչ քարի, ոչ էլ, մանավանդ երկաթի։ Արեգակը թավայի նման կանգնած էր գլխավերևում։ Ջուրը, ինչ-պես միշտ, բերում էին ցիստեռնով, և մինչև հասնում էր կիսա-կայարան, համարյա թե եռում էր։ Երկու օրում վրայի հագուստ-ները այրվում-մրկվում էին։ Ձմռանը, ամենախստաշունչ սառ-նամանիքին անգամ, սարօզեկներում մարդու համար, թերևս, ավելի հեշտ էր, քան այսպիսի շոգին։

Բորանլի Եդիգեյը այդ օրերին աշխատում էր բարձրացնել Աբութալիպի տրամադրությունը։

— Հո միշտ այսպես չի մեր ամառը։ Ուղղակի տարին է այս-պես,— արդարանում էր նա, կարծես դրանում ինքն էր մեղա-վոր,— մի տասնհինգ, ամենաշատը քսան օրից կթեթևանա, շո-

գը կկոտրվի։ Անիծածը բոլորիս հոգին հանեց։ Երբեմն մեր սարօղեկներում պատահում է, որ ամառնավերջին միանգամից փոխվում է եղանակը։ Այդ ժամանակ ամբողջ աշունը, մինչև բուն ձմեռ, երանություն է. հով է լինում, անասունը գիրանում է։ Ինձ թվում է դրա նշանները կան, այս տարի այսպես է լինելու։ Դիմացեք մի քիչ, աշունը լավը կլինի։

— Ուրեմն երաշխավորո՞ւմ ես,— նրան հասկանալով ժպտաց Աբութալիպը։

— Համարյա թե։

— Դրա համար էլ եմ շնորհակալ։ Ահա, կարծես բաղնիքում նստած լինեմ։ Բայց սիրտս ինձ համար չի ցավում։ Ես ու Զարիպան կդիմանանք։ Այս տեսա՞կ բաների ենք դիմացել։ Երեխաներն են մեղք... Չեմ կարողանում նայել նրանց...

Բորանլիցիների երեխաները տանջվում, տառապում, հալումաշ էին լինում, և տեղ էլ չկար, որ թաքցնեիր նրանց տոթից ու տանջալից շոգից։ Ոչ մի ծառ շուրջը, ոչ մի առվակ, որ այնքան անհրաժեշտ են մանկական աշխարհին։ Գարնանը, երբ սարօղեկները վերակենդանանում են, և մի որոշ ժամանակ կանաչում են շրջակա ձորակներն ու լանջերը, երեխաների համար սկսվում է փառավոր կյանք։ Գնդակ են խաղում, տափկնոցի, վազում են տափաստան, ընկնում գետնասկյուռների ետևից։ Սիրտդ ուրախանում է, լսելով մինչև հեռուները տարածվող նրանց ձայները։

Ամառը կործանեց ամեն ինչ։ Եվ տեղում տրտիկ չանող երեխաներին ուժասպառ արեց սաստիկ շոգը։ Շոգից նրանք թաքնվում էին տան պատերի ստվերում, և դուրս էին գալիս միայն այն ժամանակ, երբ գնացք էր անցնում։ Դա նրանց միակ զվարճությունն էր. հաշվում էին, թե քանի գնացք անցավ մի կողմը և քանիսը՝ մյուս, դրանցից քանիսն էին մարդատար վագոն և քանիսը՝ ապրանքատար։ Իսկ երբ մարդատար գնացքները կիսակայարանով անցնելիս դանդաղեցնում էին ընթացքը, երեխաներին թվում էր, թե այս մի գնացքն արդեն կկանգնի, և վազ էին տալիս գնացքի ետևից, փոքրիկ ձեռքերով պաշտպանվելով արևից, հավանորեն միամիտ հույս փայփայելով փախչել-գնալ այս հնոցից, և ծանր էր տեսնել, թե ինչ նախանձով և ոչ մանկական թախիծով են փոքրիկ բորանլիցիները նայում հեռացող վագոնների ետևից։ Դուռ ու լուսամուտ լայնորեն բացված վագոնների ուղևորները նույնպես խեղագարվում էին տոթից, գարշահոտությունից ու ճանճերից, բայց նրանք գոնե վատահ էին,

որ մի երկու օրից կհայտնվեն այնտեղ, ուր կան զովասուն գետեր և կանաչ անտառներ։

Այդ ամառ բոլոր մեծերը՝ հայրերն ու մայրերը, շարունակ անհանգստանում էին երեխաների վիճակով, բայց թե ինչ քաշեց Աբութալիպը, բացի Զարիպայից, երևի հայտնի էր միայն Եդիգեյին։ Այդ մասին, հենց Զարիպայի հետ էլ տեղի ունեցավ առաջին խոսակցությունը։ Խոսակցության ժամանակ նորից որոշ բան բացվեց այդ երկուսի ճակատագրից։

Այդ օրը նրանք աշխատում էին գծերի վրա, երկաթուղու պաստառի խճաքարն էին թարմացնում։ Մանրախիճը տարածում, մտցնում էին փայտակոճերի և ռելսերի տակ, դրանով ամրացնում ցնցումներից փլուզվող լիրաթումբը։ Գործը հարկավոր էր անել ընդմիջումներով, անցնող գնացքների միջև ընկած դադարների ժամանակ։ Այս շոգին երկար, տանջալից աշխատանք։ Կեսօրին մոտ Աբութալիպը վերցրեց դատարկված բիդոնը և գնաց, ինչպես ինքն էր ասում, տաք ջրի, դեպի փակուղու ցիստեռնը և միաժամանակ տեսնի, թե ինչ են անում երեխաները։

Արագ գնաց փայտակոճերի վրայով, չնայած արևը խորովում էր։ Շտապում էր երեխաների կողմը և ուշքը վրան չէր։ Անորոշ կեղտոտ գույնի, խունացած մայկան կախված էր ոսկրոտ ուսերից, գլխին ծղոտե քրքրված գլխարկ, շալվարը լողում էր նիհարած մարմնի վրա, ոտքերին հալից ընկած, առանց կապերի կոշիկներ։ Նա գնում էր փայտակոճերի վրայով, ոտքերը քստքստացնելով, ոչ մի բանի ուշք չդարձնելով։ Երբ թիկունքում հայտնվեց գնացքը, նույնիսկ ետ չնայեց։

— Հեյ, Աբութալիպ, գծից դուրս արի։ Ի՞նչ է, խլացե՞լ ես,— գոռաց Եդիգեյը։

Բայց նա չլսեց։ Միայն, երբ շոգեքարշը սուլեց, նա թեքությունից վար իջավ, և նույնիսկ այդ ժամանակ էլ չնայեց կողքից սլացող գնացքին։ Եվ չտեսավ, թե ինչպես բռունցքը թափ տվեց մեքենավարը։

Պատերազմի, գերության մեջ մարդը չէր սպիտակել, իհարկե, ավելի ջահել է եղել, ռազմաճակատ է գնացել 19 տարեկանում, որպես կրտսեր լեյտենանտ։ Բայց այդ ամառ ճերմակն ընկավ մազերի մեջ։ Սարօզեկյան ճերմակ։ Ընդ որում արագ, այստեղ-այնտեղ, ամուր, խիտ, բաշանման մազերի մեջ ցոլցլաց անկոչ ճերմակը և սկսեց գերիշխել քունքերին, քունքերը ճերմակեցին։ Լավ ժամանակներում նա կլիներ գեղեցիկ, ներկայանալի

տղամարդ։ Լայնաճակատ, արծվաքիթ, աղամախնձորը ցցված, ուժեղ ծնոտով և երկարուկ շեղ աչքերով, բոյ ու բուսով տղամարդ էր։ Զարիպան դառը կատակում էր «Բախտդ չբանեց, Արու, դու լավ Օթելլո կլինեիր բեմում»։ Արութալիպը քմծիծաղ էր տալիս. «Այդ դեպքում ես վերջին ապուշի պես կխեղդեի քեզ, քո ինչի՞ն էր պետք»։

Արութալիպի դանդաղ ռեակցիան թիկունքից եկող գնացքի ժամանակ, լուրջ վախեցրեց Եդիգեյին։

— Դու գոնե վրան խոսեիր, ինչո՞ւ այդպես արեց,— կիսահանդիմանական ասաց Զարիպային։— Մեքենավարը պատասխանատվություն չի կրում, գծի վրայով չի թույլատրվում քայլել։ Այսինքն, կարևորը դա չի։ Ի՞նչ կարիք կա այդպիսի վտանգի ենթարկվելու։

Զարիպան խոր հոգոց հանեց, թեքով սրբեց շիկացած, սևացած դեմքի քրտինքը։

— Ես վախենում եմ նրա համար։

— Ինչո՞ւ։

— Վախենում եմ, Եդիկե։ Քեզանից ինչ թաքցնեմ։ Ինքն իրեն շատ է տանջում երեխաների և իմ պատճառով։ Ախր, երբ ամուսնանում էի, չլսեցի հարազատներիս։ Մեծ եղբորս հոգին բերանը եկավ, «Ամբողջ կյանքումդ զղջալու ես, հիմար։ Դու ոչ թե ամուսնանում ես, այլ նետվում ես դժբախտության մեջ, քո երեխաները և երեխաներիդ երեխաները, դեռ չծնված, դատապարտված են դժբախտության։ Իսկ քո սիրածը, եթե գլուխ ունի ուսերին, ոչ թե պետք է ընտանիք կազմի, այլ պետք է կախվի։ Դա նրա լավագույն ելքն է»։ Իսկ մենք վարվեցինք մեր ուզած ձևով։ Հույս ունեինք, քանի որ վերջացել է պատերազմը ի՞նչ հաշիվներ պիտի ունենան ողջերն ու մեռածները։ Բոլորից մեզ հեռու էինք պահում. թե իմ և թե նրա ազգականներից։ Իսկ վերջին անգամ, պատկերացնո՞ւմ ես, եղբայրս իր ձեռքով դիմում գրեց, թե ինքն ինձ զգուշացրել է, դեմ է եղել մեր ամուսնությանը։ Եվ որ ինքը ոչ մի ընդհանուր բան չունի ինձ հետ, մանավանդ Արութալիպ Կութիբաևի նման անձնավորության հետ, որ երկար ժամանակ եղել է Հարավսլավիայում։ Դեհ, դրանից հետո նորից սկսվեց։ Ուր գնում ենք, դռնից ետ են դարձնում։ Հիմա էլ այստեղ ենք, ուրիշ տեղ այլևս չունենք։— Նա լռեց, կոշտ, փշրված խիճը մտցնելով փայտակոճերի տակ։ Առջևում նորից երևաց

եկող գնացքը։ Նրանք գծից դուրս եկան, հետևից տանելով բահերն ու ձեռնասայլակները։

Եղիգեյն զգում էր, որ պարտավոր է որևէ բանով օգնել, երբ մարդիկ այդպիսի վիճակում են։ Բայց նա ոչինչ փոխել չէր կարող։ Փորձանքը գտնվում էր սարօզեկների սահմաններից շատ հեռու։

— Մենք շատ վաղուց ենք ապրում այստեղ։ Դուք էլ կընտելանաք, կհարմարվեք։ Ապրել է պետք,— ընդգծեց, նայելով ուղիղ նրա դեմքին, և մտածեց. «Չէ, դառն է սարօզեկյան հացը։ Զմռանը, երբ եկան այստեղ, սպիտակ, սիրուն կին էր, հիմա հողի գույն ունի,— նկատեց Եղիգեյը, ափսոսելով օրն օրի վրա խամրող նրա գեղեցկությունը։— Ի՜նչ մազեր ուներ. այրվել են, նույնիսկ թարթիչներն են խանձվել արևից։ Շրթունքները ճաքճըքել են, արյունոտվել։ Չէ, լավ չի վիճակը։ Եվ դիմանում է, չի նահանջում։ Այնինքն, էլ ի՞նչ նահանջի, երկու երեխա ունի։ Միևնույն է, քաջ կին է...»։

Այդ ժամանակ, տատանելով շիկացած օդի անշարժությունը, ավտոմատի թեժ կրակահերթի նման երկաթգծի վրա դղրդաց հերթական գնացքը։ Նրանք նորից վերցրին գործիքները, բարձրացան երկաթուղու պաստառի վրա շարունակելու աշխատանքը։

— Լսիր, Զարիպա,— ասաց Եղիգեյը, աշխատելով որևէ կերպ քաջալերել նրան, հաշտեցնել իրականության հետ։— Երեխաների համար այստեղ դժվար է, չեմ առարկում։ Ես էլ, հենց նայում եմ երեխաներիս, սիրտս մղկտում է։ Բայց շոգը հո անվերջ չի տևկվելու մնա։ Կկոտրի կգնա։ Բացի այդ, դուք մենակ չեք, սարօզեկներում լիքը մարդ կա, վերջապես մենք կանք։ Ինչո՞ւ եք ձեզ տանջում-չարչարում, եթե կյանքն այդպես է դասավորվել։

— Ես էլ եմ նույն բանն ասում, Եդիկե։ Ամեն կերպ աշխատում եմ ոչ մի ավելորդ բան չասել։ Ախր հասկանում եմ նրա վիճակը։

— Լավ ես անում։ Ես ուզում էի այդ մասին ասել քեզ, Զարիպա։ Հարմար առիթի էի սպասում։ Այնինքն, դու ավելի լավ գիտես։ Ուղղակի խոսք բացվեց, ասացի։ Ներիր։

— Ճիշտ է, մեկ-մեկ ուղղակի անտանելի է լինում։ Ինձ էլ եմ խղճում, իրեն էլ, երեխաներին՝ ավելի շատ։ Ցնայած մեղք չունի, բայց իրեն չի ներում, որ մեզ այստեղ է բերել։ Եվ որևէ բան փոխել չի կարող։ Իհարկե, մեր կողմերում, Ալաթաուի լեռ-

ների ու գետերի հովիտներում ուրիշ տեսակ կյանք է, կլիման էլ միանգամայն ուրիշ է։ Երեխաներին, գոնե ամռանը, կարելի էր ուղարկել այնտեղ։ Բայց ո՞ւմ մոտ ուղարկենք։ Ծնողներ չունենք։ Շուտ են մահացել։ Եղբայրներ, քույրեր, ազգականներ... Նրանց էլ չի կարելի մեղադրել։ Ի՞նչ գործ ունեն մեզ հետ։ Առաջ էլ խուսափում էին մեզնից, հիմա առավել ևս։ Նրանց ի՞նչ մեր երեխաները։ Դեհ, մենք էլ այսպես տանջվում ենք, վախենում ենք ամբողջ կյանքում խրվենք մնանք այստեղ, չնայած այդ մասին ձայն չենք հանում։ Բայց հո աչքովս եմ տեսնում նրա վիճակը... Էհ, միայն աստծուն է հայտնի, թե ինչ է սպասում մեզ...

Նրանք ծանր լռեցին։ Հետո այլևս չվերադարձան այդ խոսակցությանը։ Աշխատում էին, գնացքներն ընդունում և նորից գործի էին անցնում։ Ի՞նչ կարող էր անել։ Այլևս ինչպե՞ս մխիթարեր, ինչպե՞ս օգներ նրանց այդ դժբախտության մեջ։ «Իհարկե, հո չեն ընկնելու աշխարհից աշխարհ։ Ապրելը կապրեն, երկուսով էլ աշխատում են։ Թվում է, ոչ ոք նրանց զոռով չի քշել, բայց արի տես, որ այստեղից դուրս գալու ճար ու հնար չկա։ Ոչ վաղը, ոչ էլ մյուս օրը»։

Եղիգեյը իր վրա էլ էր զարմանում, զարմանում էր այդ ընտանիքի համար իր զգացած վիրավորանքի և դառնության վրա, կարծես նրանց պատմությունը վերաբերում էր անձամբ իրեն։ Իր ի՞նչն են նրանք։ Փոխանակ մտածի, որ նրանց գործը իր խելքի բանը չի, իրեն ի՞նչ։ Համ էլ ինքն ով է, որ դատողություն անի իրեն չվերաբերվող բաների մասին։ Անգույն աշխատավոր, տափաստանի բնակիչ, որի նմանները անթիվ, անհաշիվ են, ի՞նքը պիտի սրտնեղի ու վրդովվի և խիղճը տանջի հարցերով, թե կյանքում ի՞նչն է արդար, ինչը անարդար։ Ախր, այնտեղ, վերևում, որտեղից առաջ է գալիս այս ամենը, անշուշտ, հազար անգամ ավելի գիտեն, քան ինքը, Բորանլի Եղիգեյը։ Այնտեղ ավելի լավ են տեսնում, քան ինքն այստեղ՝ սարօզեկներում։ Դա ի՞նչ իր հոգսն է։ Այսուամենայնիվ, չէր կարողանում հանգստանալ։ Եվ չգիտես ինչո՞ւ, սիրտը ավելի շատ ցավում էր Զարիպայի համար։ Եղիգեյին զարմացնում և հիացնում էր նրա հավատարմությունը, զսպվածությունը, նրա հուսահատական գոտեմարտը ճախորդության դեմ։ Զարիպան նման էր թռչունի, որ աշխատում էր բույնը թևերով պաշտպանել փոթորկից։ Ուրիշը լիներ, լաց կլիներ, լաց կլիներ և կհնազանդվեր ազգականներին։ Իսկ նա, ամուսնուն հավասար վճարում էր պատերազմի անցյալի հա-

մար։ Եվ ամենից շատ և հակառակ ամեն ինչի հենց այդ հանգամանքն էլ անհանգստություն էր պատճառում Եղիգեյին, չէ՞ որ ինքը ոչ մի ձևով չէր կարող պաշտպանել ոչ նրա երեխաներին, ոչ էլ ամուսնուն... Հետագայում եղել են պահեր, երբ նա դառնապես զղջացել է, որ ճակատագրին հաճո է եղել այդ ընտանիքը տեղավորել Բորանլիում։ Ինչի՞ն են պետք այս ապրումները։ Ցտեսներ, չիմանար այս ամենը, առաջվա նման հանգիստ կապրեր...

## VI

Օրվա կեսին, խաղաղ օվկիանոսում, Ալեուտներից դեպի հարավ, շարժվեցին ալիքները։ Հարավ-արևելյան քամին, որ բռնկվել էր ամերիկյան մայրցամաքի ստորին ավազանից, աստիճանաբար սաստկանում էր, աստիճանաբար ճշտում, ամրացնում իր ուղղությունը։ Եվ վիթխարի բաց տարածության վրա ջուրը շարժվեց, ծանր ճողփաց, ծփաց և սկսեց ալիքները շարքշարք, թումբ-թումբ դարսել իրար վրա։ Դա գուշակում էր, եթե ոչ փոթորիկ, ապա՝ երկարատև ալեկոծություն։

«Կոնվենցիա» ավիակրի համար այդպիսի ալիքները բաց օվկիանոսում ոչ մի վտանգ չէին ներկայացնում։ Ուրիշ անգամ նա դիրքն անգամ չէր փոխի։ Բայց քանի որ տախտակամածի վրա րոպե առ րոպե սպասվում էր հատուկ լիազորված հանձնաժողովների շտապ վերադարձող ինքնաթիռների վայրէջք, վերադաս ատյաններում խորհրդակցելուց հետո ավիակիրը գերադասեց շուռ գալ քամու հակառակ կողմը, որպեսզի մեղմացնի կողմնային ճոճումը։ Ամեն ինչ բարեհաջող անցավ։ Նախ վայրէջք կատարեց սան-ֆրանցիսկյան, ապա՝ վլադիվոստոկյան լայներները։

Հանձնաժողովները վերադարձան լրիվ կազմով, բայց լուռ և մտահոգ։ Տասնհինգ րոպեից հետո նրանք արդեն նստած էին սեղանի մոտ՝ փակ խորհրդակցության։ Աշխատանքն սկսելուց հինգ րոպե հետո տիեզերքի ուղեծրային «Պարիտետ» կայան ուղարկվեց շտապ ծածկագիր-հեռագիր Պահող մոլորակում գտնվող պարիտետ-տիեզերագնացներ 1—2 և 2—1-ին հանձնելու համար. «Ուղեծրային «Պարիտետ» կայանի 1—2 և 2—1 տիեզերագնաց-հսկիչներին։ Նախազգուշացնել Արեգակնային համակարգի սահմաններից դուրս գտնվող պարիտետ-տիեզերագնացներ 1—2 և 2—1-ին՝ չձեռնարկել որևէ գործողություն։ Մնալ տե-

*ղում մինչև Միազեկկենտրոնի հատուկ ցուցումը»։ Դրանից հետո, առանց բացե կորցնելու, հատուկ լիազորված հանձնաժողովներն անցան տիեզերական ճգնաժամի լուծման իրենց դիրքորոշումների և առաջարկների շարադրմանը...*

*«Կոնվենցիա» ավիակիրը կանգնած էր ջամու դեմ, անվերջ արշավող խաղաղօվկիանոսյան ալիքների մեջ։ Աշխարհում ոչ ոք չգիտեր, որ այդ պահին այնտեղ որոշվում է մոլորակի գլոբալ ճակատագիրը...*

Գնացքներն այս կողմերում գնում էին արևելքից արևմուտք և արևմուտքից արևելք...

Իսկ երկաթուղու շուրջը, այս կողմերում, փռված էին հսկայական ամայի տարածություններ՝ Սարի-Օզեկներ, Դեղին տափաստանների միջնակները:

Այս կողմերում ուզածդ տարածությունը չափվում էր երկաթուղուց, ինչպես Գրինվիչի միջօրեականից..

Իսկ գնացքները գնում էին արևելքից արևմուտք, և արևմուտքից արևելք...

*Դեռևս երկու ժամվա ճանապարհ էր մնում մինչև Անա-Բեյիթի գերեզմանոցը։ Թաղման թափորը սարօզեկներով ընթանում էր միևնույն կարգով. առջևում, ուղղություն տալով, ուղտին բազմել էր Բորանլի Եդիգեյը, նրա Կարանարը առաջվա նման գնում էր առջևից, լայն-լայն, անխոնջ ընթացքով։ Ետևից, խոյանով հասնում էին կցասայլով տրակտորը, որտեղ հանգուցյալ Ղազանղապի կողքին մենակ և համբերատար նստած էր փեսան՝ Այզադայի ամուսինը, նրանց ետևից՝ «Բելոռուս» էքսկավատորը։ Իսկ կողքից, մեկ առաջ անցնելով, մեկ ետ ընկնելով, մեկ որևէ հարգելի պատճառով կանգ առնելով, միշտ գործնական և ինքնավստահ վազում էր շեկ, լայնակուրծք շունը՝ Ջոլբարսը։*

*Արեգակը հասել էր զենիթին և այրում էր։ Ետևում էր մնացել ճանապարհի մեծ մասը, իսկ հսկայական սարօզեկները, ամեն մի թմբի ետևից բացահայտում էին նորանոր ամայի հողեր, որոնք տարածվում էին մինչև հորիզոնի վերջնագիծը։ Վիթխարի էր տափաստանային տարածությունը։ Ժամանակին այս վայրերում ապրել են վատահամբավ ջուանջուանները, եկվորներ, որոնք երկար ժամանակ տիրել են համարյա ամբողջ սարօզեկյան շրջանին։ Այս վայրերում ապրել են նաև այլ քոչվոր ժողո-*

վուրդներ և նրանց միջև մշտապես պատերազմներ են տեղի ունեցել արոտավայրերի և ջրհորների համար։ Մերթ սրանք էին հաղթում, մերթ՝ մյուսները։ Բայց թե՛ հաղթողները, թե՛ պարտվողները, միևնույն է, մնում էին այս նույն սահմաններում, այն տարբերությամբ, որ մեկը սեղմում էր, մյուսը լայնացնում իր տարածքը։ Եղիզարովն ասում էր, թե սարօզեկները, իբրև կենսական տարածություններ, արժեին այդ պայքարին։ Այն ժամանակ, գարնանը թե աշնանը, այստեղ ավելի շատ էին անձրևներ լինում։ Խոտը բավարարում էր խոշոր ու մանր եղջյուրավոր անասունների բազմաթիվ հոտերի։ Այն ժամանակներում այստեղով վաճառականներ էին անցնում, և առևտուր էր լինում։ Բայց հետո, իբր, կլիման մեկեն փոխվել է, անձրևները կտրվել են, ջրրհորները ցամաքել, արոտավայրերի խոտը վերջացել է։ Եվ սարօզեկների եկվոր ժողովուրդներն ու ցեղերը ցրվել են ամենքը մի կողմ, իսկ ջուանջուաններն իսպառ կորել են։ Շարժվել են Էդիլի կողմը, առաջ այդպես է կոչվել Վոլգան, և մերձէդիլյան կողմում անհետ չքացել են։ Ոչ ոք չգիտեր, թե որտեղի՞ց էին եկել և ոչ ոք չիմացավ, թե ո՞ւր կորան։ Խոսք կա, իբր, նրանք նզովքի են բռնվել, երբ ձմռանը ամբողջ խմբով անցնելիս են եղել Էդիլը, հանկարծ գետի վրայի սառույցը շարժվել է, և բոլորին՝ իրենց երամակներով ու հոտերով, տակովն արել...

Բնիկ սարօզեկցիները՝ ղազախական նոմադները, նույնիսկ այն ժամանակներում չեն հեռացել իրենց երկրից, մնացել են այս վայրերում, նորից ջրհորներ են փորել, ջուր հանել։ Բայց սարօզեկների համար ամենաեռուն ժամանակը համընկավ ետպատերազմյան տարիների հետ։ Հայտնվեցին ջրկիր-ավտոմեքենաներ, մի ջրկիր մեքենան, եթե իհարկե վարորդը լավ գիտեր տեղանքը, կարող էր սպասարկել երեք-չորս արոտավայր բնակատեղի։ Սարօզեկների արոտավայրերի վարձակալները՝ մերձակա մարզերի կոլտնտեսություններն ու սովետական տնտեսությունները, արդեն մտածում էին ստեղծել արածովի անասնապահության սարօզեկյան մշտական բազաներ։ Հաշիվներ ու հաշվարկներ էին արվում, թե այդպիսի կառուցումները որքան կնստեն տնտեսության վրա։ Եվ լավ էր, որ չշտապեցին։ Աննշմար, աննկատելի Անա-Բեյիթի մերձակայքում հայտնվեց անանուն մի քաղաք՝ Փոստարկղը։ Այդպես էլ ասում էին. գնացի Փոստարկղ, եղա Փոստարկղում, գնացինք Փոստարկղ, Փոստարկղում տեսա... Փոստարկղը ծավալվեց, կառուցվեց, փակվեց կողմնակի մարդ-

կանց համար։ Ասֆալտապատ ճանապարհը քաղաքը մի կողմից կապում էր տիեզերականին, մյուս կողմից՝ երկաթուղու կայարանին։ Դրանից էլ սկսվեց սարօզեկների նոր, ինդուստրիալ բնակեցումը։ Այս կողմերում ամբողջ անցյալից մնացել էր միայն Անա-Բեյիթի գերեզմանոցը՝ սարօզեկյան շրջանի ամենապատվավոր թաղման վայրը, որ գտնվում էր ուղտի սապատների նման իրար հպվող երկու երկվորյակ-բլուրների՝ Էգիզ-Թյուբեի վրա։ Հին ժամանակներում, այստեղ երբեմն մարդիկ այնքան հեռավոր անկյուններից են թաղման եկել, որ ստիպված գիշերել են տափաստանում։ Բայց դրա փոխարեն, Անա-Բեյիթում թաղվածների հետնորդները օրինական հպարտությամբ էին հիշում, որ իրենց նախնիների հիշատակին մատուցել են արժանի մեծարանք։ Այստեղ թաղում էին ժողովրդի ամենահարգելի և նշանավոր մարդկանց, որոնք երկար են ապրել, շատ են իմացել և իրենց խոսքով ու գործով արժանացել են բարի համբավի։ Եդիգարովը այդ բոլորը լավ գիտեր և այս վայրը անվանում էր սարօզեկյան պանթեոն։

Ահա, այն օրը Բորանլի երկաթուղային կիսակայարանից հենց դեպի այստեղ էր շարժվում ուղտա-տրակտորային արտառոց թափորը՝ շան ուղեկցությամբ...

Անա-Բեյիթի գերեզմանոցը ուներ իր պատմությունը։ Ավանդությունը սկսվում էր այնտեղից ,երբ ջուանջուանները անցյալ դարերում գրավելով սարօզեկները, բացառիկ դաժանությամբ էին վերաբերվում գերված ռազմիկներին։ Ամեն պատեհ առիթով, ջուանջուանները նրանց իբրև ստրուկի վաճառում էին հարևան շրջաններին, և դա դեռ բարեբախտություն էր համարվում գերու համար, որովհետև վաղ թե ուշ, ստրուկը կարող էր փախչել իր հայրենիքը։ Հրեշային վիճակ էր սպասում նրանց, ում ջուանջուանները պահում էին իրենց մոտ՝ ստրկության։ Նրանք, ահավոր փորձությամբ ոչնչացնում էին ստրուկի հիշողությունը, ղոհի գլխին հագցնելով շիրի։ Սովորաբար այդ վիճակին էին արժանանում մարտերում գերված երիտասարդները։ Սկզբում նրանց գլուխը մաքուր սափրում էին, խնամքով քերթում ամեն մի մազարմատ։ Երբ գլուխ սափրելն ավարտվում էր, անմիջապես փորձառու մսագործ ջուանջուանները մոտերքում սպանում էին մի մայր ուղտ, մորթին մաշկում էին, նախ անջատելով, վզի ամենածանր, ամուր մասը։ Վզի կաշին մասերի բաժանելով, տաք-տաք քաշում էին գերիների սափրված գլխին, որն

անմիջապես կպչում մնում էր, ինչպես ներկայիս լողի գլխարկը։ Սա էլ նշանակում էր շիրի հագցնել։ Ով ենթարկվում էր նման գործողության, մեռնում էր՝ չդիմանալով տանջանքներին, կամ ընդմիշտ զրկվում էր հիշողությունից դառնում մանկուրտ՝ ստրուկ, որ չի հիշում իր անցյալը։ Մի ուղտի վզի կաշին բավարարում էր հինգ-վեց շիրիի։ Շիրին հագցնելուց հետո յուրաքանչյուր դատապարտյալի շղթայում էին փայտյա հատուկ վզնոցով, որ փորձության ենթական ոչ մի կերպ չկարողանա գլուխը դնել գետնին։ Այդ վիճակով նրանց հեռացնում էին մարդաշատ տեղերից, որպեսզի սրտակեղեք աղաղակները չհասնեին մարդկանց, տանում գցում էին դաշտերը, բարկ արևի տակ, անջուր ու անհաց, ձեռ ու ոտը կապած։ Կտտանքը տևում էր մի քանի օր։ Միայն ուժեղացված պահակախմբերն էին հսկում ճանապարհները, որ գերիների ցեղակիցները չփորձեն ազատել նրանց՝ քանի դեռ ողջ էին, բայց այդպիսի փորձեր ձեռնարկվում էին խիստ հազվադեպ, որովհետև ամայի տափաստանում պարզ երևում էր ամեն մի շարժում։ Իսկ եթե հետագայում լուր էր տարածվում, թե այսինչին ջուանջուանները մանկուրտ են դարձրել, արդեն նույնիսկ հարազատները չէին ձգտում՝ ազատել նրան կամ փրկագին վճարել, որովհետև դա նշանակում էր վերադարձնել առաջվա մարդու խրտվիլակը։ Եվ լոկ մի Նայման մայր, որ ավանդության մեջ մնացել է Նայման-Անա անունով, չի հաշտվել որդու ճակատագրին։ Այդ մասին է պատմում սարօզեկյան առասպելը։ Այստեղից էլ Անա-Բեյիթ՝ Մայրական գերեզմանոց անվանումը։

Դաշտում, տանջալից փորձության ենթարկվող գերիները մեծ մասամբ մեռնում էին սարօզեկյան արեգակի տակ։ Հինգ-վեց մանկուրտից կենդանի էին մնում մեկ կամ երկու հոգի։ Նրանք մեռնում էին ոչ թե քաղցից և ոչ էլ նույնիսկ ծարավից, այլ անտանելի, անմարդկային տանջանքներից, որ պատճառում էր գըլխին չորացող, գլուխը սեղմող ուղտի չդաբաղված կաշին։ Արեգակի կիզիչ շողերից, շիրին անողոքաբար կծկվելով, երկաթյա օղակի նման ճնշում, սեղմում էր ստրուկի սափրված գլուխը։ Երկրորդ օրն արդեն սկսում էին աճել տառապյալների սափրված մազերը։ Ասիական կոշտ և ուղիղ մազերը երբեմն խրվում էին ուղտի չդաբաղված կաշվի մեջ, իսկ մեծ մասամբ, ելք չգտնելով, ծալվում էին և ծայրերը նորից մտնում էին գլխի մաշկի մեջ, պատճառելով անասելի տառապանքներ։ Վերջին փորձությունները ուղեկցվում էին գիտակցության լիակատար մթագնումով։

Միայն հինգերորդ օրը ջուանջուանները գալիս էին ստուգելու, թե գերիներից ո՞ր մեկն է ողջ մնացել։ Եթե տառապյալներից գեթ մեկը ողջ էր լինում, նշանակում էր, նպատակն իրագործված է։ Նրան ջուր էին տալիս, ազատում էին կապանքներից, և քիչ-քիչ վերադարձնում էին ուժերը, ոտքի կանգնեցնում։ Դա էլ հենց ստրուկ-մանկուրտն էր, բռնի կերպով հիշողությունից զրկված, այդ իսկ պատճառով շատ գնահատելի, ուներ տասը առողջ ստրուկի գին։ Նույնիսկ գոյություն ուներ կանոն, երկպառակտչական բախումների ժամանակ սպանված ստրուկ-մանկուրտի արյան գինը երեք անգամ ավելի բարձր էր սահմանվում, քան ազատ ցեղակցի կյանքինը։

Մանկուրտը չգիտեր ով է ինքը, որտեղ է ծնվել, չգիտեր իր անունը, չէր հիշում մանկությունը, հորը, մորը, մի խոսքով մանկուրտը չէր գիտակցում, որ ինքը մարդկային էակ է։ Մանկուրտը զրկված լինելով սեփական «եսի» գիտակցումից, տնտեսական տեսակետից ուներ բազմաթիվ առավելություններ։ Նա հավասարազոր էր անլեզու անասունի, որովհետև կատարելապես հնազանդ էր և անվտանգ։ Երբեք չէր մտածում փախուստի մասին։ Ամեն մի ստրկատիրոջ համար ամենասարսափելին ստրուկների ապստամբությունն էր։ Յուրաքանչյուր ստրուկ պոտենցիալ խռովարար էր։ Մանկուրտը այդ տեսակետից եզակի բացառություն էր. ներքուստ նրան խորթ էին խռովության, անհնազանդության մղումները։ Նրան անծանոթ էին այդպիսի կրքերը։ Դրա համար էլ անհրաժեշտություն չէր զգացվում հսկել նրան, պահակախումբ պահել և մանավանդ կասկածել գաղտնի ծրագրեր ունենալու մեջ։ Մանկուրտը շան նման հավատարիմ էր միայն իր տերերին։ Ուրիշների հետ չէր հաղորդակցվում։ Նրա բոլոր մտքերը պտտվում էին միայն փորը կշտացնելու շուրջը։ Այլ հոգսերն անծանոթ էին նրան։ Բայց հանձնարարված գործը կատարում էր կուրորեն, ջանասիրաբար, առանց շեղումների։ Սովորաբար մանկուրտին տալիս էին ամենակեղտոտ, ամենածանր գործերը կամ էլ դեմ էին տալիս ամենաձանձրալի, տհաճ զբաղմունքները, որոնք պահանջում էին բութ համբերություն։ Միմիայն մանկուրտը կարող էր դիմանալ անսահմանորեն խուլ ու անմարդ սարօզեկների մենությանը, անբաժան մնալով արածող ուղտերի երամակներից։ Նա մեն-մենակ այդքան հեռավոր տեղերում փոխարինում էր բազում աշխատավորների։ Ընդամենը անհրաժեշտ էր միայն ուտելիք բերել նրան, և նա ամառ-ձմեռ անընդ-

մեջ մնում էր գործարանում, չճնշվելով վայրենացումից ու չգանգատվելով զրկանքներից։ Տիրոջ կարգադրությունը մանկուրտի համար վեր էր ամեն բանից։ Նա, բացի ուտելիքից և հնոտիից, որպեսզի չսառչի տափաստանում, ուրիշ ոչինչ չէր պահանջում իր համար...

Որքան ավելի հեշտ է թռցնել դերու գլուխը կամ ահաբեկելու համար որևիցե այլ վնաս հասցնել, քան խլել նրա հիշողությունը, ավերել նրա գիտակցությունը, արմատախիլ անել այն, ինչ ապրում է մարդու հետ մինչև վերջին շունչը, մնալով նրա միակ ձեռքբերումը, և նրա հետ էլ իջնում է գերեզման, անմատչելի մնալով ուրիշներին։ Բայց քոչվոր ջուանջուանները իրենց խավարամիտ պատմությունից դուրս բերելով բարբարոսության ամենադաժան ձևը, ոտնձգություն են արել մարդու այդ նվիրական էության վրա նույնպես։ Նրանք գտել էին ստրուկներից կենդանի հիշողությունը խլելու միջոցը, դրանով իսկ մարդկային բնությանը պատճառելով հնարավոր և անհնարին բոլոր չարագործություններից ամենադաժանը։ Եվ պատահական չի, որ Նայման-Անան, ողբալով մանկուրտ դարձված իր որդուն, անել վշտի և հուսահատության մեջ ասել է.

«Երբ խլեցին քո հիշողությունը, որդյակ իմ, երբ գլուխդ ընկույզի նման սառն աքցանի մեջ և գանգիդ վրա քաշեցին ժամ առ ժամ չորացող ուղտի կաշին, երբ անտես օղակն այնպես հագցրին գլխիդ, որ սարսափից արյունած աչքերդ դուրս ընկան ակնախոռոչներից, երբ սարօզեկների անբոց, անծուխ խարույկի վրա մահվան ծարավն էր տանջում քեզ, և չկար ոչ մի կաթիլ, որ երկնքից իջներ շուրթերիդ, ասա, արեգակն արդար, որ կյանք է պարգևում ամենին, մի՞թե չդարձավ քեզ համար ատելի, չդարձա՞վ արդյոք կույր ու խավար։

Երբ հոգեմաշ ցավից աղեկտուր ճիչդ բռնել էր անապատը, երբ օրեր, գիշերներ գոռում գալարվում էիր աստված կանչելով, երբ օգնություն էիր սպասում դատարկ երկնքից, երբ խեղդվում էիր քո չարչարվող մարմնից քամվող փսխուքից, երբ կծիկ-կծիկ էիր լինում քեզնից հոտող աղտեղության մեջ, երբ ուշքդ գնում էր գարշ հոտերից, խելքդ մաղվում, ճանճի կեր էիր դառնում, ասա, վերջին ուժերդ լարելով չանիծեցի՞ր արդյոք աստծուն, որ ստեղծել է մեզ, բոլորիս, այս, իր իսկ լքած աշխարհում։

Երբ մթության մշուշը ամիշտ փռվում էր կտտանքներից

խեղված մտքիդ վրա, երբ քո կողոպտված հիշողությունն անդարձ կորցնում էր անցյալի թելը, երբ կատաղի գալարումների մեջ մոռանում էիր մորդ հայացքը, գետի խշշոցը՝ լեռան լանջին, որտեղ խաղ էիր անում ամռանը, երբ քո խորտակված հիշողության մեջ կորցնում էիր անունդ, հորդ անունը, երբ խամրում էին մարդկանց դեմքերը, որոնց մեջ մեծացել էիր դու, և մշուշվում էր այն աղջկա դեմքը, որ ամաչկոտ ժպտացել էր քեզ, մի՞թե ընկնելով մոռացության խորխորատը դու ահեղ անեծքով չանիծեցիր քո մորը, որ համարձակվել է սաղմնավորել քեզ իր արգանդում և լույս աշխարհ բերել այս օրվա համար...»։

Այս պատմությունը վերաբերվում է այն ժամանակներին, երբ ջուանջուանները դուրս մղվելով քոչվոր Ասիայի հարավային սահմաններից, թափվեցին հյուսիս և երկար ժամանակ զավթելով սարօզեկները, անընդմեջ պատերազմներ էին մղում տիրույթը մեծացնելու և ստրուկներ ձեռք բերելու ծարավով։ Սկզբնական շրջանում, օգտվելով իրենց արշավանքի անակնկալությունից, սարօզեկներին սահմանակից հողերում նրանք շատ գերի վերցրին, այդ թվում նաև կանանց ու երեխաների։ Բոլորին քշեցին ստրկության։ Սակայն հետագայում ուժեղացավ դիմադրությունը օտար արշավանքների դեմ։ Սկսվեցին արյունահեղ ընդհարումներ։ Ջուանջուանները միտք չունեին հեռանալու սարօզեկներից, ընդհակառակը ձգտում էին հիմնավորապես հաստատվել տափաստանային այս ընդարձակ, անասնապահական հողերում։ Իսկ տեղական ցեղերը չէին հաշտվում այդ կորուստներին և իրենց իրավունքն ու պարտքն էին համարում վաղ թե ուշ քշել զավթիչներին։ Այսպես թե այնպես, մեծ ու փոքր մարտերը մղվում էին փոփոխական հաջողությամբ։ Սակայն, քայքայիչ պատերազմների ժամանակ նույնպես եղել են խաղաղության պահեր։

Այդպիսի խաղաղ մի պահի, քարավանով նայմանյան երկիրը ապրանքներ բերած վաճառականները թեյ խմելով պատմում էին, թե ինչպես են անցել սարօզեկյան տափաստանները, առանց հատուկ արգելքների հանդիպելու ջուանջուանների կողմից, և հիշեցին, որ սարօզեկներում տեսել են մի երիտասարդ հովվի, ուղտերի հսկայական երամակի մոտ։ Վաճառականները ուզեցել են խոսեցնել նրան, բայց պարզվել է, որ նա մանկուրտ է։ Առողջ տեսք ունի և մտքովդ անգամ չի անցնի, թե այդպիսի փորձանքի մեջ է ընկել։ Երևի ժամանակին ոչ մեկից պակաս չի եղել։ Երևի ասող-խոսող, շենք ու շնորհքով տղա է եղել, և դեռ ջահել-ջիվան

է, բեղերը նոր-նոր ծլում են։ Սիրուն էլ տղա է, բայց երբ հետը խոսում ես, թվում է, երեկ է աշխարհ եկել, խեղճը չի հիշում, չգիտի, ոչ իր, ոչ հոր ու մոր անունը, չգիտի նույնիսկ, թե ջուանջուանները ինչ փորձանք են բերել գլխին, չգիտի, թե ինքը որտեղացի է։ Ի՞նչ ուզում ես հարցրու, լռում է, միայն «այո», «ոչ» է պատասխանում, և շարունակ ձեռքով պահում է մինչև աչքերը քաշած գլխարկը։ Որքան էլ մեղք բան է, բայց մարդիկ խեղվածների վրա էլ են ծիծաղում։ Այդ խոսքի վրա նրանք ծիծաղեցին, թե կան մանկուրտներ, որոնց գլխին տեղ-տեղ ընդմիշտ կպած է մնում ուղտի կաշին։ Այդպիսի մանկուրտների համար ամենավատթար պատիժն այն է, երբ վախեցնում ես, թե, արի խաշենք գլուխդ։ Վայրի ձիու նման պատեպատ կզարկվի, բայց չի թողնի գլխին ձեռք տաս։ Այդպիսիները գիշեր-ցերեկ գլխարկը չեն հանում գլխից, գլխարկով քնում են... Եվ, սակայն,— շարունակեցին հյուրերը,— հիմարը հիմար, բայց իր գործը մանկուրտը լավ էր կատարում, արթուն հսկում էր, մինչև որ քարավանը բավական հեռացավ ուղտերի արոտավայրից։ Հրաժեշտի պահին քարավանապետը խաղաց մանկուրտի հոգու հետ։

— Երկար է լինելու մեր ճանապարհը։ Ո՞ւմ բարև տանեմ քեզանից, որ գեղեցկուհո՞ւն, որ կողմերում։ Ասա, մի՛ քաշվիր։ Լսո՞ւմ ես, գուցե թաշկինա՞կ հանձնեմ քո կողմից։

Մանկուրտը երկար լռեց, նայելով քարավանապետին, հետո ասաց.

— Ես ամեն օր նայում եմ լուսնին, նա էլ՝ ինձ։ Բայց մենք իրար չենք լսում... Այնտեղ մարդ է նստած...

Այս խոսակցության ժամանակ վրանում ներկա է լինում մի կին։ Նա թեյ էր լցնում վաճառականներին։ Նայման-Անան էր։ Այդ անունով է նա մնացել սարօզեկյան առասպելներում։

Նայման-Անան անցորդ հյուրերի առջև իրեն չի մատնում։ Ոչ ոք չի նկատում, թե այդ լուրը որքան տարօրինակ կերպով ցնցում է նրան, որքան է այլայլվում նա։ Ուզում է մանրակրկիտ հարցուփորձ անել վաճառականներին այն ջահել մանկուրտի մասին։ Բայց վախենում է, վախենում է լսածից ավելին իմանալ։ Եվ կարողանում է լռել, խեղդել իր մեջ արթնացած տագնապը, ինչպես ծղրտացող վիրավոր թռչունի... Այդ ժամանակ խոսակցության նյութը փոխվել է, ոչ ոքի այլևս չի հետաքրքրել տարաբախտ մանկուրտը, ինչ դեպք ասես, որ չի պատահում կյանքում, իսկ Նայման-Անան դեռ աշխատում էր հաղթահարել իրեն պաշա-

րած երկյուղը, հանգստացնել ձեռքերի դողը, կարծես խեղդելս իր մեջ խեղդել էր այն ծղրտացող թռչունին, և միայն ավելի վար իջեցրեց դեմքին սգո սև գլխաշորը, որ վաղուց սովորական էր դարձել նրա ճերմակած մազերին։

Վաճառականների քարավանը շուտով ընաց իր ճանապարհով։ Եվ այդ անքուն գիշերը Նայման-Անան հասկացավ, որ այլևս դադար չի ունենա, եթե սարօղլեկներում չփնտրի հովիվ-մանկուրտին և չհամոզվի, որ նա իր որդին չի։ Այդ տանջալից, սարսափելի միտքը նորից մայրական սրտում արթնացրեց վաղուց ի վեր տարտամ նախազգացումով բույն դրած կասկածը, թե որդին զոհվել է ռազմի դաշտում... Իհարկե, ավելի լավ կլիներ կրկնակի անգամ թաղեր նրան, քան այսպես տանջվեր, չարչարվեր իրեն հետամուտ վախից, հետամուտ ցավից, հետամուտ կասկածից։

Նրա որդին սպանվել էր սարօղլեկների կողմում, ջուանջուաններների դեմ մղված մարտերից մեկի ժամանակ։ Ամուսինը սպանվել էր տղայից մի տարի առաջ։ Նշանավոր, անուն ունեցող մարդ էր նայմանների մեջ։ Հետո որդին մեկնեց առաջին ռազմերթով, որպեսզի լուծի հոր վրեժը։ Սպանվածներին չէր կարելի թողնել մարտի դաշտում։ Ցեղակիցները պարտավոր էին բերել նրա մարմինը։ Բայց դա անհնարին է եղել։ Այն մեծ զոհեմարտի օրը, երբ ընդհուպ մոտեցել են թշնամուն, շատերն են տեսել, որ Նայման Անայի որդին ընկել է ձիու բաշի վրա, և մարտի թոհուբոհից սարսափած, կրակ կտրած ձին նրան փախցրել է հեռու։ Այդ ժամանակ տղան ընկել է թամբից, բայց ոտքը վռվել է ասպանդակի արանքում, և նա ուշաթափ կախվել է ձիու կողից, ձին դրանից ավելի խենթացած, մրրիկի պես սուրացել է, նրա անշունչ մարմինը քարշ տալով տափաստան։ Հակառակի նման, ձին վազել է թշնամու կողմը։ Չնայած թեժ, արյունահեղ մարտի ժամանակ ամեն ոք պարտավոր է լինել տեղում, այսուամենայնիվ ցեղակիցներից երկուսը նետվել են ձիու ետևից, որ բռնեն, վերցնեն սպանվածի մարմինը։ Սակայն ջուանջուանների ջոկատից մի քանի հեծյալ, որ դարան էին մտել ձորակում, աղմուկ-աղաղակով կտրում են ճանապարհը։ Նայմաններից մեկը անմիջապես նետահար ընկնում է, մյուսը ծանր վիրավորված շրջում է ձիու գլուխը, մի կերպ հասնում յուրայիններին և այստեղ փռվում գետնին։ Այդ դեպքը նայմաններին օգնում է ժամանակին հայտնաբերելու դարան մտած ջուանջուանների ջոկատը, որ ամենա-

վճռական պահին պատրաստվում էր հարված հասցնել թևից։ Նայմանները արագ նահանջում են, որպեսզի վերախմբավորվեն և նորից մարտի նետվեն։ Եվ, իհարկե, ոչ ոքի արդեն չի հետաքրքրում, թե ինչ եղավ իրենց ջահել ռազմիկը, Նայման-Անայի որդին... Վիրավոր Նայմանը, այն որ սուրացել էր յուրայինների մոտ, հետագայում պատմում էր, թե երբ իրենք ընկել էին նրա որդու ետևից, որդուն քարշ տվող ձին հանկարծ չքացել է տեսողությունից, գնացել անհայտ ուղղությամբ...

Մի քանի օր շարունակ նայմանները դուրս են եկել որոնելու մարմինը։ Բայց չեն գտել ոչ սպանվածին, ոչ նրա ձիուն, ոչ նրա զենք ու զրահը, և ոչ էլ ուրիշ որևէ հետք։ Որ նա սպանվել էր, ոչ ոք չէր կասկածում, եթե անգամ վիրավոր լիներ, ծարավից կմեռներ անապատում կամ արյունաքամ կլիներ։ Սուգ ու շիվանը գցել են, որ իրենց ջահել ցեղակիցը անթաղ մնացել է անմարդ սարօզեկներում։ Դա խայտառակություն էր բոլորի համար։ Նայման-Անայի վրանում լացող կանայք նախատում էին իրենց ամուսիններին ու եղբայրներին և ողբ ասում.

— Անգղ ու աղռավ բզկտել են նրան դաշտում, գել ու գազան քարշ են տվել տարել նրան։ Էլ ի՞նչ տղամարդ եք դուք, ինչպես պիտի գլխարկ դնեք ձեր գլխին...

Եվ Նայման-Անայի համար ձգվեցին դատարկ օրերը, դատարկված երկրում։ Նա հասկանում էր, որ պատերազմում մարդիկ մեռնում են, բայց այն միտքը, որ իր որդին ընկած է մնացել մարտի դաշտում, որ մարմինը չի հանձնվել հողին, նրան քուն ու դադար չէր տալիս։ Մորմոքում էր մայրը, դառը, անվերջանալի մտքերին գերի։ Եվ չգիտեր ո՞ւմ առաջ բացեր սիրտը, որ թեթևանար վիշտը, չգիտեր ում դիմեր, բացի աստծուց...

Որպեսզի ինքն իրեն արգելեր մտածելու այդ մասին, պետք է սեփական աչքերով համոզվեր, որ տղան մահացած է։ Այն ժամանակ, ով պիտի դեմ գնար ճակատագրի կամքին։ Նրան ամենից շատ շփոթեցնում էր այն հանգամանքը, որ անհետ կորել էր որդու ձին։ Ձին չէր խփվել, նա սարսափից փախել էր։ Իբրև սովորական երամակի ձի, վաղ թե ուշ, պիտի վերադառնար հարազատ վայրերը և հետը բերեր սպանդակից կախված հեծյալի դին։ Այդ դեպքում, որքան էլ սոսկալի լիներ, մայրը կհեծեծար, կողբար, կոռնար դիակի վրա և, երեսը եղունգներով չանգռելով, կպատմեր, թե որքան թշվառ ու անիծված է ինքը, այնքան կասեր, մինչև աստված տխրեր երկնքում, եթե իհարկե նա

այլասացությունից բան է հասկանում։ Բայց գոնե այլևս կասկած չէր մնա սրտում և մահին կնախապատրաստվեր սառը դատողությամբ, կսպասեր իր ժամին, չկառչելով կյանքից, նույնիսկ մտովի չհապաղելով, որ չերկարացնի իր կյանքը։ Բայց որդու մարմինը այդպես էլ չգտան, ձին էլ չվերադարձավ։ Կասկածները տանջում էին մորը, չնայած ցեղակիցները կամաց-կամաց մոռացան այդ մասին, քանզի բոլոր կորուստների ցավը ժամանակի ընթացքում բթանում է և ենթակա է մոռացման... Եվ միայն մայրը չէր կարողանում հանգստանալ ու մոռանալ։ Մտքերը շարունակ պտըտվում էին միևնույն ուղղությամբ։ Ի՞նչ է պատահել ձիուն, որտեղ է մնացել ձիասարքը, զենքը, որոնց միջոցով, թեկուզև անուղղակի, կարելի կլիներ որոշել, թե ինչ է եղել որդին։ Չէ՞ որ հնարավոր էր, որ սարօզեկներում ձիուն բռնած լինեին ջուանջուանները, երբ նա ուժասպառ է եղել և թույլ է տվել, որ իրեն բռնեն։ Ավելորդ ձին, լավ ձիասարքով, նույնպես ավար է։ Ուրեմն այդ դեպքում ինչպե՞ս են վարվել ասպանդակից կախված իր որդու հետ. հո՞ղն են դրել, թե նետել են, որ տափաստանային գազանները հոշոտեն։ Իսկ եթե նա ողջ է եղե՞լ, մի հրաշքով ողջ է եղել։ Խփել-սպանե՞լ են արդյոք և վերջ դրել նրա տանջանքներին, թե՞ նետել են ամայի դաշտը՝ հոգին ավանդելու, թե՞... իսկ եթե հանկարծ...

Վերջ չկար կասկածներին։ Եվ երբ անցորդ վաճառականները թեյի ժամանակ խոսք բացեցին սարօզեկներում տեսած ջահել մանկուրտի մասին, նույնիսկ գլխի չընկան, թե ինչ կրակ գցեցին Նայման-Անայի ցաված սիրտը։ Սիրտը կանգ առավ տագնապալի նախազգացումից։ Եվ այն զգացումը, թե դա կարող էր իր կորած որդին լինել, հետզհետե ավելի համառորեն և ավելի սաստիկ էր պաշարում նրա միտքն ու հոգին։ Մայրը հասկացավ, որ չի հանգըստանա, մինչև չփնտրի, չտեսնի այդ մանկուրտին, չհամոզվի, որ դա իր որդին չի։

Այն կիսատափաստանային նախալեռներում, նայմանների ամառային իջևանատեղերում հոսում էին քարքարոտ գետակներ։ Ամբողջ գիշերը Նայման-Անան ականջ էր դնում հոսող ջրին։ Ինչ էր ասում ջուրը, այնքան քիչ ներդաշնակելով իր հոգու խռովքին։ Հանգստանալ էր ուզում։ Մի լավ լսել էր ուզում վազող ջրի քչքչոցը, հագենալ էր ուզում այդ քչքչոցից, մինչև որ գնար սուզվեր սարօզեկների խուլ լռության մեջ։ Մայրը գիտեր, թե որքան վտանգավոր և համարձակ բան է միայնակ սարօզեկներ

գնալը, բայց չէր ցանկանում որևէ մեկին տեղյակ պահել իր որոշման մասին։ Ոչ ոք չէր հասկանա իրեն։ Նույնիսկ հարազատները հավանություն չէին տա իր մտադրությանը։ Ի՞նչ իմաստ ունի դուրս գալ որոնելու վաղուց սպանված որդուն։ Եթե նույնիսկ որևէ պատահականությամբ նա կենդանի է մնացել և դարձել մանկուրտ, ապա ավելի քան անիմաստ է որոնել նրան, իզուր սիրտ կեղեքել, որովհետև մանկուրտը լոկ արտաքին թաղանթ է, նախկին մարդու խրտվիլակը...

Այդ գիշեր, մեկնելու նախօրեին, մի քանի անգամ դուրս եկավ յուրտից։ Երկար նայում էր դիմացը, ականջ դնում, աշխատում կենտրոնանալ, ժողովել մտքերը։ Կեսգիշերային լուսինը կանգնած էր գլխավերևում, բարձր, անամպ երկնքում, երկիրը ողողելով գունատ կաթնալույսով։ Այս ու այնտեղ, երկարուկ բլրակների լանջերին ցրված բյուրավոր սպիտակ յուրտերը նման էին խոշոր թռչունների երամի, որ իջել էին գիշերելու խշշացող գետակների ափերին։ Աուլի մոտ, այնտեղ, ուր գտնվում էին ոչխարի փարախները և ավելի այն կողմ, ձորակներում, որտեղ ձիերի երամակներ էին արածում, լսվեցին շան հաչոց և մարդկային անորոշ ձայներ։ Բայց Նայման-Անային ավելի շատ հուզում էին աուլի մերձակա փարախների մոտ երգող աղջիկների փոխկանչերը։ Ինքն էլ է ժամանակին երգել այդ գիշերային երգը։ Այստեղ էին կանգ առնում ամեն ամառ, ինչքան իրեն հիշում է, այն օրից, ինչ հարս եկավ այստեղ։ Ամբողջ կյանքն այս վայրերում է անցել. թե այն ժամանակ, երբ ընտանիքը մեծ էր և միանգամից չորս յուրտ էին խփում, մեկն իբրև խոհանոց, մյուսը՝ հյուրասենյակ, երկուսն էլ՝ բնակելի, թե հետո, ջուանջուաններ արշավանքից հետո էլ, երբ մնաց մեն-մենակ...

Հիմա ինքն էլ էր լքում իր մենավոր յուրտը... Երեկվանից ճամփի պատրաստություն էր տեսնում։ Հաց ու ջուր է վերցրել։ Ջուր շատ է վերցրել. երկու տիկ, մեկ էլ տեսար չկարողացավ շուտ ջրհոր գտնել սարօզեկներում։ Դեռևս երեկվանից ուղտը՝ Ակմայան, կապված է յուրտի մոտերքում։ Ակմայան իր հույսն է և ուղեկիցը։ Թե չէ ինչպե՞ս կհամարձակվեր մտնել սարօզեկների խուլուխավարը, եթե չպատվիներ Ակմայայի ուժին ու արագ վազքին։ Այդ տարին Ակմայան ստերջ էր մնացել, հանգստանում էր երկու ծննդաբերությունից հետո և գերազանց հեծելավիճակում էր։ Ջորիկ-մորիկ, երկար, ուժեղ ոտքերով, ճկուն ներբաններով, որոնք դեռ չէին մաշվել, անհամապատասխան ծանր

բեռից ու ծերությունից, զույգ ամուր սապատներով, մկանուտ, գեղեցիկ վզով և չորիկ, դուրեկան գլխով, թիթեռնիկի թևերի նըման թրթռուն, նուրբ ռունգերով, որոնք վաղքի պահին լիաթոք ներծծում էին օդը, սպիտակ Ակմայա ուղտը մեծ գին ուներ, մի ամբողջ երամակի գին։ Այդպիսի արագավազ, ուժերի ծաղկման շրջանում գտնվող ուղտին տալիս էին տասնյակ գլուխ մատղաշ, որպեսզի նրանից հետնորդներ ծնվեն։ Դա Նայման-Անայի վերջին գանձն էր, ոսկյա մերունը, նախկին հարստության միակ հիշատակը։ Մնացյալը փոշու նման հօդս էր ցնդել։ Պարտքեր։ Սպանվածների քառասունքի և մահվան տարելիցի կատարումներ... Տղայի առիթով նույնպես, որին անհուն կարոտով ու վըշտով գնում էր որոնելու նախազգացումից մղված, վերջերս հոգեհաց էր տվել. շատ ժողովուրդ էր եկել, մերձավոր շրջանի բոլոր նայմանները։

Լուսաբացին Նայման-Անան դուրս եկավ յուրտից, ճամփա ընկնելու պատրաստ։ Շեմն անցավ, կանգնեց, հենվեց դռանը, մտքի մեջ ընկավ, հայացքը գցեց քնած աուլին... բարեկազմ, անցյալի գեղեցկությունը դեռ պահպանած Նայման-Անան ինչպես հարկն է զարդարվել էր հեռավոր ճանապարհի համար։ Հագել էր երկարաճիտ կոշիկներ, տաբատ, զգեստի վրայից բաճկոնակ, ուսերից ազատ վար իջնող թիկնոց։ Կապել էր սպիտակ գլխաշոր, ծայրերը ագուցել ծոծրակին։ Այդպես էր որոշել գիշերային անքուն մտածումների ժամանակ, եթե հույս ունի որդուն ողջ տեսնելու, էլ ի՞նչ սուգ։ Իսկ եթե հույսը իրականություն չդառնա, հետո էլ կարող է գլուխը փաթաթել հավերժական սև գլխաշորով։ Մշուշոտ առավոտը թաքցնում էր մոր ճերմակած մազերի և խոր տառապանքի կնիքը՝ վշտահար դեմքն ակոսող կնճիռները։ Հանկարծ աչքերը խոնավացան, և նա ծանր հոգոց հանեց։ Մի՞թե մտքով կանցներ, մի՞թե կարող էր գուշակել, թե գլխին այսպիսի բան է գալու։ Բայց հետո հավաքեց իրեն։ «Աշվաղան լյա իլլա հիլ ալլահ»,— շշնջաց նա աղոթքի առաջին տողը (չկա այլ աստված, բացի աստծուց) և վճռաբար մոտեցավ ուղտին, չոքեցրեց նրան։ Սովորականի պես գոռալով, ոչ բարձր ձայն արձակելով, Ակմայան անշտապ կուրծքը գետնին իջեցրեց։ Նայման-Անան արագորեն թամբին գցեց խուրջինը և հեծավ ուղին, հետո խթանեց, սա վեր կացավ, ուղղեց ոտքերը և անմիջապես տիրուհուն կարեց, վեր բարձրացրեց գետնից։ Ակմայան հասկացավ. իրեն ճանապարհ է սպասում...

*Աուլում ոչ ոք չգիտեր Նայման-Անայի ուղևորության մասին և բացի քնահարամ ազգական-սպասուհուց, որ բոպեն մեկ բերանը լայն բացելով հորանջում էր, ոչ ոք նրան ուղեկից չեղավ այդ ժամին։ Սպասուհուն դեռևս երեկ էր ասել, թե մտադիր է հյուր գնալու իր ասրկաններին՝ հարազատների մոտ և, այնտեղից, եթե ուխտավորներ լինեն, հետները կգնա ղպչաղների կողմը, աղոթելու սուրբ Յասավիի տաճարում։*

*Վաղ դուրս եկավ, որ ոչ ոք ավելորդ հարցուփորձով չանհանգստացնի իրեն։*

*Աուլից հեռանալով, Նայման-Անան ուղղվեց սարօզեկների կողմը, որի պղտոր հեռուն հազիվ էր նշմարվում դիմացի անշարժ ամայության մեջ։*

Գնացքներն այս կողմերում գնում էին արևելքից արևմուտք և արևմուտքից արևելք...

Իսկ երկաթուղու շուրջը, այս կողմերում, փռված էին ճսկայական ամայի տարածություններ՝ Սարի-Օզեկներ, Դեղին տափաստանների միջնակերը:

Այս կողմերում ուզածդ տարածությունը չափվում էր երկաթուղուց, ինչպես Գրինվիչի միջօրեականից...

Իսկ գնացքները գնում էին արևելքից արևմուտք և արևմուտքից արևելք...

*«Կոնվենցիա» ավիակրից գնաց ևս մի ռադիոծածկագիր, ուղղված «Պարիտետ» ուղեծրային կայանի տիեզերագնաց հըսկիչներին։ Այդ ռադիոգրում, միևնույն կտրական-նախազգուշական տոնով առաջարկվում էր ռադիոկապ չհաստատել Արեգակնային Գալակտիկայից դուրս գտնվող պարիտետ-տիեզերագնացներ 1—2 և 2—1-ի հետ՝ նրանց ուղեծրային կայան վերադառնալու ժամանակը և հնարավորությունները քննարկելու նպատակով, այսուհետև սպասել Միաղեկկենտրոնի ցուցումներին։*

*Օվկիանոսում փոթորկի թափը կոտրվել էր։ Ավիակիրը նկատելի ճոճվում էր ալիքների վրա։ Խաղաղօվկիանոսյան ջուրը խաղ էր անում վիթխարի նավախելի երկարությամբ։ Արեգակն առաջվա նման փայլում էր ծովային տարածության վրա, հափըշտակված ալիքների անընդհատ եռացող սպիտակափրփուր շարժումով։ Քամին հոսում էր համաչափ շնչառությամբ։*

*«Կոնվենցիա» ավիակրի բոլոր ծառայությունները, ներառյալ*

ավիաթեր և պետական շահերի անվտանգության խմբերը, կազմ-պատրաստ սպասում էին...

Արդեն մի քանի օր էր, ինչ սպիտակ ուղտ Ակմայան, միօրինակ մնչալով, հազիվ լսելի սնգսնգոցով վարգում էր սարօզեկյան հսկա տափաստանի ձորակներով ու հովիտներով, իսկ տիրուհին անընդհատ խթանում էր նրան, քշում տաք և ամայի հողերով։ Նրանք դադար առան միայն գիշերը, ծանծաղ ջրհորի մոտ։ Իսկ առավոտյան նորից ճամփա ընկան՝ որոնելու սարօզեկների անհամար ծալքերում կորած ուղտերի մեծ երամակը։ Այստեղ, սարօզեկների այս մասում, բազմաթիվ կիլոմետրերով, ձգվող Մալաքումդիչապի կարմրավուն, ավազոտ զառիթափից ոչ հեռու, անցորդ վաճառականները վերջերս տեսել էին այն հովիվ-մանկուրտին, որին այժմ փնտրում էր Նայման-Անան։

Արդեն երկրորդ օրն էր, ինչ նա պտտվում էր Մալաքումդիչապի շուրջբոլորը, վախենալով հանդիպել ջուանջուանների, թեև որքան նայում էր, որքան այս ու այն կողմ էր ընկնում, ամենուրեք համատարած տափաստան էր, խաբուսիկ միրաժներ։ Մի անգամ նույնիսկ հավատալով տեսիլքին, կտրեց հսկայական, ոլոր-մոլոր ճանապարհ, որ մտնի մզկիթներով ու բերդապարիսպներով շրջապատված օդային քաղաքը։ Միգուցե իր որդին այնտեղ լինի, ստրկավաճառների շուկայում։ Այդ դեպքում, որդուն կնստեցներ Ակմայայի թամբին, իր թիկունքում և այն ժամանակ թող որևէ մեկը փորձեր հետապնդել... Ծանր է անապատի կյանքը, դրա համար էլ այդպիսի տեսիլներ են երևում։

Իհարկե, դժվար է սարօզեկներում մարդ գտնելը, մարդն այստեղ ավազահատիկ է, բայց եթե այդ մարդը հսկում է մեծ երամակի, որն արոտավայրերում ահագին տեղ է գրավում, ապա վաղ թե ուշ կտեսնես գոնե մի անասունի, հետո մյուսներին, այնուհետև հովվին՝ երամակի գլխին։ Նայման-Անայի հույսը հենց այդ էր։ Բայց առայժմ ոչ մի տեղ ոչինչ չէր երևում։ Արդեն անհանգստանում էր, որ կարող են երամակը քշած լինել ուրիշ տեղ կամ, արդյո՞ք ջուանջուանները ուղտերին ամբողջ խմբով չեն քշել Խիվա կամ Բուխարա՝ վաճառքի։ Կվերադառնա՞ արդյոք հովիվը այդքան հեռու տեղերից... Երբ մայրը, կարոտից ու կասկածից տանջվելով, դուրս էր գալիս տունից, լոկ մի բաղձանք ուներ. տեսներ, միայն թե ողջ տեսներ տղային, թեկուզև մանկուրտ լինի, ով ուզում է լինի, թող չհիշի ոչինչ, թող չհասկանա

ուշինչ, բայց երանի որդին լինի ողջ, պարզապես ողջ... Մի՞թե դա քիչ է։ Բայց խորանալով սարօզեկների մեջ, հասնելով այն տեղին, որտեղ կարող էր լինել քարավանով անցնող վաճառականների տեսած այն հովիվը, սկսեց վախենալ, որ հանձին որդու տեսնելու է բանականությունը խեղված մի արարածի։ Վախը չլատում, ճնշում էր նրան։ Այնժամ նա աղոթեց աստծուն, որ հովիվը իր որդին չլինի, այլ ուրիշ մի դժբախտ, և պատրաստ էր անտրտունջ համակերպվել ճակատագրին, որ որդին չկա և չի կարող ողջ լինել։ Իսկ այժմ, պարզապես գնում է տեսնելու մանկուրտին և համոզվելու, որ իր կասկածներն անտեղի են, և երբ համոզվի, կվերադառնա տուն, այլևս չի տանջվի տորովի, կապրի իր կյանքը, որքան հաճո է ճակատագրին... Բայց հետո դարձյալ գլուխ բարձրացրեց կարոտը և ինչ գնով ուզում է լինի սարօզեկներում ոչ թե որևէ մեկին, այլ հենց իր տղային գտնելու ցանկությունը...

Զգացմունքների այդ տարուբերումների մեջ նա հանկարծ, թեք թմբի վրայից անցնելիս, տեսավ բազմաթիվ ուղտերի երամակ, հարյուրավոր գլուխ ուղտեր ազատ արածում էին ընդարձակ հովտում։ Թուխ, պարարտ ուղտերը ման էին գալիս ցանցառ թփուտների և տատասկների մեջ, պոկոտելով դրանց կատարները։ Նայման-Անան մտրակեց Ակմայային, ամբողջ թափով առաջ սուրաց և սկզբում ուղղակի քիչ էր մնում խեղդվեր ուրախությունից, որ վերջապես գտել է երամակը, հետո վախեցավ, դող անցավ մարմնով, սարսափեց, որ հիմա կտեսնի մանկուրտ որդուն։ Հետո նորից սիրտը թունդ եղավ, և արդեն ինքն էլ չէր հասկանում, թե ինչ է ուզում։

Ահա արածող երամակը։ Իսկ ո՞ւր է հովիվը։ Երևի այստեղ մի տեղ է։ Իրոք, հովտի մյուս ծայրին տեսավ մի մարդու։ Հեռվից դժվար էր զանազանել, թե ով է։ Հովիվը կանգնած էր երկար մահակը ձեռքին և ետևից պահում էր հեծկան ուղտին՝ մեջքին բեռ, և աչքերին քաշած գլխարկի տակից հանգիստ նայում էր մոտեցող կնոջը։

Մոտեցավ և ճանաչեց որդուն։ Նայման-Անան չէր էլ հիշում ինչպես գլորվեց ուղտի մեջքից։ Իրեն թվաց, թե ընկավ, բայց դա ի՞նչ կարևոր էր։

— Որդյակ իմ, հարազատս։ Ես քեզ եմ փնտրում ամեն տեղ,— մայրը նետվեց նրա կողմը իրենց բաժանող մացառների վրայով։ — Ես քո մայրն եմ։

Եվ անմիջապես ամեն ինչ հասկացավ և հեկեկաց, ոտքերը գետնին խփելով, դառը և ահեղ լաց եղավ, ծռելով ջղաձգաբար ցնցվող շրթունքները, աշխատելով զսպել իրեն և դրա համար ուժ չգտնելով։ Որպեսզի գեթ կարողանար մնալ ոտքի վրա, ամուր բռնել էր անտարբեր որդու ուսից և լալիս ու լալիս էր վզտից մոլորված, վիշտ, որ վաղուց էր կախվել գլխին ու հիմա փլվում էր, տակովն անելով ու թաղելով իրեն։ Եվ արցունք թափելով, արցունքների միջով, ճերմակ մազերի թաց ալիքների միջով, դողդոջ մատների միջով, որոնք ճամփի փոշին տարածում էին դեմքին, նայում էր որդու ծանոթ դիմագծերին և փորձում էր բռնել նրա հայացքը, դեռևս սպասելով, դեռևս հուսալով, որ նա կճանաչի իրեն, ախր այնքան հեշտ է ճանաչել հարազատ մորը։

Բայց նրա հայտնվելը ոչ մի տպավորություն չգործեց տղայի վրա, կարծես նա մշտապես այստեղ է լինում, եկել է տափաստան, տեսնելու իրեն։ Նույնիսկ չհարցրեց ո՞վ է և ինչո՞ւ է լալիս։ Մի հարմար պահի ուսն ազատեց նրա ձեռքի տակից և ետևից քարշ տալով անբաժան հեծկան ուղտին՝ բեռը վրան, գնաց երամակի մյուս գլուխը, տեսնելու հո շատ չի հեռացել հովտում տրտինգ տվող մատղաշը։

Նայման-Անան մնաց տեղում, նստեց, զույգ ափերով բռնեց դեմքը և հեկեկաց, ու մնաց այդպես առանց գլուխը բարձրացնելու։ Հետո ուժ հավաքեց, տեղից ելավ, գնաց որդու մոտ, աշխատելով հանգիստ երևալ։ Մանկուրտ-որդին, կարծես ոչինչ չէր եղել, աչքերին քաշած գլխարկի տակից անիմաստ ու անտարբեր նայեց նրան, և թույլ ժպիտի նման մի բան սահեց հողմատանջ, քամիներից սևացած, կոշտացած դեմքով։ Բայց աչքերը, արտահայտելով հետաքրքրության խոր բացակայություն աշխարհում ամենայն ինչի նկատմամբ, մնացին օտար։

— Նստիր խոսենք,— ծանր հոգոց հանելով ասաց Նայման-Անան։

Նստեցին գետնին։

— Դու ճանաչո՞ւմ ես ինձ,— հարցրեց մայրը։

Մանկուրտը բացասաբար շարժեց գլուխը։

— Քո անունն ի՞նչ է։

— Մանկուրտ,— պատասխանեց նա։

— Հիմա են քեզ այդպես անվանում։ Քո առաջվա անունը չե՞ս հիշում։ Հիշիր, քո իսկական անունը։

Մանկուրտը լուռ էր։ Մայրը տեսավ, որ նա աշխատում էր

հիշել, լարվածությունից քթարմատին հայտնվեցին քրտինքի խոշոր կաթիլներ, աչքերը ծածկվեցին թրթռացող մշուշով, բայց, ըստ երևույթին, նրա դիմաց առաջացել էր խուլ, անթափանց պատ, և նա չէր կարողանում հաղթահարել արգելքը։

— Իսկ ի՞նչ էր հորդ անունը։ Կամ գիտե՞ս դու ով ես, ո՞ւմ, ցեղից ես։ Գոնե գիտե՞ս որտեղացի ես։

Ոչ, նա ոչինչ չէր հիշում և չգիտեր ոչինչ։

— Այս ի՞նչ են արել քեզ,— մրմնջում էր մայրը և նորից կամքից անկախ ցնցվում էին շուրթերը, և վիրավորանքից, զայրույթից ու վշտից, նորից սկսեց հեծկլտալ, ապարդյուն աշխատելով տիրապետել իրեն։ Մոր տառապանքը ոչ մի ազդեցություն չէր գործում մանկուրտի վրա։

— Կարելի է խլել հողը, կարելի է խլել հարստությունը, կարելի է խլել նաև կյանքը,— բարձրաձայն ասաց նա,— բայց ո՞վ է հնարել, ո՞վ է համարձակվել մահափորձ կատարել մարդու հիշողության դեմ։ Ահ, տեր աստված, եթե դու գոյություն ունես, ինչպես ես այդ բանը ներշնչել մարդկանց։ Մի՞թե առանց այդ էլ քիչ չարիք կա աշխարհիս երեսին։

Եվ այնժամ, նայելով իր մանկուրտ-որդուն, Նայման-Անան ասաց իր նշանավոր ողբը արեգակի, աստծո, իր մասին, ողբ, որ այսօր էլ իմացողները վերապատմում են, երբ խոսք է բացվում սարօզեկյան պատմությունից...

Եվ այնժամ նա սկսեց իր ողբը, որ այսօր էլ հիշում են իմացող մարդիկ.

— Մեն Բոթաար օլգեն բոզ մայա,
Թուլիբըն քելիփ իսկեհեն[1]...

Եվ այնժամ նրա հոգուց պոկվեցին ողբեր, երկար, անմխիթար, աղաղակներ, բռնելով լուռ, անծայրածիր սարօզեկները...

Սակայն մանկուրտ-որդուն ոչինչ չէր հուզում։

Եվ այնժամ Նայման-Անան որոշեց ոչ թե հարցուփորձով, այլ ներշնչանքով հասկացնել, թե ով է նա։

— Քո անունը Ջոլաման է։ Լսո՞ւմ ես։ Դու Ջոլամանն ես։ Իսկ քո հոր անունը Դոնենբայ է։ Մի՞թե չես հիշում հորդ։ Ախր նա քեզ մանկուց սովորեցրել է նետ արձակել։ Իսկ ես քո մայրն եմ։

---

[1] Ես մի խեղճ ուղտ եմ, եկել եմ հոտոտեմ ձագիս, որի մորթին դարմանով է լցված։

*Դու իմ տղան ես։ Դու նայմանների ցեղից ես։ Հասկացա՞ր։ Դու նայման ես...*

*Նրա ասածները տղան լսում էր հետաքրքրության կատարյալ բացակայությամբ, կարծես խոսքը ոչ մի բանի մասին է։ Երևի նա նույն ձևով էր լսում ճպուռի ճռռոցը խոտերի մեջ։*

*Եվ այնժամ Նայման-Անան հարցրեց մանկուրտ-որդուն.*

*— Իսկ ի՞նչ է եղել մինչև քո այստեղ գալը։*

*— Ոչինչ չի եղել։*

*— Գիշե՞ր էր թե ցերեկ։*

*— Ոչինչ չի եղել,— ասաց նա։*

*— Ո՞ւմ հետ կուզեիր խոսել։*

*— Լուսնի հետ։ Բայց մենք չենք լսում իրար։ Այնտեղ մեկը նստած է։*

*— Ուրիշ ի՞նչ կուզեիր դու։*

*— Հյուսք կուզեի գլխիս, ինչպես իմ տերն ունի։*

*— Բեր տեսնեմ, ի՞նչ են արել գլուխդ,— ձգվեց Նայման-Անան։*

*Մանկուրտը թափով ոտնեց տեղից, ետ ընկրկեց, ձեռքերը գցեց գլխարկին և այլևս չնայեց մորը։ Նայման-Անան հասկացավ, երբեք չի կարելի խոսք բացել գլխի մասին։*

*Այդ պահին հեռվում երևաց մի մարդ, որ ուղտին հեծած գալիս էր իրենց կողմը։*

*— Ո՞վ է նա,— հարցրեց Նայման-Անան։*

*— Ինձ ուտելիք է բերում,— պատասխանեց որդին։*

*Նայման-Անան խուճապի մատնվեց։ Հարկավոր էր անմիջապես թաքնվել, քանի դեռ այդքան անպատեհ հայտնված ջուանջուանը չի տեսել՝ իրեն։ Նայման-Անան չոքեցրեց իր ուղտին, նստեց թամբին։*

*— Նրան բան չասես։ Ես շուտով կգամ,— ասաց Նայման-Անան։*

*Որդին չպատասխանեց։ Նրա համար մեկ էր։*

*Նայման-Անան հասկացավ, որ սխալ է թույլ տվել ուղտին հեծած հեռանալով արածող երամակի միջով։ Բայց արդեն ուշ էր։ Դեպի երամակը եկող ջուանջուանը, իհարկե, նկատեր իրեն՝ սպիտակ ուղտին բազմած։ Հարկավոր էր ոտքով գնալ, թաքնվել արածող անասունների մեջ։*

*Բավական հեռանալով արոտավայրից, Նայման-Անան մտավ խոր մի հեղեղատ, որի շուրջը օշինդր էր աճել։ Տապով Ակմա-*

յային պատկերեց հեղեղատի հատակին, ինքն սկսեց աչք պահել։ Ինչպես ենթադրում էր, այդպես էլ կար։ Համենայն դեպս նկատել էր։ Որոշ ժամանակ անց, ուղտը քառատրոփ քշելով հայտնվեց այդ ջուանջուանը։ Զինված էր նիզակով և նետերով։ Ջուանջուանը հայտնապես մտահոգ էր, նա տարակուսանքով շուրջն էր նայում, ո՞ւր կորան սպիտակ ուղտն ու հեծյալը, որոնց տեսել էր հեռվից և չէր կարողանում կողմնորոշվել ի՞նչ ուղղությամբ շարժվի։ Մեկ այս կողմ էր նետվում, մեկ՝ այն։ Եվ վերջին անգամ անցավ հեղեղատից շատ մոտիկ։ Լավ էր, Նայման-Անան գլխի ընկավ, թաշկինակով կապեց Ակսմայայի դունչը։ Մեկ էլ տեսար ձայն հաներ։ Թաքնվելով հեղեղատի պռնկին աճած օշինդրի թփերի ետևում, Նայման-Անան բավական պարզ տեսնում էր ջուանջուանին։ Սա փրչոտ ուղտին նստած նայում էր շուրջբոլորը։ Դեմքը մի տեսակ փքված էր, լարված, գլխին նավականման սև գլխարկ, որի եզրերը ետ էին ոլորված, իսկ թիկունքին փայլին տալով ճոճվում էր սև, կոշտ, ամուր հյուսքը։ Ջուանջուանը ձգվեց ասպանդակների վրա, նիզակը պատրաստ պահած դիտեց չորս բոլորը, գլուխը շրջեց, աչքերը պսպղացին։ Դա սարօզեկները զավթած թշնամիներից մեկն էր, որ շատ մարդ էր քշել ստրկության և այնքան դժբախտություն էր բերել իր ընտանիքին։ Բայց անզեն կինը ի՞նչ կարող է անել վայրագ ռազմիկ-ջուանջուանի դեմ։ Եվ մտածում էր Նայման-Անան, թե տեսնես ինչպիսի կյանքն ու դեպքերն են սրանց հասցրել այսքան դաժանության, վայրենության, ոչնչացնել ստրուկի հիշողությունը...

Ջուանջուանը մի քիչ ետ ու առաջ արեց և շուտով հեռացավ երամակի կողմը։

Արդեն երեկո էր։ Արևն արդեն մայր էր մտել, բայց վերջալույսի շողերը մնացել էին տափաստանի վրա։ Հետո միանգամից մթնեց։ Վրա հասավ սև գիշերը։

Այդ գիշերը Նայման-Անան մեն-մենակ անցկացրեց տափաստանում, իր թշվառ մանկուրտ-որդուց ոչ շատ հեռու։ Վախենում էր վերադառնալ նրա մոտ։ Քիչ առաջվա ջուանջուանը կարող էր գիշերը մնացած լինել երամակի մոտ։

Եվ Նայման-Անան որոշեց տղային չթողնել ստրկության մեջ, տանել հետը։ Թեկուզ նա մանկուրտ է, չի հասկանում ինչն ինչոց է, բայց ավելի լավ է իր տանը լինի, մերձավորների մոտ, քան անմարդ տափաստաններում հովվություն անի ջուանջուան-

*ների համար։ Այդպես էր թելադրում մայրական սիրտը։ Հաշտվել, ինչպես ուրիշներն էին հաշտվում նման դեպքերում, իր ուժերից վեր էր։ Նա չէր կարող իր արյունը թողնել գերության մեջ։ Մեկ էլ տեսար հարազատ վայրերում նորից գիտակցությունը ետ եկավ, հանկարծ հիշեց մանկությունը...*

*Առավոտյան Նայման-Անան նորից հեծավ Ակմայային։ Հեռավոր, ոլոր-մոլոր ճանապարհներով նա երկար որոնեց երամակը, որ գիշերվա ընթացքում բավական հեռու էր գնացել։ Երամակը գտնելուց հետո Նայման-Անն երկար նայում էր՝ հո ջուանջուաններից չկան այնտեղ։ Համոզվելով, որ մարդ չկա, որդուն կանչեց անունով.*

*— Ջոլաման, Ջոլաման, բարև։*

*Որդին ետ նայեց, մայրը ուրախությունից ճիչ արձակեց, թեև անմիջապես հասկացավ, որ նա պարզապես ետ է նայել ձայնի վրա։ Նայման-Անան նորից ու նորից աշխատեց ետ բերել որդու խլված հիշողությունը։*

*— Հիշիր քո անունը, հիշիր անունդ,— աղաչում, հորդորում էր նա։ Քո հայրը Դոնենբայն է, մի՞թե չգիտես։ Քո անունը ոչ թե մանկուրտ է, այլ Ջոլաման[1]։ Մենք քեզ այդպես ենք անվանել, որովհետև դու ծնվել ես ճանապարհին, նայմանների մեծ քոչատեղում։ Երբ դու ծնվեցիր, մենք այնտեղ երեք օր կանգառ արեցինք։ Երեք օր խնջույք էր։*

*Ու թեև այդ ամենը մանկուրտ-որդու վրա ոչ մի տպավորություն չէր գործում, մայրը շարունակում էր պատմել, ապարդյուն հույս ունենալով, թե հանկարծ մի շող կփայլի նրա խամրած գիտակցության մեջ։ Բայց նա բախում էր ամուր փակված դարպասները։ Այնուամենայնիվ, մայրը շարունակում էր պնդել իրենը.*

*— Հիշիր անունդ։ Քո հայրը Դոնենբայն է։*

*Հետո կերակրեց, ջուր տվեց որդուն իր ունեցած պաշարից, նրա համար երգեց օրորոցային երգեր։*

*Երգերը տղային շատ դուր եկան։ Հաճույքով էր լսում, և ինչ-որ աշխույժ, տաքուկ բան հայտնվեց նրա անշարժ, սևացած, կոշտացած դեմքին։ Այդ ժամանակ մայրը սկսեց նրան համոզել հեռանալ այստեղից, հեռանալ ջուանջուաններից և իր հետ գնալ*

---

[1] Ջոլաման— *անունը կազմված է երկու բառից «Ջոլ»—ճանապարհ, «աման» առողջություն։ Ունի «ողջ լեր ճանապարհին», իմաստը։*

հարազատ վայրերը։ Մանկուրտը չէր պատկերացնում, թե ինչպե՞ս կարելի է վեր կենալ գնալ,— հապա երամա՞կը։ Ոչ, տերը կարգադրել է չբաժանվել երամակից։ Այդպես է ասել տերը։ Եվ նա ոչ մի կերպ չի բաժանվի երամակից...

Եվ նորից քանիերորդ անգամ փորձեց Նայման-Անան մուտք գործել խորտակված հիշողության փակ դարպասից, նորից ու նորից կրկնելով.

— Հիշիր ո՞ւմն ես դու։ Ի՞նչ է քո անունը։ Քո հայրը Դոնենբայն է։

Չնկատեց մայրը, թե իր անպտուղ ջանքերը որքան ժամանակ խլեցին, միայն ուշքի եկավ այն ժամանակ, երբ երամակի մյուս գլխին նորից երևաց ուղտին հեծած ջուանժուանը։ Այս անգամ նա ավելի մոտիկ էր և ավելի էր շտապում, անընդհատ խթանելով ուղտին։ Նայման-Անան առանց հապաղելու հեծավ Ակմայային։ Եվ նետվեց հեռու։ Բայց մյուս ծայրից, դեմհանդիման հայտնվեց մի ուրիշ հեծյալ ջուանժուան։ Նայման-Անան Ակմայային քշեց նրանց արանքով։ Արագավազ, սպիտակ Ակմայան ժամանակին թռցրեց տիրուհուն, իսկ ջուանժուանները երկար հետապնդեցին նրանց, գոռգոռալով և նիզակ ճոճելով։ Բայց Ակմայային հասնել չէր լինի։ Նրանք հետզհետե ավելի ետ էին մնում, ամբտմբալով իրենց փրչոտ ուղտերի վրա, իսկ Ակմայան շունչ առնելով, անհնարին արագությամբ սուրում էր սարօղեկներով՝ Նայման-Անային փախցնելով մահացու հետապնդումից։

Նայման-Անան չգիտեր, որ գազազած ջուանժուանները ետ դառնալով ծեծեցին մանկուրտին։ Բայց մանկուրտից ի՞նչ պահանջես։ Նա միայն պատասխանում էր.

— Նա ասում էր, որ իմ մայրն է։

— Նա քեզ ի՞նչ մայր։ Դու մայր չունես։ Գիտես ինչո՞ւ էր եկել։ Գիտե՞ս։ Ուզում էր պոկել գլխարկդ և խաշել գլուխդ,— ահաբեկեցին տարաբախտ մանկուրտին։

Այդ խոսքերի վրա մանկուրտը սփրթնեց, գորշ-գորշացավ թուխ դեմքը։ Նա վիզը քաշեց ուսերի մեջ, ձեռքերով բռնեց գլխարկը և գազանի պես նայեց շուրջը։

— Դե լավ, մի վախենա։ Սա վերցրու տեսնեմ,— ավագ ջուանժուանը նրա ձեռքի մեջ դրեց նետ ու աղեղ։

— Նշան բռնիր տեսնեմ,— կրտսեր ջուանժուանը իր գլխարկը նետեց օդի մեջ։ Նետը ծակեց գլխարկը։— Նայիր,— զարմացավ գլխարկի տերը։— Ինձ հիշատակ մնաց։

Նայման-Անան բնից հալածված թռչունի նման պտտվում էր սարօղեկներում։ Չգիտեր ինչ անել, ինչի՞ սպասել։ Ջուանջուանները արդյո՞ք ամբողջ երամակը, իր մանկուրտ-որդուն էլ հետը՝ չե՞ն քշի տանի մի ուրիշ, իր համար անմատչելի, իրենց հորդային մոտիկ տեղ, թե՞, ընդհակառակը, կհեռանեն, կբռնեն ինձ։ Ենթադրությունների մեջ խճճվելով, նա թաքստոցներով գաղտագողի առաջ եկավ և տեսնելով, որ այն երկու ջուանջուանները հեռանում են երամակից, շատ ուրախացավ։ Կողք-կողքի քշեցին գնացին, առանց ետ նայելու։ Նայման-Անան երկար աչք չէր կտրում նրանցից, և երբ վերջապես նրանք չքացան հեռվում, որոշեց վերադառնալ որդու մոտ։ Այժմ ինչ գնով էլ լինի ուզում էր տղային տանել հետը։ Ինչպես որ կա։ Նա մեղավոր չի, որ բախտը երես է թեքել, և թշնամիները խայտառակ են արել նրան, բայց ինքը տղային չի թողնի ստրկության մեջ։ Թող նայմանները տեսնեն՝ ինչպես են հրոսակները խեղում գերի ջիգիթներին, ինչպես են նվաստացնում նրանց, զրկում բանականությունից, և թող չգիջեն և զենք վերցնեն։ Բանը հողը չի։ Հողը բոլորին էլ կբավականացնի։ Բանն այն է, որ ջուանջուանյան չարիքը անտանելի է նույնիսկ խորթ հարևանության համար։

Այս մտքերով Նայման-Անան վերադառնում էր որդու մոտ, անընդհատ խորհելով, թե ինչպես համոզի, ինչպես հորդորի նրան փախչելու այդ գիշեր։ Մութն ընկնում էր։ Անծայրածիր սարօղեկների վրա իջնում էր ևս մի գիշեր՝ պոկվելով անցյալ ու գալիք գիշերների երկար շարանից, և կարմրավուն աղջամուղջով աննշմար լցվում էր ձորերն ու հովիտները։ Սպիտակ ուղտը՝ Ակմայան, թեթև և հանգիստ իր տիրուհուն տանում էր դեպի մեծ երամակը։ Մեռնող արեգակի շողերը հստակ լուսավորում էին ուղտի զույգ սապատների միջև նստած կնոջը։ Վախեցած, մտածկոտ Նայման-Անան գունատ էր և խիստ։ Սպիտակ մազեր, կնճիռներ, դեմքին և աչքերին խոհեր, ինչպես սարօղեկյան աղջամուղջ, անմխիթար վիշտ... Ահա նա հասավ երամակին, անցավ արածող անասունների միջով, նայեց չորս բոլորը, տղան չէր երևում։ Նրա հեծկան ուղտը՝ բեռը վրան, չգիտես ինչու ազատ արածում էր, ետևից քարշ տալով սանձը... Բայց տղան չկար։ Ի՞նչ էր պատահել նրան։

— Ջոլամա՛ն։ Որդյակ իմ Ջոլաման, որտե՞ղ ես,— կանչեց Նայման-Անան։ Ոչ ոք չերևաց և պատասխան չեղավ։

— Ջոլամա՛ն, որտե՞ղ ես։ Ես եմ, քո մայրը։ Որտե՞ղ ես։

Եվ անհանգիստ շուրջն էր նայում Նայման-Անան և չէր նկատում, որ իր որդին, մանկուրտը, ուղտի ստվերում թաքնված, աղեղը ձգած պատրաստ սպասում է։ Արեգակի շողը խանգարում էր, և նա սպասում էր հարմար պահի, որ արձակի նետը։

— Ջոլաման, որդյակ իմ,— կանչում էր Նայման-Անան, վախենալով, թե նրան բան է պատահել։ Շուտ եկավ թամբին։— Ջարձակե՛ս,— գոռաց նա և այն է, ուզում էր խթանել սպիտակ ուղտին՝ Ակմայային, որպեսզի դեմքը դարձնի տղային, բայց նետը կարճ սուլեց, խրվեց ձախ կողը, թևի տակ։

Հարվածը մահացու էր։ Նայման-Անան թեքվեց, ձեռքը գցեց ուղտի վզին և դանդաղ սահեց վար։ Մինչ այդ նրա գլխից ընկավ սպիտակ գլխաշորը, ծածանվեց օդի մեջ, դարձավ սպիտակ թռչուն և թռավ ճչալով. «Հիշիր ո՛ւմն ես դու, ի՛նչ է քո անունը։ Քո հայրը Դոնենբա՛յն է, Դոնենբա՛յը, Դոնենբա՛յը»։

Այդ օրից, ասում են, սարօզեկների վրա սավառնում է Դոնենբայ թռչունը։ Ճամփորդի հանդիպելիս, Դոնենբայը թռչում է ցածր և աղաղակում. «Հիշիր, ո՛ւմն ես դու, ո՛ւմն ես դու։ Ինչ է քո անո՛ւնը։ Անո՛ւնը։ Քո հայրը Դոնենբայն է, Դոնենբա՛յը, Դոնենբա՛յը, Դոնենբա՛յը...»

Այն տեղը, ուր թաղվեց Նայման-Անան, սարօզեկներում կոչվեց «Անա-Բեյիթի» գերեզմանոց՝ Մայրական հանգստարան...

Սպիտակ Ակմայան ուղտի շատ սերունդներ տվեց։ Էգերը ծնվում էին իր նման ճերմակագլուխ, էգ ուղտերը հայտնի էին ամեն տեղ, իսկ արուները՝ ընդհակառակն, ծնվում էին սև ու հզոր, ինչպես այժմյա Բորանլի Կարանարը։

Հանգուցյալ Ղազանղապը, որին տանում էին թաղելու Անա-Բեյիթում, միշտ հավատացնում էր, որ Բորանլի Կարանարը հասարակ ուղտ չի, այլ սերել է Ակմայայից՝ նշանավոր սպիտակ ուղտից, որ Նայման-Անայի մահից հետո մնացել է սարօզեկներում։

Եդիգեյը սիրով հավատում էր Ղազանղապին։ Ինչո՞ւ ոչ... Բորանլի Կարանարը արժանի էր դրան... Որքա՜ն փորձություններ են եղել մինչև հիմա, չար ու բարի օրեր, և միշտ Կարանարը դուրս է եկել դժվարություններից.— Այ, միայն անտանելի է դառնում, երբ չափ ընկած սուրում է։ Դա միշտ տեղի է ունենում ցրտերին, այդ ժամանակ սարսափելի մոլեգնում է, մի կողմից ձմեռն է մոլեգնում, մյուս կողմից՝ նա։ Երկու ձմեռ միանգամից։ Այդ օրերին ուղղակի ճար ու հնար չի լինում... Մի անգամ նա

Եղիգեյին լավ խայտառակ արեց, այնպես խայտառակ արեց, որ նա լիներ, ասենք, եթե ոչ մարդ, գոնե բանական արարած, Բորանլի Եդիգեյը երբեք այդ դեպքը չէր ների Բորանլի Կարանարին... Բայց ի՞նչ ասես ուղտին, որ խելքը թռցնում է զուգավորման շրջանում... Այսինքն, հարցը միայն նա չէր։ Մի՞թե կարելի է նեղանալ անասունից, դա խոսքի օրինակ է ասում, պարզապես բախտն էր շրջվել այդպես։ Ինչ կապ ունի այստեղ Բորանլի Կարանարը։ Այ, Ղազանղապը լավ գիտեր այդ պատմությունը, և նա էլ դատավոր եղավ, ոչ թե բանից անտեղյակ որևէ պատահական մարդ։

## VII

1952 թվականի ամառնավերջը և աշնան սկիզբը Բորանլի Եդիգեյը հիշում է անցյալ երջանկության եզակի զգացումով։ Կարծես կախարդանքով իրականացավ Եդիգեյի նախադուշակությունը։ Այն սոսկալի շոգից հետո, որին նույնիսկ սարօզեկների մողեսները չէին դիմանում և արևից ազատվելու համար գալիս հասնում էին մարդկանց կացարանները, եղանակն անսպասելի փոխվեց օգոստոսի միջում։ Հանկարծ անտանելի շոգը ետ քաշվեց, հետզհետե տեղը զիջելով զովին, գոնե գիշերներն արդեն կարելի էր հանգիստ քնել։ Սարօզեկներում լինում է այդպիսի երանություն, թեև իհարկե, ոչ ամեն տարի, բայց լինում է։ Ձմեռները միշտ անփոփոխ են։ Միշտ խիստ, իսկ ամառը երբեմն մեղմ է։ Այդպես է լինում երբ օդային հոսանքների վերին շերտերում, ինչպես մի անգամ պատմել է Ելիզարովը, առաջանում են խոշոր տեղաշարժեր, փոխվում են երկնային գետերի ուղղությունները։ Ելիզարովը հաճույքով էր պատմում նման բաները։ Նա ասում էր, որ վերևում հոսում են վիթխարի, անտեսանելի գետեր՝ իրենց ափերով ու հեղեղումներով։ Այդ գետերը մշտապես լինելով շրջանառության մեջ, իբր լվանում են երկրագունդը։ Եվ, երկիրը ամբողջապես քամիներով պարուրված, պտտվում է իր շուրջը, և դա էլ հենց ժամանակի ընթացքն է։ Հետաքրքիր էր Ելիզարովին լսելը։ Հիմա այդպիսի մարդիկ չկան, հազվագյուտ մարդ էր։ Բորանլի Եդիգեյը հարգում էր Ելիզարովին, նա էլ Եդիգեյին էր հարգում։ Այդպես ուրեմն, այդ երկնային գետը, որ երբեմն թեթևացնող զովություն է բերում շոգ ու տապի արանքում, չգիտես ինչու, իջնում է իր առաստաղից և իջնելիս բախվում է

Հիմալայն էլ, ասված գիտի, թե որքան հեռու է, բայց միևնույն է, երկրագնդի մասշտաբներով դա ամենևին էլ հեռու չի։ Օդային գետը բախվում է Հիմալային և ընդունում է հակառակ ընթացք. գետը Հնդկաստան, Պակիստան չի հասնում, այնտեղ շոգ է, շոգ էլ մնում է, իսկ սարոզեկների վրայով հոսում է հակառակ ընթացքով, որովհետև սարոզեկները ծովի նման բաց, ազատ տարածություն են... Եվ այդ գետը զովություն է բերում Հիմալայից...

Այսպես թե այնպես, այդ տարվա ամառնավերջին և աշնան սկզբին, իսկապես հրաշալի եղանակ եղավ։ Անձրևը սարոզեկներում հազվագյուտ երևույթ է։ Ամեն մի անձրև հիշվում է երկար։ Բայց այդ անձրևը Բորանլի Եդիգեյը չմոռացավ ամբողջ կյանքում։ Սկզբում թուխպ պատեց երկինքը, նույնիսկ անսովոր թվաց, երբ ծածկվեց սարոզեկյան տաք, լճացած երկնքի հավերժորեն ամայի ընդերքը։ Եվ չհկացավ օդը, սկսվեց անհնարին տոթ։ Այդ օրը Եդիգեյը վագոնակցիչ բանվոր էր։ Կիսակայարանի փակուղային գծի վրա խճաքարի և եղևնափայտի կոճերի նոր բանակի բեռնաթափումից հետո կանգնած էին մնացել երեք վագոն։ Դեռևս երեկ էին բեռնաթափել։ Ինչպես միշտ, ստիպում էին ամեն ինչ անել շտապ կարգով, իսկ հետո, պարզվում էր, որ այնքան էլ շտապ չի եղել։ Բեռնաթափելուց հետո վագոնները մի օր կանգնած էին փակուղու գծին։ Այնինչ բեռնաթափման համար դուրս էին բերել բոլորին՝ Ղազանղապին, Աբութալիպին, Ցարիպային, Ուկուբալային, Բուկեյին, գծի վրա ով որ կար, զբաղված էր այդ շտապ գործով։ Այն ժամանակ էլ, ախր ամեն ինչ ձեռքով էր արվում։ Եվ համա թե շոգ էր։ Թե ո՞ր սատանան էր դրդել, որ այդ շոգին-կրակին գային վագոնները, հայտնի չէր։ Բայց ի՞նչ արած, եթե պետք է, ուրեմն պետք է։ Աշխատեցին։ Ուկուբալայի սիրտը խառնեց, նա սկսեց փսխել։ Չէր դիմանում տաք, ձյութած փայտակոճերի հոտին։ Ստիպված եղան նրան տուն ուղարկել։ Հետո բոլոր կանանց ուղարկեցին տուն, երեխաները շոգից գժվում էին։ Մնացին տղամարդիկ, հոգիները բերանը եկավ, բայց գործը վերջացրին։

Իսկ հաջորդ օրը, ճիշտ անձրևից առաջ, դատարկ վագոնները ճամփակից ապրանքների հետ Կումբել վերադարձան։ Եդիգեյը մինչև հարմարեցրեց մինչև վագոնները կցեց, քիչ մնաց տոթից խեղդվեր, կարծես զինվորական բաղնիքում լիներ։ Ավելի լավ էր արևն այրեր։ Մեքենավարն էլ տարօրինակ էր, անընդհատ քա-

*շում, քաշքշում էր, կարծես թեյի գդալով ուղտ էր ջրում, իսկ ինքը քիչ էր մնում շունչը փչեր վագոնների տակ։ Եդիգեյը, զորս դու պատվիրեցիր, մի լավ հայհոյեց մեքենավարին։ Սա խոսքի տակ չմնաց, ինքն էլ պատասխանեց։ Իհարկե, նրա վիճակն էլ վիճակ չէր՝ շոգեքարշի հնոցի մոտ։ Շոգից հիմարացել էին։ Վերջապես, փառք աստծո, գնաց ապրանքատարը։ Տարավ գատարկ վագոնները։ Եվ ճիշտ այդ պահին հանկարծ հորդ անձրև թափվեց։ Վարարեց։ Գետինը դողաց, ակնթարթային արագությամբ ծածկվեց պղպջակներով ու ջրափոսերով։ Եվ եկավ ու եկավ կատաղի, գազազած, զով ու թացի պաշարներ հավաքելով, եթե իհարկե դա իրավ է, Հիմալայի ձյունոտ կատարներից... Այ քեզ Հիմալա՛յ։ Այ քեզ ուժ։ Եդիգեյը վազեց տուն։ Ինչո՞ւ, ինքն էլ չգիտեր։ Հենց այնպես։ Ուղղակի, երբ մարդ անձրևի տակ է ընկնում, վազում է տուն, կամ որևէ տանիքի տակ։ Սովորություն է։ Թե չէ, ինչո՞ւ պիտի փախչեր այդպիսի անձրևից։ Նա այդ բանը հասկացավ և կանգ առավ, երբ տեսավ, որ Կութիբաևների ամբողջ ընտանիքը՝ Աբութալիպը, Զարիպան և երկու տղաները՝ Դաուլն ու Էրմեկը, ձեռք-ձեռքի տված պարում, թռչկոտում են անձրևի տակ։ Դա ցնցեց Եդիգեյին։ Ոչ որովհետև նրանք ուրախությունից գժվել էին։ Այլ որովհետև, դեռևս անձրևն սկսվելուց առաջ, Աբութալիպն ու Զարիպան լայն-լայն քայլ գցելով երկաթգծի վրայով, շտապում էին տուն։ Հիմա էր հասկանում։ Նրանք ուզում էին երեխաների հետ, ամբողջ ընտանիքով վայելել անձրևը։ Եդիգեյի մտքով նման բան չէր անցնի։ Նրանք լողանում էին հեղեղի տակ, պարում, ճղճղում, ինչպես Արալյան ծովի չվեկ սագեր։ Դա տոն էր նրանց համար, երկնքից իջած մխիթարություն։ Ախր սարօղեկներում շատ էին պապակվել, շատ էին կարոտել անձրևին։ Եդիգեյի սիրտը լցվեց գորովանքով, նաև տըխրությամբ, և ծիծաղելի, և մեղք էին տնից տեղից կտրված այս մարդիկ, որոնք ուզում էին կառչել Բորանլի կիսակայարանի մի փոքրիկ, լուսավոր բոպեից։*

*— Եդիգեյ, եկ մեզ մոտ,— անձրևի հորձանքների միջով գոռաց Աբութալիպը և լողորդի նման թափահարեց ձեռքերը։*

*— Եդիգեյ քեռի,— իրենց հերթին հրճվանքով Եդիգեյի կողմը նետվեցին տղաները։*

*Երեքամյա պստլիկ Էրմեկը՝ Եդիգեյի սիրելին, թևերը տարածած, բերանը բաց, անձրևից խեղդվելով վազում էր նրա մոտ։ Էրմեկի աչքերը լի էին աննկարագրելի ուրախությամբ, հերոսա-*

կանուխթյամբ, չարաճճի կրակով։ Եղիգեյը բռնեց նրան, առավ թևերի մեջ, պտտեց։ Եվ այլևս չգիտեր, ինչ անի։ Չէր ուզում խառնվել այդ ընտանեկան խաղին։ Բայց դիմացի անկյունից հանկարծ ծղրտոցով դուրս թռան Եդիգեյի աղջիկները՝ Սաուլեն ու Շարապատը։ Դուրս էին եկել Ղութիբաևների աղմուկի վրա։ Նրանք էլ երջանիկ էին. «Հայրի՛կ, արի վազենք», պահանջեցին աղջիկները։ Եվ դա վերջ դրեց Եդիգեյի տատանումներին։ Հիմա բոլորը միասին, գժություն էին անում վարար անձրևի տակ։ Եդիգեյը ձեռքից բաց չէր թողնում փոքրիկ Էրմեկին, վախենալով, որ իրարանցման մեջ կընկնի ջրափոսը, կխեղդվի։ Աբութալիպը մեջքին դրեց Եդիգեյի կրտսեր աղջկան՝ Շարապատին։ Եվ այդպես վազվզում էին, զվարճացնելով երեխաներին։ Էրմեկը թռչկոտում էր Եդիգեյի թևերի վրա, ճչում, ճռվողում էր և հենց որ ջուր էր լցվում բերանը, թաց դնչիկը արագ և ամուր սեղմում էր Եդիգեյի վզին։ Դա այնքան հուզիչ էր։ Եդիգեյը մի քանի անգամ իր վրա որսաց Աբութալիպի և Զարիպայի երախտապարտ, ջողջողուն հայացքը, որ իրենց տղան այդքան լավ է զգում Եդիգեյ քեռու հետ։ Բայց Եդիգեյն ու իր աղջիկներն էլ լավ էին զգում այդ անձրևային խառնաշփոթության մեջ, որ կազմակերպել էր Ղութիբաևների ընտանիքը։ Եվ ակամայից Եդիգեյն ուշադրություն դարձրեց, թե որքան գեղեցիկ էր Զարիպան։ Անձրևը նրա սև մազերը ցրիվ էր տվել դեմքին, պարանոցին, ուսերին և ջուրը՝ գլխից մինչև կրունկները ողողելով նրան, առատորեն հոսում էր ճկուն, ջահել մարմնի վրայով, ընդգծելով նրա պարանոցը, թևերը, կոնքերը, բոբիկ ոտքերի խիկները։ Ուրախ, չարաճճի կայծերով փայլում էին աչքերը։ Երջանիկ շողում էին սպիտակ ատամները։

Սարօղեկների համար անձրևը անցողիկ բան է։ Ջյունը, օրինակ, աստիճանաբար ներծծվում է հողի մեջ։ Իսկ անձրևը, ինչ տեսակ ուզում է լինի, կարծես սնդիկի մի գնդիկ լինի ափերի մեջ, հողի մակերեսով կվազի դեպի ձորակներն ու հեղեղատները։ Կեռա, կխշշա և այլևս չկա։

Մի քանի րոպեից հետո հորդահոս անձրևից սկսեցին քչքչալ գետակներ ու առվակներ՝ ուժեղ, արագահոս, փրփրուն։ Բորանլիցիները սկսեցին վազել ու թռչկոտել առվակների մեջ, թասեր ու տաշտակներ բաց թողնել։ Մեծ երեխաները՝ Դաուլն ու Սաուլեն նույնիսկ թասերի մեջ նստած նավարկում էին անձրևագետի

մեջ։ Ստիպված եղան փոքրիկներին էլ նստեցնել տաշտակների մեջ, նրանք էլ լողացին…

Իսկ անձրևը գալիս էր ու գալիս։ Տաշտակալողով տարված նրանք հայտնվեցին երկաթգծի մոտ, կիսակայարանի թմբի տակ։ Այդ պահին Բորանլիով մարդատար գնացք էր անցնում։ Մարդիկ գնացքի լայնաբաց դուռ—լուսամուտներից, համարյա մինչև գոտկատեղը դուրս ընկած, նայում էին նրանց, անապատի դժբախտ խենթուկներին։ Եվ դեռ գոռում էին. «Հեյ, չխեղդվեք, հա՞», սուլում էին, ծիծաղում։ Ըստ երևույթին շատ էր տարօրինակ նրանց տեսքը։ Եվ հեռացավ գնաց տեղատարափից լվացված գնացքը, տանելով ուղևորներին, որոնք, թերևս, մեկ-երկու օրից մարդկանց զվարճացնելու համար կպատմեին տեսածի մասին։

Այս ամենը Եդիգեյի մտքով չէր անցնի, եթե նրան չթվար, թե Զարիպան լալիս է։ Եթե մարդու դեմքից ջուրն այնպես է հոսում, կարծես թափվում է դույլից, դժվար է հասկանալ, նա լալի՞ս է, թե ոչ։ Այսուամենայնիվ Զարիպան լալիս էր։ Նա ձևացնում էր, թե ծիծաղում է, թե ինքը անսահման ուրախ է, բայց լալիս էր, խեղդելով հեկեկանքները, լացն ընդհատելով ճիչ ու ծիծաղով։ Աբութալիպը անհանգիստ բռնեց նրա ձեռքը.

— Ի՞նչ է պատահել։ Վա՞տ ես։ Տուն գնանք։

— Չէ, ի՞նչ ես ասում։ Ուղղակի զկրտում եմ,— պատասխանեց Զարիպան։

Եվ նորից սկսեցին զվարճացնել երեխաներին, շտապելով վայելել անակնկալ անձրևի բարիքները։ Եդիգեյը շփոթվեց։ Պատկերացրեց, թե նրանց համար որքան պիտի ծանր լինի այն գիտակցությունը, թե կա ուրիշ, իրենցից երևս թեքած կյանք, որտեղ անձրևը իրադարձություն չէ, որտեղ մարդիկ լողանում և լող են տալիս մաքուր, թափանցիկ ջրերում, որտեղ ուրիշ պայմաններ են, ուրիշ զվարճություններ, ուրիշ խնամք երեխաների համար… Եվ որպեսզի չպղտորի Աբութալիպին ու Զարիպային, որոնք անշուշտ, այս ուրախությունը ցուցադրում էին հանուն երեխաների, Եդիգեյը շարունակեց մասնակից լինել նրանց զվարճությանը։

Եվ լիուլի ուրախացան, խաղացին մեծ ու փոքր, բայց անձրևը դեռ գալիս էր։ Նրանք ցրվեցին իրենց տները։ Եդիգեյը կարեկից նայում էր նրանց ետևից և հաճույք էր ստանում, տեսնելով, թե ինչպես են կոճղ-կոճղի վազում Ղութիբաները՝ հայր, մայր,

*երեխաներ։ Բոլորը թաց։ Գոնե մեկ օրվա երջանկություն սարօզեկներում։*

*Փոքր աղջկան գրկած, մեծի ձեռքը բռնած, Եդիգեյը հայտնվեց տան շեմին։ Ուկուբալան, նրանց տեսքից վախեցած, ձեռքերն իրար զարկեց.*

*— Վա՜յ, ի՞նչ է պատահել։ Այս ո՞ւմ եք նման։*

*— Մի՛ վախենա, մայր,— կնոջը հանգստացրեց Եդիգեյը և ծիծաղեց։— Երբ աթանը հարբում է, սկսում է խաղալ իր թայլաքների*[1] *հետ։*

*— Ես էլ ասում եմ, ո՞ւմ է նման,— ձեռք առավ Ուկուբալան։— Դե, հանվեք, ինչ եք թրջված հավերի նման կանգնել։*

*Անձրևը դադարեց, թեև սարօզեկների մերձակայքում, որոշ տեղերում, կարծես դեռ գալիս էր, որովհետև ամբողջ գիշերը, մինչև լուսաբաց, լսվում էին հեռավոր ամպրոպի խուլ ճայթյուններ։ Եդիգեյը դրանից մի քանի անգամ արթնացավ։ Եվ զարմացավ։ Արալյան ծովի վրա երբեմն ամպրոպը ուղղակի գլխիդ է պայթում, բայց էլի քնում ես։ Այնտեղ ուրիշ է. ամպրոպներն այնտեղ մաքուր են։ Արթնանալով, Եդիգեյը փակ կոպերի տակ զգում էր, թե ինչպես էին տափաստանի զանազան մասերում բռնկվող հեռավոր, լվացված կայծակները թրթռուն լույսով արտափայլում լուսամուտներին։*

*Բորանլի Եդիգեյը այդ գիշեր երազում տեսավ, իբր նորից ռազմաճակատում պառկած է գնդակոծման տակ։ Բայց արկերն ընկնում էին անձայն։ Պայթյուններն անշշուկ օդ էին բարձրանում, սև ծփանք տալիս և դանդաղ ու ծանր իջնում։ Այդպիսի մի պայթյունի ժամանակ ինքը վեր շպրտվեց։*

*Անկումը տևեց շատ երկար, սիրտը թալկացած՝ ընկնում էր զարհուրելի դատարկության մեջ։ Հետո նա գրոհի նետվեց, շատ էին գորշ շինելներով զինվորները, որոնք գրոհի էին ելել, բայց դեմքերը իրարից չէին տարբերվում, թվում էր, պարզապես շինելները՝ ավտոմատ բռնած իրենց-իրենց վազում են։ Եվ երբ շինելները գոռացին «ուռա՜», ճանապարհին, Եդիգեյի առջև հայտնվեց անձրևից թրջված, ծիծաղող Զարիպան։ Դա զարմանալի էր։ Չթե զգեստով, մազերը խոնավ, նա անընդհատ ծիծաղում էր, իսկ դեմքից հոսում էր անձրևաջուրը։ Եդիգեյը ժամանակ չուներ*

---

1 Թայլա՞ — *ուղտի ձագ։ Երբ աթանը՝ արուն, հարբում է, սկսում է խաղալ իր ձագերի հետ։*

հապաղելու, նա հիշում էր, որ գրոհի է գնում։ «Ինչո՞ւ ես այդպես ծիծաղում, Ջարիպա։ Դա լավ նշան չի»,— ասաց Եղիգեյը։ «Ես չեմ ծիծաղում, լալիս եմ»,— պատասխանեց նա և շարունակեց ծիծաղել անձրևի տակ...

Հաջորդ օրն ուզեց երազը պատմել Աբութալիպին և Ջարիպային։ Բայց միտքը փոխեց, երազը լավ չթվաց իրեն։ Ինչո՞ւ զուր տեղը հուզմունք պատճառի մարդկանց։

Այդ նշանավոր անձրևից հետո սարօզեկների շոգը կոտրվեց, կամ, ինչպես Ղազանղապը կասեր, վերջացան ամառվա կաշառքները։ Էլի եղան շոգ օրեր, բայց արդեն տանելի էին։ Այստեղից էլ կամաց-կամաց սկսվեց սարօզեկյան աշնանամուտի երանությունը։ Ուժասպառող շոգից ազատվեցին նաև Բորանլիի երեխաները։ Վերակենդանացան, նորից զրնգացին նրանց ձայները։ Եվ դեռ Կումբելից էլ հաղորդեցին, թե կայարանում ստացվել են կըզըլ-օրդինյան ձմերուկ ու սեխ։ Հարցրեցին, թե ինչպես են ուզում բորանլիցիները, իրենց բաժինն ուղարկե՞ն, թե իրենք կգան կտանեն։ Եղիգեյը այդ առիթից էլ օգտվեց, կիսակայարանի պետին համոզեց, թե անհրաժեշտ է, որ իրենք գնան, թե չէ ստացած գիտի ինչ կուղարկեն։ Պետը համաձայնեց։ Լավ, ասաց նա, Կուկիբաևի հետ գնացեք, լավերը ընտրեք-բերեք։ Եղիգեյը հենց այդ էր ուզում։ Ուզում էր Աբութալիպին ու Ջարիպային երեխաների հետ, գոնե մի օրով, դուրս բերել Բորանլիից։ Այսինքն՝ վատ չէր լինի, որ ինքն էլ մի քիչ օդ շնչեր։ Եվ վաղ առավոտյան երկու ընտանիքով, երեխաները հետը, ճամփակից գնացքով մեկնեցին Կումբել։ Հագնվեցին։ Լավ էր։ Երեխաներին թվում էր, թե մեկնում են հեքիաթային աշխարհ։ Ամբողջ ճանապարհին ցնծում էին, հարցեր տալիս. ծառեր աճո՞ւմ են այնտեղ։ Աճում են։ Իսկ կանաչ խո՞տ։ Կանաչ խոտ էլ։ Նույնիսկ ծաղիկներ կան։ Իսկ տները մե՞ծ են և փողոցներով մեքենանե՞ր են սլանում։ Իսկ ձմերուկ ու սեխ ինչքան ասես կա՞։ Իսկ պաղպաղակ կա՞։ Իսկ ծով, ծով կա՞։

Քամին խփում էր ապրանքատար գնացքին, համաչափ, դուրեկան հոսանքով ներս էր լցվում կիսաբաց դռներից, որոնց դեմ զգուշության համար տախտակ էին դրել, որ երեխաները հանկարծ վայր չընկնեն, չնայած հենց անցումի մոտ, դատարկ արկղերի վրա նստել էին Եղիգեյն ու Աբութալիպը։ Խոսում էին դեսից-դենից և պատասխանում էին երեխաների հարցերին։ Բորանլի Եղիգեյը գոհ էր, որ գնում են միասին, որ եղանակը լավ

է, որ երեխաներն ուրախ են, թեև Բորանլի Եդիգեյը ամենից շատ ուրախ էր ոչ թե երեխաների, այլ Աբութալիպի և Զարիպայի համար։ Պայծառացել էին նրանց դեմքերը։ Վերացել էր կաշկանդվածությունը, մարդիկ թեկուզ որոշ ժամանակով ազատվել էին իրենց առօրյա հոգսերից, ներքին ճնշվածությունից։

Հաճելի էր նայել Զարիպային ու Ուկուբալային, որ սրտաբաց խոսում էին կենցաղային տարբեր բաներից։ Եվ երջանիկ էին։ Ախր այդպես էլ պիտի լիներ, մի՞թե շատ բան է հարկավոր մարդկանց... Եդիգեյը շատ կուզեր, որ մոռացվեին Կութիբաևների բոլոր ձախորդությունները, որպեսզի կարողանային հաստատվել, ընտելանալ Բորանլիի կյանքին, քանի որ ուրիշ ընտրություն չկար։ Եդիգեյը շոյվում էր նաև այն մտքից, որ Աբութալիպը նստած է կողքին, ուս-ուսի, իմանալով, որ Եդիգեյին կարելի է վստահել և որ իրենք առանց ավելորդ խոսքերի լավ հասկանում են միմյանց, շրջանցելով հիվանդոտ հարցեր, որոնց մասին չէր կարելի ոտքի վրա խոսել։ Եդիգեյը գնահատում էր Աբութալիպի խելքը, զսպվածությունը, մանավանդ նվիրվածությունը ընտանիքին, հանուն որի ապրում էր Աբութալիպը, չէր հուսահատվում և այնտեղից ուժ էր ստանում։ Եդիգեյը, լսելով Աբութալիպի ասածները, եկել էր այն եզրակացության, թե ամենալավ բանը, որ մարդս կարող է անել ուրիշի համար, դա սեփական ընտանիքում արժանավոր երեխաներ դաստիարակելն է։ Այն էլ ոչ թե որևէ մեկի օգնությամբ, այլ ինքնուրույն, օրեցօր, քայլառքայլ այդ գործի մեջ ամբողջապես ներդնելով քեզ, և որքան հնարավոր է շատ լինելով երեխաների հետ։

Ահա, խնդրեմ, Սաբիթջանին ամենափոքր հասակից որտեղ ասես չեն ուսուցանել՝ գիշերօթիկներում, ինստիտուտներում և վերապատրաստման տարբեր կուրսերում։ Խեղճ Կազանղապը իր ամբողջ ունեցածն ու վաստակը ծախսել է՝ տղային պահելով տարբեր քաղաքներում, ինչ է, թե իր Սաբիթջանը ոչ ոքից ետ չմնա, բայց օգուտն ինչ, գիտենալը ամեն ինչ գիտի, բայց անպիտանը մնում է անպիտան։

Եվ այն ժամանակ, երբ միասին գնում էին Կումբել սեխ ու ձմերուկ բերելու, Եդիգեյը ճանապարհին մտածում էր, եթե, իրոք, ավելի հարմար ելք չկա, ուրեմն արժի, որ Աբութալիպ Կութիբաևը հիմնավորապես հաստատվի Բորանլիում։ Տնտեսություն ստեղծի, անուն ձեռք բերի և ինչքան ուժ ու հնար ունի, որդիներին ոտքի կանգնեցնի սարօզեկներում։ Ճիշտ է, ինքը

նրան խելք չսովորեցրեց, բայց խոսակցությունից հասկացավ, որ Աբութալիպն էլ է այդ մտքին, որ այդպիսի մտադրություն կա։ Հետաքրքրվում էր, ինչպես ձմեռվա համար կարտոֆիլ ձեռք բերի, որտեղից թաղիքե ոտնամաններ առնի կնոջ ու երեխաների համար, ինքը, իբր, ոչինչ, սապոգներով յոլա կգնա։ Հարցրեց նաև, Ղումբելում գրադարան կա՞, թե ոչ, և արդյոք ընթերցանության գիրք տալի՞ս են կիսակայարանի բնակիչներին։

Նույն օրվա երեկոյան, էլի ճամփակից ապրանքատարով վերադարձան տուն՝ սեխ ու ձմերուկով, որ բորանլիցիներին հասկացրել էր օրսը։ Երեխաներն, իհարկե, երեկոյան դեմ հոգնել էին, բայց շատ գոհ էին։ Ղումբելում լավ ման էին եկել, խաղալիքներ էին գնել, կերել էին պաղպաղակ և էլի ինչ ասես։ Տեղի էր ունեցել նաև մի փոքր դեպք՝ կայարանային վարսավիրանոցում։ Որոշել էին երեխաների մազերը կտրել։ Բայց երբ հերթը հասավ Էրմեկին, սա լաց ու կոծը դրեց։ Ոչ մի կերպ չէր հանգստանում։ Բոլորին ուժասպառ արեց, վախենում էր, պոկվում տեղից, ճչում, հորն էր կանչում։ Աբութալիպն այդ պահին մտել էր կողքի խանութը։ Զարիպան շվարել էր, ամոթից գույն էր տալիս, գույն առնում։ Անընդհատ արդարանում էր, թե երեխայի մազերը ծնված օրից մկրատ չեն տեսել, ափսոսել են կտրել, շատ գեղեցիկ, գանգուր մազեր ուներ տղան։ Իսկապես, Էրմեկի մազերը արտակարգ խիտ էին և գանգուր, մորն էր քաշել, և առհասարակ նա շատ էր նման Զարիպային. երբ գլուխը լվանում էին, գանգուրները սանրում, ուղղակի նայելու բան էր։

Բանն այնտեղ հասավ, որ Ուկուբալան թույլ տվեց կտրելու Սաուլեի մազերը, իբր, տես, աղջիկ տեղով չի վախենում։ Դա կարծես որոշ ազդեցություն գործեց, բայց հենց որ սափրիչը ձեռքն առավ գործիքը, Էրմեկը նորից ձայնը գցեց գլուխը, նորից ուզեց պոկվել տեղից, բայց ճիշտ այդ պահին դռան շեմին հայտնըվեց Աբութալիպը։ Էրմեկը նետվեց հոր կողմը։ Հայրը բարձրացրեց տղային, ամուր սեղմեց կրծքին. հասկացավ, որ չարժե զուր տանջել երեխային։

— Ներեցեք,— ասաց սափրիչին։— Մի ուրիշ անգամ։ Ուժ կհավաքենք հետո... Իսկ առայժմ թող մնա, դեռ կարելի է յոլա գնալ։ Շտապ չի... Մի ուրիշ անգամ...

«Կոնվենցիա» ավիակրից, որտեղ կայանում էր հատուկ լիազորված հանձնաժողովների արտակարգ նիստը, կողմերի փո-

խադարձ համաձայնությամբ, «Պարիտետ» ուղեծրային կայան գնաց ևս մի ծածկագրված ռադիոգիր՝ արտաերկրային քաղաքակրթության մոլորակում գտնվող պարիտետ-տիեզերագնացներ 1—2 և 2—1-ին հանձնելու համար. կտրականապես չձեռնարկել որևէ գործողություն, մնալ տեղում, մինչև Միադեկկենտրոնի հատուկ ցուցումը։

Նիստն առաջվա նման շարունակվում էր փակ դռների ետևում։ «Կոնվենցիա» ավիակիրը առաջվա նման գտնվում էր իր տեղում՝ Խաղաղ օվկիանոսում, Ալեուտներից հարավ, Սան-Ֆրանցիսկոյի և Վլադիվոստոկի միջև ընկած օդային միևնույն տարածության վրա։

Առաջվա նման, աշխարհում ոչ ոք չգիտեր, որ տեղի է ունեցել մեծագույն միջգալակտիկական իրադարձություն. Պահող լուսատուի համակարգում բացահայտվել է արտաերկրային քաղաքակրթության մոլորակ, որի բանական արարածները առաջարկել են հաղորդակցություն հաստատել երկրայինների հետ։

Արտակարգ նիստում կողմերը քննարկում էին այդքան արտասովոր և անսպասելի խնդիրների բոլոր «կողմ» և «դեմ»-երը։ Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի առջև, սեղանին, բացի այլևայլ օժանդակ նյութերից, դրված էր թղթապանակ. պարիտետ-տիեզերագնացներ 1—2 և 2—1 ուղարկած փաստաթղթերը՝ լրիվ տեքստով։ Ուսումնասիրվում էր փաստաթղթերի յուրաքանչյուր միտք, յուրաքանչյուր բառ։ Ամեն մի մանրամասնություն, որ բերվում էր իբրև բանական կյանքի հաստատման փաստ՝ Անտառալանջ մոլորակում, նախ և առաջ դիտվում էր հնարավոր հետևանքների, քաղաքակրթության երկրային փորձի համատեղելիության ու անհամատեղելիության և մոլորակի առաջատար երկրների շահերի տեսակետից...

Դեռևս ոչ մի անգամ առիթ չէր եղել գործ ունենալ այս կարգի խնդիրների հետ։ Եվ անհրաժեշտ էր հարցը քննել շտապ...

Խաղաղ օվկիանոսը, առաջվա նման հանդարտ ալեկոծվում էր...

Որ Ղութիբաևների ընտանիքը դիմացավ սարօզեկյան ամառային հնոցի ամենաթեժ օրերին և հուսահատված չհավաքեց եղած-չեղածը և գլուխն առած չփախավ Բորանլիից, բորանլիցիները հասկացան, որ այս ընտանիքը կմնա այստեղ։ Աբութալիպ Ղութիբաևը բավական աշխուժացել էր, ավելի ճիշտ ներգրավ-

վել էր Բորանլիի կյանքի մեջ։ Ինչ խոսք, վարժվել, համարվել էր կիսակայարանի պայմաններին։ Ինչպես ամեն ոք, նա ևս իրավունք ուներ ասելու, թե Բորանլին աշխարհի ամենակորած անկյունն է, եթե ջուրն անգամ, լինի խմելու թե այլ կարիքների համար, բերվում է գնացքով, ցիստեռնով, իսկ եթե սիրտդ մաքուր, թարմ ջուր է ուզում, պետք է թամբես ուղտին, տկերն առնես, գնաս յոթ սարից այն կողմ, մի բան, որ Եդիգեյից ու Ղազանղապից բացի, ոչ ոք չէր անում։

Այո, դեռևս այդպես էր հիսուներկու թվականին, ընդհուպ մինչև վաթսունները, մինչև որ կիսակայարանում տեղադրեցին էլեկտրահողմային խոր ջրհան։ Բայց այն ժամանակ այդ մասին երազել անգամ չէին կարող։ Չնայած դրան, Աբութալիպը երբեք չի նզովել ու հայհոյել ոչ Բորանլի կիսակայարանը, ոչ էլ առհասարակ սարօզեկները։ Վատը դիտում էր իբրև վատ, լավը՝ լավ։ Ի վերջո այս հողը ոչնչով մեղավոր չի ոչ ոքի առջև։ Պետք է ինքը որոշի՝ ապրի թե չապրի այստեղ...

Եվ մարդիկ աշխատում էին այդ հողի վրա տեղավորվել որքան հնարավոր է հարմար։ Երբ Ղութիբաևները եկան վերջնական համոզման, թե իրենց տեղը Բորանլին է, որ սրանից այն կողմ գնալու տեղ չունեն, և անհրաժեշտ է ավելի հիմնավորապես բնավորվել, այլևս ժամանակը չէր բավարարում տնային գործերի համար։

Բնականաբար, ամեն օր կամ ամեն հերթափոխի պետք էր աշխատել, բայց և ազատ ժամանակ քիչ չէր դարդուցավը։ Քթի տակ ձմեռն էր։ Չարչարվեց, քրտինք թափեց Աբութալիպը տան վրա, վառարանն էր տեղափոխում, դուռն էր ամրացնում, շրջանակներն էր հարթում, հարմարեցնում։ Այդ գործերի մեջ առանձին ճարտարություն էլ չուներ, բայց Եդիգեյը գործիք ու շինանյութ էր տալիս, օգնում էր, մենակ չէր թողնում։ Իսկ երբ փոքրիկ սարայի մոտ մառան էին փորում, Ղազանղապն էլ օգնության հասավ։ Երեքով կառուցեցին մառանը, ծածկեցին հին փայտակոճերով ու ծղոտով, վրայից կավ լցրին, ծեփեցին, լավ, պինդ կտուր սարքեցին, որ հանկարծ մեկնումեկի անասունը մառան չընկնի։ Եվ ինչ անեին-չանեին, շարունակ Աբութալիպի տղաները ֆոֆռում էին իրենց շուրջը։ Չնայած երբեմն խանգարում էին, բայց դա ուրեկան և զվարթ մթնոլորտ էր ստեղծում։ Եդիգեյն ու Ղազանղապը մտածում էին նաև, թե ինչպես օգնեն

Աբութալիպին՝ տնտեսություն հիմնելու, և արդեն որոշ բան նկատի էին առել։ Որոշել էին գարնանից նրա համար առանձնացնել կթու ուղտ։ Կարևորը, որ նա կթել սովորի։ Ախր, ուղտը հո կո՛վ չի։ Ուղտին կթում են կանգնած։ Պետք է նրա ետևից գնալ տափաստան և գլխավորը՝ ծծկեր ձագին խնամել, նրան կրծին մոտ թողնել ժամանակին և ժամանակին հեռացնել։ Նա քիչ խնամք չի պահանջում։ Հարկավոր է իմանալ ինչն ինչպես է... Բայց Բորանլի Եդիգեյին ամենից ավելի ուրախացնում էր այն, որ Աբութալիպը ոչ միայն տնտեսությունն էր կարգի բերում, ոչ միայն մշտապես երկու ընտանիքի երեխաների հետ պարապում էր, Զարիպայի հետ գիր ու նկարչություն սովորեցնում նրանց, այլև ավելին, հաղթելով, հաղթահարելով Բորանլիի խուլուփավարը, դեռ ինքնաշխատությամբ էր զբաղվում։ Չէ՞ որ Աբութալիպ Կութիբաևը կրթված մարդ էր։ Գրքեր էր կարդում, գրառումներ անում, դա պարզապես հարկավոր էր իրեն։ Հոգու խորքում Եդիգեյը հպարտանում էր, որ այդպիսի ընկեր ունի։ Եվ ձգտում էր նրան։ Ախր, Ելիզարովի՝ սարօզեկյան երկրաբանի հետ էլ, որ այս կողմերում հաճախ էր լինում, պատահական չէր ընկերությունը։ Եդիգեյը հարգում էր ուսումնական, շատ իմացող մարդկանց։ Աբութալիպը նույնպես շատ գիտեր։ Պարզապես աշխատում էր բարձրաձայն քիչ մտածել։ Բայց մի անգամ ունեցան լուրջ խոսակցություն։

Երեկոյան վերադառնում էին ուղեգծային աշխատանքից։ Այդ օրը նրանք հակաձնային տախտակներ էին տեղադրում յոթերորդ կիլոմետրի վրա, որտեղ միշտ մոլեգնում են ձնահյուսերը։ Ձնայած ցրտերը նոր էին սկսվել, բայց անհրաժեշտ էր ժամանակին նախապատրաստվել ձմռանը։ Այսպես ուրեմն, տուն էին գնում։ Մեղմ, պայծառ երեկոն զբոսնելու տրամադրություն էր առաջացնում։ Այդպիսի երեկոներին սարօզեկների մերձակայքը հազիվ է նշմարվում վերջալույսի մշուշի մեջ, ճիշտ ինչպես մեղմ եղանակին նավակից նշմարվում է Արալյան ծովի հատակը։

— Ի՞նչ բան է, Աբու, երեկոները, ինչքան անցնում եմ ձեր տան մոտով, միշտ լուսամուտի գոգին ցցված է լինում քո գլուխը։ Բա՞ն ես գրում, թե՞ բան ես նորոգում լամպը կողքիդ,— հարցրեց Եդիգեյը։

— Ուղղակի, պարզապես, գրասեղան չունեմ,— սիրով պատասխանեց Աբութալիպը, բահը մի ուսից մյուսին տեղափոխելով։— Հենց որ ավազակներս պառկում են, Զարիպան որևէ գիրք

է կարդում, ես էլ գրի եմ առնում որոշ բաներ, քանի հիշում եմ, պատերազմը և, մանավանդ, հարավսլավական տարիներս։ Ժամանակն անցնում է, անցած-գնացածը հետզհետե հեռանում է։— Նա լռեց։— Ես շարունակ մտածում եմ, թե ինչ կարող եմ անել իմ երեխաների համար։ Կերցնել, խմացնել, դաստիարակել, դա ինքնըստինքյան։ Ինչքան կարողանամ, կարողանամ։ Գլխովս այնքան բան է անցել, որ մի ուրիշը հարյուր տարում չէր տեսնի, իսկ ես դեռ ապրում եմ և շնչում, երևի քուր չի ճակատագիրն այդպիսի հնարավորություն ընձեռում ինձ։ Միգուցե, որպեսզի ես կարողանամ ինչ-որ բան ասել և առաջին հերթին՝ երեխաներիս։ Իմ կարծիքով, ես պարտավոր եմ ամբողջ կյանքում հաշիվ տալ նրանց, քանի որ աշխարհ եմ բերել։ Իհարկե, բոլորի համար կա ընդհանուր ճշմարտություն, բայց ամեն մեկն ունի իր ըմբռնումը, որը իր հետ տանում է գերեզման։ Երբ մարդն անցնում է կյանքի և մահվան օղակների միջով, համաշխարհային ուժերի բախման միջով և կարող էր առնվազն հարյուր անգամ սպանված լինել, բայց վերապրում է, ապա նրան շատ բան է վիճակվում իմանալ. բարիք ու չարիք, ճշմարտություն և կեղծիք…

— Սպասիր, մի բան լավ չեմ հասկանում,— զարմացած ընդհատեց Եղիգեյը։— Թերևս դու ճիշտ բաներ ես ասում, բայց քո տղաները մի մատ երեխա են, որ սափրելու գործիքից անգամ վախենում են, նրանք ի՞նչ պիտի հասկանան քո գրածից։

— Դրա համար էլ գրում եմ։ Նրանց համար եմ ուզում պահել։ Ինչ իմանամ, ինչքան եմ ապրելու… Հրեն, քիչ մնաց այն օրը գնացքի տակ ընկնեի։ Ղազանղապը հասավ, հրեց գծից դուրս գցեց։ Հետո էլ մի լավ հայհոյեց։ Թող երեխաներդ ամ՞օր ծունր դնեն, փառք տան աստծուն։

— Ճիշտ է ասում։ Ես քեզ քանի անգամ եմ զգուշացրել, Զարիպային էլ եմ ասել,— իր հերթին վրդովվեց Եղիգեյը և առիթից օգտվեց, որպեսզի մի անգամ ևս արտահայտի իր անհանգստությունը։— Այնպես ես քայլում երկաթգծի վրա, կարծես շոգեքարշը պետք է ռելսերից թեքվի, քեզ ճանապարհ տա։ Ախր անվտանգության կանոններ կան։ Գրագետ մարդ ես, ինչքա՞ն կարելի է նույն բանն ասել։ Դու հիմա երկաթուղային ես, բայց այնպես ես քայլում, կարծես շուկայում լինես։ Գնացքի հետ կատակել չի լինի։

— Եթե այդպիսի փորձանք գա, մեղավորը ես կլինեմ,—

մայլ համաձայնեց նա։— Դե լավ, դու համենայն դեպս լսիր ինչ եմ ասում, հետո նկատողություն կանես։

— Դու շարունակիր, ես խոսքի օրինակ ասացի։

— Անցյալ ժամանակներում մարդիկ երեխաներին ժառանգություն էին թողնում։ Այդ ժառանգությունը բարիք էր բերում կամ չարիք, նայած երբ։ Որքան գիրք է գրվել, հեքիաթ է գրվել, այդ մասին, թատրոններում որքան պիեսներ են խաղում այն ժամանակների մասին, թե ինչպես էին բաժանում ժառանգությունը և հետո ի՞նչ էր գալիս ժառանգների գլխին։ Ինչո՞ւ Որովհետև ժառանգությունները հիմնականում անարդար ճանապարհով էին գոյանում, ուրիշի աշխատանքով ու քրտինքով, խաբեբությամբ, ստով, դրա համար էլ ի սկզբանե իրենց մեջ թաքցնում են չարիք, մեղք, անարդարություն։ Ես էլ ինձ մխիթարում եմ, թե, փառք աստծո, մենք ազատված ենք դրանից։ Իմ ժառանգությունը ոչ ոքի վնաս չի տա։ Դա լոկ իմ հոգին է, իմ գրառումները կմնան և դրանցում այն ամենը, ինչ հասկացել և կրել եմ պատերազմից։ Երեխաներիս համար ես մեծ հարստություն չունեմ։ Եվ այս մտքին եկա սարօզեկյան այս անապատներում։ Կյանքն ինձ շարունակ մղել է այստեղ, որպեսզի մոլորվեմ, կորչեմ, իսկ ես նրանց համար կգրեմ այն ամենի մասին, ինչ մտածում-կարծում եմ, և ես երբևէ կապրեմ նրանց մեջ, իմ երեխաների մեջ։ Ինչը չհաջողվեց ինձ, երևի կհաջողվի նրանց... Նրանց կյանքը մերից դժվար է լինելու, ուրեմն, թող փոքրուց խելք ժողովեն...

Որոշ ժամանակ նրանք քայլում էին լուռ, ամենքն իր մտքի ետևից ընկած։ Եդիգեյին տարօրինակ էին թվում այդ խոսքերը։ Զարմացավ, որ կարելի է նաև այդպես հասկանալ սեփական գոյության իմաստը։ Եվ հարց տվեց, որ պարզի իր զարմանքը.

— Բոլորը կարծում են, հրեն, ռադիոն էլ է ասում, որ մեր երեխաները ավելի լավ և հեշտ են ապրելու, իսկ քեզ թվում է, թե նրանք մեզնից դժվար են ապրելու։ Երևի ատոմային պատերազմ է լինելու, դրա՞ համար։

— Ոչ միայն դրա համար։ Պատերազմ կարող է և չլինել, եթե նույնիսկ լինի, շուտ չի լինի։ Խոսքը հացի մասին չի։ Ուղղակի ժամանակի անիվն է ավելի արագ պտտվում։ Նրանք ստիպված կլինեն ամեն ինչի հասնել իրենց ուժերով, իրենց խելքով և, որոշ չափով էլ, հետին թվով մեր փոխարեն պիտի պատասխան

*տան։ Իսկ մտածելը միշտ դժվար է։ Դրա համար էլ նրանք ավելի դժվար կապրեն, քան մենք։*

*Եդիգեյը չփորձեց ճշտել, թե ինչո՞ւ է նա կարծում, թե մտածելը միշտ էլ դժվար է։ Իզուր էլ չհարցրեց, հետագայում շատ ափսոսեց, հիշելով այս խոսակցությունը։ Հարկավոր էր հարցուփորձ անել, հասկանալ նրա ասածի իմաստը...*

*— Գիտե՞ս ինչու եմ այդպես մտածում,— կարծես արձագանքելով Եդիգեյի կասկածներին, շարունակեց Աբութալիպը։— Փոքրիկների աչքին մեծերը միշտ խելոք են, ազդեցիկ։ Մեծանում, տեսնում են, որ ուսուցիչները, այսինքն՝ մենք, այնքան էլ շատ բան չեն իմացել և այնքան էլ խելոք չեն եղել, որքան թվացել են։ Նրանց վրա նույնիսկ կարելի է ծիծաղել, երբեմն նույնիսկ ողորմելի են թվում ծերացած դաստիարակները։ Ժամանակի անիվն ավելի և ավելի արագ է պտտվում։ Այսուամենայնիվ, մեր մասին, ինքներս պետք է ասենք վերջին խոսքը։ Մեր նախնիները փորձել են այդ բանն անել ասքերում։ Ցանկացել են ցույց տալ հետնորդներին, թե որքան նշանավոր են եղել իրենք։ Եվ մենք նրանց մասին կարծիք ենք կազմում ըստ իրենց ոգու։ Ես էլ, ինչ որ ձեռքիցս գալիս է, անում եմ մեծացող որդիներիս համար։ Իմ ասքերը, իմ պատերազմական տարիներն են։ Նրանց համար եմ գրում իմ պարտիզանական տետրակները։ Այնպես, ինչպես եղել է, ինչպես տեսել եմ, ինչպես ապրել եմ։ Նրանց պետք կգա, երբ մեծանան։ Բացի դրանից, ունեմ նաև որոշ մտքեր։ Նրանք պետք է մեծանան սարօզեկներում։ Երբ մեծանան, թող չմտածեն, թե դատարկ տեղում են ապրել։ Գրառել եմ մեր հնագույն երգերը, հետո ախր դրանք կմոռացվեն։ Իմ կարծիքով, երգը անցյալի սուրհանդակն է։ Պարզվեց, որ քո Ուկուբալան շատ երգ գիտի։ Խոստացավ էլի հիշել։*

*— Բա ի՞նչ հարկե՛։ Ինչքան չլինի արալցի է,— անմիջապես հպարտացավ Եդիգեյը։— Արալյան ծովափնյա ղազախներ ենք։ Իսկ ծովում լավ է երգվում։ Ծովն ամեն ինչ հասկանում է։ Ինչ էլ ասես ծովում սրտալի է լինում ու դուրեկան։*

*— Այո, լավ ասացիր, ճիշտ է։ Վերջերս նորից ընթերցեցի գրառումներս, համարյա արտասվեցինք Զարիպան ու ես։ Ինչքան գեղեցիկ են երգել անցյալում։ Ամեն մի երգ մի ամբողջ պատմություն է։ Կարծես տեսնում ես այդ մարդկանց։ Եվ ուզում ես սիրտդ բացել նրանց առջև։ Եվ նրանց նման տառապել ու սիրել։ Տեսնո՞ւմ ես, ինչպիսի հիշողություն են թողել իրենց մասին։*

Ես Ղազանղապի Բուկեյին էլ եմ արդեն ագիտացիա արել։ Ասել եմ, հիշիր քո կարակալպակյան երգերը, պիտի առանձին տետրակում գրի առնեմ։ Կունենանք նաև կարակալպակյան տետրակ...

Այսպես անշտապ քայլում էին երկաթուղու երկարությամբ։ Հազվագյուտ պահ էր։ Թեթևացած, ինչպես խոր հառաչ, հանգչում էր աշնանամուտի խաղաղված վերջալույսը։ Չնայած սարօզեկներում ոչ անտառ կար, ոչ գետ, ոչ դաշտ, բայց մեռնող արեգակը երկրի բաց դեմքին լույս ու ստվերի այնպիսի անորսալի խաղ էր սկսել, որ թվում էր, թե տափաստանը լցվել ու կենդանացել է։ Տափաստանի պղտոր, հոտուն, հոգեպարար կապույտը վեհացնում էր մտքերը, ներշնչում երկար ապրելու և շատ մտածելու ցանկություն...

— Լսիր, Եդիգեյ,— նորից խոսեց Աբութալիպը, հիշելով մի բան, որ մտքի հետաձգել էր և որին պիտի վերադառնար պատեհ առիթով։— Վաղուց եմ ուզում հարցնել։ Դոնենբայ թռչուն։ Ի՞նչ ես կարծում, երևի, բնության մեջ կա այդպիսի թռչուն և երևի այդպես էլ կոչվում է՝ Դոնենբայ։ Դու այդպիսի թռչունի չե՞ս հանդիպել։

— Բայց դա առասպել է։

— Հասկանում եմ։ Սակայն առասպելը հաճախ հաստատվում է իրականությամբ, կյանքում եղածով։ Ահա, օրինակ, պիրոլ թռչունը, որ մեր Յոթգետիկում ամբողջ օրը երգում է լեռնային այգիներում և անընդհատ հարցնում է. «Ո՞վ է իմ փեսացուն»։ Սա պարզապես հնչյունների խաղ է։ Այդ մասին հեքիաթ էլ կա, թե ինչու է այդպես երգում։ Ասում եմ, միգուցե այս դեպքում էլ հնչյունների ինչ-որ խաղ կա։ Գուցե իսկապե՞ս տափաստանում գոյություն ունի նման մի թռչուն, որ ճչում է Դոնենբայի նման մի բան, և ահա հայտնվել է առասպելի մեջ։

— Չէ, չգիտեմ։ Մտքովս էլ չի անցել, թե այդպես լինում է,— տարակուսեց Եդիգեյը։— Բայց արդեն քիչ ժամանակ չի, ինչ ապրում եմ այս կողմերում, և քիչ չեմ վերուվար արել սարօզեկներում, բայց այդպիսի թռչուն չեմ տեսել։ Երևի չկա էլ։

— Երևի,— մտածկոտ կրկնեց Աբութալիպը։

— Ի՞նչ, եթե այդպիսի թռչուն չկա, ուրեմն սո՞ւտ է այս ամենը,— անհանգստացավ Եդիգեյը։

— Ոչ։ Ինչու։ Մնացել է Անա-Բեյիթի գերեզմանոցը։ Անպայ-

ման ուրիշ բան էլ եղած կլինի այստեղ։ Չգիտեմ ինչու, ես կարծում եմ, որ այդ թռչունն էլ կա։ Մեկնումեկը երբևէ կտեսնի։ Երեխաների համար այդպես էլ կգրեմ։

— Եթե երեխաների համար է,— անվստահ խոսեց Եղիգեյը,— ապա կարելի է։

Որքան Բորանլի Եղիգեյը հիշում է, միայն երկու մարդ են ժամանակին գրի առել Նայման-Անայի առասպելը։ Նախ Աբութալիպ Կուտիբաևն է գրել իր երեխաների համար, որպեսզի մեծանալիս կարդան, դա հիսունerկու թվականի վերջերին էր։ Այդ ձեռագիրը կորել է։ Դրանից հետո այնքա՜ն ցավ են տարել։ Ո՞ւմ աչքին էր գալիս։ Մի քանի տարի անց, հիսունյոթին, առասպելը գրի առավ Աֆանասի Իվանովիչ Ելիզարովը։ Հիմա Ելիզարովը չկա։ Իսկ ձեռագիրը, ի՞նչ իմանաս, երևի թղթերի հետ մնացել է Ալմա-Աթայում... Նա էլ, սա էլ առասպելը հիմնականում գրի են առել Կազանղապի պատմածով։ Իհարկե, Եղիգեյը ներկա է եղել, բայց ներկա է եղել իբրև հուշարար — հիշեցնող, յուրահատուկ մեկնաբան։

«Այ քեզ տարինե՜ր։ Երբ է եղել այդ ամենը, տեր աստված» — խորհում էր Բորանլի Եղիգեյը, ճոճվելով սթարով ծածկված Կարանարի սապատների արանքում։ Հիմա իրեն, Կազանղապին են տանում Անա-Բեյիթի գերեզմանոցը։ Շրջանակը կարծես փակվում էր։ Առասպել ասացողը այժմ ինքը պիտի վերջին հանգիստը գտնի գերեզմանոցում, որի պատմությունը պահպանել է և հաղորդել ուրիշներին։

«Մնացինք մենք՝ ես և Անա-Բեյիթը։ Այսինքն շուտով ես էլ կգամ այստեղ, կգրավեմ իմ տեղը։ Աշխարհի օրենք է, ինչ կարող ես անել»,— թախիծով մտածում էր Եղիգեյը ճանապարհին, առաջվա նման ուղտին բազմած՝ գլխավորելով թաղման արտառոց թափորը, որ հետևում էր իրեն. կցասայլով տրակտորով և անվավոր «Բելոռուս» էքսկավատորով։ Շեկ շունը՝ Ջոլբարսը, որ ինքնակամ միացել էր հուղարկավորներին, իրեն թույլ էր տալիս հայտնվելու թափորի մեկ գլխին, մեկ պոչին, մեկ կողքին, մեկ-մեկ էլ բաժանվում էր կարճ ժամանակով... Պոչը պահում էր ձիգ, տանտիրոջ նման ինքնավստահ և շուրջբոլորն էր նայում գործնական հայացքով...

Արեգակն արդեն գագաթին էր հասել, կեսօրն սկսվում էր։ Մինչև Անա-Բեյիթի գերեզմանոցը այնքան շատ չէր մնում...

## VIII

Համենայն դեպս հիսուներկու թվականի վերջը, ավելի ճիշտ ամբողջ աշունն ու ձմեռը, որ իսկապես ուշացումով եկավ, բայց եկավ առանց բուք ու բորանի, թերևս Բորանլի կիսակայարանի այն ժամանակվա մի բուռ բնակիչների համար ամենալավ օրերն էին։ Եդիգեյը հետո հաճախ կարոտով էր հիշում այդ օրերը։

Ղազանղապը՝ բորանլիցիների նահապետը, որ շենքով-շնորհքով մարդ էր և երբեք իրեն թույլ չէր տալիս խառնվելու ուրիշի գործերին, դեռևս ուժեղ էր և առողջ։ Նրա Սաբիթջանն արդեն սովորում էր Կումբելի գիշերօթիկում։ Կութիբաևների ընտանիքն արդեն հիմնավոր հաստատվել էր սարօզեկներում։ Ձմեռնամուտին փակել էին բարաքի ծակուծուկերը, կարտոֆիլ էին ամբարել, Զարիպայի և երեխաների համար ձեռք էին բերել թաղիքե ոտնամաններ, մի լիքը պարկ ալյուր էին բերել Կումբելից։ Ինքը՝ Եդիգեյն էր օրսից ստացել և բարձել Կարանարին, որ այդ տարիներին գտնվում էր ուժերի ծաղկման շրջանում։ Աբութալիպն աշխատում էր ինչպես որ պետք էր և առաջվա նման ամբողջ ազատ ժամանակը նվիրում էր երեխաներին, իսկ գիշերները լամպը դնում էր լուսամուտի գոգին և ինքնամոռաց գրում։

Կային նաև կայարանային բանվորների ուրիշ երեք ընտանիք, որոնք ըստ ամենայնի ժամանակավոր էին կիսակայարանում։ Կիսակայարանի այն ժամանակվա պետը նույնպես վատ մարդ չէր երևում։ Բորանլիցիներից ոչ ոք հիվանդ չէր։ Աշխատանքն առաջ էր գնում։ Երեխաները մեծանում էին։ Ձմեռնամուտի բոլոր աշխատանքները՝ ուղեգծային արգելափակոցների և վերանորոգման ուղղությամբ, ավարտվել էին ժամանակին։

Եղանակը սքանչելի էր սարօզեկների համար։ Դարչնագույն աշուն էր՝ հացի կեղևի նման։ Հետո վրա հասավ ձմեռը։ Անմիջապես ձյուն դրեց։ Նույնպես գեղեցիկ, ճեփ-ճերմակով ծածկվեց շուրջբոլորը։ Այս անծայրածիր, ճերմակ անդորրության մեջ սև թելի նման ձգվում էր երկաթուղին, որի վրայով անվերջ գնում ու գնում էին գնացքները։ Եվ այդ երթուղարձի կողքին, ձյունոտ բլուրների մեջ ծվարել էր փոքրիկ ավանը՝ Բորանլի կիսակայարանը։ Ընդամենը մի քանի տնակ... Վագոններից անտարբեր սահում էր ուղևորների հայացքը, կամ էլ մի րոպե նրանց մեջ

զարթնում էր վաղանցիկ խղճահարություն կիսակայարանի մենավոր բնակիչների նկատմամբ...

Թեև զուր էր այդ վաղանցիկ խղճահարությունը։ Բորանլիցիների համար այդ տարին լավն էր, եթե չհաշվենք ամառվա կատաղի հնոցը։ Բայց դա արդեն մնացել էր ետևում։ Անհասարակ, կյանքն ամենուրեք մի կերպ կարգավորվում էր պատերազմից հետո։ Նոր տարվա առթիվ նորից սպասվում էր մթերային և արդյունաբերական ապրանքների գների իջեցում, չնայած խանութները լիքը չէին, այնուամենայնիվ աստիճանաբար կյանքը գնում էր դեպի լավը...

Սովորաբար բորանլիցիները նոր տարուն առանձին նշանակություն չէին տալիս, սրտի թրթիռով չէին սպասում կեսգիշերին։ Բորանլիում ծառայությունն ընթանում էր անկախ ամեն ինչից. գնացքները շարժվում էին, ոչ մի րոպե հաշվի չառնելով, թե երբ և ճանապարհի որ մասում կսկսվի նոր տարին։ Ինչպես միշտ, ձմեռը տնտեսության գործերը շատանում են։ Վառարանը պիտի միշտ տաք պահես, անասունն էլ ավելի շատ խնամք է պահանջում, թե արոտատեղում, թե անասնոցում։ Օրվա մեջ մարդ այնքան էր հոգնում, ջարդվում, որ ուզում էր շուտ անկողին մտնել, հանգստանալ։

Այդպես, մեկը մյուսի ետևից անցնում էին տարիները։

Իսկ հիսուներեք թվականի տարեմուտին Բորանլիում իսկական տոն էր։ Տոնն, իհարկե, հղացել էր Կութիբաևների ընտանիքը։ Եդիգեյը ամանորյա պատրաստություններին միացավ հետո։ Բանն այն էր, որ Կութիբաևները որոշել էին երեխաների համար տոնածառ դնել։ Բայց սարօզեկներում որտեղի՞ց եղևնի, այնտեղ ավելի հեշտ էր բրածո դինոզավրի ձու գտնել։ Ելիզարովը, այո, երկրաբանական արահետներով թափառելիս, սարօզեկներում գտել էր դինոզավրի միլիոնամյա ձվեր։ Այդ ձվերը, ամեն մեկը մի մեծ ձմերուկի չափ, քարացած էին։ Հայտնագործությունը տարան Ալմա-Աթա։ Թերթերում գրեցին այդ մասին։

Աբութալիպ Կութիբաևը ստիպված եղավ սառնամանիքին մեկնել Ղումբել և կայարանի արհմիութենական կոմիտեում բանակցություն վարել, որպեսզի այդ մեծ կայարանը եկած հինգ տոնածառից մեկը, այնուամենայնիվ, տային Բորանլիին։ Դրանից էլ սկսվեց։

Եդիգեյը կանգնած էր պահեստի մոտ, կիսակայարանի պետից ստանում էր աշխատանքային նոր թաթպաններ, երբ սառը

արգելակելով, առաջին գծի վրա կանգնեց տափաստանային քամիներից ժանգոտված այրանքատարը։ Երկար գնացք էր՝ ամբողջապես պլոմբված, չորս առանցքանի վագոններ։ Վերջին վագոնի բաց հարթակից, դժվարությամբ փոխելով փայտացած ոտքերը սառած սապոգների մեջ, իջավ Աբութալիբը։ Գնացքի ուղեկցորդը՝ ահագին քուրքը հագին, մորթե փափախով, անճոռնի իրար գալով հարթակի վրա, նրան հանձնեց ինչ-որ մեծ բան։ Տոնածառ է, ենթադրեց Եդիգեյը և շատ զարմացավ։

— Հե՜յ, Եդիգեյ։ Բորանլի։ Մոտ արի, օգնիր մարդուն,— կանչեց ուղեկցորդը, ամբողջ մարմնով կախվելով վագոնի սանդուղքից։

Եդիգեյը շտապով մոտեցավ և վախեցավ Աբութալիբի տեսքից։ Աբութալիբը, մինչև հոնքերը սպիտակ ձյունափոշու մեջ կորած, այնպես էր սառել, որ շրթունքները չէին շարժվում։ Թևը չէր կարողանում բարձրացնել, իսկ կողքին տոնածառն էր, փշոտ ծառը, որի համար Աբութալիբը քիչ մնաց այն աշխարհը գնար։

— Այդ ի՞նչ ձևով եք ձերոնք ճամփա գնում,— խռպոտ ձայնով դժգոհեց ուղեկցորդը։— Քամին ետևից այնպես է խփում, հոգիդ բերանդ է գալիս։ Ուզեցի քուրքս վրան գցեմ, վախեցա ես սառեմ։

Մի կերպ շրթունքներն իրար բերելով Աբութալիբը ներողություն խնդրեց.

— Ներեցեք, այդպես պատահեց։ Հիմա կտաքանամ, տունը մոտ է։

— Ա՜յ մարդ, ասում եմ, ես քուրքը հագիս, տակից մզդակած հագուստներ, ոտքիս թաղյակներ, գլխիս մորթե գդակ, էլի մինչև ուղեմաս հասնեմ, վայ թե աչքերս գագաթս թռչեն։ Ինչպե՞ս կարելի է,— քրթմնջում էր ուղեկցորդը։

Եդիգեյը հիմար դրության մեջ էր։

— Լավ, Տրոֆիմ, հասկացանք։ Շնորհակալ ենք։ Մեկնիր, քեզ բարի ճամփա։

Եդիգեյը վերցրեց տոնածառը։ Տոնածառը սառն էր, մեծ չէր, հազիվ մարդաբոյ։ Փշոտ տերևներից տարածվեց ձմեռային անտառի բուրմունքը։ Սիրտը թունդ եղավ, հիշեց ռազմաճակատային անտառները։ Ի՜նչ եղևնուտներ կային. անթիվ-անհամար։ Տանկերը տրորում էին, արկերը արմատահան անում։ Ում մըտքով կանցներ, թե մի օր պիտի եղևնու հոտը այսքան թանկ լինի իր համար։

— Գնացինք,— Եղիգեյը տոնածառը դրեց ուսին, նայեց Աբութալիպին։ Աբութալիպի, ցրտից պրկված, արցունքն այտին սառած գորշ դեմքին, սպիտակ հոնքերի տակից փայլում էին աշխույժ, ուրախ, հաղթական աչքերը։ Եղիգեյը հանկարծ սարսռաց. կգնահատե՞ն արդյոք երեխաները հայրական նվիրվածությունը։ Կյանքում, ախր, երբեմն ուղղակի հակառակն է լինում։ Երախտագիտության փոխարեն անտարբերություն, նույնիսկ՝ ատելություն։ «Աստված մի արասցե։ Նրա ցավերն իրեն հերիք են»,— մտածեց Եղիգեյը։

Տոնածառն առաջին հերթին տեսավ Ղութիբաևների մեծ տղան՝ Դաուլը։ Նա ուրախ ճչաց և դուրս թռավ բարաքի դռնից։ Այնտեղից դուրս թռան նաև Զարիպան ու Էրմեկը՝ առանց վերարկուների։

— Տոնածա՜ռ, տոնածա՜ռ, տես ինչ տոնածառ է,— ցնծում էր Դաուլը, ոգևորված թռչկոտելով շուրջը։

Զարիպան էլ պակաս ուրախացած չէր։

— Համենայն դեպս ճարեցիր։ Ի՜նչ լավ է։

Իսկ Էրմեկը, պարզվեց, որ կյանքում դեռևս տոնածառ չէր տեսել։ Նա աչք չէր կտրում Եղիգեյ քեռու բեռից։

— Մայրի՞կ, տոնածառ է, հա՞։ Լավն է, չէ՞։ Տոնածառը պիտի մեր տա՞նն ապրի։

— Զարիպա,— ասաց Եղիգեյը,— այս, ռուսի ասած, յոլկիպալկիի պատճառով դու կարող էիր ստանալ ցրտահարված ամուսին։ Շուտ արա, տուն մտնենք, տաքանանք։ Նախ հարկավոր է սապոգները հանել։

Սապոգները սառել, կոշտացել էին։ Աբութալիպը ատամները սեղմում էր, կնճռում դեմքը, հառաչում, երբ բոլորն աշխատում էին նրա ոտքերից դուրս քաշել սապոգները։ Փոքրիկներն առանձնապես շատ ճիգ էին թափում։ Մեկ այս, մեկ այն կողմից թաթիկներով քաշքշում էին ծանր, կաշվե սապոգները, որ սառնամանիքից քարի պես կպել-մնացել էր ոտքերին։

— Տղանե՛ր, մեջ մի ընկեք, տղաներ, թողե՛ք ինձ,— քշում էր նրանց մայրը։

Բայց Եղիգեյն անհրաժեշտ համարեց կամացուկ ասելու.

— Նրանց հանգիստ թող, Զարիպա։ Թող չարչարվեն։

Նա բնազդով զգում էր, որ Աբութալիպի համար դա բարձրագույն վարձատրությունն է. սեր, երեխաների կարեկցանք։ Նշանակում է, նրանք արդեն մարդ են, նշանակում է, արդեն մի

բան հասկանում են։ Առանձնապես հուզիչ և ծիծաղելի էր կըրտսերը՝ Էրմեկը, որ չգիտես ինչու, հորը պապիկա էր ասում։ Եվ ոչ ոք չէր ուղղում նրան, քանի որ դա մարդկային շուրթերից հնչող հավերժական ու նախնական բառերից մեկի յուրօրինակ «փոխակերպումն» էր։

— Պապիկա, պապիկա,— մտահոգ իրար էր անցել նա, ապարդյուն ջանքերից կարմրած։ Գանգուրները խառնվել էին, աչքերը վառվում էին չափազանց կարևոր բան կատարելու ցանկությունից, և այնքան էլ լուրջ էր, որ ակամայից ուզում էիր քրքջալ։

Իհարկե, հարկավոր էր այնպես անել, որ երեխաները հասնեին իրենց նպատակին։ Սապոգներն արդեն սկսել էին հալվել և կարելի էր արդեն հանել, առանց շատ ցավ պատճառելու Աբութալիպին։

— Հապա, երեխաներ, նստեք իմ ետևը։ Գնացքի նման, մեկս մյուսից կքաշենք։ Դաուլ, դու բռնիր ինձնից, իսկ դու Էրմեկ, բռնիր Դաուլից։

Աբութալիպը հասկացավ Եդիգեյի միտքը և հավանություն տալով գլխով արեց, ժպտաց արցունքների միջից, որ ցրտից սենյակ մտնելուց հետո հայտնվել էին աչքերում։

Եդիգեյը նստեց Աբութալիպի դիմաց, նրանից հետո շարվեցին երեխաները, և երբ նրանք պատրաստ էին, Եդիգեյը սկսեց քաշել սապոգները։

— Ձեզ տեսնեմ, տղանե՛ր, ավելի ուժեղ, ավելի համերաշխ քաշեք։ Թե չէ, ես մենակ չեմ կարող։ Ուժս չի պատում։ Դաուլ, Էրմեկ, շո՛ւտ արեք։ Ավելի՛ ուժեղ։

Երեխաները հևում, փնչում էին ետևում, ամեն կերպ աշխատելով օգնել։ Զարիպան էլ դիտողն էր։ Եդիգեյը դիտմամբ դժվարացնում էր, երբ վերջապես մի սապոգը հանվեց, երեխաները հաղթական ճիչ արձակեցին։ Զարիպան նետվեց առաջ, որպեսզի ամուսնու ներբանը շփի բրդյա կտորով, բայց Եդիգեյը բոլորին ետ մղեց։

— Սպասեք, տղաներ, և դու, մայրիկ, այս ի՞նչ եք անում, ո՞վ է քաշելու երկրորդ սապոգը։ Թե ուզում եք հայրիկի մի ոտքը թողնեք բոբիկ, մյուսը՝ սառած սապոգի մեջ։ Լա՞վ կլինի։

Եվ բոլորը, չգիտես ինչու, միաբերան քրքջացին։ Երկար ծիծաղում էին, զվարճանում հատակին, մանավանդ տղաները և ինքը՝ Աբութալիպը։

Ով իմանա, այս մասին հաճախ է հետագայում մտածել Բորանլի Եդիգեյը, աշխատելով լուծել այն սարսափելի հանելուկը, թերևս, հենց այդ պահին, Բորանլիից շատ հեռու մի տեղ, Աբութալիպ Կուտտիբաևի անունը նորից թղթերի միջից դուրս է լողացել, և այդ թուղթն ստացող մարդիկ դրա հիման վրա հարց են լուծել, որի մասին ոչ ոքի մտքով ոչ երազում, ոչ էլ արթմնի չէր անցնի ոչ այդ ընտանիքում, ոչ էլ՝ կիսակայարանում։

Աղետը ձյան պես թափվեց գլխին։ Չնայած, իհարկե, եթե Եդիգեյը նման հարցերում ասենք թե ավելի եփված լիներ, ավելի խորամանկ լիներ, եթե անգամ գլխի չընկներ, գոնե անորոշ տագնապը կսողոսկեր սիրտը։

Իսկ ինչի՞ պիտի տագնապեր։ Միշտ էլ տարեվերջին կիսակայարան էր ժամանում տեղամասային վերաքննիչը։ Ըստ գրաֆիկի շրջում էր կիսակայարանից կիսակայարան, կայարանից կայարան։ Գալիս էր մեկ-երկու օր մնում, ստուգում, թե ինչպես են վճարում աշխատավարձերը, ինչպես են ծախսում շինանյութը և այլն, ապա կիսակայարանի պետի և բանվորներից որևէ մեկի ներկայությամբ կազմում էր վերաքննության արձանագրությունը և թողնում գնում ճամփակից գնացքով։

Ինչքա՞ն գործ պիտի լինի կիսակայարանում։ Եղել է, որ Եդիգեյն էլ է ստորագրել վերաքննության արձանագրությունները։ Այս անգամ վերաքննիչը Բորանլիում մնաց երեք օր։ Գիշերեց հերթապահական տնակում՝ կիսակայարանի գլխավոր շենքում, որտեղ կար կապ և պետի սենյակ, որ հորջորջվում է։ առանձնասենյակ։ Կիսակայարանի պետ Աբիլովը անընդհատ վազվզում էր, թեյամանով թեյ էր տանում նրան։ Վերաքննիչի մոտ եկավ նաև Եդիգեյը։ Մարդը նստել, ծուխ էր արձակում թղթերի վրա։ Եդիգեյը կարծում էր, թե առաջվա ծանոթ վերաքննիչներից կլինի, բայց չէ, սա անծանոթ էր։ Կարմրաթուշ, ցանցառ ատամներով, ակնոցավոր, ճերմակող մազերով։ Տարօրինակ, կպչուն ժպիտ էր փայլատակում նրա աչքերում։

Իսկ ուշ երեկոյան հանդիպեցին։ Եդիգեյը վերադառնում էր հերթափոխից, տեսավ վերաքննիչը ետ ու առաջ է անում հերթապահանոցի լապտերի տակ։ Գառան մորթուց օձիքը վեր բարձրացրած, գառան մորթուց գդակը գլխին, ակնոցը աչքերին, մտազբաղ ծխում է, սապոգների տակ ճռճռացնելով ավազը։

— Բարի երեկո։ Դուրս եք եկել ծխելո՞ւ։ Լավ հոգնե՞լ եք,— կարեկցեց Եդիգեյը։

*— Այո, իհարկե,— պատասխանեց նա ժպտալով։— Հեշտ չի։— Եվ նորից ժպտաց։*

*— Պարզ է, իհարկե,— քաղաքավարության համար ասաց Եղիգեյը։*

*— Վաղն առավոտյան մեկնում եմ,— հայտնեց վերաքննիչը։— Տասնյոթերորդը անցնելիս կկանգնի։ Ես կգնամ,— և նորից ժպտաց։ Նրա ձայնը խուլ էր, նույնիսկ կեղծ։ Իսկ աչքերը նայում էին կկոցուն, զննող։ Դուք Եղիգեյ Ջանգելդի՞նն եք,— հարցրեց նա։*

*— Այո։ Ես եմ։*

*— Այդպես էլ կարծում էի։— Վերաքննիչը ցանցառ ատամների արանքով ինքնավստահ ներս քաշեց ծուխը։— Նախկին ճակատային։ Կիսակայարանում աշխատում եք քառասունչորսից։ Ուղեգծայինները Բորանլի են անվանում։*

*— Ճիշտ է,— պարզասրտորեն պատասխանեց Եղիգեյը։ Նրան հաճելի էր, որ սա այդքան բան գիտի իր մասին, բայց միաժամանակ զարմացավ, թե ինչպես, ինչո՞ւ է վերաքննիչն այդպես ամեն ինչ իմացել և մտքում պահել։*

*— Ես լավ հիշողություն ունեմ,— կիսաժպիտով շարունակեց վերաքննիչը երևի գուշակելով Եղիգեյի մտքերը։— Ախր, ձեր Կութիբաևի նման ես էլ եմ գրում,— ծուխը բաց թողնելով, նա գլուխը դարձրեց լուսավոր պատուհանի կողմը, որի խորշում, ինչպես միշտ, դեմը փռված թղթերի վրա խոնարհված էր Աբութալիպի գլուխը։— Երրորդ օրն է հետևում եմ, շարունակ գրում է ու գրում։ Հասկանում եմ, ինքս էլ եմ գրում։ Բայց ես բանաստեղծությամբ եմ զբաղվում։ Դեպոյի բազմատիրաժում համարյա ամեն ամիս տպագրվում եմ։ Այնտեղ գրական խմբակ ունենք։ Ես եմ ղեկավարում։ Մարզային թերթում էլ եմ տպագրվել՝ մի անգամ մարտի 8-ին և այս տարվա մայիսի մեկին։*

*Նրանք լռեցին։ Եղիգեյն արդեն ուզում էր հրաժեշտ տալ, բայց վերաքննիչը նորից խոսեց.*

*— Նա Հարավսլավիայի մասի՞ն է գրում։*

*— Ճիշտն ասած, լավ չգիտեմ,— պատասխանեց Եղիգեյը։— Երևի։ Ախր երկար տարիներ այնտեղ պարտիզանություն է արել։ Իր երեխաների համար է գրում։*

*— Լսել եմ։ Ես Աբիլովին հարցուփորձ եմ արել։ Պարզվում է, որ գերի է եղել։ Կարծեմ որոշ ժամանակ էլ ուսուցչություն է*

արել։ Իսկ այժմ ուզում է իրեն բացահայտել գրչի միջոցով,— նա քթի տակ անդուր ծիծաղեց։— Բայց դա հեշտ չի, ինչպես թվում է։ Ես էլ եմ մտածում մեծ գործ սկսել։ Ռազմաճակատ, թիկունք, ա՜յ գործ կլինի։ Հա, բայց արի ու տես, որ եղբայրդ բոլորովին ժամանակ չունի։ Անընդհատ գործուղումներ...

— Նա էլ է գիշերը գրում։ Ցերեկը աշխատում է,— միջամտեց Եղիգեյը։

Նորից լռեցին։ Եվ նորից Եղիգեյը չհասցրեց գնալ։

— Գրում ու գրում է, գրում ու գրում է, գլուխն էլ չի բարձրացնում,— նույն կիսաժպիտով ատամները ցույց տվեց վերաքննիչը, գննելով Աբութալիպի ուրվագիծը՝ լուսամուտի մոտ։

— Էհ, մարդը պիտի մի բանով զբաղվի՞ թե ոչ,— պատասխանեց Եղիգեյը։— Գրագետ մարդ է։ Շուրջը ոչ ոք և ոչինչ։ Նա էլ գրում է։

— Ահա, նույնպես միտք է։ Շուրջը ոչ ոք և ոչինչ,— մռթմռթաց վերաքննիչը և աչքերը կկոցեց, ինչ-որ բան մտածելով։— Եվ դու քո գլխի տերն ես։ Շուրջը ոչ ոք և ոչինչ, նույնպես միտք է... Եվ դու քո գլխի տերն ես...

Նրանք բաժանվեցին։ Հետագա օրերին Եղիգեյը հա որոշում էր չմոռանա, Աբութալիպին պատմի վերաքննիչի հետ ունեցած պատահական խոսակցությունը, բայց չէր ստացվում, իսկ հետո առհասարակ մոռացավ։

Ձմռան դեմ գործ շատ է լինում։ Եվ ամենակարևորը, Կարանարը մոլեգնել էր։ Դա մեծ գլխացավանք էր տիրոջ համար, կրակ ու պատիժ։ Իբրև աթանշա[1] Կարանարը հասունացել էր երկու տարի առաջ։ Բայց այդ երկու տարվա ընթացքում դեռևս այնքան բուռն չէին արտահայտվում նրա կրքերը, դեռևս կարելի էր նրան մեղմացնել, վախեցնել, խիստ սաստումներով հնազանդեցնել։ Մանավանդ Բորանլիի երամակի ծեր աթանը՝ Կազանղապի ուղտը, նրան թույլ չէր տալիս ծավալվի։ Խփում էր, կծոտում, ետ մղում մատակներից։ Բայց դեհ տափաստանը մեծ է։ Մի ծայրից քշեր, սա կհայտնվեր մյուս ծայրին։ Եվ այդպես ամբողջ օրը։ Ծեր աթանը այնքան քշեց նրան, մինչև ուժասպառ եղավ։ Այդ ժամանակ ջահել և տաքարյուն աթանշա Կարանարը, այսպես թե այնպես, հասավ իր նպատակին։

Բայց նոր սեզոնին, ձմռան ցրտերն սկսվելու հետ, երբ ուղ-

---

[1] Աթանշա— մատղաշ աթան, մատղաշ արու։

*տի արյան մեջ նորից արթնանում է բնության հավերժական կանչը, Կարանառը դարձավ Բորանլիի երամակի գերագույնը։ Կարանառը հասավ հզորության, հասավ կործանարար ուժի։ Ղազանղապի ծեր աթանին հեշտությամբ քշեց զառիթափի տակ և անմարդ տափաստանում ջարդուփշուր արեց նրան, տրորեց, կծոտեց, կիսամեռ արեց և վայ է, եթե մեկը փորձեր բաժանել նրանց։ Այդ անողոք օրենքի մեջ բնությունը հետևողական է. այժմ հետնորդներ թողնելու հերթը Կարանառինն էր։*

*Սակայն այդ հողի վրա Ղազանղապն ու Եդիգեյը առաջին անգամ վեճ ունեցան։ Ղազանղապը տեսնելով խղճալի պատկերը՝ զառիթափի տակ ոտնատակ արված իր աթանին, սրտնեղեց։ Արոտավայրից վերադարձավ խոժոռված և Եդիգեյին ասաց.*

*— Ինչպե՞ս ես, ախր, էդպիսի բան թույլ տալիս։ Նրանք անասուն են, բայց մենք հո մարդ ենք։ Այս մահացու ջարդը քո Կարանառն է տվել։ Իսկ դու նրան հանգիստ բաց ես թողնում տափաստան։*

*— Ես չեմ բաց թողել, Ղազակե։ Ինքն է գնացել։ Ինչպե՞ս կհրամայես պահեմ։ Շղթայո՞վ։ Շղթաները պոկում է։ Դու լավ գիտես, որ զուր չի պապական խոսքը. «Քյուշ աթասըն թանըմայդը»[1]։ Նրա ժամանակը հասել է։*

*— Դու էլ ուրախանում ես։ Դեռ սպասիր, տես ինչեր է անելու։ Դու խնայում ես դրան, չես ուզում ռունգը ծակես, շիշ[2] անցկացնես, բայց տես հա՛, գլխիդ վայ ես տալու, դեռ շատ քարշ կգաս ետևից։ Էդ տեսակ գազանը մի երամակով չի հանգստանա, ամբողջ սարօզեկները ոտի տակ կտա։ Եվ զսպել չի լինի դրան։ Այն ժամանակ կհիշես խոսքերս...*

*Եդիգեյը չուզեց ավելի գրգռել Ղազանղապին, հարգում էր նրան, մանավանդ որ նա իրավացի էր։ Եվ հաշտվողաբար մրթմրթաց։*

*— Դու նվիրել ես, ծծկեր էր դեռ, դու էլ բողոքում ես։ Լավ, տեսնենք, մի բան կմտածեմ, կզսպեմ դրան։*

*Այնուամենայնիվ ձեռքը չէր բարձրանում այլանդակելու Կարանառի նման գեղեցիկ ուղտին, ծակել ռունգերը և փայտե ձողիկ անցկացնել։ Իսկ հետո, իրոք, քանի անգամ է հիշել Ղազանղապի խոսքերը և քանի անգամ, հասնելով կատաղության*

1 *Ուժը հայր չի ճանաչում։*

2 Շիշ — *փայտե ձողիկ, որ անց է կացվում ուղտի վերին շրթունքին։*

*դուռը, երդվել է, որ այլևս ոչ մի բանի նշանակություն չի տա և, համենայն դեպս, ձեռք չի տվել ուղտին։ Մի ժամանակ նույնիսկ մտադրվել էր ամորձատել նրան և դարձյալ չէր համարձակվել, չէր կարողացել ինքն իրեն հաղթել։ Այդպես տարիներն անցնում էին տարիների ետևից, և ամեն անգամ ձմռան ցրտերըն ընկնելու հետ սկսվում էին չարչարանքները, խելահեղ չափ ընկած, կատաղած Կարանարի որոնումները...*

*Այդ ձմեռվանից էլ սկսվեց ամեն ինչ։ Դա մնաց հիշողության մեջ։ Մինչ Կարանարին մեղմացնում էր, ընտելացնում անասնոցին, որ հետո ամուր բանտի նրան, մոտեցավ Նոր տարին։ Ղութիբաևները տոնածառով էին զբաղված։ Բորանլիցի երեխաների համար մեծ իրադարձություն էր։ Ուկուբալան աղջիկների հետ ուղղակի տեղափոխվել էր Ղութիբաևների բարաքը։ Ամբողջ օրը պատրաստություն էին տեսնում, կարդարում տոնածառը։ Աշխատանքի գնալիս և աշխատանքից վերադառնալիս Եդիգեյը նույնպես առաջին հերթին մտնում էր Ղութիբաևների տուն, տեսնելու տոնածառն ինչպես է։ Գնալով ավելի գեղեցիկ, ավելի շքեղ էր դառնում տոնածառը, շողշողում էր ժապավենների և զանազան ինքնաշեն խաղալիքների մեջ։ Այստեղ, իհարկե, ի պատիվ Զարիպայի և Ուկուբալայի պետք է ասել, որ հանուն երեխաների ինչքան շնորհք ունեին թափում էին։ Եվ բանը թերևս այնքան տոնածառը չէր, որքան ամանորյա հույսերը, բոլորի համար ընդհանուր, շտապփույթ և երջանիկ փոփոխության անգիտակից սպասումները։*

*Աբութալիպը այդքանով չբավարարվեց, երեխաներին տարավ բակ, սկսեցին մեծ ձնագունդ գլորել, ձմեռ տատիկ էին սարքում։ Եդիգեյն սկզբում կարծեց հենց այնպես զվարճանում են, իսկ հետո հիացավ նրանց հնարամտությամբ։ Հսկայական, համարյա մարդահասակ ձնե տատիկը, ծիծաղելի մի հրեշ՝ ածուխե սև աչքերով, սև հոնքերով, կարմիր քթով և ժպտացող բերանով, գլխին Ղազանղապի բուրդը տված, աղվեսի մորթուց փափախը, կանգնեց կիսակայարանի առջև, դիմավորելով գնացքը։ Տատիկը մի «ձեռքով» պահել էր երկաթուղային կանաչ դրոշակը՝ ճանապարհը բաց է, իսկ մյուսով շնորհավորական ցախտակ՝ «Շնորհավոր Նոր՝ 1953 թվականը»։ Սքանչելի էր ստացվել։ Այդ տատիկը, դեռ երկար կանգնած մնաց, հունվարի 1-ից հետո էլ...*

*Դեկտեմբերի 31-ին, անցնող տարվա ցերեկը, մինչև երեկո*

բորանլիցի երեխաները խաղում էին տոնածառի շուրջը և բակում։ Այնտեղ էին նաև հերթապահությունից ազատ մեծերը։ Աբութալիպը պատմում էր Եդիգեյին, թե առավոտ վաղ երեխաները մտել են իր ծոցը, մշմշում են, շարժվում, իսկ ինքը խոր քնած է ձևացել։

«— Վեր կաց, վեր, պապիկա, քաշքշում է Էրմեկը։— Ձմեռ պապիկը հիմա կգա։ Գնանք դիմավորենք։

— Լավ,— ասում եմ։— Հիմա վեր կկենանք, կլվացվենք, կհագնվենք կգնանք։ Խոստացել է գալ։

— Ո՞ր գնացքով է գալու,— մեծն է հարցնողը։

— Որը պատահի,— ասում եմ,— Ձմեռ պապի համար ուզածդ գնացքը կկանգնի, նույնիսկ մեր կիսակայարանում։

— Դե շուտ անենք, վեր կենանք։

Ուրեմն վեր ենք կենում, հանդիսավոր, լուրջ պատրաստվում ենք։

— Հապա մայրիկը,— հարցնում է Դաուլը։ —Նա էլ է ուզում տեսնել Ձմեռ-պապին։

— Իհարկե,— ասում եմ,— հապա ինչպե՞ս։ Նրան էլ կանչենք։

Հավաքվեցինք, բոլորս միասին դուրս եկանք տնից։ Երեխաները վազեցին հերթապահանոցի կողմը։ Մենք՝ նրանց ետևից։ Վազվզում են տնակի շուրջբոլորը, իսկ Ձմեռ պապիկը չկա։

— Պապիկա, որտե՞ղ է նա։

Էրմեկը, գիտես էլի, աչքերը բացուխուփ է անում։

— Հիմա,— ասում եմ,— մի շտապեք։ Կհարցնեմ հերթապահին։

Մտնում եմ հերթապահանոց։ Այնտեղ երեկվանից թաքցրել եմ նամակ Ձմեռ-պապիկից և նվերներով տոպրակ։ Դուրս եկա թե չէ, հարցրին.

— Հը՞, պապիկա։

— Ահա,— ասում եմ,— պարզվում է Ձմեռ պապիկը ձեզ նամակ է թողել, տեսեք. «Սիրելի տղաներ՝ Դաուլ և Էրմեկ, ես Ձեր նշանավոր Բորանլի կիսակայարանը եկա առավոտ վաղ, ժամը հինգին։ Դուք քնած էիք, շատ ցուրտ էր։ Ես ինքս էլ շատ ցուրտ եմ, մորուքս ամբողջապես սառնամանիքի բրդից է։ Իսկ գնացքը կանգնեց ընդամենը երկու րոպե։ Հազիվ հասցրեցի գրել այս նամակը և թողնել նվերները։ Տոպրակի մեջ բոլոր երեխաների համար իմ կողմից դրել եմ մեկական խնձոր և երկուական ըն-

կույզ։ Մի՛ նեղացեք, գործ շատ ունեմ։ Պետք է ուրիշ երեխաների մոտ էլ գնամ։ Նրանք էլ են սպասում ինձ։ Եկող նոր տարուն կաշխատեմ այնպես գալ ձեզ մոտ, որ հանդիպենք։ Իսկ առայժմ, ցտեսություն։

Ձեր Ձմեռ-պապի, Այազ-աթա»։

Սպասիր, սպասիր, այստեղ բան է ավելացված. գրված է շատ շտապ, անընթեռնելի ձեռագրով։ Երևի գնացքն արդեն շարժվելիս է եղել։ Սպասիր, կարծես ջոկում եմ. «Դաուլ, մի ծեծիր քո շանը։ Ես մի անգամ լսեցի, թե ինչպես էր խեղճը վրնգըստում, երբ կրկնակոշիկով խփել էիր նրան։ Բայց հետո այլևս չլսեցի։ Երևի սկսել ես ավելի լավ վերաբերվել նրան։ Ահա և վերջ։ Նորից Ձեր Այազ-աթա»։ Սպասիր, սպասիր, այստեղ մի բան էլ է խզմզած։ Հա, հասկացա. «Ձմեռ տատիկը լավ էիք սարքել։ Կեցցեք, ես ձեռքով բարևեցի նրան»։

Նրանք, իհարկե, ուրախացան։ Ձմեռ-պապի նամակն անմիջապես համոզեց նրանց։ Ո՛չ մի նեղանալ։ Միայն սկսեցին վիճել, թե ով է տանելու նվերների տոպրակը։ Այստեղ մայրը վեճը լուծեց.

— Սկզբում տասը քայլ կտանի Դաուլը։ Նա մեծ է։ Հետո տասը քայլ կտանի Էրմեկը։ Դու փոքրն ես, Էրմեկ...

Եդիգեյը սրտանց ծիծաղեց։ «Նրանց տեղը լինեի, ես էլ կհավատայի»։

Բայց ցերեկը երեխաների ամենասիրելին դարձավ Եդիգեյ քեռին։ Նա սահնակով զբոսանք կազմակերպեց երեխաների համար։ Ղազանղապի տանը հին սահնակ կար։ Լծեցին Ղազանղապի ուղտը, որ հանգիստ և լավ քայլում է խամութով։ Կարանարին, իհարկե, հնարավոր չի խառնել նման գործերի։ Լծեցին և ամբողջ խմբով գնացին։ Ճիչ ու աղաղակը աշխարհ էր բռնել։ Եդիգեյը կառապանն էր։ Երեխաները կպել պոկ չէին գալիս, բոլորը ուզում էին նստել նրա կողքին։ Եվ բոլորն էլ խնդրում էին «Արա՛գ, ավելի՛ արագ գնանք»։ Աբութալիպն ու Զարիպան մեկ քայլում էին, մեկ վազում կողքից, թեք ճանապարհներին նըստելով սահնակի եզրին։ Կիսակայարանից հեռացան մոտ երկու կիլոմետր, բլրակից ետ դարձան, թեք լանջով սահեցին ցած։ Լծված ուղտը շնչակտուր էր լինում։ Հանգստանալու կարիք զգացվեց։

Օրը լավն էր։ Անսահմանորեն սպիտակ, ձյունածածկ սարո-

ցեկների վրա, որքան աչք ու ականջ էր զորում, փռված էր սպիտակ, նախաստեղծ լռությունը։ Ամենուրեք տարածված էր տափաստանը՝ խորհրդավոր կերպով ձյան տակ թաքնված թըմբերով, բլուրներով, հովիտներով։ Երկնքից մաղվում էր աղոտ լույս և միջօրեի փափուկ ջերմություն։ Հովը մեղմիկ ականջ էր շոյում։ Իսկ առջևում, երկաթգծով անցնում էր երկար, կարմրադեղին գնացքը, որին քաշում էին շարալծով կցված երկու սև շոգեքարշ, ծուխ արձակելով երկու խողովակներից։ Խողովակների ծուխը ալարկոտ ցնդող, լողացող օղակներով կախվում էր օդում։ Մոտենալով սեմաֆորին, շոգեքարշը ազդանշան տվեց երկար, հզոր սուլոցով։ Երկու անգամ կրկնեց, լուր տվեց իր մասին։ Գնացքը միջանցական էր, առանց արագությունը պակասեցնելու, դժժաց կիսակայարանով մեկ, անցավ սեմաֆորների և վեց-յոթ տնակների մոտով, որոնք անշնորհք կերպով կպել էին գրեթե երկաթգծին, չնայած այնքան տարածություն կար շուրջբոլորը։ Եվ նորից ամեն ինչ հանդարտվեց ու մարեց։ Ոչ մի շարժում։ Լոկ վառարանների կապույտ ծուխն էր ոլորվում բորանլիցիների տանիքների վրա։ Բոլորը լռել էին, նույնիսկ զբոսանքից ոգևորված երեխաներն էին խաղաղվել այդ պահին։ Զարիպան կամացուկ, միայն ամուսնու համար լսելի ձայնով ասաց.

— Ինչ լավ է և ինչ սարսափելի է։

— Ճիշտ է,— նույնպես կամացուկ արձագանքեց Աբութալիպը։

Եդիգեյը առանց գլուխը շուռ տալու, թեք նայեց նրանց։ Նրանք կանգնած էին կողք-կողքի և շատ նման էին իրար։ Զարիպայի արտասանած ոչ բարձր, բայց հստակ խոսքերը մտահոգեցին Եդիգեյին, չնայած իրեն չէին ուղղված։ Նա հանկարծ հասկացավ, թե ինչպիսի թախիծով և սարսափով էր Զարիպան նայում այդ տնակներին, որոնց վրա ոլորվում էր ծուխը։ Բայց Եդիգեյը ոչ մի կերպ և ոչնչով նրանց օգնել չէր կարող, որովհետև երկաթուղու մոտ ծվարած ավանը իրենց բոլորի միակ ապաստանն էր։

Եդիգեյը «նո՜» արեց լծված ուղտին։ Մտրակեց։ Եվ սահնակները սահեցին ետ, դեպի կիսակայարան։

Երեկոյան, նորտարյա գիշերի նախօրեին, բոլոր բորանլիցիները հավաքվեցին Եդիգեյի և Ուկուբալայի տանը,— այդպես էին որոշել Եդիգեյն ու Ուկուբալան դեռևս մի քանի օր առաջ։

— Քանի որ այստեղ նոր հաստատված Ղութիբաները տոնածառ են կազմակերպել բոլոր երեխաների համար, ուրեմն մեզ ասված է հրամայում, ժլատություն չենք անի,— ասաց Ուկուբալյան։

Եղիգեյը գոհ էր դրանից։ Ճիշտ է, մասնակցել կարող էին ոչ բոլորը. ոմանք հերթապահում էին գծի վրա, ոմանք էլ պիտի հերթապահեին երեկոյան։ Իսկ գնացքները գնում էին, հաշվի չառնելով ոչ տոն օր, ոչ սովորական օր։ Ղազանղապին հաջողվեց նստել միայն սկզբում։ Երեկոյան ժամը իննի կողմերը գնաց սլաքատուն, այսինքն գրաֆիկը պահանջում էր, որ հունվարի 1-ի առավոտյան, ժամը վեցին Եդիգեյն էլ լինի գծի վրա։ Ծառայությունը՝ ծառայություն է։ Այսպես թե այնպես երեկոն հրաշալի անցավ։ Բոլորի տրամադրությունը բարձր էր, և չնայած օրվա ընթացքում տասն անգամ տեսել էին իրար, հագնվել էին ինչպես հեռվից ժամանած հյուրեր։ Ուկուբալյան պատրաստել էր ամեն տեսակ ուտեստեղեն։ Խմելու բան էլ կար, օղի, շամպայն։ Իսկ ցանկացողի համար կար ձմեռային շուբաթ, որ պատրաստվել էր ստերջ ուղտի կաթից, ձմռանն անգամ Ղազանղապի անխոնջ կինը՝ Բուկեյը, կթում էր ստերջ ուղտերին։ Սակայն տոնը տոն դարձավ այն ժամանակ, երբ առաջին բաժակներից և նախուտեստից հետո սկսեցին երգել։ Եկավ այն պահը, երբ թուլացավ տանտերերի առաջին իրարանցումը, վերացավ հյուրերի կաշկանդվածությունը, և կարելի էր հանգիստ, մանր-մունր գործերը թողած անձնատուր լինել հոգեկան հազվագյուտ բավականության. քեֆ անել, շփվել նրանց հետ, ում ամեն օր տեսնում ես, լավ ես ճանաչում, բայց հայտնաբերում ես մի նոր բան, որովհետև տոնն ունի մարդկանց վերափոխելու յուրահատկություն։ Պատահում է նաև՝ վատ կողմով։ Բայց ոչ այստեղ, բորանլիցքների մեջ։ Ապրել սարօզեկներում, և դեռ համարվել անհաշտ կամ կռվարար... Եդիգեյը թեթև հարբել էր։ Բայց դա սազում էր նրան։ Ուկուբալյան, առանց հատուկ անհանգստության, հիշեցնում էր ամուսնուն.

— Մի մոռանա, որ վաղն առավոտյան ժամը վեցին աշխատանքի ես։

— Ամեն ինչ պարզ է, Ուկու։ Հասկացա,— պատասխանեց Եդիգեյը։

Նա Ուկուբալայի կողքին նստած, ձեռքը նրա վզի՛վը գցած, երգում էր, ճիշտ է, երբեմն անհաջող, բայց ոգևորված, և դրանով

ստեղծում էր հզոր աղմկային տպավորություն։ Նա գտնվում էր հոգու այն գերագանց վիճակում, երբ մտքի պայծառությունը և զգացմունքների խանդավառությունը միաձուլվում են անմնացորդ։ Երգելիս նա զորովանքով նայում էր հյուրերի դեմքերին, բոլորին նվիրելով ուրախ, սրտագին ժպիտ, վստահ, որ բոլորն էլ իրեն նման լավ են զգում։ Եվ գեղեցիկ էր Բորանլի Եդիգեյը, այն ժամանակ դեռ սև հոնքերով, սև բեղերով, փայլուն խաժ աչքերով և առողջ, սպիտակ ատամներով։ Նույնիսկ ամենավառ երևակայությունը ունակ չէր պատկերացնելու, թե ինչպիսին կլիներ նա ծերացած ժամանակ։ Ոչ ոքի չխնայեց ուշադրությունը։ Թփթփացնելով գիրացող, բարի Բուկեյի ուսը, նրան անվանեց Բորանլիի մայր, նրա պատվին բաժակաճառեր ասաց, հանձին նրա, խմեց ամբողջ կարակալպակյան ժողովրդի կենացը, ժողովուրդ, որ ապրում է Ամու-Դարյայի ափերին, և խնդրեց չհուզվել, որ Ղազանղապը աշխատանքի պատճառով ստիպված եղավ թողնել սեղանը։

— Առանց այդ էլ ձանձրացել եմ նրանից,— չարաճճի պատասխանեց Բուկեյը։

Իր Ուկուբալային Եդիգեյը այդ երեկո անվանում էր լրիվ անունով. Ուկու Բալասի՝ Բուի ճուտ։ Ամեն մեկի համար Եդիգեյը գտնում էր մի բարի, սրտալի խոսք. այդ նեղ շրջանակում, բոլորը նրա հարազատներն էին, եղբայրներն ու քույրերը, ընդհուպ մինչև կիսակայարանի պետ Աբիլովը, որ սարօզեկներում քարշ էր տալիս երկաթուղային մանր պաշտոնյայի բեռը, և նրա գունատ, հղի կինը՝ Սաքենը, որ շուտով պիտի գնար Կումբելի կայարանային ծննդատունը։ Եդիգեյն անկեղծորեն հավատացած էր, որ ամեն ինչ իսկապես այդպես է, որ ինքը շրջապատված է անբաժանորեն հարազատ մարդկանցով, այսինքն՝ էլ ինչպե՞ս պիտի լիներ, բավական էր, երգելու արանքում մի պահ կկոցեր աչքերը, անմիջապես պատկերանում էր սարօզեկների վիթխարի ձյունոտ անապատը և մի բուռ մարդիկ, որ այսօր մի ընտանիքի պես հավաքվել էին իր տանը։ Բայց ամենից ավելի նա ուրախ էր Աբութալիպի և Զարիպայի համար։ Եվ արժեր ուրախանալ։ Զարիպան և՛ երգում էր, և՛ մանդոլին նվագում, արագ գտնելով մեկը մյուսին հաջորդող երգերի մոտիվները։ Նրա ձայնը զրնգուն էր, զուլալ, Աբութալիպը երգում էր կրծքային խուլ ծորուն ձայնով, երկուսն էլ երգում էին սրտանց, ներդաշնակ, մանավանդ թաթարական եղանակները։ Երգում էին ալ-

մակ-ամմակ՝ հարցուպատասխանով։ Նրանք երգում էին, մյուսները ձայնակցում։ Երգում էին հին ու նոր երգեր և չէին հոգնում, ընդհակառակը, գնալով ոգևորվում էին։ Ուրեմն հյուրերը լավ էին զգում։ Եդիգեյը նստել էր Աբութալիպի և Զարիպայի դիմաց և աչքը չէր կտրում նրանցից, սիրտը լցվել էր գորովանքով, այո, նրանք պետք է միշտ այսպես լինեին, եթե դառը ճակատագիրը թույլ տար։ Ամառային զարհուրելի շոգերի ժամանակ Զարիպան նման էր մոխրացած, հրդեհից խանձված ծառի, ման էր գալիս մինչև արմատները գունաթափված թուխ մազերով, ճաքճքված, արյունոտված, սևացած շրթունքներով, իսկ այժմ անճանաչելի էր դարձել։ Սևաչ, պայծառ հայացքով, շիտակ, ասիական հարթ, մաքուր դեմքով՝ նա այսօր ուղղակի չքնաղ էր։ Զարիպայի տրամադրությունը ամենից լավ արտահայտում էին գեղեցիկ, շարժուն հոնքերը, որոնք երգում էին նրա հետ, մերթ՝ վեր բարձրանալով, մերթ՝ խոժոռվելով, մերթ՝ թռչելով հինավուրց երգերի ետևից։ Աբութալիպը առանձին մի զգացումով ընդգծելով յուրաքանչյուր բառի նշանակությունը, հանկերգում էր նրան, օրորվելով տեղում։

Ինչպես յորղա ձիու կողին դաջված թամբակալի հետք
Չեն ջնջվի հիշողությունից անցած օրերը սիրո...

Իսկ Զարիպայի մատները դիպչելով մանդոլինի լարերին, ստիպում էին, որ երաժշտությունը վնգա ու հառաչի ամանորի գիշերը, նեղ շրջապատում։ Լողում էր Զարիպան երգի մեջ, և թվում էր Եդիգեյին, թե նա, այս միևնույն սպիտակ օձիքով, մանուշակագույն բրդյա կոֆտան հագին եղել է հեռու-հեռվում, ազատ ու թեթև շնչելով վազել է ձյունոտ սարօղեկներում՝ զրնգուն մանդոլինը ձեռքին, և խավարը նահանջել է, իսկ նա հեռանալով չքացել է մշուշի մեջ, լսվել են միայն մանդոլինի հընչյունները, բայց հիշելով, որ Բորանլի կիսակայարանում էլ մարդիկ կան ու նրանք կտխրեն առանց իրեն, վերադարձել է Զարիպան և նորից երգը շուրթին, հայտնվել է սեղանի մոտ...

Այնուհետև Աբութալիպը ցույց տվեց, թե ինչպես են պարել պարտիզանական օրերին, ձեռքը դնելով մեկը մյուսի ուսին և տակտով դոփելով գետինը։ Զարիպան թռչում էր, Աբութալիպը երգում էր սերբական աշխույժ մի երգ, բոլորը շրջան կազմած պարում էին, ձեռքերը միմյանց ուսի դրած և կանչելով. «Հոպլա, հոպլա...»։

*Հետո էլի երգեցին և էլի խմեցին, բաժակ բաժակի խփեցին, իրար շնորհավորեցին Նոր տարվա առիթով, ընդ որում մեկը դուրս էր գնում, մի ուրիշը ներս գալիս... Կիսակայարանի պետն ու նրա հղի կինը գնացին պարերից առաջ։ Եվ այսպես հոսեց գիշերը։*

*Զարիպան դուրս եկավ օդ շնչելու, նրա ետևից դուրս եկավ Աբութալիպը։ Ուկուբալան բոլորին ստիպում էր հագնվեն, քըրտնած դուրս չգան ցրտին։*

*Զարիպան ու Աբութալիպը երկար ժամանակ չէին վերադառնում։ Եդիգեյը դուրս եկավ, որ կանչի, առանց նրանց տոնը նրման չէր տոնի։ Ուկուբալան ետևից կանչեց.*

*— Այդ ո՞ւր, Եդիգեյ, մի բան հագիր, կսառչես։*

*— Հիմա գալիս եմ,— Եդիգեյը տան շեմից դուրս եկավ դեպի կեսգիշերային ցուրտ պարզությունը։— Աբութալի՛պ, Զարիպա՛,— կանչեց նա աջ ու ձախ նայելով։*

*Պատասխան չեղավ։ Տան ետևում ձայներ լսեց։ Եվ անվճռական կանգ առավ, չիմանալով ինչ անի։ Գնա՞, թե, ընդհակառակը, մոտենա նրանց, տուն տանի։ Ինչ-որ բան էր տեղի ունենում նրանց միջև։*

*— Ես չէի ուզում, որ դու տեսնես,— հեծկլտում էր Զարիպան,— ներիր։ Պարզապես շատ դժվար էր ինձ համար։ Ներիր, խնդրում եմ։*

*— Ես հասկանում եմ,— հանգստացնում էր նրան Աբութալիպը։— Ես ամեն ինչ հասկանում եմ։ Բայց ախր բանը միայն ես չեմ, ես ո՞վ եմ։ Եթե դա միայն ինձ վերաբերվեր։ Աստվա՜ծ իմ, մի կյանք ավելի կամ պակաս։ Կարելի էր այդպես համառորեն չկառչել։— Նրանք լռեցին, քիչ անց Աբութալիպն ասաց.— Մեր երեխաները կազատվեն... Ամբողջ հույսս դրա վրա է...*

*Լավ չհասկանալով ինչ է պատահել, Եդիգեյը զգույշ նահանջեց, ցրտից ուսերը վեր քաշելով, և անլսելի ետ եկավ։ Երբ տուն մտավ, նրան թվաց, թե ամեն ինչ խամրել է, տոնը վերջացել է։ Նոր տարին Նոր տարի, բայց և տուն գնալու ժամանակն է։*

*1953 թվականի հունվարի 5-ին, առավոտյան ժամը տասին Բորանլի կիսակայարանում կանգնեց մարդատար գնացքը, չնայած բոլոր ճանապարհները բաց էին նրա առջև և կարող էր, ինչպես միշտ, շարժվել առանց հապաղելու։ Գնացքը կանգ*

առավ ընդամենը մեկևկես րոպե։ Դա, ըստ երևույթին, միանգամայն բավական էր։ Երեք հոգի, բոլորն էլ միանման խրոմե սապոգներով, իջան վագոններից մեկի սանդուղքից և գնացին ուղիղ հերթապահանոց, քայլում էին լուռ և ինքնավստահ, աջ ու ձախ չնայելով, լոկ մի վայրկյան քայլերը դանդաղեցրին ձնե տատիկի մոտ։ Լուռ կարդացին տախտակի վրայի մակագրությունը, որ ողջունում էր իրենց, հետո նայեցին ձնե տատիկի գլխին դրված հիմար փափախին՝ Ղազանղապի հին, բուրդը թափված փափախին։ Եվ անմիջապես մտան հերթապահանոց։

Որոշ ժամանակ անց, դռնից դուրս թռավ կիսակայարանի պետ Աբիլովը։ Քիչ մնաց շուռ տար ձմեռ տատիկին։ Հայհոյեց և առաջ գնաց, համարյա վազում էր, մի բան, որ երբեք չէր անում։ Մի տասը րոպեից նա հևալով ետ եկավ, հետը բերելով Աբութալիպ Կուտթիբաևին, որին շտապ վերցրել էր աշխատանքի տեղից։ Աբութալիպը գունատ էր, գլխարկը պահել էր ձեռքին։ Աբիլովի հետ մտավ հերթապահանոց։ Սակայն շատ շուտ դուրս եկավ այնտեղից և խրոմե սապոգներով եկվորներից երկուսի ուղեկցությամբ գնացին Կուտթիբաևների բարաքը։ Այնտեղից շուտով դուրս եկան, նորից կրնկակոխ հետևելով Աբութալիպին, հետները տանելով նրա տանից վերցված ինչ-որ թղթեր։

Հետո ամեն ինչ խաղաղվեց։ Ոչ ոք ներս ու դուրս չարեց հերթապահի սենյակից։

Եդիգեյը պատահածի մասին իմացավ Ուկուբալայից։ Նա Աբիլովի հանձնարարությամբ հասավ չորրորդ կիլոմետր, որտեղ այդ օրը նորոգչական աշխատանքներ էին կատարում։ Եդիգեյին մի կողմ քաշեց.

— Աբութալիպին հարցաքննում են։

— Ո՞վ է հարցաքննում։

— Չգիտեմ։ Ինչ-որ եկվորներ։ Աբիլովը կարգադրել է հաղորդեմ, որ եթե հետաքրքրվեն, չասենք, որ նոր տարուն եղել ենք Աբութալիպի և Զարիպայի հետ։

— Իսկ ի՞նչ կա այդտեղ։

— Չգիտեմ։ Խնդրեց, որ այդպես ասեմ քեզ։ Եվ կարգադրեց, որ ժամը երկուսին լինես տեղում։ Քեզ էլ են ուզում բան հարցնել Աբութալիպի մասին։

— Ի՞նչ պիտի հարցնեն։

— Ես ի՞նչ գիտեմ։ Աբիլովը վախեցած եկավ և ասաց՝ այսպես ու այսպես։ Ես էլ վազեցի քեզ մոտ։ Առանց այդ էլ, Եդիգեյը

ժամը երկուսին գալիս էր տուն ճաշելու։ Ճանապարհին, տանը նույնպես, աշխատում էր հասկանալ, թե ի՞նչ կարող է եղած լինել. պատասխան չէր գտնում։ Միգուցե անցյալի համա՞ր, գերությա՞ն համար։ Դա վաղուց են ստուգել։ Ուրիշ ի՞նչ կարող է լինել։ Հոգին տակնուվրա էր եղել։ Երկու գդալ արիշտա կերավ, ափսեն ետ հրեց։ Նայեց ժամացույցին։ Երկուսից հինգ էր պակաս։ Եթե հրամայել են երկուսին, ուրեմն՝ երկուսին։ Տնից դուրս եկավ։ Հերթապահանոցի մոտ ետուառաչ էր անում Աբիլովը՝ խղճուկ, ճմլված, ընկճված։

— Ի՞նչ է պատահել։

— Դժբախտություն, դժբախտություն, Եդիկե,— խոսեց Աբիլովը, երկչոտ նայելով դռանը։ Շրթունքները մանր ցնցվում էին։
— Ղութիբաևին նստեցրել են։

— Ինչի՞ համար։

— Ինչ-որ արգելված գրություններ են գտել մոտը։ Ախր երեկոները անընդհատ գրում էր։ Բոլորը գիտեն։ Եվ խնդրեմ, գրեցվերջացրեց։

— Սպասիր, բայց նա իր երեխաների համար է գրում։

— Չգիտեմ, չգիտեմ ում համար է։ Ես ոչինչ չգիտեմ։ Գնա, քեզ են սպասում։

Կիսակայարանի պետի պստլիկ սենյակում, որն առանձնասենյակ էր հորջորջվում, սպասում էր մի մարդ, մոտավորապես իր տարիքի, կամ, թերևս մի քիչ ավելի երիտասարդ, մոտ երեսուն տարեկան, խոշոր, մեծագլուխ, մազերը ոզնեձև կտրած։ Մսոտ, լայն ռունգներով քիթը քրտնել էր մտքի լարվածությունից։ Նա ինչ-որ բան էր կարդում։ Իսկ հետո, իրենց խոսակցության ամբողջ ընթացքում անընդհատ թաշկինակով սրբում էր քիթը, խոժոռելով ծանր, լայն ճակատը։ Սեղանին դրված «Կազբեկի» տուփից հանեց երկարուկ մի գլանակ, պտտեց մատների մեջ, կպցրեց և դրան առջև կանգնած Եդիգեյի վրա դցելով ճախրուկի աչքի նման թափանցիկ, դեղնավուն աչքերը, կարճ ասաց.
— Նստի՛ր։

Եդիգեյը նստեց սեղանի մոտ դրված տաբուրետին։

— Որպեսզի որևէ կասկած չառաջանա,— ասաց ճախրուկաչքը, քաղաքացիական կիտելի ծոցագրպանից հանեց դարչնագույն ինչ-որ գրքույկ, բաց արեց և իսկույն փակեց, մռթմռթալով ինչ-որ բան, չգիտես «Թանսըկբաև» թե «Թըսըկբաև». Եդիգեյը այդպես էլ մի կարգին չլսեց նրա ազգանունը։

— Պա՞րզ է,— ասաց ճախրուկաշքը։

— Պարզ է,— ճարահատյալ պատասխանեց Եղիգեյը։

— Այդ դեպքում անցնենք գործի։ Ասում են, դու Կուվիբաևի լավագույն ընկեր-բարեկամն ես։

— Թեկուզ այդպես, իսկ ի՞նչ կա։

— Թեկուզ այդպես,— կրկնեց ճախրուկաշքը, ներս քաշելով կազբեկի ծուխը, ապա պարզաբանելով լսածը։— Թեկուզ այդպես։ Ընդունենք։ Պարզ է։— Եվ հանկարծ, անսպասելի քմծիծաղով, ուրախ, բավականություն ըմբոշխնելով, որ բռնկվեց նրա ապակու նման թափանցիկ աչքերում, ասաց.— Հը՞, սիրելի բարեկամ, գրո՞ւմ ենք։

— Ի՞նչ ենք գրում,— շփոթվեց Եղիգեյը։

— Այդ եմ ուզում իմանալ։

— Չեմ հասկանում։

— Միթե՞։ Հապա մտածիր։

— Չեմ հասկանում, ի՞նչ եք ասում։

— Իսկ ի՞նչ է գրում Կուվիբաևը։

— Չգիտեմ։

— Ինչպես չգիտես։ Բոլորը գիտեն, դու չգիտե՞ս։

— Գիտեմ, որ գրում է։ Իսկ ի՞նչ է գրում, ես ինչ իմանամ։ Ո՞ւմ ինչ գործն է։

— Ինչպե՞ս թե՝ ում ինչ գործն է,— զարմանքից ցնցվեց ճախրուկաշքը Եղիգեյին ուղղելով գնդակների նման ծակող բիբերը։— Ուրեմն ով ինչ ուզում է, թող գրի։ Նա՞ է քեզ այդպես հավատացրել։

— Նա ոչ մի բան ինձ չի հավատացրել։

Բայց ճախրուկաշքը ուշք չդարձրեց նրա պատասխանին։ Վրդովված էր։

— Ահա քեզ թշնամական ագիտացիա։ Իսկ դու մտածե՞լ ես, թե ինչ կլինի, եթե տեղից ելնողը գրելով զբաղվի։ Դու մտածե՞լ ես, ինչ կլինի։ Հետո տեղից ելնողը կսկսի գլխից դուրս տալ ինչ-որ խելքին փչի։ Այդպե՞ս ուրեմն։ Որտեղի՞ց քեզ այդ խորթ գաղափարները։ Չէ, սիրելիս, այդպիսի բան մենք թույլ չենք տա։ Այդ հակահեղափոխականությունը չի անցնի։

Եղիգեյը լռեց, ճնշված և ապշած՝ գլխին թափված խոսքերի տարափից։ Եվ շատ զարմացավ, որ շուրջը ոչինչ չփոխվեց, կարծես ոչինչ տեղի չէր ունեցել։ Լուսամուտից տեսավ, թե ինչպես փայլատակեց անցավ Տաշքենդի գնացքը և մի վայրկյան պատ-

*կերացրեց, մարդիկ վագոններով գնում են իրենց գործերի ու կարիքների ետևից, թեյ են խմում կամ օղի, իրենց համար զրույց են անում և ոչ ոքի փույթը չի, թե այդ պահին, Բորանլի կիսակայարանում ինքը նստած է սատանան գիտի որտեղից հայտնված այս ճախրուկաչքի դիմաց և սիրտը ծակող ցավից ուզում է դուրս թռչել հերթապահանոցից, հասնել հեռացող գը-նացքին, նստել-գնալ թեկուզ աշխարհի վերջը, միայն թե այժմ չգտնվի այստեղ։*

*— Հը, գոնե հասկացա՞ր հարցի էությունը,— շարունակեց ճախրուկաչքը։*

*— Հասկացա, հասկացա,— պատասխանեց Եդիգեյը։— Բայց ես կուզեի մի բան պարզել։ Ախր նա հուշերը գրում էր իր երե-խաների համար։ Թե ինչն ինչպես է եղել, ասենք ռազմաճակա-տում, գերության մեջ, պարտիզանություն անելիս։ Ի՞նչ վատ բան կա սրա մեջ։*

*— Երեխաների համար,— բացականչեց նա։— Ո՞վ կհավա-տա։ Ո՞վ է գրում մի մատ երեխաների համար։ Հեքիաթնե՞ր ես պատմում։ Ահա թե ինչպես է գործում փորձված թշնամին։ Թաք-նըվել է խուլ տեղում, որտեղ ոչ ոք և ոչինչ չկա, որտեղ ոչ ոք չի հետևում իրեն, իսկ ինքը նստած հուշեր է գրում։*

*— Հետո ինչ, մարդն այդպես է ցանկացել,— առարկեց Եդի-գեյը։— Մարդը երևի ցանկացել է իր սեփական խոսքը ասել, իր կողմից մի բան, ինչ-որ մտքեր իր կողմից, որպեսզի հետո երեխաները մեծանան կարդան։*

*— Ինչ սեփական խոսք։ Դա ինչ բան է,— կշտամբանքով գլուխն օրորեց, հոգոց հանեց ճախրուկաչքը։ Ի՞նչ է նշանակում մտքեր իր կողմից։ Ի՞նչ է նշանակում սեփական խոսք։ Ուրե-մըն, սեփական մտածելակերպ, հա՞։ Ուրեմն հատուկ, սե-փական կարծիք, հա՞։ Չպետք է լինի ոչ մի այդպիսի սեփա-կան խոսք։ Այն ամենը, ինչ թղթի վրա է, դա արդեն սեփա-կան խոսք չէ։ Ինչ-որ գրված է գրչով, չես կտրի տապարով։ Տեղից եկողը ուզում է իր կողմից մտքեր արտահայտել։ Շատ չեղա՞վ։ Ահա նրա, այսպես կոչված «Պարտիզանական տետ-րակները», ահա և ենթավերնագիրը. «Օրեր և գիշերներ Հարավ-սլավիայում», ահա դրանք։— Նա սեղանին շպրտեց երեք ըստ-վար, ընդհանուր տետրեր մոմլաթե կողերով։— Այլանդակու-թյուն։ Իսկ դու փորձում ես այստեղ արդարացնել քո ընկերոջը։ Իսկ մենք մերկացրինք նրան։*

— Ի՞նչ հարցում մերկացրիք։

Ճախրուկաչքը շարժվեց աթոռի վրա և նորից անսպասելի քմծիծաղով, բավականություն և չարախնդություն ըմբոշխնելով՝ հստակ, թափանցիկ աչքերը առանց թարթելու և առանց հեռացնելու, նետեց.

— Դա արդեն թույլ տուր մեզ իմանալու, թե որ հարցում ենք մերկացրել,— ամեն մի բառը վայելելով, հաճույք ստանալով թողած տպավորությունից, ասաց նա։— Դա մեր գործն է։ Պարտավոր չենք ամեն մեկին զեկուցել։

— Ինչ արած, եթե այդպես է,— շփոթված թոթովեց Եղիգեյը։

— Նրա թշնամական հուշերը էժան չեն նստի,— նկատեց Ճակրուկաչքը և սկսեց արագ-արագ ինչ-որ բան գրել. ասելով։— Ես կարծում էի, թե դու ավելի խելոք ես, թե դու մեր մարդն ես։ Առաջավոր բանվոր։ Նախկին ճակատային։ Մեզ կօգնես մերկացնելու թշնամուն։

Եղիգեյը փետուրները ցցեց և ոչ բարձր, բայց հստակ, կասկած չհարուցող տոնով ասաց.

— Ես ոչ մի բան չեմ ստորագրի։ Ես դա ասում եմ անմիջապես։

Ճախրուկաչքը նետեց ոչնչացնող հայացք.

— Մեզ հարկավոր չէ քո ստորագրությունը։ Դու կարծում ես, եթե չստորագրեցիր, ուրեմն, վերջ։ Սխալվում ես։ Առանց քո ստորագրության էլ մենք բավարար նյութ ունենք, որպեսզի նրան ենթարկենք խիստ պատասխանատվության։

Եղիգեյը լռեց ստորացման, ամայացման այրող զգացումից։ Միաժամանակ, Արալյան ծովի ալիքների նման ահագնանում էր վրդովմունքը, տհաճությունը, անհամաձայնությունը տեղի ունեցածի հետ։ Հանկարծ ուզեց խեղդել այդ ճախրուկաչքին, ինչպես կատաղած շան, և գիտեր, որ կարող է խեղդել։ Սա ի՞նչ էր որ։ Այն ֆաշիստը, որին ստիպված եղավ խեղդելու սեփական ձեռքերով, շատ ավելի ցլապինդ և ամուր վիզ ուներ։ Ուրիշ ելք չկար։ Հանկարծ դեմդիմաց հանդիպել էին խրամատում, երբ ճեղքում էին հակառակորդի պաշտպանության գիծը։ Մտնում էին թեից, խրամատների վրա նռնակներ էին նետում, անցումները փակում ավտոմատների կրակահերթերով, և արդեն գիծը մաքրել, կռվելով առաջ էին մղվում, երբ հանկարծ, դեմդիմաց բախվեց նրանց։ Ֆաշիստը հավանաբար գնդացրորդ էր, որ կրակում էր մինչև վերջին փամփուշտը։ Լավագույնը կլիներ նրան գերի

վերցնել, փայլատակեց Եղիգեյի գիտակցության մեջ։ Բայց սա արդեն դանակը վեր էր բարձրացրել։ Եղիգեյը սաղավարտով հարու տվեց նրա դեմքին, երկուսով ցած գլորվեցին։ Այլևս ոչինչ չէր մնում անելու, քան ճանկել դրա կոկորդից։ Ցաշիտը գալարվում էր, խռխռում, մատներով ճանկռտում հողը, աշխատում էր խարխափելով գտնել ձեռքից թռած դանակը։

Եղիգեյին շարունակ թվում էր, թե հիմա թիկունքին կխրվի դանակը, դրա համար էլ չթուլացող, անմարդկային, գազանային ճիգեր թափելով, մռնչալով սեղմում, ճզմում էր սևացած, սեպերը բաց թշնամու կռճիկավոր վիզը։ Երբ վերջապես թշնամին խեղդվեց և տարածվեց թունդ միզահոտ, Եղիգեյը թուլացրեց ջղաձիգ, կծկված մատները։ Սիրտը խառնեց, և վրան թափելով սեփական փսխուկը, նա հառաչելով, աչքերը պղտոր, սողաց հեռու։ Այդ բանը Եղիգեյը ոչ ոքի չի պատմել, ոչ այն ժամանակ, ոչ էլ՝ հետո։ Այդ մղձավանջը երբեմն տեսնում էր երազում, իսկ հաջորդ օրը տեղ չէր գտնում իր համար, ապրել չէր ուզում... Այդ բանը Եղիգեյն այժմ հիշեց ցնցումով և զզվանքով։ Բայցև գիտակցում էր, որ ճախրուկաչքը խորամանկությամբ ու ճարպկությամբ գերազանցում է իրեն։ Եվ դրանից նեղսրտում էր։ Նա գրում էր, իսկ Եղիգեյն աշխատում էր գտնել ճախրուկաչքի փաստարկների թույլ տեղը։ Ճախրուկաչքի ասածներից Եղիգեյին ապշեցրեց մի միտք իր անտրամաբանությամբ, մի տեսակ սատանայական անհամապատասխանությամբ. ինչպե՞ս կարելի է որևէ մեկին մեղադրել «թշնամական հուշերի» մեջ։ Մի՞թե մարդու հուշերը կարող են լինել թշնամական կամ ոչ թշնամական, ախր հուշը այն է, ինչը եղել է անցյալում, ինչը արդեն չկա, ինչը եղել է անցած-գնացած ժամանակներում։ Նշանակում է մարդը հիշում է այնպես, ինչպես եղել է իրականում։

— Ես ուզում եմ հասկանալ,— թոթովեց Եղիգեյը, զգալով, որ հուզմունքից կոկորդը չորանում է։ Բայց ինքն իրեն ստիպեց այդ խոսքերն արտասանել որքան հնարավոր է հանգիստ։— Այ, դու ասում ես...— նա դիտմամբ «դու»-ով խոսեց, որպեսզի դիմացինը իմանա, որ Եղիգեյը քծնելու և վախենալու բան չունի, սարօղեկներից դեն ո՞ւր պիտի քշեն։— Այ, դու ասում ես,— կրկնեց նա,— թշնամական հուշեր։ Ինչպե՞ս հասկանալ, մի՞թե հուշերը կարող են թշնամական կամ ոչ թշնամական լինել։ Իմ կարծիքով մարդը հիշում է այն, ինչ եղել է, ինչպես եղել է ժա-

մանակին, ինչը վաղուց չկա։ Ուրեմն, ինչը լավ է՝ հիշի՛ր, իսկ վատը, ավելորդը մի՛ հիշիր, մոռացիր։ Այդպիսի բան կարծեմ դեռ չի եղել։ Կամ նայած ինչ երազ ես տեսնում։ Պետք է երազն էլ հիշես։ Իսկ եթե երազը սարսափելի է ու ոչ ոքի պետք չի՞…

— Ահա թե ով ես դու։ Հը՛մ։ Գրողը տանի,— զարմացավ ճախրուկաչքը։— Սիրում ես խելքիդ զոռ տալ, վիճել ես ուզում։ Դու կարծես տեղական փիլիսոփա լինես։ Ինչ արած, եկ վիճենք։— Մի պահ լռեց, ասես հարմարվեց, պատրաստվեց և վրա տվեց։— Կյանքում շատ բան կարող է լինել, պատմական իրադարձությունների առումով։ Բայց ի՞նչ կարևոր է, թե ինչն ինչպես է եղել, պետք է հիշել, անցյալը նկարագրել՝ լինի բանավոր, թե մանավանդ, գրավոր, այնպես ինչպես պահանջվում է, ինչպես որ այժմ հարկավոր է մեզ։ Իսկ այն ամենը, ինչ մեզ օգուտ չի, հիշել անգամ չարժի։ Իսկ եթե համաձայն չես դրան, մտնում ես թշնամական գործողությունների մեջ։

— Ես համաձայն չեմ,— ասաց Եդիգեյը։— Այդպես լինել չի կարող։

— Մենք քո համաձայնության կարիքը չունենք։ Ես խոսքի օրինակ եմ ասում։ Դու հարցնում ես, ես էլ բարությունից մղված բացատրում եմ։ Իսկ ընդհանրապես, ես պարտավոր չեմ քեզ հետ վարելու այս կարգի խոսակցություններ։ Դե լավ, արի խոսքից գործի անցնենք։ Ասա տեսնեմ, Ղութիբաևը որևէ ժամանակ, օրինակ, սրտաբաց զրույցի ժամանակ, ենթադրենք խմիչքի ժամանակ, քեզ մոտ անգլիական որևէ անուն չի՞ տվել։

— Իսկ ինչո՞ւ պիտի տար,— անկեղծ զարմացավ Եդիգեյը։

— Ահա ինչու,— ճախրուկաչքը բացեց Աբութալիպի «Պարտիզանական տետրակներից» մեկը և կարդաց կարմիր մատիտով ընդգծված տեղը. «Սեպտեմբերի 27-ին մեզ մոտ ժամանեց անգլիական ներկայացուցչություն, մի գնդապետ և երկու մայոր։ Մենք տոնական երթով անցանք նրանց առջևով, նրանք մեզ ողջունեցին։ Այնուհետև ընդհանուր ճաշ տվեցին հրամանատարի վրանում։ Մեզ՝ հարավսլավացիների մեջ եղած մի քանի օտար պարտիզաններիս, նույնպես հրավիրեցին։ Երբ ինձ ծանոթացրին գնդապետին, նա շատ սիրալիր սեղմեց ձեռքս և թարգմանչի միջոցով հարցուփորձ արեց, թե որտեղացի եմ և ինչպես եմ ընկել այստեղ։ Ես համառոտ պատմեցի։ Ինձ համար գինի լցրեցին, և ես խմեցի նրանց հետ։ Հետո էլի երկար զրուցեցինք։ Ինձ հաճելի էր, որ անգլիացիները պարզ, սրտաբաց

մարդիկ են։ Գնդապետն ասաց, մեծ բախտ է կամ ինչպես ինքն արտահայտվեց, նախախնամությունը մեզ օգնեց, որպեսզի Եվրոպայում մենք բոլորս համախմբվենք ընդդեմ ֆաշիզմի։ Առանց դրա, պայքարը Հիտլերի դեմ ավելի ծանր կլիներ, հնարավոր է նաև՝ ողբերգական վախճան ունենար, բաժան-բաժան եղած ժողովուրդների համար» և այլն։— Ավարտելով մեջբերումը, ճախրուկաշքը տետրակը դրեց մի կողմ։ Կպցրեց ևս մի «կազբեկ», քիչ լռեց, ապա ծուխ բաց թողնելով շարունակեց։— Ուրեմն, Ղութիբաևը չի առարկել անգլիացի գնդապետին, որ առանց ընկեր Ստալինի հանճարի, անհնարին կլիներ հաղթանակը, որքան էլ նրանք փառային Եվրոպայում պարտիզանություն կամ մի այլ բան անելով։ Նշանակում է, նա մտքում անգամ չէր պահել ընկեր Ստալինին։ Դու հասկանո՞ւմ ես այդ։

— Միգուցե ասել է,— Եղիգեյը աշխատեց պաշտպանել Աբութալիպին,— պարզապես մոռացել է գրել այդ մասին։

— Իսկ որտե՞ղ է ասված այդ մասին։ Չես գտնի։ Ավելին, մենք վերանայել ենք նաև քառասունհինգ թվականին Ղութիբաևի տված ցուցմունքները, երբ նա հարավսլավական պարտիզանական միավորումից վերադառնալուց հետո քննվել է ստուգողական հանձնաժողովի կողմից։ Այնտեղ չի հիշատակված անգլիական ներկայացուցչության հետ տեղի ունեցած դեպքը։ Նշանակում է, այստեղ մի բան մաքուր չի։ Ո՞վ կարող է հավաստիացնել, որ նա կապված չի եղել անգլիական հետախուզության հետ։

Նորից մռայլվեց Եղիգեյը, նորից ցավը պատեց նրան։ Չէր հասկանում ինչն-ինչոց է, և ուր է թեքում ճախրուկաշքը։

— Ղութիբաևը քեզ բան չի՞ ասել, հիշիր, անգլիական անուններ չի՞ տվել։ Մեզ համար կարևոր է իմանալ, թե ովքեր են եղել անգլիական այդ ներկայացուցչության մարդիկ։

— Իսկ ի՞նչ անուններ են լինում այնտեղ։

— Դե՛հ, օրինակ, Ջոն, Կլարկ, Սմիթ, Ջեկ։

— Կյանքումս այդպիսի անուններ չեմ լսել։

Ճախրուկաշքը մտքի մեջ ընկավ, խոժոռվեց, ըստ երևույթին Եղիգեյի հետ ունեցած հանդիպումը չէր գոհացնում նրան։ Հետո նա փոքր-ինչ շողոմ ձայնով ասաց.

— Այստեղ նա ինչ-որ դպրոց է բացել, երեխաներին դաս է տալիս։

— Ինչ դպրո՞ց, ինչ բա՞ն,— ակամայից ծիծաղեց Եղիգեյը։—

Երկու երեխա նա ունի, երկուսը ես ունեմ։ Ահա ամբողջ դպրոցը։ Մեծերը հինգ տարեկան են, փոքրերը՝ երկու։ Խեղճ երեխաները չգիտեն ինչ անեն, չորս կողմը անապատ է։ Նրանք էլ, ուրեմն, զբաղեցնում են երեխաներին, դաստիարակում։ Ինչքան չլինի առաջ ուսուցիչ են եղել, թե կինը, թե ինքը։ Երեխաների համար գիրք են կարդում, նկարում են, մի քիչ գրել, հաշվել են սովորեցնում, ահա ամբողջ դպրոցը։

— Ի՞նչ երգեր էին երգում։

— Ամեն տեսակի։ Մանկական։ Չեմ հիշում։

— Իսկ ի՞նչ էր սովորեցնում երեխաներին։ Ի՞նչ էին գրում նրանք։

— Տառեր։ Սովորական բառեր էր սովորեցնում։

— Օրինակ՝ ի՞նչ բառեր։

— Ի՞նչ բառեր։ Չեմ հիշում։

— Ահա խնդրեմ։— Ճախրուկաշը թղթերի մեջ գտավ աշակերտական տետրակներից պոկված թերթեր, մանկական ոլոր-մոլոր ձեռագրով գրված։— Ահա նրա առաջին բառերը,— թերթիկի վրա երեխայի ձեռքով գրված էր. «Մեր տունը»։— Տեսնո՞ւմ ես, երեխայի գրած առաջին բառը եղել է «մեր տունը»։ Իսկ ինչո՞ւ չի գրված «մեր հաղթանակը»։ Ախր, այժմ մեր շրթունքներին հնչող առաջին բառը պետք է լինի, հապա մտածիր, ինչը։ Պետք է լինի «մեր հաղթանակը»։ Ճիշտ չէ՞։ Բայց չգիտես ինչու, նրա միտքը չի գալիս այդ բանը։ Հաղթանակը և Ստալինը անբաժանելի են։

Եղիգեյն ընկճվեց։ Նա այնքան նվաստացած էր զգում իրեն այս ամենից և հանկարծ այնպես խղճաց Աբութալիպին ու Զարիպային, որոնք այդքան ուժ ու ժամանակ էին նվիրում անգիտակից երեխաներին և այնպիսի ղայրույթ բարձրացավ հոգում, որ համարձակվեց ասելու.

— Եթե այդպես է, ուրեմն առաջին հերթին հարկավոր էր գրել «Մեր Լենինը»։ Համենայն դեպս, Լենինը առաջին տեղում է գրանրվում։

Ճախրուկաշը անսպասելիությունից շունչը պահեց, հետո երկար արտաշնչելով թոքերի ծուխը, տեղից վեր կացավ։ Ըստ երևույթին ուզում էր մի քիչ քայլել, բայց տեղ չկար այս նեղ սենյակում։

— Մենք ասում ենք Ստալին, հասկանում ենք Լենին,— արտասանեց նա հատ-հատ և հստակ։ Հետո թեթևացած շունչ քա-

չեց, ինչպես վազքից հետո և հաշտվողաբար ավելացրեց։— Լավ, հաշվենք, որ այս խոսակցությունը մեր միջև տեղի չի ունեցել։

Նա նստեց, և նորից անթափանց դեմքին հստակորեն ընդգծվեցին անխռով, ճախրուկի աչքի նման թափանցիկ, դեղնավուն աչքերը։

— Մեզ տեղեկություն է հասել, որ Ղութիբաևը դեմ է արտահայտվել գիշերօթիկներում երեխաների ուսուցմանը։ Ի՞նչ կասես, պարզվում է, որ դու ներկա ես եղել։

— Որտեղի՞ց են այդ տեղեկությունները։ Ո՞վ է տվել այդ տեղեկությունները,— պայթեց Եդիգեյը և անմիջապես ուղեղում փայլատակեց ենթադրությունը. Աբիլովը, կիսակայարանի պետն է մեղավոր ամեն ինչի համար, նա է մատնել, որովհետև խոսակցությունը տեղի է ունեցել նրա ներկայությամբ։

Եդիգեյի հարցը լրջորեն զայրացրեց ճախրուկաչքին։

— Լսի՛ր, ես արդեն ասել եմ, քո գործը չէ, թե որտեղից են այդ տեղեկությունները։ Դա մեր գործն է։ Եվ մենք ոչ մեկի առջև հաշվետու չենք։ Հիշի՛ր։ Իսկ հիմա պատմիր, թե ինչ է ասել նա։

— Ի՞նչ է ասել։ Սպասեք հիշեմ։ Ուրեմն, մեր կիսակայարանի ամենածեր բանվորի՝ Ղազանղապի տղան սովորում է Կումբել կայարանի գիշերօթիկում։ Դե տղա է, մեկ-մեկ խուլիգանություն է անում, մեկ-մեկ սուտ է խոսում։ Եվ ահա, սեպտեմբերի մեկին նորից պատրաստվում էին Սաբիթջանին գիշերօթիկ տանել։ Հայրը տղային տարավ ուղտով։ Իսկ մայրը, այսինքն՝ Ղազանղապի կինը՝ Բուկեյը, սկսեց լաց լինել, գանգատվել,— փորձանք է, ասում է,— ինչ մեր տղան ոտքը գիշերօթիկ գցեց, մի տեսակ օտարացավ։ Չէ, ասում է, այլևս առաջվա նման հոգով-սրտով կապված չի տանը, հորը, մորը։ Դեհ, կիսագրագետ կին է։ Իհարկե, տղային խոսք ու խրատ է հարկավոր, բայց նա շարունակ հեռու է...

— Դե, լավ,— ընդհատեց ճախրուկաչքը։— Իսկ ի՞նչ ասաց Ղութիբաևը այդ ժամանակ։

— Նա էլ էր ներկա։ Ասաց, որ մայրական սիրտն անմիջապես նախազգում է վատ բանը։ Որովհետև գիշերօթիկում սովորելը լավ պայմանների արդյունք չի։ Գիշերօթիկը կարծես երեխային խլում է, այսինքն չի խլում, հեռացնում է ընտանիքից, հորից, մորից։ Ասաց, որ դա, առհասարակ դժվար հարց է, դժվար թե իր, թե ուրիշների համար։ Բայց ի՞նչ արած, եթե ուրիշ

հնարավորություն չկա։ Ես նրան հասկանում եմ։ Մեր երեխաները էլ են մեծանում։ Սիրտս հիմիկվանից ցավում է, թե ինչպես պիտի լինի, ինչ պիտի լինի։ Վատ է, իհարկե...

— Դա հետո,— ընդհատեց ճախրուկաշքը։— Ուրեմն նա ասել է, թե սովետական գիշերօթիկը վատ բան է։

— Նա չի ասել «սովետական», պարզապես ասել է գիշերօթիկ։ Մեր գիշերօթիկը Ղումբելում է։ Այդ ես եմ ասում «վատ է»։

— Դա կարևոր չի։ Ղումբելը գտնվում է Սովետական Միությունում։

— Ինչպե՞ս թե կարևոր չի,— Եդիգեյի համբերության բաժակը լցվեց, տեսնելով, թե սա ինչպես է ուզում մոլորեցնել իրեն։— Ինչո՞ւ եք մարդուն վերագրում բաներ, որ նա չի ասել։ Ես էլ եմ այդպես մտածում։ Եթե ես մի ուրիշ տեղ ապրեի, ոչ թե կիսակայարանում, ոչ մի դեպքում երեխաներին գիշերօթիկ չէի ուղարկի։ Այնպես որ ես էլ եմ այդպես մտածում։ Թե չէ ի՞նչ...

— Մտածիր, մտածիր,— խոսեց ճախրուկաշքը, ընդհատելով խոսակցությունը։ Եվ քիչ լռելուց հետո շարունակեց։— Այսպես, ուրեմն եզրակացություն անենք։ Նշանակում է, նա դեմ է կոլեկտիվ դաստիարակությանը, այո՞։

— Բոլորովին էլ դեմ չի,— չդիմացավ Եդիգեյը։— Ի՞նչ կարիք կա ավելորդ բաներ կպցնել։ Ինչպե՞ս կարելի է։

— Հարկավոր չի, հարկավոր չի, վերջացրու,— ձեռքը թափ տվեց ճախրուկաշքը, հարկ չհամարելով բացատրություն տալ։— Իսկ այժմ սա տեսնեմ, սա ի՞նչ տետրակ է «Դոնենբայ թռչունը» վերնագրով։ Կութիբաևը պնդում է, որ դա գրի է առել Ղազանղապի և մասամբ քո պատմածից։ Ճի՞շտ է։

— Ճիշտ է,— ոգևորվեց Եդիգեյը։— Ուրեմն, այստեղ, սարոզեկներում եղել է պատմություն, առասպել։ Այստեղից ոչ հեռու գտնվում է նայմանական գերեզմանոցը, ժամանակին նայմանական է եղել, իսկ այժմ ընդհանուր է, կոչվում է Անա-Բեյիթ, այնտեղ թաղված է Նայման-Անան, որ սպանվել է իր մանկուրտ որդու ձեռքով...

— Լավ, բավական է, մենք կկարդանք-կտեսնենք, թե ինչ է թաքնված այդ թռչնի տակ,— ասաց ճախրուկաշքը և սկսեց թերթել տետրակը, դարձյալ բարձրաձայն մտմտալով և արտահայտելով իր վերաբերմունքը։— Դոնենբայ թռչուն, հը՞մ, ավելի լավ չես էլ կարող մտածել։ Մարդու անունով թռչուն։ Գրողի՞ս տեսեք։ Նոր Մուխթար Աուեզով է հայտնվել։ Սրա՞ն տեսեք,

ավատական ժամանակների գրող։ Դոնենբայ Թուշո՞ւն, կարծում է գլուխ չենք հանելու... Եվ գրելու ետևից վերջերս է ընկել՝ սուսուփուս, երեխաների համար։ Իսկ սա ի՞նչ է քո կարծիքով։

Ճախրուկաչքը Եղիգեյի դեմքին մոտեցրեց մի տետրակ ևս՝ մոմլաթե կողերով։— Քո կարծիքով սա՞ էլ է երեխաների համար։

— Դա ի՞նչ է,— չհասկացավ Եղիգեյը։

— Ի՞նչ։ Այդ դու պիտի իմանաս։ Ահա վերնագրված է. «Ռայմալի Աղայի դիմումը իր եղբայր Աբդիլխանին»։

— Այո, ճիշտ է, դա էլ է առասպել,— ասաց Եղիգեյը։— Դա եղելություն է։ Ծերերը գիտեն այդ պատմությունը...

— Հանգիստ եղիր, ես էլ գիտեմ,— նրա խոսքը կտրեց Ճախրուկաչքը։— Ականջիս պոչով լսել եմ։ Խելքը թռցրած ծերունին սիրահարվում է երիտասարդ, տասնիննամյա աղջկան։ Ի՞նչ լավ բան կա դրանում։ Այդ Ղութիբաևը ոչ միայն թշնամական տիպ է, այլև բարոյալքված մարդ է։ Տեսնո՞ւմ ես, ինչպես է չարչարվել, մանրակրկիտ գրի առել այս զառանցանքը։

Եղիգեյը կարմրեց։ Ոչ ամոթից։ Նրա սիրտը լցվեց զայրույթով, որովհետև դրանից ավելի անարդարություն Աբութալիպի նկատմամբ լինել չէր կարող։ Եվ նա հազիվ զսպելով իրեն, ասաց.

— Լսիր, ես չգիտեմ դու պետ ես, ինչ ես, բայց այդ հարցում նրան չդիպչես։ Տա աստված, որ մեկնումեկը նրա նման հայր կամ նրա նման ամուսին լինի, և ամեն ոք կարող է հաստատել այդ։ Այստեղ մատների վրա կարելի է հաշվել, թե քանի մարդ կա, և մենք բոլորս ճանաչում ենք իրար։

— Դե լավ, լավ, հանգստացիր,— պատասխանեց Ճախրուկաչքը։— Բոլորիդ ուղեղները թմրեցրել է։ Թշնամին միշտ էլ ձևացնում է։ Մենք նրան կմերկացնենք։ Վե՛րջ, ազատ ես։

Եղիգեյը վեր կացավ։ Գլխարկը դնելիս ոտքը կախ գցեց.

— Ուրեմն ինչ։ Ի՞նչ է լինելու։ Այժմ ի՞նչ։ Այդ գրությունների համար հո չե՞ք նստեցնելու մարդուն։

Ճախրուկաչքը թափով ելավ տեղից.

— Լսի՛ր, ես քեզ նորից եմ կրկնում. դա քո գործը չի։ Թե ինչի համար ենք հետապնդում թշնամուն, ինչպես ենք վարվելու նրա հետ, ինչպիսի պատժի ենք ենթարկելու, թույլ տուր մեզ իմանալ։ Դա քո գլխի բանը չի։ Դու գնա քո գործով զբաղվիր։

Այդ նույն օրը, ուշ երեկոյան, Բորանլի կիսակայարանում

մարդատար գնացքը կանգ առավ ևս մեկ անգամ։ Բայց այս անգամ գնացքը մեկնում էր հակառակ ուղղությամբ։ Եվ նույնպես քիչ կանգնեց։ Մի երեք րոպե։

Առաջին գծի վրա՝ դարան մտած, գնացքի գալուն էին սպասում խրոմե սաղավարտներով այն երեք հոգին, որ իրենց հետ տարել էին Աբութալիպ Կուտթիբաևին, իսկ մյուս կողմում, նրանց թիկունքներով կազմված խիտ պատի ետևում, որով անջատել էին Աբութալիպին, կանգնած էին բորանլիցիները՝ Զարիպան ու երեխաները, Եդիգեյը, Ուկուբալան և կիսակայարանի պետ Աբիլովը, նրանք շարունակ ետ ու առաջ էին անում, անտեղի անհանգստանալով ինչ է թե գնացքը, հակառակ չվացուցակի, կես ժամ ուշանում էր։ Գնացքի՞ն ինչ։ Իր համար հանգիստ պիտի կանգներ։ Իսկ Ղազանղապը, որին նույնպես հարցաքննել էին Աբութալիպի մոտ հայտնաբերված չարաբաստիկ առասպելների պատճառով, այդ ժամին գտնվում էր ուղեսլաքում։ Նա ստիպված էր գնացքն իր ձեռքով ուղարկել այն գծի վրա, որով պիտի Աբութալիպին տանեին սարօզեկներից հեռու։ Բուկեյը մնացել էր տանը, Եդիգեյի աղջիկների մոտ։

Այն երեք սաղավարտավորները, տարօրինակ ձևով օձիքները քամու դեմ բարձրացրած, թիկունքով մեկուսացնելով Աբութալիպին, լարված լռություն էին պահում։ Լուռ էին նաև Աբութալիպից բաժանվող բորանլիցիները։

Քամին խշշալով և հազիվ լսելի սուլոցով սողում էր գետնին։ Հավանաբար բուք էր լինելու։ Պաղ մեգը ուռչում, ծավալվում էր սարօզեկյան անլույս երկնքում։ Անհեթեթ, վհատ, ամայի լուսինը հազիվ նշմարվում էր, իբրև դալուկ, մենավոր բիծ։ Սառնամանիքը այրում էր այտերը։

Զարիպան անլսելի լալիս էր, ձեռքին ուսելիքով և փոխնորդով մի կապոց, որ ուզում էր հանձնել ամուսնուն։ Ուկուբալայի բերանից ելնող գոլորշու քուլաները մտնում էին նրա խոր հոգոցները։ Նա մուշտակի փեշով ծածկել էր Դաուլին։ Դաուլն ըստ երևույթին բան էր նախազգում. տագնապալի սևվել էր, սեղմվելով Ուկուբալա մորաքրոջը։ Իհարկե, ամենադժվարը էրմեկի խնդիրն էր, որին, քամուց պատսպարելով, գրկել էր Եդիգեյը։ Երեխան ոչինչ չէր կասկածում։

— Պապիկա՛, պապիկա՛,— կանչում էր հորը։— Արի մեզ մոտ։ Մենք էլ կգանք քեզ հետ։

Աբութալիպը ցնցվում էր նրա ձայնից, ակամայից ուզում էր

շրջվել պատասխանել երեխային, բայց նրան թույլ չէին տալիս ետ նայել։ Երեքից մեկը չդիմացավ.

— Այստեղ մի կանգնեք։ Լսո՞ւմ եք։ Այստեղից գնացեք, հետո կմոռենաք։— Սարսափած եղան նահանջել։

Բայց ահա հեռվից դուրս լողացին շոգեքարշի լույսերը, և բոլորը տեղից շարժվեցին։ Զարիպան չկարողացավ զսպել իրեն, բարձրաձայն հեծկլտաց։ Նրա հետ լաց եղավ Ուկուբալան։ Գնացքը իր հետ բերում էր բաժանում։ Ճակատային լույսով ծակելով օդի սառնամանիքային, թուխ մեգմշուշի հաստ շերտը, սպառնալից առաջ էր գալիս. մշուշի քուլաների միջից երևան հանելով իր մութ, դղրդաձայն զանգվածը։ Նրա մոտենալու հետ գետնից ավելի ու ավելի վեր էին բարձրանում շոգեքարշի բոցկըլտացող լուսարձակները, լույսի շերտի մեջ գետնահողմը ավելի նկատելի էր պտտվում ռելսերի արանքում, ավելի հստակ ու ավելի տագնապալի էր հնչում շուստվիկների և մխոցի խռնչացած ձայնը։ Ահա արդեն սկսեցին երևալ գնացքի ուրվագծերը։

— Պապիկա՛, պապիկա՛, տես, գնացքը գալիս է,— կանչեց Էրմեկը և լռեց զարմացած, որ հայրը պատասխան չի տալիս։ Եվ նորից աշխատեց գրավել նրա ուշադրությունը.— Պապիկա՞, պապիկա՛։

Կիսակայարանի պետը, որ ձեռ ու ոտ էր ընկել, մոտեցավ այն երեքին։

— Փոստային վագոնը կլինի գնացքի գլխամասում։ Խնդրեմ, առաջ անցեք։ Ա՛յ, այնտեղ։

Բոլորը շարժվեցին մատնացույց արված կողմը։ Գնացքն արդեն հասնում էր բավական արագ ընթացքով։ Առջևից, առանց ետ նայելու քայլում էր ճախրուկաշքը՝ պորտֆելով, ետևից, ուղեկցելով Աբութալիպին, գնում էին նրա երկու լայնաթիկունք օգնականները, իսկ նրանցից որոշ տարածության վրա շտապում էին Զարիպան, ետևից Ուկուբալան՝ Դաուլի ձեռքը բռնած։ Եփիգեյը քայլում էր կողքից և քիչ ետ ընկած, Էրմեկը գրկին։ Նա չէր կարող հեկեկալ կանանց ու երեխաների ներկայությամբ։ Եվ պայքարում էր իր դեմ, աշխատում զսպել ծանր, կոկորդին ցեմ առած գունդը։

— Դու խելոք տղա ես, Էրմեկ։ Դու խելոք ես, չէ՞։ Դու խելոք ես, դու լաց չես լինի, լա՞վ,— անկապ-անկապ մրմնջում էր նա, տղային սեղմելով կրծքին։

Գնացքն արդեն դանդաղեցնում էր ընթացքը, մոտենում

կապարին։ Տղան վախեցած ցնցվեց Եդիգեյի գրկում, երբ շոգեքարշը հասնելով իրենց, մի քիչ առաջ անցավ, դղրդոցով գոլորշի արձակեց, և հնչեց ուղեկցորդի սուր սուլիչը։

— Մի՛ վախենա, մի՛ վախենա,— ասաց Եդիգեյը։— Ոչ մի բանից մի վախենա, երբ ինձ հետ ես։ Ես միշտ քեզ հետ կլինեմ։

Գնացքը կանգ առավ երկար, ծանր ճռնչոցով,— երկաթյա ու ձնափոշուց ժանգոտած, լուսամուտների սառցակեղևից կուրացած վագոնները քարացան տեղում։ Եվ խաղաղություն տիրեց։ Բայց շոգեքարշը նույն պահին թշշալով գոլորշի արձակեց, նորից պատրաստվելով ճամփա ընկնել։ Փոստային վագոնը բագաժայինի հաջորդն էր։ Փոստային վագոնի լուսամուտները վանդակապատված էին, իսկ երկփեղկանի դռները գտնվում էին մեջտեղում։ Դռները բացվում էին դեպի ներս։ Դուրս նայեցին մի տղամարդ և մի կին՝ փոստային աշխատողի գլխարկներով, բամբակամեջ տաբատներով ու բաճկոններով։ Լապտերով կինը, ըստ երևույթին, ավագն էր։ Նա գեր էր և լայնալանջ։

— Դո՞ւք եք,— ասաց նա լապտերը բռնելով գլխի մոտ, որպեսզի բոլորին լուսավորի։— Սպասում ենք։ Տեղը պատրաստ է։

Նախ բարձրացավ ճախրուկաչքը, մեծ պորտֆելը ձեռքին։

— Դե շուտ, շուտ արեք, մի ուշացրեք,— անմիջապես շտապեցին այն երկուսը։

— Ես շուտով կվերադառնամ։ Սա թյուրիմացություն է,— արագ-արագ ասաց Աբութալիպը։— Շուտ կգամ, սպասեք։

Ուկուբալան չկարողացավ իրեն զսպել։ Բարձրաձայն լաց եղավ, երբ Աբութալիպը սկսեց հրաժեշտ տալ երեխաներին։ Նա ամբողջ ուժով կրծքին էր սեղմել և համբուրում էր, ինչ-որ բան ասում վախեցած, ոչինչ չհասկացող երեխաներին։ Իսկ շոգեքարշն արդեն գոլորշու մեջ էր։ Այս ամենը տեղի էր ունենում ձեռքի լապտերի լույսի տակ։ Նորից լսվեց գնացքի երկարությամբ վազող, էլեկտրական հոսանքի պես հր գի ցնցող սուլոցը։

— Դե վե՛րջ, վե՛րջ, նստիր։

Այն երկուսը Աբութալիպին քաշեցին վագոնի սանդուղքի մոտ։

Եդիգեյն ու Աբութալիպը վերջին պահին հասցրին ամուր գրկախառնվել, թաց, թրաշը եկած, այտերը մի պահ հպեցին իրար, մտքով, սրտով, ամբողջ էությամբ հասկանալով ամեն ինչ։

— Նրանց պատմիր ծովի մասին,— շշնջաց Աբութալիպը։

Դա նրա վերջին խոսքերն էին։ Եղիգեյը հասկացավ։ Հայրը խնդրում էր որդիներին պատմել Արալյան ծովի մասին։

— Դե բավակա՛ն է, բավակա՛ն է, նստիր տեսնեմ, նստիր,— հրեցին նրանք։

Ետևից ուսերը դեմ տալով, այն երկուսը Աբութալիպին հրեցին վագոն։ Եվ նոր միայն երեխաները հասկացան բաժանման ահավոր էությունը։ Նրանք միաբերան լաց եղան բարձրաձայն, կանչեցին.

— Պապի՛կ, պապա՛, պապի՛կ, պապա՛։

Եղիգեյը, էրմեկին գրկած, նետվեց դեպի վագոնը։

— Այդ ո՞ւր, այդ ո՞ւր, սատկո սիրուն,— նրան կատաղի ետ մղեց լապտերավոր կինը, լայն ուսերով ծածկելով դռները։

Բայց այդ պահին ոչ ոք չէր հասկանում, որ Եղիգեյը պատրաստ էր, եթե այդպես է, ինքը գնալ Աբութալիպի փոխարեն, որպեսզի ճանապարհին սեփական ձեռքերով խեղդեր ճախրուկաչքին, միայն թե չլսեր տղաների սրտակեղեք ճիչը։

— Այստեղ մի՛ կանգնեք, հեռացե՛ք այստեղից, հեռացե՛ք,— գոռում էր լապտերավոր կինը։ Նրա բերանից բարձրացող գոլորշին, սոխի և ծխախոտի սուր հոտ արձակելով խփվեց Եղիգեյի դեմքին։

Զարիպան հիշեց, որ կապոցը մնացել է ձեռքին։

— Վերցրեք, հանձնեք, ուտելիք է,— կապոցը նետեց վագոն։

Եվ փոստային վագոնի դռները շրխկալով փակվեցին։ Լռություն տիրեց։ Շոգեքարշը ազդանշան տվեց, շարժվեց տեղից։ Նա գնաց, ճռինչով պտտելով անիվները, դանդաղ արագություն վերցնելով սառնամանիքի մեջ։

Բորանլիցիները ակամա ձգվեցին հեռացող գնացքի ետևից, քայլելով ամուր փակված վագոնի կողքով։ Առաջինը սթափվեց Ուկուբալան։ Նա իր կողմը քաշեց Զարիպային, սեղմեց կրծքին և այլևս բաց չթողեց։

— Դաուլ, մի հեռանա։ Կանգնիր, կանգնիր այստեղ։ Բռնիր մայրիկի ձեռքից։— Բարձրաձայն կարգադրեց նա, դիմանալով հետզհետե արագացող, կողքից վազող անիվների թխթխկոցին։

Իսկ Եղիգեյը էրմեկին գրկած դեռ վազում էր գնացքի կողքով, և միայն այն ժամանակ, երբ փայլկտաց անցավ վերջին վագոնը, կանգ առավ։ Գնացքը հեռացավ, հետը տանելով շարժման մաքրող աղմուկը և կարմրատակող, հանգչող լույսերը...

Լավեց վերջին երկարաձիգ սուլոցը...

Եդիգեյը ետ դարձավ։ Երկար չէր կարողանում հանգստացնել լացող տղային։

Տանը, վառարանի մոտ կարծես խլացած նստած, հանկարծ գիշերվա կեսին հիշեց Աբիլովին։ Եդիգեյը լուռ վեր կացավ, սկսեց հագնվել։ Ուկուբալան անմիջապես գլխի ընկավ։

— Ո՞ւր,— ետ պահեց ամուսնուն։— Ձեռք չտաս նրան։ Չհամարձակվես մատով անգամ դիպչել նրան։ Նրա կինը հղի է։ Այսինքն, իրավունք էլ չունես։ Ինչպե՞ս կապացուցես։

— Մի վախենա։ Հանդարտ պատասխանեց Եդիգեյը։— Ես նրան ձեռք չեմ տա, բայց նա պետք է իմանա, որ ավելի լավ կլինի թողնի գնա ուրիշ տեղ։ Ես քեզ խոստանում եմ, որ նրա գլխից մազ անգամ չի պակասի։ Հավատա ինձ,— և ձեռքն ազատեց, դուրս եկավ տնից։

Աբիլովների պատուհանում դեռ լույս կար։ Ուրեմն քնած չեն։

Եդիգեյը կատաղի ճռճռացնելով արահետի ձյունը, մոտեցավ սառը դռներին և ուժեղ թակեց։ Դուռը բացեց Աբիլովը։

— Ահ, Եդիկե, մտիր, մտիր,— վախեցած ասաց նա և գունատվելով ետ-ետ գնաց։

— Ինչո՞ւ որբացրիր այն խեղճերին,— ասաց սա, որքան հնարավոր է զուսպ։

Աբիլովը չոքեց հատակին և բառացիորեն սողալով, ձեռքը գցեց Եդիգեյի կիսամուշտակի փեշից։

— Աստված վկա, ես չեմ, Եդիկե։ Թե սուտ եմ, թող կինս չազատվի,— դաժան երդվեց նա և շուռ գալով ահից մարած կնոջ կողմը, արագ և շփոթ վրա տվեց։— Աստված վկա, ես չեմ, Եդիկե։ Ես ինչպե՞ս կարող էի։ Այն վերաքննիչն է, որ կա։ Հիշիր։ Ինչպես էր հարցուփորձ անում և խոսք քաշում, թե ինչ է գրում Աբութալիպը, ինչու է գրում։ Վերաքննիչն է արել, Եդիկե, ես ինչպես կարող էի։ Թե սուտ եմ, թող կինս չազատվի։ Գնացքի մոտ չգիտեի ուր կորչեմ։ Պատրաստ էի գետինը մտնել, որ աչքս չտեսներ նրանց։ Այդ վերաքննիչը ուղղակի հոգի էր հանում իր խոսքուզրույցով ու հարցուփորձով... Թե կիմանայի...

— Դե լավ,— կտրեց Եդիգեյը,— վեր կաց, մարդավարի խոսենք։ Ահա կինդ էլ վկա։ Թող բարի ազատում ունենա։ Խոսքն հիմա այդ մասին չէ։ Եթե նույնիսկ դու մեղավոր էլ չես։ Չէ՞ որ քեզ համար միևնույն է, թե որտեղ ապրես։ Իսկ մեզ վիճակված

է մնալ այստեղ, միգուցե մինչև մահուգերեզման։ Դու խելքդ գլուխդ հավաքիր, մտածիր։ Երևի արժի, որ այստեղից թողնես գնաս ուրիշ աշխատանքի։ Դա իմ խորհուրդն է։ Վերջ։ Այլևս այս խոսակցությանը չենք վերադառնա։ Սա էր ասածս, ուրիշ ոչինչ…

Եվ Եդիգեյը դուրս ելավ, ետևից ծածկելով դուռը։

## IX

Խաղաղ օվկիանոսում, Ալեուտներից դեպի հարավ արդեն վաղուց կեսօրն անցել էր։ Առաջվա նման թափը կտրված՝ ալեկոծվում էր օվկիանոսը և առաջվա նման ամբողջ տեսանելի տարածությամբ մեկ, վրա-վրա գլորվում էին ալիքները՝ եռացող թմբերով, ներկայացնելով ջրային տարերքի անծայրածիր շարժումը հորիզոնից հորիզոն։ «Կոնվենցիա» ավիակիրը թեթևակի ճոճվում էր ալիքների վրա։ Գտնվում էր առաջվա տեղում. Սան-Ֆրանցիսկոյի և Վլադիվոստոկի միջև ընկած օդային միևնույն տարածության վրա։ Նավի միջազգային գիտական ծրագրի բոլոր ծառայությունները գտնվում էին լարված, կազմ-պատրաստ վիճակում։

Այդ ընթացքում ավիակրի վրա ավարտվում էր հատուկ լիազորված հանձնաժողովների արտակարգ նիստը՝ արտակարգ իրադրությունը հետազոտելու համար, որ ծագել էր Պահող լուսատուի համակարգում գտնվող արտաերկրային քաղաքակրթության հայտնագործման առիթով։

Պարիտետ-տիեզերագնացներ 1—2 և 2—1-ը, որ այլմոլորակայինների հետ ինքնագլուխ ժամանել էին Անտառալանջ մոլորակը, «Պարիտետ» ուղեծրային կայանի ռադիոկապի միջոցով երեք անգամ Միաղեկկենտրոնից նախազգուշացվել էին ոչ մի դեպքում չձեռնարկել որևէ գործողություն, մինչև որ Միաղեկկենտրոնից ստանան հատուկ ցուցումներ։

Միաղեկկենտրոնի կտրական պահանջները իրականում արտահայտում էին ոչ միայն մտքերի շփոթությունը, այլև այն բացարիկ բարդ, անարդել սրվող իրադրությունը, երկու կողմերի տարաձայնությունների այն շիկացումը, որոնք տանում էին դեպի համագործակցության լիակատար խզում, ավելին, բացահայտ հակամարտություն։ Այն, ինչ վերջերս կողմերին միացնում էր,— առաջատար տերությունների գիտատեխնիկական հզորության շահերի միավորման տեսակետից,— «Դեմիուրգ»

ծրագիրը ինքնըստինքյան մղվեց երկրորդ պլան, կորցրեց իր երբեմնի նշանակությունը՝ արտաերկրային քաղաքակրթության հայտնաբերման կապակցությամբ անակնկալ ծագած գերխնդրի համեմատությամբ։

Հանձնաժողովի անդամները որոշակիորեն հասկանում էին մի բան, որ այդ աննախադեպ, ոչ մի բանի հետ չզուգորդվող հայտնագործությունը արմատական փորձության է ենթարկում ժամանակակից համաշխարհային համագործակցության բուն հիմքերը, այն ամենը, ինչ քարոզվել է, սնուցվել է, դարեդար մշակվել է սերունդների գիտակցության մեջ,— նրա գոյության օրենքների ամբողջ համրագումարը։

Ո՞վ կարող էր խիզախել դիմելու նման համարձակ քայլի, այլևս չխոսելով երկրագնդի ընդհանուր անվտանգության ըմբռնումների մասին։

Եվ այդտեղ, դարձյալ ինչպես միշտ, պատմության ճգնաժամային պահերին, ամբողջ ուժով մերկացան Երկրի երկու տարբեր հասարակական-քաղաքական հասարակարգերի արմատական հակասությունները։

Հարցի քննարկումը վերածվեց տաք վիճաբանությունների։ Տեսակետների տարբերությունը, մոտեցումների տարբերությունը հետզհետե ընդունում էր անհաշտ դիրքորոշումների բնույթ։ Բանը սրընթաց գնում էր դեպի բախումներ, դեպի փոխադարձ սպառնալիքներ, դեպի այնպիսի կոնֆլիկտներ, որոնք դուրս գալով հսկողության տակից, պատրաստ էին անհապաղ վերածվել համաշխարհային պատերազմի։ Դրա համար էլ կողմերից յուրաքանչյուրը աշխատում էր խուսափել ծայրահեղություններից՝ իրադարձությունների այդպիսի զարգացման ընդհանուր վտանգի առջև, բայց ամենից ավելի զսպող գործոն դարձավ անցանկալիությունը, ավելի ճիշտ, երկրային գիտակցության պայթման սպառնալիքը, որ կարող էր տարերայնորեն տեղի ունենալ, եթե անակնկալ քաղաքակրթության լուրը ընդհանուր հրապարակման փաստ դառնար... Ոչ ոք չէր կարող վստահ լինել գործի այդպիսի ընթացքի հետևանքների վրա...

Եվ բանականությունը իր դերը կատարեց, կողմերը եկան տեխնիկական փոխզիջման և դարձյալ խստորեն հաշվենկշռված հիմքի վրա։ Այդ կապակցությամբ «Պարիտետ» ուղեծրային կայան հաղորդվեց ևս մի ծածկագրված ռադիոգիր՝ հետևյալ բովանդակությամբ.

«1—2 և 2—1 տիեզերագնաց-հսկիչներին, Ձեզ վրա պարտավորություն է դրվում «Պարիտետ» բորտային համակարգի միջոցով անհապաղ ռադիոհաղորդակցության մեջ մտնել պարիտետ-տիեզերագնացներ 1—2 և 2—1-ի հետ, որոնք գտնվում են արտաարեգակնային գալակտիկայում, այսպես կոչված «Պահող» լուսատուի համակարգի Անտառալանջ մոլորակում։ Անհրաժեշտ է շտապ նրանց տեղյակ պահել, որ պարիտետ-տիեզերագնացներ 1—2 և 2—1-ի հայտնագործած արտաերկրային քաղաքակրթության մասին հաղորդումն ուսումնասիրող երկկողմանի հանձնաժողովների եզրակացության հիման վրա Միադեկկենտրոնը ընդունում է որոշում, որը ենթակա չէ քըննարկման.

ա) Չթույլատրել նախկին պարիտետ-տիեզերագնացներ 1—2 և 2—1-ին վերադառնալ «Պարիտետ» ուղեծրային կայան, հետևաբար՝ Երկիր, որպես երկրային քաղաքակրթության համար անցանկալիների։

բ) Հայտարարել Անտառալանջ կոչվող մոլորակի բնակիչներին, որ մենք հրաժարվում ենք նրանց հետ մտնելու որևէ կարգի կամ ձևի հաղորդակցության մեջ, որ անհամատեղելի է պատմական փորձին, երկրի մարդկային հասարակության այսօրվա զարգացման կենսական շահերին ու յուրահատկություններին։

գ) Նախազգուշացնել նախկին պարիտետ-տիեզերագնացներ 1—2 և 2—1-ին և նրանց հետ շփման մեջ գտնվող այլմոլորակայիններին, որպեսզի նրանք չփորձեն կապ հաստատել, մանավանդ՝ չփորձեն թափանցել մերձերկրյա ոլորտները, ինչպես տեղի ունեցած այն դեպքը, երբ այլմոլորակայինները այցելել են «Տրամպլին» ուղեծրում գտնվող «Պարիտետ» ուղեծրային կայանը։

դ) Մերձերկրյա տիեզերական տարածությունը այլմոլորակային ծագումի թռչող սարքերի հնարավոր ներխուժումից մեկուսացնելու նպատակով Միադեկկենտրոնը շտապ կարգով հայտարարում է Արտակարգ միջտիեզերական ռեժիմի հաստատում՝ օպերացիա «Օղակապ» անվանումով, ծրագրելով առաջադըրված ուղեծրերում պարեկություն անող մի շարք մարտական հրթիռ-ռոբոտներ, որոնք նախատեսված կլինեն միջուկա-լազերային ճառագայթմամբ ոչնչացնելու երկրագնդին մոտեցող որևէ առարկա։

ե) Տեղյակ պահել այլմոլորակայինների հետ կամայականո-

 րեն հաղորդակցման մեջ մնաց նախկին պարիտետ-տիեզերագնացներին, որ անվտանգության, երկրայինների գեոքաղաքական կազմության ստեղծված կայունությունը պահպանելու նպատակով, բացառվում է նրանց հետ կապի որևէ հնարավորություն, իսկ հետագայում ձեռք կառնվեն տեղ գտած իրադարձության խստագույն գաղտնեղրման բոլոր միջոցները, և միջոցներ հաղորդակցության վերականգնումն արգելելու ուղղությամբ։ Այդ նպատակով «Պարիտետ» կայանի ուղեծիրը անհապաղ կփոխվի, իսկ կայանի ռադիոկապի ուղիները նորից կծածկագրվեն։

դ) Եվս մեկ անգամ նախազգուշացնել այլմոլորակայիններին երկրագնդի շուրջը անցկացված «Օղակապի» գոտիներին մոտենալու վտանգի մասին։

Միաղեկկենտրոն «Կոնվենցիա» ավիակրի թևից»։

Դիմելով այդ պաշտպանական միջոցներին, Միաղեկկենտրոնը ստիպված էր անորոշ ժամանակով անգործունեության մատնել «Դեմիուրգի» ամբողջ ծրագիրը՝ Իքս մոլորակի յուրացման գործում։ «Պարիտետ» ուղեծրային կայանն առաջիկայում պետք է տեղափոխվեր պտույտի այլ պարամետրերի վրա և այն օգտագործեր տիեզերական ընթացիկ հետազոտությունների համար։ Որոշվեց գիտահետազոտական կոոպերատիվ ավիակիր «Կոնվենցիան» պահպանության տակ չեղոք Ցինլանդիայինի։ «Օղակապ» համակարգը հեռավոր տիեզերք արձակելուց հետո բոլոր պարիտետային ծառայություններին, բոլոր գիտական և վարչական աշխատակիցներին, բոլոր օժանդակ սպասարկումներին սպասում էր կազմացրում՝ խստագույն սարագրությամբ՝ մինչև մահ չհրապարակել Միաղեկկենտրոնի գործունեության ամփոփումը։

Լայն հասարակայնության համար, ենթադրվում էր, կհայտարարվի, որ «Դեմիուրգ» ծրագրի աշխատանքներն անորոշ ժամանակով դադարեցվում են, Իքս մոլորակի վրա ծագած կապիտալ հետազոտությունների և շտկումների անհրաժեշտության կապակցությամբ։

Ամեն ինչ ջանադրաբար մտածված-կշռադատված էր։ Եվ այդ ամենը պետք է լիներ երկրագնդի շուրջը արտակարգ «Օղակապ» անցկացնելուց անմիջապես հետո։

Դրանից առաջ, հանձնաժողովի նյութի ավարտումից անմիջապես հետո, նախկին պարիտետ-տիեզերագնացների բոլոր փաստաթղթերը, բոլոր ծածկագրերը, բոլոր հաղորդագրությունները և այդ տխուր պատմությանը որևէ ձևով առնչվող բոլոր արձանագրությունները, բոլոր ժապավեններն ու թղթերը ոչնչացվեցին։

Խաղաղ օվկիանոսում, Ալեուտներից հարավ, ժամանակը թեքվում էր դեպի երեկո։ Եղանակը առաջվա նման համեմատաբար տանելի էր։ Թեև օվկիանոսի խռովքը հետզհետե ուժեղանում էր։ Արդեն լսվում էր ամենուրեք եռացող ալիքների շաչյունը։

Ավիակրի վրա, նյութի ավարտից հետո, ավիաթևի ծառայությունը լարված սպասում էր հատուկ լիազորված հանձնաժողովների անդամների դուրս գալուն և ինքնաթիռներին մոտենալու պահին։ Ահա բոլորը դուրս եկան։ Իրար հրաժեշտ տվին։ Ոմանք գնացին նստելու մի ինքնաթիռը, մյուսները՝ մյուս։

Թռիչքն անցավ գերազանց, չնայած ալեկոծությանը։ Լայներներից մեկը ընթացք վերցրեց դեպի Սան-Ֆրանցիսկո, մյուսը հակառակ կողմը՝ Վլադիվոստոկ։

Երկնային քամիներով ողողված երկիրը լողում էր իր հավերժական շրջագծերով։ Լողում էր Երկիրը... Դա մի փոքրիկ ավազահատիկ էր Տիեզերքի անչափելի անվերջության մեջ։ Այդպիսի ավազահատիկներ աշխարհում եղել են վիթխարի քանակությամբ։ Բայց մարդիկ եղել և ապրել են միայն Երկիր մոլորակի վրա։ Ապրել են ինչպես որ կարողացել են, ինչպես որ հնարավորություն են ունեցել, և երբեմն, հետաքրքրությունից այրվելով, փորձել են իրենց համար պարզել, թե արդյոք ուրիշ տեղերում էլ չկան իրենց նման էակներ։ Վիճել են, հիպոթեզներ կառուցել, թռել են լուսին, ավտոմատ սարքեր են ուղարկել երկնային այլ մարմինների վրա, բայց ամեն անգամ դառնությամբ համոզվել են, որ Արեգակնային համակարգության շրջապատում ոչ մի տեղ գոյություն չունի իրենց նման ոչ այլ ոք և ոչինչ, և առհասարակ՝ որևէ կյանք։ Հետագայում նրանք մոռանում էին այս մասին, դրա ժամանակը չունեին, այնքան էլ հեշտ չէին ապրում և այնքան էլ հաշտ չէին իրար հետ, այսինքն հանապազօրյա հացը ձեռք բերելը նույնպես դժվար էր... Շատերն էլ առհասարակ դա իրենց գործը չէին համարում։ Եվ լողում էր Երկիրը իր համար...

Ամբողջ այդ հունվարը խիստ սառնամանիքային էր և մառախլապատ։ Եվ որտեղից էր այդքան ցուրտ լցվում սարօզեկները։ Գնացքները գնում էին առանցքատուփերը սառած, սպիտակության սատիճան թրծված սառուցիկ ցրտից։ Սրտառուչ պատկեր էր, երբ սև նավթատար ցիստեռնները կիսակայարանում կանգ էին առնում ամբողջապես սպիտակած, եղյամակալած, սառցաշերտով պատված։ Գնացքների համար դժվար էր նաև տեղից շարժվելը։ Զույգ-զույգ կցված շոգեքարշերը, կարծես ուս-ուսի տված, երկար ցնցումներով քաշում, բառացիորեն պոկում էին ռելսերին կպած անիվները։ Եվ վագոնները պոկող շոգեքարշերի այդ ճիգերը զրնգացող մետաղի դղրդոցով տարածվում էին շուրջբոլորը՝ ցուրտ օդում։ Գիշերները բորանլիցիների երեխաները վախեցած զարթնում էին այդ դղրդոցից։ Կարծես դա բավական չէր, ձնահյուսերն էլ սկսեցին ծածկել ճանապարհները։ Մեկը չվերջացած՝ մյուսը։ Քամիները կատաղել էին։ Իսկ սարօզեկներում լիքը արձակ տարածություն, չես էլ հասկանում, թե բուքը որ կողմից է վրա տալիս։ Բորանլիցիներին թվում էր, թե քամու միակ նպատակն էր ձյունը դիզել հենց երկաթուղու վրա։ Անընդհատ որևէ ճեղք էր որոնում, որ թափվի, թիփի անի, ճանապարհները ծածկի ծանր ձնակույտերով։

Եդիգեյը, Ղազանղապը և ուղեգծային երեք բանվորներ ուրիշ բան ու գործ չունեին, բացի կայարանամիջի ուղիները մաքրելուց. ծայրից ծայր, մեկ այստեղ, մեկ այնտեղ, մեկ նորից միևնույն տեղը։ Դրությունը փրկում էին ուղտի քարշակները։ Ձնահյուսի ամբողջ ծանր շերտը քարշակով տանում էին ճանապարհի եզր, մնացյալը ստիպված էին լինում տանել ձեռքով։ Եդիգեյը չէր խնայում Կարանարին և գոհ էր, որ հնարավորություն կա հոգնեցնելու նրան, մեղմելու նրա ամեհի ուժը, լծել էր համապատասխան մի ուղտի հետ, մտրակով քշում էր, ձնակույտերը ետ մղելով զուգահեռ տախտակով՝ ի հակակշիռ ետևի տախտակի, որի վրա կանգնած էր ինքը և քարշակը սեղմում էր սեփական մարմնի ծանրությամբ։ Այն ժամանակ ուրիշ հարմարանքներ չկային։ Խոսք կար, իբր, գործարաններն արդեն թողարկում են հատուկ ձյունմաքրիչներ, լոկոմոտիվներ, որոնք ձնակույտերը հրում են ճանապարհի աջ ու ձախ կողմերը։ Հույս էին տալիս, թե շուտով կուղարկեն այդպիսի մեքենաներ, բայց առայժմ խոստումները խոսքից հեռու չէին գնում։

Եթե ամռանը արեգակը երկու ամիս շարունակ խորովում էր

մինչև գիտակցության մթագնում, ապա այժմ անտանելի էր սառնամանիքային օդը շնչելը, թվում էր, թոքերը պատռվելու են։ Բայց միևնույն է, գնացքները գնում էին, և գործը պիտի արվեր։ Եդիգեյի դեմքը մազակալել էր, և այդ ձմեռ առաջին անգամ սկսել էր տեղ-տեղ շողալ ճերմակը, աչքերը քնատությունից ուռչում էին, զզվում էր իրեն հայելու մեջ նայելուց, թուջ էր դարձել։ Կիսամուշտակը հագից չէր հանում և դեռ վրայից բրեզենտե թիկնոց էր հագնում՝ գլխանոցով։ Ոտքերին թաղյակներ էին։

Բայց ինչով էլ զբաղված լիներ Եդիգեյը, որքան էլ ծանր լիներ կյանքը, գլխից դուրս չէր գալիս Աբութալիպ Կութիբաևի պատմությունը։ Ցավագին արձագանք էր տալիս հոգու խորքում։ Հաճախ էին Ղազանղապի հետ ծանրութեթև անում, թե ինչպես եղավ այդ ամենը, և ինչով է վերջանալու։ Ղազանղապը շատ մասը լուռ էր մնում, խոժոռ ու լարված ընկնում մտքերի մեջ։ Մի անգամ ասաց.

— Միշտ այդպես է եղել։ Մինչև գլուխ հանեն... Հին ժամանակներում զուր չէին ասում. «Խանը աստված չի։ Նա հո չի կարող միշտ իմանալ, թե ինչ են անում նրանք, ովքեր իր մոտ են, իսկ նրանք, ովքեր իր մոտ են, չգիտեն նրանց մասին, ովքեր շուկաներում տուրք են հավաքում»։ Միշտ այդպես է եղել։

— Ի՞նչ ես խոսում։ Իմաստունի՜ս նայեք,— դժգոհ ծաղրեց Եդիգեյը։— Երբ բոլոր խաների գլխին տվին քշեցին հա՞։ Բանը հո այդ չի։

— Հապա ի՞նչ է,— սթափ հարցրեց Ղազանղապը։

— Ինչ, ինչ,— բարկացած մրթմրթաց Եդիգեյը, բայց այդպես էլ չպատասխանեց։ Այդ հարցը խրվել դուրս չէր գալիս ուղեղից, բայց պատասխան չէր գտնում։

Փորձված բան է, դժբախտությունը մենակ չի գալիս։ Կութիբաևների մեծը՝ Դաուլը լավ մրսել էր։ Տղան բարձր տաքությամբ ու զառանցանքով անկողին էր ընկել, հազը խեղդում էր, կոկորդը ցավում էր։ Զարիպան ասում էր, անգինա ունի և հաբերով բուժում էր նրան։ Բայց հո չէր կարող հավիտյան անբաժան մնալ երեխաներից, սլաքավար էր աշխատում, ապրել էր պետք։ Նրա հերթապահությունը մեկ գիշերն էր ընկնում, մեկ՝ ցերեկը։ Ուկուբալան ստիպված իր վրա էր վերցրել այդ հոգսերը։ Երկուսը նրանը, երկուսը իրենը. չորսին էլ պահում էր, հասկանալով, թե ինչ անելանելի վիճակում է Աբութալիպի ընտանիքը։ Եդի-

գեյն էլ, որքան կարողանում էր, օգնում էր։ Առավոտ վաղ սարայից քարածուխ էր տանում նրանց բարաքը, և եթե հասցնում էր, վառում էր վառարանը։ Քարածուխը նույնպես հմտություն էր պահանջում։ Միանգամից մեկ և կես դույլ ածուխ էր լցնում, որպեսզի ամբողջ օրը տաքությունը մնար երեխաների համար։ Ջուրը նույնպես ինքն էր բերում փակուղու գծին կանգնած ցիստեռնից, փայտ էր ջարդում կպչանի համար։ Իրեն համար ինչ էր որ այս կամ այն բանը անելը, փայտ ջարդելը, ջուր բերելը և այլն... Ամենադժվարը ուրիշ բան էր։ Անհնարին, տանջալից, անտանելի էր նայել Աբութալիպի երեխաների աչքերի մեջ և պատասխան տալ նրանց հարցերին։ Մեծը հիվանդ պառկած էր, նա զուսպ բնավորություն ուներ, բայց Էրմեկը լրիվ մոր կտորն էր, աշխույժ, քնքուշ, անսահման նրբազգաց և նեղացկոտ։ Նրա հետ դժվար էր։ Երբ Եդիգեյը առավոտյան քարածուխ էր բերում, որ վառարանը վառի, աշխատում էր չարթնացնել երեխաներին։ Բայց հազվադեպ էր լինում, որ աննկատ մնար։ Գանգուր, թուխ մազերով Էրմեկը անմիջապես զարթնում էր։ Եվ աչքերը բացելուն պես հարցնում.

— Եդիգեյ քեռի, պապիկան այսօր կգա, չէ՞։

Փոքրիկ տղան տկլոր, ոտաբոբիկ վազում էր Եդիգեյի կողմը, աչքերում անխորտակելի հույս։ Եդիգեյի համար ինչ արժեր ասել «այո», հայրը անպայման կվերադառնա և նորից կլինի տանը, իրենց հետ։ Եդիգեյը գիրկն էր առնում նիհարիկ, տաքուկ տղային, և նորից դնում էր անկողին։ Խոսում էր, ինչպես կխոսեն մեծի հետ.

— Այսօր չգիտեմ կգա՞ թե չի գա քո պապիկան, Էրմեկ, բայց կայարանից կապի միջոցով պետք է մեզ հայտնեն, թե որ գնացքով է գալու։ Դու լավ գիտես, որ մեզ մոտ մարդատար գնացքներ չեն կանգնում։ Դա լինում է միայն երկաթուղու ամենագլխավոր դիսպետչերի հրամանով։ Իմ կարծիքով, այս երկու օրս ռադիոյով կհաղորդեն։ Եվ մենք՝ դու, Դաուլը և ես, եթե, իհարկե, Դաուլը մինչ այդ լավանա, կդիմավորենք գնացքը։

— Կասենք, պապիկա, տես մենք եկել ենք,— փոքրիկ տղան զարգացրեց մեծի միտքը։

— Իհարկե՛։ Այդպես էլ կասենք,— աշխույժ պատասխան տվեց Եդիգեյը։

Բայց հնարամիտ երեխային այնքան էլ հեշտ չէր խաբելը։

— Եդիգեյ քեռի, եկեք մենք էլ նստենք ապրանքատար գնացքը, այն ժամանակվա նման, և բոլորս գնանք ամենագլխավոր դիսպետչերի մոտ։ Եվ ասենք, որ նա մեզ մոտ կանգնեցնի պապիկայի գնացքը։

Հարկավոր էր մի կերպ տակից դուրս գալ։

— Բայց այն ժամանակ ամառ էր, տաք էր։ Հիմա ապրանքատարով գնալ չի լինի։ Շատ է ցուրտ։ Թիփի է։ Մի տես, լուսամուտներն ինչպես են սառել։ Մենք տեղ չենք հասնի, սառցակալոր կդառնանք-կմնանք։ Չէ, դա շատ վտանգավոր է։

Տղան թախծոտ լռեց։

— Դու առայժմ պառկիր, ես տեսնեմ Դաուլն ինչպես է,— պատճառ գտավ Եդիգեյը, մոտենալով հիվանդի անկողնուն, ծանր, կոշտուկապատ ձեռքը դրեց երեխայի տաք ճակատին... Տղան դժվարությամբ կիսաբացեց աչքերը, թույլ ժպտաց տաքությունից վառվող շուրթերով։ Ջերմությունը չէր իջնում։— Տես, չբացվես, Դաուլ, լսո՞ւմ ես, դու քրտնած ես։ Ավելի կմրսես։ Իսկ դու, Էրմեկ, եթե Դաուլը չիշիկ ուզի, անմիջապես թասը կտաս։ Լսո՞ւմ ես։ Որպեսզի նա վեր չկենա։ Շուտով ձեր մայրիկը կգա հերթապահությունից։ Իսկ մորաքույր Ուկուբալան հիմա կգա, ձեզ կկերակրի։ Հենց որ Դաուլը լավանա, վազ կտաք մեր տուն, կխաղաք Սաուլեի և Շարապատի հետ։ Ես հիմա աշխատանքի պիտի հասնեմ, տեսեք, ինչքան շատ ձյուն է եկել, գնացքները կկանգնեն,— գնալուց առաջ երեխաների ուշադրությունը շեղեց Եդիգեյը։

Բայց Էրմեկը անդրդվելի էր։

— Եդիգեյ քեռի,— ասաց, երբ սա արդեն շեմին էր։— Եթե ձյունը շատ լինի ու պապիկայի գնացքը կանգնի, ես էլ կգամ ձյունը կմաքրեմ։ Ես փոքրիկ բահ ունեմ։

Եդիգեյը նրանց տանից դուրս էր գալիս ծանր, ճնշված սրտով։ Վիրավորանքից, անզորությունից, խղճահարությունից սիրտը մղկտում էր։ Եվ չարանում էր աշխարհի վրա։ Եվ չարությունը թափում էր ձյան, քամու, ձնահյուսերի, ուղտերի վրա, որոնց անխնա աշխատեցնում էր։ Գազանի նման էր աշխատում, թվում էր մեն-մենակ կարող էր կասեցնել սարօզեկյան ամբողջ բուքուբորանը։ Իսկ օրերն հաջորդում էին իրար, ինչպես մեկը մյուսի ետևից անխափանելի համաչափությամբ ընկնող կաթիլներ։ Հունվարն էլ անցավ, ցրտերն սկսեցին թեթևակի մեղմանալ։ Ենթադրությունների մեջ խճճվում էին Եդիգեյն ու Ղա-

ղանղապը, ամեն ձևով գնում-վերցնում էին։ Եվ երկուսին էլ թվում էր, թե՛ շուտով բաց կթողնեն նրան, ի՛նչ մի աններելի բան է արել. իր համար ինչ-որ բան է գրել, հո ուրիշի համար չի գրել։ Այդ էր նրանց հույսը, և այդ հույսը որքան կարողանում էին, ներշնչում էին Զարիպային, որպեսզի նա դիմանա, հոգով չընկճվի։ Զարիպան, իհարկե, հասկանում էր, որ հանուն երեխաների պետք է քար դառնա։ Իսկապես քար էր դարձել։ Պարփակվել էր ինքն իր մեջ, բերանը չէր բացվում, միայն աչքերն էին տագնապալից շողում։ Ով իմանա, ինչքան կդիմանար այդպես։

Բորանլի Եդիգեյը այդ ժամին ազատ էր։ Որոշեց անցնի տափաստան, տեսնի ինչպես է արածում ուղտերի երամակը, և գլխավորը, տեսնի թե ինչպես է պահում իրեն Կարանարը։ Հո նոր փորձանք չի բերել ուղտերի գլխին։ Հո չի կատաղել, կարծես ժամանակն է։ Գնաց դահուկներով, հեռու չէր։ Վերադարձավ ժամանակին։ Սկզբում ուզում էր Ղաղանղապին զեկուցել, իբր՝ ամեն ինչ կարգին է։ Անասունները արածում են Աղվեսապոչ հեղեղատում, այնտեղ ձյուն համարյա չկա, քամին ցրում-տանում է, դրա համար էլ ստորոտի կերը բաց է, առայժմ անհանգստանալու բան չկա։ Բայց հետո որոշեց նախ մտնի տուն, դահուկները թողնի։ Մեծ աղջիկը՝ Սաուլեն վախեցած գլուխը դուրս հանեց դռնից։

— Հայրիկ, մայրիկը լաց է լինում։— Եվ գլուխը ներս քաշեց։

Եդիգեյը դահուկները գցեց, անհանգիստ շտապեց տուն։ Ուկուբալան այնպես աղիողորմ էր լալիս, որ Եդիգեյի շունչը կտրվեց։

— Ի՞նչ է պատահել։

— Թող անիծվի այս փուչ աշխարհը,— ողբաց Ուկուբալան հեկեկանքներից խեղդվելով։

Եդիգեյը կյանքում կնոջը այդպիսի վիճակում չէր տեսել։ Ուկուբալան ամուր, ողջամիտ կին էր։

— Դու ես, դու ես մեղավորը։

— Ինչո՞ւ եմ մեղավոր, ինչո՞ւ,— ապշել էր Եդիգեյը։

— Խեղճ երեխաներին այնքան սպասցիր, սպասցիր։ Մի քիչ առաջ, հենց նոր մարդատարը կանգնեց, դիմացը հանդիպակաց գնացք կար, կանգնեց, որ դրան բաց թողնի։ Եվ որտեղից էլ եկան, մեր կիսակայարանում հանդիպեցին։ Հենց Աբութալիպի երեխաները տեսան, որ մարդատար գնացքը կանգնեց, վեր

թռան ճչալով՝ «Պապա՜ն, պապիկա՜ն, պապիկան եկավ», գլխապատառ վազեցին ուղիղ դեպի գնացքը։ Ես էլ նրանց ետևից։ Վագոնից վագոն էին վազում, շարունակ կանչում, «Պապա, պապիկա, ո՞ւր է մեր պապիկան»։ Վախենում էի գնացքի տակ ընկնեն։ Վազում էին գնացքի երկայնքով, հորն էին կանչում։ Ոչ մի դուռ չբացվեց։ Իսկ նրանք վազում էին ու վազում։ Երկար, խուլ գնացք։ Նրանք վազում էին։ Ես մինչև հասա, մինչ փոքրին գիրկըս առա, մինչև բռնեցի մյուսի ձեռքը, գնացքը շարժվեց, գնաց։ Սրանք մղկտում էին, «Մեր պապիկան, այնտեղ էր, չկարողացավ իջնել գնացքից», և լացը դրին։ Սիրտս մարեց, ասացի հիմա կզժվեմ, այնպես էին լալիս ու գոռում նրանք։ Էրմեկը լավ չի։ Գնա հանգստացրու երեխային։ Գնա։ Դու ես երեխաներին ասել, որ մարդատար գնացքը կանգնի, ձեր հայրիկը կգա։ Ա՜խ, եթե տեսնեիր ինչ եղան, երբ գնացքը գնաց, բայց հայրը չերևաց։ Եթե միայն տեսնեի՜ր։ Ինչո՞ւ է կյանքն այսպես դասավորված, ինչո՞ւ է երեխան այդպես ուժեղ կապվում հորը և հայրը՝ երեխային։ Ինչի՞ համար են այսպիսի տանջանքները։

Էդիգեյը գնաց նրանց մոտ, ինչպես մահապատժի կգնան։ Եվ լոկ մի բան էր աղերսում աստծուց մահապատժից առաջ, որպեսզի աստված ներողամիտ լինի և թողություն տա իր մեղքերին, որ ակամա սուտ է ասել այդ փոքրիկ, հավատավոր հոգիներին։ Ինքը վատ բան չի ցանկացել։ Հիմա ինքը ինչ պիտի ասի, ի՞նչ պատասխան պիտի տա։

Նրան տեսնելով Դաուլն ու Էրմեկը՝ լացած և անճանաչելիորեն ուռած երեսներով սկսեցին բղավել նոր ուժով, վայնասունով մոտ վազեցին և արցունքներից խեղդվելով, հեծկլտալով, լալով, իրար խոսք կտրելով ուզում էին բացատրել, որ գնացքը կանգնել է կիսակայարանում, բայց հայրը չի կարողացել իջնել, և թող քեռի Էդիգեյը կանգնեցնի գնացքը...

— Սագրնդըմ[1], պապիկամդը, Սագրնդըմ, սագրնդըմ,— գոռում էր Էրմեկը՝ իր ամբողջ տեսքով, հավատով, հույսով, վշտով խնդրելով նրան։

— Հիմա ես ամեն ինչ կիմանամ, լռեք, լռեք, մի լացեք,— Էդիգեյն աշխատում էր մի կերպ խելքի բերել, մի կերպ հանգըստացնել սրտապատառ լացող երեխաներին։ Եվ շատ ավելի դժվարը հաստատուն մնալն էր. չընկճվել, դեմքի արտահայտու-

---

1 Սագրնդըմ — կարոտել եմ, կարոտից հալումաշ եմ եղել։

թյունը չփոխել, որպեսզի երեխաները նրա մեջ չտեսնեն թույլ, անօգնական մարդու։— Այ, հիմա մենք դուրս կգանք, կգնանք։ «Ո՞ւր կգնանք։ Ո՞ւր։ Ո՞ւմ մոտ կգնանք։ Ի՞նչ անեմ։ Ինչպե՞ս վարվեմ»,— մտմտում էր նա։— Այ, հիմա մենք դուրս կգանք և կմտածենք, կտեսնենք,— անորոշ ինչ-որ խոստացավ, անկապ-անկապ ինչ-որ մռթմռթաց Եդիգեյը։

Նա մոտեցավ Զարիպային։ Սա բերանքսիվայր պառկած էր մահճակալին, դեմքը բարձի մեջ թաղած։

— Զարիպա, Զարիպա,— նրա ուսը շարժեց Եդիգեյը։ Բայց նա գլուխն անգամ չբարձրացրեց։

— Մենք դուրս ենք գալիս ման գանք, մի քիչ կթափառենք, հետո կմտնենք մեր տուն,— ասաց Եդիգեյը։— Տղաների հետ գնում եմ։

Սա միակ բանն էր, որ կարողացավ անել Եդիգեյը երեխաներին մի կերպ հանգստացնելու և իր մտքերը հավաքելու համար։ Էրմեկին շալակեց, Դաուլի ձեռքը բռնեց, գնացին։ Աննպատակ գնացին երկաթուղու երկարությամբ։ Բորանլի Եդիգեյը դեռ այսպիսի կարեկցանք չէր զգացել ուրիշի դժբախտության հանդեպ։ Էրմեկը նրա մեջքին կպած դեռ հեծկլտում էր, խոնավ և վշտոտ շնչելով ծոծրակին։ Փոքրիկ, կարոտից այրվող մարդկային արարածը այնպիսի հավատով էր ապավինել նրան, այնպիսի հավատով էր փարվել նրա ուսերին, իսկ մյուսը՝ նույնպիսի մի էակ, այնպիսի հավատով էր բռնել նրա ձեռքը, որ քիչ էր մնում Եդիգեյը ցավից ու խղճահարությունից բարձրաձայն ճչար։

Այդպես քայլում էին երկաթուղու երկարությամբ, ամայի սարօզեկներով, և միայն գնացքներն էին անցնում, դղրդալով մերթ այս, մերթ այն կողմում... Գալիս էին ու գնում...

Եվ նորից Եդիգեյը ստիպված եղավ երեխաներին սուտ ասել։ Ասաց, որ նրանք սխալվել են։ Այդ գնացքը, որ պատահաբար կանգնել է կիսակայարանում, գնացել է մյուս կողմը, իսկ իրենց պապիկան պետք է գա հակառակ կողմից։ Բայց միգուցե նա այդքան շուտ չգա։ Պարզվում է, որ նրան ուղարկել են ինչ-որ ծով, որպես ծովային, և հենց որ նավը լողա գա այն հեռավոր ճամփորդությունից, պապիկան էլ կգա տուն։ Առայժմ հարկավոր է սպասել։ Իր կարծիքով այդ սուտը պետք է օգներ նրանց դիմանալու այնքան, մինչև որ սուտը դառնար ճշմարտություն։ Եդիգեյը չէր կասկածում, որ Աբութալիպ Կութիբաևը

վերադառնալու է։ Կանցնի որոշ ժամանակ, կքննեն, կպարզեն, և նա կվերադառնա։ Հենց ազատեն, իսկույն կգա, ոչ մի վայրկյան չի ուշանա։ Երեխաներին այդպես սիրող հայրը ոչ մի վայրկյան չի հապաղի... Դրա համար էր Եղիգեյն իրեն թույլ տալիս սուտ ասելու... Բավական լավ ճանաչելով Աբութալիպին, Եդիգեյը շատ լավ գիտեր, թե ի՛նչ է այդ մարդու համար ընտանիքից բաժան լինելը։ Մեկ ուրիշը, թերևս այդքան սուր, այդքան ծանր ապրումներ չէր ունենա ժամանակավոր, թեկուզև բռնի անջատման համար, բայց հույսով կլիներ, որ շուտով կվերադառնա տուն։ Իսկ Աբութալիպի համար, Եդիգեյը դրանում չէր կասկածում, այդ անջատումը հավասարազոր է առավելագույն պատժի։ Եվ վախենում էր Եդիգեյը նրա համար։ Կդիմանա՞, կհամբերի՞ արդյոք, մինչև վերջանա դատական քաշքշուկը...

Այդ ընթացքում Զարիպան արդեն մի քանի նամակ էր ուղարկել համապատասխան հիմնարկություններ՝ հարցում անելով ամուսնու մասին, խնդրում էր հաղորդել, կարո՞ղ է արդյոք տեսակցություն ունենալ նրա հետ։ Առայժմ որևէ պատասխան չկար։ Ղազանղապն ու Եդիգեյը նույնպես գլուխ չէին հանում։ Սակայն տղամարդիկ ավելի հակված էին դա բացատրել այն փաստով, թե Բորանլի կիսակայարանը չունի ուղղակի փոստային կապ։ Նամակները պետք է ուղարկեիր որևէ մեկի միջոցով կամ էլ անձամբ տանեիր Կումբել։ Փոստի ստացումը նույնպես կատարվում էր Կումբելի միջոցով և նույնպես բարի ծառայությունների ճանապարհով... Իսկ կապի այդպիսի միջոցը, պարզ է, չէր կարող արագ լինել։

Մի անգամ այդպես էլ եղավ...

Փետրվար ամսվա վերջին օրերին Ղազանղապը մեկնել էր Կումբել՝ տեսնելու գիշերօթիկում սովորող Սաբիթջանին։ Գնացել էր ուղտով։ Ձմռանը ապրանքատարով տեղ գնալը հնարավոր չէր, շատ ցուրտ էր լինում։ Վագոն բարձրանալը արգելվում էր, իսկ բաց հարթակներում քամին անտանելի էր։ Իսկ ուղտով, տաք հագնված, լավ ընթացքով կարող ես մի օրում գնալ, ետ գալ, գործերդ էլ հասցնել։

Ղազանղապն այդ օրը վերադարձավ երեկոյան դեմ։ Մինչև նա ուղտից կիջներ, Եդիգեյը նկատեց, որ Ղազանղապի տրամադրությունը տեղը չի, շատ է մռայլ, երևի որդին գիշերօթիկում անկարգություն է արել, այսինքն՝ երևի նաև հոգնել է ամբողջ օրը ուղտի վրա տնգտնգալուց։

— Էհ, ոնց գնացիր եկար,— խոսեց Եղիգեյը։

— Ոչինչ,— խուլ արձագանք տվեց Ղազանղափը, զբաղված իր բեռով։ Հետո շուռ եկավ և մտահոգ ասաց։— Լսիր, դու տա՞նն ես լինելու։

— Տանն եմ։

— Բան ունեմ ասելու։ Հիմա կգամ։

— Անցիր։

Ղազանղափը շատ չսպասեցրեց։ Եկավ իր Բուկեյի հետ։ Ինքը առջևից՝ կինը ետևից։ Երկուսն էլ մի տեսակ մտահոգ էին երևում։ Ղազանղափը հոգնած տեսք ուներ, վիզն ավելի էր երկարել, ուսերը իջել էին, բեղերը՝ կախվել։ Հաստլիկ Բուկեյը հևում էր, թվում էր սիրտը ծակում է, չի կարողանում շունչը տեղը բերել։

— Ի՞նչ է պատահել, հո կռիվ չե՞ք արել,— ծիծաղեց Ուկուբալան։— Եկել եք հաշտվե՞ք։ Նստե՛ք։

— Երանի կռված լինեինք,— վհատ ձայնով պատասխանեց Բուկեյը, էլի ծանր շնչելով։

Ղազանղափը աչքը աջ ու ձախ գցելով հետաքրքրվեց.

— Բա ձեր աղջիկներն ո՞ւր են։

— Զարիպայի մոտ, խաղ են անում երեխաների հետ,— պատասխանեց Եղիգեյը։— Քո ինչի՞ն են հարկավոր նրանք։

— Վատ լուր եմ բերել,— ասաց Ղազանղափը, հայացքը դարձնելով Եղիգեյին և Ուկուբալային։— Թող երեխաներն առայժմ չիմանան։ Մեծ դժբախտություն է եղել։ Մահացել է մեր Աբութալիպը։

— Ի՞նչ ես ասում։— Տեղից թռավ Եղիգեյը, իսկ Ուկուբալան կարճ ճչաց, ափով փակեց բերանը և սփրթնեց։

— Մահացել է, մահացել է։ Անբախտ երեխաներ, անբախտ որբեր,— կիսախուպոտ-կիսաշշուկ ողբաց Բուկեյը։

— Ինչպե՞ս թե մահացել է,— դեռ լսածին չհավատալով, Եղիգեյը վախեցած մոտեցավ Ղազանղափին։

— Այդպիսի թուղթ է եկել կայարան։

Եվ հանկարծ բոլորը լռեցին, առանց իրար երեսի նայելու։

— Այ պատուհաս, այ պատուհաս,— գլուխը բռնեց Ուկուբալան, հառաչելով և օրորվելով...

— Ո՞ւր է այդ թուղթը,— հարցրեց վերջապես Եղիգեյը։

— Թուղթը տեղում է։ Կայարանում,— սկսեց պատմել Ղազանղափը։— Գնացի դիզերոթիկ, հետո մտածեցի՝ գնամ կայա-

բանի խանութը, այն, որ սպասարանի դահլիճի ներսում է։ Բուկեյը օճառ էր ուզել։ Հազիվ էի մոտեցել դռներին, դիմացս ելավ կայարանապետ Ջեռնովը։ Բարևեցինք, իրար վաղուց ենք ճանաչում, հետո նա թե՝ «Լավ է, որ քեզ տեսա,— ասում է,— մտնենք ինձ մոտ, գրասենյակ, նամակ կա, հետդ կտանես»։ Բաց արեց իր գրասենյակը, ներս մտանք։ Սեղանից վերցրեց մի ծրար, տպագիր տառերով։ «Աբութալիպ Ղութիբաևը, ասում է, աշխատե՞լ է ձեզ մոտ, կիսակայարանում»։ Մեզ մոտ, ասում եմ, իսկ ի՞նչ կա։ «Ահա, երրորդ օրն է, եկել է այս թուղթը, չգիտեի ում հետ ուղարկեմ Բորանլի։ Վերցրու, կտաս կնոջը։ Նրա հարցումների պատասխանն է։ Մահացել է, ինչպես գրված է այստեղ», և ինձ համար անհասկանալի մի բառ ասաց։ «Ինֆարկտից է մահացել»— ասում է։— Ինֆարկտն ի՞նչ է,— հարցնում եմ։ Նա թե՝ «սրտի կաթված»։ Ուրեմն սիրտն է պայթել։ Շվարել-մնացել էի։ Սկզբում չէի ուզում հավատալ։ Ձեռքս առա թուղթը։ Գրված էր. «Ղումբել կայարանի պետին. Ուղարկել Բորանլի կիսակայարան»... քաղաքացուհի այսինչին՝ ի պաշտոնական պատասխան նրա հարցումին, ապա՝ այն մասին, որ հետաքննության ենթակա Աբութալիպ Ղութիբաևը այսպես ու այսպես, մահացել է նոպայից։ Այդպես էլ ասված էր։ Կարդացի վերջացրի։ Չիմացա ինչ անեմ։ «Այդպիսի բաներ,— ասում է Ջեռնովը և ձեռքերը տարածում։— Վերցրու, կհանձնես կնոջը»։ Ես ասում եմ՝ ոչ, մեզ մոտ այդպես ընդունված չի։ Ես չեմ ուզում սև թղթի լրաբեր լինեմ։ Նրա երեխաները մանր են, ինչպե՞ս կհամարձակվեմ խորտակել նրանց, չէ, ասում եմ։ Մենք բորանլիցիներս, սկզբում իրար հետ խորհուրդ կանենք, հետո կորոշենք։ Կամ մեզնից մեկնումեկը հատուկ կգա այդ թղթի ետևից, կբերի, ինչպես որ վայել է ծանր բոթը բերելու համար, վերջապես, մարդ է մահացել, հո ճնճղուկ չի, կամ, ավելի շուտ, կգա նրա կինը՝ Ջարիպա Ղութիբաևը, և թուղթը կստանա ձեր ձեռքից։ Դուք էլ կբացատրեք, կպատմեք, թե բանն ինչպես է եղել։ Նա թե՝ «Քո գործն է, ինչպես կուզես։ Բայց թե ես ի՞նչ պիտի բացատրեմ ու պատմեմ։ Ես ոչ մի մանրամասնություն չգիտեմ։ Իմ գործը այս թուղթը տիրոջը հանձնելն է, ուրիշ ոչինչ»։— Լավ,— ասում եմ,— ներող եղեք, բայց առայժմ թող թուղթը մնա ձեզ մոտ, իսկ բանավոր հաղորդելը, ես կհաղորդեմ, մեզ մոտ, տեղում խորհուրդ կանենք։ «Տես, ինչպես կուզես»,— ասաց նա։ Դրանից հետո դուրս եկա նրա մոտից և ամբողջ ճանապարհը քշեցի ուղտին, սիրտս կրակ է ըն-

կել, ի՞նչ պիտի անենք հիմա։ Մեզանից ով սիրտ կանի հայտնելու նրանց…

Ղազանղապը լռեց։ Եղիգեյն այնպես էր կռացել, կարծես ուսերին սար էր դրված։

— Ի՞նչ կլինի հիմա,— մրմնջաց Ղազանղապը,— բայց ոչ ոք պատասխան չտվեց։

— Ես այդպես էլ գիտեի,— վշտոտ գլուխն օրորեց Եղիգեյը,— Չկարողացավ ապրել երեխաներից բաժան։ Ես ամենից շատ դրանից էի վախենում։ Բաժանմանը չդիմացավ, կարոտը ահավոր բան է։ Հրեն, երեխաներն այնպես-են կարոտել հորը, որ մարդ ուղղակի չի կարողանում նայել նրանց երեսին։ Իսկ եթե Աբութալիպը ուրիշ տեսակ մարդ լիներ, թեկուզ, ասենք, դատեին նրան, ինչի համար ուզում է լիներ, թող դատեին։ Մի տարի, երկու տարի կամ ավելի կնստեր, կգար։ Ախր քի՞չ չի տանջվել գերմանական գերության մեջ ու համակենտրոնացման ճամբարներում, պարտիզանության մեջ էլ հեշտ չի եղել և բոլոր այդ տարիներին կռվել է օտար երկրներում և չի կոտրվել, որովհետև այն ժամանակ մենակ է եղել, ինքն իր գլխի տերն է եղել, այն ժամանակ ընտանիք չի ունեցել։ Իսկ հիմա կարծես նրա միջից պոկել են իր երեխաներին, ամենաթանկ բաներն աշխարհում։ Եվ դժբախտություն է եղել…

— Այո, ես էլ-եմ այդպես մտածում,— ասաց Ղազանղապը։— Ես չէի հավատում, որ բաժանման կսկծից մարդ կարող է մեռնել։ Թե չէ, ի՞նչ էր եղել, ջահել, խելոք, գրագետ մարդ էր, կարող էր սպասել մինչև քննեին, ազատեին։ Մեղավոր չէր, բան չէր։ Իհարկե, երևի ուղեղով ինքն էլ հասկանում էր, բայց արի տես, որ սիրտը չի դիմացել։ Այնպես էր սիրում իր ձագուկներին…

Հետո նրանք էլի երկար նստեցին, քննում էին դրությունը, մտածում էին, թե Զարիպային ինչպես նախապատրաստեն այդ լուրին, և ինչքան տալիս-առնում էին, հանգում էին մի բանի. ընտանիքը զրկվել է հորից, երեխաները որբացել են, Զարիպան այրիացել է, և այդ ամենին ոչ կարող ես նոր բան ավելացնել, ոչ էլ պակասեցնել։ Բայց և այնպես, ամենախելացի առաջարկությունն արեց Ուկուբալան։

— Թող Զարիպան ինքն ստանա այդ թուղթը կայարանից։ Թող այդ հարվածը կրի այնտեղ, ոչ թե տանը՝ երեխաների ներկայությամբ։ Եվ թող այնտեղ էլ որոշի։ Կայարանում և վերա-

դարձի ճանապարհին ժամանակ կունենա մտածելու, թե ինչպես վարվի։ Պե՞տք է, որ երեխաներն իմանան այդ մասին, թե՞ առայժմ չարժի։ Գուցե կորոշի սպասել, մինչև մի քիչ մեծանան և զոնե մի քիչ մոռանան հորը։ Ախր, դժվար է ասել...

— Դու ճիշտ ես,— պաշտպանեց նրան Եղիգեյը։— Նա մայր է, թող ինքը որոշի՝ երեխաներին ասի՞ թե չասի Աբուտալիպի մահվան մասին։ Անձամբ ես չեմ կարող...— Եղիգեյը չկարողացավ շարունակել, լեզուն չէր ենթարկվում։ Նա հազաց, որ թուլացնի կոկորդը սեղմող խղճահարության նոպան։ Եվ երբ արդեն ընդհանուր համաձայնության էին եկել, Ուկուբալան նորից խոսեց.

— Ղազակե,— խորհուրդ տվեց Ղազանղապին,— նախ հարկավոր կլինի, որ դուք Զարիպային ասեք, թե նրա անունով ինչոր նամակներ կան կայարանապետի մոտ։ Իբր հարցման պատասխաններն են եկել։ Բայց խնդրել են ներկայանալ անձամբ, իբր այդպես է պետք։ Իսկ երկրորդը,— շարունակեց նա,— չի կարելի այսպիսի օրով Զարիպային մենակ ուղարկել կայարան։ Նրանք այստեղ ոչ հարազատ ունեն, ոչ բարեկամ։ Իսկ վշտի պահին ամենասարսափելին մենակությունն է։ Դու, Եղիգեյ, կմեկնես նրա հետ։ Եղիր նրա կողքին այդ պահին։ Ամեն ինչ կարող է պատահել այդպիսի դժբախտությունից։ Ասա, որ գործով կայարան պիտի գնաս, և միասին գնացեք։ Իսկ երեխաները կմնան մեզ մոտ։

— Լավ,— համաձայնեց Եղիգեյը կնոջ փաստարկներին։— Վաղը Աբիլովին կասեմ, որ պետք է Զարիպային տանեմ կայարանի հիվանդանոց։ Թող մի րոպե կանգնեցնի անցնող գնացքը։

Այդպես էլ որոշեցին։ Բայց նրանց հաջողվեց Ղումբել մեկնել միայն երկու օրից, ճամփակից գնացքով, որ կիսակայարանի պետի խնդրանքով կանգ առավ գծի վրա։ Մարտի 5-ն էր։ Այդ օրն ընդմիշտ մնաց Բորանլի Եղիգեյի հիշողության մեջ։

Գնում էին ընդհանուր վագոնով։ Ներսը լիքը ժողովուրդ էր, գնում էին ընտանիքներով, երեխաներով, ճամփորդական անխուսափելի կենցաղավարությամբ, հացօղու հոտ, անկարգ անցուդարձ, թեյթեխաղից մինչև խոսք ու կատակ, մինչև կանացի խուլ ձայնով արված փոխադարձ խոստովանություններ դժվար ապրելակերպի մասին, հարբեցող ամուսինների, բաժանությունների, հարսանիքների ու թաղումների մասին... Մարդիկ մեկնում էին հեռու։ Եվ իրենց հետ տանում էին այն ամենը, ինչ կազմում

էր նրանց առօրյա կյանքը... Մի որոշ ժամանակ, իրենց վիշտ ու ցավով նրանց միացան Զարիպան և նրան ուղեկցող Բորանլի Եդիգեյը։

Իհարկե, Զարիպան գլուխը կորցրել էր։ Տխուր, տագնապալից նստել էր և լուռ մնաց ամբողջ ճանապարհին, երևի անընդհատ մտածում էր, թե՝ տեսնես ինչ պատասխան է սպասում իրեն կայարանապետի մոտ։ Եդիգեյն էլ շատ լուռ էր։

Աշխարհում կան, ախր, նրբազգաց, սրտացավ մարդիկ, որոնք մի հայացքով նկատում են, որ մարդը վիշտ ունի։ Երբ Զարիպան տեղից վեր կացավ, գնաց վագոնի հարթակ, կանգնելու լուսամուտի մոտ, ռուս մի տատիկ, որ նստած էր դիմացի նստարանին, Եդիգեյին նայելով իր երբեմնի երկնագույն, այժմ ծերությունից խունացած աչքերով, ասաց.

— Կինդ հո հիվանդ չի՞, որդի։

Եդիգեյը նույնիսկ ցնցվեց.

— Կինս չի, մայրիկ, քույրս է, հիվանդանոց եմ տանում։

— Տեսնում եմ, որ տանջվում է խեղճը։ Շատ վատ է զգում։ Աչքերում անհույս վիշտ կա։ Երևի կասկած է ընկել սիրտը։ Վախենում է, հանկարծ հիվանդանոցում որևէ սարսափելի ցավ գտնեն։ Հե՜յ գիտի կյանք։ Չծնվես՝ աշխարհը չես տեսնի, ծնվես՝ տանջանքից աչք չես բացի։ Այդպես է գրվածքը։ Աստված ողորմած է, դեռ ջահել է, կդիմանա,— խոսում էր նա, ինչ-որ ձևով որսալով ու հասկանալով այն խռովքն ու թախիծը, որոնք հետըզհետե, կայարանին մոտենալու հետ, ավելի ու ավելի էին պաշարում Զարիպային։

Մինչև Կումբել մեկուկես ժամվա ճանապարհ է։ Գնացքի ուղևորների համար միևնույն էր, թե այդ օրը ինչ տեղերով էին անցնում։ Հետաքրքրվում էին միայն, թե ո՞րն է հաջորդ կայարանը։ Իսկ հսկայական սարօզեկները դեռ կորած էին ձյան մեջ, անմարդ լայնարձակության անծայր թագավորության մեջ։ Թեև, իհարկե, արդեն նկատվում էին ձմռան նահանջի առաջին նշանները. լանջերին սևին էին տալիս տեղ-տեղ հալված, բայց ճաղատները, երևում էին ձորակների անհավասար պռունկները, բլուրների վրա բծեր էին փայլատակում, ամենուրեք ձյունը սկըսել էր իջնել հալոցքի խոնավ քամուց, որ տափաստանում զարթնել էր մարտ ամսվա սկզբից։ Սակայն արեգակը դեռ բանտված էր ցածրիկ, գորշ ու խիտ ամպերի ցանցում, որոնք արտաքուստ

չրիկ լին թվում։ Ձմեռը դեռ ապրում էր. կարող էր թաց ձյուն թափել, ի վերջո, կարող էր նաև ձյունամրրիկ բարձրացնել...

Եդիգեյը նստած էր սրտացավ տատիկի դիմաց և լուսամուտից դուրս էր նայում, երբեմն-երբեմն խոսք փոխանակելով նրա հետ։ Բայց Զարիպային չէր մոտենում։ Թող մենակ մնա,— մտածում էր Եդիգեյը,— թող կանգնի վագոնի լուսամուտի առջև, մտածի իր վիճակի մասին։ Միգուցե ներքին զգացողությունը մի բան հուշի նրան։ Ով գիտե, հիմա հիշում է անցյալ տարվա աշնան իրենց ուղևորությունը, երբ իրենք երկու ընտանիքով, երեխաների հետ նստեցին ճամփակից ապրանքատարը, մեկնեցին Ղումբել՝ սեխ ու ձմերուկ բերելու, և շատ երջանիկ էին, երեխաների համար այդ օրը անմոռանալի տոն էր։ Թվում էր, երեկ էր այդ ամենը։ Այն ժամանակ Եդիգեյն ու Աբութալիպը նստել էին վագոնի կիսաբաց դռների առջև, մաքուր օդին և զրուցում էին դեսից-դենից, իրենց շուրջը պտտվում էին երեխաները, նայում էին գնացքի կողքով ետ-ետ գնացող գետնին, իսկ կանայք՝ Զարիպան ու Ուկուբալան, նույնպես սրտամոտ ինչ-որ խոսում էին։ Հետո խանութներ մտան, զբոսնեցին կայարանամերձ պուրակում, կինո գնացին, մտան վարսավիրանոց։ Երեխաները պաղպաղակ կերան։ Բայց ամենածիծաղելին և ամենաողբերգականն այն էր, որ ոչ մի կերպ Էրմեկին չկարողացան համոզեն մազերը կտրել։ Չգիտես ինչու, վախենում էր, երբ գործիքը մոտեցնում էին գլխին։ Եվ հիշեց Եդիգեյը, թե ինչպես այդ պահին վարսավիրանոցի դռանը երևաց Աբութալիպը և թե ինչպես տղան նետվեց հոր կողմը, իսկ սա գրկեց, իրեն սեղմեց երեխային, կարծես բնազդաբար նրան պաշտպանելով սափրիչից, ապա ասաց, որ իրենք ուժ կհավաքեն, կգան մի ուրիշ անգամ, իսկ առայժմ թող այսպես յոլա գնա։ Թխագանգուր Էրմեկիկը մինչև օրս ման է գալիս մկրատի երես չտեսած մորամազով, այս անգամ, իհարկե, առանց հոր։

Եվ նորից, արդեն քանիերորդ անգամ Բորանլի Եդիգեյը աշխատում էր գլխի ընկնել, հասկանալ, իր համար բացատրել, թե ինչու Աբութալիպ Ղութթիբաևը մահացավ, չսպասելով իր գործի վճռին։ Եվ նորից հանգեց միակ բացատրելի եզրակացության. նրա սիրտը պայթել է լոկ երեխաների անհույս կարոտից։ Նրան սպանել է լոկ անջատումը, որի ծանրությանը կարող են հասու լինել քչերը և լոկ այն դառը գիտակցությունը, որ իր տղաները (իսկ առանց նրանց ինքը չէր պատկերացնում ոչ միայն ապրել-

շնչելը, այլև կյանքն առհասարակ), աշխարհից կտրված, մնացել են բախտի քմահաճույքին, անմարդ ու անջուր սարօղեկներում կորած ինչ-որ կիսակայարանում...

Շարունակ այս նույն բանն էր մտածում Եդիգեյը՝ կայարանամերձ պուրակի նստարանին Զարիպային սպասելիս։ Պայմանավորվել էին, որ Եդիգեյը այստեղ նստի-սպասի, մինչև որ Զարիպան կայարանապետից թղթերը վերցնի գա։

Կեսօր էր, բայց եղանակը լավ չէր։ Ցածր, ամպոտ երկինքը չէր պարզվում։ Վերևից երբեմն-երբեմն մի բան էր ընկնում դեմքին. չգիտես, ձյան փաթի՞լ էր թե ջրի կաթիլ։ Տափաստանից փչում էր խոնավ քամի՝ արդեն հալոցք ընկած հին ձյան բուրմունքով։ Եդիգեյը մրսում էր, մի տեսակ տհաճ էր։ Նա, ընդհանրապես առիթ լինելիս, սիրում էր ընկնել մարդկանց մեջ, կայարանային իրարանցման ու հրմշտոցի մեջ, ինքը, միևնույն է, հեռու չի գնում, շտապելու տեղ չունի և նայում էր գնացքներին, ինչպես են ուղևորները ցած թռչում, արագ վազում կառամատույցով, կինոյից ինչ-որ բան մտցնելով կյանքի մեջ, ահա ժամանեց գնացքը, և ահա չկա. մեկնեց գնացքը։

Այս անգամ նրան չէր հետաքրքրում այդ ամենը։ Նա զարմանում էր, թե որքան օտար են մարդկանց դեմքերը, որքան անդեմ, անտարբեր, հոգնած և որքան հեռու են իրարից... Մի կողմից էլ երաժշտությունը, որ ռադիոն մրսած խռխռացնում էր կայարանամերձ հրապարակով մեկ, առաջացնում էր թախիծ և միօրինակ, միապաղաղ վհատություն։ Սա ի՞նչ երաժշտություն է։ Շարունակ կրկնում են։ Ինչ-որ չէին լսվում հաղորդավարների վերամբարձ, ճոռոմ ձայները։ Կրկնում են միևնույն երաժշտությունը...

Արդեն անցել էր քանի րոպե, գուցեև ավելի, ինչ Զարիպան մտել էր կայարանի շենքը։ Եդիգեյն սկսեց անհանգստանալ։ Չնայած նրանք որոշակի պայմանավորվել էին, որ ինքը սպասելու է այս նստարանին, հենց այս նստարանին, որի վրա անցյալ անգամ նստել էին երեխաների ու Աբութալիպի հետ, պաղպաղակ էին կերել, Եդիգեյն ուզում էր գնալ նրա ետևից, տեսնել ի՞նչ է եղել։

Այդ պահին դռան մոտ տեսավ նրան և ակամա ցնցվեց. Զարիպան ներս ու դուրս հորդող բազմության մեջ աչքի էր ընկնում շրջապատից իր կատարյալ անջատվածությամբ։ Նրա դեմքը մահու չափ գունատ էր, նա քայլում էր ոչ մի տեղ չնայելով,

ինչպես երազում, ոչ ոքի և ոչնչի դեմ չառնելով, կարծես շուրջը ոչինչ գոյություն չուներ, քայլում էր ինչպես անապատում, կույրի նման գլուխը պահած ուղիղ և վզատ, շրթունքներն ամուր սեղմած։ Եղիգեյը տեսնելով, որ Զարիպան մոտենում է, տեղի կանգնեց։ Թվաց, թե նա մոտենում է անասելի դանդաղ, դարձյալ ինչպես երազում, այնքան որ վախենալի, վերացած էր նրա դանդաղ առաջացումը՝ դատարկված աչքերով։ Գուցե անցավ ողջ հավիտենություն, անտանելի սպասման ցուրտ, խավար տարածականության անդունդ, որտեղից նա գալիս էր ձեռքին այն թուղթը՝ Ղազանղապի ասած տպագիր ծրարով, և մոտենալով ասաց.

— Դու գիտեի՞ր։

Եղիգեյը դանդաղ իջեցրեց գլուխը։

Զարիպան նստեց նստարանին, դեմքը ձեռքերով ծածկեց և ամուր սեղմեց գլուխը, կարծես թե գլուխը կարող էր փլվել, փշուր-փշուր լինել, աղեխարշ լաց եղավ, ամբողջովին քաշվելով ինքն իր մեջ, իր կսկիծի և կորստի մեջ։ Նա լաց էր լինում կծկվելով, դառնալով տանջալից, ցնցվող կծիկ, հեռանում էր, խեղդվում, հետզհետե ավելի խոր թաղվում ինքն իր մեջ, իր անհուն վշտի մեջ, իսկ Եդիգեյը նստել էր կողքին և պատրաստ էր այն ժամանակվա նման, երբ տանում էին Աբութալիպին, լինել նրա տեղը, նրա փոխարեն և առանց տատանվելու կրել ուղածդ տանջանքները, միայն թե պաշտպաներ այդ կնոջը, փրկեր հարվածից։ Ընդ որում, նա հասկանում էր, որ ոչնչով չի կարող ոչ մխիթարել, ոչ էլ հանգստացնել նրան, մինչև որ չհանդարտվի դժբախտության առաջին շշմեցնող ալիքը։

Այսպես նրանք նստել էին մերձկայարանային պուրակի նստարանին։ Զարիպան լալիս էր, ջղաձիգ հեծկլտում և մի պահ, առանց նայելու, շպրտեց ճմռթված ծրարով չարաբաստիկ թուղթը։ Այլևս ո՞ւմ է հարկավոր այդ թուղթը, եթե նա ողջ չէ։ Բայց Եդիգեյը գետնից վերցրեց ծրարը, դրեց իր գրպանը։ Հետո հանեց թաշկինակը և զոռով բաց անելով նրա կծկված մատները, լացող Զարիպային ստիպեց վերցնել թաշկինակը, սրբել աչքերը։ Բայց դա չօգնեց։

Իսկ երաժշտությունը կարծես դիտմամբ ռադիոյից կայարանի վրա էր թափվում իբրև թաղման մեղեդի՝ անսահման տխուր։ Նրանց գլխին կախված էր մարտյան երկինքը՝ գորշ ու թաց։ Քամու պոռթկումները հոգի էին հանում։ Անցորդները խիթ նա-

յում էին այս զույգին՝ Զարիպային ու Ծղիգեյին և, իհարկե, մտածում էին, թե կռիվ են արել խեղճերը։ Երևի տղամարդը թունդ վիրավորել է կնոջը... Բայց, պարզվեց, որ բոլորը չէին այդպես մտածում։

— Լացե՛ք, բարի մարդիկ, լացե՛ք,— մոտիկ լսվեց ցավակցական ձայն։— Զրկվել ենք մեր հարազատ հորից։ Հիմա ինչպե՞ս է լինելու։

Ծղիգեյը բարձրացրեց գլուխը, տեսավ կողքից անցնող մի կնոջ, հին շինելը հագին, հենակներով։ Նրա մի ոտքը, մինչև կոնքոսկրը, կտրված էր։ Ծղիգեյը ճանաչում էր նրան։ Նախկին ճակատային էր և աշխատում էր կայարանի տոմսարկղում։ Տոմսավաճառը դառը լաց էր եղել և լաց լինելով էլ քայլում էր ու ասում. «Լացե՛ք, լացե՛ք։ Հիմա ինչպե՞ս է լինելու»։ Ու լաց լինելով անցավ. գնաց, սովորության համաձայն, բութ թխկացող հենակներն ուղղելով անբնականորեն բարձրացված անութների տակ, յուրաքանչյուր երկու թխկոցից հետո թփփացնելով միակ ոտքի զինվորական մաշված սապոգի ներբանը...

Ծղիգեյը նրա խոսքերի իմաստը հասկացավ, երբ տեսավ կայարանի մուտքի մոտ խմբված մարդկանց։ Գլուխները վեր բարձրացրած, նրանք նայում էին, թե ինչպես մի քանի մարդ, սանդուղքը դեմ տալով, դռան գլխին բարձր կախում էին Ստալինի մեծադիր, զինվորական դիմանկարը, սև, սգո ժապավեններով եզրված։

Հասկացավ նաև, թե ինչու է ռադիոն հաղորդում այդքան թախծալի երաժշտություն։ Ուրիշ ժամանակ լիներ, ինքն էլ կբարձրանար, կխառնվեր մարդկանց, կհետաքրքրվեր, թե ինչպես է այդ մեծ մարդուն նման բան պատահել, մարդ, առանց որի ոչ ոք չէր պատկերացնում երկրագնդի պտույտը, բայց այժմ բավական էր սեփական վիշտը։ Նա ոչ մի բառ չարտասանեց։ Իսկ Զարիպայի աչքին ոչինչ և ոչ ոք չէր գալիս...

Իսկ գնացքները գնում էին, ինչպես որ պարտավոր էին գնալ, ինչ էլ որ պատահած լիներ աշխարհում։ Կես ժամից պիտի երկաթուղով անցներ հեռընթաց գնացքը, տասնյոթերորդ համարի տակ։ Ինչպես բոլոր մարդատարները, գնացքը կանգ չէր առնում Բորանլիի նման կիսակայարաններում։ Այդ հաշվով էլ շարժվում էր։ Ով ո՞ւմ մտքով կանցներ, որ այս անգամ, տասնյոթերորդը ստիպված է լինելու կանգնել Բորանլիում։ Ծղիգեյն

այդպես էր մտքում գրել։ Ընդ որում, հաստատ ու հանգիստ։ Նա Զարիպային ասաց.

— Մենք շուտով պիտի վերադառնանք, Զարիպա։ Մնում է կես ժամ։ Հիմա դու պետք է մի լավ կշռադատես, թե ինչ ես անելու. ասելո՞ւ ես երեխաներին իրենց հոր մահվան մասին, թե առայժմ հետաձգելու ես։ Ես քեզ չեմ հանգստացնի և քեզ ոչինչ չեմ հուշի։ Դու ինքնուրույն մարդ ես։ Հիմա դու նրանց համար թե մայր ես, թե հայր։ Բայց այդ մասին դու պետք է մտածես, քանի դեռ ճանապարհին ենք։ Եթե որոշես առայժմ ոչինչ չասել երեխաներին, ուրեմն պիտի քեզ հավաքես։ Նրանց մոտ դու արցունք չպիտի թափես։ Կարո՞ղ ես, ուժ կունենա՞ս արդյոք։ Մենք էլ պիտի իմանանք, թե ինչպես պահենք մեզ նրանց ներկայությամբ։ Հասկանո՞ւմ ես։ Հարցն ինչպիսին է։

— Լավ, ես ամեն ինչ հասկանում եմ,— արցունքների միջից պատասխանեց Զարիպան։— Մինչև տեղ հասնենք, ես խելքս գլուխս կժողովեմ և կասեմ, թե ինչպես վարվենք, ես հիմա, ես կաշխատեմ տիրապետել ինձ։ Ես հիմա...

Գնացքում, վերադարձի ճանապարհին, ամեն ինչ առաջվա նման էր։ Մարդիկ մեկնում էին խմբով, ծխախոտի ծխի մեջ կորած, ծայրից ծայր ակոսելով հսկա երկիրը։

Զարիպան ու Եդիգեյը ընկել էին կուպեավոր վագոն։ Այստեղ ուղևորներն ավելի քիչ էին։ Նրանք տեղավորվեցին միջանցքում, ամենավերջին լուսամուտի մոտ, որպեսզի չխանգարեն ուրիշներին և խոսեն իրենց գործերի մասին։ Եդիգեյը նստել էր միջանցքի ծալովի աթոռակին, Զարիպան կանգնել էր կողքին, լուսամուտից նայում էր, չնայած Եդիգեյը առաջարկում էր իր տեղը։

— Այսպես ավելի լավ է,— ասաց Զարիպան։

Այժմ, էլի մեկ-մեկ հեծկլտալով, իր վրա ճնշում գործադրելով, հաղթահարելով գլխին թափված դժբախտությունը, լուսամուտին նայելով, Զարիպան աշխատում էր կենտրոնանալ, խորհել, խորհրդածել, թեկուզ սկզբի համար, իր նոր, որբևայրի վիճակի մասին։ Եթե առաջ հույս կար, թե այս ամենը մի գեղեցիկ օր կցնդի իբրև մղձավանջ, վաղ թե ուշ կվերադառնա Աբութալիպը, հո չէի՞ն կարող չբացահայտել թյուրիմացությունը, և իրենք նորից ամբողջ ընտանիքով կլինեին միասին, իսկ մնացյալը, ոչինչ, որքան էլ դժվար լիներ, միջոց կգտնեին ապրելու,

*հաղթահարելու և տղաներին դաստիարակելու, այժմ հույս չկար։ Մտածելու բան շատ ուներ...*

*Նույն բանն էր մտածում նաև Բորանլի Եդիգեյը, քանի որ չէր կարող չանհանգստանալ այդ ընտանիքի համար։ Այդպես էր եղել։ Բայց կարծում էր, որ այժմ ավելի, քան երբևէ, ինքը պետք է զուսպ և հանգիստ լինի և դրանով Զարիպային որոշ վստահություն ներշնչի։ Եդիգեյը չէր շտապեցնում նրան։ Եվ ճիշտ էր անում։ Կուշտ լաց լինելուց հետո Զարիպան ինքը խոսք բացեց.*

*— Առայժմ ես պետք է երեխաներից թաքցնեմ, որ իրենց հայրն այլևս չկա,— խոսեց նա խզվող ձայնով, կուլ տալով արցունքները։ Հիմա չեմ կարող։ Մանավանդ Էրմեկին... Ինչի՞ համար է այդքան կապվածությունը, ուղղակի սարսափելի է... Ինչպե՞ս զրկեմ նրանց երազանքից։ Ի՞նչ կլինեն նրանք։ Նրանք միայն դրանով են ապրում... Սպասում են, սպասում են, օր-օրի, ամեն վայրկյան... Ժամանակի ընթացքում հարկավոր կլինի մեկնել այստեղից, փոխել վայրը... Թող մի քիչ մեծանան։ Էրմեկի համար շատ եմ վախենում, գոնե թող մի քիչ մեծանա... Հետո կասեմ, այսինքն քիչ-քիչ իրենք էլ գլխի կընկնեն... Իսկ այժմ՝ ոչ, ուժ չունեմ... Թող առայժմ միայն ինքս... Նամակ կգրեմ իմ և նրա քույրերին ու եղբայրներին։ Այլևս մեզնից վախենալու բան չունեն։ Հույս ունեմ պատասխան կտան, կօգնեն, կգնանք... Հետո պարզ կլինի... Այժմ պարտավոր եմ մեծացնել Աբութալիպի երեխաներին, քանի որ նա այլևս չկա...*

*Այսպես խոսում-դատում էր նա, իսկ Բորանլի Եդիգեյը լուռ լսում էր, հասկանալով և ընդունելով նրա յուրաքանչյուր բառի իմաստը, հաստատ իմանալով, որ սա լոկ ամենաչնչին մասն է, ամենամակերեսային շերտը նրա զգացածի, որ պտտահողմի նման տակնուվրա է անում նրա մտքերը... Նման դեպքերում դժվար է ամեն ինչ խոսքով արտահայտել... Դրա համար էլ, աշխատելով դույզն ինչ չափով շրջանցել խոսակցության սահմանները, ասաց.*

*— Թերևս դու իրավացի ես, Զարիպա... Եթե ես չճանաչեի ձեր երեխաներին, կտատանվեի։ Բայց քո տեղը լինեի, ես էլ չէի համարձակվի ասել նրանց։ Հարկավոր է դեռ մի քիչ սպասել։ Իսկ մինչև քո ազգականները ձայն տան, մենք կանք ու կանք, կարող ես չկասկածել։ Ինչպես եղել ենք, այնպես էլ կմնանք։ Առաջվա նման շարունակիր աշխատել, երեխաները կմնան մե-*

րանց հետ։ Դու շատ լավ գիտես, որ Ոսկուբալյան իր երեխաների նման սիրում է նրանց։ Իսկ մնացյալը կյանքը ցույց կտա...

Այդ խոսակցության ժամանակ Զարիպան խոր հոգոց հանելով ավելացրեց.

— Տեսնո՞ւմ ես ինչ բան է կյանքը։ Այնքա՜ն սարսափելի, այնքա՜ն իմաստուն, և այդ ամենը փոխադարձորեն կապված՝ վերջ, սկիզբ, շարունակություն։ Եթե երեխաները չլինեին, Եդիգեյ, ազնիվ խոսք, չէի ուզի ապրել։ Նույնիսկ այդ քայլին կդիմեի։ Ինչի՞ս է պետք կյանքը։ Բայց երեխաները պարտավորեցնում են, ստիպում են, պահում են ինձ։ Եվ դրանում է փրկությունը, դրանում է շարունակությունը։ Որքան էլ դառը, ծանր, բայց շարունակություն է... Եվ հիմա սարսափով մտածում եմ, նույնիսկ ոչ թե այն, որ նրանք կիմանան ճշմարտությունը, մեկ է, մի օր կիմանան, այլ այն մասին, թե ինչ կլինի հետո։ Նրանց սիրտը միշտ արյուն է լցվելու, երբ հիշեն, թե ինչ է եկել իրենց հոր գլխին։ Եվ ամեն առիթով, դպրոց ընդունվելիս, աշխատանքի ընդունվելիս, թե որևէ գործով հասարակության առջև աչքի ընկնելիս, այդ ազգանունը նրանց ճանապարհը ամեն տեղ կփակի... Եվ հետո, որ մտածում եմ այդ մասին, ինձ թվում է, թե մեզ համար գոյություն ունի ինչ-որ ամենազոր արգելք։ Աբութալիպն ու ես միշտ խուսափում էինք այս խոսակցությունից։ Նա ինձ էր խնայում, ես՝ իրեն։ Նրա հետ ես վստահ էի, որ մեր տղաները կմեծանան իբրև լիարժեք մարդիկ։ Եվ այդ միտքը մեզ պահպանում էր քայքայումից, ձախորդություններից... Իսկ հիմա ես չգիտեմ... Ես չեմ կարող նրանց համար փոխարինել հորը... Որովհետև նա՝ նա էր... Նա ամեն ինչի կհասներ։ Նա կարծես ուզում էր փոխադրվել, վերամարմնավորվել իր երեխաների մեջ։ Եվ դրանից էլ մահացավ, որովհետև նրան պոկեցին իր երեխաներից...

Եդիգեյն ուշադիր լսում էր նրան։ Այն, որ Զարիպան իր նվիրական մտածումները արտահայտում է Եդիգեյին, իբրև ամենից ավելի մոտիկ մարդու, նրա մեջ անկեղծ ցանկություն էր առաջացնում որևէ կերպ արձագանքել, պաշտպանել, օգնել, բայց սեփական անզորությունը ճնշում էր նրան, առաջացնում խուլ, բռնադատված դժգոհություն։

Արդեն մոտենում էին Բորանլի կիսակայարանին։ Ծանոթ վայրեր, միջուղի, որտեղ Բորանլի Եդիգեյը արդեն շատ ամառներ ու ձմեռներ է աշխատել...

— Դու պատրաստվիր,— ասաց նա Զարիպային։— Հասնում ենք։ Ուրեմն որոշված է. երեխաներին առայժմ ոչ մի ծպտուն։ Լավ, այդպես էլ կանենք։ Դու աշխատիր չմատնես քեզ։ Իսկ այժմ քեզ կարգի բեր։ Եվ դուրս եկ հարթակ։ Կանգնիր դռան առջև։ Հենց որ գնացքը կանգնի, հանգիստ դուրս եկ վագոնից և սպասիր ինձ։ Ես էլ դուրս կգամ, կգնանք։

— Ի՞նչ ես ուզում անել։

— Ոչինչ։ Դու թող ինձ։ Վերջապես, դու իրավունք ունես գնացքից դուրս գալու։

Սովորականի նման, տասնյոթերորդ մարդատար գնացքը անկանգ գնում էր կիսակայարանով, ճիշտ է, սեմաֆորի մոտ մի քիչ թուլացնելով արագությունը։ Ճիշտ այդ պահին, Բորանլի մտնելու պահին, գնացքը կտրուկ արգելակվեց՝ առանցքատուփերի սոսկալի ճչոցով ու ճռինչով։ Բոլորը վախեցած թռան տեղներից։ Գնացքը լցվեց ճիչ ու սուլոցով։

— Ի՞նչ է պատահել։

— Արգելակիչ-բռնակն են քաշել։

— Ո՞վ։

— Որտե՞ղ։

— Կուպեավոր վագոնում։

Այդ ժամանակ Եդիգեյը դուռը բացեց Զարիպայի առջև, նա իջավ։ Իսկ ինքը սպասեց, մինչև հարթակ նետվեցին ուղեկցորդն ու հսկիչը։

— Կանգնի՛ր։ Ո՞վ քաշեց արգելակիչը։

— Ես,— պատասխանեց Բորանլի Եդիգեյը։

— Դու ո՞վ ես, ի՞նչ իրավունքով։

— Հարկավոր էր։

— Ինչպե՞ս թե հարկավոր էր։ Ուզում ես դատարա՞ն ընկնել։

— Ոչինչ։ Ձեր արձանագրության մեջ, որ ուզում եք դատարան կամ որտեղ որ մտադիր եք հանձնել, գրեք։ Ահա փաստաթղթերս։ Գրեք, որ նախկին ռազմաճակատային, ուղեմասային բանվոր Եդիգեյ Ջանգելդինը քաշել է արգելակիչ-բռնակը Բորանլի կիսակայարանում ընկեր Ստալինի մահվան օրը՝ իբրև սգո նշան։

— Ինչպե՞ս։ Մի՞թե Ստալինը մահացել է։

— Այո, ռադիոյով հաղորդեցին։ Ի՞նչ է, դուք ռադիո չե՞ք լսում։

— Դեհ, լավ, դա արդեն ուրիշ,— այլշահար թոթովեցին նր-

*րանք և այլևս Եդիգեյին չպահեցին։— Դեհ, եթե այդպես է, գնա։*

*Մի քանի րոպեից տասնյոթերորդ գնացքը շարունակեց ճանապարհը...*

Եվ դարձյալ գնացքները գնում էին արևելքից արևմուտք և արևմուտքից արևելք:

Իսկ երկաթուղու չուրջը, այս կողմերում, փռված էին միևնույն, ի սկզբանե անտառ, ամայի տարածություններ՝ Սարի-Օզեկներ, Դեղին անապատների միջնակները:

Սարի-Օզեկ—1 տիեզերակայանի մասին այն ժամանակ խոսք անգամ չկար այս կողմերում: Թերևս, այն ուրվագծվում էր լոկ տիեզերական թռիչքների ապագա ստեղծողների ուղեղում:

Իսկ գնացքները առաջվա նման գնում էին արևելքից արևմուտք և արևմուտքից արևելք...

*Հիսունհինգ թվականի ամառն ու աշունը ամենատանջալիցն էին Բորանլի Եդիգեյի կյանքում։ Ո՛չ դրանից առաջ, ո՛չ էլ հետո, երբեք, ո՛չ ճանապարհները փակող ձնահյուսքերը, ո՛չ սարոզեկյան շոգերն ու ջրի պակասությունը, ո՛չ ուրիշ ձախորդություններ ու դժբախտություններ, ո՛չ էլ նույնիսկ պատերազմը, իսկ նա հասել էր մինչև Քյոնիգսբերգ և հազար անգամ կարող էր սպանված, վիրավորված և խեղված լինել, Եդիգեյին այնքան տառապանք չեն բերել ու պատճառել, որքան այն օրերը...*

*Աֆանասի Իվանովիչ Ելիզարովը մի անգամ Եդիգեյին պատմել էր, թե ինչից են առաջանում փլուզումները, այդ անխուսափելի տեղաշարժերը, երբ, տեղից խախտվելով, ամբողջ լեռնալանջեր են փլվում, երբեմն նույնիսկ ամբողջ լեռն է կողքի թեքվում, ճեղքելով հողի թաքնված ստվարաշերտը։ Եվ զարհուրում են մարդիկ, թե ինչպիսի դժբախտություն է պահված եղել ոտքերի տակ։ Փլուզումների վտանգավորությունն այն է, որ աղետը հասնում է աննշմար, օրեցօր, որովհետև գետնաջրերը ներսից աստիճանաբար ողողում են ապարների հիմքը, և բավական է գետնի թեկուզ ոչ մեծ ցնցում, ամպրոպ կամ ուժեղ տեղատարափ, որպեսզի լեռը դանդաղորեն և անշտապ սողա ներքև։ Սովորական փլուզումը տեղի է ունենում հանկարծ ու միանգամից։ Փլուզումը սողում է ահեղ և չկա նրան կասեցնող ոչ մի ուժ։*

*Նման բան կարող է պատահել նաև մարդուն, երբ նա մնում է դեմհանդիման իր անզսպելի հակասությունների հետ, պատե-*

պատ է զարկվում, մորմոքում է սիրտը, բայց չի համարձակվում որևէ մեկին խոստովանել, որովհետև աշխարհում ոչ ոք ի վիճակի չի ոչ օգնելու իրեն, ոչ էլ՝ հասկանալու։ Նա այդ մասին գիտի, դա ահաբեկում է նրան։ Եվ դա շարժվում է իր վրա...

Առաջին անգամ Եղիգեյը իր մեջ այդպիսի տեղաշարժ զգաց և հստակ գիտակցեց դրա նշանակությունը Զարիպայի հետ Կումբել գնալուց երկու ամիս հետո, երբ նորից գործով մեկնեց այնտեղ։ Զարիպային խոստացել էր մտնել փոստ, հետաքրքրվել, նամակ ունի՞ արդյոք, և եթե չունի, ուղարկել երեք հեռագիր երեք տարբեր հասցեներով, որոնք տվել էր Զարիպան։ Մինչև այժմ նրա ոչ մի նամակին պատասխան չէր ստացվել ազգականներից։ Այժմ պարզապես ուզում էր իմանալ՝ նրանք ստացե՞լ են այդ նամակները թե ոչ, հեռագրում այդպես էլ գրել էր. «խնդրում եմ հաղորդել՝ ստացե՞լ եք արդյոք նամակները. այո՞ թե ոչ, նամակներին պատասխանելը պարտադիր չէ»։ Ուրեմն եղբայրներն ու քույրերը չէին ցանկանում նույնիսկ փոստով կապվել Աբութալիպի ընտանիքին։

Եղիգեյը դուրս եկավ լուսադեմին, Բորանլի Կարանարին հեծած, որպեսզի երեկոյան վերադառնա։

Իհարկե, եթե ճամփա էր ընկնում մենակ, առանց բեռի, ուղածը ծանոթ մեքենավարը ուրախությամբ նրան տեղ էր տալիս կողքին և մեկուկես ժամից հասցնում Կումբել։ Սակայն Եղիգեյը Աբութալիպի երեխաների պատճառով խուսափում էր անցնող գնացքներով ճամփա գնալուց։ Մեծն էլ, փոքրն էլ, ամբողջ օրը երկուսով երկաթուղու մոտ սպասում էին հորը։ Նրանց խաղերում, խոսակցություններում, հանելուկներում, նկարներում, նրանց ամբողջ միամիտ, մանկական աշխարհում հորն սպասելը կյանքի նպատակ էր։ Եվ, անտարակույս, ամենահեղինակավոր դեմքը նրանց համար այդ շրջանում Եղիգեյ քեռին էր, որ նրանց խորին համոզմամբ, պետք է ամեն ինչ իմանար և օգներ իրենց։

Եղիգեյն էլ էր հասկանում, որ առանց իրեն երեխաներն ավելի խեղճ և ավելի որբ կզգային, դրա համար ամբողջ ազատ ժամանակն աշխատում էր որևէ բանով զբաղեցնել նրանց, քիչ-քիչ շեղել ապարդյուն սպասումներից։ Մտքում պահելով Աբութալիպի կտակը՝ որդիներին պատմել ծովի մասին, նա նորանոր մանրամասնություններ էր հիշում իր մանկությունից ու ձկնորսական երիտասարդությունից, Արալյան ծովի մասին հազարավոր եղելություններ ու մտացածին բաներ։ Այդ պատմություն-

ները որքան կարողանում էր հարմարեցնում էր մանկական ընկալմանը և ամեն անգամ զարմանում էր տղաների ընդունակության, ուշիմության, նրբազգացության, հիշողության վրա։ Եվ դրա համար շատ գոհ էր. Նրանցում արտահայտվում էր հոր դաստիարակությունը։ Որևէ բան պատմելիս Եդիգեյը նախ կողմնորոշվում էր փոքրիկ Էրմեկով։ Բայց Էրմեկը բոլորովին չէր զիջում մեծին և բոլոր իր չորս ունկնդիրների՝ երկու տան զավակների մեջ, Եդիգեյի համար ամենահարազատը նա էր, թեև Եդիգեյն աշխատում էր նրան չառանձնացնել մյուսներից։ Պարզվեց, որ Էրմեկն իր ամենաուշադիր ունկնդիրն է, իր պատմությունների լավագույն մեկնաբանողը։ Ինչի մասին էլ խոսք լիներ, որևէ իրադարձության, գործողության որևէ հետաքրքրական շրջադարձ, նա կապում էր հոր հետ։ Հայրը ամենուրեք և ամեն ինչում ներկա էր։ Ասենք, տեղի է ունենում այսպիսի խոսակցություն։

— Արալյան ծովի ափերին կան լճեր, որտեղ աճում են խիտ եղեգներ։ Իսկ այդ եղեգների մեջ թաքնվում են հրացանավոր որսորդներ։ Ահա ամռանը բադերը թռչում են դեպի Արալյան ծով։ Ձմռանը նրանք ապրել են ուրիշ, ավելի տաք ծովերում, և հենց որ հալչում են Արալի սառույցները, նրանք ինչքան ուժ ունեն գիշեր ու զոր թևին են տալիս, թռչում այնտեղ, որովհետև շատ են կարոտել այդ տեղերը։ Նրանք թռչում են մեծ երամով, ուզում են լող տալ, մաքրվել ճանապարհի փոշուց, թավալվել ջրերում, և ավելի ու ավելի են մոտենում ափին, իսկ այդ պահին, թըխկ-թրա՜խկ, եղեգներից ծուխ ու բոց է բարձրանում։ Որսորդներն են կրակում։ Բադերը կռնչալով ջուրն են թափվում։ Մի քանիսն էլ թռչում են ծովի մեջտեղը և չեն իմանում, ինչ անեն, որտե՞ղ ապրեն հիմա։ Եվ պտտվում են ալիքների վրա, կանչում են։ Չէ՞ որ նրանք սովոր են լող տալ ափի մոտ։ Բայց վախենում են մոտենալ ափերին։

— Եդիգեյ քեռի, բայց չէ՞ որ մի բադիկն իսկույն ետ է թռել այնտեղ, որտեղից եկել է։

— Իսկ ինչո՞ւ է ետ թռել։

— Ինչպե՞ս թե, ախր իմ պապիկան ծովային է այնտեղ, լողում է մեծ նավի վրա։ Դու էիր ասում, Եդիգեյ քեռի։

— Ճիշտ է, իհարկե,— հիշում է Եդիգեյը, ընկնելով անհարմար վիճակի մեջ։— Հետո՞։

— Իսկ այդ բադիկը թռել-հասել է իմ պապիկային, ասել է. որ-

սորդները թաքնվել են եղեգների մեջ և կրակել են իրենց վրա։ Եվ որ նրանք ապրելու տեղ չունեն։

— Այո, այո, դու ճիշտ ես։

— Իսկ պապիկան այդ բադիկին ասել է, որ ինքը շուտով կգա, որ կիսակայարանում ինքը երկու տղա ունի՝ Դաուլը և Էրմեկը, և դեռ Եդիգեյ քեռի էլ կա։ Եվ հենց որ ինքը գա, մենք բոլորս կհավաքվենք կգնանք Արալյան ծով և եղեգների միջից կքշենք որսորդներին, որ նրանք բադերի վրա չկրակեն։ Նորից բադերը լավ կզգան Արալյան ծովում... Կլողան ու կթավալվեն ջրում, այ այսպես...

Երբ պատմությունները վերջանում էին, Բորանլի Եդիգեյն սկսում էր քարերով գուշակությունը։ Այժմ նա մշտապես գրպանում պահում էր քառասունմեկ քար, ամեն մեկը մի մեծ սիսեռի մեծության։ Գուշակման այդ վաղեմի ձևը ուներ իր բարդ սիմվոլիկան, իր հնավուրց տերմինաբանությունը։ Երբ Եդիգեյը դասավորում էր մանր քարերը՝ խնդրելով և հմայելով, որ նրանք անկեղծ և ճշմարիտ պատասխան տան, ո՞վ է արդյոք Աբութալիպ անունով մարդը, որտե՞ղ է նա, և ճանապարհն արդյոք ե՞րբ է բացվելու նրա ոտքի տակ և ինչ կա նրա մտքում, և ինչ կա նրա հոգում, երեխաները կենտրոնացած լսում էին, աչք դառած նայում, թե ինչպես են դասավորվում քարերը։ Մի անգամ Եդիգեյը անկյունի ետևում լսեց կամացուկ խոսակցություն, համարյա շշնջոց։ Գաղտագողի նայեց։ Աբութալիպի երեխաներն էին։ Էրմեկն այժմ ինքն էր գուշակություն անում քարերով։ Քարերը դասավորելով, ինչպես որ ձեռքից գալիս էր, նա յուրաքանչյուր քար մոտեցնում էր ճակատին, մոտեցնում էր շրթունքներին և յուրաքանչյուր քարի հավատացնում.

— Ես քեզ էլ եմ սիրում։ Դու էլ շատ խելոք, լավ քարի՛կ ես։ Դու մի՛ սխալվիր, մի՛ սայթաքիր, խոսիր անկեղծ և ճշմարիտ, ինչպես Եդիգեյ քեռու քարերն են խոսում։— Հետո նա սկսեց մեծ եղբորը բացատրել դասավորության նշանակությունը, ճիշտ և ճիշտ կրկնելով Եդիգեյի խոսվածքը։— Այ, տեսնում ես, Դաուլ, ընդհանուր պատկերը վատ չի, ամենևին վատ չի։ Այ, սա ճանապարհ է։ Ճանապարհը մի քիչ մշուշոտ է։ Ինչ-որ մշուշ է կանգնած։ Բայց դա ոչինչ։ Եդիգեյ քեռին ասում է, որ դա ճամփորդական խառնաշփոթություն է։ Ճանապարհն առանց դրա չի լինի։ Հայրիկը շարունակ պատրաստվում է ճանապարհ ընկնելու Ուզում է նստել թամբին, բայց թամբակալը թուլացել է մի քիչ։

Այ, նայիր, թամբակալը չի ձգվում։ Թամբակալը պետք է ամուր ձգել։ Ուրեմն մի բան դեռ ուշացնում է հայրիկին, Դաուլ։ Ստիպված ենք սպասելու։ Իսկ հիմա տեսնենք, ի՞նչ կա աջ կողին, ի՞նչ կա ձախ կողին։ Կողերը անվնաս են։ Դա լավ է։ Իսկ ի՞նչ կա ճակատին։ Ճակատին մի քիչ մռայլություն կա։ Դաուլ, նա շատ է մտածում մեր մասին։ Սրտին ի՞նչ կա։ Տեսնում ե՞ս, սրտին այս քարն է, սրտում ցավ ու կարոտ կա. Նա շատ է կարոտել տանը։ Ճանապարհը շո՞ւտ կլինի։ Շուտ կլինի։ Բայց ձիու ետևի ոտքի պայտը շարժվում է։ Ուրեմն պետք է նորից պայտել։ Ուրեմն հարկավոր է էլի սպասել։ Իսկ ի՞նչ կա խուրջինում։ Օ՜հ, խուրջինում գնումներ կան՝ շուկայից։ Իսկ հիմա՝ աստղերը ինչպես կլինեն, տեսնենք բարեհաճ կլինե՞ն։ Այ, տեսնում ես, ահա Ոսկյա ձիապարան աստղն է։ Նրանից ոտնահետքեր են դուրս գալիս։ Դրանք դեռ այնքան պարզ չեն։ Նշանակում է, շուտով պիտի արձակի ձիուն և ճանապարհ ընկնի...

Բորանլի Եդիգեյն աննկատ հեռացավ, հուզված, դառնացած և զարմացած տեսածից։ Այդ օրվանից նա սկսեց խուսափել քարագուշակությունից...

Բայց երեխաները երեխաներ, նրանց դեռ կարելի է որևէ կերպ սփոփել, հուսադրել, և հակառակ դեպքում հոգին մեղք անելով խաբել որոշ ժամանակ։ Բայց Բորանլի Եդիգեյի հոգում բուն էր դրել մի ուրիշ ցավ։ Այն հանգամանքներում և իրադարձությունների այն շղթայում դա այդպես էլ պիտի լիներ, պիտի փլուզումի նման տեղից շարժվեր, և նա չկարողացավ կասեցնել այդ...

Եդիգեյը շատ էր մտածում Զարիպայի մասին։ Չնայած նրանց միջև բացի կենցաղային, սովորական խոսակցություններից, ուրիշ բան չի եղել, և չնայած Զարիպան երբեք, ոչ մի առիթ չի տվել, բայց Եդիգեյը շարունակ մտածում էր նրա մասին։ Ոչ թե պարզապես խղճում էր նրան, ինչպես կխղճար որևէ մեկը, ոչ թե պարզապես կարեկցում էր նրան, որովհետև ամեն ինչ եղել էր իր աչքի առջև և գիտեր նրան պատած ցավը, ո՛չ, այդ դեպքում խոսել անգամ չարժեր։ Նա Զարիպայի մասին մտածում էր սիրով, աննահանջ և ներքին պատրաստակամությամբ ցանկանում էր նրա համար դառնալ մի մարդ, որին Զարիպան կարողանա ապավինել ամբողջ էությամբ։ Եվ երջանիկ կլիներ, եթե իմանար, որ նա, ասենք, հենց այդպես էլ ընդունում է, որ

Նա աշխարհում Բարանլի Եղիգեյից ավելի հավատարիմ, ավելի սիրելի մարդ չունի։

Դա տանջալից բան էր. ցույց տալ, որ առանձնապես որևէ զգացում չի տածում նրա նկատմամբ, որ իրենց միջև ոչինչ չկա և չի կարող լինել...

Ղումբեյ գնալիս, ամբողջ ճանապարհին գլուխը լիքն էր այդ խորհրդածություններով։ Տանջվում, տվայտում էր։ Խառն էին մտքերը։ Հոգեկան արտառոց, փոփոխական վիճակ էր ապրում. մեկ, ասես սպասում էր մոտալուտ տոնի, մեկ՝ անխուսափելի հիվանդության։ Եվ այդ հոգեվիճակում նրան երբեմն թվում էր, թե նորից գտնվում է ծովում։ Ծովում մարդ միշտ էլ իրեն ուրիշ կերպ է զգում, ոչ այնպես, ինչպես ցամաքում, եթե անգամ շուրջբոլորը հանդարտ է և որևէ վտանգ չի սպառնում։ Որքան էլ հաճելի, որքան էլ ուրախալի է երբեմն ակոսել ալիքները, թեկուզև զբաղված լինելով հարկավոր գործով, նավարկությամբ, որքան էլ գեղեցիկ լինեն մայրամուտների և արշալույսների անդրադարձումները ջրի հարթության վրա, միևնույն է, հարկավոր է վերադառնալ ափ, անպայման ափ՝ ա՛յս թե ա՛յն ափը, կարևոր չէ։ Հավիտենապես չես նավարկելու։ Իսկ ափին սպասում է բոլորովին ուրիշ կյանք։ Ծովը ժամանակավոր է, ցամաքը՝ մշտական։ Կամ եթե սարսափելի է ափի մոտ կանգ առնել, հարկավոր է կղզի գտնել, իջնել և իմանալ, որ սա քո տեղն է և այստեղ ես լինելու առմիշտ։ Նույնիսկ պատկերացրեց. գտնվեր այդպիսի մի կղզի, Զարիպային ու երեխաներին տաներ այնտեղ և ապրեր այնտեղ։ Երեխաներին կվարժեցներ ծովին, և ինքն էլ մինչև կյանքի վերջը կմնար կղզում, ծովի մեջտեղում, չգանգատվելով բախտից, այլ միայն գոհանալով։ Միայն իմանաս, որ ուզած ժամանակ կարող ես տեսնել նրան և նրա համար կարող ես լինել անհրաժեշտ, ցանկալի, ամենահարազատ մարդը...

Սակայն տեղնուտեղը ամաչում էր ինքն իրենից այդպիսի ցանկությունների համար։ Նա զգաց, ինչպես կարմիր ներկվեց դեմքը, չնայած հարյուրավոր կիլոմետրերի վրա մարդու շունչ անգամ չկար։ Տղայի նման երազանքի մեջ է ընկել, կղզի է ուզում, իսկ ինչո՞ւ, հարց է տրվում, ինչի՞ համար։ Այդ ինչպե՞ս է համարձակվում անրջել, երբ ոտքով, ձեռքով, ամբողջ կյանքով կապված է ընտանիքին, աշխատանքին, երկաթուղուն, վերջապես սարօզեկներին, որոնց միաձուլվել է հոգով ու մարմնով, ինքն էլ չնկատելով... Բացի այդ, իսկ ինքը պե՞տք է Զարիպա-

յին թեկուզև վատ է նրա վիճակը, բայց ինքն ի՞նչ իրավունք ունի այդպիսի բան երևակայելու։ Ինչո՞ւ պիտի ինքը սիրելի լինի նրան։ Տղաների հարցում չէր կասկածում, նրանց համար կյանքը չէր խնայում և նրանք ձգվում էին իր կողմը։ Իսկ ինչո՞ւ պիտի Զարիպան ցանկանա այդ։ Այսինքն, ի՞նչ իրավունքով է այդպես մտածում, երբ կյանքը վաղուց ի վեր իրեն ամուր կապել է այս վայրերին, որտեղ հաստատ կմնա մինչև կյանքի վերջը...

Բորանլի Կարանարը գնում էր ծանոթ տորոված արահետով և իմանալով, թե դեռ որքան ճանապարհ է մնում, առանց տիրոջ ստիպումների գնում էր սնգսնգան վազքով, մռնչալով և ծանր տնքալով, անդադրում քայլքով կտրելով սարօզեկյան խորդուբորդ տարածությունը՝ գարնանային լանջերով, ձորակներով, երբեմնի աղի լճակի ցամաք ափով։ Իսկ Եդիգեյը, ուղտին նստած, տառապանքով անձնատուր էր եղել իր խոհերին։ Եվ այնքան էր տարվել այդ հակասական զգացմունքներով, որ տեղ չէր գտնում իր համար, և հոգին ապաստան չէր գտնում Սարի-օզեկների այս անչափելի տարածության մեջ... Այնքան ուժից վեր էր...

Այդ տրամադրությամբ հասավ Կումբելի։ Իհարկե, ուզում էր, որ Զարիպան վերջապես ազգականներից ստանա իր նամակների պատասխանը, բայց այն մտքից, որ ազգականները կարող են գալ որբացած ընտանիքի ետևից և տանել իրենց կողմերը կամ կանչել իրենց մոտ, Եդիգեյը շատ վատ էր զգում։ Փոստատան ցպահանջ նամակների փոքրիկ լուսամուտից նորից պատասխանեցին, որ Զարիպա Կութթիբաևի անունով ոչ մի նամակ չի եկել։ Եվ Եդիգեյն իր համար անսպասելի ուրախացավ։ Նույնիսկ ուղեղում փայլատակեց վատ, անխիղճ, վայրենի միտք. «Շատ էլ լավ է, որ չկա»։ Այնուհետև խնամքով կատարեց նրա հանձնարարությունը. երեք տարբեր հասցեներով ուղարկեց երեք հեռագիր։ Վերադարձավ իրիկնադեմին...

Մինչ այս, մինչ այն, գարունը գնաց, եկավ ամառը։ Խամրեցին խանձվեցին սարօզեկները։ Խաղաղ երազի նման չքացավ կանաչ խոտը։ Դեղին անապատը նորից դեղնեց։ Շիկացավ օդը, օրեցօր մոտենում էր շոգը։ Իսկ Կութթիբաևների ազգականներից առաջվա նման ձենձուն չկար։ Չէ, նրանք պատասխան չտվին ոչ նամակներին, ոչ էլ հեռագրերին։ Իսկ գնացքներն անցնում էին Բորանլի կիսակայարանով, և կյանքն էլ հոսում էր իր հունով...

Զարիպան արդեն պատասխանի չէր սպասում, հասկացավ,

*որ իմաստ չունի հույս դնել հարազատների օգնությանը, որ այլևս չարժի նրանց ծանրաբեռնել նամակներով և օգնության կոչերով... Եվ, համոզվելով դրանում, կրկին ընկնում էր լուռ հուսահատության գիրկը. Հիմա որտե՞ղ շարժվի, ի՞նչ անի... Երեխաներին ինչպե՞ս ասի նրանց հոր մասին, ինչի՞ց սկսի, ինչպե՞ս վերադասավորի խորտակված կյանքը։ Դեռևս պատասխան չէր գտնում։*

*Եդիգեյը թերևս Զարիպայից պակաս չէր անհանգստանում երեխաների կյանքով։ Նրանց համար անհանգստացած էին բոլոր բորանլիցիները, բայց Եդիգեյը գիտեր, թե այդ ընտանիքի ողբերգությունն ինչ ընթացք ունեցավ անձամբ իր համար։ Նա արդեն չէր կարողանում իրեն անջատել նրանցից։ Շարունակ ապրում էր այդ երեխաների և Զարիպայի ճակատագրով։ Եվ նույնպես լարված սպասում էր, թե ինչ է լինելու և նույնպես լուռ վհատության մեջ էր, թե նրանք ինչ պիտի անեն հիմա, այս ամենը բավական չէր, դեռ շարունակ մտածում էր, անդադրում, տանջալից մտածում էր, թե ի՞նչ անի, ինչպես հաշտվի ինքն իր հետ, ինչպես իր մեջ խեղդի նրան կանչող ձայնը։ Ոչ, ինքն էլ պատասխան չէր գտնում... Մտքով անգամ երբևիցե չէր անցնի, թե կյանքում այսպիսի բան կարող է գալ գլխին... Եդիգեյը շատ անգամ էր մտադրվում խոստովանել նրան, անկեղծ ու շիտակ ասել, թե որքան է սիրում նրան և պատրաստ է նրա բոլոր դժվարությունները առնել իր վրա, որովհետև իր կյանքը չի պատկերացնում նրանցից անջատ, բայց ինչպե՞ս ասեր, ի՞նչ ձևով։ Իսկ մի՞թե նա կհասկանա իրեն։ Նրա խեղճ գլխին թափված ցավ ու փորձանքը հերիք չի, դեռ ինքն էլ մեջ է ընկել իր զգացմունքներով։ Ո՞ւմ է հարկավոր։ Շարունակ այս մտքերով տարված՝ Եդիգեյը մռայլվում էր, գլուխը կորցնում, քիչ ջանք չէր թափում, որպեսզի արտաքուստ մնար այնպես, ինչպես հարկավոր էր լինել մարդկանց առջև։*

*Մի անգամ, համենայն դեպս, այդպիսի ակնարկ արեց։ Վերադառնում էր կայարանամերձի շրջագայությունից, երբ դեռևս հեռվից նկատեց, որ Զարիպան դույլերով գնում է ցիստեռնի մոտ։ Կարծես մեկը Եդիգեյին հրեց նրա կողմը։ Ոչ թե առիթը հարմար էր, պարզապես, երբ դույլերը վերցնելու։ Համարյա օրընդմեջ, երբեմն նույնիսկ ամեն օր նրանք միասին աշխատում էին գծերի վրա, և որքան կուզեին, կարող էին խոսել։ Բայց հենց այդ պահին Եդիգեյն անդիմադրելի ցանկություն ունեցավ ան-*

հապաղ մոտենալու նրան և ասելու այն, ինչ արդեն ուզում էր դուրս հորդել։ Նա նույնիսկ տաքացած գլխով մտածում էր, որ այդպես ավելի լավ է, թող չհասկանա, թող մերժի, բայց գոնե կմարի, կմեղմանա հոգու կրակը... Զարիպան չէր տեսել և չէր լսել նրա մոտենալը։ Մեջքը նրա կողմը արած՝ կանգնել էր ցիստեռնի բաց ծորակի առջև։ Մի դույլն արդեն լցված էր և դրված էր մի կողմ, մյուս դույլը ջրի հոսքի տակ էր և պռնկեպռունկ լցվել էր։ Ծորակը մինչև վերջ բաց էր։ Ջուրը պղպջում էր, ծփում, թափվում էր դույլից, շուրջը ջրափոսեր գոյացնում, իսկ Զարիպան կարծես ոչինչ չէր նկատում, ուսը ցիստեռնին հենած, վհատ կանգնած էր։ Զարիպան չթե նույն զգեստով էր, որով անցյալ ամառ դիմավորում էր հորդ տեղատարափը։ Եղիգեյը նայում էր քունքի և ականջի ետևում ոլորվող նրա մազերին, ախր, երմեկը նրան էր քաշել իր գանգուրներով, նայում էր նիհարած դեմքին, բարակած պարանոցին, կախ ընկած ուսերին և կոնքին գցած ձեռքին։ Ջրի խշշո՞ցն էր արդյոք հմայել նրան, հիշեցնելով Յոթգետիկի գետակներն ու առվակները, թե պարզապես դառը խորհրդածությունններն էին պաշարել նրան, միայն աստծուն է հայտնի։ Բայց Եդիգեյի սիրտը նեղվեց նրա տեսքից, որովհետև Զարիպայի մեջ ամեն ինչ անսահմանորեն հարազատ էր նրան և ուզում էր մոտ գալ, փաղաքշել, սատարել, պաշտպանել նրան ամենայն ինչից։ Բայց այդպես վարվել չէր կարելի։ Նա լուռ լռելյայն փակեց ծորակը, կանգնեցրեց թափվող ջուրը։ Զարիպան նրան նայեց առանց զարմանքի, երկար թափանցող հայացքով, կարծես Եդիգեյը գտնվում էր ոչ թե կողքին, այլ իրենից շատ հեռու։

— Քեզ ի՞նչ է պատահել,— թոթովեց նա կարեկից։

Զարիպան չպատասխանեց, միայն բերանի անկյուններով քմծիծաղեց և հոնքերն անորոշ բարձրացրեց, դրանով ասելով,— ոչինչ, հենց այնպես...

— Վատ ե՞ս, ի՞նչ է,— նորից հարցրեց Եդիգեյը։

— Վատ եմ,— խոստովանեց նա, խոր հառաչանքով։

Եդիգեյը շփոթված ուսերը վեր բարձրացրեց։

— Ինչո՞ւ ես այդպես հալումաշ լինում,— խղճալով հանդիմանեց Զարիպային, չնայած այդ չէր ուզում ասել։— Որքա՞ն կարելի է։ Դրանով հո չե՞ս օգնի։ Մեզ համար էլ ծանր է (ուզում էր ասել՝ ինձ համար) նայել քեզ, երեխաներին, մենք էլ ենք տանջվում։ Հասկացիր։ Հարկավոր է մի բան մտածել,— ասաց

նա աշխատելով ընտրել բառերը, որոնք, ինչպես մտադրվել էր, պետք է ասեր նրան, թե աշխարհում չկա մեկը, որ իրենից շատ անհանգստանա և սիրի նրան։— Ինքդ տես։ Չես պատասխանում քո նամակներին, ասված նրանց հետ, հո չեք կորչի։ Դու միայն մի ընկճվիր։ Ախր, քեզ հետ ենք մենք (ուզում էր ասել՝ ես)։ Քիչ-քիչ ամեն ինչ կարգի կընկնի։ Ինչո՞ւ ես ուզում մեկնել այստեղից։ Այստեղ բոլորս հարազատների նման ենք։ Իսկ ես, ինքդ էլ գիտես, որ առանց քո երեխաների ոչ մի օր չեմ եղել։— Եվ կանգ առավ, որովհետև սիրտը բաց էր արել այնքան, որքան թույլ էր տալիս իր վիճակը։

— Ես ամեն ինչ հասկանում եմ, Եղիկե,— պատասխանեց Ջարիպան։— Իհարկե, շնորհակալ ենք։ Ես գիտեմ, որ մեզ աչքաթող չեք անի։ Բայց մեզ հարկավոր է այստեղից դուրս գալ։ Որպեսզի երեխաները մոռանան, թե այստեղ ինչ է տեղի ունեցել, ինչպես է եղել։ Եվ այն ժամանակ ես պետք է ասեմ ճշմարտությունը։ Դու էլ լավ գիտես, որ այսպես շարունակվել չի կարող… Անընդհատ մտածում եմ, ինչպես անել…

— Այդ այդպես է,— ստիպված եղավ համաձայնել Եղիկեյը.— Բայց դու մի՛ շտապիր։ Էլի մտածիր։ Ո՞ւր գնաս մի մատ երեխաների հետ։ Իսկ ես որ մտածում եմ, թե ինչպե՞ս պիտի մնամ առանց ձեզ, սարսափում եմ…

Իրոք, Եղիգեյը շատ էր վախենում նրա և երեխաների համար, և վաղվա օրից դենը տեսնել չէր ուզում, թեև նույնպես հասկանում էր, որ այդպես երկար շարունակվել չէր կարող։ Իսկ մի քանի օրից եղավ ևս մի դեպք, որ ոտքից գլուխ մատնեց նրան և դրանից հետո նա երկար զղջաց, տանջվեց, չգտնելով ոչ մի արդարացում։

Ղումբել կատարած այն նշանավոր ուղևորությունից հետո, երբ Էրմեկը սափրիչից վախենալով թույլ չտվեց մազերը կտրեն, անցել էին շատ ամիսներ։ Տղան այդպես էլ մնացել էր, ամբողջովին սև գանգուրների մեջ կորած, և չնայած ազատ աճած գանգուրները զարդարում էին նրան, բայց վաղուց ժամանակն էր խուզելու այդ համառ վախկոտիկի գլուխը։ Եղիգեյը շարունակ առիթ էր որոնում քիթը խրելու տղայի փափուկ գանգուրների մեջ, համբուրում էր, շնչում մանկական հոտը։ Բայց Էրմեկի մազերն արդեն ուսերին էին հասնում և խանգարում էին վազելու ու խաղալու ժամանակ։ Պիտի որ շատ անսովոր, խորթ ու անհասկանալի լիներ տղայի համար մազ կտրելու անհրաժեշ-

սությունը։ Դրա համար էլ նա ոչ մեկին մոտ չէր թողնում։ Բայց մի օր Ղազանղալը համոզել էր նրան, նույնիսկ մի քիչ վախեցրել, թե այծերը չեն սիրում երկարամազերին, նրանց հարու են տալիս։

Հետո Զարիպան պատմեց, թե ինչպես են խուզել էրմեկին։ Ղազանղալն ստիպված է եղել ուժ գործադրել։ Տղային առել է զույգ ազդրերի մեջ և աշխատեցրել է մեքենան։ Լացուկոծը բռնել է ամբողջ կիսակայարանը։ Իսկ երբ խուզել-վերջացրել է, բարեսիրտ Բուկեյը երեխային հանգստացնելու համար հայելի է տվել ձեռքը, իբր՝ վերցրու, տես ինչ լավիկն ես դարձել։ Տղան նայել է, իրեն չի ճանաչել, ձայնը նորից գլուխն է գցել։ Այդպես, կոկորդով մեկ ճղղացող էրմեկին Զարիպան հեռացրել է Ղազանղալի բակից։ Այդ պահին արահետի վրա երևացել է Եդիգեյը։ Մաքուր խուզված գլխով էրմեկը բոլորովին նման չէր ինքն իրեն. մերկացած, բարակ վզով, ցցված ականջներով, նա պոկվեց մոր ձեռքերից, լացով նետվեց Եդիգեյի կողմը։

— Եդիգեյ քեռի, տես ինչ են արել ինձ։

Եթե առաջ Եդիգեյին ասեին, թե երբևիցե կարող է իր մեջ այդպիսի բան տեղի ունենալ, չէր հավատա։ Նա երեխային գիրկն առավ, սեղմեց կրծքին, ամբողջ էությամբ զգալով նրա ցավը, նրա անզորությունը, նրա գանգատն ու վստահությունը, կարծես դա պատահել էր իր անձին, և սկսեց համբուրել երեխային և դառնությունից ու քնքշությունից խզվող ձայնով ասաց. ինքն էլ կարգին չհասկանալով իր խոսքերի իմաստը.

— Հանգստացիր, հարազատս։ Լաց մի՛ լինի։ Ես այլևս թույլ չեմ տա, որ քեզ վիրավորեն, ես հայրություն կանեմ քեզ։ Ես հոր նման կսիրեմ քեզ, միայն թե դու լաց մի՛ լինի։— Եվ նայելով Զարիպային, որ շվարած, շփոթված կանգնել էր դիմացը, հասկացավ, որ ոտքը գցել է արգելված գծից այն կողմ և գլուխը կորցրեց, քայլերն արագացրեց, երեխան գրկին նրանից հեռանալով և շփոթված կրկնելով միևնույն խոսքերը.— Լաց մի՛ լինի, ես հիմա այդ Ղազանղալին, ես հիմա դրան ցույց կտամ։ Ես դրան ցույց կտամ, այ, հիմա ես այդ Ղազանղալին, ես դրան ցույց կտամ։ Այ հիմա ես, ես դրան ցույց կտամ...

Այդ դեպքից հետո Եդիգեյը մի քանի օր խուսափեց Զարիպայից։ Այսինքն, Զարիպան նույնպես, ինչպես երևում էր, փախչում էր իրենից։ Զղջում էր Բորանլի Եդիգեյը, որ այդպես անզգույշ բերանից խոսք է թռցրել և տակնուվրա արել բանից ան-

տեղյակ կնոջը, որն առանց այդ էլ քիչ հոգս ու տարնապ չուներ։ Նրա այդ վիճակում ինքը որքա՜ն ցավ ավելացրեց նրա ցավերին։ Եղիգեյը չէր կարողանում իր համար գտնել ոչ ներումն, ոչ էլ արդարացում։ Եվ երկար տարիներ, թերևս, մինչև վերջին շունչը չէր մոռանում այն ակնթարթը, երբ իր ողջ էությամբ զգաց իրեն ապավինած անպաշտպան, վիրավորված երեխային, թե ինչպես շարժվեց սիրտը քնքշությունից ու ղառնությունից և թե ինչպես էր Զարիպան, այդ տեսարանից ապշահար, նայում իրենց, ինչպես էր նայում իրեն՝ աչքերում վշտի համր ճիչ։

Այդ դեպքից հետո որոշ ժամանակ սովվեց Բորանլի Եղիգեյը, և այն ամենը, ինչ ստիպված էր թաքցնելու, խլացնելու իր մեջ, փոխադրեց Զարիպայի երեխաների վրա. ուրիշ միջոց չէր գտնում։ Ամեն անգամ ազատ լինելիս, նրանց զբաղեցնում էր և շարունակում պատմել նրանց, շատ բան կրկնելով և շատ բան վերհիշելով ծովի մասին։ Դա նրանց ամենասիրած թեման էր։ Ճայերի, ձկների, չվող թռչունների մասին, Արալյան կղզիների մասին, որտեղ պահպանվել են հազվագյուտ կենդանիներ, այնինչ ուրիշ տեղերում դրանք արդեն ոչնչացել են։ Այդ խոսակցությունների ժամանակ Եղիգեյն ավելի ու ավելի հաճախ համառորեն էր հիշում սեփական կյանքի եղելությունը Արալյան ծովում, միակ բանը, որ նա չի ցանկացել պատմել որևէ մեկին։ Այսինքն, դա մանկական բան չէր։ Այդ մասին գիտեին միայն երկու մարդ. ինքը և Ուկուբալան, բայց այդ մասին նույնիսկ իրենք էլ չէին խոսում իրար հետ, որովհետև դա կապված էր իրենց մեռած առաջնեկի հետ։ Հիմա ողջ լիներ այն մանկիկը, շատ ավելի մեծ կլիներ բորանլիցի երեխաներից, նույնիսկ Ղազանղապի Սաբիթշանից երկու տարով մեծ կլիներ։ Բայց չապրեց։ Մինչդեռ ամեն մի երեխայի սպասում են հույսով, որ պիտի ծնվի, պիտի ապրի երկար, շատ երկար, նույնիսկ դժվար է ասել, թե ինչքան երկար, հակառակ դեպքում ինչո՞ւ պիտի մարդիկ երեխա բերեն...

Նրա ձկնորսական կյանքում, այն երիտասարդ տարիներին, պատերազմից ոչ շատ առաջ, ինքն ու Ուկուբալան ապրել են մի զարմանալի դեպք։ Այդպիսի բանը տեղի է ունենում մի անգամ և երբեք չի կրկնվում... Ինչ նրանք ամուսնացել էին, Եղիգեյը միշտ ուզում էր ծովից շուտ վերադառնալ տուն։ Նա սիրում էր Ուկուբալային և գիտեր, որ կինն էլ իրեն է սպասում։ Այն ժամանակ Եղիգեյի համար չկար նրանից ավելի ցանկալի

կինւ Նրան նույնիսկ թվում էր, թե ինքը գոյություն ունի, որպեսզի շարունակ մտածի Ուկուբալայի մասին, իր մեջ առնի, կուտակի ծովի, արեգակի ուժը, այնուհետև իրեն ամբողջապես նվիրի սպասող կնոջը, որովհետև այդ նվիրումից ստեղծվում էր փոխադարձ երջանկություն, երջանկության միջուկը, մնացյալ ամեն ինչ սոսկ լրացնում, հարստացնում էր նրանց երջանկությունը, նրանց փոխադարձ ինքնամոռացումը, որ պարգևել էին արեգակն ու ծովըւ Երբ Ուկուբալան զգաց, որ իր մեջ ինչ-որ բան է կատարվել, որ հղիացել է և շուտով մայր է դառնալու, ծովից հետո նրանց հանդիպման մշտական սպասումներին ավելացավ ապագա առաջնեկի սպասումըւ Դա նրանց կյանքի անամպ ժամանակն էրւ

Ուշ աշնանը, ձմեռնամուտից առաջ, Ուկուբալայի դեմքին հայտնվեցին դարչնագույն բծեր, որոնք երևում էին ուշադիր նայելիսւ Արդեն նկատելի կլորացել էր փորըւ Մի անգամ կինը հարցրեց, թե ո՞րն է ալթըն մեկրե ձուկըւ «Լսած կամ, բայց երբեք չեմ տեսել»ւ Եղիգեյն ասաց, որ դա հազվագյուտ, թառափանման ձուկ է, խորշրյա, բավական մեծ, բայց նրա արժեքը ավելի շատ գեղեցկության մեջ էւ Մարմինը կապտավուն-խատուտիկ է, գլուխը, լողակները և մեջքի կռճիկավոր սանրը՝ գլխից մինչև պոչի ծայրը, կարծես զուտ ոսկի լինի, շողում-շողշողում է ոսկե փայլերովւ Դրա համար էլ անունը ալթըն մեկրե է՝ ոսկյա մեկրեւ

Մյուս անգամ Ուկուբալան ասաց, որ երազում ոսկյա մեկրե է տեսելւ Ձուկն, իբր, լող էր տվել նրա շուրջը և Ուկուբալան աշխատել է բռնել, որովհետև շատ էր ուզում բռնել այդ ձկանը, հետո բաց թողնելւ Միայն ուզում էր անպայման ձեռքերում պահել, զգալ նրա ոսկյա մարմինըւ Այնքան էր ցանկանում շոշափել ձկանը, որ երազում սկսել է ընկնել ետևից, բայց ձուկը չի բռնվել և Ուկուբալան արթնանալով, տարօրինակ կերպով վրդովվել է, կարծես իրականում նրան չի հաջողվել հասնել մի կարևոր նպատակիւ Ուկուբալան ծիծաղեց ինքն իր վրա, բայց արթմնի նույնպես անզուսպ ցանկություն ուներ բռնելու ոսկյա մեկրեւ

Եղիգեյն այդ բանը լավ էր հասկանումւ Այդ մասին էր մտածում ցանցը ծովից հանելիս, և, ինչպես պարզվեց հետո, ճիշտ էր մեկնաբանել նրա ցանկության նշանակությունը, ցանկություն, որ առաջացել էր երազում և չէր վերանում արթմնիւ Նա

հասկացավ, որ ինքը պարտավոր է, ինչ գնով ուզում է լինի, ձեռք բերել ոսկյա մեկրե, որովհետև հղի Ուկուբալայի զգացածը նրա տալգակն[1] էր։ Շատ կանայք հղի ժամանակ ունենում են այդպիսի ցանկություն, նրանց տալգակն արտահայտվում է որևէ աղի, թթու, կծու, տտիպ բան ուտելու ցանկությամբ, ոմանք էլ անզուսպ ցանկություն են ունենում ուտելու որևէ վայրի կենդանու կամ թռչունի միս։ Եդիգեյը չզարմացավ կնոջ տալգակի վրա։ Ձկնորսի կնոջ սրտաուզելիքը պետք է կապ ունենա ամուսնու զբաղմունքի հետ։ Աստված ինքն էր հրամայել, որ նա ցանկանա աչքով տեսնել և ձեռքերով շոշափել այն մեծ ձկան ոսկին։ Եդիգեյը լսել էր, որ եթե հղի կնոջ տալգակը չի բավարարվում, կարող է վատ հետևանք ունենալ արգանդում գտնվող երեխայի համար։

Ուկուբալայի տալգակը այնքան արտասովոր էր, որ ինքն էլ չէր համարձակվում բարձրաձայն խոստովանել, Եդիգեյն էլ չուզեց ճշտել, չուզեց իմանալ, որովհետև հայտնի չէր, կկարողանա՞ր արդյոք ճարել հազվագյուտ ձուկը։ Նախ հարկավոր էր բռնել, հետո պարզել, թե արդյոք դա՞ էր նրա ուզածը։ Այդ ժամանակ Արալյան ծովի ձկնորսական մեծ շրջանն ավարտվում էր. եռուն շրջանը հուլիսից մինչև նոյեմբերն էր։ Արդեն ձմռան հոտ էր գալիս։ Արտելը պատրաստվում էր ձմեռային արդյունագործությանը, սառցաձկնորսությանը, երբ ծովի մեկ և կես հազար կիլոմետրանոց շրջագծով տարածությունը ծածկվում է հաստ սառույցով, և ստիպված բաց են անում վիթխարի սառցանցքեր, մեջն իջեցնում ծանրություն կախած ցանցեր, և դրանք ծովի հատակում մի սառցանցքից մյուսն են քաշում ճախարակով, լծված ուղտերի՝ տափաստանային այդ անփոխարինելի քարշիչների միջոցով... Եվ կարող է բուքուբորան լինել, ցանցն ընկնող ձուկը չի հասցնում թպրտալ, հենց հանում են, քարանում է, ծածկվում սառցե զրահով՝ արալյան բաց ցրտում... Եվ ձմեռ թե ամառ, Եդիգեյը արտելի հետ որքան ձուկ է որսացել՝ արժեքավոր թե սակավարժեք, չի հիշում, թե երբևէ ոսկյա մեկրե ընկած լինի ցանցը։ Երբեմն այդ ձուկը հաջողվում է որսալ կարթով կամ փայլախայծով, և դա իրադարձություն է համարվում ձկնորսների կյանքում։ Հետո այդ մասին խոսում են, թե այսինչին հաջողվել է բռնել ոսկյա մեկրե։

•

1 Տալգակ — հղի կնոջ սրտաուզելիք։ Կամակ։

Այն վաղ առավոտյան Եղիգեյը գնաց ծով, կնոջն ասաց, թե ուզում է տան համար մի քիչ ձուկ որսալ, քանի դեռ սառույցը չի բռնել։ Ուկուբալան նախորդ օրը համոզում էր, որ հրաժարվի այդ մտքից։

— Տանը լիքը ձուկ է։ Ինչո՞ւ ես դուրս գալիս։ Ցուրտ է արդեն։

Բայց Եդիգեյն անդրդվելի էր։

— Ինչքան կա՝ կա,— ասաց նա։— Հապա չէի՞ր ասում, որ Սաղըն մորաքույրը ծանր հիվանդ է։ Նրան պետք է միրոնի կամ ձիաձկան թարմ, տաք ձկնապուր ուտեցնել։ Դա միակ դեղն է։ Էլ ով պիտի խեղճ պառավի համար ձուկ բռնի։

Այդ պատճառաբանությամբ էլ Եդիգեյը առավոտ վաղ գնաց ոսկյա մեկրե որսալու։ Ձկնորսական բոլոր սարքերը, բոլոր անհրաժեշտ հարմարանքները նա մանրակրկիտ հաշվի էր առել, և նախօրոք պատրաստել։ Ամեն ինչ դասավորված էր նավակքթին։ Ինքն էլ տաք հագնվեց, վրան քաշեց վեղարով թիկնոցը և նավակն առաջ հրեց։

Օրը պարզ չէր, կայուն չէր, տատանվում էր աշնան ու ձմեռվա արանքում։ Շեղ անկյան տակ հաղթահարելով ջրի հորձանքը, Եդիգեյը նավակը թիակներով ուղղեց բաց ծով, որտեղ նրա ենթադրությամբ, պիտի որ լինեին ոսկյա մեկրեի բնակատեղերը։ Ամեն ինչ, իհարկե, կախված է հաջողությունից, որովհետև որս ձեռնարկելիս, չկա ավելի սակավամատչելի բան, քան կարթով ծովային ձկնորսությունը։ Ցամաքում, այսպես թե այնպես, մարդը և որսը գտնվում են միևնույն միջավայրում, որսորդը կարող է հետապնդել գազանին, մոտենալ, թաքնվելով, սպասելով և հարձակվելով։ Ջրի տակ որս անողին ոչինչ չի տրված։ Սարքերը ջուրն ես իջեցնում և սպասում՝ ձուկ կերևա, թե չի երևա և եթե երևա, կգա՞ խայծի վրա, թե չի գա։

Հոգու խորքում Եդիգեյը մեծ հույս ուներ, որ բախտը բերելու է, քանի որ ծով է դուրս եկել ոչ հանուն արդյունագործության, ինչպես միշտ, այլ հանուն հղի կնոջ իրեղեն ցանկության։

Ամուր և ուժեղ էր երիտասարդ Եդիգեյը թիերի վրա։ Անխոնջ, համաչափ ետ մղվելով ծփծփուն, հոսող ջրից, նա նավակը տանում էր ծովի գալարուն, խախուտ ալիքների վրայով։ Այդ ալիքները արալյան ձկնորսները կոչում են իրեք թուկուն՝ ծուռկող ալիքներ։ Իյրեք թուկունները վերահաս փոթորկի նախանշան-

ներն են։ Բայց ինքնին վտանգավոր չեն և կարելի է անվախ լողալ դեպի բաց ծով։

Ցամաքից հեռանալու հետ ափն իր ուղղաբերձ, կավոտ զառիթափով և ալեբախության քարոտ շերտով աստիճանաբար փոքրանում էր, նվազում և շուտով դարձավ տարտամ, երբեմն-երբեմն չքացող կետ։ Ամպերն անշարժ կախվել էին վերևից, իսկ ներքևում իրեն զգացնել էր տալիս կտրող քամին, որ լիզում էր ջրի ծփանքը։

Երկու ժամից հետո Եղիգեյը կանգնեցրեց նավակը, վերցրեց թիակները, խարիսխ գցեց և դասավորեց ձկնորսական սարքերը։ Ուներ երկու պարանակոճ՝ կարթաթելը դանդաղեցնող ինքնաշեն հարմարանքով։ Մեկը հարմարեցրեց նավախելին, սուզագնդիկով պարանը երկաճղի փայտի միջոցով իջավ ցած, մոտ հարյուր մետր խորությամբ, դեռ քսան մետր էլ կար փաթաթված։ Մյուսը նույն ձևով տեղադրեց նավաքթին։ Այնուհետև նորից ձեռքն առավ թիակները, որպեսզի նավը պահի ջրի և քամու միջև, ուղղի անհրաժեշտ դիրքով։ Եվ գլխավորը, որպեսզի կարթաթելերը չխճճվեն։

Դրանից հետո սկսեց սպասել։ Իր ենթադրությամբ, հենց այսպիսի տեղերում կարող է բնակվել այդ հազվագյուտ ձուկը։ Ապացույց, իհարկե, չուներ, դա սոսկ բնազդ էր։ Այնուամենայնիվ, նա հավատում էր, որ այդ ձուկը պիտի հայտնվի։ Անհապաղ, անպայման պետք է հայտնվի։ Առանց դրա, նա չէր կարող վերադառնալ տուն։ Ձուկն իրեն հարկավոր էր ոչ հանուն զվարճության, այլ հանուն շատ կարևոր գործի։

Որոշ ժամանակ անց, ձկներն զգացնել տվին իրենց ներկայությունը։ Բայց սրանք այն չէին։ Սկզբում բռնվեց ձիաձուկ։ Երբ Եղիգեյը դուրս էր քաշում, գիտեր, որ դա ոսկյա մեկրե չի։ Այդպիսի բան լինել չէր կարող, որ միանգամից ոսկյա մեկրեն ընկներ։ Չափից ավելի հեշտ ու անհետաքրքիր կլիներ կյանքը։ Եղիգեյն ուզում էր չարչարվել, սպասել։ Հետո կարթից կախվեց մի մեծ միրոն, Արալի լավագույն ձկներից մեկը, եթե ոչ լավագույնը։ Դրան էլ թմրեցնելով, գցեց նավակի հատակին։ Համենայն դեպս հիվանդ մորաքույր Սաղընին լիուլի կբավարարեր, հետո բռնեց մի տրան՝ Արալյան բրամ։ Ո՞ր սատանան է սրան այս կողմերը քշել։ Տրանը սովորաբար լողում է մակերեսին։ Աստված նրա հետ։ Ինքն է մեղավոր։ Եվ դրանից հետո սկսվեց երկար, ճնշող դադար... «Չէ, ես կսպասեմ,— մտածեց Եղիգե-

յը։— Չնայած ես բան չեմ ասել, բայց նա գիտի, որ եկել եմ ոսկյա մեկրեի ետևից։ Եվ պիտի բռնեմ, որպեսզի երեխան փորում չփչանա։ Ախր երեխան է ուզում, որ մայրը ոսկյա մեկրե տեսնի և ձեռքերում պահի։ Իսկ ինչո՞ւ է երեխան հենց այդ ձուկն ուզում, ոչ ոք չգիտի։ Մայրն էլ է այդ ուզում, իսկ ես հայր եմ, ես պետք է այնպես անեմ, որ նրանց ցանկությունը բավարարեմ»։

Չարություն էին անում իյրեք թոլկունները, պտտում էին նավակը, դրա համար են նրանք համարվում ծուռկող, անհավատարիմ, խախուտ ալիքներ։ Եղիգեյն անշարժությունից սկսել էր սառել. թեև շարունակ արթուն հսկում էր պարանակոճերը. չի՞ ձգվում արդյոք, չի՞ սահում արդյոք երկճղի փայտին հենված կարթաթելը։ Չէ, ոչ նավաքթին, ոչ էլ նավախելին ոչ մի նշան չկա։ Բայց Եղիգեյի համբերությունը չէր հատնում։ Նա գիտեր, հավատում էր, որ ոսկյա մեկրեն պիտի գա իր մոտ։ Միայն թե ծովը համբերեր մի քիչ. իյրեք թոլկուններն արդեն շատ են պտտվում։ Այդ ինչո՞ւ Չէ, փոթորիկն այդքան շուտ չի լինի։ Փոթորկոտ ալիքները՝ ալաբաշերը, խայտագլուխ լալկանները կբարձրանան իրիկնադեմին կամ գիշերը։ Այն ժամանակ ծայրից ծայր կքլթքլթա, կեռա ահեղ Արալը, կծածկվի սպիտակ փրփուրով, և այն ժամանակ ոչ ոք չի համարձակվի խցկվել ծով։ Բայց առայժմ կարելի է, առայժմ ժամանակ կա...

Փշաքաղված, սառած շուրջբոլորը նայելով, Եղիգեյը ծովում սպասում էր իր ձկանը։ «Ինչո՞ւ ես ուշանում, ազնիվ խոսք, դու մի վախենա,— մտածում էր նա ձկան մասին։— Մի՛ վախենա, ասում եմ, ես քեզ նորից բաց կթողնեմ։ Ասում ես այդպիսի բան չի՞ լինում։ Պատկերացրու, որ լինում է։ Ես քեզ ուտելու համար չեմ տանում։ Տանը ինչ ձուկ ասես ունենք։ Հրեն, նավակի հատակում էլ երեք հատ կան։ Ինչո՞ւ պիտի ուտելու համար քեզ սպասեմ, ոսկյա մեկրե։ Հասկանո՞ւմ ես, մեր առաջնեկն է ծնվելու։ Իսկ դու վերջերս երազ ես եկել կնոջս, նա էլ այդ օրվանից կորցրել է քուն ու դադարը, չնայած բան չի ասում, բայց ես տեսնում եմ։ Ես չեմ կարող բացատրել, թե ինչու է այդպես, բայց շատ է անհրաժեշտ, որ նա քեզ տեսնի, պահի ձեռքերում, ես խոսք եմ տալիս, որ հետո քեզ նորից ջուրը կգցեմ։ Բանն այն է, որ դու յուրահատուկ, հազվագյուտ ձուկ ես։ Դու ոսկյա գլուխ ու պոչ ունես, լողակներդ ու մեջքիդ սանրն էլ են ոսկուց։ Խընդրում եմ, մտի՛ր մեր դրության մեջ։ Նա փափագում է բաց աչքով

տեսնել քեզ, ուզում է ձեռք տալ, շոշափել քեզ, որ զգա, թե դու ինչպիսին ես, ոսկյա մեկրե։ Մի կարծիր, որ եթե դու ձուկ ես, մեզ հետ ոչ մի գործ չունես։ Չնայած դու ձուկ ես, բայց նա, չգիտես ինչու, կարոտում է քեզ, ինչպես քրոջն ու եղբորն են կարոտում, և ուզում է տեսնել քեզ երեխան ծնվելուց առաջ։ Երեխան փորում գոհ կլինի։ Սա է ամբողջ հարցը։ Օգնիր ինձ, բարեկամս, ոսկյա մեկրե։ Մո՛տ եկ։ Չեմ նեղացնի։ Խոսք եմ տալիս։ Եթե ես՝ չար նպատակ ունենայի, դու կզգայիր։ Կարթի ծայրին երկու կեռիկ կա, ո՛րն ուզում ես ընտրիր, ես ամրացրել եմ մի-մի մեծ կտոր միս։ Մսից հոտ է գալիս, որպեսզի դու հեռվից հոտոտես։ Դե՜հ, մոտ եկ, վատ բան մի մտածիր։ Եթե փայլախայծ դնեի քեզ համար, դա իմ կողմից անազնիվ կլիներ, չնայած դու փայլախայծին ավելի շուտ կխաբվեիր։ Բայց եթե փայլախայծը կուլ տաս, հետո ինչպե՞ս կապրես երկաթը փորումդ, երբ նորից քեզ ծովը գցեմ։ Դա կլիներ խաբեություն։ Իսկ ես ազնըվորեն կարթ եմ առաջարկում։ Մի քիչ շրթունքներդ կճանկըռվեն և վերջ։ Եվ մի անհանգստանա, ես հետս մեծ տիկ եմ վերցրել, մեջը ջուր կլցնեմ, դու առայժմ կմնաս ջրով լի տկի մեջ, հետո ետ կլողաս։ Բայց առանց քեզ այստեղից չեմ հեռանա։ Իսկ ժամանակը չի սպասում։ Մի՞թե չես զգում, ինչպես են շտտանում ալիքները և ինչպես է սաստկանում քամին, մի՞թե ուզում ես, որ իմ առաջնեկը որբ ծնվի, անհայր։ Մտածի՛ր, օգնի՛ր ինձ...»։

Արդեն մութը պատում էր ծովի ցուրտ, ձմեռնամուտի լայնությունները։ Նավակը հայտնվելով մերթ ալիքների կատարին, մերթ կորչելով ալիքների մեջ, ընթանում էր դեպի ափը։ Դժվար էր ընթանում, կռիվ տալով փրփրած ալիքների դեմ, ծովն արդեն շառաչում էր, եռում, ճռճվում, կուտակում փոթորկի ուժ։ Սառցասառը շիթերը թռչում էին դեմքին, ձեռքերն էլ՝ թիակների վրա, ուռչում էին ցրտից ու խոնավությունից։

Ուկուբալան ափին ման էր գալիս։ Տագնապը սրտում դուրս էր եկել ծովեզերք, սպասում էր ամուսնուն։ Երբ համաձայնեց ամուսնանալ ձկնորսի հետ, իր տափաստանաբնակ անասնապահ ազգականներն ասում էին. խոսք տալուց առաջ մի քիչ մտածիր, ծանր կյանք ես հանձն առնում, ամուսնանում ես ծովի հետ, այնքան աղի արցունք ես թափելու ծովի մոտ, այնքան աղերսանքներ ես ուղղելու ծովին։ Բայց նա չմերժեց Եդիգեյին, միայն ասաց, ինչպես ամուսինս, այնպես էլ ես...

Այդպես էլ եղավ։ Այս անգամ Ծղիգեյը գնացել էր ոչ թե արտելի հետ, այլ մենակ, որն էլ արագորեն մթնում էր, ծովը հեծեծում էր անհանգիստ։

Ահա վերջապես փրփրուն կոհակների մեջ փայլատակեցին թափահարվող թիերը, և ալիքի վրա երևաց նավակը։ Ուկուբալան, շալով փաթաթված, արդեն տնկված փորով, ընդհուպ մոտեցավ ալեկոծ ափին և սպասեց մինչև Ծղիգեյը կկապեր նավակը։ Ալեբախությունը հզոր ցնցումով նավակը թողրեց ծանծաղուտ։ Ծղիգեյը մի ակնթարթում ոստնեց ջրի մեջ, ցուլի նման քաշելով, նավակը բերեց ափ։ Եվ երբ շտկվեց՝ ոտից գլուխ թաց և աղի, Ուկուբալան մոտեցավ, գրկեց նրա թաց վիզը, սառած, փայտացած թիկնոցի տակ։ .

— Աչքս ջուր կտրեց սպասելով։ Ինչո՞ւ ուշացար։

— Որովհետև նա ամբողջ օրը չերևաց, միայն վերջում մոտ լողաց։

— Ի՞նչ, ուրեմն գնացել էիր ոսկյա մեկրեի ետևից։

— Այո, խնդրեցի, եկավ։ Կարող ես տեսնել։

Ծղիգեյը նավակից հանեց ծանր, ջրով լի տիկը, կապը քանդեց և ջրի հետ առափնյա խճաքարերի վրա թափեց ոսկյա մեկրեն։ Մեծ ձուկ էր։ Ուժեղ և գեղեցիկ։ Ոսկյա պոչով կատաղի զարկվում էր, ծալվում, թռչկոտում, ցրիվ տալիս թաց ծովախճերը և, լայն բացելով վարդագույն երախը, ձգվում էր ծովի կողմը, ձգտելով հասնել հարազատ տարերքին, ալեբախությանը։ Մի կարճատև պահ հանկարծ ձուկը լարվեց, անշարժացավ, հանդարտվեց, փորձելով վարժվել, անթարթ, անթերի կլոր և մաքուր աչքերով դիտելով այն աշխարհը, որտեղ պատահմամբ ընկել էր։ Նույնիսկ ձմեռային մշուշոտ իրիկնամուտի անսովոր լույսը խփեց գլխին և ձուկը տեսավ իր վրա խոնարհված մարդկանց շողշողուն աչքերը, ափի եզրը, երկինքը և հեռու-հեռվում, ցանցառ ամպերի ետևում ծովի վրա նշմարվեց հորիզոնում հանգչող արեգակի, իր համար անտանելի պայծառ մայրամուտը։ Շունչը հատնում էր։ Եվ ձուկը վեր նետվեց։ Զարկվեց, գալարվեց նոր ուժով, ձգտելով հասնել ջրին։ Ծղիգեյը խռիկներից բռնեց, վեր բարձրացրեց ոսկյա մեկրեն։

— Ձեռքերդ տակը դիր, բռնի՛ր,— ասաց Ուկուբալային։

Ուկուբալան ձուկն ընդունեց ինչպես երեխայի, զույգ ձեռքերով և սեղմեց կրծքին.

— Ինչ ձի՞գ է,— բացականչեց Ուկուբալան, զգալով նրա

*զսպանակված ներքին ուժը։— Գերանի նման էլ ծանր է։ Ծով ծովի ինչ լավ հոտ է գալիս վրայից։ Ինչքան էլ գեղեցիկ է։ Վերցրու, Եդիգեյ, ես գոհ եմ, շատ գոհ։ Կատարվեց իմ ցանկությունը։ Հիմա նրան ջուրը գցիր, շո՛ւտ արա...*

*Եդիգեյը ոսկյա մեկրեն տարավ ծով։ Մինչև ծնկները մտնելով արշավող ալիքների մեջ, ձկանը բաց թողեց։ Մի կարճ ակընթարթ, երբ ոսկյա մեկրեն ջուրն էր ընկնում, օդի թանձր կապույտի մեջ արտացոլվեց ձկան ամբողջ ոսկյա հանդերձանքը՝ գագաթից մինչև պոչը և, պսպղալով ու ջուրը ճեղքելով, ձուկը սրընթաց լողաց խորքը...*

*Մեծ փոթորիկը ծովի վրա պայթեց գիշերը։ Մռնչում էր ծովը պատի ետևում, զառիթափի տակ։ Եդիգեյը ևս մի անգամ համոզվեց, որ զուր չեն հայտնվում փոթորկի նախազուշակները՝ իյրեք թուլկունները։ Արդեն խոր գիշեր էր։ Կեսքուն, ականջը մոլեգնող ալեկոծությանը, Եդիգեյը հիշեց իր նվիրական մեկրեին, որ այժմ մի տեսակ իրենն էր դարձել։ Չնայած երևի ծովի խորքն այսպես ուժեղ չի ցնցվում։ Իր խորունկ խավարի մեջ երևի ձուկը նույնպես ականջ է դնում, թե ինչպես են ալիքները քայլում վերևում։ Եդիգեյը երջանիկ ժպտաց այդ մտքից և քնելով, ձեռքը դրեց կնոջ կողին և հանկարծ ցնցումներ լսեց փորից։ Այդ նրա ապագա առաջնեկն էր հիշեցնում իր մասին։ Այդ մտքից նույնպես Եդիգեյը երջանիկ ժպտաց և անխռով քուն մտավ։*

*Ինչ իմանար, որ մի տարի չանցած կռնկվի պատերազմը և ամեն ինչ շուռ կգա կյանքում, ինքն ընդմիշտ կհեռանա ծովից, ծովը կմնա իբրև հիշողություն... Մանավանդ, երբ ծանր օրեր վրա հասնեն...*

Գնացքները այս կողմերում գնում էին արևելքից արևմուտք և արևմուտքից արևելք...

Իսկ երկաթուղու շուրջը, այս կողմերում, փռված էին հսկայական ամայի տարածություններ՝ Սարի-Օզեկներ, Դեղին տափաստանների միջնակները...

*Բորանլի Եդիգեյի համար այն սարսափելի հիսուներեք թվականին ձմեռն էլ վաղ հասավ։ Սարօզեկներում դեռ այդպիսի բան չէր եղել։ Հոկտեմբերի վերջին արդեն ձյուն դրեց, ցրտերն սկսվեցին։ Լավ որ մինչ այդ Ղումբելից կարտոֆիլ էր բերել իրենց և Զարիպայի ու երեխաների համար։ Որքան կարող էր*

շտապեց։ Վերջին անգամ ստիպված եղավ գնալ ուղտով, վախենում էր մինչև ապրանքատարի բաց հարթակով կարտոֆիլը տեղ հասցնի, ցուրտը տանի։ Այլևս ո՞ւմ պետք կլիներ։ Իսկ այսպես, գնաց Բորանլի Կարանարով, վրան բարձեց երկու վիթխարի բեռնապարկ, մենակ չէր կարողանա տեղավորել պարկերը, լավ որ մարդիկ օգնեցին, մի պարկը հարմարեցրին մի կողմում, մյուսը՝ մյուս, վերևից էլ պարկերը ծածկեց թաղիքով, եզրերը ներս խցկեց, որ քամին չշարժի, ինքը տեղավորվեց ամենավերևում, պարկերի միջև և հանգիստ գնաց տուն՝ Բորանլի։ Կարանարին այնպես էր բազմել, կարծես փղի վրա լիներ։ Այդպես էր մտածում նաև Եդիգեյը։ Մինչ այդ, այստեղ ոչ ոք պատկերացում չուներ հեծկան փղերի մասին։ Այդ աշուն կայարանում ցույց տվեցին առաջին հնդկական ֆիլմը։ Բոլոր ղումբեյցիները՝ մեծից փոքր, թափվել էին նայելու չտեսնված կինոնկարը չտեսնված երկրի մասին։ Ֆիլմում, բացի անվերջանալի երգ ու պարից, ցույց տվեցին փղեր, մարդիկ փղերին նստած գնում էին ջունգլիները՝ վագրի որսի։ Եդիգեյն էլ տեսավ այդ նկարը։ Կիսակայարանի պետի հետ, որպես բորանլիցիների պատվիրակներ, եկել էին մասնակցելու ընդհանուր արհմիութենական ժողովին։ Ահա ժողովից հետո դեպոյի ակումբում ցույց տվեցին հնդկական ֆիլմը։ Դրանից էլ սկսվեց։ Կինոյից դուրս եկան, և ծայր առավ զրույցը։ Երկաթուղայինները զարմացել էին, որ Հնդկաստանում փիղ են հեծնում։ Մեկը բարձրաձայն ասաց.

— Ի՞նչ եք զարմացել փղերի վրա, Եդիգեյի Բորանլի Կարանարը ինչո՞վ է վատ փղից։ Բեռը դիր վրան, փղի նման կսուրա։

— Դա էլ է ճիշտ,— ծիծաղեցին։

— Փիղն ի՞նչ է որ,— լսվեց մի ուրիշ ձայն։— Փիղը կարող է ապրել միայն տաք երկրներում։ Հապա թող փորձի մեր սառցե՞ւ ձեռնե՞րում ապրել, իսկույն ոտքերը կտնկի, նա ո՞ւր, Կարանարը ո՞ւր։

— Լսի՛ր, Եդիգեյ, լսի՛ր, Բորանլի, իսկ ինչո՞ւ դու էլ մի տնակ չես տեղավորում Կարանարի վրա, ինչպես Հնդկաստանի փղերի վրա։ Այնտեղի հարուստների նման քեզ համար ման կգաս։

Եդիգեյը քթի տակ ծիծաղում էր։ Ընկերները ձեռ էին առնում նրան, բայց հաճելի էր այդպիսի խոսքեր լսել իր նշանավոր աթանի մասին...

Բայց դրա փոխարեն, այդ ձմեռ շատ չարչարվեց, ծանր ապրումներ ունեցավ այդ նույն Կարանարի պատճառով...

Դա տեղի ունեցավ ցրտերի հետ։ Այդ օրը եկավ առաջին ձյունը։ Դրանից առաջ մի քանի անգամ նորից ձյուն էր եկել և արագորեն հալվել։ Սարօզեկների վրա փակվել էր երկինքը համատարած խավարով, քամին գալարվում էր։ Թանձր, ծանրումեծ թափվեց ձյունը՝ սպիտակ, պարզ փաթիլներով։ Ցուրտ չէր, բայց թաց էր և անդուր։ Իսկ կարևորը՝ ձյան պատճառով շուրջբոլորը ոչինչ չէր երևում։ Ի՞նչ կարելի էր անել։ Սարօզեկներում չկան իջևանատեղիներ, որտեղ հնարավոր լինի սպասել, մինչև եղանակը փոխվի։ Մնում էր մի ելք. ապավինել Բորանլի Կարանարի ուժին և զգացողությանը։ Նա պիտի տուն հասցներ իրեն։ Եդիգեյն աթանին տվեց կատարյալ ազատություն, ինքը բարձրացրեց օձիքը, գլխարկը քաշեց աչքերին, գլխանոցը վրա բերեց և համբերությամբ նստեց, ապարդյուն փորձելով որևէ բան զանազանել շուրջը։ Ձյան անթափանց վարագույր, ուրիշ ոչինչ... Իսկ Կարանարը քայլում էր այդ շրջապտույտի մեջ, առանց արագացնելու քայլերը և, ըստ երևույթին, հասկանում էր, որ տերը այժմ տեր չի, դրա համար էլ սսկվել-մնացել է պարկերի վրա և ոչ մի ձևով իրեն չի բացահայտում։ Վիթխարի ուժ պետք է ունենար Կարանարը, որպեսզի այդպիսի բեռը վրան, ձյան տակ վազեր տափաստանով։ Հզոր, շոգ շնչում էր նա տանելով տիրոջը, և գազանի նման մռնչում, փնչում էր, երբեմն էլ երկար ու ծորուն շչալով կանչում էր և անդադրում, անխոնջ, անկանգ առաջ էր գնում թռչող փաթիլներին հանդիման...

Զարմանալի չէր, որ Եդիգեյին չափազանց երկար թվաց այդ ճանապարհը. «գոնե շուտ հասներ»,— մտածում էր և պատկերացնում, թե ինչպես է տեղ հասնելու, թե ինչպես են տանը անհանգստանում, որ այս վատ եղանակին ինքը դրսում է։ Ուկուբալան կանհանգստանա իր համար, բայց բարձրաձայն ոչինչ չի ասի։ Նա այն մարդկանցից չի, որ մտքում ինչ ունենում են, դուրս են տալիս։ Գուցե Զարիպան էլ է մտածում իր մասին։ Իհարկե մտածում է։ Մանավանդ նա, ծպտուն չի հանի, նա աշխատում է որքան կարելի է քիչ ընկնի իր աչքով և խուսափում է իր հետ առանձին որևէ խոսակցությունից։ Իսկ խուսափելու ի՞նչ կա, ի՞նչ վատ բան է տեղի ունեցել։ Ախր Եդիգեյը ոչ խոսքով, ոչ էլ որևէ արարքով առիթ չի տվել, որպեսզի մեկնումեկը կասկածի, թե այստեղ ինչ-որ բան կա։ Ինչպես առաջ էր, այնպես էլ հիմա։ Պարզապես, նրանք, կյանքում դառնալով ճամփակիցներ, հանկարծ ետ են նայել, տեսնեն ճի՞շտ ճամփով են

գսում արդյոք... Եվ նորից գնացել են։ Ուրիշ ոչինչ։ Իսկ ի՞նչ է քաշելու ինքը այդ ընթացքում, դա արդեն իր ցավն է... Իր բախտն է։ Երևի ճակատին այդպես է գրված, որ պիտի վառվի երկու կրակի միջև։ Եվ թող այդ բանը ոչ մեկին չհուզի, դա իր գործն է, թե ինչպես վարվի ինքն իր հետ, իր բազմաչարչար հոգու հետ։ Ո՞ւմ ինչ գործն է, թե ինչ է կատարվում իր հոգում և ինչ է սպասում իրեն։ Հո փոքր երեխա՞ չի, մի կերպ գլուխ կհանի։ Ինքը բաց կանի քարկապ հանգույցը, որ իր մեղքով ավելի ամուր է ձգվել...

Դրանք սոսկալի մտքեր էին, տանջալից և անել։ Ահա արդեն ձմեռն է ոտք դրել սարոզեկները, իսկ ինքն առաջվա նման ոչ կարողանում է մոռանալ Զարիպային, ոչ էլ, թեկուզ մտովի, հրաժարվել Ուկուբալայից։ Իր չար բախտից երկուսի կարիքն էլ զգում էր, նրանք էլ, երևի տեսնելով ու նկատելով այդ, չէին միջամտում դեպքերին, որպեսզի օգնեին նրան ավելի արագ կողմնորոշվելու։ Արտաքուստ ամեն ինչ նույնն էր. ինչպես միշտ հարթ հարաբերություններ կանանց միջև, երկու տան երեխաները մի ընտանիքի պես միասին մեծանում էին, մշտապես խաղում կիսակայարանում, մեկ այս տանը, մեկ՝ այն... Այդպես անցավ ամառը, այդպես անցավ աշունը...

Որբ, անապաստան և մենակ էր զգում իրեն Բորանլի Եդիգեյը թափվող ձյան տարափի տակ։ Չորս կողմը ձյուն, ամայություն։ Կարանարը րոպեն մեկ թոթափում էր գլխից ձյան կպչուն գուղձերը և վազքի ընթացքում մռնչյունով և բացականչություններով արթնացնում լռությունը։ Վատ էր տիրոջ վիճակը այդ ճանապարհին։ Եդիգեյը չէր կարողանում տիրապետել իրեն, ոչ մի կերպ չէր կարողանում սփոփանք գտնել, կանգ առնել մի որևէ անվիճելի և անտարակուսելի բանի վրա։ Ոչ կարողանում էր անկեղծորեն բացվել Զարիպայի առջև, ոչ էլ կարողանում էր ուրանալ Ուկուբալային։ Եվ անճարությունից սկսեց վերջին խոսքերով հայհոյել ինքն իրեն. «Անասո՛ւն, հայվան, ինչ դու, ինչ քո ուղտը։ Սրիկա՛։ Շո՛ւն։ Հիմարի գլուխ»— և նույն ոգով, դեռ արանքում էլ թունդ մայր հայհոյելով, դատափետում էր իրեն, սպառնում ու վիրավորում, որպեսզի ուշքի գա, խելքը գլուխը ժողովի, սթափվի, վերջ դնի... Բայց ոչինչ չէր օգնում... Դա նույնն էր, ինչ փլուզումը, երբ տեղից շարժվում է լեռը... Միակ ուրախությունը, որ նրան սպասում էր տանը, երեխաներն էին։ Նրանք անվերապահորեն իրեն ընդունում էին այնպես, ինչպես

կար և նրա առջև առանձին խնդիր չէին էլ դնում։ Ինչո՞վ օգնել, ի՞նչ բերել, առտնին ի՞նչ գործ կա։ Նրանց համար միշտ և ամեն ինչ անում էր մեծագույն բավականությամբ, ինչպես օրինակ՝ հիմա նրանց համար ձմեռվա կարտոֆիլ էր տանում երկու հսկայական պարկերով՝ Կարանտուին բարձած։ Վառելիքի պաշարն էլ էին դրել...

Ծերխաններին վերաբերող մտքերը Ծղիգեյի համար ապաստան էին, որտեղ նա լիովին հաշտ էր ինքն իր հետ։ Նա պատկերացնում էր, որ բավական է հասնի Բորանլի, տղաներն իսկույն դուրս կթռչեն, լսելով իր գալստյան մասին, և այլևս չես կարող տուն քշել նրանց, չնայած ձյուն է գալիս, կթռչկոտեն շուրջը, կճչան. «Ծղիգեյ քեռին եկավ Կարանտուով, կարտոֆիլ բերեց», պատկերացնում էր նաև, թե ինչպես խիստ և ազդու ձայնով ուղտին կհրամայի դնչի վրա պառկել գետնին, ապա ինքը կիջնի Կարանտուից, թափ տալով ձյան մեջ կորած հագուստը, միաժամանակ շոյելով տղաների գլուխը, հետո կիջեցնի կարտոֆիլի պարկերը և աչքի տակով կնայի, չի՞ երևում արդյոք Զարիպան, եթե նա տանը լինի, առանձնապես բան չի ասի նրան, այսինքն, Զարիպան էլ չի ասի, ինքը ուղղակի կնայի Զարիպային և դրանով կգոհանա և նորից կհիվանդանա, նորից կդարդոտվի այնպես, որ դրանից ազատում չի լինի, իսկ երեխաները կպտտվեն շուրջը, ոտքի տակ կընկնեն, րոպեն մեկ զգուշավոր վազելով մուտք, վախենալով ուղտի մռնչյունից, և հաղթահարելով վախը, կաշխատեն օգնել իրեն և դա կլինի իր վարձատրությունը կրած բոլոր տանջանքների դիմաց։

Ծղիգեյը ներքուստ պատրաստվում էր Աբութալիպի երեխաների մոտակա հանդիպմանը և հիմնականում մտածում էր, թե այս անգամ ինչ է պատմելու իր ագահ ունկնդիրներին, ինչպես անվանում էր նրանց։ Դարձյա՞լ Արալյան ծովի մասին։ Ամենասիրելի պատմությունները ծովային զանազան դեպքերն էին, որ նրանք լրացնում էին հոր անմիջական մասնակցությամբ և դրանով իսկ շարունակում, իրենք էլ չզգալով այդ, կապ պահպանել նրա հետ, նրա հիշատակի հետ... Բայց Ծղիգեյի իմացածը՝ ծովային կյանքից, արդեն սպառվել էր, ամեն ինչ արդեն շատ անգամ պատմվել և վերապատմվել էր, բացի թերևս, ոսկյա մեկրեի պատմությունից։ Իսկ ինչպե՞ս պատմեր այդ պատմությունը։ Ո՞ւմ բացատրեր այդ, բացի հենց իրենից, որ գիտեր, թե ինչ կա այդ վաղեմի եղելության ետևում։

Այսպես նա իր ճանապարհն էր գնում այն ձյունոտ օրը։ Ամբողջ ճանապարհին նրան հանգիստ չտվեցին կասկածները, խորհրդածությունները... Եվ ամբողջ ճանապարհի ընթացքում ձյուն էր գալիս...

Այդ ձյունով էլ ձմեռը նստեց սարօզեկներում, վաղահաս և այն գլխից՝ ցուրտ։ Ցրտերն սկսվելուն պես նորից մոլեգնեց Բորանլի Կարանարը, նորից կատաղեց, նորից բռնկվեց նրա մեջ արուի ուժը և արդեն ոչինչ և ոչ ոք չէր կարող բռնադատել նրա ազատությունը։ Այստեղ պետք է ինքը՝ տերը նույնպես նահանջեր, զոռով իրեն կրակը չգցեր...

Ձյուն գալու երրորդ օրը սարօզեկներն ավլեց մրրկոտ, սառնամանիքային քամին և անմիջապես տափաստանի վրա իշխեց լարված, մառախլապատ ցուրտը։ Սառնամանիքի միջով հեռվից պարզորոշ լսվում էին ճռճռացող ոտնաձայները, յուրաքանչյուր ձայն, յուրաքանչյուր շրշյուն տարածվում էր արտակարգ հստակորեն։ Կայարանամիջի գնացքների ձայնը լսվում էր բազում կիլոմետրերի վրա։ Իսկ երբ լուսաբացին Եդիգեյը քնաթաթախ լսեց Բորանլի Կարանարի շեփորաձայն մռնչյունը անասնոցում և նրա դոփդոփյունը, որից ճռնչալով խախտվում էր տան ետևի ցանկապատը, հասկացավ, թե նորից ինչ աղետ է վրա հասել։ Արագ հագնվեց, մթության մեջ դուրս եկավ, գնաց անասնոց և գոռգոռաց, կոկորդը ծակծկելով սառնաշունչ օդից։

— Ի՞նչ ես մռնչում, ի՞նչ, նորից աշխարհի վե՞րջն է։ Էլի՞ սկսեցիր։ Էլի ուզում ես արյո՞ւնս խմել։ Հայվա՛ն։ Ձայնդ կտրի՛ր, սո՛ւս արա, ասում եմ։ Ինչո՞ւ այս տարի այդքան շուտ որոշեցիր զբաղվելու այն գործով։ Ուզում ես արար-աշխարհին վրադ ծիծաղեցնե՞լ։

Իզուր օդի մեջ խոսք էր վատնում։ Զարթնած կրքից փոթորկվող ուղտը միտք էլ չուներ հաշվի առնել նրան։ Նա պահանջում էր իրենը, գոռում-գոչում էր, փնչացնում, սպառնագին կրճտացնում ատամները, քանդում անասնոցը։

— Արդեն հոտն առե՞լ ես, հա՞։— Տերը զայրույթը փոխեց նախատինքի։— Պարզ է, քեզ անհրաժեշտ է անմիջապես վազել այնտեղ՝ երամակ։ Հոտն առել ես, որ մի կայմանչա[1] եկել է որսի։ Հեյ վա՜խ, ախր ինչո՞ւ է ձեր ուղտային ցեղն այդպես, որ տարին մեկ եք հանկարծ հիշում այն, ինչով կարող էիք զբաղ-

---

1 Կայմանչա — *մատակ։*

վել ամեն օր, առանց կռվի ու աղմուկի։ Այդ դեպքում ո՞ւմ ինչ գործն էր։ Բայց չէ, ուղղակի աշխարհի վերջն է...

Այդ ամենը Բորանլի Եդիգեյը շատը ձևի համար էր ասում, որպեսզի այնքան էլ վիրավորական չլինի, քանի որ հիանալի գիտեր իր անզորությունը։ Ի՞նչ պիտի աներ, հո դատարկ տեղը օդում չէ՞ր կրակելու։ Բաց արեց անասնոցը։ Եվ չհասցրեց ձողաններից ետ տանել ծանր, մարդաբոյ դուռը, երբ իրեն համարյա ոտնատակ տալով, դուրս նետվեց Կարանարը և սուրաց տափաստան՝ կատաղի ոռնոցով ու մռնչյունով, լայն-լայն գցելով լողլող ոտքերը և ցնցելով պիրկ, սև սապատները։ Մի ակընթարթում չքացավ տեսողությունից, ետևից բարձրացնելով ձյան ամպեր։

— Թո՛ւհ,— թքեց ծերը և բարկացած ավելացրեց։— Վազի՛ր, վազի՛ր, հիմար, թե չէ կուշանաս...

Եդիգեյը պետք է առավոտյան գնար աշխատանքի։ Դրա համար էլ ստիպված եղավ հաշտվելու Կարանարի ըմբոստությանը։ Եթե իմանար, ինչով կվերջանար այդ ամենը, մի՞թե բաց կթողներ, ոչ մի դեպքում, թեկուզ պայթեր։ Բայց ո՞վ կարող է տանը առանց իրեն յոլա տանել կատաղած ալթանին։ Թող կորչի գնա աչքից հեռու։ Եդիգեյը հույս ուներ, թե ուղտը մի քիչ քամուն կտա իրեն, նրա մեջ կպաղի տաք արյունը, կհանդարտվի...

Բայց կեսօրին եկավ Ղազանղապը և քթի տակ կարեկից ծիծաղելով ասաց.

— Էհ, բայ, վատ են գործերդ։ Քիչ առաջ արոտավայրում էի։ Քո Կարանարը, իմ կարծիքով, գնացել է մեծ արշավի։ Տեղի մատակները նրան չեն բավարարում։

— Ով գիտե փախել է հա՞։ Դե լավ, հերիք հոգուս հետ խաղաս, լուրջ խոսիր։

— Այստեղ ի՞նչ անլուրջ բան կա։ Քեզ ասում եմ, որ սիրտը ուրիշ երամակներ է ուզում։ Ինչ-որ բանի հոտ է առել գազանը։ Գնացել էի տեսնեմ, ինչպես է մեզ մոտ։ Հազիվ էի դուրս եկել մեծ հեղեղատից, նայեմ տեսնեմ մեկը այնպես է սուրում տափաստանով, որ գետինը դղրդում է։ Կարանարն էր։ Աչքերը դուրս են պրծել, գոռում է ինչքան ուժ ունի, երախից հոսում է լորձունքը։ Եվ գնացքի նման սուրում է, ետևից ձյան մրրիկներ բարձրացնում։ Հիմա կտրորի, մտածեցի։ Այնպես սուրաց կողքովս, կարծես չի էլ տեսնում, որ մարդ կա դիմացը։ Գնաց Մալարումդիշապի կողմը։ Այնտեղ, զառիթափի ներքևում ավելի մեծ

երամակներ են արածում, քան մեզ մոտ։ Այստեղ նրա համար հիմա հետաքրքիր չի։ Նրան հիմա մեծ ասպարեզ է պետք, անասունի ամենաբուռն ուժի շրջանն է։

Եղիգեյը լռջորեն հուզվեց։ Պատկերացրեց, ինչքան գլխացավանք ու անախորժություններ են լինելու։

— Դե լավ, հանգստացիր։ Այն կողմում լավ աթաններ կլինեն, սրան մի լավ ջարդ կտան, կուղարկեն, ծեծված շան նման տուն կգա, ո՞ւր պիտի գնա,— հանգստացրեց Ղազանղապը։

Հաջորդ օրը ռազմաճակատային հաղորդագրությունների նրման սկսեցին լուրեր գալ Բորանլի՝ Կարանարի մարտական գործողությունների մասին։ Պատկերը սակավ մխիթարական էր։ Բավական էր մի գնացք կանգ առներ Բորանլիում, անմիջապես մեքենավարը, հնոցապանը կամ ուղեկցորդը, առանց իրար հերթ տալու պատմում էին Կարանարի վայրագության ու ավերածությունների մասին, որ նա կատարում էր կայարանամերձ կամ կիսակայարանի շրջակա ուղտերի երամակում։ Հաղորդեցին, որ Մալաքումդիչապի կիսակայարանում Կարանարը սատկացնելու աստիճան ջարդել է երկու աթանի և առաջն արած տափաստան է քշել չորս էգի, տերերը մեծ դժվարությամբ ուղտերին փախցրել են Կարանարից։ Մարդիկ հրացանից օդ են կրակել։ Մի ուրիշ տեղ Կարանարը էգ ուղտի վրայից ցած է գցել տիրոջը։ Իսկ տըխմարի գլուխ տերը երկու ժամ սպասել է, հույս ունենալով, որ աթանը զվարճանալուց հետո խաղաղությամբ բաց կթողնի իր ուղտին, որը, ի դեպ, միտք էլ չուներ ազատվելու այդ անամոթից։ Բայց երբ մարդը սկսել է մոտենալ իր ուղտին, որ հեծնի տուն գնա, Կարանարը գազազած գազանի պես հարձակվել է նրա վրա, քշել և դեռ կտրորեր, եթե նա չթռչեր խոր խանդակի մեջ և մկան նման չթաքնվեր այնտեղ՝ կես ողջ, կես մեռած։ Այնուհետև, երբ ուշքի է եկել և ձորակից դուրս է եկել Բորանլի Կարանարի հանդիպման տեղից հեռու, շտապել է տուն, երջանիկ, որ ողջ է մնացել։

Սարօզեկյան բանավոր հեռախոսով հասնում էին նման այլևայլ լուրեր Կարանարի կատաղի արկածների մասին, բայց ամենատադնապալից և ամենաահեղ հաղորդագրությունը եկավ գրավոր ձևով, Ակ-Մոյնակ կիսակայարանից, որ գտնվում էր Կումբել կայարանից այն կողմ։ Այնտեղից իր գիրն էր ուղարկել ոմն Կոսպան։ Ահա թե ինչ էր գրված ուշադրության արժանի այդ նամակում։

*«Մալեմ, հարգելի Եդիգեյ աղա։ Չնայած դու սարօզեկներում նշանավոր մարդ ես, բայց ստիպված ես լսելու անախորժ լուրեր։ Ես կարծում էի, դու ուժեղ տղամարդ ես։ Ինչո՞ւ ես արձակել քո ջարդարար Կարանարին։ Քեզանից այդպիսի բան չէինք սպասի։ Նա ահուդող է գցել մեր սիրտը։ Խեղել է մեր աթաններին, խլել երեք լավագույն մատակների, ընդ որում այստեղ է եկել ոչ մենակ, քշել-բերել է թամբված մի էգ ուղտի, ըստ երևույթին տիրոջից է փախցրել ճանապարհին, թե չէ ինչո՞ւ պիտի թամբված լիներ։ Այսպես ուրեմն, խլել է այդ մատակներին, քշել է տափաստան և մոտ չի թողնում ոչ մարդու, ոչ անասունի։ Ինչպե՞ս կարելի է։ Մեր ջահել աթանշաններից մեկն արդեն սատկել է, պարզվեց, որ կողերը ջարդոտվել են։ Ես ուզեցա օդում կրակելով վախեցնել Կարանարին, ետ վերցնել մեր մատակներին։ Բայց որտեղի՞ց։ Ոչ մի բանից վախ չունի։ Պատրաստ է կծոտել, ողջ-ողջ խժռել ում պատահի։ Միայն թե չխանգարեն նրան զբաղվելու իր գործով։ Ոչ ուտում է, ոչ խմում, միայն հերթով թռչում է այդ մատակների վրա, գետինը ցնցվում է տակը։ Նողկալի է նայելը, թե ինչ ղազանաբար է այդ բանն անում։ Ընդ որում, ոռնում է տափաստանով մեկ, կարծես աշխարհի վերջը լինի։ Ուժ չկա լսելու։ Եվ ինձ թվում է, թե նա կարող է հարյուր տարի անընդմեջ զբաղվել այդ գործով։ Այդպիսի ճիվաղ կյանքումս չեմ տեսել։ Մեր ամբողջ ավանը տագնապի մեջ է։ Կանայք ու երեխաները վախենում են տանից դուրս գալ։ Դրա համար էլ ես պահանջում եմ, որպեսզի դու առանց հապաղելու գաս և տանես քո Կարանարին։ Ժամանակ եմ տալիս։ Եթե մեկ օրից չգաս և մեզ չազատես այդ փորձանքից, ապա չնեղանաս, թանկագին աղա։ Իմ հրացանը խոշոր տրամաչափի է։ Այսպիսի գնդակներով արջ են տապալում։ Կգնդակահարեմ նրա գարշելի գլուխը վկաների ներկայությամբ, և վերջ։ Իսկ կաշին կուղարկեմ ճամփակից ապրանքատարով։ Չեմ նայի, որ Բորանլի Կարանարն է։ Ես խոսքիս տեր մարդ եմ։ Եկ, քանի ուշ չի։*

*Քո ակ-մոյնակյան ինի*[1] *Կոսպան»*

*Համա թե գործ բացվեց։ Նամակը չնայած գրված էր սարսաղ մարդու ձեռքով, բայց նախազգուշացումը միանգամայն լուրջ էր։ Ղազանղապի հետ խելք-խելքի տվեցին, որոշեցին, որ*

---

1 Ինի — *կրտսեր եղբայր, կրտսեր տոհմակից, համերկրացի։*

Եղիգեյը պետք է անմիջապես մեկնի Ակ-Մոյնակ կիսակայարանը։

Ասելը հեշտ է, կատարելն է դժվար։ Հարկավոր էր հասնել Ակ-Մոյնակ, տափաստանից բռնել Կարանարին, այս ցրտերին ետ գալ, դեռ ամեն վայրկյան կարող էր ձյունահողմ բարձրանալ։ Ավելի լավ կլիներ տաք հագնվել, նստել անցնող ապրանքատարը, այնտեղից էլ գնալ ուղտով։ Բայց ինչ իմանաս, թե Կարանարը իր հարեմով որքան է խորացել տափաստանում։ Նամակի տոնից երևում էր, որ Ակ-մոյնակցիները կարող են այնքան զայրացած լինել, որ ուղտ չտան իրեն։ Այդ դեպքում ստիպված է լինելու օտար տեղում, ձնակույտերի միջով ընկնել Կարանարի ետևից։

Առավոտյան Եղիգեյը ճամփա ընկավ։ Ուկուբալան նրա հետ ճանապարհի պաշար դրեց։ Տաք հագնվեց։ Բամբակամեջ տաբատի և բաճկոնի վրայից հագավ ոչխարի մուշտակ, հագավ թաղիքե ռտնամաններ, գլխին դրեց աղվեսի մորթուց եռականջ գլխարկ, այնպիսին, որ կողքերից և ետևից պաշտպանում է քամուց, ամբողջ գլուխն ու վիզը մորթու մեջ, ձեռքերին՝ մորթե թաթպաններ։ Իսկ երբ թամբում էր ուղտին, որով պիտի գնար Ակ-Մոյնակ, մոտ վազեցին Աբութալիպի երեխաները, երկուսն էլ։ Դաուլը իրեն մեկնեց ձեռքով հյուսված բրդյա վզնոց և ասաց.

— Եղիգեյ քեռի, մաման տվեց, որ վի՛զդ չմրսի։

— Վի՞զս։ Ասա՝ բուկդ։

Եղիգեյը ուրախությունից կրծքին սեղմեց երեխաներին, համբուրեց, այնքան հուզվել էր, որ խոսք չէր գտնում։ Հոգին ցնծում էր, կարծես մանուկ լիներ. դա առաջին ուշադրության նշանն էր նրա կողմից։

— Մայրիկին կասես, որ ես շուտով կվերադառնամ, եթե աստված կամենա՝ վաղը ևեթ։ Ոչ մի րոպե չեմ ուշանա,— ասաց նա։— Եվ բոլորս կհավաքվենք, միասին թեյ կխմենք։

Այնքան էր ուզում Բորանլի Եղիգեյը շուտ հասնել այդ չարաբաստիկ Ակ-Մոյնակը և անմիջապես ետ գալ, որպեսզի տեսնի Զարիպային, նայի նրա աչքերին և համոզվի, որ այդ վզնոցը պատահական ակնարկ չի։ Նա վզնոցը խնամքով ծալեց, դրեց ալիջակի ծոցագրպանը։ Իսկ երբ արդեն դուրս էր գալիս և հետո, երբ բավական հեռացել էր տանից, հազիվ զսպեց իրեն, որպեսզի ետ չդառնա, աստված այդ գազազած Կարանարի հետ թող գնդակահարի նրան այդ ամեն Կոսպանը և թող կաշին ուղար-

լի, վերջապես ինչքա՞ն կարելի է դայակություն անել վայրենաբարո ուղտին, թող ճակատագիրը պատժի դրան։ Տեղն է, մտածում էր Եդիգեյը տաքացած գլխով։ Բայց ամաչեց։ Հասկացավ, հիմար պիտի լինի, որ այդպես խայտառակի իրեն մարդկանց աչքին, նախ և առաջ Ուկուբալայի, այնինքն նաև Զարիպայի աչքին։ Եվ հանդարտվեց։ Ինքն իրեն համոզեց, որ իր անհամբերությունը բավարարելու միայն մի միջոց կա. շուտ տեղ հասնել և շուտ վերադառնալ։

Այդ մտքերով էլ քշեց։ Բավական ցուրտ էր։ Զոր, միապադաղ փչում էր քամին։ Եղյամ էր նստում դեմքին, մանավանդ աղվեսի մորթուց գդակը սառել, ծածկվել էր փափուկ ձնափոշով։ Նույն սպիտակ ձնափոշին պաշարել էր նաև թուխ ուղտի շնչառությունը՝ վզից մինչև ետնաբաշ։ Ձմեռը ուրեմն, ուժի մեջ էր մտնում։ Հեռաստանները մշուշվել էին։ Մոտերքում կարծես մշուշ չկա, բայց նայում ես մինչև տեսանելիության սահմանը մշուշ է նստած։ Այդ մշուշը առաջանալով կարծես ետ էր քաշվում։ Ինչքան ճամփորդը մոտենում էր մշուշին, մշուշն այնքան նահանջում էր։ Անմարդ և դաժան էին հողմաշունչ սպիտակության մեջ սառած ձմեռային սարօզեկները։

Զահել, բայց արագաշարժ էդ ուղտը վատ չէր քայլում, առույգ տրորելով խոպանը։ Բայց Եդիգեյի համար դա այն քայլքը չէր, այն արագությունը չէր։ Կարանարը լիներ, բոլորովին ուրիշ կերպ կգնային։ Նրա շնչառությունը շատ ավելի հզոր է, քայլքի թափն էլ չի կարելի համեմատել։ Զուր չեն պապերն ասել.

> Ինչո՞վ է առավել այս ձին այն ձիուց.
> Գերազանց քայլքո՞վ է առավել։
> Ինչո՞վ է առավել այս բաթիրը այն բաթիրից.
> Գերազանց խելքո՞վ է առավել...

Դեռ պետք է շատ գնային ու միշտ մենակ էին լինելու։ Շատ կձանձրանար Եդիգեյը ճանապարհին, եթե չլիներ Զարիպայի նվիրած վղնոցը։ Ամբողջ ճանապարհին նա զգում էր այդ, կարծես շնչին, իրի ներկայությունը։ Քիչ կյանք չի ապրել Եդիգեյը, բայց չէր կարող ենթադրել, որ նման մանրուքը կարող է սիրտ ջերմացնել, եթե գալիս է սիրելի կնոջից։ Ամբողջ ճանապարհին զբաղված էր դրանով. ձեռքը տանում էր ծոցագրպանը, շոյում էր վզնոցը և երանությամբ ժպտում։ Բայց հետո մտքի մեջ ընկավ։ Ինչպե՞ս ապրի, ինչպես ապրի այսուհետև։ Առջևում կա-

տարյալ փակուղի էր։ Ի՞նչ անել։ Ողջ մարդը պետք է ապրի՝ առջևում տեսնելով նպատակ և ուղիներ դեպի այդ նպատակը։ Իսկ ուղիներ չկային։

Եվ այնժամ թախծոտ մշուշով էր պարուրվում Բորանլի Եդիգեյի հայացքը, ինչպես այն սարօզեկյան լուռ հեռաստանները, որոնք ծածկված էին սառնամանիքային մշուշով։ Պատասխան չէր գտնում Եդիգեյը. տանջվում, հալումաշ էր լինում, ընկճվում և նորից հուսադրում իրեն անհույս անուրջներով...

Երբեմն այս մենությունից և լռությունից խկապես զարհուրում էր նա։ Այս ի՞նչ կյանք է բաժին ընկել իրեն։ Ինչո՞ւ ընկավ այս սարօզեկները։ Ինչո՞ւ Բորանլիում հայտնվեց այս ճակատագրից հալածված թշվառ ընտանիքը։ Չլիներ այդ ամենը, ոչ մի ցավ չէր ունենա, կապրեր իր համար հեշտ ու հանգիստ... Բայց, ոչ, իր հոգին անկար է և ուզում է անհնարինը... Այս բոլորը քիչ է, մի կողմից էլ այդ գազազած Կարանարը, մի հոգս էլ դա, ատամը կրակուպատիժ. չէ՛, բախտը չի բերում։ Չէ՛, լուրջ, նրա բախտը չի բերում կյանքում...

Եդիգեյը Ակ-Մոյնակ հասավ համարյա իրիկնամուտին։ Հոգնել էր ուղտը։ Ճանապարհը երկար էր, այն էլ ձմեռ օրով։

Ակ-Մոյնակը Բորանլիի նման կիսակայարան է, այն տարբերությամբ միայն, որ ջուրն իրենցն է, ջրհորից են հանում։ Առանձին ուրիշ տարբերություն չկա, միևնույն սարօզեկներն են։

Մտնելով Ակ-Մոյնակ, Եդիգեյը փոքրիկ փողոցի ծայրին հանդիպեց մի մարդու և հարցրեց, թե ո՞վ է այստեղ Կոսպանը։ Մարդը պատասխանեց, թե Կոսպանը աշխատանքի է, հերթապահում է կիսակայարանում։ Բորանլի Եդիգեյը այնտեղ էլ գնաց։ Մոտեցավ հերթապահի տնակին և արդեն ուզում էր ուղտից իջնել, երբ առմուտքին երևաց միջահասակ, աշխույժ, խորամանկ քմծիծաղը դեմքին մի մարդ, հագին կիսամուշտակ, որ շատ մեծ էր վրան, ոտքերին թաղիքե մաշված ոտնամաններ և գլխին թեք դրած ականջակալներով հին գլխարկ։

— Ա՛, Եդիգեյ աղա։ Մեր սիրելի Բորանլի աղա։— Նա անմիջապես ճանաչեց Եդիգեյին, առմուտքից ցած սահելով։— Ուրեմն ժամանեցի՞ր։ Մեր աչքը ջուր կտրեց սպասելով, չգիտեինք կգա՞ս, թե չես գա։

— Ինչպե՞ս կարող էի չգալ,— քմծիծաղեց Եդիգեյը,— երբ այդքան սպառնալից նամակ էիք ուղարկել։

— Բա ի՞նչ անեինք։ Դեհ, նամակը հեչ, Եդիգեյ-աղա։ Նա-

մակը թուղթ է։ Դու ուրիշ բանից խոսիր։ Պետք է մեզ շատալ փրկես քո Կարանառից, թե չէ կարծես պաշարման մեջ լինենք։ Տափաստան մտնելու իրավունք չունենք։ Հենց որ հեռվից մարդ է տեսնում, կատաղած վազում է, ուզում է հոշոտել։ Համա թե պարզի՞տ է։ Սարսափելի բան է այդպիսի ամբան պահելը։— Լռեց, նայեց ուղտին նստած Եղիգեյին և ավելացրեց։— Բայց ինչպե՞ս պիտի կառավարես դրան, մերկ ձեռքերո՞վ, ինչ է։

— Ինչո՞ւ մերկ ձեռքերով։ Ահա իմ զենքը։— Եղիգեյը խուրջինից հանեց մտրակը, որ փաթաթված էր կոթին։

— Այդ մտրակո՞վ։

— Հապա ի՞նչ, գուցե կհրամայես գնդացի՞ր հանեմ ուղտի դեմ։

— Մենք իսկի հրացանով չենք համարձակվում։ Չգիտեմ, միգուցե, իհարկե, եթե քեզ ճանաչի իբրև տիրոջ, այն դեպքում... Բայց հազիվ թե, նրա աչքերը բան չեն տեսնում։

— Այդ դեռ կտեսնենք,— պատասխանեց Եղիգեյը։— Էլ ի՞նչ ենք ժամանակ կորցնում։ Ըստ երևույթին դու ես որ կաս Կոսպանը։ Եթե այդպես է, ինձ տար տեղը ցույց տուր, մնացածը թող ինձ։

— Այնքան մոտիկ չի,— ասաց Կոսպանը, նայեց չորս բոլորը, հետո նայեց ժամացույցին։— Լսիր, Եդիգեյ-աղա, ուշ է արդեն։ Մինչև տեղ հասնենք, մութը կընկնի։ Հետո ի՞նչ անես գիշերվա կեսին։ Չէ, այդպես չի լինի։ Քեզ նման մարդիկ շատ չեն պատահում։ Եղիր մեր հյուրը։ Իսկ առավոտյան, ինչպես սիրտդ կուզի։

Այդպիսի ընթացք Եդիգեյը չէր սպասում։ Նա հույս ուներ, եթե հաջողվեր բռնել Կարանառին, հենց այս գիշեր հասնել Զումբել, գիշերը մնալ ծանոթների տանը՝ կայարանի մոտ, իսկ լուսաբացին ճանապարհվել տուն։ Տեսնելով, որ Եդիգեյը ուզում է գնալ, Կոսպանը կտրականապես առարկեց։

— Ոչ, Եդիգեյ-աղա, այդպես չի լինի։ Նամակի համար ներող եղիր։ Ուրիշ ելք չունեինք։ Շատ է նեղում։ Բայց քեզ բաց չեմ թողնի։ Եթե, աստված չանի, մի բան պատահի գիշերով, անմարդ, ձյունոտ տափաստանում, ես սներես կմնամ ամբողջ Սարի-օզեկներում։ Մնա, իսկ առավոտյան, ինչպես կուզես։ Հրեն իմ տնակը, վերջում։ Ես դեռ մեկուկես ժամ պիտի հերթապահեմ։ Քեզ ազատ զգա իմ տանը։ Տեղավորվիր։ Ուղտին կանգնեցրու անասնոցում։ Կեր կլինի։ Ջուր, ինչքան ասես կա։

Արագորեն մթնեց այն ձմեռային օրը։ Կոսպանն ու իր ընտանիքը հրաշալի մարդիկ դուրս եկան։ Պառավ մայրը, կինը, հինգամյա տղան (մեծ աղջիկը, պարզվեց, որ սովորում է Ղումբելի գիշերօթիկում) և ինքը՝ Կոսպանը, ամեն կերպ սիրաշահում էին հյուրին։

Տունը լավ տաք էր և եղակի աշխուժություն էր տիրում։ Խոհանոցում եփվում էր ձմեռվա համար մորթված միսը։ Այդ ընթացքում թեյ խմեցին։ Պառավ մայրը իր ձեռքով Բորանլի Եդիգեյի համար թեյ էր լցնում թասերը, շարունակ հարցուփորձ անում նրա ընտանիքից, երեխաներից, ապրուստից, եղանակից, թե որտեղացի՞ է, ի՞նչ ազգ ու տոհմից, ինքն էլ իր հերթին պատմում էր, թե երբ և ինչպես են եկել Ակ-Մոյնակ կիսակայարանը։ Եդիգեյը սիրով մասնակցում էր խոսակցությանը, գովեց դեղին յուղը, որ շերտ-շերտ դնում էր տաք բլիթների վրա և գցում բերանը։ Կովի յուղը սարօզեկներում հազվագյուտ բան է։ Ոչխարի, այծի, ուղտի յուղը նույնպես վատը չի, բայց կովինը շատ ավելի համեղ է։ Կովի յուղը նրանց ուղարկել էին բարեկամները, Ուրալից։ Եդիգեյը կուլ տալով բլիթները, հավատացնում էր, թե նույնիսկ զգում է մարգագետնի խոտերի հոտը, որով գրավեց պառավին, և սա սկսեց պատմել իր ծննդավայրի մասին, յաիցկիխ[1] հողերի մասին, այնտեղի խոտերի, անտառների ու գետերի մասին։

Այդ ժամանակ եկավ նաև կիսակայարանի պետ Էռլեպեսը, որին Կոսպանը հրավիրել էր Բորանլի Եդիգեյի գալստյան առթիվ։ Էռլեպեսի գալով ինքնըստինքյան սկսվեց տղամարդկային խոսակցություն ծառայության, փոխադրականների, ձնահյուսերի մասին։ Եդիգեյը Էռլեպեսին առաջ էլ մի քիչ ծանոթ էր. սա վաղուց էր աշխատում երկաթուղում, իսկ հիմա առիթ եղավ ավելի մոտիկից ծանոթանալու։ Էռլեպեսը Եդիգեյից մեծ էր։ Նա Ակ-Մոյնակի պետ էր աշխատում դեռևս պատերազմի ավարտից անմիջապես հետո և զգացվում էր, որ կիսակայարանում նրան հարգանքով էին վերաբերվում։

Լուսամուտների ետևում արդեն գիշեր էր։ Բորանլիի նման, այստեղ նույնպես մի գլուխ դղրդալով անցնում էին գնացքները, զնգզնգում էին ապակիները, քամին սուլում էր լուսամուտների

---

1 Յաիցկիխ — «չայկ» բառից (ընդարձակ, լայն) ղազախները նախկինում այդպես են անվանել Ուրալ գետը։

փեղկերում։ Այսուամենայնիվ, սա բոլորովին ուրիշ տեղ էր, թեև միևնույն երկաթգծի վրա էր, սարօղեկներում, և Եղիգեյը գտնըվում էր բոլորովին ուրիշ մարդկանց մեջ։ Այստեղ նա հյուր էր, թեև եկել էր խելագար Կարանարի ետևից, միևնույն է, նրան դիմավորեցին արժանավայել կերպով։

Էդիլբեյի գալով Եդիգեյն իրեն ավելի լավ զգաց։ Էդիլբեյը լավ գիտեր ղազախական անցյալը։ Շուտով զրույցը շուռ եկավ անցյալ ժամանակների վրա, նշանավոր մարդկանց, նշանավոր պատմությունների վրա։ Այդ երեկո Եդիգեյը շատ համակրեց իր նոր ակ-մոյնակցի ընկերներին։ Դրան էին տրամադրում ոչ միայն զրույցները, այլև տանտիրոջ ու տանտիրուհու սրտաբացությունը, որոշ իմաստով նաև լավ հյուրասիրությունն ու խմիչքը։ Օղի կարի Սառնամանիքից ու ճանապարհից եկած Եդիգեյը խմեց կես բաժակ, ապա համտես արեց ցածրիկ, կլոր սեղանիկին շարված աղը դրված օրկոշի՝ ջահել ուղտամսի սապատի ճարպի պուխտից,— և երանությունը տարածվեց մարմնով, շոյեց և խանդաղատանքով լցրեց հոգին։ Մի քիչ հարբել էր Բորանլի Եդիգեյը, աշխուժացել, ժպտում էր։ Էդիլբեյը նույնպես, հյուրի պատվին, իրեն թույլ տվեց խմելու և նույնպես տրամադրությունը բարձրացավ։ Դրա համար էլ Կոսպանին խնդրեց.

— Կոսպան, սատծու սիրուն, գնա իմ դոմբրան բեր։

— Ա՜յ, դա եղավ,— հավանություն տվեց Եդիգեյը։— Փոքր հասակից նախանձում եմ դոմբրա նվագողներին։

— Մեծ նվագ չեմ խոստանում, Եդիկե, բայց որոշ բան կհիշեմ քո պատվին,— ասաց Էդիլբեյը, պիջակը հանելով և նախօրոք քչտելով շապկի թևքերը։

Ի տարբերություն ճարպիկ, շատախոս Կոսպանի, Էդիլբեյը ավելի զուսպ էր։ Լայն երեսով, հաղթանդամ, նա անմիջապես վստահություն էր ներշնչում։ Երբ ձեռքն առավ դոմբրան, կենտրոնացավ, կարծես վերացավ առօրեականությունից։ Այդպես է լինում, երբ մարդը պատրաստվում է դրսևորել իր նվիրական սերը։ Էդիլբեյը Եդիգեյին նայեց երկար, իմաստուն հայացքով, և նրա սև, դուրս պրծած խոշոր աչքերում, ծովի նման փայլին տալով, շողացին լույսի ցոլքեր։ Իսկ երբ հարվածեց լարերին, և երկար, ամուր մատները վերուվար արեցին դոմբրայի բարձր վզիկի բացվածքի երկարությամբ, մեկեն դուրս կորզելով հընչյունների մի ամբողջ ողկույզ և միաժամանակ կապելով նոր ող-

կույզների հանգույցներ, որ հետագայում զարգացնելով թեման պետք է առատորեն քաղեր լարերից, Եղիգեյը հասկացավ, որ այդ երաժշտության ունկնդրումը հեշտ ու հանգիստ չի լինելու իր համար։ Որովհետև, ինչպես պարզվեց, ինքը ընդամենը մի քիչ մոռացել էր իրեն, մի քիչ անջատվել հյուրընկալների տանը, բայց դոմբրայի առաջին իսկ հնչյունները նորից նրան վերադարձրին իրականությանը, նորից գլխովին նետեցին ցավի ու դառնության խորխորատը։ Ինչի՞ց առաջացավ այդ։ Ուրեմն, նշանակում է այս երաժշտությունը հորինող մարդկանց վաղուց է հայտնի եղել, թե ինչ է պատահելու Բորանլի Եդիգեյին, ինչպիսի չարչարանք ու տառապանք է նախասահմանել նրա համար ճակատագիրը։ Այլապես նրանք ինչպես կարող էին իմանալ, թե ինչ է զգալու նա, եթե տեսնի իրեն Էղեպեսի մեղեդիների մեջ։ Թրթռաց Եդիգեյի հոգին, ճախրեց և հառաչեց, և մեկեն նրա առջև բացվեցին աշխարհի բոլոր դռները՝ բերկրության, թախծի, խոհերի, անորոշ ցանկությունների և կասկածների դռները։

Իսկապես Էղեպեսը գերազանց էր դոմբրա նվագում։ Մարդկային անցյալի ապրումները հարություն էին առնում լարերի վրա, օջախը գցված չոր փայտերի պես դուրս բերում հոդեկան այրումի հույզը։ Իսկ Եդիգեյը շարունակ շոյելով պիջակի ծոցագրպանում պահված ընծա-վզնոցը, այդ պահին մտածում էր, թե աշխարհում կա մի կին, որին սիրում է և լոկ մտածելը նրա մասին իր համար ուրախություն է և տանջանք, որ առանց նրա ապրել չի կարող, դրա համար էլ ինչ գնով լինի, հավերժ կսիրի նրան, կսիրի անհույս, անսպառ, անհատնում սիրով։ Այդ մասին էր հնչում դոմբրան՝ մերթ մարելով, մերթ բոցավառվելով Էղեպեսի ձեռքերում։ Մի եղանակին փոխարինում էր մյուսը, մի մեղեդին ձուլվում էր հաջորդին, և լողում էր Եդիգեյի հոգին, ինչպես ալիքներին հանձնված նավակ։ Նորից մտովի հայտնվեց Արալյան ծովում։ Միտքն ընկան ափերի երկարությամբ ընթացող ծովային անտեսանելի հոսանքները, որոնց ուղղությունը ենթադրվում է կանացի վարսերի նման երկար ու խիտ ջրիմուռներից և որոնք լողում են հոսանքի ուղղությամբ, ձգվելով միևնույն տեղում։ Ժամանակին Ուկուբալայի մազերը այդպիսին էին, իջնում էին ծնկներից վար։ Երբ նա լողում էր, նրա մազերը ծանր լողում էին մի կողմի վրա, ինչպես այն ջրիմուռները՝ ծովի հոսանքի հետ։ Իսկ նա երջանիկ ծիծաղում էր, և գեղեցիկ էր ու թովիչ։

Բացվեց, փլվեց Բորանլի Եդիգեյը, այնքան հաճելի էր դոմբրայի նվագը։ Միայն հանուն սրա արժեր ձյունապատ սարօզեկներով կտրել մի օրվա ճամփա։ «Ինչ լավ է, որ Կարանարը այս կողմն է ընկել,— մտածում էր Եդիգեյը։— Ինքը հայտնվել է այստեղ, ինձ էլ բերել է ետևից, ուղղակի ստիպել է գալ։ Իսկ իմ սիրտը գեթ մի անգամ կվայելի դոմբրայի հաճույքը։ Կեցցե՛ս, Էրլեպես, պարզվում է, մեծ վարպետ ես։ Ես չեմ էլ իմացել...»։

Ականջը Էրլեպեսի նվագին էր, սակայն մտքերը ուրիշ տեղ էին։ Եդիգեյը փորձում էր կողմնակի աչքով նայել իր կյանքին, տափաստանային ուրուրի պես այդ կյանքից բարձրանալ վեր ու վեր և այնտեղից, կատարյալ մենության մեջ, թևերը ուղիղ տարածած, ճախրելով օդային հոսանքների մեջ, դիտել, թե ինչ կա ներքևում։ Նրա հայացքի առջև փռվեց ձյունապատ սարօզեկների վիթխարի պատկերը։ Այնտեղ, երկաթուղու աննկատելի ուղու վրա, կուչտով խրված էին մի քանի տնակներ և մի քանի ճրագներ. դա Բորանլի կիսակայարանն էր։ Տնակներից մեկում Ուկուբալան էր՝ աղջնակների հետ։ Նրանք երևի քնած կլինեն։ Ուկուբալան դժվար թե քնած լինի։ Նա մտածելու բան ունի, սիրտը երևի նախազգում է։ Իսկ մյուս տան մեջ Զարիպան է, տղաների հետ։ Նա որ հաստատ քնած չի։ Ծանր է վիճակը, ինչ խոսք։ Եվ դեռ ինչքան ցավ ունի քաշելու, տղաներն, ախր, դեռ բան չգիտեն հոր մասին։ Ի՞նչ պիտի անի, ճշմարտությունից հո չի կարող փախչել...

Պատկերացրեց, թե այդ ժամին գնացքներն ինչպես են դղրդալով ճեղքում խավարը, թրթռացնելով լույսերն ու ձնափոշին բարձրացնելով, և ինչ էլ խուլ ու անծայր գիշեր է չորսբոլորը։ Այստեղից ոչ հեռու, որտեղ ինքը հիմա հյուր է և դոմբրա է լսում, արթուն է մոլեգնած Կարանարը անլուր խավարի և վայրի տափաստանի քամիների ու ձյան մեջ։ Նրա աչքին ոչ քուն է գալիս, ոչ էլ դադար ունի։ Զարմանալի բան է բնությունը։ Տարին բոլոր ուղտը ուժ է կուտակում, տարին բոլոր, օր-օրի վրա կեր է կուտակում ու ծամում, անդադրում, անվերջ, հզոր ծնոտներով տրորում է որոճը, և դրան համապատասխան էլ ստեղծված է նրա ստամոքսը, սկզբում ընդունում է կոպիտ կերը, հետո ետ է դարձնում երրորդ անգամ մանրացնելու համար։ Ուղտը հենց դրանով էլ զբաղված է շարունակ, որոճ է անում քայլելիս, նույնիսկ՝ քնած ժամանակ։ Այդպիսով ուժը հավաքում, կենտրոնացնում է սապատների մեջ, և որքան հզոր, լիքը, ամուր են սապատները,

այնքան սրսուռ է դրանց մեջի ճարպը, այնքան հզոր է սրում ձմեռային վազքի ժամանակ։ Այս դեպքում նրա համար նշանակություն չունի ո՛չ ձյուն, ո՛չ ցուրտ, ո՛չ նույնիսկ տերը, ո՛չ էլ, մանավանդ, ուրիշ մարդիկ։ Այս դեպքում նա մոլեգնում, հարբում է անսանձ ուժից, այս դեպքում նա տեր ու տիրակալ է և ոչ հոգնել ունի, ոչ ահ ու երկյուղ, և աշխարհում այլևս ոչինչ գոյություն չունի՝ ոչ խմել, ոչ ուտել, ոչի՛նչ, բացի իր մեծ, անսանձ կիրքը բավարարելուց։ Չէ՞ որ հենց դրա համար է ապրել ամբողջ տարին, դրա համար է օրըստօրե ուժ կուտակել։ Եվ մինչ Բորանլի Եդիգեյը հյուր էր և տաքուկ ու կուշտ նստած երաժշտություն էր լսում, այդ պահին, այս կողմերում մի տեղ, փոթորկոտ գիշերում, լուսնահար ձյուների մեջ խելակորույս պտույտ-պտույտ էր անում Կարանարը՝ հալատարիմ արյան կանչին, և ամենայն կողմնակիից խանդոտ պաշտպանում իր ընտրած մատակներին, թույլ չտալով, որ նրանց մոտ գա օձն իր պորտով, հավքն իր թևով, գիլ վայնասուն բարձրացնելով և ահեղ թափահարելով սև մռութի փրշերը։

Եվ այդ մասին էր մտածում Եդիգեյը դոմբրայի հնչյունների տակ...

Երաժշտությունը մի ակնթարթում նրա մտքերը անցյալից տեղափոխում էր ներկա և նորից՝ անցյալ։ Տանում էր վաղվան։ Ընդ որում, տարօրինակ ցանկություն էր առաջացել վտանգից պահել-պահպանել այն ամենը, ինչ թանկ է իրեն, իր իմացած ամբողջ աշխարհը, որպեսզի ոչ մի շնչավոր արարած իրեն վատ չզգա։ Եվ մեղավորության ինչ-որ տարտամ զգացողություն նրանց առջև, ովքեր կապված էին իր կյանքին, նրա մեջ առաջացնում էր թաքուն տրտմություն...

— Ուա՜, Եդիգեյ,— կանչեց Էռլեպեսը, մտախոհ ժպիտով ավարտելով նվագը՝ մանրիկ դիպչելով հանդարտվող լարերին։— Ախր դու ճանապարհից հոգնած կլինես, դու պիտի հանգստանաս, իսկ ես կպած դոմբրա եմ ծնգծնգացնում։

— Չէ՛, Էռլիկե, ի՞նչ ես ասում,— անկեղծորեն շփոթվեց Եդիգեյը, ձեռքը դնելով կրծքին։— Ընդհակառակը, վաղուց ես այսքան լավ չեմ զգացել ինձ։ Եթե չես հոգնել, շարունակիր, լավություն արա։ Նվագի՛ր։

— Իսկ ի՞նչ կուզեիր։

— Դու ավելի լավ գիտես, Էռլիկե։ Վարպետն ինքը գիտե, թե ինչն է ձեռքից լավ գալիս։ Իհարկե, հին բաները կարծես ավելի

Հարազատ են։ Չգիտեմ ինչու, սիրտս են մտնում, մտքերս խռովում։

Էոլեպեսը գլխով արեց.

— Մեր Կոսպանն էլ է այդպես,— քմծիծաղ տվեց նա, աչքը ցցելով անսովոր կերպով սակված Կոսպանին։— Հենց դոմբրա է լսում, հալչում, ուրիշ մարդ է դառնում։ Չէ՞, Կոսպան։ Բայց այսօր չմոռանաս, որ հյուր ունենք, մի քիչ կաթեցրու, տեսնեմ։

— Այս վայրկյանիս,— աշխուժացավ Կոսպանը և օղի ավելացրեց բաժակների մեջ։

Խմեցին, կերան։ Մի քիչ շունչ առավ Էոլեպեսը և նորից ձեռքն առավ դոմբրան, նորից ձեռքը լարերին խփելով ստուգեց գործիքը։

— Քանի որ քո սրտին մոտ են հին բաները,— Եդիգեյին դիմեց նա,— հիշեցնեմ մի պատմություն։ Շատ ծերունիներ գիտեն այդ, դու էլ գիտես։ Ի միջի այլոց ձեր Ղազանղապը լավ է պատմում, բայց նա պատմում է, իսկ ես կնվագեմ ու կերգեմ, մի ամբողջ թատրոն ցույց կտամ։ Քո պատվին, Եդիգեյ։ «Ռայմալի աղայի ուղերձը իր եղբայր Աբդիլխանին»։

Եդիգեյը երախտագիտությամբ գլխով արեց։ Էոլեպեսը խփեց լարերին, ասքն սկսելով դոմբրայի քաջ ծանոթ նախերգով, և նորից տնքաց Եդիգեյի խռովահույզ հոգին, քանզի ինչ-որ կար այդ պատմության մեջ, այս անգամ նրա հոգում արձագանք էր տալիս յուրօրինակ անձկությամբ ու ըմբռնումով։

Ղողանջում էր դոմբրան, նրան լրացնում էր երգող Էոլեպեսի թանձր, խուլ ձայնը, որ շատ համապատասխան էր նշանավոր ջիրաու[1] Ռայմալի աղայի ողբերգական կյանքի պատմությունն անելու համար։ Ռայմալի-աղայի վաթսունն անց էր, երբ սիրահարվում է մի ջահել աղջկա, տասնիննամյա թափառական երգչուհի Բեգիմային։ Բեգիմայը նրա ճամփին հուրհրատում էր վառ աստղի նման։ Ավելի ճիշտ, աղջիկն է սիրահարվում նրան։ Բայց Բեգիմայը ազատ, քմահաճ աղջիկ էր և կարող էր ինքն իրեն ղեկավարել այնպես, ինչպես ցանկանում էր։ Բայց հասարակական կարծիքը դատապարտում է Ռայմալի-աղային։ Այդ օրից ի վեր սիրային այս պատմությունն ունի իր կողմնակիցներն ու հակառակորդները։ Անտարբերներ չկան։ Ոմանք չեն ընդունում, մերժում են Ռայմալի-աղայի արարքը և պահանջում են, որ նրա

---

1 ջիրաու — տափաստանային գուսան։

անունը մոռացվի, մյուսները կարեկցում, ցավակցում են, սրբահարի այս դառը պատմությունը բերնեբերան հաղորդելով սերնդից սերունդ։ Այդպես էլ ապրում է Ռայմալի-աղայի ասքը։ Բոլոր ժամանակներում Ռայմալի-աղան ունեցել է իր վձատաբանողները և իր պաշտպանները։

Այդ երեկո Եդիգեյի միտքն ընկավ, թե ճախրուկաչքը ինչպես հայհոյեց ու չարացավ, երբ Աբութալիպ Կուտիբաևի թղթերի մեջ հայտնաբերեց Ռայմալի-աղայի ուղերձը իր եղբայր Աբդիլխանին։ Աբութալիպը, ընդհակառակը, շատ բարձր կարծիքի էր այդ, ինչպես ինքն էր ասում, տափաստանային Գյոթեի պոեմի մասին։ Պարզվում է, գերմանացիներն էլ են ունեցել մեծ և իմաստուն ծերունի, որ սիրահարվել է ջահել աղջկա։ Աբութալիպը Ռայմալի-աղայի երգը գրի էր առել Կազանգապի պատմածով, այն հույսով, որ որդիները կկարդան, երբ մեծանան։ Աբութալիպն ասում էր, որ կան առանձին դեպքեր, մարդկային առանձին ճակատագրեր, որոնք դառնում են շատերի ունեցվածքը, որովհետև տվյալ դասի արժեքը այնքան բարձր է, այդ պատմությունը այնքան բան է ներառնում իր մեջ, որ մի մարդու ապրածն ասես տարածվում է բոլորի վրա, ովքեր ապրել են այն ժամանակները, նույնիսկ նրանց վրա, ովքեր պիտի գան շատ ավելի ուշ...

Դեմը՝ ոգևորված խփելով դոմբրայի լարերին, հետո էլ ձայնակցելով, նստած էր Էռլեպեսը, կիսակայարանի պետը, որի գործը առաջին հերթին երկաթուղու որոշ մասի գծերի հսկողությունն էր, թվում էր, ինչո՞ւ պիտի իր մեջ կրի անցած-գնացած ժամանակների պատմությունը, տարաբախտ Ռայմալի-աղայի պատմությունը, ինչո՞ւ պիտի տառապի այդպես, կարծես թե նրա փոխարեն ինքն է... Ահա թե ինչ է նշանակում երաժշտություն և ճշմարիտ երգ, մտածում էր Եդիգեյը, եթե ասեին մեռի՛ր և նորից ծնվիր,— դրան էլ էր պատրաստ այդ րոպեին... Ախ, ինչպես կուզեր, որ իր պայծառացած հոգում հավետ վառվեր այսպիսի կրակ, որի շնորհիվ մարդն ինքն իր մասին մտածում է հստակ, ազատ և լավագույն ձևով...

Նոր տեղում Եդիգեյը չկարողացավ շուտ քնել, թեև պառկելուց առաջ դուրս էր եկել մաքուր օդ շնչելու, թեև տանտերերը համար, տաք անկողին էին գցել, փռել էին թարմ սավաններ, որ ամեն մի տան մեջ պահպանվում է այսպիսի դեպքերի համար։ Նա պառկած էր լուսամուտի տակ և ականջ էր դնում ինչպես է կրճտացնում ու սուլում քամին, ինչպես էին անցնում

գնացքները ճանապարհի այս և այն կողմերում... Սպասում էր լուսաբացին, որպեսզի սանձահարի ըմբոստացած Կարանաուին և վաղ ճանապարհ ընկնի, շուտ հասնի Բորանլի, որտեղ իրեն սպասում են երկու տան երեխաները, որովհետև նա բոլորին սիրում էր հավասար, որովհետև աշխատում, ապրում էր լոկ որպեսզի նրանք լավ զգան... Մտածում էր նաև, թե ինչ միջոցով պիտի հանդարտեցնի Կարանաուին։ Ահա խնդիրը, իր կյանքում ամեն ինչ այնպես չէ, ինչպես մյուսների կյանքում, և իրեն բաժին ընկած ուղտն էլ ամենաքմահաճ և կատաղի ուղտն է, մարդիկ սարսափում են լոկ նրա տեսքից և պատրաստ են սպանելու նրան... Բայց ինչպես պիտի անասունի գլուխը մտցնես, թե ինչն է լավ, ինչը՝ վատ... Ախր, նա այստեղից հրապուրվել է ոչ հենց այնպես, բնությունն է այդպես տնօրինել, իսկ Կարանաուը մեծ է և զորեղ, դրա համար էլ ոչ մի արգելք չի ճանաչում, և ով կանգնի նրա ճանապարհին՝ կկործանի... Ինչպե՞ս վարվել, ինչպե՞ս զսպել։ Ստիպված պիտի շղթայի նրան և ամբողջ ձմեռը պահի անասնոցում, թե չէ նրա հանդուգն գլուխը տեղում չի մնա, եթե Կոսպանը չգնդակահարի, մեկ ուրիշը կանի, և արդեն ոչինչ անել չես կարողանա...

Քնելիս, նորից հիշեց Էդիլեպեսի երգը, նրա նվագը։ Շատ գոհ էր, որ նրա հետ անց է կացրել մի ամբողջ երեկո։ Դոմբրայի շնորհիվ վերակենդանացան և իր հոգու մեջ տեղափոխվեցին անցյալ ժամանակներում, իր չար բախտից սիրահարված Ռայմալի-աղայի տառապանքները։ Եվ չնայած ոչ մի ընդհանուր բան չկար նրանց միջև, Եդիգեյը Ռայմալի-աղայի այդ պատմության մեջ զգում էր ինչ-որ հեռավոր նմանություն, միաժամանակ ինչ-որ ցավ։ Այն, ինչ ապրել է Ռայմալի-աղան հարյուր տարի առաջ, այժմ իբրև արձագանք մնում էր իր՝ ամայի սարօզեկներում բնակվող Բորանլի Եդիգեյի մեջ։ Եդիգեյը ծանր տնքում էր, շուռումուռ գալիս անկողնում։ Տխրել-տրտմել էր վերահաս անհայտության, անորոշության զգացումից։ Ո՞ւր գնա հիմա և ինչպե՞ս ապրի հետո։ Ի՞նչ ասի Զարիպային և ի՞նչ պատասխանի Ուկուբալային։ Չէ, ճամփաբաժան չէր գտնում, թափառում էր, մոլորվում, և երբ քունը տարավ, հանկարծ հայտնվեց Արալյան ծովում... Գլուխը պտտվեց անտանելի կապույտից և քամուց... Եվ, ինչպես մանուկ ժամանակ, նետվեց ծովի կողմը, որ իրեն երևակայի ալիքների վրա սավառնող ճայ, և դրանից ուրախացավ, ցնծաց, ճախրում էր ծովային տարածության վրա և շա-

րունակ լսում էր, ինչպես է ղողանջում ու հնչում դամբրան, ինչպես է էոլեպեսը երգում Ռայմալի-աղայի դժբախտ սիրո մասին, և նորից նրան տեսավ, թե ինչպես ոսկյա մեկրեն ծովը գցեց, մեկրեն պիրկ էր ու ծանր, և երբ նրան տանում էր ջրի մոտ, հստակորեն զգաց ձկան կենդանի մարմինը և ձկան փափաքը՝ նետվելու իր տարերքի մեջ։ Նա քայլում էր ալեկոծ ափն ի վեր, ծովը գլորվում էր նրան ընդառաջ, ինքը ծիծաղում էր քամու երեսին, իսկ հետո բաց թողեց ձեռքերը, և ոսկյա մեկրեն օդի թանձր կապույտի մեջ բռնկվելով վառ ծիածանափայլով, երկար-երկար սահեց, ընկավ ջուրը… Եվ շարունակ, ինչ-որ տեղից, երաժշտություն էր լսվում… Մեկը լալիս էր, գանգատվում իր բախտից։ Այդ գիշեր տափաստանում ազատություն էր ստացել սանձամանիքային կարող քամին։ Սանձամանիքը թափ էր առնում։ Ջորս գլխից բաղկացած ուղտերի երամակը, որոնց ընտրել և պահպանում էր Բորանլի Կարանարը, կանգնած էր քամուց պատսպարված ձորակում, փոքրիկ լեռան ետևում։ Քամու կողմից ծածկվելով ձյունով, նրանք կուտակվել էին իրար գլխի, տաքացնելով միմյանց, մեկի գլուխը մյուսի վզին դրված, բայց կատաղի, փրչոտ տիրակալ Կարանարը նրանց հանգիստ չէր տալիս։ Անընդհատ քարշ էր գալիս, պտտվում նրանց շուրջբոլորը, քթնոտ մռնչում, նրանց խանդելով չգիտես ում և ինչի նկատմամբ, արդյոք լուսնի՞, որ վերևից թափանցում էր թռչող մառախուղի միջով։

Կարանարը իր համար տեղ չէր գտնում, ղոփղոփում էր մրրկաշունչ, մշուշոտ, սառած ձնաշերտերի մեջ. սև գզզան երկու սապատներով երկարուկ վզով և մռնչացող, փրչոտ գլխով։ Ինչքա՜ն ուժ կար նրա մեջ։ Հիմա էլ դեմ չէր զբաղվելու սիրային գործով և շարունակ ձանձրացնում էր, կպչում մերթ այս, մերթ այն մատակին, ամուր կծելով նրանց ազդրամասն ու կոճը, նրբանց հեռացնում էր իրարից, թեև դա արդեն չափազանց էր նրա կողմից, մատակների համար բավարար էր նաև ցերեկը, երբ սիրահոժար կատարում էին նրա քմահաճույքները, իսկ գիշերը հանգստանալ էին ուզում։

Լուսադեմին հանգստացավ, հանդարտվեց նաև Բորանլի Կարանարը։ Կանգնել էր էգերի կողքին, երբեմն-երբեմն քնահարամ մռնչալով և վայրենի շուրջը նայելով։ Վերջապես մատակները պառկեցին ձյան վրա՝ ամբողջ քարավանը, մեկը մյուսի կողքին, ձգեցին վիզները, գլուխները վար դրին և սուս արեցին, ննջեցին

*մի քիչ։ Երազում տեսան փոքրիկ ուղտիկների, նրանց, որ արդեն կային, և նրանց, որոնք պիտի ծնվեին, սև աթանից, որ այստեղ էր հասել չգիտես որտեղից և տիրել էր իրենց, կռվելով ուրիշ աթանների դեմ։ Եվ երազում տեսան ամառ, բուրումնավետ օշինդր, կաթնակերների նուրբ հպումը կրծին, և նրանց կուրծը ցավում էր, ծակծկում անորոշ խորքից, նախազգալով ապագա կաթը... Իսկ Բորանլի Կարանարը առաջվա նման հսկում էր, և քամին սուլում էր նրա փրչերի մեջ...*

*Եվ լողում էր երկիրը իր շուրջը ողողված բարձրագնա քամիներով։ Լողում էր Արեգակի շուրջը և երբ պտտվելով իր շուրջը, վերջապես շրջվեց այն կողով, որ առավոտ բացվեց սարօզեկների վրա, հանկարծ Բորանլի Կարանարը տեսավ, որ մոտակայքում հայտնվեցին ուղտին հեծած երկու մարդ։ Եդիգեյն ու Կոսպանն էին։ Կոսպանը հետը հրացան էր վերցրել։*

*Կատաղեց Բորանլի Կարանարը, դղրդաց, մռնչաց, եռաց զայրույթից, ինչպե՞ս են համարձակվել մարդիկ մտնել իր սահմաններից, ինչպե՞ս են մոտեցել իր երամակին, ինչ իրավունք ունեին խախտելու իր սահմանը։ Կարանարը ոռնաց գիլ, գազազած ձայնով, երկարուկ վզի վրա թափահարելով գլուխը, կրճըտացրեց ատամները, վիշապի նման բացեց զարհուրելի ժանիքներով երախը։ Եվ գոլորշին նրա տաք երախից ծխի պես դուրս լողաց սառնամանիքի մեջ, նստեց նրա սև փրչերի վրա, որպես սպիտակ, թռչող եղյամ։ Գրգռվածությունից Կարանարը սկսեց միզել, ոտքերը չռեց և հոսանքը բաց թողեց քամու դեմ, որից օդում տարածվեց սուր, փոշիացած մեզի հոտ, և սառցե կաթիլներ ընկան Եդիգեյի դեմքին։*

*Եդիգեյը թռավ գետնին, մուշտակը շպրտեց ձյան վրա, թեթևացավ, մնաց բամբակամեջ բաճկոնով ու տաբատով, ապա մտրակը ետ ոլորեց բռնակի վրայից, որ ձեռքին էր պահում։*

*— Տես, հա՞, Եդիկե, ծայրահեղ դեպքում ես դրան կտապալեմ,— ասաց Կոսպանը, հրացանն ուղղելով։*

*— Ոչ, ոչ մի դեպքում։ Ինձ համար մի անհանգստանա։ Տերը ես եմ, ես էլ պատասխան կտամ։ Դա պահիր քեզ համար։ Եթե քեզ վրա հարձակվի, ուրիշ բան։*

*— Լավ,— համաձայնեց Կոսպանը, մնալով թամբին։*

*Եդիգեյը դիպուկ, կրակող հարվածներով թափահարելով խարազանը, գնաց իր Կարանարին ընդառաջ։ Իսկ Կարանարը, տեսնելով նրա մոտենալը, ավելի գազազեց և վախեցավ, գոռաց*

ու լորձունք թափեց Եդիգեյին ընդառաջ։ Այդ ընթացքում մատակները վեր կացան ձորակից և նույնպես անհանգիստ վազվըզեցին շուրջը։

Շրմփացնելով խարազանը, որով սովորաբար ձնահյուսերի ժամանակ քշում էր ուղտի քարշակը, Եդիգեյը ձյան միջով քայլում էր, հեռվից բարձրաձայն կանչելով Կարանարին, հուսալով, որ սա կճանաչի իր ձայնը.

— Հե՜յ, հե՜յ, Կարանար։ Հիմարություն մի՜ անի, հիմարություն մի՛ անի, ասում եմ։ Ե՛ս եմ։ Կույր հո չե՞ս։ Ե՛ս եմ, ասում եմ։

Բայց Կարանարը բանի տեղ չէր դնում, և Եդիգեյը զարհուրեց, երբ տեսավ ուղտի փրչոտ, կատաղի հայացքը և այն, թե ինչպես էր ամբողջ հսկայական զանգվածով, սապատները մեջքին ցնցելով, սրարշավ գալիս իր վրա։ Եվ այդ ժամանակ Եդիգեյը ճակատին քաշելով փափախը, խարազանը գործի դրեց։ Խարազանը երկար էր, յոթ մետր և հյուսված էր ծանր, ձյութած կաշվից։ Ուղտը գոռում էր, հարձակվում Եդիգեյի վրա, աշխատում ատամներով բռնել նրան կամ գետնովը տալ, տրորել, բայց Եդիգեյը մոտ չէր թողնում և ամբողջ ուժով շաչեցնում էր մտրակը, խույս էր տալիս, նահանջում և հարձակվում, անընդհատ գոռում վրան, որ ուշքի գա, ճանաչի իրեն։ Այդպես զարկումզարկվում էին, յուրաքանչյուրն իր կարողության չափով և ամեն մեկն իրավացի էր յուրովի։ Եդիգեյը ցնցված էր աթանի անսանձ, խելահեղ երջանկության ձգտումից և հասկանում էր, որ զրկում է նրան այդ երջանկությունից, բայց ուրիշ ելք չկար։ Միայն մի բանից էր վախենում Եդիգեյը, հանկարծ խարազանը չդիպչի Կարանարի աչքին, մնացյալը ոչինչ։ Եդիգեյի համառությունը վերջապես կոտրեց անասունի կամքը։ Խարազանը շաչեցնելով, բղավելով, հարձակվելով ուղտի վրա, Եդիգեյին հաջողվեց մոտենալ, վրա հասնել, այնուհետև ճանկել նրա վերին շրթունքը, որը քիչ մնաց պոկեր, այնքան ուժեղ էր ճանկել, և անմիջապես, ճարպկորեն դրեց նախապես պատրաստված պտիկը։ Կարանարը մռնչաց, տնքաց պտիկի պատճառած անտանելի ցավից. Նրա լայնացած, անթարթ, ահից ու ցավից անշարժացած աչքերում Եդիգեյը հստակ տեսավ իր անդրադարձումը, ինչպես հայելում, և վախեցավ։ Հանկարծ ցանկացավ ամեն ինչ ուղարկել գրողի ծոցը և թողնել փախչել հեռու, որ այդպես չտանջեր ոչ մի հանցանք չունեցող անասունին, բայց անմիջապես փոխեց միտ-

քը, իրեն սպասում էին Բորանլիում, և չէր կարելի վերադառնալ առանց Կարանարի, որովհետև նրան կգնդակահարեին ակ-մոյնակցի հարևանները։ Եվ ինքն իր վրա ուժ գործադրեց։ Հաղթական ճիչ արձակեց և սկսեց սպառնալ ուղտին, ստիպելով նրան պառկել գետնին։ Հարկավոր էր թամբել նրան։ Բորանլի Կարանարը դեռ դիմադրում էր, ոռնում, մռնչում էր տիրոջ երեսին փչելով տաք, բղավող երախից ելնող խոնավ շունչը, բայց տերը անհողդողդ էր։ Նա ուղտին ստիպեց հնազանդվել։

— Կոսպան, այստեղ գցիր թամբը և այդ մատակներին հեռու տար, քշի՛ր բլուրի ետևը, որ աչքը չտեսնի դրանց,— գոռաց Եդիգեյը։

Կոսպանն իսկույն թամբը գցեց հեծկան ուղտի վրայից, ինքը վազեց քշելու Կարանարի երամակը։ Այդ միջոցին կատարվեց ինչ պետք էր. Եդիգեյը թամբն արագորեն դրեց Կարանարի վրա և, երբ մոտ վազեց Կոսպանն ու նետված մուշտակը հանձնեց Եդիգեյին, սա արագ հագնվեց, առանց հապաղելու բարձրացավ թամբված և սանձահարված Կարանարի վրա։

Գազազած ուղտը դեռ փորձում էր վերադառնալ իրենից բաժանված մատակների մոտ, գլուխը կողքի թեքելով նույնիսկ ուզում էր կծոտել տիրոջը։ Բայց Եդիգեյն իր գործը գիտեր։ Եվ չնայած Կարանարի մռնչոցներին, կատաղի ոռնոցներին, չարացած, անլռելի կաղկանձին, Եդիգեյը համառորեն քշում էր նրան ձյունոտ տափաստանով և աշխատում խելքի բերել։

— Վե՜րջ տուր։ Հերի՛ք է,— ասում էր։— Լռի՛ր։ Միևնույն է ետ չես գնա։ Հիմարի՛ գլուխ։ Դու կարծում ես քո վա՞տն եմ ուզում։ Ես չլինեի, հիմա քեզ գնդակահարել էին որպես կատաղած, վտանգավոր գազանի։ Ի՞նչ պիտի անեիր։ Դու կատաղել ես։ Ճիշտ է, շատ ճիշտ։ Կատաղել ես և քեզ պահում ես խելագարի նման։ Թե չէ ինչու պիտի քարշ գայիր մինչև այստեղ, մի՞թե քո մատակները քեզ հերիք չէին։ Ահա, օղ արա, գցիր ականջիդ, տուն հասնենք թե չէ, վերջ քո ոտնձգություններին օտար երամակներում։ Կշղթայեմ քեզ, և ոչ մի քայլի ազատություն չես ունենա, եթե այդպիսին ես։

Բորանլի Եդիգեյը շատր սպառնում էր, որպեսզի ինքն իր աչքում արդարանա։ Զոռով հեռացրել էր Կարանարին իր ակմոյնակցի էգերից։ Եվ դա առհասարակ անարդար բան էր։ Եթե հանդարտ անասուն լիներ, ի՞նչ կար որ։ Հրեն, Եդիգեյը իր հեծկան ուղտը թողել էր Կոսպանի մոտ։

Կոսպանը խոստացել է հարմար առիթի դեպքում նրան քշել Բորանլի, խնդրեմ, ոչ մի հարկ չկա, ամեն ինչ հեշտ ու հանգիստ։ Իսկ այս անիծյալը միայն անախորժություն է պատճառում։

Որոշ ժամանակ անց Բորանլի Կարանարը հաշտվեց այն մտքին, որ նորից թամբված է, որ նորից տիրոջ ձեռքի տակ է։ Արդեն ավելի քիչ էր մռնչում, հավասարեցրեց, արագացրեց քայլերը և շուտով անցավ վարգի, ոտքով կտրեց սարօզեկների ողջ տարածությունը, ինչպես լարովի մեքենա։ Եդիգեյը նույնպես հանգստացավ, ավելի հարմար տեղավորվեց պիրկ սապատների արանքում, կոճակները կոճկեց, փափախը քաշեց աչքերին և անհամբեր սպասեց Բորանլիի վայրերի երևալուն։

Բայց տունը դեռ բավական հեռու էր։ Օրը վատ չէր։ Մի քիչ քամոտ էր, մի քիչ ամպոտ։ Առայժմ կարելի էր հողմից չվախենալ, չնայած միանգամայն հնարավոր էր, որ գիշերը ձյունամրրիկ լինի։ Բորանլի Եդիգեյը տուն էր վերադառնում գոհ, որ հաջողացրել է բռնել ու սանձել Կարանարին, գոհ էր, մանավանդ, Կոսպանի տանն անցկացրած երեկվա երեկոյից՝ էռլեպեսի նվագից ու երգից։

Եվ Եդիգեյը ակամա վերադարձավ իր ձախորդ կյանքի տխուր խոհերին։ Մի՞թե դա դժբախտություն չի։ Ինչպե՞ս անի, որ ոչ ոք չտուժի, բայցև իր ցավը հոգում չթաքցնի, այլ շիտակ ասի, թե, այսպես ու այսպես. Զարիպա, քեզ սիրում եմ։ Եթե Աբութալիպի երեխաներին խանգարում է իրենց հոր ազգանունը, խնդրեմ, թող գրվեն իմ ազգանունով, եթե, իհարկե, դա ձեռք է տալիս Զարիպային։ Ինքը երջանիկ կլինի, որ իր ազգանունը պիտանի լինի Դաուլին ու Էրմեկին։ Թող կյանքում ոչ մի խոչընդոտի ու արգելքի չհանդիպեն։ Եվ թող հաջողության հասնեն իրենց ուժով ու կարողությամբ։ Ով կխնայի իր ազգանունը դրա համար։ Այո, ճանապարհին այդպիսի մտքեր էլ էին գալիս Բորանլի Եդիգեյի գլուխը։

Օրն արդեն թեքվում էր դեպի երեկո։ Անխոնջ Կարանարը որքան էլ դիմադրում էր, որքան էլ կատաղում, համենայն դեպս հեծյալի տակ գնում էր բարեխղճորեն։ Ահա դիմացում բացվեցին Բորանլիի ձորահովիտները, ահա ձնաթմբերով ծածկված ծանոթ հեղեղատները, ահա բլրաշատ մեծ բարձունքը և դիմացը՝ երկաթուղու փոքրիկ ոլորանի վրա կուչ եկած Բորանլի կիսակայարանը։ Ծուխ է ոլորվում ծխնելույզներից։ Ինչպե՞ս են տեսնես իր

հարազատ ընտանիքները։ Ճիշտ է, բացակայել է ընդամենը մեկ օր, բայց սիրտն այնպիսի տագնապ է պատել, կարծես ամբողջ մի տարի չի եղել այստեղ։ Եվ շատ է կարոտել հատկապես երեխաներին։ Առջևում տեսնելով ավանը, Կարանառը քայլերն ավելի արագացրեց։ Գնում էր քրտնամխած, կրակ կտրած, լայնլայն գցելով ոտքերը, երախից գոլորշու քուլաներ էր արձակում։ Եղիգեյը մինչև հասավ տուն, կիսակայարանում հանդիպեցին և բաժանվեցին երկու ապրանքատար գնացք։ Մեկը գնաց արևմուտք, մյուսը՝ արևելք...

Եղիգեյը կանգնեց խոնարհում, որպեսզի անմիջապես Կարանառին կողպի անասնոցում։ Ուղտից իջավ, հողի մեջ խրված լայնադիր գերանին շղթայեց ուղտի առջևի ոտքը։ Եվ հանգիստ թողեց նրան։ «Թող հովանա, հետո թամբը կհանեմ»,— մտքում որոշեց նա։ Ջգիտես ինչու, շատ էր շտապում։ Շտկելով թմրած մեջքն ու ոտքերը, Եղիգեյը դուրս էր գալիս անասնոցից, երբ մոտ վազեց մեծ աղջիկը՝ Սաուլեն։ Եղիգեյը գրկեց նրան, դժվար շարժվելով մուշտակի մեջ, համբուրեց.

— Կմրսես,— ասաց աղջկան։ Սա թեթև էր հագնված։— Վազիր տուն, ես հիմա կգամ։

— Հայրիկ,— ասաց Սաուլեն, քսվելով հորը,— Դաուլն ու Էրմեկը գնացին։

— Ո՞ւր գնացին։

— Բոլորովին գնացին։ Իրենց մայրիկի հետ։ Նստեցին գնացք, գնացին։

— Գնացի՞ն։ Ե՞րբ գնացին։— Դեռևս լավ չհասկանալով բանն ինչ է, նորից հարց տվեց Եղիգեյը, նայելով աղջկա աչքերին։

— Այս առավոտ գնացին։

— Ա՛յ քեզ բան,— Եղիգեյի ձայնը դողաց։— Դե լավ, դու տուն վազիր։— Գրկից իջեցրեց աղջկան։— Իսկ ես հետո, հետո։ Գնա, հիմա գնա...

Սաուլեն անհետացավ անկյունում։ Իսկ Եղիգեյը, արագ, նույնիսկ մոռանալով ծածկել անասնոցի դուռը, շարժվեց ուղիղ Ջարիպայի բարաքը։ Գնում էր և չէր հավատում։ Երեխան երևի շփոթում է։ Այսպիսի բան չի կարող լինել։ Բայց առմուտքը տրորված էր բազմաթիվ ոտնահետքերով։ Եղիգեյը թափով քաշեց դուռը և շեմն անցնելով, տեսավ լքված, վաղուց սառած սենյակը, ամենուրեք թափթփված անպետք հնոտիով։ Ոչ երեխաները կային, որ Ջարիպան։

— Ինչպե՞ս թե,— շշնջաց Եղիգեյը զատարկության մեջ, դեռևս չկամենալով մինչև վերջ հասկանալ, թե ինչ է տեղի ունեցել։— Ուրեմն մեկնե՞լ են,— մրմնջաց նա տարակուսանքով ու ցավով, թեև պարզ երևում էր, որ մարդիկ մեկնել են այստեղից։

Եվ վատ զգաց Եդիգեյը, այնքան վատ, ինչպես երբևէ չէր զգացել իր ապրած ողջ կյանքում։ Մուշտակը հագին կանգնել էր սենյակի մեջտեղում, սառը վառարանի մոտ, չգիտեր ինչ անի, ինչպես ապրի հետո, ինչպես զսպի հոգում ճչացող և ելք որոնող կսկիծի ու կորուստի ցավը։ Լուսամուտի գոգին մոռացված մնացել էին Էրմեկի գուշակելու քարերը, այն քառասունմեկ քարիկները, հույսի և սիրո քարիկները, որոնցով երեխաները գուշակում էին, թե երբ կվերադառնա իրենց, արդեն գոյություն չունեցող հայրը։ Եդիգեյը բռով հավաքեց քարերը, սեղմեց ափի մեջ, ահա նրանցից մնացած միակ բանը։ Այլևս ուժ չմնաց։ Շուռ եկավ պատի կողմը, տաք վշտահար դեմքը սեղմեց սառը տախտակներին և լաց եղավ դառն ու անմխիթար։ Այսպես լաց էր լինում, իսկ ձեռքից հատ-հատ հատակին էին ընկնում քարիկները։ Նա լարված փորձում էր քարերը պահել դողդոջ ափում, բայց ձեռքը չէր ենթարկվում, և քարիկները դուրս էին սողում, մեկը մյուսի ետևից խուլ կտկտոցով ընկնում էին գետնին, գլորվում, ցրվում դատարկված տան անկյուններով...

Այնուհետև շուռ եկավ, պատի վրայով մեջքը սահեցնելով դանդաղ պլլեց և այդպես մնաց՝ մուշտակը հագին, փափախը գլխին քաշած, մեջքը պատին հենած և դառը հեծկլտալով։ Գրպանից հանեց Զարիպայի նվիրած վզնոցը, դրանով սրբեց արցունքները...

Այդպես նստել էր լքված բարաքում և աշխատում էր հասկանալ, թե ինչ է տեղի ունեցել։ Ուրեմն Զարիպան դիտավորյալ կերպով է երեխաներին վերցրել-մեկնել իր բացակայությամբ։ Նշանակում է, նա այդպես է ուզել կամ վախեցել է, որ ինքը թույլ չի տա, որ գնան։ Այսինքն, չէր էլ թողնի, ոչ մի դեպքում, ոչ մի կերպ։ Ինչ գնով էլ լիներ, նրանց բաց չէր թողնի, եթե այստեղ լիներ։ Բայց արդեն ուշ էր որոշելու, թե ինչն ինչպե՞ս կլիներ, եթե ինքը բացակա չլիներ։ Նրանք արդեն չկային։ Չկար Զարիպան։ Չկային տղաները։ Մի՞թե ինքը կբաժանվեր նրանցից։ Զարիպան է այդպես որոշել, հասկացել է, որ լավ է մեկնել իր բացակայությամբ։ Հեշտացրել է մեկնումը, բայց չի մտածել

Եդիգեյի մասին, չի մտածել, թե ինչ սոսկալի կլինի նրա աչքին դատարկ բարաքը։

Եվ կիսակայարանում պետք է որ մեկը կանգնեցրած լիներ գնացքը։ Մեկը։ Պարզ է, ով. Կազանղապը, ուրիշ ո՞վ։ Բայց նա իհարկե արգելակիչ-բռնակ չի քաշել, ինչպես Եդիգեյը Ստալինի մահվան օրը, այլ պայմանավորվել, խնդրել է կիսակայարանի պետին՝ կանգնեցնելու որևէ մարդատար գնացք։ Նա այդպիսի տիպ է... Ուկուբալան էլ, երևի մասնակցել է, որ ինչքան կարելի է նրանց շուտ ճամփու դնեն այստեղից։ Դեհ լա՜վ, սպասեք դեռ։ Եվ վրեժխնդրության արյունը՝ խուլ և սև, եռաց, այրեց ուղեղը,— ուզում էր անմիջապես ոտքի ելնել և կործանել ամենայն ինչ այս, աստծո կողմից նզովված կիսակայարանում, որ հորջորջվում է Բորանլի, կործանել հիմնահատակ, որպեսզի մի չոփ չմնա, նստել Կարանարի մեջքին և սլանալ սարօզեկներ, այնտեղ քաղցից ու ցրտից շունչը փչել մենության մեջ։ Այդպես նստած էր լքված տանը՝ ուժասպառ, ամայացած հոգով, պատահածից ցնցված։ Մնացել էր լոկ բութ տարակուսանքը. «Ինչու է մեկնել, ո՞ւր է մեկնել։ Ինչո՞ւ է մեկնել, ո՞ւր է մեկնել»։

Այնուհետև Եդիգեյը հայտնվեց իրենց տանը։ Ուկուբալան լուռ ընդունեց նրա մուշտակը, փափախը, թաղիքե ոտնամանները և տարավ դրեց անկյունում։ Բորանլի Եդիգեյի քարի պես կարծրացած, գորշ դեմքից դժվար էր գուշակել, թե ի՞նչ է մտածում և ի՞նչ է մտադիր անել։ Աչքերը կարծես ոչինչ չէին տեսնում։ Աչքերը ոչինչ չէին արտահայտում, իրենց խորքում թաքցնում էին ոչ մարդկային ճիգ, որ Եդիգեյը գործադրում էր, որպեսզի զուսպ մնա։ Ուկուբալան ամուսնուն սպասելու ընթացքում մի քանի անգամ արդեն ինքնաեռը գցել էր։ Ջուրը եռում էր, ինքնաեռը լի էր մրմռող փայտածուխներով։

— Զգույշ, թեյը տաք է,— ասաց կինը։— Կրակի վրայից նոր վերցրի։

Եդիգեյը լուռ նայեց կնոջը և շարունակեց մեծ-մեծ կումերով ներս քաշել թեյը։ Նա չէր զգում, որ բերանն այրվում է։ Երկուսն էլ լարված սպասում էին խոսակցությանը։

— Զարիփան երեխաների հետ մեկնեց այստեղից,— վերջապես խոսեց Ուկուբալան։

— Գիտեմ,— առանց գլուխը թեյի բաժակից բարձրացնելու, կարճ փնչաց Եդիգեյը։ Քիչ անց, նորից առանց գլուխը բաժակից բարձրացնելու հարցրեց։— Ո՞ւր մեկնեց։

— Չասաց մեզ,— պատասխանեց Ուկուբալան։

Դրա վրա էլ լռեցին։ Եղիգեյը բերանը տաք թեյով այրեց և դրան ուշք չդարձրեց, միտքը զբաղված էր լոկ մի բանով. հանկարծ չբոնկվի, հանկարծ ամեն ինչ ջարդուփշուր չանի, չվախեցնի երեխաներին, փորձանք չբերի…

Թեյը խմեց, վեր կացավ, ուզում էր դուրս գալ։ Նորից հագավ թաղիքե ոտնամանները, մուշտակը, դրեց փափախը։

— Ո՞ւր ես գնում,— հարցրեց կինը։

— Անասունին նայեմ,— նետեց դռնից։

Ձմեռային կարճ օրն արդեն վերջանում էր։ Արագ, համարյա շոշափելի կերպով թանձրանում, մթնում էր օդը։ Սառնամանիքը ուժեղացել էր։ Գետնատող բուքը շարժվում, թռչում, գալարվում էր վազող բաշերով։ Եղիգեյը խոժոռ գնաց դեպի անասնոց։ Ներս մտնելով, նա ամբարիշտ նայեց Կարանարին, որ ուզում էր շղթայից պոկվել, և գոռգոռաց.

— Դեռ ոռնում ես, հա՞։ Զուրկ մնացիր, հա՞։ Հիմա կտեսնես, սրիկա՛։ Քեզ հետ այլևս երկար-բարակ գլուխ չեմ դնի։ Հիմա ինձ համար մեկ է։

Եղիգեյը զայրացած խփեց Կարանարի կողին, թունդ հայհոյեց, թամբից ազատեց, թամբը շպրտեց վրայից, հանեց ոտքի շղթան, հետո սանձից բռնեց, մյուս ձեռքում սեղմեց խարազանը, որ փաթաթված էր կոթին և գնաց տափաստան, հետը տանելով միալար մռնչացող, կարոտից ոռնացող աթանին։ Մի քանի անգամ տերը ետ նայեց, սպառնագին թափահարեց խարազանը, որ ուղտը դադարեցնի հառաչանքն ու հեծեծանքը, և քանի որ դա ազդեցություն չգործեց, թքեց և առանց ուշադրություն դարձնելու նրան, մռայլ և համբերատար քաշելով ուղտի սանձից, համառորեն քայլեց խոր ձյան միջով, ձնահողմերի միջով, մշուշոտ դաշտով, որ հետզհետե մթնում էր, կորցնում ուրվագծերը։ Եղիգեյը ծանր էր շնչում, բայց գնում էր առանց կանգնելու։ Քայլեց երկար, մռայլ, գլխահակ։ Կիսակայարանից բավական հեռացավ, բլուրի ետևում կանգնեցրեց ուղտին և դաժան դատաստան տեսավ նրա հետ։ Մուշտակը նետելով ձյան վրա, Եղիգեյը արագ սանձափոկը կապեց իր գոտուն, բաճկոնի վրայից, որպեսզի ուղտը չփախչի և որպեսզի ձեռքերը ազատ լինեն, զույգ ձեռքերով բռնեց խարազանի կոթից, սկսեց խարազանով ծեծել աթանին, ամբողջ ուժը հանելով նրանից։ Դաժան, անողոք կերպով մտրակում էր Կարանարին, հարված հարվածի ետևից հա-

ցրնում, խռպոտ ձայնով լուտանքներ ու անեծքներ ժայթքելով։

— Ա՛ռ քեզ, ա՛ռ։ Ստոր անասուն։ Այս ամենը քո՛ երեսից է։ Քո՛ երեսից։ Դո՛ւ ես մեղավորը։ Հիմա ես քեզ բաց կթողնեմ, կչքվես, կգնաս աչքիցս, բայց նախ պիտի քեզ մի լավ ջարդուխուրդ անեմ, հետո։ Ա՛ռ քեզ։ Ա՛ռ։ Ագա՛հ անասուն։ Ամեն ինչ քեզ քիչ է թվում։ Պիտի անպայման աջ ու ձախ վազես։ Իսկ նա այդ նույն ժամին գնացել է երեխաների հետ։ Եվ ոչ մեկիդ փույթը չի, թե ինչ կլինեմ ես։ Հիմա ես ինչպե՞ս ապրեմ։ Ինչպե՞ս ապրեմ առանց նրա։ Եթե ձեզ համար ամեն ինչ մեկ է, ինձ համար էլ մեկ է։ Դեհ, սատկի՛ր, սատկի՛ր, շո՛ւն։

Կարանարը ռռնում էր, տեղից պոկվում, պատռվում խարազանի հարվածներից և սարսափից ու ցավից խելագարված, տիրոջը գցեց գետնին, վազեց, նրան քարշ տալով ձյան միջով։ Նա տիրոջը քարշ էր տալիս վայրենի, հրեշավոր ուժով, քարշ էր տալիս գերանի նման, միայն թե ազատվեր նրանից, փրկվեր նրանից, փախչեր այնտեղ, որտեղից զոռով ետ էին բերել։

— Կանգնի՛ր, կանգնի՛ր,— գոռաց Եդիգեյը, խեղդվելով, թաղվելով ձյան մեջ։

Փափախը թռել էր գլխից, ձնաթմբերը այրում և սառեցնում էին գլուխը, դեմքը, փորը, ձյուն էր լցվում վիզը, ծոցը, ձեռքի մեջ խճճվել էր խարազանը և հնարավոր չէր մի բան անել, մի կերպ կանգնեցնել աթանին, արձակել գոտուց ամրացված սանձափոկը։ Իսկ աթանը նրան քարշ էր տալիս խուճապի մատնըված, խելակորույս, փախուստի մեջ տեսնելով իր փրկությունը։ Ով գիտե ինչո՞վ կվերջանար այս բոլորը, եթե Եդիգեյին չհաջողվեր հրաշքով արձակել գոտին, ճարմանդը ձգել և դրանով փըրկվել, թե չէ խեղդվելու էր ձնաթմբերի մեջ։ Երբ արդեն բռնեց սանձից, ուղտը նրան քարշ տվեց ևս մի քանի մետր և կանգ առավ, սանձվելով տիրոջ վերջին ուժերով։

— Ես քո,— ուշքի գալով մռթմռթաց ձյունից այրվող Եդիգեյը՝ շնչահատ և օրորուն։— Ուրեմն այդպես։ Դե սատկիր, անասուն։ Եվ կորիր, կորիր աչքիցս։ Փախի՛ր, անիծված, այլևս աչքիս չերևաս։ Կորիր գրողի ծոցը։ Չքվի՛ր, չքվի՛ր։ Թող քեզ գնդակահարով անեն, թող քեզ տանջեն կատաղած շան նման։ Ամեն ինչ քո երեսից եղավ։ Սատկիր տափաստանում։ Եվ այլևս երեսդ չտեսնեմ։— Կարանարը մռնչոցով փախչում էր Ակ-Մոյնակի կողմը, իսկ Եդիգեյը հասնում էր ետևից, ծեծում խարազանով, ճամփու դնում, հրաժարվում նրանից անիծելով ու սաստիկ

հայհոյելով։ Մոտեցել էր հատուցման և բաժանման պահը։ Դրա համար էլ Եղիգեյը երկար զոռաց ետևից։

— Կորի՛ր, կեղտոտ անասուն, փախի՛ր։ Գնա սատկիր, անկուշտ վայրենի։ Երանի ճակատիդ գնդակ շարեն։

Կարանարը ավելի էր հեռանում մշուշոտ, մութը կոխած դաշտով և շուտով հալվեց մրրկաշունչ մառախուղի մեջ, միայն երբեմն լսվում էին նրա շեփորաձայն կանչերը։ Եղիգեյը պատկերացրեց, թե ամբողջ գիշեր ինչպես է անքուն-անդադար, մառախուղի միջով վազելու Ակ-Մոյնակի մատակների մոտ։

— Թյո՛ւհ,— թքեց Եղիգեյը և ետ դարձավ, լայն, սեփական մարմնով բացած ձյունոտ արահետով։ Առանց փափախի, առանց մուշտակի, դեմքի ու ձեռքերի մաշկը բաց ընկած թափառում էր խավարի մեջ, քարշ տալով խարազանը, և հանկարծ հոգին պաշարեց լիակատար ունայնության, անզորության զգացումը։ Նա ծնկների վրա ընկավ ձյան մեջ, երեքտակ ծալվեց, ղլուխն ամուր բռնեց ձեռքերով, խուլ ու տանջալից հեկեկաց։ Սարօզեկների մեջտեղում, ծնկների վրա ընկած, բացարձակ մենության մեջ, նա լսում էր ինչպես է քամին շարժվում տափաստանում, վայում, պտույտ-պտույտ անում, վեր նետում ձյունը, և լսում էր, ինչպես է վերևից թափվում ձյունը։ Ամեն մի փաթիլ և միլիոնավոր փաթիլներ անլսելի շրշալով օդի շփումից, կարծես շարունակ նույնն էին շշնջում, որ ինքը չի դիմանա բաժանման ցավին, որ իմաստ չունի ապրել առանց սիրած կնոջ և առանց նրա տղաների, որոնց կապվել է հարազատ հոր նման։ Եվ ուզում էր մեռնել տեղնուտեղը, ծածկվել, թաղվել ձյան տակ։

— Չկա աստված։ Նա գաղափար անգամ չունի կյանքի մասին։ Այլևս ի՞նչ սպասես ուրիշներից։ Չկա աստված, չկա՛։— Ասաց նա, հրաժարվելով աստծուց, դառը մենության մեջ, գիշերային ամայի սարօզեկներում։ Մինչ այս, նա երբեք բարձրաձայն այդպիսի խոսք չէր ասել։ Նույնիսկ այն ժամանակ, երբ Ելիզարովը մշտապես հիշատակելով աստծուն, միաժամանակ հավատացնում էր, թե գիտության տեսակետից աստված գոյություն չունի, ինքը չէր հավատում դրան։ Այժմ հավատաց...

Եվ լողում էր երկիրը իր շուրջը՝ ողողված բարձրադիր քամիներով։ Շուրջը լողում էր Արեգակը և պտտվում իր առանցքի շուրջը, այդ պահին իր վրա կրելով ձյունոտ անապատում, ձյուների մեջ ծունկի իջած մի մարդու։ Ոչ մի արքա, ոչ մի կայսր, ոչ էլ ուրիշ տիրակալ ծունկի չէր գա աշխարհի առջև և այսպիսի

*հուսահատությամբ չէր մորմոքի պետության ու իշխանության կորստի համար, ինչպես մորմոքում էր Բորանլի Եդիգեյը իր սիրած կնոջից բաժանվելու օրը… Եվ լողում էր Երկիրը…*

*Մի երեք օրից Ղազանղապը Եդիգեյին կանգնեցրեց պահեստի մոտ, որտեղից ռելսատակի հենակ ու բարձ էին ստանում վերանորոգման համար։*

*— Ինչո՞ւ ես այդքան հեռու պահում քեզ, Եդիգեյ,— ասաց նա կարծես ի միջի այլոց, երկաթի խուրձը դնելով խարակի վրա։— Դու խուսափում ես ինձանից չգիտեմ ինչու, ոչ մի կերպ չեմ կարողանում մի երկու բերան խոսել հետդ։*

*Եդիգեյը սուր և չար նայեց Ղազանղապին։*

*— Եթե մենք խոսել սկսենք, ես քեզ տեղնուտեղը կխեղդեմ։ Եվ դու լավ գիտես, որ կանեմ։*

*— Չեմ կասկածում, որ դու պատրաստ ես խեղդելու ինձ, գուցե նաև մեկ ուրիշի։ Բայց ի՞նչն է քո զայրույթի պատճառը։*

*— Դուք եք նրան ստիպել հեռանալու այստեղից,— շիփ-շիտակ ասաց Եդիգեյը այն, ինչ երեք օր շարունակ տանջում և հանգիստ չէր տալիս իրեն։*

*— Դեհ, գիտես ինչ,— գլուխն օրորեց Ղազանղապը և դեմքը կաս-կարմիր կտրեց, չգիտես զայրույթից թե ամոթից։— Եթե քո գլխով նման բան է անցնում, ուրեմն դու վատ կարծիքի ես ոչ միայն մեր մասին, այլև նրա։ Շնորհակալ եղիր, որ այդ կինը մեծ խելքի տեր էր, ոչ թե քեզ նման։ Երբևէ մտածե՞լ ես, թե ինչով կարող էր վերջանալ այս ամենը։ Ո՞չ։ Իսկ նա մտածել է և որոշել է հեռանալ, քանի դեռ ուշ չի։ Ես էլ օգնեցի գնալու, երբ այդ մասին խնդրեց ինձ։ Ես նրան հարցուփորձ չարեցի, թե ո՞ւր է ուզում գնալ երեխաների հետ, նա էլ չասաց, թող դա հայտնի լինի միայն ճակատագրին, ուրիշ ոչ ոքի։ Հասկացա՞ր։ Մեկնեց առանց մեն մի բառով դիպչելու իր արժանապատվությանը և քո կնոջ արժանապատվությանը։ Եվ նրանք իրար հրաժեշտ տվեցին մարդու նման։ Դու գնա նրանց երկուսի ոտքերը համբուրիր, որ քեզ փրկեցին անխուսափելի աղետից։ Ուկուբալայի նման կին աշխարհում չես գտնի։ Նրա փոխարեն ուրիշը լիներ, այնպիսի օյին կսարքեր, որ դու գլուխդ կառնեիր, քո Կարանարի նման կփախչեիր աշխարհի ծայրը։*

*Լուռ էր Եդիգեյը, ի՞նչ պատասխան տար։ Ղազանղապը, ճիշտ է, իրավացի էր։ Բայց ոչ, Ղազանղապը չէր հասկանում մի*

բան, դա անմատչելի էր նրան։ Եվ Եդիգեյն անցավ ուղղակի կոպտության։

— Լավ,— ասաց և արհամարհանքով շուռ եկավ թքեց։— Գիտեմ, որ իմաստուն ես։ Դրա համար էլ այդպես քանիերեք տարի անշարժ, քարե արձանի նման հեշտ ու անխռով ապրում ես այստեղ։ Քո խելքն ի՞նչ է կտրում նման բաներից։ Լավ, հերիք է։ Ես ժամանակ չունեմ կանգնեմ քեզ լսեմ։— Եվ գնաց, այլևս չխոսեց։

— Դու գիտես, քո գործն է,— լսվեց ետևից։

Այդ խոսակցությունից հետո Եդիգեյը մտադրվել էր թողնել հեռանալ զզվելի դարձած Բորանլի կիսակայարանից։ Լուրջ էր մտադրվել, որովհետև հանգիստ չէր գտնում, մեջը ուժ չէր գտնում մոռանալու, չէր կարողանում դիմանալ սրտմաշուկ կարոտին։ Առանց Զարիպայի, առանց նրա տղաների ամեն ինչ խամրել, դատարկվել, աղքատացել էր։ Եվ որպեսզի ազատվեր այդ տանջանքներից, Եդիգեյ Ջանգելդինը որոշեց ազատման մասին պաշտոնապես դիմում տալ կիսակայարանի պետին և ընտանիքով հեռանալ այստեղից, ինչքան աչքը կտրում է։ Միայն թե չմնար այստեղ։ Հո չի կարող հավիտյանս շղթայված մնալ աստծո մտքից ընկած կիսակայարանին, մարդկանց մեծամասնությունն ապրում է ուրիշ տեղերում, քաղաքներում ու գյուղերում, նրանք մի ժամ չէին համաձայնի մնալ այստեղ։ Իսկ ինչո՞ւ պիտի ինքը մի դար կուկու կանչի այս սարօզեկներում։ Ո՞ր մեղքի համար։ Չէ, բավական է, վեր կկենա, կվերադառնա Արալյան ծով կամ կշարժվի դեպի Կարագանդա, Ալմա-Աթա, քի՞չ տեղ կա աշխարհում։ Ինքը լավ աշխատավոր է, ոտ ու ձեռը տեղին, առողջ, գլուխը դեռ ուսերին է, կթքի կգնա, ինչո՞ւ պիտի երկար-բարակ մտածի։ Մտմտում էր Եդիգեյը, թե այդ մասին ինչպես խոսք բացի Ուկուբալայի մոտ, ինչպես համոզի նրան, մնացյալը խնդիր չէր։ Մինչ հարմար առիթի էր սպասում խոսակցության համար, անցավ մի շաբաթ, և հանկարծ հայտնվեց Բորանլի Կարանարը, որին տերը ազատ էր արձակել։

Եդիգեյի ուշադրությունը գրավեց այն, որ շունը միալար հաչում է տան ետևում, անհանգստանում է, վազում է, հաչում, նորից վերադառնում։ Եդիգեյը դուրս եկավ տեսնի ի՞նչ կա այնտեղ և անասնոցից ոչ հեռու տեսավ անծանոթ անասունի՝ ուղտի, որը մի տեսակ տարօրինակ կանգնել, տեղից չէր շարժվում։ Եդիգեյը մոտեցավ, ճանաչեց իր Կարանարին։

— Դու ես, հա՞։ Այս ի՞նչ ես դարձել, բեչարա[1]։ Այս ինչ օրն ես ընկել,— բացականչեց ապշած Եդիգեյը։

Առաջվա Բորանլի Կարանարից մնացել էին միայն կաշին ու ոսկորը։ Վիթխարի գլուխը՝ փոս ընկած թախծոտ աչքերով, ճոճվում էր բարակած վզի վրա, գզգզված փրչերը, որ կարծես իրենը չլինեին, այլ փակցված լինեին ծիծաղի համար, կախվել էին ծնկներից ցած։ Կարանարի առաջվա սապատներից, որոնք վեր էին խոյանում սև աշտարակների նման, ոչինչ չէր մնացել, երկու սապատն էլ թեքվել էին մի կողմի վրա, պառավական թոշնած ստինքների նման։ Աթանն այնքան ուժասպառ էր եղել, որ չէր կարողացել հասնել մինչև անասնոց։ Եվ կանգնել էր շունչ առնելու։ Ամբողջապես, մինչև արյան վերջին կաթիլը, մինչև վերջին բջիջը քարշ է եկել և այժմ վերադարձել է դատարկված պարկի նման, տեղ է հասել, սողեսող մոտեցել է։

— Էհ-հե՜-հե՜,— ոչ առանց չարախնդության զարմացավ Եդիգեյը, Կարանարին դիտելով բոլոր կողմերից։— Տեսնո՞ւմ ես, ինչ օրն ես ընկել,— նույնիսկ շունը քեզ չճանաչեց։ Այնինչ ժամանակին աթան էիր։ Հեյ վա՜խ։ Առանց ամաչելու էլ եկել ես։ Ո՛չ ամոթ ունես, ո՛չ խիղճ։ Գոնե ձվերդ տե՞ղն են, հետդ բերե՞լ ես, թե ճանապարհին կորցրել ես։ Համա՜ թե զարշահոտություն է փչում վրայիցդ։ Ոտքերիդ ես թափել, ուժ չես ունեցել։ Տես, ինչպես է սառել կպել գավակիդ։ Բեչարա։ Հալ չկա վրադ։

Կարանարը տեղից շարժվելու կարողություն չուներ, և չկար առաջվա ոչ ուժը, ոչ էլ առաջվա վեհությունը։ Միայն տխուր ու խղճալի օրորում էր գլուխը և աշխատում էր մնալ ոտքի վրա։

Եդիգեյը խղճաց աթանին։ Մտավ տուն և ետ դարձավ մի թաս լիքը ընտիր ցորենով։ Վրան մի կես բուռ աղ ցանեց։

— Կեր,— թասը դրեց ուղտի առջև։— Կեր, խելքդ տեղը գա։ Հետո քեզ կտանեմ անասնոց։ Կպառկես, ուշքի կգաս։

Այդ օրը Եդիգեյը խոսակցություն ունեցավ Ղազանղապի հետ։ Ինքը գնաց նրա տուն և այսպես սկսեց խոսքը.

— Ղազանղապ, ես քեզ մոտ եմ եկել այսպիսի գործով։ Դու մի զարմանա, որ երեկ չէի ուզում հետդ խոսել, ավելորդ բաներ ասացի, իսկ այսօր ինքս եմ եկել, լուրջ գործ ունեմ։ Ուզում եմ քեզ վերադարձնել Կարանարին։ Եկել եմ շնորհակալություն հայտնեմ։ Ծծկեր ժամանակվանից ինձ ես նվիրել։ Շնորհակալ

---

1 Բեչարա — Թշվառական։

եմ։ Ինձ լավ է ծառայել։ Ես վերջերս դուրս էի արել նրան, համբերությունս հատել էր, բայց այսօր ետ է եկել։ Հազիվ է ոտքերը քարշ տալիս։ Հիմա անասնոցում պառկած է։ Մի երկու շաբաթից առաջվա նման կդառնա։ Ուժեղ և առողջ կլինի։ Միայն կերակրել է պետք։

— Սպասիր,— ընդմիջեց Ղազանղապը։— Դու ի՞նչ ես ուզում ասել։ Ինչո՞ւ հանկարծ որոշեցիր վերադարձնել Կարանարին։ Ես քեզ խնդրե՞լ եմ։

Այդ ժամանակ Եդիգեյը սիրտը բաց արեց, թե այսպես ու այսպես, թե միտք ունի ընտանիքով տեղափոխվել այստեղից։ Ձանձրացել է սարոզեկներից, ժամանակն է փոխելու բնակության վայրը։ Միգուցե այս անգամ բախտի անիվը ավելի լավ պտտվի։ Ղազանղապը ուշադիր լսեց և ահա թե ինչ ասաց.

— Լսիր, դա քո գործն է։ Միայն, ինձ թվում է, թե ինքդ էլ չգիտես, ինչ ես ուզում։ Լավ, ենթադրենք հեռացար-գնացիր, բայց քեզանից ո՞ւր կարող ես հեռանալ։ Որտեղ էլ կորչես, քո ցավից չես փախչի։ Ամեն տեղ քեզ հետ կլինի։ Չէ, Եդիգեյ, եթե դու ջիգիթ ես, աշխատիր հաղթել քեզ։ Իսկ հեռանալը հերոսություն չի։ Ո՞վ չի կարող հեռանալ, բայց ամեն մարդու բան չի հաղթել ինքն իրեն։

Եդիգեյը համաձայն չէր նրա հետ, բայց և չվիճեց։ Պարզապես մտքի մեջ ընկավ, ծանր հառաչելով։ «Համենայն դեպս, արժի գնալ ուրիշ տեղ ապրել,— մտածում էր նա։— Բայց մի՞թե կարող եմ մոռանալ։ Իսկ ինչո՞ւ պետք է մոռանամ։ Իսկ ի՞նչ անեմ հետո։ Չմտածել հնարավոր չի, բայց և մտածելն է ծանր։ Հապա Զարիպան ի՞նչ անի։ Որտե՞ղ է արդյոք իր փոքրիկ անհասների հետ։ Եվ ո՞վ պիտի հասկանա և օգնի նրան, եթե պետք լինի։ Ուկուբալայի համար էլ հեշտ չի, քանի օր է լուռ դիմանում է իմ խորթությանը, իմ մռայլությանը, իսկ հանուն ինչի՞»։

Ղազանղապը հասկանում էր, թե ինչ է կատարվում Բորանլի Եդիգեյի հոգում և ուզում էր թեթևացնել նրա վիճակը։ Նա հազաց, որպեսզի գրավի Եդիգեյի ուշադրությունը, ապա, երբ նա բարձրացրեց աչքերը, ասաց.

— Այսինքն, ինչո՞ւ եմ ուզում քեզ համոզել, Եդիգեյ, կարծես թե դրանից ես օգուտ ունեմ։ Դու ավելի լավ ես հասկանում։ Եվ եթե բանը դրան է հասել, դու հո Ռայմալի-աղան չե՞ս, ես էլ՝ քո եղբայր Աբդիլխանը։ Մանավանդ հարյուր վերստի վրա

կտրած կեչի էլ չկա, որ քեզ կապեմ։ Դու ազատ ես, վարվիր, ինչպես կուզես։ Միայն գնալուց առաջ մտածիր։

Ղազանղապի այդ խոսքերը երկար մնացին Եդիգեյի հիշողության մեջ։

## X

Ռայմալի-աղան ժամանակին եղել է շատ նշանավոր երգիչ։ Հռչակվել է երիտասարդ տարիներից։ Աստծո ողորմածությամբ նա դարձել է ջիրաու, համատեղելով երեք հրաշալի ձիրք. եղել է թե բանաստեղծ, թե սեփական երգերի երգահան, և թե բացառիկ կատարող, լայն շնչի տեր երգիչ։ Ռայմալի-աղան հիացրել է ժամանակակիցներին։ Բավական էր զարկեր լարերին, անմիջապես երաժշտության ետևից թափվում էր երգը, որ ծնվում էր ունկնդիրների ներկայությամբ։ Հաջորդ օրը այդ երգն արդեն շրթունքից շրթունք էր անցնում, որովհետև Ռայմալիին լսողները նրա երգը հետները տանում էին աուլներն ու քոչատեղերը։ Ահա, նրա այս երգն էին երգում այն ժամանակվա ջիգիթները.

Պաղ ջրի համը կիմանա ձին կրակված,
Որ խմում է սարի տակից վազող ջուրը։
Կյանքի համը ես կիմանամ, սիրելիս,
Որ սուրալով հասնում եմ քեզ,
Թամբից չիջած, հպվում անուշ շուրթերիդ։

Ռայմալի-աղան հագնում էր գեղեցիկ և աչքի ընկնող զգեստներ։ Աստված էր այդպես հրամայել։ Առանձնապես սիրում էր շքեղ, լավագույն մորթիներով եզրավորված տարբեր գլխարկներ, ձմռան, ամռան և գարնան համար։ Եվ ձի ուներ անբաժան՝ ոսկեխայտ Սարալան, որ նվեր էր ստացել թուրքմեններից, հանդիսավոր խնջույքի ժամանակ։ Ձիու նազանքը և վեհապանծ քայլքը հիացմունք էր պատճառում գիտակներին։ Դրա համար էլ կատակասերներն ասում էին. Ռայմալիի ամբողջ հարստությունը դոմբրայի հնչյուններն են և Սարալայի քայլքը։

Այդպես էլ կար։ Ամբողջ կյանքը Ռայմալի-աղան անց էր կացնում թամբի վրա, դոմբրան ձեռքին։ Հարստություն չի կուտակել, չնայած անբավ փառք է ունեցել։ Ապրել է մայիսյան սոխակի նման. ամենուրեք խրախճանք, ուրախություն, ամենուրեք հարգ ու պատիվ։ Իսկ ձիուն՝ խնամք ու գարի։ Սակայն կա-

*յին ուրիշ հզոր, ունևոր մարդիկ, որոնք չէին սիրում նրան, իբրև թե զեխ, անխոհեմ կյանքով է ապրում, ինչպես քամին՝ դաշտում։ Այո, այդպես էլ էին խոսում նրա ետևից։*

*Բայց երբ Ռայմալի-աղան հայտնվում էր մեծ խրախճանքներում, դոմբրայի առաջին իսկ հնչյուններից և երգերից բոլորը համրանում էին, կախարդված նայում նրա մատներին, աչքերին ու դեմքին, նույնիսկ նրանք, ովքեր չէին հավանում նրա ապրելակերպը, նայում էին նրա ձեռքերին, որովհետև մարդկային սրտում չկային այնպիսի զգացմունքներ, որոնց համապատասխան հնչյունները լարերի վրա չկարողանային գտնել այդ ձեռքերը, աչքերին էին նայում, որովհետև հոգու և մտքի ամբողջ կորովը վառվում էին այդ հարափոփոխ աչքերում։ Դեմքին էին նայում, որովհետև գեղեցիկ էր և ոգևորված։ Երբ երգում էր, դեմքը փոխվում էր, ինչպես ծովը՝ քամիներից...*

*Կանայք հեռանում էին նրանից հուսահատվելով և կորցնելով համբերությունը, բայց շատ կանայք գիշերները թաքուն լաց էին լինում, երազելով նրա մասին։*

*Այսպես հոսում էր նրա կյանքը՝ երգից երգ, հարսանիքից հարսանիք, խնջույքից խնջույք, երբ ծերությունն աննշմար մոտեցավ նրան։ Սկզբում արծաթը ցոլաց բեղերի մեջ, հետո մորուքը սպիտակեց։ Նույնիսկ Սարալան փոխվեց, նիհարեց, պոչն ու բաշը կարճացան, միայն քայլվածքից կարելի էր գուշակել, որ ժամանակին պատվական ձի է եղել։ Եվ Ռայմալի-աղան ոտք դրեց իր ձմեռվա շեմը, ինչպես սրագագաթ բարդին է չորանում հպարտ մենության մեջ... Եվ այստեղ բացահայտվեց, որ նա չունի ոչ ընտանիք, ոչ տուն, ոչ երամակ, ոչ էլ որևէ հարստություն։ Նրան ապաստան տվեց կրտսեր եղբայրը՝ Աբդիլխանը, նախապես մերձավոր ազգականների շրջանում արտահայտելով դժգոհությունն ու անբարյացակամությունը։ Բայց հրամայեց նրա համար կանգնեցնել առանձին յուրտ, հրամայեց կերակրել և խնամել...*

*Ծերության մասին սկսեց երգել Ռայմալի-աղան, մահվան մասին սկսեց մտորել։ Նշանավոր և տխուր երգեր ծնվեցին այդ օրերին։ Եվ հերթը հասավ նրան, ազատ ժամերին հանգելու բոլոր փիլիսոփաների նախնական մտքին. ինչո՞ւ է մարդս աշխարհ գալիս։ Այլևս առաջվա նման չէր մասնակցում խրախճանքներին ու հարսանիքներին, ավելի շատ էր մնում տանը, ավելի հաճախ էր տխուր եղանակներ նվագում դոմբրայի վրա, հուշերով էր*

ապրում և ավելի երկար էր ավագների հետ զրույցի բռնվում կյանքի ունայնության մասին...

Եվ, աստված վկա, խաղաղությամբ կապրեր իր վերջին օրերը Ռայմալի-աղան, եթե չլիներ մի դեպք, որ ցնցեց նրան կյանքի մայրամուտին։

Մի անգամ, չդիմացավ Ռայմալի-աղան, թամբեց իր պառավ ձին, գնաց մեծ տոնախմբության՝ ցրելու ձանձրույթը։ Համենայն դեպս, դոմբրան վերցրեց հետը։ Շատ էին խնդրել հարգելի մարդիկ՝ մասնակցելու հարսանիքին, եթե չի կարող երգել, թող գոնե ներկա գտնվի։ Եվ Ռայմալի-աղան հանգիստ սրտով գնաց, շուտ վերադառնալու մտադրությամբ։

Նրան դիմավորեցին հարգուպատվով, հրավիրեցին լավագույն յուրտը՝ սպիտակ գմբեթով։ Նստած էր այնտեղ նշանավոր մարդկանց շրջապատում, կումիս էր խմում, հավուր պատշաճի խոսք ու զրույց վարում, բարեմաղթություններ անում։

Իսկ աուլում խելահեղ քեֆ էր, ամեն կողմից լսվում էին երգ, ծիծաղ, երիտասարդների ձայներ, խաղեր ու զվարճություններ, լսվում էր ինչպես են ձիավարժության պատրաստություններ տեսնում նորապսակների պատվին, ինչպես են խոհարարները իրար անցել խարույկների մոտ, ինչպես են ազատ արձակված ձիերին հանդարտեցնում, ինչպես էին շներն անխռով գզվռտում, ինչպես էր տափաստանից փչող քամին բերում ծաղկած խոտերի բուրմունքը... Բայց ամենից ավելի Ռայմալի-աղայի լսողությունը որսում էր հարևան յուրտերից եկող երգն ու նվագը։ Աղջկական մի ծիծաղ րոպեն մեկ պայթում էր շուրջը, նրան ստիպում սրել ականջները...

Տվայտում, նվում էր ծեր երգչի հոգին։ Զրուցակիցներին ոչինչ ցույց չէր տալիս Ռայմալի-աղան, բայց մտովի սավառնում էր անցյալում, տեղափոխվել էր այն օրերը, երբ ինքը ջահել էր ու սիրուն, երբ սուրում էր ջահել ու արագավազ Սարալայի թամբին, երբ խոտերը տրորվելով ձիու սմբակների տակ, լալիս էին ու ծիծաղում, երբ արեգակը լսելով նրա երգը վազում էր ընդառաջ, երբ քամին չէր պարփակվում կրծքում, երբ նրա դոմբրայի հնչյուններից եռում էր արյունը մարդկանց սրտերում, երբ նրա յուրաքանչյուր բառը թռցնում էին օդից, երբ նա կարողանում էր տառապել, կարողանում էր սիրել, կարողանում էր և պատժել, և արցունք թափել, հրաժեշտ տալով ասպանդակից... Ինչո՞ւ և ինչի՞ համար է եղել այդ բոլորը։ Որպեսզի հետո

խեղճանա և հանգչի՞, ինչպես գորշ մոխիրների տակ մարմրող կրա՞կ։

Տխրել էր Ռայմալի-աղան, լռել էր մտասույզ։

Եվ հանկարծ լսեց յուրտին մոտեցող քայլեր, մանյակի զրնգոց և զգեստների ծանոթ շրշյուն որսաց ականջը։ Մեկը դրսից ետ տարավ յուրտի դռանը կարված վարագույրը, և շեմին հայտնըվեց մի աղջիկ՝ դոմբրան սեղմած կրծքին, դեմքը բաց, հայացքը չարաճճի և հպարտ, հոնքերը աղեղների պես ձգված, որ մտնում էր համարձակ վարք, և առհասարակ ոտքից գլուխ գեղեցիկ էր այդ սևաչյան, կարծես արարվել էր հմուտ ձեռքերով. և՛ հասակը, և՛ կերպարանքը, և՛ աղջկական զգեստները։ Նա կանգնած էր դռան առջև, գլուխը խոնարհած, ընկերուհիների և մի քանի ջիգիթների ուղեկցությամբ, ներողություն խնդրելով անվանի մարդկանցից... Բայց դեռ ոչ մեկը չէր հասցրել բացել բերանը, երբ աղջիկը ինքնավստահ խփեց լարերին և դիմելով Ռայմալի-աղային, երգեց ողջույնի երգ.

«Քարավանչու նման, որ հեռվից գալիս է աղբյուրի մոտ պապակ սիրտը հովացնելու, ես քեզ մոտ եմ եկել ողջույնի խոսքով, փառաբանված երգիչ Ռայմալի-աղա։ Մի մեղադրիր, որ ներս խուժեցինք աղմուկ-աղաղակով, աղմկոտ խմբով, առանց դրա ի՞նչ խնջույք և ի՞նչ հարսանիքի ուրախություն։ Մի զարմանա իմ հանդգնության վրա, Ռայմալի-աղա, ես համարձակվել եմ քեզ ներկայանալ երգով, թեև այնպիսի սրտի թրթիռով ու գաղտնի դողով, կարծես սիրո խոստովանություն եմ անելու։ Ներող եղիր, Ռայմալի-աղա, ես այնպես լի եմ համարձակությամբ, ինչպես վառոդով լցված հրացան։ Ճիշտ է, ես ապրում եմ անհոգ ու ազատ՝ խրախճանքներում ու հարսանիքներում, բայց այս հանդիպմանը պատրաստվել եմ ամբողջ կյանքումս, մեղվի նման, որ կաթիլ-կաթիլ մեղր է հավաքում։ Պատրաստվել եմ ծաղկի կոկոնի նման, որ պիտի բացվի սահմանված ժամին։ Արդ եկել է ժամը...»։

«Սպասիր, բայց ո՞վ ես դու, չքնաղ աղջիկ»,— ուզում էր իմանալ Ռայմալի-աղան, թեև չհամարձակվեց ընդհատել ուրիշի երգը կես խոսքից։ Բայց ամբողջապես ձգվեց նրա կողմը զարմացած և հիացած։ Հոգին փոթորկվեց, տաք արյամբ բորբոքվեց մարմինը, և նթե այդ պահին առանձնահատուկ տեսողություն ունենային մարդիկ, կտեսնեին ինչպես վեր թռավ նա, թափահարեց թևերը, թռիչքի պատրաստվող քարարծվի նման։

Եվ աշխուժացան, փայլփլեցին աչքերը, ականջները սրեց, կարծես բաղձալի կանչ լսեց երկնքից։ Եվ բարձրացրեց աչքերը Ռայմալի-աղան մոռանալով տարիքը։

Իսկ երգչուհին շարունակում էր.

«Լսիր իմ պատմությունը, ով մեծն չիրաու, քանի որ համարձակվել եմ այս քայլին դիմել։ Ես պատանի հասակից սիրում եմ քեզ, աստվածատուր երգիչ Ռայմալի-աղա։ Ես ամենուրեք հետևել եմ քեզ, որտեղ երգել ես, որտեղ եղել ես։ Մի՛ մեղադրիր։ Երազում էի գուսան դառնալ՝ քեզ նման, ինչպիսին եղել ես դու, ինչպիսին կաս հիմա, երգի մեծ վարպետ Ռայմալի-աղա։ Եվ ամենուր, անտես ստվերի նման՝ հետևելով քեզ, քո ոչ մի բառը բաց չթողնելով, աղոթքների պես կրկնել եմ քո երգերը, հմայությունների պես սովորել, անգիր եմ արել քո ոտանավորները։ Երազել, աղերսել եմ աստծուց, որ երկնքից ինձ ուղարկի ձիրք ու շնորհք, որ մի երջանիկ օր ողջունեմ քեզ, խոստովանեմ սերս, որ վաղեմի սիրով երգեր երգեմ, հորինելով դրանք քո ներկայությամբ, և թող ների աստված այս հանդգնությունը, օ՜հ, մեծն վարպետ, ես երազել եմ երգով մրցել քեզ հետ, թեկուզ պարտվեմ, ով Ռայմալի-աղա, այսօրվա մասին եմ մտածել, ինչպես հարսանիքի մասին կմտածեն։ Բայց ես փոքր էի, իսկ դու այնքան մեծ, այնքան սիրված բոլորից, փառք ու պատվով շրջապատված, որ չէիր կարող ինձ նման աղջնակին նկատել ժողովրդի մեջ, չէիր կարող մարդաշատ խնջույքներում տեսնել ինձ։ Ես ըմբոշխնում էի քո երգերը և ամոթից այրվելով, ծածուկ երազում էի քո մասին և ուզում էի շուտ կին դառնալ, որ գայի քեզ մոտ, ներկայանայի համարձակ։ Եվ երդվել էի սովորել խոսքի արվեստը, խորապես ճանաչել երաժշտության էությունը և երգել քեզ նման, իմ ուսուցիչ, որ ուղիղ գայի քեզ մոտ, չվախենալով քո զննող հայացքից, ողջույն տայի քեզ ու սերս խոստովանեի և իմ մրցակոչը նետեի քեզ, առանց թաքնվելու։ Ահա ես այստեղ եմ, քո առջև և քո դատին։ Մինչև մեծացա, մինչև շտապեցի կին դառնալ, ժամանակ շատ անցավ և վերջապես այս գարնան տասնիննս լրացավ։ Իսկ դու, Ռայմալի-աղա, իմ աղջըկական աշխարհում միշտ նույնն ես, միշտ նույնպիսին, լոկ սպիտակել ես մի քիչ։ Բայց դա խոչընդոտ չի, որպեսզի սիրեմ քեզ, ինչպես ոչ ոքի, նույնիսկ ջահելներին։ Եվ ահա ես այստեղ եմ։ Այժմ թույլ տուր ասեմ պարզ ու որոշակի, դու կարող ես մերժել ինձ որպես աղջկա, բայց որպես երգչուհու, չես համար-

ձակվի մերժել ինձ, որովհետև ես եկել եմ քեզ հետ մրցելու պերճախոսությամբ... Քեզ մրցակոչ եմ անում, վարպետ, խոսքը քոնն է»։

— Բայց ո՞վ ես դու։ Որտեղի՞ց ես եկել,— բացականչեց Ռայմալի-աղան և տեղից ելավ։— Անունդ ի՞նչ է։

— Իմ անունը Բեգիմայ է։

— Բեգիմայ։ Ո՞ւր էիր մինչև հիմա։ Որտեղի՞ց հայտնվեցիր, Բեգիմայ,— ակամայից դուրս թռավ Ռայմալի-աղայի շրթունքներից, և գլուխը խոնարհեց մռայլված։

— Նոր ասացի, Ռայմալի-աղա։ Փոքր էի ես, մեծացա։

— Հասկանում եմ ամեն ինչ,— պատասխանեց նա։— Միայն մի բան չեմ հասկանում, իմ ճակատագիրը չեմ հասկանում։ Ինչո՞ւ է նրան հաճո եղել քեզ մեծացնել այսքան ուշ, իմ մոտալուտ ձմռան մայրամուտին։ Ինչո՞ւ։ Որպեսզի ասի, թե ինչ որ եղել է առաջ, սուտ ու սխալ է եղել, թե ես զուր եմ ապրել աշխարհում, բանից անտեղյակ, թե երկնքից իբրև հատուցում պիտի ճաշակեմ քաղցր տանջանք, պիտի լսեմ, նայեմ երեսիդ։ Ինչո՞ւ է ճակատագիրը այսքան դաժան խաղ խաղում գլխիս։

— Զուր ես այդպես գանգատվում բախտից, Ռայմալի-աղա,— ասաց Բեգիմայը։— Եթե բախտը հայտնվել է իմ դեմքով, իմ նկատմամբ կասկած չունենաս, Ռայմալի-աղա։ Ինձ համար չկա ավելի նվիրական բան, քան ուրախություն պարգևել քեզ իմ կուսական գուրգուրանքով, երգով ու անձնուրաց սիրով։ Իմ նկատմամբ կասկած չունենաս, Ռայմալի-աղա։ Բայց եթե կասկածներդ հաղթել չկարողանաս, եթե փակես քո դռները իմ առջև, այդ դեպքում նույնպես, քեզ անսահման սիրելով, մեծ պատիվ կհամարեմ մրցակցել քեզ հետ վարպետության մեջ և պատրաստ եմ հանձն առնել ամեն փորձություն։

— Ի՞նչ ես ասում, ի՞նչ նշանակություն ունի խոսքի փորձությունը, Բեգիմայ։ Ի՞նչ նշանակություն ունի վարպետության մրցությունը, երբ գոյություն ունի ավելի ահեղ փորձություն. սերը, որ անհամատեղելի է այն կարգին, որտեղ ապրում ենք մենք։ Ոչ, Բեգիմայ, ես խոսք չեմ տա մրցել քեզ հետ պերճախոսությամբ։ Եվ ոչ թե ուժս չի պատում, ոչ թե խոսքն է մեռել իմ մեջ, ոչ թե ձայնս է թուլացել։ Ոչ դրա համար։ Ես միայն կարող եմ հիանալ քեզնով, Բեգիմայ։ Ես միայն կարող եմ սիրել քեզ ի դժբախտություն ինձ, Բեգիմայ և միայն սիրո մեջ կմրցեմ քեզ հետ, Բեգիմայ։

Այս խոսքերով Ռայմալի-աղան վերցրեց դոմբրան, լարեց նոր տոնայնությամբ և երգեց նոր երգ, երգեց անցած-գնացած օրերի նման. մեկ ինչպես քամու շրշյունը խոտերի մեջ, մեկ ինչպես կապույտ-ճերմակ երկնքում որոտացող ամպրոպ։ Այդ ժամանակվանից աշխարհում մնաց «Բեգիմայ» երգը.

«... Եթե դու եկել ես հեռուներից, որ ջուր խմես աղբյուրից, ես քամու պես կհասնեմ քեզ և ոտքերդ կընկնեմ, Բեգիմայ։ Եթե ճակատագիրը այսօր որոշել է իմ մահը, միևնույն է, չեմ մեռնի ես այսօր։ Ու չեմ մեռնի երբեք, Բեգիմայ, կվերածնվեմ և նորից կապրեմ, Բեգիմայ, որպեսզի չզրկվեմ քեզնից, Բեգիմայ, առանց քեզ ես կույր եմ, Բեգիմայ...»։

Այդպես նա երգեց «Բեգիմայ» երգը։

Այդ օրը երկար մնաց մարդկանց հիշողության մեջ։ Որքան խոսք ու զրույց եռաց Ռայմալի-աղայի ու Բեգիմայի շուրջը։ Իսկ երբ հարսին ուղեկցում էին փեսայի մոտ, տոնական սպիտակ յուրտերի, զարդարված ձիերի և հեծյալների մեջ, վառվռուն տոնական բազմության մեջ, ուղեկից քարավանի գլխին սիգարշավում էին Ռայմալի-աղան և Բեգիմայը՝ շուրթերին բարեմաղթության երգեր։ Կողք-կողքի գնում էին նրանք, ասպանդակ-ասպանդակի գնում էին նրանք, կողք-կողքի փայլում էին նրանք, աստծուն էին դիմում նրանք, բարի ուժերին էին դիմում նրանք նորապսակներին բախտ էին մաղթում նրանք, դոմբրա էին նվագում նրանք, սրինգ էին նվագում նրանք, երգ էին երգում նրանք. մեկ սա, մեկ նա, մեկ սա, մեկ նա...

Ու ապշել էին մարդիկ շուրջբոլորը, որ այդպիսի երգեր են լսում, և ծիծաղում էին խոտերը շուրջբոլորը, խարույկի ծուխն էր բռնել շուրջբոլորը, և ճախրում էին թռչունները շուրջբոլորը, հրճվում էին երեխաները քուռակների վրա, ձիախաղերի շուրջբոլորը...

Անճանաչելի էր դարձել ծեր երգիչ Ռայմալի-աղան։ Նորից ձայնը զրնգում էր առաջվա նման, նորից ճկուն ու ճապուկ էր առաջվա նման, իսկ աչքերը վառվում էին կանաչ դաշտի սպիտակ յուրտերի ճրագների նման։ Նույնիսկ նրա Սարալա ձին վիզը ճկել, վարգում էր հպարտ։

Բայց հո բոլորի սրտո՞վ չէր այդ։ Բազմության մեջ կային մարդիկ, որ թքում էին, նայելով Ռայմալի-աղային։ Նրա ազգականները, տոհմակիցները, բարակբայները, այդպես էր կոչվում նրանց տոհմը, վրդովվում էին։ Զայրանում էին հարսանիքին

ներկա բարակբայները։ Սա ի՞նչ բան է. Ռայմալի-աղան խելքը թռցրել է այդ տարիքում։ Սկսեցին չարախոսել նրա եղբայր Աբդիլխանի մոտ։ Այսքանից հետո ինչպե՞ս պիտի քեզ վոլոստի տանուտեր ընտրենք, ընտրությունների ժամանակ բոլորը մեզ ձեռ կառնեն, եթե քավթառ Ռայմալին այսպես խայտառակ է անում մեզ։ Լսո՞ւմ ես, ինչ է երգում, ջահել հովատակի նման խրխնջում է, իսկ այդ աղջիկը, լսո՞ւմ ես, ինչ է պատասխանում։ Խաղք ու խայտառակությո՜ւն։ Բոլորի աչքի առաջ խելքահան է անում ծերունուն։ Լավ բան չի։ Ի՞նչ գործ ունի այդ աղջկա հետ։ Հարկավոր է դրա սանձերը քաշել, թե չէ անամոթ լուրը տուլից տուլ է թռչելու։

Աբդիլխանը վաղուց էր ոխ պահում անառակ եղբոր հանդեպ, որ մինչև ալևոր հասակը անառակություն է արել։ Մտածում էր, ծերացավ, ուշքի կգա, և ահա, խնդրեմ, անարգում է բարակբայների ամբողջ գերդաստանը։

Եվ այնժամ խթանեց ձիուն Աբդիլխանը, բազմությունը ճեղքեց, հասավ եղբորը, գոռաց, սպառնալից թափահարելով մտրակը. «Ուշքի՛ եկ։ Տո՛ւն գնա»։ Բայց ավաղ եղբայրը, քաղցրալուր երգերով տարված, չլսեց և չտեսավ նրան։ Իսկ երկրպագուները, որ հոծ խմբերով, ձիերը հեծած, շրջապատել էին երգիչներին և կլանում էին երգերի յուրաքանչյուր բառը, մի վայրկյանում Աբդիլխանին դուրս գցեցին և ամեն կողմից վիզը դաղեցին մտրակներով։ Դեհ արի, հասկացիր, ով է խփողը։ Ձիուն խթանեց, փախավ Աբդիլխանը։

Եվ երգվում էին երգերը։ Այդ պահին նոր երգ ծնվեց շուրթերին։ «... Երբ սիրահարված մարալը, առավոտյան բառաչելով ընկերուհուն է կանչում, կիրճը լեռնային արձագանքով կրկնում է կանչը»,— երգում էր Ռայմալի-աղան։

«Իսկ երբ ընկերուհուց բաժանված կարապը առավոտյան արեգակին է նայում, արեգակը նրա աչքին սև է երևում»,— երգով պատասխանում էր Բեգիմայը։

Եվ այսպես երգում էին նրանք ի պատիվ նորապսակների. մեկ սա էր երգում, մեկ՝ նա, մեկ՝ սա, մեկ՝ նա...

Այդ պահին, ինքն իրեն մոռացած Ռայմալի-աղան չգիտեր, թե ինչ ոխակալությամբ էր սուրում եղբայր Աբդիլխանը, ինչպիսի վիրավորանքով ու անզսպելի վրեժխնդրությամբ էին հետևում նրան ազգականները, ամբողջ բարակբայների տոհմը։

խոսք մեկ արած՝ ինչպիսի դատաստան էին պատրաստում նրա համար, չգիտեր...

Եվ երգվում էին երգերը. մեկ սա էր երգում, մեկ՝ նա, մեկ՝ սա, մեկ՝ նա...

Սև ամպի պես թամբին թառած սլանում էր Աբդիլխանը։ Դեպի առուլ, դեպի տուն։ Աշգակլանները, որ գայլի ոհմակի պես սուրում էին կողքից, գոռում էին.

— Եղբայրդ խելքը թռցրե՞լ է։ Գժվե՞լ է։ Դժբախտություն։ Շտապ բուժել է պետք։

Եվ երգվում էին երգերը. մեկ սա էր երգում, մեկ՝ նա, մեկ՝ սա, մեկ՝ նա...

Այսպես երգ ու խաղով հարսանեկան թափորը տեղ հասցրին։ Այստեղ, հրաժեշտի պահին էլի բարեմաղթություններ երգեցին։ Եվ դիմելով մարդկանց Ռայմալի-աղան ասաց, որ ինքը երջանիկ է, որովհետև հասավ այն օրհնված օրը, երբ ճակատագիրն իբրև պարգև ուղարկեց իրեն հավասար գուսանի, երիտասարդ երգչուհի Բեգիմային։ Ասաց, ինչպես կայծքարը կայծքարի հետ շփվելով է կրակ վառվում, այնպես էլ խոսքի արվեստի մեջ, վարպետության մեջ մրցելով են գուսանները հասնում կատարելության գագաթնիքին։ Բայց ամեն ինչից զատ, հնարավոր ամեն ինչից զատ, նա ավելի շատ երջանիկ է, որ կյանքի վերջին օրերին, ինչպես մայրամուտի ժամանակ արեգակն է բոցավառվում ամբողջ ուժով, ինքը ճանաչեց սերը, ճանաչեց հոգու այնպիսի ուժով, որպիսին չի իմացել իր ծննդյան օրից։

— Ռայմալի-աղա,— պատասխան խոսքով ասաց Բեգիմայը։ — Կատարվեց իմ երազանքը։ Ես կհետևեմ քեզ։ Երբ ասես և որտեղ ասես, ես անմիջապես կհայտնվեմ դոմբրայով։ Որպեսզի երգը հոսի երգի հետ, որպեսզի ես սիրեմ քեզ և լինեմ քո սերը։ Այսուհետև առանց տատանվելու իմ կյանքը հանձնում եմ ճակատագրին։

Այսպիսի երգեր էին երգվում։

Եվ այստեղ, տափաստանային ամբողջ ժողովրդի աչքի առջև, նրանք պայմանավորվեցին մեկ օրից հանդիպել մեծ տոնավաճառում, որտեղ կերգեն բոլոր կողմերից եկած մարդկանց համար։

Եվ նույն վայրկյանին հարսանիքից վերադարձողները լուրը տարածեցին շրջանով մեկ, թե Ռայմալի-աղան և Բեգիմայը գալու են տոնավաճառ երգելու։ Թևածում էր լուրը։

— Դեպի տոնավաճա՞ռ։

— Դեպի տոնավաճառ, թամբե՛ք ձիերը։

— Տոնավաճա՜ռ եկեք, զուռնաներին լսելու։

Մարդկային ձայները արձագանք տվին.

— Լավ տոն կլինի։

— Այ զվարճությո՜ւն։

— Այ գեղեցկությո՜ւն։

— Ի՜նչ խայտառակություն։

— Ինչ լա՜վ է։

— Ի՜նչ անամոթություն։

Իսկ Ռայմալի-աղան ու Բեգիմայը բաժանվեցին ճամփի կեսին։

— Մինչև տոնավաճառ, հարազատ Բեգիմայ։

— Մինչև տոնավաճա՜ռ, Ռայմալի-աղա։

Եվ հեռանալով դեռ կանչում էին թամբերից։

— Մինչև տոնավաճառ-ա՜ռ։

— Մինչև տոնավաճառ, Ռայմալի-աղա— ա՜-ա՜-ա՜։

Օրը վերջանում էր։ Մեծ տափաստանը հանգիստ սուզվում էր տափաստանային ամռան սպիտակ մշուշների մեջ։ Հասունացել էին խոտերը, թոշնածության թեթև բույր էին արձակում խոտերը, լեռներում եկած անձրևից հետո զով շունչ էր գալիս, մայրամուտից առաջ ուրուրներ էին թռչում ցածր և անշտապ, երգում էին ճնճղուկները, օրհնաբանելով խաղաղ երեկոն։

— Ինչպիսի՜ անդորր, ի՜նչ երանություն,— շշնջաց Ռայմալի-աղան շոյելով ձիու բաշը։— Ախ, Սարալա, ախ իմ ծերուկ, իմ փառահեղ ձի, մի՞թե կյանքն այնքան քաղցր է, որ ուզում ես նույնիսկ վերջին օրերին այսպես սիրել...

Իսկ Սարալան գնում էր սովորական ընթացքով, փնչում էր, տուն էր շտապում, որպեսզի ոտքերին դադար տա, ամբողջ օրը քայլել էր թամբի տակ, ուզում էր գետի ջուր խմել և դաշտ դուրս գալ լուսնի լույսով արածելու։

Ահա և տունը գետի ոլորանին։ Ահա յուրտերը, ահա ուրախ ծուխ են արձակում խարույկները։

Ռայմալի-աղան իջավ թամբից։ Ձին կապեց, թողեց բակում։ Տուն չմտավ, նստեց դրսի օջախի մոտ շունչ առնելու։ Բայց մեկը մոտեցավ։ Հարևանի տղան էր։

— Ռայմալի-աղա, մարդիկ ձեզ յուրտ են կանչում։

— Ի՞նչ մարդիկ։

— Մերոնք։ Բոլոր բարակբայները։

Շեմքից ոտքը դցելով, Ռայմալի-աղան տեսավ տոհմի ավագներին, որոնք նստել էին խիտ կիսաշրջան կազմած, և նրանց մեջ քիչ այն կողմ՝ եղբայր Աբդիլխանին։ Սա մռայլ էր։ Աչքերը չէր բարձրացնում, կարծես բան էր թաքցնում հայացքի մեջ։

— Խաղաղություն ձեզ,— ողջունեց Ռայմալի-աղան տոհմակիցներին։— Հո բան չի՞ պատահել։

— Քեզ ենք սպասում,— խոսեց ամենագլխավորը։

— Եթե ինձ եք սպասում, ես այստեղ եմ,— պատասխանեց Ռայմալի-աղան։— Ես տեղ եմ որոնում, որ նստեմ շրջանակի մեջ։

— Կանգնի՛ր։ Կա՛ց դռների մոտ։ Եվ լսի՛ր,— լսեց հրամանը։

— Ի՞նչ է նշանակում։ Չէ՞ որ առայժմ ես եմ այս յուրտի տերը։

— Ոչ, դու չես տերը։ Տեր չի կարող լինել այն ծերուկը, որ խելքը տվել է։

— Ինչի՞ մասին է խոսքը։

— Այն մասին, որ դու պետք է հիմա երդում տաս, թե այլևս ոչ մի տեղ և երբեք չես երգի, քարշ չես գա խնջույքներում և գլխից կհանես այն աղջկան, որի հետ այսօր խայտառակ երգեր էիր երգում, մոռանալով չալ մորուքդ, անամո՛թ, դեռնովը տվիր մեր և քո պատիվը։ Դեհ, երդվի՛ր։ Երդվի՛ր, որ այլևս չես երևա նրա աչքին։

— Իզուր եք ավելորդ խոսքեր վատնում։ Վաղը չէ մյուս օրը ես պետք է երգեմ նրա հետ, ժողովրդի առջև։

Այստեղ աղմուկ բարձրացավ։

— Նա մեզ խայտառակ է անում։

— Հրաժարվի՛ր, քանի ուշ չի։

— Չէ՜, նա գժվել է։

— Իսկապես, խելքը գցել է։

— Հապա լռե՛ք, լռե՛ք մի րոպե,— կարգ հաստատեց գլխավոր դատավորը։— Այսպես, Ռայմալի, դու ասացի՞ր քո վերջին խոսքը։

— Այո։

— Լսո՞ւմ եք, Բարակբայ տոհմի հետնորդներ, ինչ ասաց մեր տոհմակիցը, անարգ Ռայմալին։

— Այո, լսեցինք։

— Արդ լսեք, թե ինչ կասեմ ես, նախ կասեմ քե՛զ, Թշվառական Ռայմալի։ Ամբողջ թշվառ կյանքդ՝ ունեցածդ մի հատիկ ձի, անց ես կացրել քեֆերում, երգել ես խրախճանքներում, դոմբրա ես ծնգծնգացրել, ծաղրածու-ձեռնածու ես եղել։ Ամբողջ կյանքդ վատնել ես ուրիշներին զվարճացնելու վրա։ Մենք ներում էինք քո անառակ վարքը, քանի դեռ չահել էիր։ Այժմ դու ծեր ես և ծիծաղելի ես, մենք արհամարհում ենք քեզ։ Դու փոխանակ մտածես մահվան մասին և խաղաղվես, քե՛զ ծաղրածանակի մատնեցիր ուրիշ աղջիկների առջև, վերջին թեթևսոլիկի նման քարշ եկար այն աղջկա ետևից, ոտնատակ տվեցիր մեր բարքերըն ու օրենքները և չես ցանկանում լսել մեր խորհուրդը, ինչ արած, թող աստված դատաստան տեսնի քեզ հետ, մեղավորը ի՛նքդ ես։ Այժմ երկրորդ խոսքը։ Վե՛ր կաց, Աբդիլխան, դու նրա արյունակից եղբայրն ես, մի հորից և մի մորից, և դու ես մեր հույսն ու ապավենը։ Բոլոր բարեկամների կողմից մենք ցանկանում էինք քեզ տեսնել վոլոստի տանուտեր։ Բայց քո եղբայրը խելքը գցել է, չի հասկանում, թե ինչ արարմունք է թույլ տալիս, և կարող է արգելք լինել այդ գործում։ Դրա համար էլ դու իրավունք ունես նրա հետ վարվելու այնպես, որ խելքը թռցրած Ռայմալին մեզ չխայտառակի մարդկանց առջև, որ ոչ ոք չհամարձակվի թքել մեր երեսին և ոչ ոք չհամարձակվի բարեկամներին ծիծաղի առարկա դարձնել։

— Ոչ ոք իմ գլխի տերը չի և չի կարող դատավոր լինել,— խոսեց Ռայմալի-աղան, կանխելով Աբդիլխանին.— ես խնդրում եմ ձեզ, այստեղ նստածներից և չնստածներից, դուք խոր մոլորության մեջ եք, դուք դատողություն եք անում մի բանի մասին, որ անհնարին է լուծել ընդհանուր հավաքույթում։ Դուք չգիտեք ո՛րն է ճշմարտությունը և որն է երջանկությունն այս աշխարհում։ Մի՞թե ամոթ է երգելը, երբ երգվում է, մի՞թե ամոթ է սիրելը, երբ տերը ի վերուստ սեր է առաքում։ Ախր մարդկանց համար աշխարհում ամենամեծ ուրախությունը սիրահարներով ուրախանալն է։ Բայց քանի որ դուք ինձ խելագար եք համարում լոկ նրա համար, որ ես երգում եմ և չեմ հրաժարվում անժամանակ հայտնված սիրուց, ուրախանում եմ դրա համար, ուրեմն ես կթողնեմ կհեռանամ ձեզնից։ Կհեռանամ, աշխարհում դեռ տեղ կգտնվի։ Հիմա ևեթ կհեծնեմ Սարալային, կգնամ նրա մոտ

կամ միասին կմեկնենք ուրիշ աշխարհներ, որ չանհանգստացնեմ ձեզ ոչ իմ երգերով, ոչ էլ իմ վարքով։

— Ո՛չ, չես գնա,— պայթեց ահեղ զայրույթով մինչ այդ շարունակ լուռ Աբդիլխանը։— Այստեղից ո՛չ մի տեղ չես գնա դու։ Ոչ մի տոնավաճառ ոտք չես դցի դու։ Մենք պիտի բուժենք քեզ, մինչև խելքդ գլուխդ գա։

Եվ այս խոսքերով եղբայրը գուսանի ձեռքից խլեց դոմբրան։

— Ահա այսպես։— Եվ շպրտեց գետնին, ոտքի տակ ջնջխորորեց դյուրաբեկ գործիքը, ինչպես կատաղած ցուլն է տրորում հովվին։ Այսուհետև երգելդ պիտի մոռանաս։ Հե՜յ, այստեղ բերեք դրա քնձռոտ Սարալային։— Եվ նշան արեց։

Եվ նրանք, որ բակում պատրաստ կանգնած էին, արագ կապից արձակեցին, քշեցին բերին Սարալային։

— Թամբը հանիր, դցիր այստեղ,— թաքցրած կացինը ձեռքն առնելով, հրամայեց Աբդիլխանը։

Թամբը ջարդեց կացնով, տաշեղների վերածեց։

— Ահա։ Ո՛չ մի տեղ այլևս չես գնա։ Ո՛չ մի տոնավաճառ։— Եվ կատաղած բզիկ-բզիկ արեց հեծելասարքը, ասպանդակների կաշեփոկերը կտրատեց, ասպանդակները շպրտեց թփերի մեջ, մեկը մի կողմ, մյուսը՝ մյուս։

Ահաբեկված այս ու այն կողմ էր նետվում Սարալան, չոքում էր, խռխռում էր, կրծոտում սանձը, կարծես զգում էր, որ իրեն նույնն է վիճակվելու։

— Ուրեմն դու տոնավաճառ պիտի գնայիր Սարալային հեծա՞ծ։ Դեհ, հիմա տես,— գավազեց Աբդիլխանը։

Եվ այստեղ տոհմակիցները վայրենաբար տապալեցին Սարալային, մազե օղապարանը վայրկենաբար գցեցին վիզը։ Իսկ Աբդիլխանը հուժկու ձեռքը գցեց ձիու պարանոցին, գլուխն իջեցրեց և դանակը խրեց անպաշտպան կոկորդը։

Ինչքան ուժ ուներ պոկվեց Ռայմալի-աղան պահողների ձեռքից։

— Սպասի՛ր։ Մի՛ սպանիր ձիուն։

Բայց չհասցրեց։ Դանակի տակից տաք արյունն այնպես շպրտվեց դեմքին, կարծես խավար պատեց օրը ցերեկով։ Եվ ոտքից գլուխ տաք արյան մեջ, Սարալայի արյունով թաթախված, օրորվելով վեր կացավ գետնից Ռայմալի-աղան։

— Իղուր։ Չէ՞ որ կարող եմ ոտքով գնալ։ Ջոքեչոք կսողամ,— ասաց նվաստացած երգիչը և դեմքը սրբեց փեշով։

— Ո՜չ։ Ոտքով էլ չե՛ս գնա։ Սարալայի կտրված կոկորդից Աբդիլխանը թափով վեր բարձրացրեց ատամները բաց դեմքը։— Դու այստեղից մի քայլ չես հեռանա։— Ասաց նա կամացուկ և հանկարծ գոռաց։— Բռնեցե՛ք սրան։ Նայեք, խելագար է։ Կապե՛ք, թե չէ կսպանի։

Այստեղ հարայ-հրոցն ընկավ։ Բոլորը խառնվեցին իրար, հրմշտեցին իրար։

— Այստեղ տվեք պարանը։

— Թևերը կապիր մեջքին։

— Ավելի ուժեղ ոլորի։

— Գժվել է։ Ահա քեզ ասված։

— Տես, աչքերը ինչ են եղել։

— Խելքը գցել է, հեյ, հեյ։

— Դրան քարշ տուր կեչու մոտ։

— Դեհ քաշիր։

— Քարշ տուր, շուտ արա։

Արդեն լուսինը բարձրացել էր երկնակամարի վրա։ Երկինքը խաղաղ էր, գետինը խաղաղ էր։ Եկան ինչ-որ շամաններ, խարույկ վառեցին և վայրագ պարով սկսեցին քշել չար ոգիներին, որոնք մթնեցրել էին մեծ երգչի բանականությունը։

Իսկ նա կանգնած էր կեչուն կապված, թևերն ամուր մեջքին ոլորած։

Հետո եկավ մոլլան։ Ղուրանից աղոթքներ կարդաց։ Օրինավոր ճամփի խրատներ կարդաց։

Իսկ նա կանգնած էր կեչուն կապված՝ թևերն ամուր մեջքին ոլորած։

Եվ դիմելով իր եղբայր Աբդիլխանին, երգեց Ռայմալի-աղան։ «Գնում է գիշերը, հետը տանում խավարի վերջին փշուրները։ Եվ նորից պիտի բացվի լույսն առավոտի։ Բայց այլևս լույս չկա ինձ համար։ Դու խլեցիր իմ արևը, թշվառական եղբայր իմ, Աբդիլխան։ Դու գոհ ես, անշուշտ, չարախնդում ես, որ ինձ բաժանել ես կյանքիս մայրամուտին աստծո ուղարկած սիրուց։ Բայց եթե իմանայիր, թե որքան երջանիկ եմ ես, քանի դեռ կամ, քանի դեռ շունչ կա բերանումս։ Դու ինձ կապեցիր, ծառին գամեցիր, բայց ես այստեղ չեմ հիմա, թշվառական եղբայր իմ, Աբդիլխան։ Այստեղ լոկ իմ ապականացու մարմինն է, իսկ հոգիս քամու պես սուրում է օդում, անձրևի պես ձուլվում է հողին, ես անբաժան եմ նրանից, ինչպես նրա վարսերը, ինչպես նրա շունչն ու հո-

գլին։ Արշալույսին, երբ նա բացի աչքերը, ես քարայծի նման կիջնեմ սարերից, կսպասեմ ժայռի ծերպին, մինչև նա դուրս գա յուրտից։ Երբ նա կրակ վառի, ես կդառնամ անուշաբույր ծուխ, կպարուրեմ նրան։ Երբ ձիով սլանա, անցնի գետի ծանծաղուտով, ես ջրերի շիթ կդառնամ, կթռչեմ սմբակների տակ, կցողեմ նրա երեսն ու ձեռքերը։ Իսկ եթե երգի, ես երգ կդառնամ...»։

Լուսաբացին նրա գլխավերևում մեղմիկ շրշացին ճյուղերը։ Օրը բացվեց։ Հարևանները լսելով, որ Ռայմալի-աղան խելագարվել է, հետաքրքրությունից հավաքվեցին-եկան և առանց ձիերից իջնելու խմբվեցին հեռվում։

Իսկ նա կանգնած էր հագուստները պատառոտված, կեչու բնին կապված, թևերն ամուր մեջքին ոլորած։

Եվ երգ էր երգում, որ հետո դարձավ նշանավոր.

Սև սարերից հենց որ իջնեն քոչերը,
Արձակիր թևերս, եղբայր Արդիլխան։
Կապույտ սարից հենց որ իջնեն քոչերը,
Ազատիր ինձ, եղբայր Արդիլխան։
Ում մոտով կանցներ, եղբայր Արդիլխան
Թե ձեռուոտս կկապես այսպես։
Սև սարերից հենց որ իջնեն քոչերը,
Կապույտ սարից հենց որ իջնեն քոչերը,
Արձակիր թևերս, եղբայր Արդիլխան,
Ես հոժար կամքով երկինք կգնամ։

Սև սարերից հենց որ իջնեն քոչերը,
Ես չեմ գա տոնավաճառ, Բեգիմայ։
Կապույտ սարից հենց որ իջնեն քոչերը,
Ինձ չսպասես տոնավաճառում, Բեգիմայ,
Մենք այլևս չենք երգի միասին, Բեգիմայ։
Իմ ձին չի կարող գալ, ես ոտքով չեմ հասնի։
Սև սարերից հենց որ իջնեն քոչերը,
Կապույտ սարից հենց որ իջնեն քոչերը,
Ինձ չսպասես տոնավաճառում, Բեգիմայ,
Ես հոժար կամքով երկինք կգնամ...

Ահա ինչ պատմություն է սա...

Այժմ, Ղազանղապին ուղեկցելով դեպի իր վերջին կացարանը, Եդիգեյը Անա-Բեյիթի ճանապարհին մտածում էր նաև այս մասին։

# XI

Գնացքները այս կողմերում գնում էին արևելքից արևմուտք և արևմուտքից արևելք: Իսկ երկաթուղու շուրջը, այս կողմերում, փռված էին հսկայական ամայի տարածություններ՝ Սարի-Օզեկներ, Դեղին տափաստանների միջնակները...

Այս կողմերում ուզածդ տարածությունը չափվում էր երկաթուղուց, ինչպես Գրինվիչի միջօրեականից...

Իսկ գնացքները գնում էին արևելքից արևմուտք և արևմուտքից արևելք...

*Շատ երկար ճանապարհ կտրելով կարմրավաղ ղառիթափի՝ Մալաքումդիչապի երկարությամբ, որտեղ ժամանակին թափառել է Նայման-Անան՝ որոնելով իր մանկուրտ-որդուն, նրանք հասան Անա-Բեյիթի մատույցներին։ Բորանլի Եդիգեյը անընդհատ նայում էր մեկ ժամացույցին, մեկ սարօզեկների վրա կախված արեգակին, հաշվում էր, որ առայժմ ամեն ինչ ընթանում է այնպես, ինչպես պետք է։ Թաղումից հետո նրանք ազատ կարող են ժամանակին վերադառնալ տուն, որպեսզի միասին ներկա լինեն Ղազանղապի հոգեհացին։ Իհարկե, դա արդեն կլինի երեկոյան, բայց գլխավորն այն է, որ օրը-օրին բռնի։ Հե՜յ գիտի կյանք։ Ղազանղապն արդեն հանգիստ կառնի Անա-Բեյիթում, իսկ իրենք վերադառնալով տուն, ևս մի անգամ բարի խոսքով կհիշեն նրան...*

*Միշտ միևնույն կարգով, առջևից Եդիգեյը՝ նստած ծոպավոր ութարով զարդարված Կարանարին, նրա ետևից՝ կցասայլով տրակտորը, կցասայլից հետո՝ «Բելառուս» էքսկավատորը Մալաքումդիչապից դուրս եկան Անա-Բեյիթի հարթավայրը, շեկլիկ շան՝ Ջոլբարսի ուղեկցությամբ, որ իր համար վազում էր կողքից, ինքնուրույն տեսքով, լեզուն անփույթ կախած։ Եվ այստեղ, Մալաքումդիչապից դուրս գալիս հանդիպեցին առաջին խոչընդոտին։ Հանկարծ դեմ առան արգելքի. փշալարե ցանկապատի։*

*Նախ կանգ առավ Եդիգեյը։ Ա՜յ քեզ բան։ Նույնիսկ կանգնեց ասպանդակներին և Կարանարի բարձունքից նայեց աջ, նայեց ձախ ինչքան աչքը կտրում էր, տափաստանով վեր ու վար էր գալարվում անանցանելի փշալարը, որ հավասար ընդմիջումներով, հինգ մետրը մեկ կամ մի քանի տակ փաթաթված էր գետնին*

խրված երկաթբետոնե քառանիստ սյուներին։ Ցանկապատը կանգնած էր ամուր, հիմնավորապես։ Հայտնի չէր որտեղից էր սկսվում և որտեղ էր վերջանում։ Միգուցե ոչ մի տեղ էլ չէր վերջանում։ Այլևս անցում չկար։ Ի՞նչ կարելի է անել։ Ինչպե՞ս շարունակել ճանապարհը։

Մինչ այդ, ետևում կանգ առան տրակտորները։ Խցիկից առաջին հերթին դուրս թռավ Սաբիթջանը, հետո՝ Երկար Էդիլբայը։

— Այս ի՞նչ է,— ցանկապատը մատնացույց արեց Սաբիթջանը։— Երևի ճիշտ չենք եկել, հա՞,— հարցրեց Եդիգեյին։

— Ինչո՞ւ ճիշտ չենք եկել։ Ճիշտ ենք եկել։ Բայց թե այս փշալարը որտեղի՞ց մեջ ընկավ։ Սատանան գիտի։

— Մի՞թե առաջ չի եղել։

— Չի եղել։

— Հապա ի՞նչ անենք։ Ի՞նչպես շարունակենք ճանապարհը։

Եդիգեյը լուռ էր։ Ինքն էլ չգիտեր ինչ անել։

— Հե՜յ, լսիր, կանգնեցրու տրակտորը։ Հերիք դղրդացնես,— բարկացած նետեց Սաբիթջանը խցիկից դուրս նայող Ղալիբեկին։

Սա խլացրեց շարժիչը։ Նրա ետևից սկսվեց էքսկավատորը։ Լռություն տիրեց։ Խոր լռություն։ Բորանլի Եդիգեյը խոժոռ նստած էր իր ուղտին, Սաբիթջանն ու Երկար Էդիլբայը կանգնած էին կողքին, տրակտորիստներ Ղալիբեկն ու Ջումագալին մնացել էին խցիկներում, հանգուցյալ Ղազանղապը սպիտակ պատանքով փաթաթված պառկած էր կցասայլում, կողքին նստած էր հարբեցող փեսան՝ Այզադայի ամուսինը, շեկլիկ շունը՝ Ջոլբարսը, օգտվելով առիթից, հարմարվեց տրակտորի անիվի մոտ, բարձր տնկելով ոտքը։ Երկնքի տակ ծայրեծայր փռված էր սարօզեկյան հսկա տափաստանը։ Բայց դեպի Անա-Բեյիթի գերեզմանոցը անցում չկար։ Եվ բոլորը տարակուսած կանգնել էին փշոտ պատի առջև։

Լռությունը խախտեց Երկար Էդիլբայը։

— Ի՞նչ, Եդիկե, փշալարը առաջ չի՞ եղել...

— Երբեք չի եղել։ Առաջին անգամ եմ տեսնում։

— Ուրեմն, հատուկ ցանկապատել են այս գոտին։ Երևի տիեզերակայանի համա՞ր,— ենթադրություն արեց Երկար Էդիլբայը։

— Այո, այդպես է դուրս գալիս։ Բե չէ, ինչո՞ւ պետք է այդ-

քան աշխատանք թափերին, ամայի տափաստանում այսպիսի ցանկապատ տնկերին։ Գրողը տանի դրանց,— հայհոյեց Եդիգեյը։

— Այստեղ հայհոյելու ի՞նչ կա։ Ավելի լավ կլիներ դուրս գալուց առաջ նախապես իմանայինք, հետո այսքան հեռու գայինք թաղում կատարելու,— խոժոռ՝ վրա տվեց Սաբիթժանը։

Ծանր լռություն՝ տիրեց։ Բորանլի Եդիգեյը վերից վար, Կարանառի բարձունքից ամբարիշտ նայեց կողքին՝ կանգնած Սաբիթժանին։

— Լսիր, սիրելիս, մի քիչ համբերիր, մի խառնվիր,— ասաց նա որքան հնարավոր էր հանգիստ։— Առաջ այստեղ փշալար չի եղել, որտեղի՞ց իմանայինք։

— Ես էլ հենց այդ եմ ասում,— փնչացրեց Սաբիթժանը և շուռ եկավ։

Նորից լռեցին։ Երկար Էդիլբայը ինչ-որ բան էր մտմտում։

— Ինչպես անենք հիմա, Եդիկե։ Ի՞նչ անենք։ Մի՞թե ուրիշ ճանապարհ չկա դեպի գերեզմանոց։

— Պետք է որ լինի։ Ինչո՞ւ չկա։ Մի հինգ կիլոմետր դեպի աջ ճանապարհ կա,— պատասխանեց Եդիգեյը, նայելով չորս կողմը։— Եկեք շարժվենք այն կողմը։ Չէ՞ որ չի՞ կարող ամեն կողմից փակ լինել, ո՛չ այնտեղ, ո՛չ այստեղ։

— Համոզվա՞ծ ես, որ այնտեղ ճանապարհ կա,— մարտահրավեր կեցվածք ընդունելով ճչաց Սաբիթժանը։— Թե չէ՝ իսկապես կստացվի ո՛չ այնտեղ, ո՛չ այստեղ։

— Կա՛, կա՛,— հավատացրեց Եդիգեյը։— Նստե՛ք, գնում ենք։ Զուր ժամանակ չկորցնենք։

Եվ նորից շարժվեցին։ Նորից եռևում դխկդխկացին տրակտորները։ Գնացին փշալարի երկարությամբ։

Մտահոգվել էր Եդիգեյը։ Շատ էր հուսահատվել դրանից։ Ինչպես կարելի է, հոգու խորքում վրդովվում էր նա, փակել, ցանկապատել ևն ամբողջ տարածությունը և գերեզմանոցի ճանապարհն էլ չեն նշել։ Ա՜յ քեզ գործ, ա՜յ քեզ կյանք։ Եվ համենայն դեպս հույս ուներ, թե պետք է որ ճանապարհ լիներ նաև այս, հարավային կողմում։ Այդպես էլ կար։ Ընկան ճիշտ ուղեփակոցի վրա։

Մոտենալով ուղեփակոցին Եդիգեյն ուշադրություն դարձրեց, թե որքան հաստատուն և հիմնավոր էր կառուցված անցագրային կետը. եղրային ամուր, բետոնե համաձուլվածքներ,

անցման մոտ, ճանապարհի եզրին կղմինդրե տնակ, լայն, միակտուր ապակիով՝ դիտման համար, վերևից, տափակ կտուրի վրա տեղադրված էին երկու լուսարձակ, հավանորեն գիշեր ժամանակ անցումը լուսավորելու համար։ Ուղեփակոցից հետո շարունակվում էր ասֆալտապատ ճանապարհ։ Եդիգեյը այդ սարք ու կարգը տեսնելով անհանգստացավ։

Նրանց երևալու հետ պահակակետից դուրս եկավ ջահել, դեռևս պատանի մի շեկլիկ զինվոր, ավտոմատը ուսին, փողը՝ ներքև։ Շտկելով զինվորական վերնաշապիկը և գլխարկը, զուտ տպավորություն գործելու համար, նա անմատչելի տեսքով կանգ առավ զոլավոր ուղեփակոցի առջև։ Համենայն դեպս նախ բարևեց, երբ Եդիգեյը ընդհուպ մոտեցավ ճանապարհը փակող գերանին։

— Բարև ձեզ,— ձեռքը գլխարկին տարավ ժամապահը, Եդիգեյին նայելով բաց երկնագույն, դեռևս մանկական աչքերով։— Ո՞վ եք, ո՞ւր եք գնում։

— Մենք այստեղացի ենք, զինվոր,— ասաց Եդիգեյը, ժպտալով ժամապահի մանկական խստության վրա։— Ահա մարդ ենք տանում, մեր ծերունուն տանում ենք թաղելու գերեզմանոցում։

— Առանց անցագրի չի կարելի,— բացասաբար գլուխը շարժեց ջահել զինվորը, ոչ առանց վախի հեռանալով որոճացող Կարանարի սրատամ երախից։— Այստեղ պաշտպանական գոտի է,— բացատրեց նա։

— Հասկանում եմ, բայց մենք գերեզմանոց ենք գնում։ Այստեղից հեռու չի։ Ի՞նչ կա որ։ Կթաղենք, կգնանք։ Չենք ուշանա։

— Չեմ կարող։ Իրավունք չունեմ,— պատասխանեց ժամապահը։

— Լսիր, սիրելիս,— Եդիգեյը թամբից կռացավ, որ լավ երևան իր մարտական շքանշաններն ու մեդալները,— մենք կողմնակի մարդիկ չենք։ Բորանլի կիսակայարանից ենք։ Երևի լսած կլինես։ Մեծի մարդ ենք։ Թաղել է հարկավոր։ Միայն գերեզմանոց և ետ։

— Ես հասկանում եմ,— ասաց ժամապահը, պարզամտորեն վեր բարձրացնելով ուսերը, բայց այդ պահին անտեղի մոտեցավ Սաբիթժանը՝ կարևոր, գործնական մարդու կեղծ շտապողականությամբ։

— Ի՞նչ է պատահել։ Ես մարզարհիորհրդից եմ,— հայտարարեց նա։— Ինչո՞ւ ներս չեք թողնում։

— Որովհետև չի թույլատրվում։

— Ընկեր ժամապահ, ես ձեզ ասում եմ, որ մարզարհիորհրդից եմ։

— Ինձ համար միևնույն է, թե դուք որտեղից եք։

— Ինչպե՞ս թե,— զարմացավ Սաբիթջանը։

— Այդպես։ Սա պաշտպանական գոտի է։

— Այդ դեպքում էլ ինչո՞ւ եք երկար-բարակ խոսում,— վրդովվեց Սաբիթջանը։

— Ո՞վ է խոսում։ Ես բացատրում եմ այն հարգելի մարդուն, որ ուղտի վրա է, ոչ թե ձեզ։ Որպեսզի նրա համար հասկանալի լինի։ Իսկ ընդհանրապես, ես իրավունք չունեմ խոսքի բռնվելու կողմնակի մարդկանց հետ։ Ես պոստի վրա եմ։

— Ուրեմն ճամփա չկա՞ դեպի գերեզմանոց։

— Ոչ։ Ոչ միայն գերեզմանոց։ Այստեղ ոչ ոքի համար անցում չկա։

— Տեսա՞ր,— չարացավ Սաբիթջանը։— Ես այդպես էլ գիտեի,— նետեց Եդիգեյին։— Այդպես էլ գիտեի, որ բան դուրս չի գալու։ Իսկ դուք Անա-Բեյիթ հա Անա-Բեյիթ։ Ահա քեզ Անա-Բեյիթ։— Եվ այդ խոսքերով նա խռոված հեռացավ, չարացած ու ջղային թքելով։

Եդիգեյն անհարմար զգաց ջահել զինվորից։

— Դու ներող եղիր, տղաս,— ասաց նա հայրաբար։— Պարզ բան է, դու ծառայության մեջ ես։ Բայց հիմա հանգուցյալին ո՞ւր տանենք։ Սա հո գերան չի, որ գցես ու գնաս։

— Ես հասկանում եմ։ Բայց ի՞նչ կարող եմ անել։ Ինձ ինչպես ասել են, այնպես էլ պարտավոր եմ անել։ Ես հո պետ չե՞մ այստեղ։

— Այո ո՛, այ քեզ գործ,— շփոթված ձգեց Եդիգեյը։— Իսկ դու բնիկ որտեղացի՞ ես։

— Վոլոգդայից, հայրիկ,— օ-երը շեշտելով ասաց ժամապահը շփոթված և մանուկի նման ուրախ ժպտալով, չթաքցնելով, որ իրեն հաճելի է պատասխանել այդ հարցին։

— Մի՞թե ձեր Վոլոգդայում էլ է այսպես. գերեզմանոցներում ժամապահներ են կանգնում։

— Չէ, հայրիկ, ինչի՞ համար։ Մեզ մոտ երբ ուզեն և որքան ուզեն կարող են գնալ գերեզմանոց։ Բանն այդ չի։ Այստեղ

պարզապես փակ գոտի է։ Այսինքն, հայրիկ, ինքդ էլ ես ծառայել և կռվել, տեսնում եմ, լավ կիմանաս, որ ծառայությունը ծառայություն է։ Ուզես-չուզես պարտքը պարտք է։ Ելք չկա։

— Ճիշտ է, իհարկե,— համաձայնեց Եղիգեյը,— բայց հիմա ո՞ւր տանենք հանգուցյալին։

Նրանք լռեցին։ Եվ խոր մտածելուց հետո շիկահոն, պայծառաչ զինվորիկը գլուխը շարժեց.

— Ո՛չ, հայրիկ։— Չեմ կարող։ Իրավունք չունեմ։

— Ինչ արած,— խոսեց շփոթված Եղիգեյը։

Անհարմար էր զգում շուռ գալ նայել իր ընկերների երեսին, Սաբիթջանը ավելի ու ավելի էր տաքանում։ Նա մոտեցավ Երկար Էդիլբային։ Էքսկավատորի մոտ լսվում էին նրա կատաղի հարձակումները։

— Բա ես չէի՞ ասում։ Ի՞նչ կարիք կար քարշ գալ այսքան հեռու։ Դա նախապաշարմունք է։ Համ ձեր գլուխն եք ցավեցնում, համ ուրիշներին։ Ինչ տարբերություն, թե մեռելին ուր են գցում։ Բայց ո՛չ, թեկուզ ճաքես, պիտի անպայման հասցնես Անա-Բեյիթ։ Դու էլ պակաս չես. գնա՛, մենք առանց քեզ էլ կթաղենք։ Դեհ թաղեք տեսնեմ։

Երկար Էդիլբայը լուռ հեռացավ նրանից։

— Լսիր, բարեկամ,— մոտենալով ուղեփակոցին, դիմեց ժամապահ զինվորին։— Ես էլ եմ ծառայել և ես էլ որոշ բան հասկանում եմ։ Հեռախոս ունե՞ս։

— Իհարկե, ունեմ։

— Այդ դեպքում ղանգահարիր պահակության պետին։ Զեկուցիր, որ տեղացի բնակիչները խնդրում են իրենց թույլ տալ մտնելու Անա-Բեյիթի գերեզմանոցը։

— Ինչպե՞ս, ինչպե՞ս։ Անա-Բեյի՞թ,— հարցը կրկնեց ժամապահը։

— Այո։ Անա-Բեյիթ։ Դա մեր գերեզմանոցի անունն է։ Զանգ տուր, բարեկամ, ուրիշ ելք չկա։ Թող անձամբ թույլտվություն ստանա մեզ համար։ Իսկ մեզ, վստահ եղիր, գերեզմանոցից բացի, ուրիշ ոչինչ չի հետաքրքրում։

Ժամապահը մտածեց, մի ոտքից մյուսին անցավ, խոժոռեց ճակատը։

— Չէ, դու մի կասկածիր,— ասաց Երկար Էդիլբայը։— Ոչինչ կանոնադրության հակառակ չի։ Դու զեկուցում ես պահակության պետին, թե այսպես ու այսպես. պոստ են եկել կողմնակի

մարդիկ։ Ահա ամբողջ ներքին կառուցվածքը։ Ի՞նչ ես տատանվում։ Դու պարտավոր ես զեկուցել։

— Լավ,— գլխով արեց ժամապահը։— Հիմա կզանգահարեմ։ Բայց դե պահակության պետը շարունակ ման է գալիս տարածքի դիրքերում։ Իսկ տարածքը, տես, որքան է։

— Գուցե թույլ տաս ես էլ գամ հետդ,— խնդրեց Երկար էդիլբայը։— Եթե կարիք լինի, հուշեմ, թե ինչն ինչոց է։

— Եկ,— համաձայնեց ժամապահը։

Եվ նրանք չքացան պահակակետում։ Դուռը բաց էր, և Եդիգեյը ամեն ինչ լսում էր։ Ժամապահը զանգահարում էր ինչ-որ տեղ և շարունակ հարցնում էր պահակության պետին։ Իսկ նա չկար ու չկար։

— Ախ, ո՛չ, ինձ պահակության պետն է հարկավոր,— բացատրում էր նա։— Անձամբ նա։ Ոչ, ոչ։ Այստեղ կարևոր գործ կա։

Եդիգեյը սրտնեղում էր։ Ո՞ւր է կորել այդ պահակության պետը։ Երբ մարդու բախտը չի բերում, չի բերում։

Վերջապես նա գտնվեց։

— Ընկեր լեյտենանտ։ Ընկեր լեյտենանտ,— բարձր խոսեց ժամապահը զրնգուն և հուզված ձայնով։

Եվ զեկուցեց նրան, որ ահա, տեղացի բնակիչները եկել են մարդ թաղելու հին գերեզմանոցում։ Ի՞նչ անել։ Եդիգեյը ականջները սրեց. Լեյտենանտը կասի բաց թող և վերջ։ Ապրես, Երկար էդիլբայ։ Համենայն դեպս հնարամիտ երիտասարդ է։ Բայց ժամապահի խոսակցությունը երկարեց։ Այժմ նա շարունակ պատասխանում էր հարցերի.

— Այո... Քանի՞։ Վեց հոգի են։ Հանգուցյալն էլ հետը՝ յոթ։ Ինչ-որ ծերունի է մեռել։ Նրանց մեծը ուղտի վրա է։ Հետո կցասայլով տրակտորն է։ Տրակտորի հետևից՝ մի էքսկավատոր... Այո, հարկավոր է, ասում են գերեզմանը փորելու համար... ինչպե՞ս։ Ես ի՞նչ պատասխանեմ։ Ուրեմն չի՞ կարելի։ Չի՞ թույլատրվում։ Կա՛։ Լսում եմ։

Եվ այստեղ լռվեց Երկար էդիլբայի ձայնը։ Երևի ժամապահի ձեռքից խլեց լսափողը։

— Ընկեր լեյտենանտ, մտեք մեր դրության մեջ, ընկեր լեյտենանտ, մենք եկել ենք Բորանլի կիսակայարանից։ Հիմա ո՞ւր գնանք։ Մտեք մեր դրության մեջ։ Մենք տեղի բնակիչներ ենք։ Ոչ մի վատ բան չենք անի։ Մարդուն կթաղենք, իսկույն կվե-

բաղանանք... Հը՞։ Ի՞նչ։ Ինչպե՞ս թե։ Շատ լավ, եկեք, եկեք ձեր աչքով տեսեք։ Այստեղ մեզ հետ է մեր մեծը, ռազմաճակատային է եղել, կռվել է։ Բացատրեք նրան։

Երկար էդիլբայը պահակատնակից դուրս եկավ շփոթված, բայց ասաց, որ լեյտենանտը կգա և ամեն ինչ կորոշի տեղում։ Նրանից հետո մոտեցավ ժամապահը և կրկնեց նույնը։ Ժամապահը այժմ թեթևություն էր զգում, քանի որ պահակության պետը ինքը պիտի որոշի հարցը։ Նա այժմ հանգիստ ետ ու առաջ էր անում զոլավոր գերանի մոտ։

Բորանլի Եդիգեյը մտքի մեջ ընկավ։ Ո՞վ կմտածեր գործերի այսպիսի ընթացքի մասին։ Պետք էր սպասել լեյտենանտի գալուն։ Այդ ընթացքում Եդիգեյն իջավ ուղտից, ուղտին տարավ կապեց էքսկավատորից, շերեփի մոտ։ Հետո ետ եկավ ուղեփակոցի կողմը։ Տրակտորիստներ Ղալիբեկն ու Ջումագալին զրուցում էին։ Ծխում էին։ Սաբիթժանը բոլորից մեկուսացած, ջղային ետ ու առաջ էր անում։ Իսկ Ղազանղապի փեսան՝ Այզադայի ամուսինը, նույն դիրքով նստած էր կցասայլում, հանգուցյալի մոտ.

— Հը, Եդիգեյ, ի՞նչ են ասում, ներս թողնելո՞ւ են մեզ,— հարցրեց նա։

— Պիտի որ թողնեն։ Հիմա կգա ինքը պետը՝ լեյտենանտը։ Ինչո՞ւ չեն ուզում թողնել։ Լրտե՞ս ենք, ինչ ենք։ Դու ինչո՞ւ չես իջնում կցասայլից։ Իջիր, մի քիչ ման արի։

Արդեն ժամը երեքն էր։ Իսկ նրանք դեռ Անա-Բեյիթ չէին հասել, չնայած ճանապարհ շատ չէր մնում։

Եդիգեյը վերադարձավ ժամապահի մոտ։

— Տղաս, շա՞տ ենք սպասելու քո պետին,— հարցրեց նա։

— Ոչ։ Հիմա կհասնի։ Մեքենայով է։ Այստեղից մի տասըտասնհինգ րոպեի ճանապարհ է։

— Դե լավ, կսպասենք։ Իսկ վաղո՞ւց են այս փշալարը դրել։

— Բավական ժամանակ է։ Մենք ենք դրել։ Ես այստեղ ծառայում եմ արդեն մի տարի։ Ուրեմն կես տարի է, ինչ փշալարը քաշել ենք։

— Այդ է որ կա։ Ախր ես չգիտեի այս ցանկապատի մասին։ Այդ պատճառով էլ այսպես ստացվեց։ Հիմա ես եմ մեղավոր դուրս գալիս, որովհետև ես եմ առաջարկել թաղումը կատարելու այստեղ։ Անա-Բեյիթը հին գերեզմանոց է։ Իսկ հանգուցյալ

*Ղազանղապը շատ լավ մարդ էր։ Երեսուն տարի միասին ենք աշխատել կիսակայարանում։ Ուզում էի լավ լինել։*

*Զինվորն ըստ երևույթին կարեկցանքով լցվեց Բուրանլի Եդիգեյի նկատմամբ։*

*— Լսիր, հայրիկ,— ասաց նա գործնականի։— Այ, հիմա կգա պահակության պետ լեյտենանտ Թանսիկբաևը, դուք նրան ամեն ինչ բացատրեք։ Նա էլ է մարդ։ Թող զեկուցի վերև։ Միգուցե այնտեղից թույլ տան։*

*— Շնորհակալ եմ բարի խոսքի համար։ Թե չէ ի՞նչ։ Դու ինչպես ասացիր. Թանսիկբա՞և։ Լեյտենանտի ազգանունը Թանսիկբա՞և է։*

*— Այո, Թանսիկբաև։ Նա նոր է մեզ մոտ։ Ինչ է, ծանո՞թ է։ Նա ձերոնցից է։ Մեկ էլ տեսար բարեկամ դուրս եկավ։*

*— Չէ, չէ՛ մի,— քմծիծաղեց Եդիգեյը։— Թանսիկբաևները մեզ մոտ նույնն են, ինչ ձեր Իվանովները։ Պարզապես հիշեցի այդպիսի ազգանունով մի մարդու։*

*Այստեղ զնգաց հեռախոսը։ ժամապահը վազեց պահակատնակ։ Եդիգեյը մնաց մենակ։ Նորից հոնքերը ծառս եղան։ Եվ խոժոռ նայելով չորսբոլորը, սպասելով, չի՞ երևում արդյոք ավտոմեքենան արգելափակոցի ետևում, Բորանլի Եդիգեյը օրորեց գլուխը. «Իսկ եթե սա այն ճախրուկաչքի որդին լինի,— մտածեց նա և ինքն իրեն հայհոյեց մտովի։ Է՞լ ինչ կուզես, ինչ ասես որ գլուխդ չի գալիս։ Ինչքան ասես այդ ազգանունից կա։ Այն Թանսիկբաևին հետո լիուլի քվիթ արեցի... Համենայն դեպս աշխարհի երեսին կա՛ արդարություն, կա՛... Եվ ինչ էլ լինի, միշտ կլինի արդարություն...»։*

*Նա մի կողմ գնաց, գրպանից թաշկինակ հանեց և խնամքով սրբեց կրծքի շքանշաններն ու մեդալները և հարվածայինի նշանները, որպեսզի փայլփլեն և անմիջապես Թանսիկբաևի աչքով ընկնեն։*

## XII

*Իսկ այն ճախրուկաչք Թանսիկբաևի հետ բանն այսպես եղավ։*

*1956 թվականի գարնան վերջին Կումբելի դեպոյում մեծ միտինգ եղավ, բոլորին կանչել էին։ Բոլոր կայարաններից ու կիսակայարաններից հավաքվել էին երկաթուղայինները։ Տեղում մնացել էին միայն նրանք, ովքեր այդ օրը գծի վրա էին։*

Շատ ժողով է տեսել Բորանլի Եդիգեյն իր կյանքում, բայց այս միտինգը երբեք մտքից դուրս չեկավ։

Հավաքվել էին շոգեքարշանորոգման արտադրամասում։ Ժողովուրդը լիքը լցվել էր, ոմանք նույնիսկ բարձրացել էին մինչև տանիքի տակ, նստել էին բարձակների վրա։ Բայց ամենագլխավորը, ի՞նչ ճառեր եղան։ Բերիայի մասին ամեն ինչ մինչև վերջ բացահայտվեց։ Նշավակեցին նզովյալ դահիճին, չխնայեցին։ Թունդ ելույթներ եղան, մինչև երեկո, դեպոյի բանվորները իրենք էին ամբիոն բարձրանում, և ոչ ոք ներս ու դուրս չարեց, կարծես բոլորը գամված լինեին տեղերում։ Եվ միայն ձայների աղմուկ, կարծես անտառ էր խշշում արտադրամասի կամարների տակ։

Հիշում է, որ մեկը կողքին, բազմության միջից, մաքուր ռուսական արտահայտությամբ ասաց. «Ինչպես ծովն է լինում փոթորկից առաջ»։ Այդպես էլ կար։ Սիրտը ծակեց կրծքավանդակում, ռազմաճակատում, գրոհից առաջ այդպես էր ծակում, և շատ ծարավ էր։ Բերանը չորացել էր։ Բայց այսքան մարդու մեջ որտեղի՞ց ջուր գտնես։ Ջրի ժամանակը չէր, համբերել էր պետք։ Ընդմիջման ժամանակ Եդիգեյը խցկվեց դեպոյի կուսկազմակերպության քարտուղար Չեռնովի՝ կայարանի նախկին պետի մոտ։

Նա նախագահությունում էր։

— Լսիր, Անդրեյ Պետրովիչ, գուցե ե՞ս էլ ելույթ ունենամ։

— Խնդրեմ, եթե ցանկություն ունես։

— Ցանկություն ունեմ, նույնիսկ չափից ավելի։ Բայց նախ կուզենայի խորհրդակցել։ Հիշո՞ւմ ես, մեր կիսակայարանում աշխատում էր Ղութիբաևը։ Աբութալիպ Ղութիբաևը։ Վերաքննիչը մատնություն էր արել, թե իբր նա հարավսլավական հուշեր է գրում։ Աբութալիպը այնտեղ կովել է պարտիզանների հետ։ Եվ էլի այլևայլ բաներ էր վերագրել այդ ռևիզորը։ Իսկ բերիականները եկան, մարդուն առան ու տարան։ Այդ պատճառով մեռավ, կորավ-գնաց մարդը, առանց պատճառի։ Հիշո՞ւմ ես։

— Այո, հիշում եմ։ Կինը եկավ թուղթը վերցրեց։

— Այո, այո։ Հետո ընտանիքը հեռացավ։ Այ, ես նոր լսում էի ու մտածում։ Հարավսլավիայի հետ մենք բարեկամ ենք, ոչ մի տարաձայնություն չունենք։ Իսկ ինչո՞ւ տուժեն անմեղ մարդիկ։ Աբութալիպի երեխաները մեծացել են, արդեն դպրոց պիտի գնան։ Հարկավոր է ամեն ինչ ջրի երես հանել։ Թե չէ տեղից

վեր կենողը պիտի նրանց երեսովը տա։ Երեխաները առանց դրա էլ տուժել են, անհայր են մնացել։

— Սպասի՛ր, Եդիգեյ։ Ուրեմն ուզում ես այդ մասին ելույթ ունենալ։

— Այո։

— Իսկ ի՞նչ էր այդ վերաքննիչի ազգանունը։

— Կարելի է իմանալ։ Ճիշտ է, ես այլևս նրան չեմ տեսել։

— Իսկ ումի՞ց կիմանաս։ Բացի *այդ, փաստական ապացույց ունե՞ս, որ հենց նա է գրել։

— Հապա էլ ո՞վ։

— Այստեղ փաստական ապացույց է հարկավոր, սիրելիդ իմ Բորանլի։ Իսկ եթե հանկարծ ուրիշ կե՞րպ եղած լինի։ Կատակ չի։ Լսիր, Եդիգեյ, ավելի լավ է քեզ մի խորհուրդ տամ։ Այդ մասին նամակ գրիր Ալմա-Աթա։ Գրիր ինչպես որ եղել է այդ ամբողջ պատմությունը և ուղարկիր հանրապետության կուսակցության Կենտրոնական Կոմիտեին։ Այնտեղ կքննեն։ Ուշացում չի լինի։ Կուսակցությունը լուրջ զբաղվում է այդ գործով։ Ինքդ կտեսնես։

Բոլորի հետ այդ միտինգում Բորանլի Եդիգեյը որոտաձայն և վճռական գոռում էր. «Փա՜ռք կուսակցությանը։ Հավանությո՜ւն ենք տալիս կուսակցության գծին»։ Այնուհետև, միտինգի ավարտին, մեկը խորքերից «Ինտերնացիոնալ» երգեց։ Նրան ձայնակցեցին մի քանիսը, և մի վայրկյանից, ամբողջ բազմությունը դեպոյի կամարների տակ թնդացրեց բոլոր ժամանակների մեծագույն հիմնը, բոլորի հիմնը, ովքեր եղել են հավերժ ճնշված։ Երբեք Եդիգեյն առիթ չէր ունեցել երգելու այսքան մեծ բազմության հետ. թվաց ալիքները բարձրացրին-տարան իր միասնության հանդիսավոր, հպարտ, միաժամանակ նաև դառը գիտակցությունը, նրանց հետ, ովքեր երկրի աղն են ու քրտինքը։ Իսկ կոմունիստների հիմնը անընդհատ ծավալվում էր, բարձրանում վեր, սիրտը լցնելով խիզախությամբ ու վճռականությամբ՝ պաշտպանելու, հաստատելու շատերի իրավունքը հանուն շատերի երջանկության։ Եվ, ինչպես հաճախ էր լինում ուժեղ հուզմունքների դեպքում, Եդիգեյին նորից թվում էր, թե ինքը Արալյան ծովում է։ Եվ աղատ ճայի նման ճախրում է նրա հոգին ճերմակակատար ալաբաշերի՝ ալիքների վրա։

Այս ցնծագին զգացումով նա վերադարձավ տուն։ Թեյի ժամանակ, Ուկուբալային մանրամասն և ոգևորված պատմեց

միտինգի մասին։ Պատմեց նաև, թե ցանկացել է ելույթ ունենալ, և թե ինչ է պատասխանել այժմյան կուսկազմակերպության քարտուղար Չեռնովը։ Ուկուբալան լսում էր ամուսնուն, ինքնաեռից թաս-թասի ետևից թեյ էր լցնում, իսկ նա հա խմում էր ու խմում։

— Լսիր, քեզ ի՞նչ է եղել, ամբողջ ինքնաեռը խմեցիր,— զարմացավ կինը ծիծաղելով։

— Հասկանում ես, դեռևս միտինգի ժամանակ ծարավից մեռնում էի։ Շատ եմ հուզվել։ Ժողովուրդն էլ՝ շատ, ասեղ գցելու տեղ չկար։ Հետո վեր կացա, ուզեցի ջուր խմեմ, բայց տեսա, որ մեր կողմը գնացք է շարժվում, ինձ գցեցի մեքենավարի մոտ։ Մեր տղաներից էր, Թոգրեկթամացի Ջանդոսը։ Ճանապարհին, իհարկե, ջուր խմեցի նրա մոտ։ Բայց դա ինչ էր որ։

— Ախր, տեսնում եմ,— ասաց Ուկուբալան, նորից թեյ լցնելով նրան։ Քիչ հետո ավելացրեց։— Լսիր, Եդիգեյ, Աբութալիպի երեխաների համար լավ ես մտածել, մանավանդ, եթե ժամանակներն այնպես են, որ խեղճ որբուկներին չեն նեղելու, պետք է շտապել։ Նամակը, իհարկե, վատ չի, բայց մինչև գրվի, մինչև տեղ հասնի, մինչև կարդան, մինչև մտածեն, ավելի լավ է քո ոտքով գնաս Ալմա-Աթա։ Եվ այնտեղ պատմես, թե բանն ինչպես է եղել։

— Ասում ես գնամ Ալմա-Աթա՞։ Ուղիղ մեծ ղեկավարության մոտ։

— Ի՞նչ կա որ։ Գործով ես գնում։ Քո ընկեր Ելիզարովի հոգին բերանը եկավ քեզ կանչելով։ Ամեն անգամ նորից հասցեն թողնում է։ Ես չեմ կարող, դու գնա։ Ես երեխաներին ո՞ւմ վրա թողնեմ-գնամ։ Էլ մի հետաձգի։ Արձակուրդ վերցրու։ Ինչքան արձակուրդ կունենայիր այսքան ժամանակ, հարյուր տարվա։ Գոնե մի անգամ օգտվիր արձակուրդից և այնտեղ, տեղում ամեն ինչ պատմիր ջոջերին։

Եդիգեյը զարմացել էր կնոջ ուշիմության վրա։

— Իսկապես որ, կնիկ, լավ բան ես ասում։ Արի մտածենք։

— Երկար-բարակ մի՛ մտածիր։ Ժամանակ չկա։ Ինչքան շուտ գնաս, այնքան լավ։ Աֆանասի Իվանովիչը քեզ կօգնի։ Ուր գնաս, ում մոտ գնաս, նա ավելի լավ գիտի։

— Լավ ես ասում։

— Դե տեսնո՞ւմ ես։ Չարժի հետաձգել։ Համ էլ մի քիչ ման

կգաս, տան համար բան-ման կառնես։ Աղջիկները մեծացել են։ Սաուլեն աշնանը դպրոց պիտի գնա։ Իսկի մտածե՞լ ես։ Գիշեր-օթիկ ենք տալու, ինչ ենք անելու, մտածե՞լ ես։

— Մտածել եմ, մտածել եմ, հապա ինչպե՞ս,— վրա բերեց Բորանլի Եդիգեյը, աշխատելով թաքցնել զարմանքը, որ մեծ աղջիկն այնքան է մեծացել, որ դպրոց գնալու ժամանակն է։

— Ուրեմն, եթե մտածել ես,— շարունակեց Ուկուբալան,— գնա, մարդկանց իմաց արա, թե այստեղ նստած ինչ ապրում-ներ ենք ունեցել այն տարիներին։ Թող օգնեն որբուկներին, գո-նե արդարանան հոր կողմից։ Հետո եթե ժամանակ լինի, նայիր ինչ կա, ինչ չկա աղջիկների համար, նաև ինձ համար՝ չեր խան-գարի։ Ես էլ, ախր, արդեն ջահել չեմ,— ասաց նա, չգիտես ին-չու, զսպված հառաչանքով։

Եդիգեյը նայեց կնոջը։ Տարօրինակ է, որ կարելի է մշտա-պես տեսնել և չնկատել այն, ինչ հետո միանգամից ես տես-նում։ Ճիշտ է, նա արդեն երիտասարդ չէր, բայց ծերությունից հեռու էր։ Այնուամենայնիվ մի նոր, անծանոթ բան նկատեց կնոջ մեջ։ Եվ հասկացավ, իմաստություն հայտնաբերեց նրա հայացքի մեջ և նրա առաջին ճերմակը նկատեց. երեք-չորս ճերմակ թելեր քունքերին, ոչ ավելի, և դրանք համենայն դեպս խոսում էին ապրածի ու գլխին եկածի մասին...

Մեկ օրից Եդիգեյն արդեն Կումբել կայարանում էր, իբրև ուղևոր։ Ստիպված եղավ ետ գնալ Բորանլիից, որպեսզի նստի Ալմա-Աթայի գնացքը։ Եդիգեյը չզղջաց դրա համար։ Այսպես թե այնպես, նախ հարկավոր էր Ելիզարովին հեռագիր տալ, իր գալու մասին։ Իսկ դա հնարավոր էր անել միայն կայարանում։

Այնուհետև ժամանեց Մոսկվա—Ալմա-Աթա գնացքը, որով մեկնեց Եդիգեյը, անցնելով իր Բորանլի կիսակայարանով։ Նրա տեղը կուպեավոր վագոնում էր, վերևի մահճակին։ Իրերը տեղավորելուց հետո Եդիգեյն անմիջապես միջանցք ելավ, կանգնեց լուսամուտի մոտ, որպեսզի բաց չթողնի, իր կիսակա-յարանին նայի ուղևորի աչքով, իսկ հետո արդեն կարելի էր բարձրանալ տեղը և քնել, քանի որ գիմացը երկու օրվա ճանա-պարհ կար։ Այսպես էր մտածում, բայց երկրորդ օրն արդեն գժվում էր ակամա անգործությունից։ Զարմանում էր, նայելով վագոնի մյուս անցորդներին, որոնք միայն ուտում էին ու քնում։

Սակայն առաջին օրը, մանավանդ առաջին ժամերին, նրա հոգում խնդություն էր, նույնիսկ տագնապ, ընտանիքից երկար

ժամանակով բացակայելու անսովորությունից։ Կանգնել էր լուսամուտի մոտ, հուզված, ձգված, գլխին նոր լայնեզր գլխարկ, որ այս առիթով գնել էին կայարանի խանութից, հագել էր մաքուր վերնաշապիկ և կիսակոճկած կիտել, որ պատերազմի տարիներից լավ պահպանվել էր Ղազանղապի տանը։ Ղազանղապը հագցրեց կիտելը, այսպես ավելի լավ կլինի, ասաց, շքանշաններն ու մեդալները կրծքին, գալիֆեով և բարձրորակ կաշվից սպայական սապոգներով, այդ սապոգները Եդիգեյին շատ էին դուր գալիս, չնայած հազվադեպ էր առիթ լինում հագնելու։ Եդիգեյի կարծիքով տպավորություն թողնելու համար մարդ պետք է առաջին հերթին ունենա լավ սապոգներ և նոր գլխարկ։ Ինքը երկուսն էլ ուներ։

Այդպես կանգնել էր լուսամուտի մոտ։ Վագոնի ուղևորները հարգանքով շրջանցում էին նրան, ապա ետ էին դառնում-նայում։ Բորանլի Եդիգեյը աչքի էր ընկնում իր տեսքով, հավանաբար, դեմքի արժանավոր և հուզախռով արտահայտությամբ։

Իսկ գնացքը գնում էր, ամբողջ թափով սլանում լայնարձակ, գարնանային սարօզեկներով, ասես շտապելով հասնել փախչող հորիզոնի թափանցիկ եզրագծին։ Աշխարհում գոյություն ունեին լոկ երկու տարերք. երկինքը և բաց տափաստանը։ Նրանք լուսագծով իրար էին միանում հեռվում։ Այնտեղ էլ սուրում էր գնացքը։

Ահա, ընդառաջ են վազում բորանլիական վայրերը։ Գետնի ամեն մի ծալք, ամեն մի քար ծանոթ է իրեն։ Բորանլիին մոտենալիս, Եդիգեյը աշխույժ իրար եկավ լուսամուտի առջև, բեղի տակ ծիծաղեց, կարծես տարիներ շարունակ այստեղ չի եղել։ Ահա և կիսակայարանը։ Փայլկտացին-անցան սեմաֆորը, տնակները, կից շինությունները, ռելսերի դարսակները և պահեստի մոտի փայտակոճերը, և այս ամենը հառնեց վայրքաթափով, երկաթուղուն միացած, շրջակա վիթխարի ամայի տարածության մեջ։ Եդիգեյը կարողացավ նկատել նույնիսկ իր աշխատակիցներին։ Նրանք հավանորեն այսօր դիմավորել են արևմուտքից արևելք գնացող բոլոր մարդատար գնացքները։ Ձեռքերը թափահարելով և թռչկոտելով, որպեսզի ուշադրություն գրավեն, Սաուլեն և Շարապատը ուրախ ժպտում էին սուրացող գնացքի լուսամուտներին։ Նրանց հյուսիկները ծիծաղելիորեն շարժվում էին, աչքերը պսպղում էին։ Եդիգեյը բնազդաբար կպավ լուսամուտից, ձեռքը թափահարեց, քնքուշ խոսքեր մրմնջաց, բայց

նրանք կամ չտեսան կամ չճանաչեցին հորը։ Այսուամենայնիվ, ուրախալի էր, որ աղջիկները սպասում էին իր գնացքին։ Եվ ուղևորներից ոչ ոք գլխի չընկավ, որ ետևում մնացին իր երեխաները, իր տունը, իր կայարանը։ Եվ, մանավանդ, ոչ ոք ենթադրել անգամ չէր կարող, որ կիսակայարանի ետևում ընկած տափաստանում, ուղտերի երամակի մեջ արածում է իր նշանավոր Կարանարը։ Եդիգեյն անմիջապես հեռվից ճանաչեց նրան, աչքերը ջերմացան։

Այնուհետև, երբ տնից մի քանի կայարանաչափ հեռացան, Եդիգեյը քնեց։ Քնեց երկար և քաղցր՝ անիվների համաչափ թխթկոցի և վագոնի հարևանների միալար զրույցի տակ։

Հաջորդ օրը, ճաշից հետո վրա եկան Ալաթաուի լեռները՝ սկսած Ջիմքենտից, ամբողջ Յոթգետիկով մեկ։ Այ, սրանք լեռնե՞ր էին, այ սա պատկե՞ր էր։ Եվ շլացած նայում, նայում ու չէր կշտանում Բորանլի Եդիգեյը, երկաթգծին մինչև Ալմա-Աթա ուղեկցող վեհապանծ, ձյունոտ գագաթներից։ Նրա համար, սարօզեկյան տափաստանաբնակի համար, դա հրաշք էր, հավերժության հայում։ Ալաթաուի լեռների վսեմությունը ոչ միայն հիացմունք էր առաջացնում նրա մեջ, այլև խորհելու պահանջ։ Նա սիրում էր լուռ խորհրդածել, երբ դիմացը լեռներ էին։ Եվ մտովի պատրաստվում էր հանդիպելու այն, առայժմ իրեն անծանոթ պատասխանատու անձանց, որոնք հայտարարել էին, թե անցյալի սխալներն այլևս երբեք չեն կրկնվելու, և այդ պատճառով ուզում էր նրանց տեղյակ պահել Աբութալիպի ընտանիքի դառը պատմությունը։ Թող քննեն, որոշեն, թե ինչպես ուղղեն այդ գործը։ Աբութալիպին այլևս ետ չես բերի, բայց գոնե երեխաներին թող ոչ ոք չհամարձակվի նեղացնել, գոնե ամեն տեղ բաց լինի նրանց ճանապարհը։ Այս աշնանը մեծը՝ Դաուլը, պիտի դպրոց գնա, թող գնա ոչ մի բանից չվախենալով և չթաքնըվելով։ Տեսնես որտե՞ղ են հիմա։ Ինչպե՞ս են։ Ինչպե՞ս է Զարիպան։

Հոգին սարսռում էր, երբ հիշում էր այդ մասին։ Ժամանակն էր մի քիչ մոռանալու անցյալը, հանգստանալու։ Ախր Զարիպան հենց դրա համար էլ հեռացավ, հեռացավ, որ միանգամից ինքը կտրվի նրանից, բայց միայն աստծուն է հայտնի, թե ինչն է մոռացվել, ինչը՝ ոչ։ Թախծում էր Բորանլի Եդիգեյը, խաղաղեցնում իրեն, համակերպվում ճակատագրին։ Ո՞ւմ պատմես այս ամենը։ Ո՞վ կհասկանա։ Թերևս, միայն երկնքին հենված ձյու-

նոտ լեռնե՞րը, բայց իրենց բարձունքում նրանք ի՞նչ գործ ունեն մարդկանց երկրային ձախորդությունների հետ։ Դրանով էլ վեհ են Ալաթաուի լեռները։ Շատ մահկանացուներ կգան ու կգնան, նրանք հավետ կմնան, որպեսզի մարդիկ նրանց նայելով սուզվեն խոհերի մեջ, իսկ նրանք լռեն անհաղորդ...

Եդիգեյը հիշեց, որ Աբութալիպը «Ռայմալի-աղայի ուղերձը իր եղբայր Աբդիլխանին» գրի առնելուց հետո, հավանորեն ասքի մասին երկար մտածելով, մի խոսակցության ժամանակ ասաց, թե Ռայմալի-աղայի և Բեդիմայի նման մարդիկ կյանքի ճանապարհին հանդիպելով իրար, որքան երջանկություն, նույնքան էլ վիշտ են բերում միմյանց՝ մեկը մյուսին ներքաշելով ուրիշների դատից մարդու անազատության անլուծելի ողբերգության մեջ։ Դրա համար էլ Ռայմալի-աղայի հետ այդպես վարվեցին հարազատները, հանուն նրա իսկ բարօրության, ինչպես կարծում էին նրանք։ Այն ժամանակ այս խելոք խոսքերը Եդիգեյի համար լոկ խելոք խոսքեր էին, մինչև որ իր կաշվի վրա զգաց դրանց արդարացիությունը, մինչև որ ինքը տառապեց։ Թեկուզ Զարիպան ու ինքը հեռու էին նման պատմությունից, ինչպես աստղերը գետնից, նրանց միջև ոչինչ տեղի չէր ունեցել, եթե չհաշվենք, որ ինքը մտածում էր Զարիպայի մասին և շատ էր սիրում նրան, բայց Զարիպան առաջինը իր վրա վերցրեց հարվածը, որպեսզի ազատվի այն անխուսափելի անլուծելիությունից։ Իր համար էր որոշել, չէր մտածել, թե Եդիգեյի համար ի՞նչ կարժենար նման որոշումը։ Լավ որ գոնե ողջ մնաց։ Հիմա էլ, մեկ-մեկ այնպիսի կարոտ է պաշարում, որ պատրաստ է հանել աշխարհի ծայրը, միայն թե տեսնի նրան, մեն մի անգամ լսի ձայնը...

Եդիգեյը հիշեց նաև, քթի տակ ծիծաղելով իր վրա, թե որքան արտառոց թվաց իրեն, երբ Աբութալիպից իմացավ, իբր Գերմանիայում եղել է շատ նշանավոր մարդ, մեծ բանաստեղծ Գյոթեն, նրա անունը ղազախերեն այնքան էլ բարեհնչյուն չի, բայց բանն այդ չի, ամեն մարդ կրում է ճակատագրի տված անունը։ Ծերունի Գյոթեն արդեն յոթնասունն անց էր, երբ սիրահարվում է մի գեղատի աղջկա, և աղջիկը նույնպես ամբողջ հոգով սիրում է նրան։ Այդ մասին բոլորը իմացել են, բայց ոչ ոք Գյոթեի ձեռք ու ոտքը չի կապել և ոչ ոք նրան խելագար չի հայտարարել... Իսկ ինչպե՞ս վարվեցին Ռայմալի-աղայի հետ։ Նվաստացրին, ոչնչացրին մարդուն, իբր բարիք էին ուզում

անել... Ջարիպան նույնպես իր բարին էր ցանկանում և վարվեց այնպես, ինչպես խիղճն էր թելադրում... Դրա համար ինքը նրանից չի նեղացել։ Այսինքն, մի՞թե հնարավոր է նեղանալ սիրելի մարդուց։ Ավելի շուտ ինքդ քեզ կմեղադրես և քեզ մեղավոր կճանաչես։ Ավելի լավ է, թող քեզ համար վատ լինի, բայց ոչ երբեք նրա... Եվ եթե կարող ես, նույնիսկ այն դեպքում, երբ նա լքել է քեզ, հիշիր և սիրիր...

Այդ մտքով էլ մեկնում էր Բորանլի Եդիգեյը, հիշելով և սիրելով նրան, հիշելով Աբութալիպին և նրա որբացած երեխաներին...

Արդեն Ալմա-Աթային մոտենալիս, Եդիգեյը հանկարծ անհանգստացավ. իսկ ի՞նչ կանի, եթե Ելիզարովը տեղում չլինի։ Այ քեզ բա՜ն։ Ինչո՞ւ տանը չմտածեց այդ մասին։ Ուկուբալայի մտքով էլ այդպիսի բան չանցավ։ Իրենց արշինով չափեցին։ Եթե իրենք ոտքը սարօզեկներից դուրս չեն դնում, կարծում են բոլորն են այդպես։ Մինչդեռ, շատ հնարավոր է, որ Աֆանասի Իվանովիչը տանը չլինի։ Մարդն աշխատում է հենց Ակադեմիայում, ամեն տեղ նրան սպասում են, քի՞չ գործ ունի նրա նման գիտնականը։ Կարող է գործուղման գնացած լինի, այն էլ երկար ժամանակով։ «Այ, թարս բան կստացվի»,— տագնապեց Եդիգեյը։ Եվ սկսեց մտածել, որ ստիպված կլինի դիմելու իրենց ղազախական թերթի խմբագրությանը, թերթի հասցեն ամեն համարում նշվում է։ Այնտեղ իրեն հաստատ խորհուրդ կտան, թե ուր գնա և ում դիմի։ Թերթի աշխատողներից լավ ո՞վ պիտի իմանա, թե ում դիմի այդ հարցով։ Տանը ամեն ինչ պարզ էր թվում. վեր կացավ եկավ։ Իսկ այժմ, տեղ հասնելու հետ, անհանգստանում էր Բորանլին, դուր չի սպված. վատ որսորդը որսի մասին երազում է տանը նստած։ Այդպես էլ ինքը։ Իհարկե ինքը հույսը դրել էր Ելիզարովի վրա։ Ելիզարովը մոտ մարդ էր, վաղեմի ընկեր, շատ է եղել իր տանը՝ կիսակայարանում, գիտի Աբութալիպ Կուտիբաևի պատմությունը։ Նա կես-խոսքից կհասկանար։ Իսկ ինչպես պատմես անծանոթ մարդկանց, ինչի՞ց սկսես և ի՞նչ ձևով ներկայացնես. վկայությո՞ւն տաս ինչպես դատարանում, թե զեկուցես, թե ի՞նչ անես։ Կլսե՞ն արդյոք, և ի՞նչ պատասխան կտան։ Իսկ դու ո՞վ ես, կհարցնեն, ինչո՞ւ ես ուզում ամեն կերպ պարզերես դուրս բերես Աբութալիպ Կուտիբաևին։ Ինչ կապ ունես։ Նրա եղբա՞յրն ես, քավորը, թե՞ սանահերը։

Գնացքն արդեն հասել էր Ալմա-Աթայի արվարձանները, և ուղևորներն արդեն հավաքվել-պատրաստվել էին, դուրս էին եկել միջանցք, սպասելով կանգառին։ Եդիգեյն էլ էր պատրաստ։ Ահա երևաց կայարանը, ահա և ուղևորության վերջը։ Կառամատույցում լիքը ժողովուրդ էր, դիմավորողների և մեկնողների խառնամբոխ։ Գնացքը դանդաղ կանգ էր առնում։ Եվ հանկարծ կառամատույցում փայլատակող դեմքերի մեջ Բորանլի Եդիգեյը լուսամուտից տեսավ Ելիզարովին և երեխայի նման բուռն ուրախացավ։ Ելիզարովը սիրալիր թափահարեց գլխարկը և քայլեց վագոնի կողքով։ Ա՜յ քեզ հաջողություն։ Եդիգեյը չէր կարող երազել, որ կդիմավորի ինքը՝ Ելիզարովը։ Վաղուց չէին հանդիպել, անցյալ աշնանից։ Չէ, չի փոխվել Աֆանասի Իվանովիչը, չնայած տարիքին։ Միշտ այնպես շարժուն, չորիկ-մորիկ։ Ղազանղապը նրան անվանում էր արգամակ՝ զտարյուն նժույգ։ Դա բարձր գովեստ էր. արգամակ Աֆանասի։ Ելիզարովը գիտեր այդ մասին և բարեսրտորեն համաձայնվում էր, թող քո ասածը լինի, Ղազանղապ։ Եվ ավելացնում էր. ծեր արգամակ, բայց արգամակ։ Դրա համար էլ ենք շնորհակալ։ Սովորաբար նա սարօզեկներ էր գալիս բանվորական հագուստով, կիրզայե սապոգներով, հին, ձևից ընկած կեպկայով, իսկ հիմա փողկապով էր, գեղեցիկ մուգ մոխրագույն կոստյումով։ Եվ կոստյումը նրան շատ էր վայելում, մանավանդ մազերին, որոնք արդեն կիսով ճերմակ էին։

Մինչ գնացքը կանգ էր առնում, Աֆանասի Իվանովիչը կիսաթեք քայլում էր վագոնի կողքով և ժպտում էր նրան։ Ելիզարովի գորշ, շեկ թարթիչներով աչքերը բաղձալի հանդիպումից շողում էին անկեղծ բավականությամբ։ Դա անմիջապես ջերմացրեց Եդիգեյին, և միանգամից չքացան քիչ առաջվա կասկածները։ «Լավ սկիզբ է,— ուրախացավ նա,— աստված տա, ուղևորությունս հաջող լինի»։

— Վերջապես շնորհ արեցիր։ Հազարից մեկ։ Բա՛րև, Եդիգեյ Բա՛րև, Բորանլի։— Դիմավորեց նրան Ելիզարովը։

Նրանք ամուր ողջագուրվեցին։ Մարդկանց շատությունից, ուրախությունից Եդիգեյը մի քիչ շփոթվեց։ Մինչև կայարանամերձ հրապարակ հասնելը Ելիզարովը նրա գլխին հարցերի տարափ տեղաց։ Բոլորի մասին հարցրեց, ով ինչպես է.— ինչպես են Ղազանղապը, Ուկուբալան, Բուկեյը, երեխաները, ո՞վ է այժմ կիսակայարանի պետը, չմոռացավ նաև Կարանարին։

— Բորանլի Կարանաոն ինչպե՞ս է,— հետաքրքրվեց, նախապես զվարթ ծիծաղելով ինչ-որ մաքից։— Էլի մունչացող առյո՞ւծ է։

— Կա։ Ի՞նչ պիտի լինի, մունչում է,— պատասխանեց Եդիգեյը։— Սարօզեկներում ազատ-արձակ ապրում է։ Էլ ի՞նչ է հարկավոր նրան։

Կայարանի առջև կանգնած էր մեծ, սև, փայլուն մեքենա։ Այդպիսի մեքենա Եդիգեյն առաջին անգամ էր տեսնում։ «ԶԻՄ» էր, հիսունական թվականների լավագույն մեքենան։

— Սա իմ Կարանաոն է,— կատակեց Ելիզարովը։— Նստիր, Եդիգեյ,— ասաց նա, բացելով առջևի դռնակը։— Գնանք։

— Հապա ո՞վ է քշելու մեքենան,— հարցրեց Եդիգեյը։

— Ե՛ս,— ասաց Ելիզարովը, նստելով ղեկի մոտ։— Տարիքս առա, նոր որոշեցի։ Ինչո՞վ ենք պակաս ամերիկացիներից։

Ելիզարովը ինքնավստահ շարժիչը կարգի գցեց։ Եվ տեղից շարժվելուց առաջ, ժպտալով, հարցական հայացքով նայեց հյուրին։

— Ահա, վերջապես եկել ես։ Ասա տեսնեմ, որքա՞ն ժամանակով։

— Գործով եմ եկել, Աֆանասի Իվանովիչ։ Տեսնենք ի՞նչ կլինի։ Իսկ դրանից առաջ պետք է միասին խորհրդակցենք։

— Այդպես էլ գիտեի, որ գործով ես գալիս, թե չէ ո՞վ կարող է քեզ դուրս քաշել քո սարօզեկներից։ Հապա ինչպե՞ս։ Ուրեմն այսպես, Եդիգեյ։ Հիմա գնում ենք մեր տուն։ Կապրես մեզ մոտ։ Եվ չառարկես։ Ոչ մի հյուրանոց։ Դու ինձ համար հատուկ հյուր ես։ Սարօզեկներում ես քո տանն եմ մնում, այստեղ էլ դու կմնաս իմ տանը։ Ղազախներն ասում են. Սրտերն սրտի բարտակ՝ հարգանք հարգանքի դիմաց։

— Կարծեմ այդպես է,— համաձայնեց Եդիգեյը։

— Ուրեմն որոշված է։ Ինձ համար էլ հաճելի կլինի։ Իմ Յուլյան մեկնել է Մոսկվա՝ որդու մոտ, երկրորդ թոռն է ծնվել։ Նա էլ գնացել է ջահելներին ուրախացնելու։

— Երկրորդ թոռը։ Շնորհավորում եմ,— ասաց Եդիգեյը։

— Այո, պատկերացրու երկրորդն է,— Ելիզարովը զարմանքով ուսերը վեր բարձրացրեց։— Պապիկ դառնաս, կհասկանաս ինձ։ Չնայած քեզ համար դեռ շատ շուտ է։ Քո տարիքին իմ գլխում քամին էր պարում։ Եվ տարօրինակ է, որ մենք հասկանում ենք միմյանց, չնայած տարիքների տարբերությանը։

Դեհ, գնացինք։ Կանցնենք քաղաքի միջով դեպի վեր։ Այ, տեսնո՞ւմ ես լեռները, գագաթներին՝ ձյուն։ Այնտեղ, լեռների տակ Մեդեոն է։ Կարծեմ պատմել եմ, որ մեր տունը արվարձանում է, համարյա՝ գյուղում։

— Հիշում եմ, Աֆանասի Իվանովիչ, Դուք ասում էիք, որ տունը գետակի ափին է։ Եվ միշտ լսվում է գետի խշշոցը։

— Հիմա ինքդ էլ կհամոզվես։ Գնացինք։ Քանի լույս է քաղաքը նայենք։ Հիմա գեղեցիկ է մեզ մոտ։ Գարուն է։ Քաղաքը ծաղկունքի մեջ է։

Կայարանից փողոցը գնում էր շիտակ և, թվում էր, անվերջ, ամբողջ քաղաքով մեկ, բարդիների ու պուրակների միջով աստիճանաբար ելնում է դեպի բարձունք։ Ելիզարովը վարում էր անշտապ։ Ճանապարհին պատմում էր, թե ինչը որտեղ է գտնըվում. դրանք հիմնականում վանական հիմնարկներ էին, խանութներ, բնակելի տներ։ Քաղաքի ամենակենտրոնական մասում, ամեն կողմից բաց, մեծ հրապարակի վրա կանգնած էր մի շենք, որ Եդիգեյն անմիջապես ճանաչեց լուսանկարներից։ Դա կառավարական տունն էր։

-- Այնտեղ Կենտկոմն է։— Գլխով ցույց տվեց Ելիզարովը։

Եվ անցան կողքով, չենթադրելով, որ հաջորդ օրը իրենք այստեղ են գալու գործով։ Մի շենք և ճանաչեց Բորանլի Եդիգեյը, երբ ուղիղ փողոցից թեքվեցին ձախ. դա Ղազախական օպերային թատրոնն էր։ Մի երկու թաղամաս անցնելուց հետո նորից թեքվեցին լեռների կողմը, Մեդեո տանող ճանապարհով։ Քաղաքի կենտրոնը մնաց ետևում։ Գնում էին երկար փողոցով, առանձնատների ու ցանկապատված պարտեզների միջով, լեռներից վազող քչքչացող վարար առվակների մոտով։ Շուրջ բոլորը ծաղկել էին այգիները։

— Գեղեցիկ է,— ասաց Եդիգեյը։

— Ես շատ ուրախ եմ, որ հենց այս ժամանակ ես եկել։ Հիմա Ալմա-Աթայից լավը չկա։ Ձմռանն էլ է գեղեցիկ, բայց հիմա մարդու սիրտը երգում է։

— Ուրեմն լավ տրամադրություն է,— ուրախացավ Եդիգեյը Ելիզարովի համար։

Սա արագ Եդիգեյի վրա գցեց գորշ, ուռուցիկ աչքերը, գլխով արեց, լըչացավ, խոժոռվեց, ապա նորից ժպտաց, աչքերի անկյուններից վազեցին կնճիռների ճառագայթները։

— Այս գարունը յուրահատուկ է, Եդիգեյ։ Փոփոխություն-

ներ կան։ Դրա համար էլ կյանքը հետաքրքիր է դարձել, չնայած տարիները վրա են տալիս։ Ուշքի են գալիս, շուրջն են նայում։ Դու երբևէ այնպես հիվանդացե՞լ ես, որ հետո դարձյալ զգաս կյանքի համը։

— Ինչ-որ չեմ հիշում,— իրեն հատուկ անմիջականությամբ պատասխանեց Եղիգեյը։— Թերևս, կոնտուզիայից հետո...

— Ախր դու ցուլի նման առողջ ես,— ծիծաղեց Աֆանասի Իվանովիչը։— Ես այդ չեմ ակնարկում։ Ուղղակի խոսքի համար... Լսիր։ Կուսակցությունը, ինքն է ասել առաջին խոսքը։ Ես շատ գոհ եմ դրա համար, չնայած անձամբ առանձնապես պատճառ չունեմ։ Բայց սիրտս ուրախ է և հույսերով լի, ինչպես երիտասարդ ժամանակ։ Կամ գուցե դա նրանից է, որ իրոք ծերանում եմ, հը՞։

— Ես, Աֆանասի Իվանովիչ, հենց այդպիսի գործով եմ եկել։

— Այսինքն, ինչպե՞ս,— չհասկացավ Ելիզարովը։

— Միգուցե հիշո՞ւմ եք։ Ես ձեզ պատմել եմ Աբութալիպ Ղութիբաևի մասին։

— Այո, այո, իհարկե։ Լավ եմ հիշում։ Ուրեմն այդպես։ Դու խորքն ես նայում։ Ապրե՛ս։ Առանց հետաձգելու եկել ես։

— Այդ իմ շնորհքը չի։ Ուկուբալան գլխի գցեց։ Բայց չգիտեմ ինչից սկսեմ, ո՞ւր գնամ։

— Ինչի՞ց սկսել։ Մենք միասին կքննենք։ Տանը, թեյի ժամանակ։ Առանց շտապելու, հանգիստ կքննենք ինչն ինչոց է։— Եվ մի քիչ լռելուց հետո, Ելիզարովը բազմանշանակալից ասաց.— Ժամանակներն ինչպե՜ս են փոխվում, Եղիգեյ, երեք տարի առաջ մարդու մտքով անգամ չէր անցնի գալ այդպիսի գործով։ Իսկ հիմա, ոչ մի երկյուղ։ Սկզբունքորեն այդպես էլ պետք է լինի։ Անհրաժեշտ է, որ բոլորս, առանց բացառության, բռնենք այդ արդարությունից։ Եվ ոչ մեկին ոչ մի առանձնաշնորհ։ Ես այդպես եմ հասկանում։

— Դուք այստեղ ավելի լավ գիտեք, մանավանդ գիտական մարդ եք,— իրենն ասաց Եղիգեյը։— Մեր դեպոյի միտինգում այդ մասին շատ խոսվեց։ Ես էլ անմիջապես մտածեցի Աբութալիպի մասին, այդ ցավը վաղուց է տանջում ինձ։ Նույնիսկ ուզեցի ելույթ ունենալ միտինգում։ Խոսքը միայն արդարության մասին չէ։ Աբութալիպը երեխաներ ունի, նրանք մեծանում են, մեծը այս աշնանը դպրոց է գնալու...

— Իսկ որտե՞ղ է նրանց ընտանիքը։

— Զգիտեմ, Աֆանասի Իվանովիչ, արդեն երեք տարի է, ինչ մեկնել են, և այդպես էլ չիմացանք։

— Այդ ոչինչ։ Կորոնենք-կգտնենք։ Այժմ գլխավորը, իրավաբանական լեզվով ասած, Աբութալիբի գործի մասին հարց հարուցելն է։

— Այո, դուք անմիջապես գտաք անհրաժեշտ բառը։ Դրա համար էլ ձեզ մոտ եմ եկել։

— Կարծում եմ, իզուր չես եկել։

Ինչպես գիտեր, այնպես էլ եղավ։ Շատ շուտով, Եդիգեյի վերադարձից բառացիորեն երեք շաբաթ հետո, Ալմա-Աթայից թուղթ եկավ, որտեղ սևով սպիտակի վրա գրված էր, որ Բորանլի կիսակայարանի նախկին բանվոր Աբութալիպ Ղութիբաևը, որ մահացել է հետաքննության ժամանակ, լիովին ռեաբիլիտացիայի է ենթարկվել, հանցակազմ չլինելու պատճառով։ Այդպես էլ ասված էր. թուղթը նախասահմանված է հուշակվելու այն կոլեկտիվում, որտեղ աշխատել է տուժածը։

Այդ փաստաթղթի հետ գրեթե միաժամանակ նամակ եկավ Աֆանասի Իվանովիչ Ելիզարովից։ Դա նշանավոր նամակ էր։ Այդ նամակը Եդիգեյը ամբողջ կյանքում պահեց իրենց ընտանիքի ամենակարևոր թղթերի մեջ. երեխաների ծննդյան վկայականների, մարտական պարգևների վկայականների, ռազմաճակատային վերքերի մասին թղթերի, աշխատանքային բնութագրերի մեջ...

Աֆանասի Իվանովիչը այդ մեծ նամակով հայտնում էր, որ չափազանց գոհ է Աբութալիպի գործի շուտափույթ քննությունից և ուրախ է նրա ռեաբիլիտացիայի համար։ Որ այդ փաստը ինքնին, ժամանակի բարի նշանակ է։ Եվ ինչպես ինքն էր գրում, դա մեր տարած հաղթանակն է՝ մեր նկատմամբ։

Այնուհետև գրում էր, որ Եդիգեյի մեկնելուց հետո ինքը նորից անցել է այն հիմնարկները, որտեղ եղել էին Եդիգեյի հետ և իմացել է կարևոր նորություններ։ Նախ, քննիչ Թանսիկբաևը վտարվել է աշխատանքից, աստիճանազրկվել է, զրկվել է ստացած պարգևից և ենթարկվում է պատասխանատվության։ Երկրորդ, գրում էր, որ պարզվում է, ինչպես հաղորդել են իրեն, Աբութալիպ Ղութիբաևի ընտանիքը ապրում է Պավլոդարում։ (Տես է՞, ուր են հասել)։ Զարիպան ուսուցչուհի է դպրոցում։ Ընտանեկան դրությունը, ներկայումս, ամուսնացած։ Ահա

այսպիսի պաշտոնական տեղեկություններ էին ստացվել նրա բնակության վայրից։ Եվ գրում էր.— այն վերաքննիչի կապակցությամբ քո կասկածները, Եղիգեյ, ճշտվեցին գործի վերանայման ընթացքում. պարզվում է, որ հենց նա է մատնություն հորինել Աբութալիպ Կուտթիբաևի վրա։ «Ինչո՞ւ է այդպես արել, ի՞նչն է մղել նրան այդպիսի չարագործության։ Ես երկար մտածեցի այդ մասին, վերհիշեցի նման պատմություններ ինչ-որ գիտեի և ինչ-որ դու էիր պատմել, Եղիգեյ։ Այս ամենը պատկերացնելով, ես աշխատեցի հասկանալ նրա արարքի դրդապատճառները։ Ոչ, ի վիճակի չեմ պատասխանելու։ Չեմ կարողանում բացատրել, թե ինչից կարող էր ատելություն առաջանալ նրա մեջ իր համար միանգամայն կողմնակի մարդու՝ Աբութալիպ Կուտթիբաևի նկատմամբ։ Հավանաբար դա հիվանդություն է, համաճարակ, որին ենթարկվում են մարդիկ պատմության ինչ-ինչ շրջանում։ Հնարավոր է նաև, որ ի սկզբանե մարդու մեջ թաքնված լինի նման կործանարար յուրահատկություն— նախանձը, որ կամաց-կամաց ամայացնում է հոգին և տանում դաժանության։ Բայց ի՞նչ նախանձ կարող է առաջացնել Աբութալիպի անձը։ Դա ինձ համար մնում է հանելուկ։ Ինչ վերաբերում է դատաստան տեսնելու միջոցին, ապա դա հին է, որքան այս աշխարհը։ Ժ. մանուկին, բավական էր, որևէ մեկին մատնել, թե նա հերետիկոս է, նրան քարկոծում էին Բուխարայի շուկաներում, իսկ Եվրոպայում այրում էին խարույկի վրա։ Այդ մասին մենք շատ ենք խոսել իրար հետ, Եղիգեյ, երբ դու այստեղ էիր։ Աբութալիպի գործի վերանայման փաստերի բացահայտումից հետո ես նորից համոզվում եմ. դեռ ժամանակ շատ է հարկավոր, որպեսզի մարդիկ իրենց մեջ արմատախիլ անեն այդ արատը, ատելությունը մարդ անհատի դեմ։ Թե որքան շատ, դա դժվար է նախագուշակել։ Հակառակ այս ամենի, ես օրհնում եմ կյանքը, որ աշխարհում անշիջանելի է արդարությունը։ Ահա, այս անգամ նույնպես հաղթանակեց։ Թեկուզ թանկ գնով, բայց հաղթանակեց։ Եվ միշտ կլինի այդպես, քանի կա աշխարհը։ Ես ուրախ եմ, Եղիգեյ, որ դու արդարությունը ձեռք բերեցիր անշահախնդրորեն...»։

Շատ օրեր Եդիգեյը մնաց նամակի տպավորության տակ։ Եվ զարմանում էր ինքն իր վրա, զարմանում էր, թե ինչպես է փոխվել ինքը, կարծես ինչ-որ բան էր ավելացել, պարզվել իր մեջ։ Այն ժամանակ, կյանքում առաջին անգամ մտածեց, թե

հավանաբար եկել է ժամանակը պատրաստվելու վերահաս ծերության, որը հեռու չի...

Ելիզարովի նամակը նրա համար դարձավ մի տեսակ սահմանագիծ, կյանքը նամակից առաջ և հետո։ Ամենայն ինչ, որ եղել էր նամակից առաջ, քաշվել, ծխի նման ձգվել հեռացել էր, ինչպես ափն է հեռանում ծովից, այն ամենը, ինչ հետո էր, հանդարտ հոսում էր օր-օրի, հիշեցնելով, որ այդպես կշարունակվի երկար, թեև ոչ անվերջ։ Բայց գլխավորը, նամակից իմացավ, որ Զարիպան արդեն ամուսնացել է։ Այդ տեղեկությունը նրան նորից ստիպեց ապրելու ծանր պահեր։ Ինքն իրեն հանգստացնում էր, թե գիտեր, նախազգում էր, որ ամուսնացել է, թեև չգիտեր, որտեղ է նա, ի՞նչ եղան երեխաները, և ինչպե՞ս է զգում Զարիպան ուրիշ մարդկանց միջավայրում։ Այդ բանն առանձնապես սուր և աննահանջ զգաց ճանապարհին, երբ գնացքով տուն էր վերադառնում։ Հիմա դժվար էր ասել, թե ինչո՞ւ այդ միտքը ծագեց գլխում։ Համենայն դեպս, ոչ հոգեկան խռովքի պատճառով։ Ընդհակառակն, Ալմա-Աթայից Եդիգեյը մեկնեց բարձր, լավ տրամադրությամբ. ամենուրեք, որտեղ եղան Ելիզարովի հետ, նրանց ընդունում էին սիրով և բարյացակամությամբ։ Եվ այդ բանն ինքնին վստահություն էր ներշնչում մտածածի արդարության հանդեպ, և հույս՝ գործի հաջող ելքի հանդեպ։ Հետագայում այդպես էլ եղավ։ Իսկ այդ օրը, երբ Եդիգեյը մեկնում էր Ալմա-Աթայից, Ելիզարովը նրան տարավ ճաշելու կայարանի ռեստորանում։ Մինչև գնացքի շարժվելը բավական ժամանակ կար, և հրաժեշտից առաջ նրանք մի լավ նստեցին և խմեցին, և սրտաբաց զրուցեցին։ Այդ զրույցի ժամանակ, ինչպես թվաց Եդիգեյին, Աֆանասի Իվանովիչն արտահայտեց իր նվիրական միտքը։ Նա, նախկին մոսկովյան կոմերիտական, որ Թուրքեստան էր ընկել քսանական թվականներին, պայքարել բասմաչների դեմ, այդպես էլ ամբողջ կյանքը հիմնվել-մնացել այստեղ, զբաղվել երկրաբանությամբ, այն կարծիքին էր, որ բնավ էլ զուր չի ամբողջ աշխարհը այդքան հույսեր կապել Հոկտեմբերյան հեղափոխության սկսած գործի հետ։ Որքան էլ ծանր լինի հատուցել սխալների և վրիպումների համար, միևնույն է, առաջընթացը չփորձված ճանապարհի վրա կանգ չառավ, այդ է պատմության էությունը։ Ասաց նաև, որ այժմ շարժումը կընթանա նոր ուժով։ Դրա երաշխիքը հասարակության ինքնաուղղումն է, ինքնազտումն է. «Քանի որ մենք

կարող ենք ասել այդ մասին մեր երեսին, նշանակում է, մեր մեջ ուժ կա ապագայի համար»,— հաստատում էր Ելիզարովը։ Այո, լավ զրուցեցին այն օրը, ճաշի ժամանակ։

Այդ տրամադրությամբ էլ Բորանլի Եդիգեյը վերադարձավ տուն, սարօզեկներ։

Եվ նորից հայացքի առջև շարժվեցին կապտավուն-ձյունոտ Ալաթաուի լեռները հեռվում, ամրակուռ գագաթներով ձգվելով ամբողջ Ցոթգետիկով մեկ։ Ահա, հենց այդ ժամանակ, ճանապարհին մտածելով Ալմա-Աթա կատարած այցի մասին, հասկացավ, ներքին ձայնը հուշեց, որ Զարիպան երևի ամուսնացել է։

Աշքը լեռներին, գարնանային հեռաստաններին, Եդիգեյը մտածում էր, որ կան աշխարհում հավատարիմ մարդիկ, թե խոսքով, թե գործով, ինչպես Ելիզարովն է, և որ առանց այդպիսի մարդկանց, մարդու համար շատ ավելի դժվար կլիներ կյանքում։ Մտածեց նաև, սա արդեն Աբութալիպի գործի բոլոր բավիղներով անցնելուց հետո, արագընթաց, փոփոխական ժամանակի անակնկալների մասին, կենդանի լիներ Աբութալիպը, հիմա նրան կաղատեին սատահող մեղադրանքից և, թերևս, նորից իր երեխաների հետ վերգտներ երջանկությունն ու հանգիստը։ Կենդանի լինե՞ր։ Սրանով ավում է ամեն ինչ։ Կենդանի լիներ, իհարկե, Զարիպան նրան կսպասեր մինչև ամենավերջին օրը։ Դա հաստատ է։ Նրա նման կինը կսպասեր ամուսնուն, ինչ գնով էլ լիներ։ Իսկ եթե սպասելիք չունես, էլ ի՞նչ սպասես, էլ ինչո՞ւ կորցնես ջահել կյանքդ մենակության մեջ։ Եթե այդպես է, ուրեմն հարմար մարդու հանդիպելիս կամուսնանա, իսկ ինչո՞ւ ոչ։ Եդիգեյը տակնուվրա եղավ այդ մտքերից։ Աշխատեց ուշադրությունը կենտրոնացնել ուրիշ բանի վրա, աշխատեց չմտածել, ազատություն չտալ երևակայությանը։ Բան դուրս չեկավ։ Եվ վեր կացավ գնաց վագոն-ռեստորան։

Այստեղ քիչ մարդ կար և առայժմ մաքուր էր ու թարմ։ Եդիգեյը մենակ նստել էր լուսամուտի մոտ։ Սկզբում մի շիշ կարճոր վերցրեց, որ մի բանով զբաղեցնի իրեն։ Վագոն-ռեստորանի լայն տեսածիրը թույլ էր տալիս միաժամանակ դիտելու և՛ լեռները, և՛ տափաստանները, և՛ նրանց վերև տարածված երկինքը։

Վաղանցիկ կակաչներով ծածկված այդ կանաչ տարածու-

թյունը մի կողմից, ձյունոտ գագաթների վսեմությունը մյուս կողմից, հոգին վեհացնում, տանում էին դեպի անիրագործելի բարձունքներ և հասցնում դառը մորմոքների։ Դառնությունից սիրտը դառը բան ուզեց։ Օղի պատվիրեց։ Խմեց մի քանի ըմպանակ, բայց խմածը չզգաց։ Այնուհետև գարեջուր պատվիրեց, նստեց և ընկավ մտքերի ծովը։ Օրը թեքվում էր դեպի մայրամուտ։ Գարնանային երեկոյի թափանցիկության մեջ գետինը փախչում էր երկաթուղու երկու կողմերից։ Փայլկտալով անցնում էին ավաններ, այգիներ, ճանապարհներ, կամուրջներ, մարդիկ և նախիրներ։ Բայց այդ ամենը քիչ էր հետաքրքրում Եդիգեյին, որովհետև խոր կարոտը, որ հանկարծ նոր ուժով պաշարել էր նրան, տրտմեցնում, ճնշում էր սիրտը անորոշ նախազգացումով, թե անցյալը անցել-վերջացել է։

Եվ նորից միտքն ընկան Ռայմալի-աղայի խոսքերը.

...Սև սարերից հենց որ իջնեն քոչերը,
Կապույտ սարից հենց որ իջնեն ջոչերը,
Ինձ մի սպասիր տունավաճառում, Բեգիմայ...

Այդ հոգեվիճակում Բորանլի Եդիգեյին թվում էր, թե ինքը պարաններով կապված է կեչուն, ինչպես ժամանակին Ռայմալի-աղան, որ ինքն իրենից խլված է ու պոկված...

Այդպես նստեց մինչև մութն ընկավ, մինչև վագոն-ռեստորանը լիքը մարդ լցվեց և շնչելը դժվարացավ ծխախոտի ծխից։ Չէր հասկանում Եդիգեյը, թե մարդիկ այս ինչո՞ւ են այսքան անհոգ, այս ի՞նչ չնչին խոսակցություններ են վարում սեղանի շուրջը և ինչո՞ւ են բավականություն փնտրում օղու և ծխախոտի մեջ։ Նրան տհաճ էին նաև կանայք, որ ներս էին մտնում տղամարդկանց հետ։ Տհաճ էր, մանավանդ, նրանց ծիծաղը։ Եդիգեյը վեր կացավ, օրորվելով գտավ մատուցողուհուն, որ սինին ձեռքին մի կերպ ճամփա էր բացում երկաթուղային ռեստորանի սեղանների միջով։ Գնալիս, գնացքի հետ ճոճվելով, նա ավելի ու ավելի էր որբի պես տխրում իրեն պաշարած մենակության և խորթության զգացողությունից։

Ինչի՞ համար էր ապրում, ինչի՞ համար էր տեղ գնում... Այժմ արդեն նրա համար մեկ էր, թե որտեղից, ուր և ինչու է գնում, ո՞ւր է շտապում գիշերվա կեսին արագընթաց գնացքը։ Նա կանգ առավ տամբուրներից մեկում, այրվող ճակատը հպեց

*դռան ապակուն և մնաց այդտեղ առանց շուրջը նայելու, առանց ուշադրություն դարձնելու կողքից վխտացող ուղևորներին։*

*Իսկ գնացքը ճոճվելով գնում էր իր համար։ Կարելի էր բացել դուռը, քանի որ Եդիգեյը, իբրև երկաթուղային, բանալի ուներ, կարելի էր բացել դուռը և կորչել ջհանդամը...*

*Մի ամայի վայրում, մթության մեջ Եդիգեյը զանազանեց երկու կանչող հեռավոր լույսեր, որոնք երկար ժամանակ չէին անհետանում տեսողությունից։ Չգիտես մենավոր տնակի լուսամուտնե՞ր էին շողում, թե փոքրիկ խարույկներ։ Պետք է, որ մարդիկ լինեին կրակների մոտ։ Ո՞վ են։ Ի՞նչ են անում այնտեղ։ Երանի Զարիպան այնտեղ լիներ, ինքը կթռչեր գնացքից, մի շնչով կվազեր մոտը, կընկներ ոտքերը և լաց կլիներ առանց ամաչելու, կդատարկեր հոգում կուտակված ամբողջ ցավն ու կարոտը...*

*Բորանլի Եդիգեյը խուլ հառաչեց, աչքը տափաստանի այն կրակներին, որոնք արդեն անհետանում էին մի կողմի վրա։ Այդպես կանգնել էր տամբուրի դռների մոտ, անլսելի հեկեկում էր, առանց շուռ գալու, առանց ուշք դարձնելու գնացքում աղմուկով անցուդարձ անող ուղևորներին։ Դեմքը թրջվել էր արցունքներից... Եվ հնարավորություն կար բացել դուռը և կորչել ջհանդամը...*

*Իսկ գնացքը ճոճվելով գնում էր իր համար։*

*...Սև սարերից հենց որ իջնեն քոչերը,*
*Կապույտ սարից հենց որ իջնեն քոչերը,*
*Ինձ մի սպասիր տոնավաճառում, Բեգիմայ...*

... Գնացքները այս կողմերում գնում էին արևելքից արևմուտք և արևմուտքից արևելք։

Իսկ երկաթուղու շուրջը, այս կողմերում, փռված էին հսկայական ամայի տարածություններ, Սարի-Օզեկներ՝ Դեղին տափաստանների միջնակները։

Այս կողմերում ուզածդ տարածություն չափվում էր երկաթուղուց, ինչպես Գրինվիչի միջօրեականից։

Իսկ գնացքները գնում էին արևելքից արևմուտք և արևմուտքից արևելք...

*Մեծ, սպիտակապոչ ուրուրը Մալաքումդիչապի զառիթափի բնատեղերից թռավ վերև՝ զննելու տեղանքը։ Նա օրեկան երկու*

անգամ շրջան էր կատարում իր տիրույթի վրա, կեսօրից առաջ և կեսօրին։

Ուշադիր զննելով տափաստանի մակերևույթը, նկատելով ներքևում շարժվող ամենայն ինչ, ընդհուպ մինչև սողացող բզեզներն ու ժիր մողեսները, ուրուրը լուռ թռչում էր սարօզնեկների վրա, գոռոզ թափահարելով թևերը, աստիճանաբար բարձրություն էր վերցնում, որ ավելի լայնքով ու խորքով ընդգրկի ներքևում փռված տափաստանը, միաժամանակ ճկուն թևաբախումներով մոտենում էր իր սիրած որսատեղին՝ փակ գոտու տարածքին։ Այն օրից, ինչ այս ընդարձակ շրջանը ցանկապատվել էր, այստեղ զգալի ավելացել էին մանր կենդանիները և տարբեր թռչունները, որովհետև աղվեսներն ու թափառական այլ գազաններն այլևս չէին կարող անարգել մտնել այստեղ։ Իսկ ուրուրի համար դա նշանակություն չուներ։ Դրանից նա օգտվում էր։ Ցանկապատը նրա համար նպաստավոր եղավ։ Այսինքն, նայած։ Երրորդ օրն էր հետևում էր նապաստակի պստլիկ ձագին և երբ վերևից քարի նման վրա նետվեց, սրտապատառ նապաստակն իրեն գցեց փշալարի տակ, ուրուրը քիչ մնաց թռիչքի թափից բզիկ-բզիկ լիներ փշալարի վրա։ Հազիվ մի կերպ թեքվեց, շեղվեց, հառու, կատաղի վեր խոյացավ, փետուրները դիպցնելով սուր-սուր փշերին։ Կրծքից նույնիսկ մի քանի աղվամազ պոկվեցին, օդի մեջ տարուբերվելով թռան։ Այդ օրվանից ուրուրն աշխատում էր հեռու մնալ չարաբաստիկ ցանկապատից։

Այդպես, այդ ժամին նա սավառնում էր ինչպես վայել է տիրակալին, արժանապատվությամբ, անշտապ, առանց որևէ թևաբախումի, առանց իր վրա հրավիրելու գետնաբնակ արարածների ուշադրությունը։ Այդ օրը առավոտից առաջին և ահա երկրորդ թռիչքի ժամանակ նա տիեզերակայանի ընդարձակ, բետոնապատ հրապարակներում նկատել էր մարդկանց և մեքենաների աշխույժ եռուզեռ։ Մեքենաները երթուդարձ էին անում և պտտվում էին հատկապես հրթիռային կառույցների մոտ։ Երկնքին ուղղված այդ հրթիռները վաղուց ի վեր հատուկ դիրքով տեղադրված էին իրենց հարթակներին, ուրուրը վաղուց էր վարժվել դրանց, բայց այսօր ինչ-որ բան էր կատարվում շուրջը։ Չափից ավելի շատ էին մեքենաները, չափից ավելի շատ էին մարդիկ, չափից ավելի շատ էր իրարանցումը...

Ուրուրի աչքից չվրիպեց նաև այն, որ քիչ առաջ տափա-

տանով ընթացող ուղտի վրայի մարդը, երկու դխկդխկացող տրակտորը և շեկ, փրչոտ շունը այժմ կանգնած էին փշալարի դրսի կողմում, և թվում էր, չէին կարողանում ներս մտնել։ Շեկ շունը ուրուրին ջղայնացնում էր իր հանդիսավոր տեսքով, մանավանդ որ թրև էր գալիս մարդկանց շուրջը, բայց ուրուրը ոչ մի ձևով չէր արտահայտում իր վերաբերմունքը շեկ շան նկատմամբ, հո այդ սատիճան չի սորանա... Պարզապես պտտվում էր այդ տեղի վրա, սրատես աչքով հետևում, թե ի՞նչ է լինելու, ի՞նչ է ուզում անել մարդկանց առջև պոչը խաղացնող այդ շեկ շունը...

Եդիգեյը բարձրացրեց մորուքավոր դեմքը և նկատեց երկնքում ճախրող ուրուրին։ «Խոշոր ճերմակապոչ,— մտածեց նա։— Հե՜յ գիտի, հե՜յ, երանի ուրուր լինեի, ում մտքով կանցներ ինձ կանգնեցնել։ Կթռչեի, կնստեի Անա-Բեյիթի դամբարաններին...»։

Այդ պահին առջևում, ճանապարհի վրա մեքենա երևաց։ «Գալիս է,— ուրախացավ Բորանլի Եդիգեյը։— Տա աստված, որ ամեն ինչ կարգավորվի»։ «Գազիկը» արագ սուրում էր ուղեփակոցի կողմը և կողքանց կտրուկ կանգ առավ պահակակետի դռան մոտ։ Ժամապահը սպասում էր մեքենայի մոտենալուն։ Նա անմիջապես ձգվեց, պատիվ բռնեց պահակազորի պետի՝ լեյտենանտ Թանսիկբաևի առջև, և երբ սա դուրս եկավ «Գազիկից», սկսեց զեկուցել։

— Ընկեր լեյտենանտ, զեկուցում եմ ձեզ...

Բայց պահակազորի պետը ձեռքի շարժումով ընդհատեց նրան, և երբ ժամապահը խոսքը բերանում ձեռքը հեռացրեց գլխարկի հովարից, դարձավ դեպի ուղեփակոցի մյուս կողմում կանգնածներին։

— Ովքե՞ր են այստեղ կողմնակի մարդիկ։ Ովքե՞ր են սպասողները։ Դո՞ւք,— հարցրեց նա, դիմելով Բորանլի Եդիգեյին։

— Բիզ, բիզգոյ, կարագըմ։ Անա-Բեյիթկե ջեթպեյ թուրըպ կալդըկ։ Կալայ դա բոըսա, ջարդամդեշ, կարագըմ[1],— ասաց Եդիգեյը,— աշխատելով, որ ջահել սպայի աչքովն ընկնեն կրծքի պարգևները։

Լեյտենանտ Թանսիկբաևի վրա դա տպավորություն չգոր-

---

[1] Մենք ենք, մենք, տղաս։ Թույլ չեն տալիս մտնենք գերեզմանոց։ Մի բան արա, օգնիր մեզ, տղաս։

ծեց, նա միայն չոր հազաց, և երբ ծերունի Եդիգեյը ուզեց նորից խոսել, սառը կանխեց նրան։

— Կողմնակի ընկեր, ինձ դիմեք ռուսերեն լեզվով։ Ես պաշտոնական պարտավորություններ կատարող անձ եմ,— բացատրեց նա, շեղ աչքերի վրա խոժոռելով սև հոնքերը։

Բորանլի Եդիգեյը սաստիկ շփոթվեց.

— Է՜, է՜, ներող եղիր։ Եթե սխալ եմ, ներիր։— Ու շփոթված լռեց, կորցնելով խոսելու ընդունակությունը և այն միտքը, որ ուզում էր արտահայտել։

— Ընկեր լեյտենանտ, թույլ տվեք ասեմ մեր խնդրանքը,— ծերունին նեղ վիճակից հանելով, խոսեց Երկար Էդիլբայը։

— Ասեք, միայն կարճ կապեք,— զգուշացրեց պահակազորի պետը։

— Մի րոպե։ Թող ներկա լինի նաև հանգուցյալի որդին։— Երկար Էդիլբայը շուռ եկավ Սաբիթջանի կողմը.— Սաբիթջան, այ Սաբիթջան, մոտ արի։

Բայց սա, որ ետ ու առաջ էր անում քիչ այն կողմը, դժկամ ձեռքը թափ տվեց։

— Խոսեք ինքներդ։

Երկար Էդիլբայը կարմրեց։

— Ներեցեք, ընկեր լեյտենանտ, նեղացել է, որ այսպես է ստացվում։ Դա մեռնողի, մեր ծերունի Ղազանղապի որդին է։ Այստեղ է նաև փեսան, հրեն, կցասայլի վրա։

Փեսան երևի կարծեց իրեն են կանչում, իջավ կցասայլից։

— Այդ մանրուքները ինձ չեն հետաքրքրում։ Խոսեք բուն գործից.— առաջարկեց պահակազորի պետը։

— Լավ։

— Կարճ և կարգով։

— Լավ։ Կարճ և կարգով։

Երկար Էդիլբայը սկսեց զեկուցել ինչպես կա, թե ո՞վ են, որտեղից են, ինչ նպատակով և ինչու են հայտնվել այստեղ։ Մինչ նա խոսում էր, Եդիգեյը հետախուզում էր լեյտենանտ Թանսիկբաևի դեմքի արտահայտությունը և հասկացավ, որ նրանից ոչ մի լավ բան չի կարելի սպասել։ Նա կանգնել էր ուղեփակոցի կողմում, որ ձևականորեն լսի կողմնակի անձանց բողոքը։ Եդիգեյը հասկացավ այդ բանը և սրտմտեց։ Ու այն ամենը, ինչ առնչվում էր Ղազանղապի մահին, ճանապարհի իր բոլոր պատրաստությունները, այն ամենը, ինչ ինքն արել էր,

որպեսզի երիտասարդներին համոզի հանգուցյալին թաղելու Անա-Բեյիթում, բոլոր իր խորհրդածությունները, այն ամենը ինչի մեջ տեսնում էր իրեն սարօզեկների պատմությանը կապող թելը, մի ակնթարթում ոչնչանում, դառնում էր չնչին ու անօգուտ Թանսիկբաևի անձի առջև։ Ոտնահարված էին Եդիգեյի լավագույն զգացմունքները։ Ծիծաղը գալիս էր և արտասվելու չափ սիրտը ցավում էր փախկոտ Սաբիթժանի համար, որ դեռևս երեկ, շուբաթի հետ օղի խմելով, բարբառում էր աստվածների մասին, ռադիոյով ղեկավարվող մարդկանց մասին, աշխատելով բորանլիցիներին զարմացնել իր գիտելիքներով, իսկ այժմ չէր ցանկանում բերան բացել։ Ծիծաղը գալիս էր և սիրտը ցավում էր ծոպավոր, գորգահյուս սթարով անհեթեթ կերպով զարդարված Բորանլի Կարանարի համար— ինչի՞ համար է և ո՞ւմ է պետք հիմա այս բոլորը։ Այդ լեյտենանտիկ Թանսիկբաևը, որ չէր ցանկանում կամ վախենում էր խոսել մայրենի լեզվով, մի՞թե կարող էր գնահատել Կարանարի արդուզարդը։ Ծիծաղը գալիս էր և միաժամանակ սիրտը ցավում էր Ղազանղապի տարաբախտ, հարբեցող փեսայի համար, որ մի կաթիլ անգամ օղի չէր առել բերանը և նստել էր գլուխկախ կցասայլը, որ հանգուցյալի մարմնին մոտիկ լինի, իսկ այժմ մոտեցել, կանգնել էր կողքին, ըստ երևույթին հուսալով, որ իրենց թույլ կտան մտնելու գերեզմանոց։ Բորանլի Եդիգեյի համար ծիծաղելի էր և սիրտը ցավում էր նույնիսկ իր շան, շեկ Ջոլբարսի համար, որ չգիտես ինչու, սեփական կամքով հետևել էր իրենց և, չգիտես ինչու, համբերությամբ սպասում էր, որ շարունակեն ճանապարհը։ Այս ամենը շան ինչի՞ն էր պետք։ Ի՞նչ իմանաս, միգուցե հենց շունը նախազգացել է, որ տերը վատ է զգալու, դրա համար էլ միացել է, որպեսզի այդպիսի ժամին լինի նրա կողքին։ Խցիկներում նստած էին երիտասարդ տրակտորիստներ Ղալիբեկն ու Ջումագալին, ինչ պատասխան պիտի տար նրանց և ի՞նչ պիտի մտածեին նրանք այս ամենից հետո։

Նվաստացած և խռոված Եդիգեյը, համենայն դեպս, շոշափելիորեն զգաց, թե ինչպես է իր մեջ բարձրանում ցասման ալիքը, արյունը ինչ տաք և կատաղի է դուրս հորդում սրտից, և լավ իմանալով իրեն, լավ իմանալով, թե որքան վտանգավոր է իր համար ենթարկվել ցասման կանչին, աշխատում էր կամքի ուժով խլացնել այդ կանչը։ Ոչ, իրավունք չուներ չտիրապետելու իրեն, քանի որ հանգուցյալը դեռ անթաղ պառկած էր կցա-

սայլում։ Ծեր մարդուն վայել չի վրդովվել և բարձրացնել ձայնը։ Այդպես էր մտածում նա սեղմելով ատամները և պրկելով այտամկանները, որպեսզի ոչ խոսքով, ո՛չ որևէ շարժումով չմատնի, թե այդ պահին ինչ է կատարվում հոգում։

Ինչպես ենթադրում էր Եդիգեյը, Երկար Էդիլբայի խոսակցությունը պահակապետի հետ, անմիջապես շուռ եկավ անհույս ուղղությամբ։

— Ոչ մի բանով օգնել չեմ կարող։ Կողմնակի անձանց կտրականապես արգելվում է մուտք գործել գոտու տարածքը,— ասաց լեյտենանտը լսելով Երկար Էդիլբային։

— Մենք այդ մասին չենք իմացել, ընկեր լեյտենանտ։ Այլապես, չէինք գա այստեղ։ Ի՞նչ խոսք։ Իսկ այժմ, քանի որ եկել հասել ենք, խնդրեք վերադաս ղեկավարությանը, որպեսզի թույլ տան թաղելու մարդուն։ Հո մեռելը ետ չե՞նք տանելու։

— Ես արդեն զեկուցել եմ վերադասին։ Եվ ցուցում եմ ստացել ոչ ոքի, ոչ մի պատճառաբանությամբ թույլ չտալ։

— Ինչպես թե պատճառաբանություն, ընկեր լեյտենանտ,— ապշեց Երկար Էդիլբայը։— Ինչո՞ւ պիտի պատճառ փնտրենք։ Ի՞նչ գործ ունենք ձեր գոտու հետ։ Եթե թաղումը չլիներ, ինչո՞ւ պիտի այսքան ճանապարհ կտրեինք։

— Ես նորից եմ բացատրում ձեզ, կողմնակի ընկեր, այստեղ մտնել չի թույլատրվում։

— Ի՞նչ է նշանակում կողմնակի,— հանկարծ ձայն հանեց մինչ այդ լուռ, հարբեցող փեսան։— Ո՞վ է կողմնակի։ Մե՞նք ենք կողմնակին,— ասաց նա, և թոշնած, հյուծված դեմքը կարմրատակեց, շուրթերը կապտեցին։

— Իսկապես, այդ ո՞ր օրվանից,— պաշտպանեց նրան Երկար Էդիլբայը։

Աշխատելով չանցնել անթույլատրելիության սահմանը, հարբեցող փեսան ձայնը չբարձրացրեց, այլ միայն ասաց, գիտակցելով, որ ինքը վատ է խոսում ռուսերեն, երկարացնելով և բառերը ուղղելով.

— Սա մերն է, մեր սարօզեկյան գերեզմանը։ Եվ մենք, մենք սարօզեկյան ժողովուրդ իրավունք ունենք թաղելու այստեղ մեր մարդը։ Երբ այստեղ թաղել շատ վաղուց Նայման-Անային, ոչ ոք չգիտեր, որ կլինի այդպիսի փակ գոտի։

— Ես միտք չունեմ ձեզ հետ վեճի բռնվելու,— հայտարարեց լեյտենանտ Թանսիկբաևը։— Տվյալ պահին իբրև պահա-

կազորի պետ, ես մեկ անգամ եւ հայտարարում եմ. պահպանվող գոտու տարածքում ոչ մի մուտք և ոչ մի պատճառով չկա և չի լինի։

Լռություն տիրեց։ «Միայն թե դիմանամ, միայն թե չհայհոյեմ դրան»։ Ինքն իրեն հանգստացնելով Բորանլի Եդիգեյը մի պահ աչքը գցեց երկնքին և նորից տեսավ այն ուրուրին, որ սահուն ճախրում էր հեռվում։ Եվ նորից նախանձեց այդ հանգիստ և ուժեղ թռչունին։ Եվ որոշեց, այլևս իմաստ չունի փորձության ենթարկել ճակատագիրը, ստիպված են հեռանալ, հո զոռով չե՞ն մտնի։ Եվ, մի անգամ եւս նայելով ուրուրին, Եդիգեյն ասաց.

— Ընկեր լեյտենանտ, մենք գնում ենք։ Բայց հաղորդիր, ո՞վ է ձեզ մոտ գեներալ, թե ավելի բարձր, որ այսպես չի կարելի։ Ես խոսում եմ իբրև հին զինվոր— սա ճիշտ բան չի։

— Ճիշտ թե սխալ, վերադասի հրամանը ես քննարկելու իրավունք չունեմ։ Եվ ի գիտություն ձեզ, ինձ հրամայված է հաղորդել, որ այս գերեզմանոցը ենթակա է վերացման։

— Անա-Բեյի՞թը,— ապշեց Երկար Էդիլբայը։

— Այո, եթե այդպես է անունը։

— Իսկ ինչո՞ւ. Ո՞ւմ է խանգարում այս գերեզմանոցը,— վրդովվեց Երկար Էդիլբայը։

— Այնտեղ պետք է նոր միկրոշրջան լինի։

— Հրա՜շք,— ձեռքերը տարածեց Երկար Էդիլբայը։— Էլ տեղ չունե՞ք, ինչ է, էլ տեղ չկա՞։

— Ծրագրով այդպես է նախատեսված։

— Լսիր, ո՞վ է քո հայրը,— պահանջկոտ հարցրեց Բորանլի Եդիգեյը լեյտենանտ Թանսիկբաևին։

Սա շատ զարմացավ։

— Դա ինչի՞ համար է։ Ձեր ի՞նչ գործն է։

— Այ, նրա համար, որ դու փոխանակ մեզ պատասխանելիր այդպես, պարտավոր էիր նույն բանն ասել այնտեղ, որտեղ մտադրվել են ոչնչացնելու մեր գերեզմանոցը։ Երևի, ձեր հայրերը չեն մեռնում, կամ էլ դու երբեք չես մեռնելու։

— Դա գործի հետ որևէ կապ չունի։

— Լավ, խոսենք գործից։ Այդ դեպքում, ընկեր լեյտենանտ, թող ինձ լսի ձեր ամենամեծը, ես պահանջում եմ, որ ինձ թույլ տրվի բողոքս հայտնելու ձեր ամենամեծ պետին։ Ասա, որ հին

ռազմաճակատային, սարօզեկի բնակիչ Եդիգեյ Ջանգելդինը մի քանի խոսք ունի ասելու նրան։

— Ես չեմ կարող։ Ինձ ցուցում է տրված գործել ըստ կարգի։

— Իսկ դու ի՞նչ կարող ես,— նորից մեջ ընկավ հարբեցող-փեսան։ Եվ հուսահատ ասաց.— Շուկայի միլիցիա անգամ քեզնից լավ։

— Վե՛րջ տվեք խայտառակությանը,— գունատվելով ձգվեց պահակազորի պետը։ Վե՛րջ տվեք։ Սրան հեռացրեք ուղեփակոցից և ճանապարհն ազատեք տրակտորներից։

Եդիգեյն ու Երկար Էդիլբայը հարբեցող-փեսայի թևերից բռնեցին, քաշեցին հեռու, տրակտորների մոտ, իսկ սա, ետ նայելով, դեռ շարունակում էր գոռալ.

— Սազան չոլ դա չեթպեյդի, սազան չեր դա չեթպեյդի։ Ուրդըմ սենդեյդին աուզըն[1]։

Սաբիթժանը, որ ամբողջ այս ընթացքում լուռ, մռայլ ետուտաց էր անում, քիչ հետո հանկարծ որոշեց ցույց տալ իրեն և առաջ եկավ.

— Հը՞, դնից ե՞տ եմ դարձնում։ Այդպես էլ պիտի լիներ։ Մի գլուխ Անա-Բեյիթ։ Ուրիշ ոչինչ։ Իսկ հիմա նման եք ծեծված շան։

— Այդ ո՞վ է ծեծված շունը,— վրա պրծավ զայրույթից գլուխը կորցրած հարբեցող-փեսան։— Եթե մեր մեջ շուն կա, ապա դու ես, սրիկա՛։ Ինչ տարբերություն այ, այնտեղ կանգնած շան և քո միջև։ Եվ դեռ գլուխդ էլ գովում ես, ես պետական մա՞րդ եմ։ Տո, դու խսկի մարդ էլ չես։

— Նախ ձայնդ կտրիր, հարբեցողի մեկը,— ճղճղան սպառնաց Սաբիթժանը, որպեսզի պահակակետում նույնպես լսեն։— Նրանից տերը լինեի, այդ լեզվիդ համար քեզ այնպիսի տեղ կցցեի, որ հետքդ անգամ չմնար։ Քեզանից ի՞նչ օգուտ ունի հասարակությունը, քեզ նմաններին հարկավոր է բնաջնջել։

Այդ խոսքերից հետո Սաբիթժանը թիկունք դարձրեց նրան, իբր թքել եմ քեզ վրա էլ, քեզ հետ եկողների վրա էլ, հանկարծ արտակարգ աշխուժություն ցուցաբերելով, տիրոջ նման բարձրաձայն և պահանջկոտ սկսեց անօրինություն անել, հրամայելով տրակտորիստներին.

---

1 Քեզ ճանապարհն էլ հերիք չի, քեզ հողն էլ հերիք չի թքել եմ վրադ։

*— Ի՞նչ եք բերաններդ բացել։ Հապա լարեք տրակտորները։ Ինչպես եկել ենք, այնպես էլ կգնանք։ Գրողի ծոցը։ Դե, շուտ տվեք, բավական է։ Հիմարություն արեցի, ուրիշներին ականջ կախեցի։*

*Ղալիբեկը լարեց իր տրակտորը և զգուշությամբ սկսեց թեքել կցասայլը, որ ճամփա ընկնի, իսկ հարբեցող-փեսան իրեն գցեց սայլի մեջ, նորից գրավեց իր տեղը հանգուցյալի մոտ։ Ջումագալին սպասում էր, մինչև որ Բորանլի Եդիգեյը Կարանարի սպաբանն արձակի էքսկավատորի շերեփից։ Տեսնելով այդ, Սաբիթջանը փոխանակ զսպելու իրեն, ընդհակառակը, շտապեցրեց։*

*— Ի՞նչ ես կանգնել։ Շուտ արա, լարի՛։ Ե՛տ դարձրու։ Սպասելու բան չկա։ Թաղում է կոչվում։ Ախր ես դեմ էի, բայց լսող չեղավ։ Իսկ հիմա բավական է։ Տուն դա՛րձ։*

*Մինչ Բորանլի Եդիգեյը կնստեր ուղտին, նախ հարկավոր էր ուղտին չոքեցնել, ապա բարձրանալ թամբին, նոր ոտքի կանգնեցնել նրան,— տրակտորները բռնեցին ետդարձի ճամփան։ Ետ դարձան իրենց իսկ հետքերով։ Նույնիսկ չսպասեցին։ Սաբիթջանը, առաջին տրակտորին նստած, շտապեցնում էր։*

*Իսկ երկնքում պտտվում էր նույն ուրուրը։ Բարձրերից դիտելով շեկլիկ շանը, որ, չգիտես ինչու նրան բարկացնում էր իր աննպատակ վարքով, ուրուրը հետևում էր նրան և չէր հասկանում, թե ինչո՞ւ շունը չվազեց, երբ տրակտորները առաջ շարժվեցին, այլ մնաց ուղտով մարդու հետ, մինչև որ սա նստեց ուղտին, հետո սնգսնգաց նրա ետևից։*

*Տրակտորներով մարդիկ, ետևից՝ հեծյալը, նրա ետևից՝ շեկլիկ շունը, որ գնում էր ցատկոտելով, նորից շարժվեցին սարոզեկներով, Մալաքումդիչապի զառիթափի ուղղությամբ, որտեղ գետնափոսերից մեկում գտնվում էր ուրուրի բույնը։ Ուրիշ ժամանակ ուրուրը կհուզվեր, տագնապալի ծղրտոց կգցեր, երբ հեռու կպահեր իրեն, բայց աչքը չէր կտրի եկվորներից, արագացնելով թռիչքը կկանչեր ընկերուհուն, որը որս էր անում այդ կողմերում՝ իրենց օրինական հողերում, որպեսզի համենայն դեպս նա էլ միանա իրեն, եթե հարկ լինի պաշտպանելու բույնը, բայց այս անգամ ճերմակապոչ ուրուրը բնավ չէր անհանգըստանում. ճուտիկները վաղուց փետրավորվել էին և լքել բույնը։ Օրեցօր ամրացնելով թևերը, սաթե աչքերով, կեռկտուց ուրուրաճտերն արդեն ինքնուրույն կյանք էին վարում, իրենց տիրույթն ունեին սարոզեկյան շրջանում, և այժմ այնքան էլ սի-*

բալիր չէին դիմավորում ծեր ուրուրին, երբ սա անցնելիս մըտնում էր նրանց սահմանները…

Ուրուրը հետևում էր եա դարձող մարդկանց, ըստ ամեն ինչ տեսնելու իր սովորության՝ դիտելով թե ինչ է կատարվում իր հանդակի սահմաններում։ Առանձնապես հետաքրքրություն էր առաջացնում չեկ, փոշոտ շունը, որ անբաժան էր մարդկանցից։ Ի՞նչ էր կապում նրան այս մարդկանց, ինչո՞ւ ինքնուրույն որս չի անում, այլ պոչը խաղացնելով վազում է նրանց ետևից, որոնք զբաղված են իրենց գործով։ Ինչի՞ն է հարկավոր նման կյանքը։ Ուրուրի ուշադրությունը գրավում էին նաև ուղտին նստած մարդու կրծքին շողացող ինչ-որ առարկաներ։ Դրա համար էլ ուրուրն անմիջապես նկատեց, որ տրակտորների ետևից գնացող ուղտին նստած մարդը, հանկարծ կտրուկ շուռ եկավ, թեքվեց անջրդի հովտի կողմը։ Նա ուղտին քշում էր ավելի ու ավելի արագ, թափահարելով մտրակը, կրծքի փայլուն առարկաները ոստոստում էին և զրնգում, ուղտը կայտառ վազում էր, լայն-լայն լոքեր գցելով, իսկ չեկ շունը քառատրոփ սլանում էր…

Այդպես շարունակվեց որոշ ժամանակ, մինչև որ ուղտի մարդը շրջանցեց տրակտորը և կանգ առավ, կտրեց տրակտորների ճանապարհը, որ դուրս էր գալիս Մալաքումդիչայի խնձահովիտը։ Եվ տրակտորները արգելակեցին նրա առջև։

— Ի՞նչ։ Նորից ի՞նչ է պատահել,— խցիկից դուրս նայեց Սաբիթջանը։

— Ոչինչ։ Խլացրու շարժիչը,— կարգադրեց Բորանլի Եդիգեյը։ Խոսելիք ունեմ։

— Էլ ի՞նչ խոսելիք։ Մի ուշացնի, մի կուշտ ման ենք եկել։

— Հիմա արդեն դու ես ուշացնում։ Որովհետև թաղելու ենք այստե՛ղ։

— Բավական է ձեռ առնեք,— բորբոքվեց Սաբիթջանը, վզին ավելի ուժեղ սեղմելով փողկապը, ինքս պիտի թաղեմ, կլխակայարանում, և վե՛րջ։ Բավակա՛ն է։

— Լսի՛ր, Սաբիթջան, քո հայրն է, ինչ խոսք։ Բայց աշխարհում միայն դու չես։ Համենայն դեպս, լսիր։ Ինչ որ տեղի ունեցավ պահակակետում, աչքովդ տեսար, ականջովդ լսեցիր։ Մեզանից ոչ ոք մեղավոր չէ։ Բայց մտածիր, տեսնվա՞ծ բան է, որ մեռելին թաղումից ետ բերեն։ Այդպիսի բան չի եղել։ Դա խաղք ու խայտառակություն է։ Նման բան կյանքում չի պատահել։

— Թքել եմ ամեն ինչի վրա,— առարկեց Սաքիթջանը։

— Այդ հիմա ես թքում։ Տաք գլխով ինչ ուզես կասես։ Իսկ վաղը կամաչես։ Լավ մտածիր։ Խայտառակությունը չի ջնջվի։ Թաղման համար տնից դուրս բերվածը չպիտի վերադառնա։

Այդ պահին էքսկավատորի խցիկից դուրս եկավ Երկար Էդիլբայը, կցասայլից իջավ հարբեցող-փեսան, էքսկավատորավար Ջումագալին նույնպես մոտեցավ իմանալու, թե ի՞նչ է եղել։ Կարանարին հեծած Բորանլի Եդիգեյը փակել էր նրանց ճանապարհը։

— Լսե՛ք, ջիգիթներ,— ասում էր նա։— Հակառակ մի՛ գնացեք մարդկային սովորույթին, մի՛ հակառակվեք բնությանը։ Դեռ չի պատահել, որ գերեզմանոցից հանգուցյալին ետ բերեն։ Ում տարել են թաղելու, նա պետք է թաղվի։ Ուրիշ կերպ չի լինի։ Ահա Մալաքումդիչապի զառիթափը։ Սա էլ է մեր սարօզեկյան հողը։ Այնտեղ, Մալաքումդիչապում, Նայման-Անան մեծ ողբ է արել։ Լսեք ինձ, ծերունի Եդիգեյին, թող այստեղ լինի Ղազանղապի գերեզմանը։ Եվ թող իմ գերեզմանը նույնպես այստեղ լինի։ Աստծո օգնությամբ ինքներդ էլ կթաղեք։ Այդ մասին ես կխնդրեմ ձեզ։ Իսկ այժմ դեռ ուշ չի, դեռ ժամանակ կա, այ, այնտեղ, հենց զառիթափի վրա հանգուցյալին կհանձնենք հողին։

Երկար Էդիլբայը նայեց Եդիգեյի ցույց տված տեղը։

— Ջումագալի, ի՞նչ ես կարծում, քո էքսկավատորը կանգնի՞,— հարցրեց նա։

— Կանգնի, ինչո՞ւ պիտի չկանգնի։ Այ, այն կողմով...

— Այն կողմով... սպասի՛ր։ Նախ՝ ինձ հարցրու,— մեջ ընկավ Սաքիթջանը։

— Բա ի՞նչ ենք անում, որ չենք հարցնում,— պատասխանեց Ջումագալին։— Չլսեցի՞ր, մարդն ինչ ասաց։ Էլ ի՞նչ ես ուզում։

— Իսկ ես ասում եմ՝ բավակա՛ն է ձեռ առնեք։ Սա ծաղրուծանակ է։ Գնացե՛նք կիսակայարան։

— Դե, եթե դա քեզ անհանգստացնում է, ուրեմն ծաղրուծանակը կլինի այն դեպքում, եթե հանգուցյալին գերեզմանից տուն տանենք,— ասաց Ջումագալին։— Այնպես որ, լա՞վ մտածիր։

Բոլորը լռեցին։

— Չգիտեմ դուք ինչպես,— նետեց Ջումագալին,— բայց ես կգնամ գերեզմանը փորելու։ Իմ պարտքն է փոս փորել և որքան

կարելի է՝ խոր։ Քանի դեռ ժամանակ կա։ Մութն ընկնի, ոչ ոք դրանով չի զբաղվի։ Դուք ինչպես կուզեք։

Եվ Ջումագալին ուղղվեց իր «Բելոռուս» էքսկավատորի կողմը։ Առանց հապաղելու լարեց, կողմ թեքեց, բարձրացավ բլրակը և այնտեղից՝ Մալաքումդիչապի զառիթափն ի վեր։ Նրանց հետևեց Երկար Էդիլբայը, նրա ետևից Կարանարին շարժեց Բորանլի Եդիգեյը։

Հարբեցող փեսան տրակտորիստ Ղալիբեկին ասաց.

— Եթե դու չքշես այնտեղ,— նա ցույց տվեց զառիթափը,— ես կպառկեմ տրակտորի տակ։ Դա ինձ համար ոչինչ չարժի։— Այդ խոսքերով նա կանգնեց տրակտորիստի առջև։

— Դեհ, ի՞նչ, ուր քշեմ,— հարցրեց Ղալիբեկը Սաբիթջանին։

— Բոլորը սրիկա՛ են, բոլորը շո՛ւն են,— բարձրաձայն հայհոյեց Սաբիթջանը։— Էլ ի՞նչ ես նստել, լարիր, շուտ արա, շարժվիր նրանց ետևից։

Ուրուրը երկնքից հետևում էր, թե այժմ մարդիկ ինչպես են իրար անցել զառիթափի վրա։ Մի մեքենան սկսեց ջղաձիգ ցնցվել, հողը հանել, կիտել կողքի, ինչպես գետնասկյուռը բնի մոտ։ Այդ ընթացքում ետևից մոտ էր սողում կցասայլով տրակտորը՝ սայլում առաջվա նման նստած էր միայնակ մի մարդ, տարօրինակ, անշարժ մի առարկայի առջև, որ փաթաթված էր սպիտակի մեջ և դրված էր սայլակի մեջտեղում։ Շեկ, փրչոտ շունը թրև էր գալիս մարդկանց շուրջը, բայց ավելի շատ ուղտին էր մոտ, պառկել էր նրա ոտքերի առջև։

Ուրուրը հասկացավ, որ այս եկվորները դեռ երկար կփորփրեն զառիթափի հողը, եսկույն թևին տվեց և լայն շրջանակներ գծելով օդի մեջ, թռավ փակ դոտու կողմը, մտադրվելով ճանապարհին որս անել և միաժամանակ հետևել, թե ի՞նչ է տեղի ունենում այնտեղ՝ տիեզերակայանում։

Ահա արդեն երկրորդ օրն է, ինչ տիեզերակայանի հրապարակներում լարվածություն է տիրում, օր ու գիշեր աշխատանքը չի դադարում։ Ամբողջ տիեզերակայանը՝ հարակից բոլոր հատուկ ծառայություններով և գոտիներով, գիշերը պայծառ լուսավորված էր հարյուրավոր հզոր լուսարձակներով։ Այսօր ներքում ավելի լուսավոր էր, քան ցերեկը։ Տասնյակ ծանր, թեթև և հատուկ մեքենաներ, բազմաթիվ գիտնականներ և ինժեներներ զբաղված էին «Օղակաղ» օպերացիայի նախապատրաստությամբ։

Հակաարբանյակները, որ պատրաստված էին տիեզերքում թռչող սարքերի ոչնչացման համար, վաղուց արդեն կանգնած էին տիեզերակայանի հատուկ հրապարակում, թռիչքի պատրաստ։ Բայց դրանց գործունեությունը կասեցված էր մինչև հատուկ պայմանավորվածություն, ճիշտ այնպես, ինչպես ամերիկյան կողմի նույնպիսի միջոցները։ Այժմ դրանք իրենց նոր կիրառումն էին գտնում «Օղակապ» տրանստիեզերական օպերացիայի իրագործման արտակարգ ծրագրի կապակցությամբ։ «Օղակապ» օպերացիայի առթիվ նույնպիսի ռոբոտ-հրթիռներ էին պատրաստվում նաև ամերիկյան Նևադա տիեզերակայանում՝ միաժամանակյա բացթողման համար։

Սարօզեկյան լայնություններում մեկնարկի ժամանակը համապատասխանում է երեկոյան ժամը ութին։ Ուղիղ ութը զրո-զրոյին հրթիռները պետք է մեկնարկեին։ Հաջորդաբար, կես րոպեի ընդմիջումով, հեռավոր տիեզերք պետք է գնային սարօզեկյան ինը հակաարբանյակային հրթիռ, որոնք նախանշված էին Արևմուտք-արևելք հարթության վրա երկրագնդի շուրջը ստեղծելու մշտապես գործող օղակապ՝ ընդդեմ այլ մոլորակային թռչող սարքերի թափանցման։ Նևադյան հրթիռ-ռոբոտները պետք է օղակապ հաստատեին Հյուսիս-Հարավ հարթության վրա։

Կեսօրից հետո, ուղիղ ժամը երեքին, Սարի-Օզեկ—1 տիեզերակայանում միացվեց «Պյատիմինուտկա» ստուգողական-նախագործարկման համակարգը։ Յուրաքանչյուր հինգ րոպեից հետո բոլոր ծառայությունների և կանալների բոլոր էկրաններին ու ցուցատախտակներին բոցավառվում էին հիշեցումներ, որոնք ուղեկցվում էին հնչյունային կրկնություններով, «Մինչև մեկնարկը չորս ժամ հիսուն րոպե...»։ Մեկնարկից երեք ժամ առաջ պետք է միացվեր «Մինուտկան»։

Այդ ընթացքում «Պարիտետ» ուղեծրային կայանը տիեզերքում արդեն փոխել էր իր վայրի գտնման պարամետրերը, միաժամանակ վերածածկագրել կայանի բորտային համակարգի ռադիոկապի կանալները, որպեսզի բացառվի պարիտետ-տիեզերագնացներ 1—2 և 2—1-ի հետ հաղորդակցման որևէ հնարավորություն։

Ընդ որում, միանգամայն ապարդյուն, իբրև ձայն բարբառո հանապատի, տիեզերքից անընդհատ ուղարկվում էին պարիտետ տիեզերագնացներ 1—2 և 2—1-ի ռադիոազդանշանները։

Նրանք հուսահատ խնդրում էին չխզել կապը իրենց հետ։ Նրանք չէին վիճարկում Միաղեկկենտրոնի որոշումը, առաջարկելով կրկին և կրկին անգամ ուսումնասիրել անտառալանչցիների քաղաքակրթության հետ հնարավոր հաղորդակցությունների խնդիրները, անշուշտ ելնելով նախ և առաջ երկրայինների շահերից, նրանք չէին ուզում իրենց անհապաղ ռեաբիլիտացիան, համաձայնելով սպասել և անել ամեն ինչ, որպեսզի Անտառալանչ մոլորակում իրենց գտնվելը ծառայի միջգալակտիկական հարաբերությունների երկկողմանի օգտակարությանը, բայց առարկում էին կողմերի նախաձեռնած «Օղակապ» օպերացիայի դեմ, այն գլոբալ ինքնամեկուսացման դեմ, որ իրենց կարծիքով տանում է դեպի մարդկային հասարակության պատմական և տեխնոլոգիական անխուսափելի հնամոլության, որի հաղթահարման համար կպահանջվեն հազարամյակներ... Բայց արդեն ուշ էր։ Ոչ ոք աշխարհում նրանց լսել չէր կարող, ոչ ոքի մտքով չէր անցնում, որ համաշխարհային տարածության մեջ անբարբառ կանչում էին նրանց ձայները...

Այդ ժամանակ Սարի-Օզեկ—1 տիեզերակայանում արդեն միացվել էր «Մինուտկա» համակարգը, որ անդառնալիորեն հաշվում էր «Օղակապ» օպերացիայի մեկնարկի մոտեցումը...

Իսկ ուրուրը կատարելով հերթական թռիչքը, նորից հայտնվեց Մալաքումդիչապի դառիթափի վրա։ Մարդիկ այստեղ զբաղված էին իրենց գործով, նրանք՝ աշխատում էին բահերով։ Էքսկավատորն արդեն փորել հանել էր հողի հսկայական մի կույտ։ Այժմ շերեփը իջեցնում էր խոր փոսի մեջ, քերելով հողի մնացորդները։ Շուտով էքսկավատորը դադարեց ցնցվելուց, քաշվեց մի կողմ, իսկ մարդիկ սկսեցին փորել, փորփրել փոսի խորքում։ Ուղտը տեղում էր, բայց շեկ շունը չէր երևում։ Ո՞ւր կարող էր կորչել։ Ուրուրը մոտ թռավ՝ սահուն շրջան գծելով դառիթափի վրա, և գլուխն աջ ու ձախ դարձնելով, վերջապես տեսավ, շեկ շունը մեկնվել պառկել է կցասայլի տակ, հենց անիվների մոտ։ Շունն իր համար փռվել, հանգստանում էր, կամ գուցե ննջում էր, բանի տեղ չդնելով ուրուրին։ Ինչքա՞ն է ուրուրն այսօր պտտվել նրա գլխավերևում, բայց սա թեկուզ մի անգամ երկինքին չի նայել։ Գետնասկյուռն անգամ շտկվում է, սկզբում շուրջն է նայում, ապա նայում է վերև, տեսնի հո ոչ մի վտանգ չկա։ Իսկ շունը համարվել է մարդկանց մոտ ապրելուն, ոչ մի բանից չի վախենում և հոգս էլ չունի։ Տես ո՞նց է

փոխվել։ Ուրուրը մի ակնթարթ կախվեց օդում, լարվեց և պոչի տակից, կրակոցի նման դիպուկ, շան ուղղությամբ բաց թողեց կանաչ-սպիտակավուն հոսանք։ Իբր, առ քեզ։

Վերևից մի բան շրմփաց Բորանլի Եդիգեյի թևին։ Դա թռչունի ծերտ էր։ Որտեղի՞ց։ Եդիգեյը ծերտը թոթափեց թևից, գլուխը բարձրացրեց։ «Նորից նույն սպիտակապոչն է։ Այս էլ քանի անգամ պտտվում է իրենց գլխին։ Ի՞նչ է նշանակում։ Տեսնո՞ւմ ես, ինչ լավ է զգում։ Իր համար լողում, օրորվում է օդում»։ Նրա միտքն ընդհատեց Երկար Էդիլբայը։ Նա փոսի խորքից հարցրեց.

— Հը, Եդիկե, նայիր։ Բավակա՞ն է, թե էլի փորենք։

Եդիգեյը մռայլ կռացավ գերեզմանափոսի վրա։

— Քաշվիր մյուս անկյունը,— խնդրեց Երկար Էդիլբային,— իսկ դու, Ղալիբեկ, առայժմ դուրս արի։ Շնորհակալություն։ Հա, կարծես թե խորությունը բավարար է։ Համենայն դեպս, Էդիլբայ, հարկավոր է մի քիչ էլ լայնացնել փոսը, թող ընդարձակ լինի։

Այդ կարգադրությունն անելուց հետո, Բորանլի Եդիգեյը վերցրեց ջրով լի փոքրիկ բիդոնը և, քաշվելով էքսկավատորի հետևը, լվացում կատարեց, ինչպես որ անհրաժեշտ էր աղոթքից առաջ։ Քիչ-քիչ սիրտը տեղն էր ընկնում. թեկուզ չէր հաջողվել Ղազանղապին թաղել Անա-Բեյիթում, համենայն դեպս խուսափել էին խաղք ու խայտառակությունից, հանգուցյալին անթաղ ետ չէին բերել։ Եթե համառությունը չբռներ, այդպես էլ կլիներ։ Այժմ հարկավոր էր մի կերպ դասավորել ժամանակը, որ մինչ մութն ընկնելը կարողանային վերադառնալ Բորանլի։ Տանը, իհարկե, սպասում են և կանհանգստանան ուշանալու համար։ Խոստացել էին վերադառնալ ժամը վեցից ոչ ուշ, այդ ժամին պիտի հոգեհաց տային։ Բայց արդեն հինգևկես էր։ Առջևում դեռ թաղումն էր և վերադարձը՝ սարօզեկներով։ Նույնիսկ արագ քշելու դեպքում դա կխլեր մեկ-երկու ժամ։ Բայցև շտապելն ու մի կերպ թաղել-վերջացնելն էլ մի բան չէր։ Մայրահեղ դեպքում հոգեհացը կտան ուշ երեկոյան։ Ուրիշ ելք չկար...

Լվացումից հետո Եդիգեյն իրեն պատրաստ զգաց կատարելու վերջին ծեսը։ Ամրացնելով բիդոնի խցանը, նա էքսկավատորի ետևից հայտնվեց դեմքի հանդիսավոր արտահայտությամբ, հպարտ սղալելով մորուքը։

— Աստծո հպատակ հանգուցյալ Ղազանղապի որդի Սաբիթժան, կանգնիր իմ ձախ կողմում, իսկ դուք չորս հոգով մար-

մինը բերեք դրեք գերեզմանի եզրին, հանուցյալի գլուխը դեպի արևմուտք,— պատասխանեց նա փոքր-ինչ հանդիսավոր ձայնով։ Եվ երբ ամեն ինչ արված էր, ասաց.— Իսկ այժմ բոլորս շրջվենք սուրբ Քաաբայի կողմը։ Առաջ պարզեք ձեռքերը, բաց արեք ափերը, մտածեք աստծո մասին, որպեսզի մեր խոսքերն ու մտքերը լսելի լինեն այսպիսի ժամին։

Որքան էլ տարօրինակ էր, Եդիգեյն իր թիկունքում ծաղր ու քրթմնջոց չլսեց։ Եվ գոհ էր դրանից, չէ՞ որ կարող էին ասել.— Հերիք գլուխ տանես, ծերուկ, դու ծաղրածու չես, մոլլա չես, ավելի լավ է շուտ անենք մեռելին թաղենք, գնանք տուն։ Դա բավական չէր, Եդիգեյը դեռ համարձակություն ունեցավ թաղման աղոթքն անել կանգնած, ոչ թե նստած, որովհետև խելոք մարդկանցից լսել էր, որ արաբական երկրներում, որտեղից եկել էր կրոնը, գերեզմանոցներում աղոթում են հոտնկայս։ Այդ այդպես էր թե ոչ, Եդիգեյն ուզում էր, որ գլուխն ավելի մոտ լինի երկնքին։

Բայց արարողությունն սկսելուց առաջ, նախապես գլուխ խոնարհելով աշխարհի աջ և ձախ կողմերին, ապա գլխի նույն խոնարհումն անելով գետնին ու երկնքին, դրանով իսկ խոնարհվելով արարչին, որ այսքան անխախտ է ստեղծել աշխարհը, որտեղ մարդը հայտնվում է պատահաբար, բայց անհետանում է օր ու գիշերվա հաջորդականության անփոփոխությամբ, նորից Բորանլի Եդիգեյը տեսավ սպիտակապոչ ուրուրին։ Դիմացը սավառնում էր, թեթևակի շարժելով թևերը, բարձր երկնքում շրջանակ էր գծում շրջանակի ետևից։ Բայց ուրուրը բնավ նրան չէր շեղում ներքին լարումից, ընդհակառակն, օգնում էր կենտրոնանալու վսեմ մտքերի վրա։

Իր առջև, բաց փոսի առջև, պատգարակի վրա պառկած էր սպիտակ քաթանով փաթաթված հանգուցյալ Ղազանղապը։ Կիսաձայն արտասանելով թաղման խոսքերը, որ վաղօրոք նախատեսված է ամենքի և ամեն մեկի համար, ամենքի և ամեն ժամանակվա համար, մինչև աշխարհի վախճանը, խոսքեր, որոնցում ի սկզբանե արտահայտված են կանխորոշումներ, որոնք անխուսափելի են և միանշանակ բոլորի համար, յուրաքանչյուր մարդու համար, ով էլ նա լինի, ինչ դարաշրջանում էլ ապրելիս լինի, հավասարապես անխուսափելի է նաև նրանց համար, ովքեր դեռ նոր են ծնվելու, արտասանելով կյանքի այս համապարփակ բանաձևերը, որ հասկացվել և ժառանգվել են

մարգարեների կողմից, Բորանլի Եդիգեյը միաժամանակ աշխատում էր դրանք լրացնել իր հոգուց և իր փորձառությունից բխող սեփական մտքերով: Հո զուր չի մարդը ապրել կյանքում:

«Օհ՜, տեր Աստված, եթե իրոք դու լսում ես գրքերից սերտած իմ աղոթքը, որ ես կրկնում եմ իմ նախահայրերի ետևից, ուրեմն լսիր նաև ինձ: Իմ կարծիքով, մեկը մյուսին չի խանգարի:

Ահա մենք կանգնել ենք այստեղ՝ Մալաքումդիչապի վառիթաիին, Ղազանղապի բաց գերեզմանի առջև, անմարդ ու վայրի տեղում, որովհետև չհաջողվեց նրան թաղել իր կտակած գերեզմանոցում: Իսկ ուրուրը երկնքից նայում է մեզ, թե ինչպես ենք ափներս բաց հրաժեշտ տալիս Ղազանղապին: Դու, ամենազոր, եթե կաս, ներիր մեզ և գթասրտորեն ընդունիր քո հպատակ Ղազանղապի թաղումը, և եթե նա արժանի է, ուղարկիր նրա հոգին հավերժական հանգստության: Մենք աշխատեցինք անել մեզանից կախված ամեն ինչ: Մնացյալը թողնում ենք քեզ:

Իսկ այժմ, քանի որ այսպիսի մի պահի դիմում եմ քեզ, լսիր ինձ, քանի դեռ ողջ եմ և միտքս գործում է: Պարզ բան է, մարդիկ շարունակ խնդրում են քեզ. գթա, օգնիր, պահպանիր: Չափազանց շատ բան են սպասում քեզանից ամեն առիթով՝ արդար թե անարդար: Նույնիսկ մարդասպանը հոգու խորքում ուզում է, որ դու իր կողմը լինես: Իսկ դու շարունակ լուռ ես: Ինչ խոսք, ախր մենք մարդ ենք, դրա համար էլ մեզ թվում է, մանավանդ երբ դժվար վիճակում ենք լինում, թե դու հենց դրա համար էլ գոյություն ունես երկնքում: Գիտեմ, դժվար է քեզ համար, մեր աղերսանքներին վերջ չկա: Ես պարզապես ուզում եմ այսպիսի օրով ասել իմ մտածածը:

Ես այնպես խոր մորմոքում եմ, որ մեր նվիրական գերեզմանոցը, որտեղ հանգստանում է Նայման-Անան, այսուհետև անմատչելի է մեզ: Դրա համար էլ ուզում եմ, որ ինձ նույնպես վիճակվի պառկել այստեղ, Մալաքումդիչապում, որտեղ դիպել է նրա ոտքը: Թող այնպես լինի, որ ես լինեմ Ղազանղապի կողքին, որին հիմա հողին կհանձնենք: Եվ եթե իրավ է, թե մահից հետո հոգին տեղափոխվում է որևէ բանի մեջ, ապա ինչո՞ւ ես դառնամ մրջյուն, կուզեի դառնալ սպիտակապոչ ուրուր: Որպեսզի, այ, նրա նման ճախրեմ սարօղեկների վրա և բարձրերից նայեմ իմ երկրին, նայեմ ու չկշտանամ: Ուրիշ ոչինչ:

Իսկ կտակիս վերաբերյալ, ես կհանձնարարեմ երիտասարդ-

ներին, որ ինձ հետ գան այստեղ։ Կասեմ, որ պարտք եմ զգում նրանց վրա, թող ինձ թաղեն այստեղ։ Բայց թե չգիտեմ, ո՞վ է աղոթք անելու ինձ վրա։ Նրանք աստծուն չեն հավատում և ոչ մի աղոթք չգիտեն։ Ախր, ոչ ոք չգիտի և երբեք չի իմանա՝ կա՞ աստված, թե չկա։ Ոմանք ասում են՝ կա, մյուսներն ասում են՝ չկա։ Ես ուզում եմ հավատալ, որ դու կաս և որ դու իմ սրտքում ես։ Եվ երբ աղոթքներով քեզ եմ դիմում, ապա իրականում ես քո միջոցով դիմում եմ ինձ, և այսպիսի պահի ինձ վիճակվել է մտածել այնպես, ինչպես կմտածեիր դո՛ւ, աստված։ Բանի էությունն այդ է։ Իսկ ջահելները այդ մասին չեն մտածում և արհամարհում են աղոթքը։ Իսկ ինչ կարող են նրանք անել իրենց և ուրիշներին մահվան վսեմ ժամին։ Ես խղճում եմ նրանց, ինչպե՞ս պիտի նրանք ըմբռնեն իրենց մարդկային խարհուրդը, եթե ուղիներ չունեն մտովի այնպես բարձրանալու, ինչպես եթե նրանցից յուրաքանչյուրը հանկարծ աստված լիներ։ Ների՛ր ինձ այս սրբապղծությունը։ Նրանցից ոչ ոք աստված չի դառնա, այլապես կկորցնի քո գոյությունը։ Եթե մարդ չկարողանա հոգու խորքում իրեն աստված երևակայել, խոսելով բոլորի կողմից, ինչպես որ ինքդ պիտի խոսեիր մարդկանց մասին. ուրեմն դու նույնպես՝ աստվածդ, չէիր լինի... Իսկ ես չէի ցանկանա, որ դու չքանայիր անհետ...

Ահա ինձ տանջող խնդիրը և իմ թախիծը։ Ների՛ր, ամենայն, եթե սխալ եմ։ Ես հասարակ մարդ եմ, մտածում եմ այնպես, ինչպես կարողանում եմ։ Այժմ խոսքս կվերջացնեմ սուրբ գրքի բառերով և կանցնենք թաղմանը։ Օրհնիր մեզ...»։

— Ամեն,— ավարտեց Բոռանլի Եդիգեյն իր աղոթքը և լռեց, ապա մի անգամ ևս սուր կարոտով նայելով ուրուրին, դեմքը շուռ տվեց ետևում կանգնած երիտասարդներին, որոնց մասին նոր իր կարծիքն էր հայտնել տեր աստծուն։ Կանգնած էին այն հինգը, որոնց հետ եկել էր այստեղ և որոնց հետ վերջապես պիտի կատարեր ձգձգված թաղումը։

— Այսպես ուրեմն,— ասաց մտահոգ,— ինչ-որ անհրաժեշտ էր ասել աղոթքով, ես ասացի ձեր փոխարեն։ Այժմ գործի անցնենք։

Վրայից նետելով շքանշաններով զարդարված պիջակը, Բոռանլի Եդիգեյն իջավ փոսի հատակը։ Նրան օգնեց Երկար Էդիլբայը։ Սաբիթժանը, իբրև հանգուցյալի որդի, հեռու էր կանգնել՝ գլուխը խոնարհած, իբրև վշտի արտահայտություն, այն երեքը՝

Ղալմբեկը, Ջումագալին և հարբեցող փեսան, թաղիքե պարկի մեջ ամփոփված մարմինը իջեցրին գերեզման, Եդիգեյի ու Երկար Էդիլբայի ձեռքերի մեջ։

«Ահա եկավ բաժանման պահը», մտածեց Բորանլի Եդիգեյը, Ղազանղապին տեղավորելով իր հավերժական տան մեջ՝ գետնի խորքում։— Ներիր, որ երկար չէինք կարողանում քեզ համար տեղ որոշել։ Ամբողջ օրը այստեղից այնտեղ ենք տարել։ Այդպես եղավ։ Անա-Բեյիթում քեզ չկարողացանք թաղել ու մեր մեղքով։ Բայց չկարծես, որ այդ գործն այդպես էլ թողնելու եմ։ Ուր ասես կգնամ, ում ասես կդիմեմ։ Քանի ողջ եմ, չեմ լռի։ Ում որ պետք է՝ կասեմ։ Դու հանգիստ կաց քո տեղում։ Վիթխարի է, ընդարձակ է երկիրը, իսկ տասը վերշոկի չափ քո տեղը, տեսնում ես, այստեղ էր սահմանված։ Եվ դու այստեղ մենակ չես լինի։ Շուտով ես էլ կպառկեմ այստեղ, Ղազանղապ։ Սպասիր մի քիչ։ Եվ կասկած չունենաս։ Եթե ուրիշ դժբախտություն չպատահի, եթե մեռնեմ իմ մահով, ես նույնպես այստեղ կգամ և նորից միասին կլինենք։ Եվ մենք կդառնանք սարօզեկյան հող։ Ուղղակի չենք իմանա, որ հող ենք դարձել։ Այդ մասին իմանում ենք, երբ ապրում ենք։ Դրա համար էլ ես երբ քեզ եմ ասում, բայց իրականում ինքս ինձ եմ ասում։ Դեհ, ախր, դու ինչ-որ եղել ես, այժմ այն չես։ Ահա այսպես ենք գոյությունից գնում անգոյություն։ Իսկ գնացքները կսուրան սարօզեկներով, ուրիշ մարդիկ կգան մեր փոխարեն...»։

Այստեղ ծեր Եդիգեյը չկարողացավ զսպել իրեն, հեծկլտաց։ Այն ամենը, ինչ եղել-անցել էր Բորանլի կիսակայարանում ապրած նրանց կյանքի բազմաթիվ տարիների ընթացքում, այդ ամենը ժամանակի վիթխարի տևողության մեջ, բոլոր ցավերը, դառնություններն ու ուրախությունները կարծես տեղավորվում էին հրաժեշտի մի քանի խոսքի և թաղման մի քանի րոպեի մեջ։ Որքան շատ և որքան քիչ բան է տրված մարդուն։

— Լսո՞ւմ ես, Էդիլբայ,— ասաց Եդիգեյը նեղ փոսում ուս-ուսի հպվելով նրան։— Դու ինձ էլ թաղիր այստեղ, որպեսզի կողքին լինեմ։ Եվ այ, այսպես, քո ձեռքով ինձ հողը դիր և այնպես արա, ինչպես հիմա ենք անում, որպեսզի ես էլ հարմար պառկեմ։ Խոսք տալի՞ս ես։

— Վերջ տուր, Եդիկե, հետո կխոսենք։ Հիմա դուրս եկ լույս աշխարհ։ Ինքս կվերջացնեմ գործը։ Հանգստացիր, Եդիկե, դուրս արի, մի՛ հուզվիր։

Բաց դեմքին թաց կավ քսելով, Բորանլի Եդիգեյը բարձրացավ փոսի հատակից, նրան ձեռք մեկնեցին և նա դուրս եկավ, լալով ու մրմնջալով կսկծալի խոսքեր։ Ղալիբեկը բերեց ջրով լի բիդոնը, որ ծերունին լվացվի։

Հետո նրանք մի-մի բուռ հող գցեցին ներքև և սկսեցին լցնել գերեզմանափոսը, քամու հակառակ ուղղությամբ։ Սկզբում լցնում էին բահերով, հետո Ջումագալին նստեց ղեկի մոտ, հողը վրա տվեց բուլդոզերով։ Հետո նորից գերեզմանի վրա հողակույտ արեցին բահերով...

Իսկ սպիտակապոչ ուրուրը դեռ ճախրում էր նրանց գլխավերևում, աչքը փոշու ամպին և այս մի բուռ մարդկանց, որոնք Մալաքումդիչապ գառիթափին ինչ-որ տարօրինակ բանով էին զբաղված։ Նա հատուկ աշխուժություն նկատեց նրանց մեջ, երբ փոսի փոխարեն հայտնվեց թարմ հողաթումբ։ Շեկ շունն էլ ձգվեց, վեր կացավ կցասայլի տակից և նույնպես այժմ պտըտվում էր մարդկանց շուրջը։ Նրան ի՞նչ էր պետք։ Միայն ծոպավոր սթարով զարդարված ծեր ուղտն էր առաջվա նման անխոնջ որոճում, անդադար շարժելով ծնոտները...

Ըստ երևույթին մարդիկ ուզում էին գնալ։ Բայց ոչ, ահա նրանցից մեկը՝ ուղտի տերը, ափերը բաց արեց դեմքի առջև, մյուսները կրկնեցին նրա արածը...

Ժամանակ այլևս չկար։ Բորանլի Եդիգեյը բոլորին պարուրեց երկար, սևեռուն հայացքով և ասաց.

— Ահա և վերջացրինք։ Լա՞վ մարդ էր արդյոք Ղազանղապը։

— Լավն էր,— պատասխանեցին նրան։

— Արդյո՞ք պարտք չի եղել որևէ մեկին։ Այստեղ է նրա որդին, թող հանձն առնի հոր պարտքը։

Ոչ ոք ոչինչ չպատասխանեց։ Եվ այնժամ Ղալիբեկն ասաց բոլորի փոխարեն։

— Ոչ, ոչ մի պարտք չի թողել։

— Այդ դեպքում ի՞նչ կասես դու, որդի Ղազանղապի՝ Սաբիթջան,— նրան դիմեց Եդիգեյը։

— Շնորհակալություն բոլորից,— կարճ պատասխանեց նա։

— Եթե այդպես է, ուրեմն տուն դառնանք,— ասաց Ջումագալին։

— Հիմա։ Մի խոսք միայն,— կասեցրեց նրան Բորանլի Եդիգեյը։— Այստեղ, ձեր մեջ ես եմ ամենածերը։ Բոլորից մի

խնդրանք ունեմ։ Եթե այս բանն իմ գլխին գա, ինձ թաղեք այստեղ, այ այստեղ, Ղազանղապի կողքին։ Լսեցի՞ք։ Սա իմ պատվիրանն է, այդպես էլ հասկացեք։

— Այդ ոչ ոք իմանալ չի կարող, Եդիկե, ի՞նչ իմանանք ինչ կլինի, ինչո՞ւ նախօրոք մտածենք,— կասկած արտահայտեց Ղալիբեկը։

— Միևնույն է,— պնդեց Եդիգեյը։— Ինձ ասել է հասնում, ձեզ՝ լսել։ Իսկ երբ բանը բանին հասնի, հիշեք իմ պատվիրանը։

— Ուրիշ ի՞նչ վսեմ պատվիրաններ ունես։ Եդիկե, ասա նախօրոք, մի հապաղի,— կատակեց Երկար Էդիլբայը, ցանկանալով թուլացնել լարված վիճակը։

— Չծիծաղե՛ս,— վիրավորվեց Եդիգեյը։— Ես լո՛ւրջ եմ ասում։

— Կհիշենք, Եդիկե,— հանդստացրեց նրան Երկար Էդիլբայը։— Եթե այդպես լինի, կանենք քո ուզածը։ Կասկած չունենաս։

— Այ, դա արդեն ջիգիթի խոսք է,— բավարարված քրթմնջաց նա։

Տրակտորներն սկսեցին թեքվել զառիթափից ցած։ Մինչ տրակտորները կիջնեին, Բորանլի Եդիգեյը Կարանարի սանձից բռնած, քայլեց Սաբիթժանի կողքով։ Ուզում էր նրա հետ առանձին խոսել իրեն անհանգստացնող մի հարցի մասին։

— Լսիր, Սաբիթժան, մեր ձեռքերն ազատ են հիմա, և ես մի խոսակցություն ունեմ քեզ հետ։ Ի՞նչ անենք մեր գերեզմանոցի՝ Անա-Բեյիթի համար,— ասաց նա հայրական տոնով։

— Ի՞նչ պիտի անենք։ Գլուխ ցավացնելը իմաստ չունի,— պատասխանեց Սաբիթժանը։— Պլանը՝ պլան է։ Գերեզմանոցը կվերացնեն, ըստ պլանի կքանդեն։ Եվ վերջ։

— Չէ, բանն այդ չի։ Այդպես կարելի է ամեն մի գործի վրա ձեռք թափ տալ։ Այ, դու ծնվել ու մեծացել ես այստեղ։ Հայրդ քեզ ուսումի է տվել։ Եվ հիմա նրան թաղեցինք։ Մեն-մենակ, բաց դաշտում, միակ մխիթարությունն այն է, որ միևնույն է, իր հողում է։ Դու գրագետ ես, աշխատում ես մարզում, փառք աստծո, ում ուզես կդիմես։ Գիրք շատ ես կարդացել։

— Հետո ի՞նչ,— նրա խոսքը կտրեց Սաբիթժանը։

— Այն, որ օգնիր ինձ խոսք ասելու, քանի դեռ ուշ չի, առանց հետաձգելու, վաղը եթե միասին գնայինք այստեղի ղե-

կավարության մոտ, չէ՞ որ այս փոքրիկ քաղաքում մեկնումեկը ամենագլխավորն է։ Չի կարելի, որ Աննա-Բեյիթը հողին հավասարեցնեն։ Ախր, սա պատմություն է։

— Այդ բոլորը հին հեքիաթներ են, հասկացիր, Եդիկե։ Այստեղ վճռվում են համաշխարհային, տիեզերական հարցեր, իսկ մենք պիտի գնանք բողոքենք ինչ-որ գերեզմանոցի համար։ Ո՞ւմ է հարկավոր։ Նրանք թքած ունեն։ Այսինքն, մեզ այնտեղ իսկի չեն էլ թողնի։

— Իհարկե, եթե չգնանք, չեն թողնի։ Իսկ եթե պահանջենք, կթողնեն։ Նույնիսկ ինքը՝ պետը, կարող է մեզ ընդառաջ գալ։ Հո սար չի, որ տեղից չշարժվի։

Սաբիթջանը զայրացած հայացք նետեց Եդիգեյի վրա։

— Վերջ տուր, ծերուկ, դա դատարկ գործ է։ Ինձ վրա էլ հույս մի՛ դնի։ Իմ ինչի՞ն է հարկավոր։

— Այդպես էլ ասեիր։ Ես ձայնս կկտրեի։ Բա չէ՝ հեքիաթնե՛ր։

— Հապա ի՞նչ էիր կարծում։ Որ անմիջապես կվազե՞մ։ Հանուն ինչի՞։ Ես տուն ու տեղ ունեմ, երեխաներ, աշխատանք։ Ինչո՞ւ պիտի հոսանքին հակառակ միզեմ։ Որպեսզի այստեղից զանգ տան, և հետույքիս քացի տան, դուրս գցեն։ Չէ, շատ շնորհակալ եմ։

— Քո շնորհակալությունը քեզ լինի,— նետեց Բորանլի Եդիգեյը, և չարությամբ ավելացրեց.— հետույքիդ քացի՞ տան։ Ուրեմն դու միայն հետույքի համար ես ապրում։

— Հապա ի՞նչ էիր կարծում։ Հենց այդպես։ Քեզ ի՞նչ կա, դու ո՞վ ես։ Ոչ ոք։ Իսկ մենք հետույքի համար ենք ապրում, որպեսզի բերաններս քաղցր լինի։

— Ճիշտ է։ Առաջ գլուխն էին գնահատում, իսկ այժմ, ուրեմն, հետույքը։

— Ինչպես կուզես հասկացիր։ Հիմար կկու։

— Պարզ է։ Այլևս խոսակցություն չի լինի,— կտրեց Բորանլի Եդիգեյը։— Հոգեհացը տանք-վերջացնենք, այլևս աստված չանի, որ մենք երբևէ հանդիպենք։

— Նայած,— ծամածռվեց Սաբիթջանը։

Այդ խոսքերով նրանք բաժանվեցին։ Մինչ Բորանլի Եդիգեյը կնստեր ուղտին, տղաները տրակտորները լարելով սպասում էին նրան, բայց նա անմիջապես ասաց, որ չսպասեն, շուշա-

նան, այլ գնան իրենց ընթացքով և որքան կարելի է՝ արագ, մարդիկ այնտեղ հոգեհացի են սպասում, ուղտով իր համար բոլոր ճանապարհները բաց են, ինքն, իբր, կգնա իր համար։

Երբ տրակտորիստները ճամփա ընկան, Եդիգեյը մի քիչ էլ մնաց տեղում, մտմտալով, թե ինչպես վարվի այսուհետև։

Այժմ նա մենակ էր, կատարելապես մենակ, սարօզեկների մեջ, եթե չհաշվենք հավատարիմ շանը՝ Ջոլբարսին, որ սկզբում նետվեց հեռացող տրակտորների ետևից, հետո ետ դարձավ, երբ հասկացավ, որ իր տիրոջ ճանապարհն այժմ բաժանվում է նրանցից։ Բայց Եդիգեյը ուշք չէր դարձնում նրան։ Եթե շունը վազեր տուն, նա այդ էլ չէր նկատի։ Դրա սիրտը չուներ։ Աշխարհը քաղցր չէր։ Ոչ մի բանով չէր կարողանում մեղմել հոգին այրող կրակը, ճնշող, տագնապալից ամայությունը՝ Սաբիթժանի հետ ունեցած խոսակցությունից հետո։ Այս չմեղմացող ցավի ճմլող դատարկությունը թափանցիկ ճեղքվածքի, կիրճի նման երախը բացել էր իր մեջ, որտեղ լոկ ցրտություն էր և խավար։ Զղջում էր Բորանլի Եդիգեյը, շատ էր զղջում, որ զուր խոսք էր բացել, զուր տեղը քամու բերանն էր գցել իր մտքերը։ Մի՞թե Սաբիթժանն այն մարդն է, որից հնարավոր է խորհուրդ կամ օգնություն սպասել։ Հույս ուներ, իբր, գրագետ է, կրթված է և կարող է հեշտությամբ լեզու գտնել իր նմանների հետ։ Ինչ օգուտ, որ սովորել է տարբեր դասընթացներում և տարբեր ինստիտուտներում։ Միգուցե հենց դրա համար են սովորեցրել նրան, որպեսզի դառնա այնպիսին, ինչպիսին որ կա։ Միգուցե որևէ տեղ կա սատանի նման խորաթափանց մեկը, որ շատ ջանք է թափել Սաբիթժանի վրա, որպեսզի Սաբիթժանը դառնա Սաբիթժան, ոչ թե ուրիշ մեկը։ Ախր, Սաբիթժանը ինքն էր պատմում, ամեն եղանակով նկարագրում էր ռադիոյով ղեկավարվող մարդկանց մասին անհեթեթությունը։ Պիտի գան, իբր, այդ ժամանակները։ Իսկ ի՞նչ, եթե արդեն ռադիոյով իրենց ղեկավարում է այդ անտեսանելին և ամենազորը...

Եվ որքան շատ էր ծերունի Եդիգեյը մտածում այդ մասին, այնքան վիրավորական և անելանելի էր դառնում վիճակը։

— Դու մանկուրտ ես։ Ամենախսկական մանկուրտը,— շշնջաց նա զայրացած, ատելով և խղճալով Սաբիթժանին։

Բայց և բնավ միտք չուներ հաշտվելու պատահածին, հասկանում էր, որ պետք է մի բան անի, մի բան ձեռնարկի, որպեսզի սիրտը շատ չնեղվի։ Բորանլի Եդիգեյը հասկանում էր,

որ եթե նահանջի, դա կդիտի իբրև սեփական պարտություն, նախազգում էր, որ պետք է մի բան անի, չնայած օրը բացահայտ վերջանում էր, թեև չէր կարող որոշակի ասել, թե կոնկրետ ինչ կուզեր անել, ինչից սկսեր և ինչպե՞ս սկսեր, որ Անա-Բեյիթի կապակցությամբ ունեցած իր մտքերն ու հույսերը հասնեին նրանց, ովքեր իսկապես ի զորու էին փոխելու հրամանը։ Հասնեին և ունենային որևիցե ազդեցություն, համոզեին նրանց... Բայց ինչպե՞ս աներ։ Ո՞ւմ դիմեր, ի՞նչ նախաձեռներ։

Ծանր մտորումների մեջ՝ Եդիգեյը նայեց շուրջը, հենվելով Կարանարին։ Շուրջբոլորը տարածված էր լուռ տափաստանը։ Իրիկնաժամի ստվերներն արդեն թաքնվում էին Մալաքումդըչապի կարմիր ավազե դարափերում։ Տրակտորները վաղուց արդեն չքացել էին հեռվում, լռել։ Երիտասարդությունը գնացել էր։ Վերջինը, որ գիտեր և հիշողության մեջ պահում էր սարօզեկյան եղելությունը՝ ծերունի Ղազանղապը, այժմ պառկած էր ղառիթափին, մենավոր գերեզմանի թարմ հողաթմբի տակ, անծայրածիր տափաստանի մեջտեղում։ Եդիգեյը պատկերացնում էր, թե այդ թումբը քիչ-քիչ ինչպես կիջնի, կտափակի, կձուլվի սարօզեկների օշինդրին և դժվար կլինի զանազանել կամ պարզապես անհնարին կլինի զանազանել նրա տեղը։ Այդպես էլ կա. ոչ ոք չի կարող հողից ավելի ապրել, ոչ ոք չի կարող խուսափել հողից...

Արեգակը կախվել, ծանրացել էր օրվա վերջում, իր ուժից վեր ծանրությունից ցածրանալով և ավելի ու ավելի մոտենալով հորիզոնին։ Մայր մտնող արեգակի լույսը րոպե առ րոպե նվազում էր։ Վերջալույսի ընդերքում աննշմար ծնվում էր խավարը, աղջամուղջի կապույտով լցվում շողարձակ տարածության պսպղուն ոսկու մեջ։

Մտքում Բորանլի Եդիգեյը ծանրութեթև էր անում իրադրությունը և գալիս էր այն համոզման, թե հարկավոր է ետ դառնալ ուղեփակոցի մոտ։ Ուրիշ միջոց չկար։ Այժմ, երբ արդեն թաղումը վերջացել էր, երբ ձեռուոտը այլևս կապված չէր և կարող էր լրիվ ապավինել ինքն իրեն, որքան որ աստծո տված ու փորձով ձեռք բերված ուժը կբավականացներ, կարող էր իրեն թույլ տալ գործելու խղճի մտոք, ինչպես որ անհրաժեշտ համարեր։ Նախ և առաջ ուզում էր պահակազորի ծառայությանը ստիպել որ իրեն թեկուզ պահակախմբի հսկողությամբ ուղեկցեն մեծ պետի մոտ, կամ, եթե անհրաժեշտ լինի, ստիպել այդ պետին

ժամանելու ուղեփակոցի մոտ և լսել իրեն՝ Բորանլի Եդիգեյին։ Այն ժամանակ ամեն ինչ կասեր նրա երեսին...

Երբ Բորանլի Եդիգեյը մտածեց այս ամենը, որոշեց գործել առանց հապաղելու, իբրև դրա անմիջական շարժառիթ, նա մտադիր էր առաջ քաշել Ղազանղապի թաղման ողբալի դեպքը։ Նա հաստատապես վճռեց համառություն ցուցաբերել ուղեփակոցի մոտ, պահանջել անցաթուղթ կամ հանդիպում, սկսել դրանից, պահնորդներին հասկացնել, որ ինքը չի հանդստանա, մինչև իրեն չլսի ամենաբարձր աստիճանի ունեցողը, ոչ թե մի ոմն Թանսիկբաև...

Այդ մտքից սրտապնդվեց։

— Թաուբակե՛լ։ Եթե շունը տեր ունի, ապա գայլն էլ աստված ունի,— սիրտ տվեց իրեն և վստահորեն մտրակեց Կարանարին, ուղղվելով ուղեփակոցի կողմը։

Այդ ընթացքում արեգակը մայր էր մտել, արագորեն մթնում էր։ Երբ մոտեցավ գոտուն, արդեն լրիվ մութ էր։ Կես կիլոմետր էր մնում մինչև ուղեփակոցը, երբ դիմացում հստակ երևացին պահակակետի լապտերները։ Այստեղ, դեռ ժամապահին չհասած, Եդիգեյը շտապեց։ Թամբից իջավ սահելով։ Ուղտն ինչի՞ն էր պետք այս գործում։ Ինչի՞ն էր այդ բեռը։ Բացի այդ, ինչ իմանաս ի՞նչ պետ կհանդիպի, մեկ էլ տեսար խոսել չուզեց ու ասաց. «— Ուղտդ առ, կորի՛ր այստեղից։ Որտեղի՞ց էլ լույս ընկար։ Քեզ չե՛մ ընդունում» և չի թողնի մտնել առանձնասենյակ։ Մանավանդ Եդիգեյը չգիտեր, թե ինչով կավարտվի իր որոշումը, ինչքա՞ն պետք սպասի արդյունքին, դրա համար էլ ավելի լավ է մենակ ներկայանա, իսկ Կարանարին առայժմ ոտքերը կապ դրած թողնի տափաստանում։ Թող իր համար արածի։

— Դեհ, դու առայժմ սպասիր այստեղ, ես գնամ տեսնեմ ի՞նչ եմ անում,— մռթմռթաց նա, դիմելով Կարանարին, շատ սեփական ինքնավստահության համար։ Համենայն դեպս ստիպված եղավ ուղտին չոքեցնել, որովհետև պետք է խուրջինից ոտնակապերը հաներ պատրաստեր։

Եդիգեյը մթնում զբաղված էր ոտնակապերով, իսկ շուրջը այնքան խաղաղ էր, այնպիսի անսահման լռություն էր թագավորում, որ լսվում էր սեփական շնչառությունն ու ֆսֆսոցը, ինչ-որ միջատների բզզյուն՝ օդում։ Գլխավերևում շողշողացին աստղերի հսկայական բույլեր, որոնք հանկարծ հայտնվել էին

բաց երկնքում։ Այնքան հանդարտ էր, կարծես օդը հղի էր սպասումով։

Նույնիսկ սարօզեկյան լռության սովոր Ջոլբարսը լարված սպասում էր և, չգիտես ինչու, կաղկանձում։ Տեսնես ինչը դուր չէր գալիս այս լռության մեջ։

— Ի՞նչ ես ոտքի տակ ընկնում,— դժգոհեց տերը։ Հետո մտածեց, թե որտեղ պահի շանը։ Որոշ ժամանակ, ուղտի ռանակապերը ձեռքում դասավորելով մտմտում էր, թե ի՞նչ անի շանը։ Թե քշես, միևնույն է, չի գնա։ Իբրև հայցվոր ներկայանաս շան հետ, հարմար չի։ Եթե շատեն էլ, կծիծաղեն, կմտածեն. ահա, ծերունին ելել է իրավունքներ պահանջելու, բայց հետը, շնից բացի, ոչ ոք չկա։ Եթե այդպես է, գոնե գնա սրանց շան։ Եվ Եդիգեյը որոշեց շանը երկար պարանով կապել ուղտի լծասարքին։ Իր բացակայության ժամանակ թող մի կապով մնան ուղտն ու շունը։ Այդ նպատակով էլ կանչեց շանը՝ «Ջոլբա՛րս, Ջոլբա՛րս, մոտ արի», և կռացավ, որ կապը դնի վզին։ Եվ ճիշտ այդ պահին օդի մեջ մի բան կատարվեց, տարածության մեջ մի բան սասանվեց՝ հրաբխային պարհուրելի դղրդյունով։ Եվ շատ մոտիկ, ուղղակի կողքին, տիեզերակայանի դաշտում, բռնկվելով, երկինք խոյացավ ահեղ կրակի լուսեղեն սյունը։ Բորանլի Եդիգեյը ահաբեկված ետ ընկրկեց, ուղտը դուրս ցատկեց ոստնեց տեղից... Շունը սարսափած ընկավ մարդու ոտքերը։

Դա ռազմական առաջին ռոբոտ-հրթիռն էր վեր բարձրանում՝ իրագործելու տրանստիեզերական «Օղակապ» խափանիչ օպերացիան։ Սարօզեկներում երեկոյան ութից ժամը ութն էր։ Առաջինից հետո վեր խոյացավ երկրորդը, երրորդը՝ հետո՝ էլի և էլի... Հրթիռները գնում էին հեռավոր տիեզերք, երկրագնդի շուրջը ցցելու մշտապես գործող կորդոն, որպեսզի երկրային գործերը ոչ մի փոփոխություն չկրեն, որպեսզի ամեն ինչ մնա այնպես, ինչպես կա...

Երկինքը փուլ էր գալիս գլխին, պատառ-պատառ լինելով եռացող բոցերի ու ծխի քուլաների մեջ... Մարդը, ուղտը, շունը, այս պարզագույն արարածները խելակորույս փախչում էին, նրանք փախչում էին միասին, վախենալով իրարից բաժանվել, նրանք փախչում էին տափաստանով անողոք կերպով լուսավորվելով հսկայական կրակի փայլատակումներով...

Բայց որքան էլ արագ վազեին, դա վազք էր տեղում, քանզի ամեն մի նոր պայթյուն նրանց գլխավերին ծածկում էր համա-

*պարփակ լույսի հրդեհով և ամենուր տարածվող ամեհի դղրդյունով...*

*Եվ նրանք փախչում էին. մարդը, ուղտը, շունը փախչում էին առանց ետ նայելու, և հանկարծ Եդիգեյի աչքին երևաց չգիտես որտեղից հայտնված սպիտակ թռչունը, որ ժամանակին առաջացել էր Նայման-Անայի գլխաշորից, երբ Նայման-Անան իր մանկուրտ որդուց նետահար ընկել էր թամբից... Սպիտակ թռչունը արագ թևածում էր մարդու կողքով, այդ դղրդյունի ու աշխարհակործան փոթորկի մեջ ծղրտում.*

*— Ումն ե՞ս դու։ Անունդ ի՞նչ է։ Հիշիր անունդ։ Քո հայրը Դոնենբայն է, Դոնենբայը, Դոնենբայը, Դոնենբայը, Դոնենբայը, Դոնենբայը...*

*Եվ թանձրացող խավարի մեջ դեռ երկար հնչում էր նրա ձայնը...*

*Մի քանի օրից Կզըլ Օրդայից Բորանլի եկան Եդիգեյի երկու աղջիկները՝ Սաուլեն ու Շարապատը, իրենց ամուսինների ու երեխաների հետ, հեռագիր ստանալով սարօզեկյան ծերունի Ղազանղապի մահվան մասին։ Եկել էին նրա հիշատակը հարգելու, եկել էին իրենց ցավակցությունը հայտնելու, միաժամանակ նաև մեկ-երկու օր հյուր մնալու իրենց ծնողների տանը, քանի որ չկա չարիք առանց բարիքի։*

*— Գոհություն քեզ, աստված։ Ինչ լա՜վ եղավ։ Հայրիկը ո՜նց կուրախանա։ Ի՜նչ լավ արեցիք, որ եկաք։ Մանավանդ, որ եկել եք միասին, հավաքվել եկել եք։ Հայրիկը ո՜նց կուրախանա...*

*— Իսկ հայրիկն ո՞ւր է,— հարցրեց Շարապատը։*

*— Երեկոյան կգա։ Առավոտից գնացել է փոստային գրասենյակ, այնտեղի պետերի մոտ։ Մի քիչ գործ-մործ ունի։ Հետո կպատմեմ։ Ինչ եք կանգնել-մնացել։ Ախր, սա ձեր տունն է, բալիկներս...*

Գնացքները այս կողմերում առաջվա նման գնում էին արևմուտքից արևելք և արևելքից արևմուտք...

Իսկ երկաթուղու շուրջը, այս կողմերում, փռված էին հըսկայական ամայի տարածություններ՝ Սարի-Օզեկներ, Դեղին տափաստանների միջնակները:

Գիրքը լուսապատճենվել և համացանցում է **տեղադրվել** Գրքամոլ Նախաձեռնության կողմից:

Բոլորիդ կողմից սիրված «Գրքամոլ»-ը մեկնարկել է մի նախաձեռնություն, որի նպատակն է համացանցում էլեկտրոնային տարբերակով տեղադրել բոլոր այն գրքերը, որոնք սիրված են հայ ընթերցասերների կողմից և ցանկանում են դրանք ընթերցել նաև էլեկտրոնային տարբերակով: Ժամանակի ընթացքում մեր կողմից համացանցում կհայտնվեն բոլոր այն գրքերը, որոնք մինչ այս ձեզ համար եղել են դժվար ձեռքբերելի:

Գրքամոլը, ունենալով իր ուրույն տեղը ընթերցասերների հարթակում, իր առջև նպատակ է դրել հասարակության մեջ բարձրացնել սերը դեպի ընթերցանությունը, առաջացնել հետաքրքրություն դեպի դասական և արդի գրականությունը, և կոտրել բոլոր այն կարծրատիպերը, թե այսօրվա հայ իրականության մեջ ընթերցողներ չկան:

Սիրելի՛ ընթերցողներ, մենք շատ ուրախ կլինենք, եթե կլինեն մարդիկ, ովքեր կցանկանան օգնել մեզ այս հանրօգուտ գործում: *Էլեկտրոնային գրքերի պատրաստման և մեր կայքում դրանք տեղադրելու հարցում մենք չունենք որևէ շահ և չենք չհետապնդում որևէ եկամուտ*, բացի հայ և արտասահմանյան գրականությունը հայ ընթերցասերներին հասանելի դարձնելուց, և մենք բաց ենք բոլոր նվիրյալ ու օգնել ցանկացող մարդկանց համար: Եթե դուք ունեք լուսապատճենահանման սարքեր, և ուզում եք միանալ մեր կողմից ձեռնարկվող գործին, ապա գրեք մեզ grqamol@gmail.com հասցեով:

Շնորհակալություն, որ հետևում եք մեզ: Ցանկանում ենք բոլորիդ հաճելի ընթերցանություն:

**Գրքամոլ Նախաձեռնություն**
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

Since 2012 © Grqamol. All Rights Reserved.